Հիմնադիր և հրատարակիչ՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ

ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

№ 137 2025

ՀՀ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ
ՊԱՐԲԵՐԱԿԱՆ

Տպագրվում է 1997 թվականից ՀՀ գլխավոր դատախազ Հենրիկ Խաչատրյանի նախաձեռնությամբ

LEGALITY

SCIENTIFIC-PRACTICAL JOURNAL OF THE PROSECUTOR'S OFFICE
OF THE REPUBLIC OF ARMENIA

Published since 1997 at the initiative of RA Prosecutor General Henrik Khachatryan

ЗАКОННОСТЬ

НАУЧНО-ПРАКТИЧЕСКИЙ ЖУРНАЛ ПРОКУРАТУРЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

Публикуется с 1997 года по инициативе Генерального прокурора РА Генрика Хачатряна

Պարբերականն ընդգրկված է Հայաստանի Հանրապետության Բարձրագույն որակավորման կոմիտեի սահմանած դոկտորական (2002 թ.) և թեկնածուական (1999 թ.) ատենախոսությունների ու դրույթների հրատարակման համար ընդունելի գիտական պարբերականների ցանկում:

The Journal is included in the list of scientific periodicals acceptable for publication of the results and provisions of doctoral dissertation (since 2002) and candidate dissertation (since 1999) established by the Supreme Certifying Committee of the Republic of Armenia.

Журнал включен в список научных периодических изданий, принятых для публикации результатов и положений докторских (с 2002) и кандидатских (с 1999) диссертаций, установленных Высшим аттестационным комитетом Республики Армения.

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎ՝ ՆՎԻՐՎԱԾ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 107-ԱՄՅԱԿԻՆ

Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունը, ՀՀ դատախազության հիմնադրման 107-ամյակի և Դատախազության աշխատողի օրվա կապակցությամբ, Դիլիջանում 2025 թվականին հուլիսի 1-ին մեկնարկել է «Դատախազների անկախությունն ու անաչառությունը՝ հանցագործություն կատարած պաշտոնատար անձանց նկատմամբ հանրային քրեական հետապնդում հարուցելու համատեքստում. կոռուպցիա և փողերի լվացում» թեմայով միջազգային երկօրյա բարձրաստիճան համաժողովը:

Համաժողովը կազմակերպվել է Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի համատեղ ծրագրերի շրջանակում:

Միջոցառմանը ներկա են եղել Հայաստանի Հանրապետության վարչապետ Նիկոլ Փաշինյանը, ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը, գործադիր և դատական իշխանության ղեկավար կազմը, Երևանում Եվրոպայի խորհրդի գրասենյակի ղեկավար Մաքսիմ Լոնգանգեն, ԵԽ մարդու իրավունքների, արդարադատության և իրավական համագործակցության չափանիշների իրականացման վարչության իրավական բարեփոխումների և մարդու իրավունքների հարցերով համագործակցության ծրագրերի բաժնի փոխտնօրեն Լիլիթ Դանեղյանը, Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների և իրավունքի գերակայության գլխավոր տնօրինության Տնտեսական հանցագործությունների և կոռուպցիայի դեմ պայքարի վարչության Տնտեսական հանցագործությունների և համագործակցության բաժնի ստորաբաժանման ղեկավար Տոմիսլավ Սերտիչը, ՀՀ իրավապահ մարմինների ղեկավար կազմը, դատախազներ, Լիտվայի Հանրապետության գլխավոր դատախազ Նիդա Գրունսկիենեն, Մալթայի Հանրապետության գլխավոր դատախազ Վիկտորիա Բութիջեյջը, Եվրոպայի դատախազների խորհրդատվական խորհրդի նախկին նախագահ, ԵԽ փորձագետ Յանա Զեզուլովան, դատախազության պատվիրակություններ՝ նաև Ավստրիայից, Հունաստանից, Լեհաստանից, Չեխիայից, Եվրոպական միության քրեական արդարադատության գործակալությունից (Եվրաջասթ), Դատախազների միջազգային ասոցիացիայից, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված դիվանագիտական առաքելությունների ղեկավարներ:

Հայաստանի Հանրապետության վարչապետ Նիկոլ Փաշինյանը շնորհավորել է Դատախազության աշխատողի օրվա կապակցությամբ և դատախազներին շնորհակալություն հայտնել կատարած կարևոր աշխատանքի համար: Երկրի ղեկավարի խոսքով՝ քաղաքացուն երջանկության համար անհրաժեշտ գործառույթների՝ խաղաղության և/կամ անվտանգության, ընդ որում՝ ներքին և արտաքին, արդարության, ազատության և բարեկեցության ձգտումների իրականացման գործում շատ էական դեր ունի իրավապահ համակարգը: Այդ համատեքստում Նիկոլ Փաշինյանն արձանագրել է՝ կոռուպցիան այն հիմնական պրոբլեմներից է, որը մի քանի ուղղություններով ստեղծում է խնդիրներ ցանկացած իրականության մեջ: «Կառավարության քաղաքականությունն է՝ ցուցաբերել զրո հանդուրժողականություն կոռուպցիայի և կոռուպցիոն դրսևորումների նկատմամբ, և մենք շարունակում ենք հետևողական լինել այդ ճանապարհին»,- ասել է վարչապետը՝ ընդգծելով, որ կարևոր է ոչ միայն կոռուպցիայի հետևանքները հայտնաբերելն ու վերացնելը, այլև՝ օբյեկտիվորեն գոյություն ունեցող պատճառները նույնականացնելը:

Ամփոփելով խոսքը՝ Նիկոլ Փաշինյանը կրկին շնորհավորել և շնորհակալություն է հայտնել ՀՀ դատախազության բոլոր աշխատողներին իրենց կատարած աշխատանքի համար. «Ես համոզված եմ և հույս ունեմ, որ նրանք յուրաքանչյուր օր իրենց առջև խնդիր են դնում հանրությանն ավելի որակյալ ծառայություն մատուցելու, և այդ ծառայությունը բարձր ծառայություն է, այդ ծառայության անունն արդարություն և արդարադատություն է: Եվ ես համոզված եմ նաև, որ ՀՀ գլխավոր դատախազն այդ տրամաբանությամբ և այդ խոսույթով ու գաղափարաբանությամբ է ղեկավարում ՀՀ դատախազությունը»:

Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը ողջույնի խոսքում շնորհավորել է բոլոր դատախազներին, Դատախազության աշխատակիցներին մասնագիտական տոնի առթիվ և դիմելով դատախազներին՝ նշել. «Մենք պատասխանատու ենք ոչ միայն մեր, այլև մեզ շրջապատող, մեզ վստահող մարդկանց համար: Ես ցանկանում եմ, որ պարտքի զգացումով, մեծ պատասխանատվությամբ, ուղիղ մեջքով և պարզ ճակատով իրականացնեք ձեր առաքելությունը»:

Հանրապետության գլխավոր դատախազն իր ելույթում, անդրադառնալով ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման ուղղությամբ իրականացվող աշխատանքներին, նշել է, որ ներկայում Հակակոռուպցիոն դատարանի վարույթում է գտնվում 150 հայցադիմում, արգելանք է դրված շուրջ 1500 անշարժ և 290 շարժական գույքի, իրավաբանական 400 անձանցում մասնակցության իրավունքի, 540 միլիարդ դրամի վրա, իսկ ընդհանուր հայցագինը շուրջ 600 միլիարդ դրամ է: Կնքված հաշտության համաձայնությունները ինն են, օրինական ուժի մեջ մտած դատական ակտը՝ մեկը: Օրինական ուժի մեջ մտած դատական ակտով՝ Հայաստանի Հանրապետության սեփականության իրավունքն է գրանցվել Երևան քաղաքի Վարդանանց փողոցում գտնվող 1 բնակարանի և Կոտայքի մարզի Առինջ համայնքում գտնվող 1 բնակելի տան նկատմամբ, բռնագանձման ենթակա՝ 50 հազար 720 եվրոյին համարժեք դրամն ու 878 հազար դրամն արդեն փոխանցված են Վերականգնված միջոցների միասնական հաշվին:

Պետական և համայնքային շահերի պաշտպանության ոլորտում 2024 թվականի ընթացքում կայացված դատական ակտերով փաստացի վերականգնվել է, նախնական գնահատմամբ, շուրջ 2 միլիարդ 785 միլիոն դրամ (շուրջ 7 մլն 69 հազար ԱՄՆ դոլար) շուկայականին մոտարկված կադաստրային արժեքով գույք (նշված գույքերի շուկայական արժեքները զգալիորեն գերազանցում են շուկայականին մոտարկված կադաստրային արժեքները): 2024 թվականին դատախազների կողմից ներկայացված հայցերով Հայաստանի Հանրապետության կամ համայնքի սեփականության իրավունքն է գրանցվել շուրջ 2 միլիարդ 785 միլիոն 511 հազար դրամ շուկայականին մոտարկված կադաստրային արժեքով 18 միավոր անշարժ գույքի նկատմամբ:

2025 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Հայաստանի Հանրապետության սեփականության իրավունքն է վերականգնվել 7 գույքի նկատմամբ: Շուկայականին մոտարկված կադաստրային արժեքը՝ 3 միլիարդ 365 միլիոն դրամ: 2025 թվականի առաջին կիսամյակի ընթացքում համայնքների սեփականության իրավունքն է վերականգնվել 5 գույքի նկատմամբ: Շուկայականին մոտարկված կադաստրային արժեքը՝ շուրջ 275 միլիոն դրամ:

Վերականգնված միջոցների միասնական հաշվին 2024 թվականի դեկտեմբերի 5-ից առ այսօր, մուտք է եղել 17,5 միլիարդ դրամ:

ԵԽ մարդու իրավունքների տնօրեն Քլեր Օվեյը տեսաուղերձում նշել է. «Դատախազների դերը բարդ է և կենսական անհրաժեշտություն ունի: Ահա թե ինչու գործընկերային փորձի փոխանակման հնարավորությունները, ինչպես, օրինակ, այս համաժողովը, այնքան կարևոր են: Որքան ամրապնդվում է այս համագործակցությունը, այնքան թուլանում է միջազգային կազմակերպված հանցավորության ազդեցությունը մեր մայրցամաքի վրա»:

Հայաստանում Եվրոպական միության պատվիրակության ղեկավար, դեսպան Վասիլիս Մարագոսի ուղերձում, որը ներկայացրել է Հայաստանում Եվրոպական միության պատվիրակության Քաղաքական, մամուլի և տեղեկատվության բաժնի ղեկավարի տեղակալ Տոմաշ Օստրոպոլոսկին, նշվել է. «Այս բարձրաստիճան համաժողովը կարևոր հարթակ է՝ մտորելու առաջնահերթությունների, ձեռք բերված արդյունքների և հետևությունների մասին: ԵՄ-ն վերահաստատում է իր հանձնառությունը՝ աջակցելու Հայաստանի պետական կառույցներին՝ կոռուպցիայի դեմ պայքարում և իրավունքի գերակայության ամրապնդման գործում՝ տրամադրելով ծրագրային և քաղաքականության մշակման աջակցություն ոլորտի հիմնական շահառուներին: Սա ներառելու է կարողությունների զարգացում դատական համակարգի, դատախազների, քննիչների և փաստաբանների համար»:

Համաժողովը Գլխավոր դատախազության՝ Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի հետ համատեղ կազմակերպվող երրորդ միջազգային համաժողովն է, որի նպատակն է ընդգծել դատախազների անկախության և անաչառության ապահովման կարևորությունը՝ պաշտոնատար անձանց մասնակցությամբ հանցագործությունների, այդ թվում՝ կոռուպցիայի և փողերի լվացման դեպքերով, քննարկել այդ հանցագործություններով քրեական հետապնդման եվրոպական չափանիշները և լավագույն փորձը, նպաստել անդամ-պետությունների և միջազգային գործընկերների հետ համագործակցության զարգացմանը և փորձի փոխանակմանը՝ դատախազի անկախության հարցում արդի մարտահրավերներին և բացերին դիմակայելու նպատակով:

Համաժողովը կազմակերպվել է Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի «Գործընկերություն հանուն լավ կառավարման» ծրագրով համաֆինանսավորվող և Եվրոպայի խորհրդի կողմից իրականացվող՝ «Աջակցություն դատաիրավական բարեփոխումների իրականացմանը Հայաստանում» և «Հայաստանում տնտեսական հանցագործությունների արդյունավետ կանխարգելման և դրանց դեմ պայքարի ազգային կարողությունների հզորացում» ծրագրերի շրջանակում:



ՀՀ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ ԱՆՆԱ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆԻ ՀՈԴՎԱԾԸ ՀՐԱՏԱՐԱԿՎԵԼ Է ԴԱՏԱԽԱԶՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՈՒՄ

Դատախազների միջազգային ասոցիացիայի #97 մասնագիտական հանդեսի հուլիսյան համարում հրատարակվել է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանի հոդվածը:

Հոդվածում վերլուծված են տեղեկատվական կամ հաղորդակցության տեխնոլոգիաների օգտագործմամբ երեխաների նկատմամբ կատարված հանցագործությունների քննության մարտահրավերները, ընդգծված է իրավասու տարբեր պետական մարմինների հետ սերտ համագործակցության անհրաժեշտությունն ու նման գործերի արագ քննության կարևորությունը:

IAP
International Association of Prosecutors

AN ARTICLE BY THE GENERAL PROSECUTOR OF THE REPUBLIC OF ARMENIA, ANNA VARDAPETYAN, WAS PUBLISHED IN THE PROFESSIONAL JOURNAL OF THE INTERNATIONAL ASSOCIATION OF PROSECUTORS

An article by Anna Vardapetyan, Prosecutor General of the Republic of Armenia, was published in the July issue of the International Association of Prosecutors' Journal #97.

The article analyzes the challenges of prosecution of the crimes committed against children using information or communication technologies, emphasizes the need for close cooperation with various competent state bodies, and the importance of expeditious prosecution of such cases.



Anna Vardapetyan
Prosecutor General of the Republic of Armenia

PROSECUTION OF CHILD PORNOGRAPHY CASES IN ARMENIA COMMITTED BY THE MEANS OF TELECOMMUNICATION: CHALLENGES, ACHIEVEMENTS AND LESSONS LEARNED

The United Nation's Convention on the Rights of the Child is the most ratified human rights treaty in history, which emphasizes the high importance that the governments of signatory states attach to the protection of children's right. Despite this, violence against children is a global crisis and according to the latest available global data of United Nations Children's Fund (UNICEF) about 90 million children alive today have experienced sexual violence[1].

Law enforcement bodies do have a very important role not only in ensuring that the individuals who commit offences against children are held responsible but also protecting the rights of children from violence and enhancing the culture of respect for human rights in the society. In the current technological era one of the emerging challenges that the Prosecutor's Office of the Republic of Armenia (PGO) is facing is the dilemma in prosecution of Internet child pornography cases. There has been a significant increase in the awareness of offenders in the use of communications technologies in the commission of children' rights abuse or violation. This has been one of the evolving crime trends in Armenia that the PGO faced.

This Article discussed the challenges, achievements and lessons learned of the prosecution of child pornography in Armenia that are committed by the means of telecommunication.

Legal framework

Article 300 of the Criminal Code of the Republic of Armenia (CC) adopted on 30 June

[1] URL: https://www.unicef.org/press-releases/fast-facts-violence-against-children-widespread-affecting-millions-globally

2021 defines criminal responsibility for preparing, disseminating or maintaining pornographic materials or objects. It was only with the adoption of CC in 2021, when the law maker established the child pornography definition, which reads as follows:

"…child pornography is considered each material, where the child is depicted performing a real or simulated action of sexual nature or sexually motivated display of a child's genital."[2]

In addition, with the addendum to the CC made on October 24, 2024 a list of cybercrimes was defined and one of the 11 types of crimes provided for is the creation and circulation of child pornography, as provided for in Article 300 of the CC. This addendum was a direct response to the growing online availability of child pornography materials and the fact that the offenders started using Internet for gaining wider audience interested to consume child pornography online materials for different purposes.

Challenges

There are not very many disclosed child pornography cases in Armenia, however Internet has made child pornography more accessible. The below statistical data also confirms the rise of the number of disclosed cases in the past year in Armenia. This, among other things, was due to the fact, the Internet made the production, storage, and distribution of child pornography audio-visual material easier, faster and cheaper.

Statistics of child pornography cases in the last 5 years

Year	Number of cases in which criminal proceedings were initiated (cases were filed)	The status of initiated criminal cases (proceedings)							
		The case materials have been submitted to the court					The proceedings have been terminated		Cases that are in the preliminary investigation stage
							Number	Grounds for termination	
		Number	From which						
			Convicted			Being examined in the court			
			number	From which a punishment involving restriction of liberty					
				imprisonment	Short-term imprisonment				
2020	4						1	Statute of limitations passed	3
2021	2	1	1	1			1	Active repentance	
2022	1								1
2023	4	2	1	1		1	1	Not having reached the age of criminal responsibility	1
2024	6	4			1	3	1	The absence of a physically identified crime scene	1

[2] CC, Article 300 (5).

The analysis of the PGO in child pornography crimes committed by the means of telecommunication, allows grouping the challenges faced during investigation into the following: (1) protecting the best interests and the wellbeing of the child if the sexually abusive images of children for personal and/or commercial reasons were disseminated online; (2) Not double-victimizing the child during the investigation stage and in the meantime getting necessary information and evidences necessary for proper prosecution of the case. This proved to be particularly challenging in the cases when parents of the victims are also engaged in committing the crime; (3) identifying the real creators of the content of abusive images available online as well as collectors and distributors, and prosecuting sale of child pornography for cryptocurrencies. The latter requires active, speedy and efficient international cooperation including Virtual Asset Service Providers and (4) enhancing the investigation and prosecution capabilities and techniques parallel to the speedy technological developments.

Achievements and lessons learned

Violence against minors requires active cooperation amongst different state authorities and services. For addressing consequences of child violence, active engagement and cooperation with social, health care, rehabilitative services and other institutions is necessary. Armenian state authorities prioritize active and quick interagency cooperation in investigation of child pornography cases. For that purpose, a working group, composed of the representatives of the PGO and the Ministry of Internal Affairs (the Police operates within the structure of this Ministry) has been established to promptly discuss each individual situation and advance an operational response to these types of violence.

Another achievement is the common agreement amongst the law enforcement bodies and the judiciary that the investigation and judication of child pornography cases should be conducted in the possible short terms to minimize the risks of double-victimization and causing additional harm to the victims. Active work is also being done by law enforcement bodies towards educating the public about child pornography offenses. This is also considered to be a preventive mechanism.

The prosecution of cases of sexual abuse of minors is a top propriety for the PGO of Armenia and its prevention is a major concern given the current rapid tendencies of maintaining and developing online networks. Regular work needs to be done to ensure that the prosecution office is equipped with necessary tools and resources to combat this crime and ensure effective prosecution and most importantly prevention of child pornography.

Ծանոթագրություն

ՀՀ դատախազության «Օրինականություն» գիտագործնական պարբերականում տպագրված հոդվածները հանդիսանում են հեղինակների մասնագիտական հետազոտության արդյունքը և արտացոլում են վերջիններիս մասնագիտական կարծիքը՝ ակադեմիական ազատության շրջանակում:

Հոդվածներում տեղ գտած վերլուծությունները, դատողություններն ու եզրահանգումները չեն արտահայտում և չեն կարող արտահայտել ՀՀ դատախազության դիրքորոշումը որևէ իրավական հարցի և (կամ) փաստական հանգամանքի վերաբերյալ:

Disclaimer

The articles published in the scientific-practical journal “Legality” of the RA Prosecutor’s Office are the result of the authors' professional research and reflect their professional opinion within the framework of academic freedom.

The analyses, judgments and conclusions contained in the articles do not and cannot express the position of the Prosecutor's Office of the Republic of Armenia in regard to any legal issue and (or) factual circumstances.

Примечание

Статьи, опубликованные в научно-практическом журнале “Законность” Прокуратуры РА, являются результатом профессиональных исследований авторов и отражают их профессиональное мнение в рамках академической свободы.

Содержащиеся в статьях анализы, постановления и выводы не выражают и не могут выражать позицию Прокуратуры Республики Армения в отношении каких-либо правовых вопросов и (или) фактических обстоятельств.

ՀՀ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ «ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆՊԱՐԲԵՐԱԿԱՆԻ ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Եղիազար Ավագյան (*Խմբագրական խորհրդի նախագահ*)- ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ

Անահիտ Մանասյան- իրավաբանական գիտությունների թեկնածու, ԵՊՀ սահմանադրական իրավունքի ամբիոնի դոցենտ, ՀՀ մարդու իրավունքների պաշտպան

Արթուր Ղամբարյան- իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Հայ-ռուսական համալսարանի իրավունքի և քաղաքականության ինստիտուտի իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի ամբիոնի վարիչ

Հաննա Սուխոցկա- իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Եվրոպայի խորհրդի «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) պատվավոր նախագահ, Պոզնանի Ադամ Միցկևիչի անվան համալսարանի սահմանադրական իրավունքի ամբիոնի վարիչ, Լեհաստանի նախկին վարչապետ

Յանիս Պլեպս- իրավաբանական գիտությունների դոկտոր, Լատվիայի համալսարանի իրավագիտության ֆակուլտետի իրավունքի տեսության և պատմության ամբիոնի դոցենտ, Լատվիայի Գերագույն դատարանի դատավոր

Ռոման Մելնիկ- իրավաբանական գիտությունների դոկտոր, Մ.Ս. Նարիկբաևի անվան KAZGUU համալսարանի իրավունքի բարձրագույն դպրոցի պրոֆեսոր

Լեոնիդ Գոլովկո- իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Մ.Վ. Լոմոնոսովի անվան Մոսկվայի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության, արդարադատության և դատախազական վերահսկողության ամբիոնի վարիչ

Իգոր Կրավեց- իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Նովոսիբիրսկի պետական համալսարանի պետության և իրավունքի տեսության ու պատմության և սահմանադրական իրավունքի ամբիոնի վարիչ

Նորբերթ Բերնսդորֆ- իրավաբանական գիտությունների դոկտոր, Մարբուրգի Ֆիլիպսի անվան համալսարանի պատվավոր պրոֆեսոր, Հիմնարար իրավունքների Եվրոպական միության խարտիայի ազգային փորձագետ (Վիեննա), Դաշնային սոցիալական դատարանի նախկին դատավոր

Անդրես Պարմաս- Տալինի շրջանային դատարանի քրեական պալատի դատավոր, քրեական իրավունքի դասախոս, Էստոնիայի Հանրապետության նախկին գլխավոր դատախազ, Էստոնիայի «Դատական իշխանություն» պարբերականի նախկին գլխավոր խմբագիր

Մաուրիցիո Բլոկ- Իտալիայի Հանրապետության զինվորական գլխավոր դատախազ, «Զինվորական արդարադատություն» պարբերականի խմբագիր

Կոնտակտային տվյալներ

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0010, Վազգեն Սարգսյան 5

Էլ.հասցե՝ orinakanutyun@prosecutor.am

Հեռ.՝ 010 511 506

www.prosecutor.am

EDITORIAL BOARD OF THE SCIENTIFIC-PRACTICAL JOURNAL "LEGALITY" OF THE PROSECUTOR'S OFFICE OF THE REPUBLIC OF ARMENIA

Yeghiazar Avagyan *(Chair of the Editorial Board)*- Deputy Prosecutor General of the Republic of Armenia

Anahit Manasyan- Ph.D., Associate Professor at the Department of Constitutional Law of Yerevan State University, Human Rights Defender of the Republic of Armenia

Artur Ghambaryan- Doctor of Law, Professor, Head of the Chair of Theory of Law and Constitutional Law of the Russian-Armenian University

Hanna Suchocka- Doctor of Law, Professor, Head of the Department of Constitutional Law of Adam Mickiewicz University in Poznań, Honorary President of the European Commission for Democracy through Law (the Venice Commission of the Council of Europe), Former Prime Minister of Poland

Janis Pleps- Doctor of Law, Associate Professor at the Department of Legal Theory and History, Faculty of law, University of Latvia, Judge of the Supreme Court of Latvia

Roman Melnyk- Doctor of Law, Professor at M. Narikbayev KAZGUU University Law School

Leonid Golovko- Doctor of Law, Professor, Head of the Chair of Criminal Procedure, Justice and Supervision by Public Prosecutor of Lomonosov Moscow State University

Igor Kravets- Doctor of Law, Professor, Head of the Chair of Theory and History of State and Law and Constitutional Law of the Novosibirsk State University

Norbert Bernsdorff- Doctor of Law, Honorary Professor at Philipps-Universität Marburg/Hessen, National key expert on the European Charter of Fundamental Rights /Vienna/, Retired Judge of the Third Instance Court on Social Affairs

Andres Parmas - Judge of the Criminal Chamber of the Tallinn District Court, Lecturer in Criminal Law, Former Prosecutor General of the Republic of Estonia, Former Editor-in-Chief of the yearbook of Estonian judiciary

Maurizio Block- Military General Prosecutor of the Republic of Italy, editor of the legal journal "Military Justice"

Contacts
Address: Vazgen Sargsyan Street 5, Yerevan, 0010, Armenia
E-mail: orinakanutyun@prosecutor.am
Tel.: 010 511 506
www.prosecutor.am

РЕДАКЦИОННАЯ КОЛЛЕГИЯ НАУЧНО-ПРАКТИЧЕСКОГО ЖУРНАЛА "ЗАКОННОСТЬ" ПРОКУРАТУРЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

Егиазар Авагян *(председатель Редакционной коллегии)*- Заместитель Генерального прокурора Республики Армения

Анаит Манасян - кандидат юридических наук, доцент кафедры конституционного права Ереванского государственного университета, Защитник прав человека Республики Армения

Артур Гамбарян - доктор юридических наук, профессор, заведующий Кафедрой теории права и конституционного права Института права и политики Российско-Армянского университета

Ханна Сухоцка - доктор юридических наук, профессор, заведующая кафедрой конституционного права Университета им. Адама Мицкевича в Познане, почетный председатель Европейской комиссии Совета Европы «Демократия посредством права» (Венецианская комиссия), бывший премьер-министр Польши

Янис Плепс – доктор юридических наук, доцент кафедры теории и истории права юридического факультета Латвийского университета, судья Верховного суда Латвии

Роман Мельник - доктор юридических наук, профессор Высшей школы права университета КАЗГЮУ имени М.С.Нарикбаева

Леонид Головко - доктор юридических наук, профессор, заведующий кафедрой уголовного процесса, правосудия и прокурорского надзора юридического факультета Московского государственного университета имени М.В. Ломоносова

Игорь Кравец - доктор юридических наук, профессор, заведующий кафедрой теории и истории государства и права и конституционного права Новосибирского государственного университета

Норберт Бернсдорф - доктор юридических наук, почетный профессор в Марбургском университете им. Филипса, национальный ключевой эксперт Европейской хартии основополагающих прав /Вена/, бывший судья федерального суда по социальным делам Германии

Андрес Пармас- Судья уголовной палаты Таллиннского окружного суда, преподаватель уголовного права, бывший Генеральный прокурор Республики Эстония, бывший главный редактор ежегодника судебной власти Эстонии

Маурицио Блок- Генеральный военный прокурор Республики Италия, редактор журнала "Военное правосудие"

Контактные данные
Адрес: Республика Армения, г. Ереван, 0010, улица Вазгена Саргсяна 5
Эл. почта: orinakanutyun@prosecutor.am
Тел.: 010 511 506
www.prosecutor.am

Բովանդակություն
Content
Содержание

Norbert Bernsdorff
Admissibility and Limits of Scolding of Decisions of the Highest Courts by Public Officials 20
Նորբերթ Բերնսդորֆ
Գերագույն դատարանների որոշումները պետական պաշտոնատար անձանց կողմից քննադատելու թույլատրելիությունը և սահմանները 27
Норберт Бернсдорф
Допустимость и пределы оспаривания решений высших судов государственными служащими 28
Արթուր Ղամբարյան
Ապացուցման ֆորմալ միջոցների մեթոդաբանական հարցերը 29
Artur Ghambaryan
Methodological Issues of Formal Means of Proof 42
Артур Гамбарян
Методологические вопросы формальных средств доказывания 43
Վիգեն Հարությունյան, Հայկուհի Մարտիկյան
Սուտ ցուցմունք տալու համար մեղադրյալին քրեական պատասխանատվության ենթարկելու հիմնախնդիրներ 44
Vigen Harutyunyan, Haykuhi Martikyan
Issues of Holding a Defendant Criminally Liable for Giving False Testimony 62
Виген Арутюнян, Айкуи Мартикян
Вопросы привлечения обвиняемого к уголовной ответственности за дачу ложных показаний 63
Արսեն Վարդանյան
Թույլատրելիությունն ու պիտանիությունը որպես քրեադատավարական ապացույցի հատկանիշ ՀՀ քրեական դատավարությունում 64
Arsen Vardanyan
Admissibility and Relevance as Characteristics of Evidence in Criminal Proceedings of the Republic of Armenia 86
Арсен Варданян
Допустимость и пригодность как признаки доказательств в уголовном судопроизводстве Республики Армения 87
Գայանե Գասպարյան
Հանրային աշխատանքներ պատժատեսակի դերը պատժի նպատակների իրացման համատեքստում և նշանակման ընթացքում առաջացող գործնական խնդիրները 88
Gayane Gasparyan
The Role of Public Works in the Context of Implementing the Goals of Punishment and Practical Issues Arising in the Process of Implementing the Goals of Punishment 112

Гаяне Гаспарян
Роль общественных работ в контексте реализации целей наказания и практические вопросы, возникающие в процессе реализации целей наказания 113
Մանե Մարկոսյան
Ընդերքօգտագործման հարաբերությունների քաղաքացիաիրավական կարգավորման նշանակությունը 114
Mane Markosyan
Significance of Civil Legal Regulation of Subsoil Use Relations 136
Мане Маркосян
Значение гражданско-правового регулирования отношений недропользования 137
Գայանե Մելիքյան
Քրեական վարույթներով իրավական օգնության ոլորտում առկա հիմնախնդիրները. համեմատական վերլուծություն ոլորտը կարգավորող նախկին և ներկա օրենսդրությունների միջև 138
Gayane Melikyan
Existing Issues in the Field of the Legal Assistance in Criminal Proceedings: a Comparative Analysis Between Previous and Current Legislation Regulating the Field 157
Гаяне Меликян
Существующие проблемы в сфере юридической помощи по уголовным делам: сравнительный анализ между предыдущим и действующим законодательством, регулирующим данную сферу 158
Անի Սարգսյան
Դատախազության սահմանադրական լիազորությունները Հայաստանի Հանրապետությունում. որոշ հիմնախնդիրներ 159
Ani Sargsyan
Constitutional Authorities of Prosecutor's Office in the Republic of Armenia: Some Issues 178
Ани Саргсян
Конституционные полномочия прокуратуры в Республике Армения: некоторые проблемы 179
Ռոբերտ Մհերյան
Համագործակցության վարույթ կիրառելու առանձնահատկությունները՝ քրեական վարույթի նյութերը դատարան ուղարկելիս և դատարանում 180
Robert Mheryan
Features of Cooperation Proceedings When Transmitting Criminal Case Materials to the Court and During the Court Process 196

Роберт Мгерян
Особенности порядка сотрудничества во время передачи уголовного дела в суд или во время судебного разбирательства 197
Սոնա Մարգարյան
Կաշառք տալու օժանդակության և կաշառքի միջնորդության հանցակազմների կիրառելիությանը, դրանց տարանջատմանը վերաբերող որոշ հիմնախնդիրներ 199
Sona Margaryan
Certain Fundamental Issues Related to Applicability, as Well as Distinguishment of Such Crimes as Mediation in Bribery and Aiding Bribery 216
Сона Маркарян
Некоторые фундаментальные вопросы, касающиеся применимости, а также различию таких преступлений, как посредничество во взяточничестве и пособничество во взяточничестве 217
Էլեն Ծատուրյան
Իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության հիմնահարցերը 218
Elen Tsaturyan
Main Issues of Criminal Liability of Legal Entities 233
Элен Цатурян
Основные вопросы уголовной ответственности юридических лиц 234
Մարկ Ազդարիդիս
12 տարին չլրացած անձի նկատմամբ կատարված հանցավոր ոտնձգության քրեաիրավական որակումը ըստ Հայաստանի Հանրապետության նոր քրեական օրենսգրքի 235
Marc Azdaridis
Legal Qualification of Crimes Committed Against a Person Under 12 Years of Age According to the New Criminal Code of the Republic of Armenia 251
Марк Аздаридис
Уголовно-правовая квалификация преступления совершенного в отношении лица не достигшего 12 лет в соответсвии с новым уголовным кодексом Республики Армения 252
Էլեն Մարգարյան
Մարդու իրավունքների եվ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի կիրառելիության հիմնախնդիրը պետական պաշտոնյաների վերաբերյալ գործերով 254
Elen Margaryan
The Issue of Applicability of Article 6 of the European Convention on Human Rights and Fundamental Freedoms in Cases Concerning Public Officials 267

Элен Маргарян
Проблема применимости статьи 6 европейской конвенции о защите прав человека и основных свобод в делах, касающихся государственных служащих 268
Գևորգ Բարսեղյան
Օպերատիվ-հետախուզական գործունեության ապահովմանն ուղղված հանցակազմերի իրավական մոդելավորման արդի հիմնախնդիրները 269
Gevorg Barseghyan
Topical Issues of Legal Modeling of Criminal Offenses Aimed at Ensuring Operational-Search Activities 291
Геворг Барсегян
Актуальные проблемы правового моделирования преступлений, направленных на обеспечение оперативно-розыскной деятельности 292

https://doi.org 10.59821/18294219-2025.1-bal15

Norbert Bernsdorff
Doctor of Law, Honorary Professor at Philipps-Universität Marburg, Faculty of Law, *National key expert on the European Charter of Fundamental Rights (in Vienna), Retired Judge of the Third Instance Court on Social Affairs of Germany, Member of the Editorial Board of the Scientific-Practical Journal „Legality" of the RA Prosecutor's Office*

ADMISSIBILITY AND LIMITS OF SCOLDING OF DECISIONS OF THE HIGHEST COURTS BY PUBLIC OFFICIALS[1]

Abstract
Judgmental scolding has become an important factor in the relationship between politics and the highest courts.

Parliamentarians and ministers use it as a weapon against what they see as the far-reaching decision-making powers of the highest courts. Judges see it as an undisguised attempt to exert influence and intimidation.

The following article comes to the conclusion that criticism of judicial decisions is not only permissible to a large extent, but even necessary. However, politicians are limited by the principle of separation of powers and the principle of judicial independence.

The tense relationship is illustrated below using the example of conflicts between politics and the German Federal Constitutional Court.

Keywords: judgmental scolding; attacks on court's rulings; state criticism; freedom of opinion; separation of powers; principle of judicial independence.

1. Introduction

Courts have always been *scolded* for their judgments, but in recent years it has experienced a renaissance[2] . Two examples illustrate this.

The so-called crucifix decision[3] provides ample illustrative material on the effects of the ruling. On August 10, 1995, the First Senate of the German Federal Constitutional Court ruled by 5 votes to 3 that the state-ordered installation of a crucifix in state compulsory schools violated the fundamental right of negative religious freedom under Article 4 (1) of the German Basic Law (Grundgesetz - GG). Crosses in classrooms led to "pupils being confronted with this symbol during lessons by the state without any alternative and being forced to learn under the cross". Politicians criticized this

[1] The article was presented on 18.03.2025 and was reviewed on 10.06.2025.
[2] See S. Kretikow, Attack on Court's Rulings, FLIES 1972, pp. 610 (612).
[3] Federal Constitutional Court, decision of August 10, 1995 - 1 BvR 1087/91, BVerfGE 93, pp. 1 (26).

decision unprecedentedly and excessively. Some doubted that the decision was binding - contrary to the clear provision of § 31 of the Federal Constitutional Court Act (Bundesverfassungsgerichtsgesetz - BVerfGG). Some called for a boycott of the decision, which was justified by the right of resistance under Article 20 (4) GG. In addition, politicians described the decision as a "devastating ruling" that would not stand and made reform proposals to weaken the German Federal Constitutional Court.

The decision of the Second Senate of March 31, 1998 on the question of Germany's participation in the European Monetary Union[4] also met with considerable criticism of the Federal Constitutional Court's view. The constitutional complaints had been regarded by the Federal Constitutional Court as manifestly unfounded, so that it was possible to proceed in accordance with § 24 BVerfGG. However, many politicians had criticized the fact that the constitutional complaints had not already been considered inadmissible. This decision also led to a public debate on the role of the Federal Constitutional Court.

The *attack on court's rulings* combines a wide variety of motives: anger about individual decisions, general displeasure about the growing power of the judiciary, the discovery of judgments as an election campaign issue, but also the poorly disguised attempt to intimidate an independent third power[5].

2. State or Private Criticism ?

Nowadays, a public official almost always belongs to a party, and there are four conceivable roles in which he can slip into as a critic. Firstly, if he is a minister, he expresses his criticism in his official capacity as a member of the executive. Most ministers are also members of parliament, so that secondly they speak officially as members of the legislature. Thirdly, as a party functionary, the critic belongs to the private sphere, where he may express his opinion in accordance with Article 5 (1) GG and participate in the formation of the political will of the people in accordance with Article 21 (1) sentence 1 GG. Fourthly, politicians are of course also private individuals who, like millions of other Germans, enjoy freedom of opinion.

Article 97(1) GG protects judicial independence from attacks by other powers. It therefore follows from Article 97 (1) GG that a critic of a judgment must be assessed in the role that is attributed to him by the judges concerned, and in particular by the public. It therefore depends on the function in which the challenged judge experiences the critic of the judgment. Judicial independence, however, is not a privilege of the judge but, as an expression of the state's duty to ensure justice, a privilege of the citizens seeking justice. Therefore, the recipient's horizon must also be taken into consideration[6] . The critic has only acted in an official capacity if the public perceived him in this capacity when he criticized the judgement.

[4] Federal Constitutional Court, decision of March 31, 1998 - 2 BvR 1877/97 and others, BVerfGE 97, pp. 350.

[5] In this way R. Mischra, Zulässigkeit und Grenzen der Urteilsschelte, Berlin 1997, p. 24. For more see G. Saula Angriff auf die richterliche Unabhängigkeit, GESA 2001, pp. 316 (323).

[6] See A. Viedma, Die öffentliche Herabwürdigung von Richtern, EuGla 1990, pp. 401 (412).

3. Admissibility of Official Judgment Scolding

It is generally agreed that public officials who make statements in precisely this capacity do not benefit from the fundamental rights protection of freedom of opinion under Article 5(1) GG. Fundamental rights constitute guarantees of freedom that citizens can assert against the state. In contrast, criticism of public officials takes place within the internal sphere of the state, which is divided into powers.

However, the fundamental permissibility of free speech within the internal sphere of state powers arises for another reason. The right of public officials to express judgment can be justified by the principle of separation of powers in Article 20 (2) sentence 2 GG. The permissibility of the official right to criticize judgments follows from the personal and substantive rights of intervention that the legislative and executive powers have vis-à-vis the judiciary. The legislative and executive branches elect or recruit judges in accordance with Article 94 (1) sentence 2 and Article 95 (2) GG. In addition to the public, Parliament and the government are thus also involved in the control process as links in the chain of legitimacy. Pursuant to Article 98 (2) GG, Parliament may bring a so-called judicial impeachment with the aim of removing a judge from office. This power presupposes that Parliament may discuss the decisions of a judge on which it bases its accusations. In addition to co-determination in terms of personnel, parliament and the government determine the factual framework of the judging process. They enact laws, ordinances and other standards to which the judiciary is bound in accordance with Article 20 (3) GG and to which the judge is subject in accordance with Article 97 (1) GG. In order for the legislative and executive branches to be able to carry out their law-making activities effectively, they must be able to discuss all matters that can be regulated without hindrance. This shows that the third power, despite its factual and personal independence, is integrated into a system of de facto dependencies.

4. Limits of Official Judgmentalism

The first limit of official *judgmental scolding* is formed by the provisions of the German Criminal Code (Strafgesetzbuch - StGB) on defamation (§§ 185 to 188), which will not be discussed in detail here.

The principle of separation of powers pursuant to Article 20 (2) sentence 2 GG and the provisions concretizing this principle as well as the principle of judicial independence pursuant to Article 97 (1) GG can be considered as the most important limits to the *scolding* of judgments[7] . First of all, the relationship between these two principles must be clarified.

Art. 20 (2) sentence 2 GG constitutes the administration of justice as a third power and assigns its exercise to special bodies . Article 92 GG takes a concrete form in two directions, firstly by naming the judges as special organs and secondly by entrusting them alone with the judicial power. Article 97 GG guarantees judges the status they need to effectively fulfill the judicial function entrusted to them. However, the judge can only be

[7] G. Saula, Angriff auf die richterliche Unabhängigkeit, GESA 2001, pp. 316 (320).

independent within the framework formed by the functional area of the third power. The principle of judicial independence only unfolds against the background of the judicial function generally described in Article 20 (2) sentence 2 and Article 92 GG.

4.1. The Principle of Separation of Powers - Art. 20 (2) sentence 2 GG

The principle of separation of powers prohibits the exercise of external powers. It applies to all powers and thus also to the administration of justice. It may not be deprived of the powers necessary for the fulfillment of its constitutional duties[8] . The monopoly of jurisdiction lies with the judges in accordance with Article 92 GG. If an activity constitutes jurisdiction in terms of content, it must be exercised with ultimately binding effect by impartial and independent judges. This rules out any systematic cooperation with the other powers and guarantees an "isolation of powers"[9] . The legislative and executive branches violate the principle of separation of powers if they decide legal disputes contrary to their competences or undermine the citizen's right to legal protection and the control function of the third power by disregarding the final binding judgment. According to this principle, the general principle of the separation of powers is generally unaffected by the *scolding of judgments* . It verbalizes displeasure about the result of a dispute decision, but leaves the dispute decision itself with the German Federal Constitutional Court. An *attack on court's rulings* alone does not deprive the judgment of its ultimately binding effect.

However, the principle of the separation of powers also entails a duty to respect each other's powers. This principle does not mean that the decisions of another power must be endorsed in terms of content or that they must remain uncommented. The point is that, despite all differences in the matter, a permissible exercise of authority is respected as such. For the functional area of jurisdiction, it is precisely the unimpeded decision on disputes with ultimate binding force that is characteristic of the duty to ensure justice and the control function of the third power. The principle of the separation of powers is therefore violated where *the scolding of judgments* denies the judiciary this decision-making activity and decision-making effect[10].

There are two groups of cases in which the power of final decision is affected[11] : the *non-observance of judgments* and the *repetition of norms* in the case of provisions that have been declared unconstitutional by the Federal Constitutional Court.

4.1.1. Non-Compliance with Judgments

The control function of jurisdiction and the citizen's right to justice are only guaranteed if the state, as a party to the proceedings, observes the judgment issued

[8] S. Kretikow, Attack on Court's Rulings, FLIES 1972, pp. 610 (613).
[9] Common opinion. See A. Viedma, Die öffentliche Herabwürdigung von Richtern, EuGla 1990, pp. 401 (411).
[10] See S. Kretikow, Attack on Court's Rulings, FLIES 1972, pp. 610 (613).
[11] Thus expressly G. Saula, Angriff auf die richterliche Unabhängigkeit, GESA 2001, pp. 316 (317). See A. Viedma, Die öffentliche Herabwürdigung von Richtern, EuGla 1990, pp. 401 (402, 404).

against it. The power to make final decisions compels state authorities to obey, so that failure to comply with judgments constitutes a violation of the principle of separation of powers. Accordingly, statements by politicians are already inadmissible if they suggest that a judgment does not have to be observed or that there is an obviously non-existent right to resist judgments.

4.1.2. Repetition of Norms

The repetition of norms envisaged in the form of a ruling is also unconstitutional if the proposed legislative act clearly contradicts a ruling of the Federal Constitutional Court. Because the interpretation of the constitution by the German Federal Constitutional Court expressed in the operative part and supporting reasons is binding on the legislature pursuant to Art. 20 (3) GG, repetitions of norms are inadmissible if they are merely fed by the dissatisfaction of the losing state authority with the decision without a change in living conditions. In principle, the legislature is not prevented from enacting a provision with the same content[12] . However, it cannot ignore the reasons for the unconstitutionality of the original law as determined by the Federal Constitutional Court. Rather, a repetition of a provision requires special reasons, which may arise in particular from a significant change in the factual or legal circumstances relevant for the constitutional assessment or the views on which it is based[13].

4.2. The Objective Independence of Judges - Article 97 (1) GG

According to Article 97 (1) GG, German judges are independent and subject only to the law.

It is generally agreed that the independence of judges protects them from instructions and certain psychological influences. According to the case law of the German Federal Constitutional Court, the executive - and correspondingly also the legislature - is prohibited from exerting any "avoidable influence" on the legal status of judges[14] . As part of the principle of the separation of powers, Article 97 (1) GG grants judges the status they need in order to be able to prevent an abuse of power by the other two branches of the judiciary. The control function of jurisdiction can only be realized by a judge who is and feels free to declare acts of the executive and, within the scope of his competence, of the legislature unlawful. Independence is a prerequisite for the neutrality of the judge.

The substantive independence under Article 97 (1) GG thus results in the prohibition, applicable to the executive and legislative branches, of any form of influence which, according to the objective horizon of judges and those seeking justice, is capable of binding

[12] Federal Constitutional Court, decision of October 6, 1987 - 1 BvR 1086/82 and others, BVerfGE 77, pp. 84 (103 et seq.).

[13] See Federal Constitutional Court, decision of July 15, 1997 - 1 BvL 20/94 and others, BVerfGE 96, pp. 260 (263).

[14] See Federal Constitutional Court, decision of June 4, 1969 - 2 BvR 33/66 and others, BVerfGE 26, pp. 79 (93 et seq.); decision of June 27, 1974 - 2 BvR 429/72 and others, BVerfGE 38, pp. 1 (21); decision of January 7, 1981 - 2 BvR 401/76 and others, BVerfGE 55, 372 (389).

the judge in his or her decision on the merits as strongly or more strongly than the law is capable of doing. Art. 97 (1) GG contains the prohibition of exercising influences that are alien to the law. This formula applies to all conduct that may come into conflict with judicial independence, and therefore also applies to the *scolding of judgments*.

Such an influence can result from the content, the form, the context of the criticism, the person of the criticized as well as the person of the critic. The focus here is on a targeted personalization of the criticism. "Judge" *scolding* is more intimidating than purely factual criticism. Factual independence is violated if a judge is explicitly or implicitly announced disadvantages for his judgment. Combined with such content, a particularly harsh form of criticism can be an indication of inadmissible criticism of a judgement. The danger is particularly great if the judge as a person becomes the focus of official criticism. Insults and the announcement of disciplinary sanctions are likely to dissolve the judge's commitment to the law and justice.

5. Conclusion

Judgemental scolding is defined as any negative value judgment by private or official bodies that refers to a court decision. The opposite of *judgment scolding* is *judgment praise*. *Praise* is good for the judge's self-esteem and flatters his vanity. It is claimed *that praise of judgments* has a "subcutaneous" effect, in that it encourages the judge to aim for public applause with his judgment. It is also claimed that the "corrupting power" of *praise of judgments* is stronger than that of criticism of judgments[15].

The limits established for the criticism of decisions of the German Federal Constitutional Court by public officials are very broad, so that they do not in principle stand in the way of a free and heated debate on decisions of the Federal Constitutional Court. However, the climate between the first two branches of government and the German Federal Constitutional Court has cooled noticeably. A remedy is only possible if the judges criticized can be made aware of the permissibility of criticizing judgments, while the politicians criticizing them can be made aware of their limits.

[15] See R. Mishra, Zulässigkeit und Grenzen der Urteilsschelte, Berlin 1997, p. 25.

Reference list (գրականության ցանկ, список литературы)

1. N. Bernsdorff, in: Dieter Umbach/Thomas Clemens, Grundgesetz - Mitarbeiterkommentar und Handbuch, Art. 97, Heidelberg 2002 (ISBN 3-8114-3095-5)

N. Bernsdorff, in: Dieter Umbach/Thomas Clemens, Basic Law – Staff Commentary and Handbook, Art. 97, Heidelberg 2002 (ISBN 3-8114-3095-5)

2. Chr. von Coelln, Zur Medienöffentlichkeit der Dritten Gewalt, Tübingen 2005 (ISBN 3-16-148661-7)

Chr. von Coelln, On the Media Publicity of the Third Power, Tübingen 2005 (ISBN 3-16-148661-7)

3. W. Geiger, Die Unabhängigkeit des Richters, DRiZ 1979, pp. 65 et seq.

W. Geiger, The Independence of the Judge, DRiZ 1979, pp. 65 et seq.

4. S. Kretikow, Attack on Court՝s Rulings, FLIES 1972, pp. 610 et seq.

5. R. Lamprecht, Richter contra Richter, Baden-Baden 1992 (ISBN 3789025992)

R. Lamprecht, Judge versus Judge, Baden-Baden 1992 (ISBN 3789025992)

6.R. Mishra, Zulässigkeit und Grenzen der Urteilsschelte, Berlin 1997 (ISBN 978-3-428-09152-2)

R. Mishra, Admissibility and Limits of Judgmental Scolding, Berlin 1997 (ISBN 978-3-428-09152-2)

7. G. Saula, Angriff auf die richterliche Unabhängigkeit, GESA 2001, pp. 316 et seq.

G. Saula, Attack on Judicial Independence, GESA 2001, pp. 316 et seq.

8.H. Sendler, Das Deckert-Urteil und die Folgen, ZRP 1994, pp. 377 et seq.

H. Sendler, The Deckert Ruling and its Consequences, ZRP 1994, pp. 377 et seq.

9. H. Sendler, Rechtsstaat und richterliche Unabhängigkeit in Gefahr?, NJW 1998, pp. 3622 et seq.

H. Sendler, Rule of Law and Judicial Independence at Risk?, NJW 1998, pp. 3622 et seq.

10. A.Viedma, Die öffentliche Herabwürdigung von Richtern, EuGla 1990, pp. 401 et seq.

A.Viedma, The Public Disparagement of Judges, EuGla 1990, pp. 401 et seq.

11. BVerfG, decision of June 4, 1969 - 2 BvR 33/66 and others, BVerfGE 26, pp. 79-100

12. BVerfG, decision of June 27, 1974 - 2 BvR 429/72 and others, BVerfGE 38, pp. 1-22

13. BVerfG, decision of January 7, 1981 - 2 BvR 401/76 and others, BVerfGE 55, pp. 372-397

14. BVerfG, decision of October 6, 1987 - 1 BvR 1086/82 and others, BVerfGE 77, pp. 84-120

15. BVerfG, decision of May 16, 1995 - 1 BvR 1087/91, BVerfGE 93, pp. 1-37

16. BVerfG, decision of July 15, 1997 - 1 BvL 20/94 and others, BVerfGE 96, pp. 260-264

17.BVerfG, decision of March 31, 1998 - 2 BvR 1877/97 and others, BVerfGE 97, pp. 350-377

Նորբերթ Բերնսդորֆ
Իրավաբանական գիտությունների դոկտոր, Մարբուրգի Ֆիլիպսի անվան համալսարանի պատվավոր պրոֆեսոր, Հիմնարար իրավունքների Եվրոպական միության խարտիայի ազգային փորձագետ (Վիեննայում), Գերմանիայի դաշնային սոցիալական դատարանի նախկին դատավոր, ՀՀ դատախազության «Օրինականություն» գիտագործնական պարբերականի խմբագրական խորհրդի անդամ

ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ՔՆՆԱԴԱՏԵԼՈՒ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ[16]

Համառոտագիր

Դատական ակտերի քննադատությունը դարձել է քաղաքականության և գերագույն դատարանների միջև հարաբերություններում կարևոր գործոն:

Խորհրդարանականներն ու նախարարները այն օգտագործում են որպես միջոց՝ իրենց կարծիքով գերագույն դատարանների որոշումների կայացման լայնածավալ լիազորությունների դեմ: Դատավորները դա համարում են ազդեցություն գործադրելու և միջամտելու փորձ:

Սույն հոդվածում գալիս ենք եզրահանգման, որ դատական որոշումների քննադատությունը ոչ միայն մեծ մասամբ թույլատրելի է, այլև անհրաժեշտ: Այնուամենայնիվ, քաղաքական գործիչները սահմանափակված են իշխանությունների տարանջատման և դատական իշխանության անկախության սկզբունքներով:

Քննարկվող իրավիճակները ներկայացված են քաղաքական գործիչների և Գերմանիայի Դաշնային սահմանադրական դատարանի միջև ծավալվող հարաբերությունների օրինակով:

Հիմնաբառեր- դատական ակտերի քննադատություն, դատարանի որոշումների վրա հարձակումներ, պետական քննադատություն, կարծիքի ազատություն, իշխանությունների տարանջատում, դատական անկախության սկզբունք:

[16] Հոդվածը ներկայացվել է 18.03.2025թ., գրախոսվել է 10.06.2025թ.:

Норберт Бернсдорф
Доктор юридических наук, почетный профессор в Марбургском университете им. Филипса, национальный ключевой эксперт Европейской хартии основополагающих прав (в Венне), бывший судья федерального суда по социальным делам Германии, член редакционной коллегии научно-практического журнала «Законность» Прокуратуры РА

ДОПУСТИМОСТЬ И ПРЕДЕЛЫ ОСПАРИВАНИЯ РЕШЕНИЙ ВЫСШИХ СУДОВ ГОСУДАРСТВЕННЫМИ СЛУЖАЩИМИ[17]

Абстракт

Критика судебных решений стал важным фактором во взаимоотношениях политики и высших судов.

Парламентарии и министры используют его как оружие против того, что они считают далеко идущими полномочиями высших судов по принятию решений. Судьи видят в нём неприкрытую попытку оказать влияние и вмешательство.

В данной статье делается вывод о том, что критика судебных решений не только в значительной степени допустима, но и необходима. Однако политики ограничены принципом разделения властей и принципом независимости судов.

На примере конфликтов между политиками и Федеральным конституционным судом Германии проиллюстрированы эти напряжённые отношения.

Ключевые слова: критика судебных решений; нападки на решения судов; критика государства; свобода выражения мнения; разделение властей; принцип независимости судов.

[17] Статья была представлена 18.03.2025 и прошла рецензирование 10.06.2025.

https://doi.org 10.59821/18294219-2025.1-gaf01

Արթուր Ղամբարյան
Հայ-ռուսական համալսարանի իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի ամբիոնի վարիչ, ՀՀ պետական կառավարման ակադեմիայի պրոֆեսոր, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ վաստակավոր իրավաբան, ՀՀ դատախազության «Օրինականություն» գիտագործնական պարբերականի խմբագրական խորհրդի անդամ

ԱՊԱՑՈՒՑՄԱՆ ՖՈՐՄԱԼ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԸ[1]

Համառոտագիր
Հոդվածում քննարկման առարկա են դարձվել ապացուցման ֆորմալ միջոցի՝ իրավական կանխավարկածի ուժով որոշակի փաստեր հաստատելու վերաբերյալ հարցերը, ինչպես նաև ապացուցման ֆորմալ միջոցների տեղը և դերը ապացուցման գործընթացում, ապացուցման ֆորմալ միջոցների և փաստական միջոցների հարաբերակցությունը:

Ապացուցման օրենսդրական բնորոշման կիրառելիության համատեքստում փաստվում է դրա անհնարինությունը, երբ ապացուցումն իրականացվում է ապացուցման ֆորմալ միջոցների օգտագործմամբ, քանի որ այս դեպքում որևէ ապացույց չի հավաքվում, չի ստուգվում կամ չի գնահատվում:

Հոդվածում քննադատվում է օրենսդրի այն մոտեցումը, թե հանրահայտ փաստերն իրավական կանխավարկածներ են, քանի որ, ինչպես ներկայացվում է հոդվածում, օրենսդիրը խոսում է ՀՀ քր. դատ. օր.-ի 106-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված փաստերի հավաստիությունը վիճարկելու մասին, մինչդեռ իրավական կանխավարկածի մասին դրույթները ոչ թե գոյություն ունեցող փաստի, այլ ենթադրյալ փաստի մասին է, բացառությամբ հանրահայտ փաստի, որն էլ կապ չունի իրավական կանխավարկածի հետ:

Հոդվածում ներկայացված եզրահանգումների լույսի ներքո առաջարկվում է համապատասխան փոփոխություններ իրականացնել ՀՀ քր.դատ.օր.-ում մեթոդաբանական մի շարք սխալները շտկելու նպատակով, իսկ մինչ այդ առաջարկվում է խնդրո առարկա նորմերը մեկնաբանել հոդվածում նշված տարբերակով:

Հիմնաբառեր– իրավական կանխավարկած, ապացուցում, ապացուցման ֆորմալ միջոց, ապացուցում-փաստարկում, փաստ.

[1] Հոդվածը ներկայացվել է 05.05.2025թ., գրախոսվել է 10.06.2025թ.:

Ներածություն

Հոդվածում ներկայացվում է «փաստերի իրավական կանխավարկածը» վերտառությամբ ՀՀ քր.դատ.օր.-ի 106-րդ հոդվածի 1-ին մասում տեղ գտած ապացուցման ֆորմալ միջոցների բովանդակությունը, ինչպես նաև քննարկվող մասում տեղ գտած ապացուցման ֆորմալ միջոցների անհամապատասխանությունը նույն հոդվածի վերտառությանը:

Անհամապատասխանության առիթ է հանդիսացել Լատվիայի քրեական դատավարության օրենսգրքի համապատասխան դրույթի սխալ թարգմանությունը: Մյուս առիթը ՀՀ քր.դատ.օր.-ի 106-րդ հոդված վերտառությունն է, որից ստեղծվում է տպավորություն, թե իրավական կանխավարկածը գոյություն ունեցող փաստ-հանգամանքի մասին է, մինչդեռ այն ոչ թե գոյություն ունեցող փաստի, այլ ենթադրյալ փաստի մասին է:

Ուսումնասիրության հիմնական նպատակը ապացուցման ֆորմալ միջոցների տեղը և դերը ներկայացնելն է, դրանց կիրառման առանձնահատկությունները շեշտադրելը, առկա օրենսդրական հիմնախնդիրները վեր հանելը և դրա շտկման, կատարելագործման և կիրառման արդյունավետությանը միտված առաջարկներ ներկայացնելը:

1. Ընդհանուր դրույթներ

Քրեադատավարական ճանաչողությունն, ընդհանուր առմամբ, առանց պատշաճ ապացուցման (առանց վերաբերելի, թույլատրելի և հավաստի ապացույցներ ձեռք բերելու) հնարավոր չէ, սակայն քրեական դատավարությունում առանձին իրական կամ ենթադրյալ փաստեր ոչ թե ապացուցվում են, այլ *համարվում են* հաստատված (ապացուցված): Եթե օրենքով կամ իրավակիրառ պրակտիկայի հիման վրա իրական կամ ենթադրյալ փաստերը *համարվում են* հաստատված, ապա այդ փաստերի վերաբերյալ ապացույցներ չեն հավաքվում, դրանք չեն մտնում ապացուցման առարկայի մեջ, այսինքն՝ չեն համարվում ապացուցման ենթակա հանգամանք (ՀՀ քր. դատ. օր.-ի 102-րդ հոդված), քանի որ դրանք արդեն իսկ օրենքով համարվում են ապացուցված: Այս պարագայում գործ ունենք ապացուցման ֆորմալ միջոցների (հանրահայտ փաստերի, իրավական կանխավարկածի, նախադատելիության և այլնի) հետ:

Սույն հոդվածում կներկայացվեն ապացուցման ֆորմալ միջոցները տեղը և դերը ապացուցման գործընթացում, ապացուցման ֆորմալ միջոցների և փաստական միջոցների հարաբերակցությունը, ինչպես նաև ապացուցման ֆորմալ միջոցների օրենսդրական կարգավորման ժամանակ թույլ տրված մի շարք մեթոդաբանական սխալները:

2. Ապացուցման ֆորմալ միջոցի էությունը

Խորհրդային ժամանակաշրջանում քչերն էին կարծում, որ քրեական դատավարությունում, ի տարբերություն քաղաքացիական դատավարության, հնարավոր է որոշ փաստեր համարել հաստատված (ապացուցված) ոչ թե ապացուցման

փաստական միջոցներով (ապացույցներով՝ ցուցմունք, փորձագետի եզրակացություն և այլն), այլ ապացուցման ֆորմալ միջոցներով: Այդ ժամանակաշրջանում թերևս Մ. Չելցովն այն եզակի գիտնականներից էր, ով կարծում էր, որ հանրահայտ փաստերը, նախադատելի փաստերը, օրենքով սահմանված կանխավարկած-փաստերը ենթակա չեն ապացուցման[2]: Առանձին հեղինակներ թեև ընդունում էին, որ հանրահայտ փաստերը, նախադատելի փաստերը և օրենքով սահմանված կանխավարկած-փաստերը ճիշտ չէ նույնացնել մյուս փաստերի հետ, սակայն կարծում էին, որ դրանք չեն հանվում ապացուցման առարկայից, պարզապես դրանք, ի տարբերություն մյուս փաստերի, նույն խորությամբ չեն ուսումնասիրվում[3]:

Ինչպես նշվեց, ապացուցման փաստական միջոցները պետք է տարբերակել ապացուցման ֆորմալ միջոցներից: Իրավակիրառ գործընթացում քրեական վարույթի համար նշանակություն ունեցող հանգամանքները հնարավոր է հաստատել կամ հերքել ոչ միայն ապացույցներով, այլ նաև ապացուցման ֆորմալ միջոցներով (նախադատելի փաստեր, իրավական կանխավարկածներ և ֆիկցիաներ, հանրահայտ փաստեր, անվիճելի փաստեր[4]): Տեսությունում նշվում է, որ ապացուցման ֆորմալ միջոցներն իրավաբանական դրույթներ են, որոնք օրենսդիր մարմնի կամ դատարանի կամքով, առանց իրավաբանական հիմնավորման, նախապես սահմանում են իրավաբանական փաստի գոյությունը կամ բացակայությունը[5]:

Ապացուցման ֆորմալ միջոցները ոչ թե ինքնին օրենսդրական դրույթներ են, այլ այդ դրույթներով ամրագրված փաստերի մասին դատողություններ են, ենթադրություններ են կամ հանրահայտ փաստեր են, որոնց հիման վրա իրավասու մարմինները, առանց պատշաճ ապացուցում իրականացնելու, վարույթի համար նշանակություն ունեցող հանգամանքները համարում են հաստատված կամ հերքված: Օրինակ՝ անձի անմեղությունը որևէ փաստական միջոցով չի ապացուցվում, քանի որ ՀՀ Սահմանադրությամբ և ՀՀ քր. դատ. օր.-ով նախատեսված է դրույթ, որի ուժով անձը *համարվում է* անմեղ: Այլ կերպ ասած՝ անձի անմեղությունն ապացույցներով հաստատելու կարիք չկա, քանի որ այդ ենթադրյալ փաստն ապացուցման ֆորմալ միջոցով (իրավական կանխավարկածով) *համարվում է* հաստատված, քանի դեռ այն չի հերքվել: Ապացուցման ֆորմալ միջոցների գործածության դեպքում դասական ապացուցում տեղի չի ունենում:

Պատշաճ ապացուցման սկզբունքի համաձայն՝ քրեական վարույթի համար նշանակություն ունեցող ցանկացած հանգամանք պետք է հաստատվի պատշաճ ապացույցների բավարար համակցությամբ (ՀՀ քր. դատ. օր.-ի 22-րդ հոդվածի 1-

[2] Чельцов М. А. Советский уголовный процесс. М.: Изд. Министерства юстиции СССР. 1948. С. 272-273.

[3] Фаткуллин Ф. Н. Общие проблемы процессуального доказывания. Второе, дополненное издание. Казань, Изд. Казанского университета. 1976. С. 71-74.

[4] Смирнов А. В. Формальные средства доказывания в уголовном праве и процессе: монография. М.: Изд. Норма: ИНФРА-М. 2018.

[5] Новицкий В. А., Новицкая Л. Ю. Проблемы доказательственного права: теория, законодательство, судебная практика. СПб.: ЛГУ им. А.С. Пушкина, 2017. С. 103.

ին մաս)։ «Ցանկացած հանգամանք պատշաճ ապացույցով հաստատել» կոշտ ձևակերպումից ստեղծվում է այնպիսի տպավորություն, որ Օրենսդիրը պահանջում է, որ քրեական դատավարությունում վարույթի համար նշանակություն ունեցող ցանկացած հանգամանք հաստատվի բացառապես փաստական տվյալներ (ապացույցներ) հավաքելու, ստուգելու և գնահատելու եղանակով։ Մինչդեռ, Օրենսդիրը պատշաճ ապացուցման սկզբունքից նախատեսել է բացառություն՝ ՀՀ քր. դատ. օր.-ի 106-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրել է, որ հանրահայտ փաստերը կամ իրավական կանխավարկածներով ենթադրվող փաստերը ոչ թե ապացուցվում են, այլ համարվում են ապացուցված։ Այսինքն՝ Օրենսդիրը թույլատրել է վարույթն իրականացնող մարմնին, առանց պատշաճ ապացուցում իրականացնելու, հանրահայտ փաստերը և ենթադրյալ փաստերը համարել հաստատված։

3. Ապացուցում-երրորդությունը և ապացուցման ֆորմալ միջոցները

Հայաստանի Հանրապետությունում 1998թ.-ից օրենսդրությամբ տրված էր ապացուցման այնպիսի բնորոշում, որտեղ շեշտը դրվում էր ապացույց հավաքելու, ստուգելու և գնահատելու վրա (տե՛ս 1998թ. ՀՀ քր. դատ. օր.-ի 124-րդ հոդվածի 1-ին մասը)։ ՀՀ քր. դատ. օր.-ի 101-րդ հոդվածի 1-ին մասում նույնպես ապացուցումը բնորոշվում է հետևյալ կերպ. «(…) վարույթի համար նշանակություն ունեցող հանգամանքներ հաստատելու կամ հերքելու նպատակով ապացույցներ *հավաքելը*, *ստուգելը* և *գնահատելն է*»։ Ապացուցման օրենսդրական այս բնորոշման մեջ առկա է երկու կողմ. առաջինն ապացուցման ֆունկցիոնալ կողմն է՝ ապացույց հավաքելը, ստուգելը և գնահատելը, որը պայմանականորեն անվանել ենք «ապացուցում-երրորդություն», երկրորդը՝ ապացուցման նպատակային կողմն է՝ վարույթի համար նշանակություն ունեցող հանգամանքները հաստատելը կամ հերքելը։

Իրավաբանները, նկատի ունենալով ապացուցման օրենսդրական բնորոշումը, ապացուցում ասելով հիմնականում նկատի են ունենում միայն ապացուցում-երրորդությունը, այսինքն՝ ապացույց *հավաքելը*, *ստուգելը* և *գնահատելը*։ Մինչդեռ ապացուցման օրենսդրական բնորոշման «ստվերում» է մնացել քրեադատավարական ճանաչողության մեկ այլ կարևոր տեսանկյուն՝ ապացուցում-փաստարկումը (հիմնավորումը), որի ընթացքում վարույթի մասնակիցը համապատասխան փաստարկների միջոցով հիմնավորում է իր պնդման (թեզիսի) ճշմարտացիությունը։

Այսպիսով՝ եթե ՀՀ քր. դատ. օր.-ի 101-րդ հոդվածի 1-ին մասը վերաձևակերպենք, ապա կարելի է տալ ապացուցման հետևյալ բնորոշումը՝ ապացուցումն ապացույցներ հավաքելը, ստուգելը և գնահատելն է (ապացուցում-երրորդությունն է), ինչպես նաև հավաքված ապացույցների հիման վրա վարույթի համար նշանակություն ունեցող հանգամանքները հաստատելու կամ հերքելու մասին եզրահանգումների հիմնավորումն է (ապացուցում-փաստարկումն է)։

Ապացուցման օրենսդրական բնորոշումը (ապացուցում-երրորդությունը) կիրառելի չէ, երբ ապացուցումն իրականացվում է ապացուցման ֆորմալ միջոցների

(հանրահայտ փաստերի, իրավական կանխավարկածների) օգտագործմամբ, քանի որ այս դեպքում որևէ ապացույց չի հավաքվում, չի ստուգվում կամ չի գնահատվում: Մյուս կողմից, դա չի նշանակում, որ ապացուցման ֆորմալ միջոցների պարագայում քրեադատավարական ապացուցումը բացակայում է, պարզապես՝ ապացուցումն իրականացվում է ոչ թե «ապացուցում-երրորդություն», այլ «ապացուցում-փաստարկում» ձևաչափով: Օրինակ՝ հանրահայտ փաստն, ապացուցում-փաստարկման ժամանակ օգտագործում է որպես իր դիրքորոշումը (թեզիսը) հիմնավորելու փաստարկ: Այսպիսով՝ ապացուցման ֆորմալ միջոցների պարագայում ապացուցում-երրորդությունը բացակայում է, սակայն առկա է ապացուցում-փաստարկումը:

ՀՀ քր. դատ. օր.-ի 101-րդ հոդվածի 1-ին մասում տրված ապացուցման բնորոշումը (ապացուցում-երրորդությունը) բացարձականացնող և այդ համատեքստում՝ ապացուցում-փաստարկումը հերքող կամ այն լռությամբ շրջանցող մասնագետներին պետք է հիշեցնել խորհրդային դատավարագետ Մ. Ստրոգովիչի և Օքսֆորդի համալսարանի գիտնականներ Ֆ. Վայսմանի և Հ. Հարթի կողմից 1940-ականներին ձևավորած՝ սահմանումների բաց սահմանի կամ բաց տեքստուրայի (կազմվածք) կոնցեպտը, ըստ որի՝ ոչ մի հասկացություն չի կարող սահմանափակվել այնպես, որ նրա կիրառության ոլորտների հարցում կասկած չմնա, քանի որ միշտ կան այլ ուղղություններ, որոնք հասկացության սահմանումից դուրս են մնացել: Ուստի սահմանումների ճշմարտացիությունը հաստատվում է միայն դրանց օգտագործման համատեքստում: Միշտ կարելի է գտնել այնպիսի համատեքստ, որտեղ տրված սահմանումը չի համապատասխանի այդ համատեքստին[6]: Նույնիսկ օրենսդիրը չի կարող իր ավտորիտար (միակողմանի) ուժի օգնությամբ տալ ապացուցման այնպիսի սահմանում, որը կունենա փակ տեքստուրա և կբացառի ապացուցման այլ դրսևորումները:

4. Ապացուցման փաստական և ֆորմալ միջոցները

Դատավարագիտությունում «ապացուցման միջոց» հասկացությունն ընկալվում է տարբեր իմաստներով: Հեղինակների մի խումբն ապացուցման միջոց ասելով հասկանում է ապացուցողական տեղեկություններ հավաքելու եղանակները, օրինակ՝ քննչական գործողությունները, գաղտնի քննչական գործողությունները, օպերատիվ-հետախուզական միջոցառումները և այլն[7]: Հեղինակների երկրորդ խումբն ապացուցման միջոց ասելով հասկանում է ոչ թե ապացուցողական գործողությունները (ապացույց հավաքելու եղանակները), այլ՝ ապացույցները, ինչպես նաև ապացուցման ձևական միջոցները՝ կանխավարկածները, նախադատելի, հանրահայտ և նոտորային փաստերը, իրավական ֆիկցիաները, ապա-

[6] Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն (օրենսդրությունը, սկզբունքները և սուբյեկտները): Գիտաուսումնական ձեռնարկ / Գիտ. խմբ. Ա. Ղամբարյան. Եր.: Տիգրան Մեծ, 2024:

[7] Стельмах В. Ю. Понятие и система средств доказывания в уголовном судопроизводстве // Вестник Оренбургского государственного университета. 2016. № 6 (194). С. 90-95.

ցուցման սուբյեկտիվ միջոցները՝ մասնագիտական փորձը, իրավաընկալումը, իրավական մշակույթը[8]:

Ապացույց հավաքելու եղանակի (ապացուցողական գործողության) և դրա արդյունքի (ապացույցի) փոխհարաբերությունում գործառնական առումով առաջնային նշանակություն է ստանում ոչ թե ապացույցի ձեռք բերելու եղանակը, այլ արդյունքը՝ ապացույցը, որի հիման վրա պարզվում է վարույթի համար նշանակություն ունեցող հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը: Ապացուցողական գործողություններն ապացույց ձեռք բերելու եղանակներ են, իսկ ապացույցները՝ ապացուցման միջոցներ են:

Քրեական դատավարությունում, բացի ապացույցներից (փաստի մասին տվյալներից), ապացուցման նպատակով օգտագործվում են նաև ապացուցման ֆորմալ միջոցները, օրինակ՝ իրավական կանխավարկածները: Այսպիսով՝ քրեական դատավարությունում ապացուցման միջոց ասելով հասկանում ենք՝

1) ապացուցման փաստական միջոցները (ՀՀ քր. դատ. օր.-ում նախատեսված ապացույցները՝ ցուցմունքը, փորձագետի եզրակացությունը, իրեղեն ապացույցը և այլն),

2) ապացուցման ֆորմալ միջոցները (կանխավարկածները, նախադատելի փաստերը, հանրահայտ և նոտորային փաստերը, իրավական ֆիկցիաները):

Ապացուցման ֆորմալ միջոցներն ապացույցներ (ապացուցման փաստական միջոցներ կամ փաստերի մասին տվյալներ) չեն: Ապացուցման ֆորմալ միջոցները, ի տարբերություն ապացուցման փաստական միջոցների, չեն հավաքվում. ապացուցման ֆորմալ միջոցների օգնությամբ քրեական վարույթի համար նշանակություն ունեցող հանգամանքները *համարվում են* պարզված (հաստատված) օրենքի ուժով:

Ապացույցի օրենսդրական բնորոշումը տրված է ՀՀ քր. դատ. օր.-ի 6-րդ հոդվածի 1-ին մասի 39-րդ կետում.

«Ապացույցը փաստի վերաբերյալ օրենքով սահմանված կարգով ստացված տվյալն է, որի հիման վրա քննիչը, դատախազը, դատարանը պարզում են ապացուցման ենթակա հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը, ինչպես նաև վարույթի համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներ»:

Ապացույցի օրենսդրական բնորոշումը մեկնաբանելիս պետք է նկատի ունենալ հետևյալ հանգամանքները.

Առաջին՝ քրեական վարույթում փաստերի մասին տվյալներն ինքնին դեռևս ապացույց չեն, որպեսզի այդ տվյալները դատավարական իմաստով համարվեն ապացույց, պետք է ամրագրվեն համապատասխան դատավարական

[8] Теория доказательств в советском уголовном процессе. Отв. Ред. Н.В. Жогин, изд. 2-е исп. и доп. М.: Изд. Юридическая литература, 1973. С. 212-213, Россинский С. Б. Средства доказывания в уголовном судопроизводстве // Юридический вестник Самарского университета. 2023. Т. 9, № 1. С. 37-45.

աղբյուրներում (օրենքով նախատեսված ապացույցի տեսակներում): ՀՀ քր. դատ. օր.-ի 86-րդ հոդվածի 1-ին մասում թվարկվում են քրեական վարույթում ապացույցի հետևյալ տեսակները. 1) ձերբակալվածի ցուցմունքը. 2) մեղադրյալի ցուցմունքը. 3) տուժողի ցուցմունքը. 4) վկայի ցուցմունքը. 5) փորձագետի եզրակացությունը. 6) փորձագետի կարծիքը. 7) փորձագետի ցուցմունքը. 8) իրեղեն ապացույցները. 9) ապացուցողական և վարութային այլ գործողությունների արձանագրությունները. 10) արտավարութային փաստաթղթերը:

Եթե հիմք ընդունենք ապացույցի՝ որպես փաստերի մասին տվյալի (բովանդակության) և դրա աղբյուրի (տեսակի, ձևի) միասնության հայեցակարգը, ապա ՀՀ քր. դատ. օր.-ի 6-րդ հոդվածի 1-ին մասի 39-րդ կետը և 86-րդ հոդվածի 1-ին մասն անհրաժեշտ է դիտարկել միասնության մեջ: ՀՀ քր. դատ. օր.-ի 6-րդ հոդվածի 1-ին մասի 39-րդ կետում տրվում է ապացույցի բովանդակությունը (փաստական տվյալ), իսկ 86-րդ հոդվածի 1-ին մասում՝ ապացույցի դատավարական ձևը (անձնային ապացույցի դեպքում՝ դատավարական ձև ունեցող նյութական կրիչը (ցուցմունք, փորձագետի եզրակացություն, ապացուցողական գործողությունների և վարութային այլ գործողությունների արձանագրություն), իսկ առարկայական ապացույցի դեպքում՝ առարկան և դրա հատկանիշները վերարտադրող փաստաթղթերը):

Երկրորդ՝ ՀՀ քր. դատ. օր.-ի 6-րդ հոդվածի 1-ին մասի 39-րդ կետում օգտագործվում է «փաստերի մասին տվյալ» ձևակերպումը, ինչը նշանակում է, որ այդ տվյալները ոչ թե վերացական գնահատողական դատողություններ են կամ կարծիք, այլ կոնկրետ մարդկանց գործողությունների, որոշակի դեպքերի մասին հստակ տեղեկություններ, որոնք հնարավորություն են տալիս պատասխանել ի՞նչ, որտե՞ղ, ե՞րբ, ի՞նչ եղանակով հարցերին[9]: Փաստերի մասին տվյալը չի նույնացվում փաստի հետ և չի կարող ի սկզբանե դիտարկվել որպես ճշմարիտ իրողություն: Փաստի մասին տվյալը կարելի է անվանել նաև փաստական տվյալ:

Երրորդ՝ ապացույցի բնորոշումը տալիս Օրենսդիրը շեշտադրել է ոչ թե ապացույցի միջոցով քրեական վարույթի համար նշանակություն ունեցող հանգամանքներն *օրենքով սահմանված կարգով պարզելու*, այլ ապացույցն *օրենքով սահմանված կարգով ստանալու* հանգամանքը: Ապացույցի օրենսդրական բնորոշման մեջ ապացույցն օրենքով սահմանված կարգով ստանալու շեշտադրությունը ներդաշնակ է պատշաճ ապացուցման սկզբունքի հետ, որը կարևորում է փաստի մասին վերաբերելի տվյալները պատշաճ իրավական ընթացակարգին համապատասխան ստանալու հանգամանքը:

Չորրորդ՝ ապացույցը պետք է տարբերակել ապացուցման ֆորմալ միջոցներից: Քրեական վարույթում ապացուցման ենթակա հանգամանքները հնարավոր է հաստատել կամ հերքել ոչ միայն ապացույցներով (ցուցմունքով, փորձագետի եզրակացությամբ և այլն), այլ ապացուցման ֆորմալ միջոցներով (իրավական կանխավարկածներով և ֆիկցիաներով, անվիճելի կամ հանրահայտ փաս-

[9] Курс советского уголовного процесса. Общая часть. Под ред. Бойкова А. Д., Карпеца И. И. М.: Изд. Изд. Юридическое летература, 1989. С. 553.

տերով[10]): Ապացուցման ֆորմալ միջոցներն իրավաբանական դրույթներ են, որոնք Օրենսդիր մարմնի կամ դատարանի կամքով, առանց իրավաբանական հիմնավորման, նախապես սահմանում են իրավաբանական փաստի գոյությունը կամ բացակայությունը, օրինակ՝ քրեական վարույթի ընթացքում հանրահայտ փաստը *համարվում է* ապացուցված (ՀՀ քր. դատ. օր.-ի 106-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ): Հանրահայտ փաստի գոյությունը *որևէ ապացույցով* (ցուցմունքով, արտավարութային փաստաթղթով և այլն) չի հաստատվում, այն ՀՀ քր. դատ. օր.-ի 106-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի ուժով (այսինքն՝ ֆորմալ միջոցով) *համարվում է* հաստատված:

5. Ապացուցման ֆորմալ միջոցները և փաստերը տարանջատելը

Ապացուցման ֆորմալ միջոցներից հատկապես իրավական կանխավարկածները պետք է տարբերել փաստերից (փաստ-հանգամանքներից) և փաստերի մասին տվյալներից (ապացույցներից): Այսպես՝ ՀՀ քրեական դատավարությունում իրավական կանխավարկածներն ամրագրված են ՀՀ քր. դատ. օր.-ի 106-րդ հոդվածի (փաստերի իրավական կանխավարկածը) 1-ին մասում: Այս հոդվածում առկա կարգավորումները պարունակում են մեթոդաբանական մի շարք սխալներ, որոնց գլխավոր պատճառն իրավական կանխավարկածը և իրավաբանական փաստն իրարից չտարանջատելն է[11]: Հայ օրենսդրի թույլ տված այս սխալի ակունքները պետք է փնտրել Լատվիայի քր. դատ. օր.-ի 125-րդ հոդվածի ռեցեպցիայում: Բանն այն է, որ «Փաստերի իրավական կանխավարկած» հոդվածը ՀՀ դատավարական համակարգ ներմուծվել է Լատվիայի քրեական դատավարությունից: ՀՀ քր. դատ. օր.-ի նախագծի հեղինակները, առանց քննադատական մոտեցման, փոխառնել են Լատվիայի քր. դատ. օր.-ի 125-րդ հոդվածի վերտառությունը և բովանդակությունը՝ անտեսելով այն հանգամանքը, որ այդ հոդվածում միախառնված են իրավական ենթադրությունները (կանխավարկածները) և փաստ-հանգամանքները:

Նախ՝ ՀՀ քր. դատ. օր.-ի 106-րդ հոդվածի վերտառությունը ձևակերպված է հետևյալ կերպ՝ «Փաստերի իրավական կանխավարկածը»[12]: «Իրավական կանխավարկած» ձևակերպումն ինքնին ներառում է ենթադրյալ փաստերի մասին

[10] Смирнов А. В. Формальные средства доказывания в уголовном праве и процессе: монография. М.: Изд. Норма: ИНФРА-М. 2018, Новицкий В. А., Новицкая Л. Ю. Проблемы доказательственного права: теория, законодательство, судебная практика. СПб.: ЛГУ им. А.С. Пушкина, 2017. С. 103.

[11] «Փաստ» բառը գիտությունում գործածվում է տարբեր իմաստներով: Օրինակ՝ իրավագիտությունում և պրակտիկայում տարանջատվում են փաստը՝ որպես իրականության երևույթ (փաստ-հանգամանք, իրավաբանական փաստ) և փաստը՝ որպես մարդկային իմացության ձև (փաստ-իմացություն): Փաստ-հանգամանքի օրինակ են մարդու կամքից անկախ գոյություն ունեցող տարբեր իրադարձությունները, արարքները: Փաստ-իմացության օրինակ են ապացույցները (փաստի մասին տվյալները, իմացությունը), փաստարկները: Օրինակ՝ իրավակիրառ ակտերում փաստ-հանգամանքներն ամրագրվում են փաստ-իմացության ձևով: Այս մասին տե՛ս Черданцев А. Ф. Логико-языковые феномены в юриспруденции: монография М.: Изд. Норма, ИНФРА-М, 2012. Էջեր 158, 168-169:

[12] Լատվիայի քր. դատ. օր.-ի 125-րդ հոդվածի վերտառությունն անգլերենով ձևակերպված է հետևյալ կերպ՝ «Legal Presumption of a Fact»:

դատողությունը (ենթադրյալ փաստերի մասին օրենսդրի մտահանգում = իրավական կանխավարկած), որի պայմաններում օրենքի քննարկվող հոդվածի վերտառությունում «փաստ» բառի գործածությունը մոլորեցնող է: Մի կողմից՝ ստեղծվում է տպավորություն, որ իրավական կանխավարկածը գոյություն ունեցող փաստ-հանգամանքի մասին է, մինչդեռ այն ոչ թե գոյություն ունեցող փաստի, այլ ենթադրյալ (հիպոթետիկ) փաստի մասին է: Մյուս կողմից, այս ձևակերպումը կարող է շփոթ առաջացնել դոկտրինում գործածվող փաստացի կանխավարկածների հետ, որոնք, ընդունված մոտեցման համաձայն, ի տարբերություն իրավական կանխավարկածների, ոչ թե ամրագրված են իրավական նորմերում, այլ ձևավորվել են փաստացի՝ իրավակիրառ պրակտիկայում:

Օրենսդիրը ՀՀ քր. դատ. օր.-ի 106-րդ հոդվածի 2-րդ մասում խոսում է ՀՀ քր. դատ. օր.-ի 106-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված փաստերի հավաստիությունը վիճարկելու մասին, մինչդեռ ՀՀ քր. դատ. օր.-ի 106-րդ հոդվածի 1-ին մասը (որպես իրավական կանխավարկածի մասին դրույթ) ոչ թե գոյություն ունեցող փաստի, այլ ենթադրյալ փաստի մասին է (բացառությամբ հանրահայտ փաստի, որն էլ կապ չունի իրավական կանխավարկածի հետ): Հավաստիությունը ոչ թե կանխավարկածի, այլ ապացույցի հատկանիշ է. կանխավարկածը՝ որպես դատողություն, օժտված է բարձր աստիճանի հավանականության հատկանիշով, ուստի կարելի է վիճարկել կանխավարկածի հավանականությունը, բայց ոչ հավաստիությունը:

Այսպիսով՝ ՀՀ քր. դատ. օր.-ի 106-րդ հոդվածի վերտառությունը պետք է լիներ «Իրավական կանխավարկածները», իսկ ներկայիս ձևակերպման պայմաններում այն պետք է ընթերցել հետևյալ կերպ՝ «փաստերի մասին իրավական կանխավարկածները»:

Երկրորդ՝ Օրենսդիրն իրավական կանխավարկածների շարքին է դասել հանրահայտ փաստերը (ՀՀ քր. դատ. օր.-ի 106-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ): Աղաղակող սխալ է, երբ հանրահայտ փաստը նույնացվում է իրավական կանխավարկածի հետ. Ինչպե՞ս կարող է հանրահայտ փաստը որակվել որպես իրավական կանխավարկած (ենթադրություն): Կրկին պետք է հիշեցնել, որ կանխավարկածը ենթադրություն է գոյություն չունեցող փաստերի մասին, իսկ հանրահայտ փաստը ոչ թե փաստի մասին ենթադրություն է, այլ՝ ակնհայտորեն գոյություն ունեցող փաստ: Օրինակ՝ հանրահայտ է այն փաստը, որ գիշերը մութ է, կամ գիշերվան հաջորդում է ցերեկը: Այս մասին որևէ մեկը ենթադրություն չի անում, դրանք ակնհայտորեն գոյություն ունեցող հանգամանքներ են:

Այլ բան է, որ Օրենսդիրը, որոշել է, որ հանրահայտ փաստերը, իրենց հանրածանոթության (հանրության լայն շրջանակին հայտնի լինելու) շնորհիվ չունեն ապացուցման կարիք, դրանք համարվում են ապացուցված: Թեև վարույթի մասնակիցները կարող են վիճարկել այդ փաստի՝ իրենց համար հայտնիությունը, սակայն այն վիճարկելու հնարավորությունը հանրահայտ փաստը չի դարձնում կանխավարկած:

Պատահական չէ, որ մի շարք դատավարական համակարգերում հանրահայտ փաստերը որակվում են ոչ թե իրավական կանխավարկածներ, այլ դասվում են ապացուցման կարիք չունեցող հանգամանքների (առանց ապացույցների հաստատվող հանգամանքների) շարքին (օրինակ՝ Վրաստանի քր. դատ. օր.-ի 73-րդ հոդված, Մոլդովայի քր. դատ. օր.-ի 98-րդ հոդված, ԱՊՀ մոդելային քր. դատ. օր.-ի 147-րդ հոդված):

Այսպիսով՝ ՀՀ քր. դատ. օր.-ի 106-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում նշված հանրահայտ փաստն իրավական կանխավարկած չէ:

Երրորդ՝ ՀՀ քր. դատ. օր.-ի 106-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը Լատվիայի քր. դատ. օր.-ի համանուն դրույթի սխալ թարգմանության արդյունք է, որի պատճառով փոխվել է ՀՀ քր. դատ. օր.-ի 106-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի իմաստը: Այսպես՝ Լատվիայի քր. դատ. օր.-ի 125-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված է, որ առանց լրացուցիչ դատավարական գործողություններ կատարելու ապացուցված են համարվում հետևյալ հանգամանքները (...) 4) այն փաստը, որ անձին հայտնի են կամ պետք է հայտնի լինեին նորմատիվ ակտերով նախատեսված նրա պարտականությունները[13]: Այս նորմում, մեծ հաշվով, ամրագրված է անձի պարտականությունների իմացության մասին ենթադրությունը (կանխավարկածը): Պատկերացնենք իրավիճակ, որ օրենքով սահմանված է, որ զինվորը պարտավոր է յուրաքանչյուր օր ստուգել իր զենքի սարքինությունը: Լատվիայի քր. դատ. օր.-ի կարգավորումների պարագայում ապացուցված է համարվում այն ենթադրյալ փաստը, որ զինվորը գիտեր կամ պարտավոր էր իմանալ զենքի սարքինությունը ստուգելու իր պարտականության մասին (պարտականությունների իմացության կանխավարկած): Իսկ այս պարտականությանն առնչվող հանգամանքը՝ զենքի սարքին կամ անսարք լինելը պետք է ոչ թե համարել ապացուցված, այլ դրանք պետք է ապացուցել ապացուցման փաստական միջոցներով (օրինակ՝ փորձագետի եզրակացությամբ):

Մինչդեռ, ՀՀ քր. դատ. օր.-ի 106-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում ապացուցված է համարվում «փաստը, *որն* անձին հայտնի է կամ պետք է հայտնի լիներ իրավական ակտով կամ պայմանագրով սահմանված իր մասնագիտական կամ պաշտոնեական պարտականությունների կապակցությամբ»: Այս հոդվածի ձևակերպումից ստեղծվում է այնպիսի տպավորություն, որ ապացուցված է համարվում ոչ թե պարտականությունների մասին իմանալը, այլ այդ պարտականությանն առնչվող որևէ փաստ, որն անձը գիտեր կամ պարտավոր էր իմանալ: Ստացվում է, որ վերը նշված օրինակով ապացուցված պետք է համարվի փաստը (զենքի անսարք լինելը), որը զինվորին հայտնի է կամ պետք է հայտնի լիներ օրենքով սահմանված զենքի սարքինությունը ստուգելու պարտականության կապակցությամբ: Հասկանալի է, որ նման կարգավորումը կամ նման մեկնա-

[13] Անգլերեն տեքստում այն ձևակերպված է հետևյալ կերպ՝ «(...) the fact that a person knows or should have known his or her duties provided for in regulatory enactments», , իսկ ռուսերեն՝ (...) факт того, что лицу известны или должны были быть известны его обязанности, предусмотренные нормативными актами: https://wipolex-res.wipo.int/edocs/lexdocs/laws/en/lv/lv043en.pdf

բանությունը պատշաճ ապացուցման սկզբունքի տեսանկյունից անթույլատրելի է, քանի որ քրեական վարույթի համար նշանակություն ունեցող հանգամանքների մեծ մասը կհանվի ապացուցման առարկայից և դրանք հաստատված կհամարվեն ապացուցման ֆորմալ միջոցներով: Նման իրավիճակում պաշտոնեական հանցագործությունների վարույթով պատշաճ ապացուցման սկզբունքից բացառությունը (իրավական կանխավարկածը) կընդգրկի ենթադրյալ փաստերի լայն շրջանակ, որոնք կհաստատվեն ոչ թե ապացուցման փաստական միջոցներով (պատշաճ ապացույցներով), այլ կհամարվեն հաստատված ապացուցման ֆորմալ միջոցներով (իրավական կանխավարկածով), իսկ սա նշանակում է, որ պատշաճ ապացուցման սկզբունքից բացառությունը (իրավական կանխավարկածը) կվերածվի կանոնի: Վարույթի սկզբունքից բացառությունը կանոն դարձնելը «սկզբունք-կանոն-բացառություն» իրավական կազմվածքի տեսանկյունից անթույլատրելի է:

Այսպիսով՝ անկախ ՀՀ քր. դատ. օր.-ի 106-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի տառացի ձևակերպումներից, այն պետք է ընթերցել հետևյալ կերպ. ապացուցված է համարվում այն փաստը, *որ* անձին հայտնի են կամ պետք է հայտնի լինեին իրավական ակտով կամ պայմանագրով սահմանված իր մասնագիտական կամ պաշտոնեական պարտականությունները:

Եզրակացություն

Հոդվածում ներկայացված եզրահանգումների լույսի ներքո առաջարկվում է համապատասխան փոփոխություններ իրականացնել ՀՀ քր.դատ.օր.-ում՝ քննարկվող հարցինն վերաբերելի և վերը ներկայացված մեթոդաբանական մի շարք սխալները շտկելու նպատակով, իսկ մինչ այդ առաջարկվում է խնդրո առարկա նորմերը մեկնաբանել հոդվածում նշված տարբերակով:

Գրականության ցանկ (reference list, список литературы)

1. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն (օրենսդրությունը, սկզբունքները և սուբյեկտները): Գիտաուսումնական ձեռնարկ / Գիտ. խմբ. Ա. Ղամբարյան. Եր.: Տիգրան Մեծ, 2024:

Criminal Procedure of the Republic of Armenia (Legislation, Principles and Subjects). Scientific and Educational Manual / Scientific Editor A. Ghambaryan. Yerevan: Tigran Mets, 2024.

2. Курс советского уголовного процесса. Общая часть. Под ред. Бойкова А. Д., Карпеца И. И. М.: Изд. Изд. Юридическое летература, 1989. С. 553.

Course of Soviet criminal procedure. General part. Edited by Boykov A.D., Karpets I.I. Moscow: Publ. Publ. Legal Literature, 1989. P. 553.

3. Черданцев А. Ф. Логико-языковые феномены в юриспруденции: монография М.: Изд. Норма, ИНФРА-М, 2012. Էջեր 158, 168-169:

Cherdantsev A. F. Logical-linguistic phenomena in jurisprudence: monograph M.: Publishing house. Norma, INFRA-M, 2012. 158, 168-169:

4. Смирнов А. В. Формальные средства доказывания в уголовном праве и процессе: монография. М.: Изд. Норма: ИНФРА-М. 2018, Новицкий В. А., Новицкая Л. Ю. Проблемы доказательственного права: теория, законодательство, судебная практика. СПб.: ЛГУ им. А.С. Пушкина, 2017. С. 103.

Smirnov A. V. Formal means of proof in criminal law and procedure: monograph. M.: Publ. Norma: INFRA-M. 2018, Novitsky V. A., Novitskaya L. Yu. Problems of the law of evidence: theory, legislation, judicial practice. St. Petersburg: Leningrad State University named after A.S. Pushkin, 2017. P. 103.

5. Теория доказательств в советском уголовном процессе. Отв. Ред. Н.В. Жогин, изд. 2-е исп. и доп. М.: Изд. Юридическая литература, 1973. С. 212-213, Россинский С. Б. Средства доказывания в уголовном судопроизводстве // Юридический вестник Самарского университета. 2023. Т. 9, № 1. С. 37-45.

Theory of evidence in Soviet criminal proceedings. Ed. N.V. Zhogin, 2nd edition and add. Moscow: Legal Literature Publ., 1973. Pp. 212-213, Rossinsky S.B. Means of proof in criminal proceedings // Legal Bulletin of Samara University. 2023. Vol. 9, No. 1. Pp. 37-45.

6. Стельмах В. Ю. Понятие и система средств доказывания в уголовном судопроизводстве // Вестник Оренбургского государственного университета. 2016. № 6 (194). С. 90-95.

Stelmakh V. Yu. Concept and system of evidence in criminal proceedings // Bulletin of the Orenburg State University. 2016. No. 6 (194). P. 90-95.

7. Новицкий В. А., Новицкая Л. Ю. Проблемы доказательственного права: теория, законодательство, судебная практика. СПб.: ЛГУ им. А.С. Пушкина, 2017. С. 103.

Novitsky V. A., Novitskaya L. Yu. Problems of the Law of Evidence: Theory, Legislation, Judicial Practice. St. Petersburg: Leningrad State University named after A.S. Pushkin, 2017. P. 103.

8. Смирнов А. В. Формальные средства доказывания в уголовном праве и процессе: монография. М.: Изд. Норма: ИНФРА-М. 2018.

Smirnov A. V. Formal means of proof in criminal law and procedure: monograph. M.: Publ. Norma: INFRA-M. 2018.

9. Фаткуллин Ф. Н. Общие проблемы процессуального доказывания. Второе, дополненное издание. Казань, Изд. Казанского университета. 1976. С. 71-74.

Fatkullin F. N. General Problems of Procedural Proof. Second, Supplemented Edition. Kazan, Kazan University Publishing House. 1976. Pp. 71-74.

10. Чельцов М. А. Советский уголовный процесс. М.: Изд. Министерства юстиции СССР. 1948. С. 272-273.

Cheltsov M.A. Soviet criminal procedure. Moscow: Publishing House of the Ministry of Justice of the USSR. 1948. P. 272-273.

Artur Ghambaryan
Chairman of the Department of Theory of Law and Constitutional Law of Russian-Armenian University, Doctor of Juridical Sciences, Professor, Professor of the State Administration Academy of the Republic of Armenia, Honored Lawyer of the Republic of Armenia, Member of the Editorial Board of the Scientific-Practical Journal "Legality" of the RA Prosecutor's Office

METHODOLOGICAL ISSUES OF FORMAL MEANS OF PROOF[14]

Abstract

The article discusses the issues of establishing certain facts by means of a formal means of proof, a legal presumption, as well as the place and role of formal means of proof in the proof process, the ratio of formal means of proof and factual means.

In the context of the applicability of the legislative definition of proof, its impossibility is documented when proof is carried out using formal means of proof, since in this case no evidence is collected, verified or evaluated.

The article criticizes the legislator's approach that well-known facts are legal presumptions, since, as presented in the article, the legislator speaks about disputing the reliability of the facts defined in Part 1 of Article 106 of the RA Criminal Procedure Code, while the provisions on legal presumption are not about an existing fact, but about an assumed fact, with the exception of a well-known fact, which has nothing to do with a legal presumption.

In light of the conclusions presented in the article, it is proposed to implement appropriate amendments to the RA Criminal Procedure Code in order to correct a number of methodological errors, and until then, it is proposed to interpret the norms in question in the version specified in the article.

Keywords: legal presumption; proof; formal means of proof; proof-argument; fact.

[14] The article was presented on 05.05.2025 and was reviewed on 10.06.2025.

Артур Гамбарян
Заведующий кафедрой теории права и конституционного права Российско-Армянского (Славянского) Университета, доктор юридических наук, профессор, профессор Академии государственного управления Республики Армения, заслуженный юрист Республики Армения, член редакционной коллегии научно-практического журнала “Законность” Прокуратуры РА

МЕТОДОЛОГИЧЕСКИЕ ВОПРОСЫ ФОРМАЛЬНЫХ СРЕДСТВ ДОКАЗЫВАНИЯ[15]

Абстракт

В статье рассматриваются вопросы установления определенных фактов посредством формального средства доказывания, правовой презумпции, а также место и роль формальных средств доказывания в процессе доказывания, соотношение формальных средств доказывания и фактических средств.

В контексте применимости законодательного определения доказывания документируется его невозможность при доказывании посредством формальных средств доказывания, поскольку в этом случае не собираются, не проверяются и не оцениваются доказательства.

В статье критикуется подход законодателя о том, что общеизвестные факты являются правовыми презумпциями, поскольку, как представлено в статье, законодатель говорит об оспаривании достоверности фактов, определенных в части 1 статьи 106 Уголовно-процессуального кодекса РА, тогда как положения о правовой презумпции не о существующем факте, а о предполагаемом факте, за исключением общеизвестного факта, который не имеет ничего общего с правовой презумпцией.

В свете выводов, изложенных в статье, предлагается внести соответствующие изменения в Уголовно-процессуальный кодекс РА с целью исправления ряда методологических ошибок, а до тех пор предлагается толковать рассматриваемые нормы в редакции, указанной в статье.

Ключевые слова: правовая презумпция; доказательство; формальные средства доказывания; доказательство-аргумент; факт.

[15] Статья была представлена 05.05.2025 и прошла рецензирование 10.06.2025.

https://doi.org 10.59821/18294219-2025.1-hst02

Վիգեն Հարությունյան
ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության կայազորների զինվորական դատախազությունների գործունեության նկատմամբ վերահսկողության բաժնի պետ, արդարադատության առաջին դասի խորհրդական

Հայկուհի Մարտիկյան
Երևանի կայազորի զինվորական դատախազության դատախազ

ՍՈՒՏ ՑՈՒՑՄՈՒՆՔ ՏԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՄԵՂԱԴՐՅԱԼԻՆ ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ[1]

Համառոտագիր

ՀՀ գործող քրեական և քրեական դատավարության օրենսգրքերն ապահովել են մեղադրյալին սուտ ցուցմունք տալու համար քրեական պատասխանատվության ենթարկելու հիմքեր: Չնայած դրան՝ շարունակվում է դեռևս նախկին կարգավորումների կիրառմամբ ձևավորված այն պրակտիկան, որի համաձայն՝ մեղադրյալն իր պաշտպանության իրավունքն իրացնելիս ազատ է միջոցների ընտրության հարցում և իր պաշտպանությունը կարող է իրականացնել նաև սուտ ցուցմունք տալու միջոցով:

Հոդվածում համալիր կերպով ներկայացվել է խնդրո առարկա հարցի հետ կապված գործնականում առկա իրավիճակը: Վերլուծությունները կատարվել են հիմնվելով տարբեր ժամանակներում գործող ներպետական ու այլ պետությունների քրեական ու քրեադատավարական օրենսդրությունների, դատական պրակտիկայի համեմատաիրավական վերլուծության, տարբեր աղբյուրներում տեղ գտած գիտական մոտեցումների, ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումների վրա:

Կատարված հետազոտության հիման վրա եզրահանգում է արվել, որ մեղադրյալի կողմից սուտ ցուցմունք տալու դեպքերին իրավասու մարմինների կողմից օրենքով սահմանված կարգով համարժեք արձագանք չի տրվում: Հոդվածում քննարկման առարկա դարձած հարցերը արդիական են դառնում հատկապես այն համատեքստում, որ չնայած անհրաժեշտ իրավական հիմքերի ամրագրմանը՝ ՀՀ քրեական ու քրեական դատավարության նոր օրենսգրքերի շուրջ եռամյա գործողության պայմաններում մեղադրյալներին քրեական

[1] Հոդվածը ներկայացվել է 05.05.2025թ., գրախոսվել է 09.06.2025թ.:

պատասխանատվության ենթարկելու պրակտիկա դեռևս չի ձևավորվել, ինչն անհրաժեշտ է խնդրո առարկա հարցի կապակցությամբ ՀՀ քրեական և քրեական դատավարության գործող օրենսգրքերի հիմքում ընկած նպատակները, ի վերջո, ապահովելու համար:

Հիմնաբառեր- սուտ ցուցմունք, քրեական պատասխանատվություն, մեղադրյալ, պաշտպանության իրավունքի սահմաններ, սուտ մատնություն, խրախուսական նորմ:

Ներածություն

2022 թվականի հուլիսի 1-ից ուժի մեջ մտած քրեական և քրեական դատավարության օրենսգրքերով կատարվել են մի շարք փոփոխություններ, որոնց հիմքում ընկած է օրենսդրությամբ սահմանված արդյունքին հանրային և մասնավոր շահերի հավասարակշռման եղանակով հասնելու անհրաժեշտությունը: Այդպիսի փոփոխություններից է մեղադրյալին սուտ ցուցմունք տալու համար քրեական պատասխանատվության անձեռնմխելիությունից զրկելը, որով օրենսդիրը նպատակ է ունեցել բարձրացնել մեղադրյալի ցուցմունքի գնահատողական արժեքը և միևնույն ժամանակ մեղադրյալի համար սահմանել վարքագծի կանոն՝ ցուցմունք տալու իրավունքն իրացնելիս առաջնորդվելու արդարադատությունը հարգելու պայմանով: Այդպիսով կատարվել է սուտ ցուցմունք տալու համար պատասխանատվություն նախատեսող հանցակազմի սուբյեկտային կազմի ընդլայնում՝ դրանում ներառելով նաև մեղադրյալին:

Կատարված փոփոխությունը, լինելով նորամուծություն հայրենական օրենսդրությունում, առաջ է բերել տեսական ու գործնական մի շարք խնդիրներ՝ պայմանավորելով սույն հետազոտության անհրաժեշտությունը: Հետազոտության նպատակը սուտ ցուցմունք տալու հանցակազմի ուսումնասիրությունն ու վերլուծությունն է, քրեադատավարական համապատասխան կարգավորումների հետ հանցակազմի տարրերի փոխգործակցության բացահայտումը՝ հանցակազմի նոր սուբյեկտ հանդիսացող մեղադրյալի քրեական պատասխանատվությունն ապահովելու տեսանկյունից:

Հետազոտության նպատակն է հանդիսացել բացահայտել մեղադրյալին սուտ ցուցմունք տալու համար պատասխանատվության ենթարկելու տեսական ու գործնական խնդիրները, որի ճանապարհին անդրադարձ է կատարվել հանցակազմի զարգացման պատմությանը, արարքի հանրային վտանգավորությունն ու պատժելիությունը դիտարկվել է մեղադրյալի պաշտպանության իրավունքի սահմանների համատեքստում, կատարվել են տարբեր իրավակարգերում և պետություններում եղած կարգավորումների համեմատություններ, ուսումնասիրվել է դրանց հիման վրա ձևավորված դատական պրակտիկան, անցկացվել են զուգահեռներ, բացահայտվել են սուտ ցուցմունք տալու համար պատասխանատվությունից ազատելու հիմքերի առանձնահատկությունները, վեր է հանվել մեղադրյալին սուտ ցուցմունք տալու համար պատասխանատվության ենթարկելու գործնականում առկա իրավիճակը:

Գործնական խնդիրների շարքում հատուկ ուշադրություն է հատկացվել սահմանված օրենսդրական հիմքերի պայմաններում մեղադրյալին սուտ ցուցմունք տալու համար պատասխանատվության ենթարկելու դեպքերի բացակայությանը՝ պայմանավորված իրավակիրառողի կողմից բավարար ջանքեր գործադրելու պակասով:

Կատարված ուսումնասիրության հիման վրա ներկայացված առաջարկությունները հնարավորություն կտան վերանայել նախկին օրենսդրությանը համահունչ ձևավորված, սակայն նոր օրենսդրության հետ անհամատեղելի դատական պրակտիկան՝ այն վերաիմաստավորելով և ապահովելով դրա զարգացումը գործող իրավակարգավորումներին համապատասխան:

Գլուխ 1. Սուտ ցուցմունք տալու հանցակազմի զարգացման պատմությունը

Քրեական իրավունքի պատմության մեջ սուտ ցուցմունք տալու համար պատասխանատվությունը դարերի վաղեմություն ունի, ընդ որում՝ հասարակության զարգացման տարբեր փուլերում, յուրաքանչյուր հասարակարգին ու ձևավորված հասարակական հարաբերություններին համապատասխան, հանցակազմը միշտ ենթարկվել է ձևի ու բովանդակության փոփոխությունների՝ ընդգրկելով պատժելի արարքների ամենատարբեր դրսևորումներ: Ընդհանուր առմամբ սուտ վկայության (մատնության) համար պատասխանատվության ենթարկելու նախադրյալներ ամրագրված են եղել Համմուրաբի օրենքներում, իսկ արդեն ներկայում կիրառվող սուտ ցուցմունք տալու հանցակազմի ակունքները տանում են դեպի Հին Հռոմ: Հռոմեական իրավունքում սուտ վկայությունը[2] համարվում էր ծանր հանցագործություն, որի կանխարգելման համար նախատեսված էին առավել խիստ պատժամիջոցներ: Ավելի ուշ՝ ձևավորվեց օրենքների ամբողջական համակարգ, և Կոռնելիոսի օրենքը[3] սուտ վկայություն համարեց նաև դատարանում փաստաթղթեր (ապացույցներ) կեղծելը[4][5]: Շ.Լ.Մոնտեսքյոյի «Օրենքների ոգու մասին» աշխատության մեջ խոսվում է Ֆրանսիայիում սուտ վկայության համար չարդարացված, ոչ համաչափ խիստ պատիժ սահմանված լինելու մասին[6]:

Հայրենական օրենսդրությունում՝ շարադրանքի որոշ տարբերություններով հանդերձ, սուտ ցուցմունք տալու համար քրեական պատասխանատվություն նախատեսված է եղել դեռևս խորհրդային ժամանակաշրջանից: 07.03.1961 թվականին ընդունված Հայկական ԽՍՀ քրեական օրենսգրքի 196-րդ հոդվածով ամրագրված էր ակնհայտ սուտ ցուցմունք տալու հանցակազմը[7], որի համաձայն՝

[2] [falsum testimonium]

[3] Լուկիոս Կոռնելիոս Սուլլա (մ.թ.ա. 81 թ. հունվարի 27 28, լատին. ՝ Lucius Cornelius Sulla (Felix); մ.թ.ա. 138 - մ.թ.ա. 78), հռոմեացի պետական գործիչ

[4] Raimov A., Raimova N. Briefs on the history of ancient Rome/Justice. Legal, scientific and practical publication. ISSN 2181-8991. 2/2021. Tashkent, 2021. -B.46. 10. Khayriev Nodirjon

[5] Neo Science Peer Reviewed Journal. Volume 29. SOME REFLECTIONS ON A RETROSPECTIVE ANALYSIS OF LIABILITY FOR PERJURY. Sattarov Jasurbek Avazbekovich. ISSN (E): 2949-7701. January-2025

[6] Շառլ Լյուի Մոնտեսքյո, «Օրենքների ոգու մասին» աշխատություն, Գիրք 29.

[7] Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության 1963թ. հունվարի 12-ի հրամանագրի խմբագրությամբ ՀՍՍՀ ԳՍՏ, 1963թ., N 5, հոդվ. 52

քրեորեն պատժելի արարք էր համարվում քննության ժամանակ կամ դատարանում վկայի կամ տուժողի կողմից ակնհայտ սուտ ցուցմունք տալը, կամ փորձագետի կողմից ակնհայտ կեղծ եզրակացություն տալը, ինչպես նաև թարգմանչի կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելը:

Նշված հոդվածով նախատեսված հանցակազմի համարժեքն ամրագրվեց 18.04.2003 թվականին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածում, որով քրեական պատասխանատվություն էր նախատեսվում նախնական քննության ընթացքում կամ դատարանում վկայի կամ տուժողի կողմից սուտ ցուցմունք տալու, կամ փորձագետի կողմից ակնհայտ կեղծ եզրակացություն տալու, ինչպես նաև թարգմանչի կողմից սխալ թարգմանություն կատարելու համար: ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված հանցակազմով հանցավոր համարվող արարքների շրջանակը, օրենսգրքի շուրջ քսանամյա գործողության ընթացքում, ենթարկվել է որոշակի փոփոխությունների: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ փոփոխությունների անհրաժեշտությունը որոշ դեպքերում պայմանավորված է եղել հարցի բովանդակային կարգավորման, իսկ որոշ դեպքերում պարզապես օրենսդրական տեխնիկայի կանոններին համապատասխանեցնելու անհրաժեշտությամբ: Հանցակազմի զարգացման պատմության մեջ ամենաէական փոփոխությունը, թերևս, կատարվեց 2022 թվականի հուլիսի 1-ից ուժի մեջ մտած քրեական օրենսգրքով, որով պատասխանատվություն նախատեսվեց նաև մեղադրյալի կողմից սուտ ցուցմունք տալու համար:

Այսպես՝ թե 1961 թվականին ընդունված և թե 2003 թվականին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքերով քրեադատավարական հարաբերություններում որպես սուտ ցուցմունք տալու համար պատասխանատվության ենթակա սուբյեկտ կարող էին հանդես գալ բացառապես վկան կամ տուժողը: Ինչպես նշվեց, ամենաուշագրավ փոփոխությունը, ավելի ստույգ՝ լրացումը, որը տեղի ունեցավ նոր քրեական օրենսգրքով, քրեական վարույթով (գործով) սուտ ցուցմունք տալու հանցակազմի սուբյեկտային կազմի ընդլայնումն է, որի փոփոխությունը պայմանավորված է մեղադրյալի լռելու և օրենքով չարգելված բոլոր միջոցներով պաշտպանվելու իրավունքների բովանդակության ու սահմանների՝ ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքով տեղի ունեցած վերանայմամբ: Մասնավորապես, եթե ՀՀ նախկին քրեական դատավարության օրենսգրքով սահմանված էր, որ մեղադրյալի վրա չի կարող որևէ պատասխանատվություն դրվել իր տված ցուցմունքների և բացատրությունների համար, բացի այն դեպքերից, երբ նա հայտարարել է հանցագործությանն ակնհայտորեն առնչություն չունեցող անձի կողմից հանցանք կատարելու մասին[8], ապա ՀՀ գործող քրեական դատավարության օրենսգիրքը համանման կարգավորում չի նախատեսել և մեղադրյալի լռելու իրավունքին նման լայն բովանդակություն չի հաղորդել: Ավելին՝ ՀՀ գործող քրեական դատավարության օրենսգրքի 221-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ քննիչը մեղադրյալին բացատրում է լռելու նրա իրավունքը, պարզաբանում, որ այդ իրավունքից օգտվելը չի կարող մեկնաբանվել ի վնաս նրա, և եթե մեղադրյալը

[8] 01.07.1998 թվականին ընդունված քրեական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածի 3-րդ մաս

ցուցմունք տալու ցանկություն է հայտնում, ապա քննիչը նրան տեղեկացնում է ճիշտ ցուցմունք տալու պարտականության և նախազգուշացնում սուտ ցուցմունք տալու համար սահմանված պատասխանատվության մասին: Հարցաքննվող անձին ցուցմունք տալու հետ կապված նրա իրավունքները և պարտականությունները բացատրելու, ինչպես նաև այդ պարտականությունների չկատարման համար սահմանված պատասխանատվության մասին նախազգուշացնելու ընթացակարգ է նախատեսված նաև դատարանում[9]:

Այսպիսով՝ ՀՀ գործող քրեական օրենսգրքով, պայմանավորված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով մեղադրյալի պաշտպանության իրավունքի սահմանների վերանայման հանգամանքով, պատասխանատվություն է նախատեսվել մեղադրյալի կողմից սուտ ցուցմունք տալու համար, որի հիմնավորումներին և անդրազգային օրենսդրության կարգավորումներին անդրադարձ կկատարվի հաջորդիվ:

Գլուխ 2. Մեղադրյալի պաշտպանության իրավունքի սահմանները

Սուտ ցուցմունք տալու համար քրեական պատասխանատվություն նախատեսված է մի շարք երկրների քրեական օրենսդրությամբ, սակայն ոչ բոլոր երկրների օրենսդրությամբ է մեղադրյալը համարվում նշված հանցագործության սուբյեկտ: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այս հարցի կապակցությամբ մոտեցումները տարբեր են՝ կախված իրավական համակարգերից:

Ռոմանոգերմանական իրավական ընտանիքին պատկանող մի շարք երկրներում մեղադրյալներին քրեական պատասխանատվության ենթարկելու համար նախատեսված հանցակազմը «սուտ մատնությունն» է կամ, բառացի թարգմանությամբ, «սուտ մեղադրելը»: Մեղադրյալի տված ցուցմունքը չի համարվում քրեորեն պատժելի արարք, քանի դեռ վերջինիս հայտարարությունները չեն պարունակում այլ անձանց հանցանքի կատարման մեջ մեղադրելու հատկանիշներ: Որպես օրինակ կարող ենք վկայակոչել Իսպանիայի Թագավորության քրեական օրենսգրքի 456-րդ հոդվածը, Շվեյցարական Համադաշնության քրեական օրենսգրքի 303-րդ հոդվածը, Գերմանիայի Դաշնության քրեական օրենսգրքի 164-րդ հոդվածը, Ֆրանսիայի Հանրապետության քրեական օրենսգրքի 226-10-րդ հոդվածը, Նորվեգիայի Թագավորության քրեական օրենսգրքի 222-րդ հոդվածը, որոնցում ամրագրվել են մեղադրյալներին սուտ մատնության համար քրեական պատասխանատվության ենթարկելու իրավական հիմքեր:

Մոտեցումն այլ է անգլոամերիկյան իրավական համակարգին հարող երկրների օրենսդրությամբ: Մեծ Բրիտանիայի քրեական օրենսդրության[10] կարգա-

[9] 30.06.2021 թվականին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 326-րդ հոդվածի 1-ին մաս

[10] Մեծ Բրիտանիայում սուտ ցուցմունք տալու համար քրեական պատասխանատվության ենթարկելու հարցերը կարգավորվում են Պառլամենտի կողմից ընդունված՝ Սուտ ցուցմունքի (հայտարարությունների) վերաբերյալ 1911 թվականին ընդունված Իրավական ակտով:
Perjury Act 1911, Քրեական Արդարադատության վերաբերյալ 1987 թվականին ընդունված Իրավական ակտով: The Criminal Justice Act 1987.

վորումները թույլ են տալիս քրեադատավարական հարաբերություններում սուտ ցուցմունք տալու համար պատասխանատվության ենթարկել թե՛ վկաներին (տուժողներին), և թե՛ մեղադրյալներին: Մեծ Բրիտանիայում մեղադրյալին սուտ ցուցմունք տալու համար քրեական պատասխանատվության ենթարկելու դատական պրակտիկայի ուսումնասիրություններում հետաքրքրություն է ներկայացնում Լորդերի պալատի կողմից կայացված 22.06.2000 թվականի դատավճիռը[11]: Մեղադրյալը նախկինում (1972 թվականին) ճանաչվել էր անպարտ և արդարացվել էր տրանսպորտային միջոց վարելու իրավունքից զրկված լինելու պայմաններում մոտոցիկլ վարելու մեղադրանքով: Դատավճռի հիմքում դրվել էր նաև մեղադրյալի երդման տակ տված ցուցմունքը, որով հերքում էր մոտոցիկլ վարելու հանգամանքը: Դրանից հետո մեղադրյալին առաջադրվել էր մեղադրանք սուտ ցուցմունք տալու համար: Մեղադրյալն ի պաշտպանություն իրեն փաստարկ էր ներկայացրել, որ իր արդարացումը բացառում է սուտ ցուցմունք տալու համար իրեն պատասխանատվության ենթարկելու հնարավորությունը՝ հաշվի առնելով էստոպելի սկզբունքը[12], քանի որ դատարանն արդեն իր ցուցմունքը դատավճռով գնահատել էր՝ այն կասկածի տակ չառնելով: Լորդերի պալատն այս կապակցությամբ դիրքորոշում հայտնեց, որ էստոպելի սկզբունքը չի գործում քրեահրավական հարաբերություններում այնպես, ինչպես քաղաքացիահրավական հարաբերություններում կգործի, և մեղադրյալը կարող է քրեական պատասխանատվության ենթարկվել նաև սուտ ցուցմունք տալու համար՝ չնայած նրան, որ այդ ցուցմունքը նախկինում հիմք է ընդունվել արդարացման դատավճիռ կայացնելու համար: Դատավճռի հիմնավորումներում շեշտադրում է կատարվել, որ «սուտ ցուցմունք տալն անպատիժ թողնելը միայն այն հիմնավորմամբ, որ այն նախկինում արդարացման դատավճռի հիմքում է դրվել, կարող է լուրջ հարված հասցնել արդարադատությանը, և խարխլել արդարադատության համակարգի նկատմամբ ձևավորված հանրային վստահությունը[13]»:

Մյուս երկիրը, որի փորձառությունը համեմատական առումով նույնպես կարող է այս համատեքստում հետաքրքրություն ներկայացնել Ամերիկայի Միացյալ Նահանգներն է: ԱՄՆ քրեական օրենսգրքի 1621-րդ հոդվածը (որոշ դեպքերում նաև 1623-րդ հոդվածը) քրեական պատասխանատվություն է սահմանում երդման տակ գիտակցաբար սուտ (իրականության չհամապատասխանող) տեղեկություններ հայտնելու համար[14]: ԱՄՆ-ում ևս ձևավորված է կայուն նախադեպային իրա-

[11] Րեգինան ընդդեմ Զ.-ի (պատասխանող), 22.06.2000 թվականի դատավճիռ.

[12] սկզբունք [issue of estoppel], որն իրենից ներկայացնում է արգելք՝ բարձրացնել իրավական հարց (օրինակ՝ դատարանին հայց ներկայացնել), որը նախկինում մեկ այլ գործի շրջանակներում բարձրացվել է և նույն կողմերի մասնակցությամբ դատարանի կողմից լուծվել կամ իրավական գնահատականի արժանացվել: Այն համարվում է res judicata սկզբունքի ենթատարր, որի համաձայն՝ դատական գործով կայացված վերջնական որոշումը, որպես իրավական որոշակիության արդյունք, ենթակա է հարգանքի (Բրումարեսկուն ընդդեմ Ռումինիայի [ՄՊ] [Brumărescu v. Romania [GC]], թիվ 28342/95, §61, ՄԻԵԴ 1999-VII):

[13] Լորդ Հյութոն.

[14] United States Code Title 18, Crimes and Criminal Procedure: Perjury, False declarations.

վունք սուտ ցուցմունք տալու համար մեղադրյալին քրեական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ: Որպես օրինակ հիշատակման է արժանի Դունիգանն ընդդեմ Ամերիկայի Միացյալ Նահանգների գործը, որով Ընդհանուր իրավասության դատարանը մեղադրյալի կողմից սուտ ցուցմունք տալու հանգամանքը «հիմնական» գործով դիտել է մեղադրյալի քրեական պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանք և նշանակել առավել խիստ պատիժ: Այն բողոքաբերի կողմից վիճարկվել է, սակայն Գերագույն դատարանն արձանագրել է դրա իրավաչափությունը՝ նշելով, որ այդ կերպ չի խախտվում մեղադրյալի պաշտպանության իրավունքը, մեղադրյալն իրավունք չունի սուտ ցուցմունք տալ՝ անգամ եթե քրեական պատասխանատվությունից խուսափելու նպատակ է հետապնդում[15]:

Այսպիսով՝ ներկայացված դիրքորոշումների առանցքում, ըստ էության, այն գաղափարն է, որ յուրաքանչյուր դեպքում, անկախ անձի դատավարական կարգավիճակից, վարույթի մասնակիցը պետք է պատասխանատվության ենթարկվի իր տված սուտ ցուցմունքի համար:

Վերոնշյալ վերլուծությունների արդյունքում կարող ենք արձանագրել, որ խնդրո առարկա հարցի հետ կապված ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգիրքը վերցրել է անգլոամերիկյան իրավական համակարգի կարգավորումները, որոնց էությունն է՝ մեղադրյալը կարող է պահպանել լռություն, իսկ ցուցմունք տալու դեպքում տալ ճշմարտացի ցուցմունք:

Ամփոփելով այլ երկրների փորձի վերլուծությունը՝ միևնույն ժամանակ կարող ենք արձանագրել, որ չնայած սուտ ցուցմունք տալու ազատության սահմանների վերաբերյալ կարգավորումների տարբերությանը, ուսումնասիրված երկրների օրենսդրությունները մեկ հարցում միևնույն մոտեցումն ունեն. խոսքը վերաբերում է սուտ ցուցմունք տալու առանձին դրսևորում հանդիսացող սուտ մատնության դեպքերին, այսինքն՝ երբ մեղադրյալը հաղորդում է հանցագործությանն առնչություն չունեցող անձի կողմից հանցանք կատարելու վերաբերյալ տեղեկություններ: Տեղին կլինի նշել, որ, չնայած մեղադրյալի կողմից սուտ ցուցմունք տալու վերաբերյալ արգելքի բացակայությանը, այլ անձի կողմից հանցանք կատարելու վերաբերյալ տեղեկություններ հաղորդելը ՀՀ քրեական դատավարության նախկին օրենսգրքով դիտվում էր բացառություն և հանգեցնում քրեական պատասխանատվության:

Հարկ է նշել նաև, որ սուտ ցուցմունք տալու համար մեղադրյալին քրեական պատասխանատվության ենթարկելու հանցանքի հանրային վտանգավորության գնահատականն ուղղակիորեն առնչվում է մեղադրյալի դատավարական կարգավիճակին և դրանից բխող իրավունքների ու պարտականությունների շրջանակին, և կախված նրանից, թե որքանով է մեղադրյալի կողմից սուտ ցուցմունք տալը դիտվում նրա դատավարական լիազորությունների մաս, դրանից ելնելով էլ որոշվում է անթույլատրելի վարքագծի սահմանները և այդ արգելքը համա-

[15] UNITED STATES v. DUNNIGAN, 507 U.S. 87 (1993).

պատասխան սանկցիայով ապահովելու անհրաժեշտությունը: Այս համատեքստում անդրադառնալով մեղադրյալի դատավարական կարգավիճակի առանձնահատկություններին՝ պետք է նշել, որ քրեական դատավարության սկզբունքային դրույթները հռչակում են, որ մեղադրյալը կարող է իր պաշտպանությունն իրականացնել օրենքով չարգելված բոլոր միջոցներով, իսկ վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է ապահովել օրենքով չարգելված բոլոր միջոցներով մեղադրանքից նրա պաշտպանվելու իրական հնարավորությունը[16]: Մեղադրյալի իրավունքներից է պահպանել լռություն կամ ցուցմունք տալ: Միևնույն ժամանակ մեղադրյալի դատավարական կարգավիճակը կանխորոշում է նրա ցուցմունքի առանձնահատկությունները: Եթե վարույթն իրականացնող մարմնի համար մեղադրյալի ցուցմունքը ապացույց ձեռք բերելու աղբյուր է, ապա մեղադրյալի համար այն հանդիսանում է համար իրեն առաջադրված մեղադրանքից պաշտպանվելու միջոց: Մեղադրյալն իր ցուցմունքով կարող է վիճարկել իրեն առաջադրված մեղադրանքի հիմնավորվածությունը, հաստատել կամ հերքել դրա հիմքում ընկած փաստական հանգամանքները, առաջ քաշել սեփական վարկածները:

2022 թվականի հուլիսի 1-ից զուգահեռաբար ուժի մեջ մտած ՀՀ քրեական և քրեական դատավարության օրենսգրքերով տեղ գտած կարգավորումներով որոշակի քայլեր են արվել անձի իրավունքների ու ազատությունների պաշտպանության համակարգի կատարելագործման և միաժամանակ հանրային ու մասնավոր շահերի հավասարակշռված պաշտպանությունն ապահովելու ուղղությամբ: Այս առումով պատահական չէ, որ վարույթի հանրայնությունը[17] գործող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված սկզբունքների շարքում իր առաջնահերթ ամրագրումն է ստացել: Հանրային և մասնավոր շահերի հավասարակշռված պաշտպանության համատեքստում պետք է դիտարկել 30.06.2021 թվականին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված այն նորամուծությունը, որով մեղադրյալը զրկվել է սուտ ցուցմունք տալու համար քրեական պատասխանատվության անձեռնմխելիությունից՝ սահմանափակվելով կամ լռություն պահպանելու, կամ ճշմարտացի ցուցմունք տալու հնարավորություններով: Օրենսգիրքը ձերբազատվել է մեղադրյալի սուտ ցուցմունք տալու իրավունքից կամ սուտ ցուցմունքի համար պատասխանատվության անձեռնմխելիությունից՝ նախ այն հիմնավորմամբ, որ դատավարության որևէ սուբյեկտ չպետք է վարույթն իրականացնող մարմնին իրականությանն ակնհայտորեն չհամապատասխանող տեղեկություն տրամադրելու արտոնություն ունենա, բացի այդ, մեղադրյալին նման իրավունքի վերապահումը բացասաբար է անդրադառնում հենց նրա տված ցուցմունքի ապացուցողական նշանակության վրա, քանի որ գնահատող սուբյեկտն այն դիտարկում է անվստահության և անարժանահավատության նախապաշարումի

[16] ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 20-րդ հոդվածի 2-րդ մաս.

[17] 30.06.2021 թվականին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Վարույթի իրականացումը հանրային գործունեություն է, որի ընթացքում և արդյունքում ապահովվում է հանրային և մասնավոր շահերի հավասարակշռված պաշտպանությունը»:

պրիզմայով: Հետևաբար, մեղադրյալը պետք է իրավունք ունենա կա՛մ պահպանել լռություն կա՛մ տալ ճշմարտացի ցուցմունքներ[18]:

Արդյունքում ՀՀ քրեական օրենսգրքի 504-րդ հոդվածը, ի թիվս տարբեր իրավական հարաբերություններում տարբեր կարգավիճակ ունեցող մասնակիցների կողմից իրականությանը չհամապատասխանող տեղեկություններ հայտնելու կամ ամրագրելու դեպքերի, պատիժ սահմանեց նաև քրեական վարույթով (գործով) մեղադրյալի կողմից սուտ ցուցմունք տալու համար՝ քրեական վարույթով սուտ ցուցմունք տալու հանցագործությունը որևէ կերպ չկապելով անձի դատավարական կարգավիճակի հետ:

Այսպիսով՝ ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգիրքը մեղադրյալին զրկել է սուտ ցուցմունք տալու նախկինում առկա արտոնությունից, ինչը հիմնավորվում է մեղադրյալին իր իրավունքը չարաշահելու հնարավորությունից զրկելու և միևնույն ժամանակ նրա ցուցմունքի նկատմամբ վստահություն ձևավորելու անհրաժեշտությամբ[19]:

Գլուխ 3. Սուտ ցուցմունք տալու համար պատասխանատվությունից ազատելու հիմքերի առանձնահատկությունները

Խոսելով սուտ ցուցմունք տալու համար պատասխանատվության հիմքերի մասին՝ հարկ ենք համարում նախ և առաջ հակիրճ անդրադառնալ հանցակազմի քրեաիրավական բնութագրին: Այսպես՝ հանցակազմի հիմնական անմիջական օբյեկտ են հանդիսանում արդարադատության իրականացման և դատական համակարգի նորմալ գործունեության ապահովմանն ուղղված հասարակական հարաբերությունները, որպես լրացուցիչ օբյեկտ կարող են հանդես գալ քաղաքացիների իրավունքներն ու օրինական շահերը: Սուտ ցուցմունք տալը դրսևորվում է մինչդատական կամ դատական վարույթում հարցաքննվելիս իրականությանը չհամապատասխանող տեղեկություններ հաղորդելու ձևով[20]: Ընդ որում՝ իրականությանը չհամապատասխանող տեղեկությունները պետք է վերաբերեն այն հանգամանքներին, որոնք ներառված են կոնկրետ քրեական վարույթով ապացուցման առարկայի մեջ, ինչով էլ պայմանավորված հանցակազմի ձևավորման համար կարևորվում է գործի լուծման համար էական նշանակություն ունենալու կամ գործի կամ վարույթի ընթացքը խաթարելու պայմանը: Հանցակազմի սուբյեկտը հատուկ է, որպես այդպիսին կարող են

[18] Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության նոր օրենսգրքի հիմնավորումներ. ՀՀ կառավարության նիստի 2011 թվականի մարտի 10-ի N 9 արձանագրություն, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության նոր օրենսգրքի հայեցակարգին հավանություն տալու մասին

[19] Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության նոր օրենսգրքի հայեցակարգային լուծումների, նորարարական մոտեցումների և հիմնական ինստիտուտների մեկնաբանման գործնական ուղեցույց, Եվրոպայի խորհուրդ, հուլիս, 2022թ.

[20] Վերաբերելի մասով՝ Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Հատուկ մաս (վեցերորդ հրատարակություն՝ փոփոխություններով և լրացումներով), Երևանի պետ. համալս. Եր., ԵՊՀ հրատ., 2012, Criminal law of the Republic of Armenia. Special part (sixth edition with changes and additions):/ Yerevan State University Yerevan: YSU ed., 2012,

հանդիսանալ վկան, տուժողը, մեղադրյալը: Հանցակազմի սուբյեկտիվ կողմը բնութագրվում է ուղղակի դիտավորությամբ. հանցակազմի սուբյեկտը պետք է գիտակցի, որ հաղորդում է իրականությանը չհամապատասխանող տեղեկություններ: Արարքն ավարտված է համարվում սուտ ցուցմունքն արձանագրելու պահից:

Միևնույն ժամանակ օրենսդիրը նախատեսել է սուտ ցուցմունք տված անձանց, այդ թվում՝ մեղադրյալին պատասխանատվությունից ազատելու հատուկ հիմք՝ այն խրախուսական նորմի ձևով ամրագրելով ՀՀ քրեական օրենսգրքի 504-րդ հոդվածի 3-րդ մասով: Համաձայն դրա սուտ ցուցմունք տված անձն ազատվում է այդ արարքի համար պատասխանատվությունից, եթե նա հիմնական գործի մինչդատական վարույթի կամ դատական քննության ընթացքում՝ մինչև վարույթն իրականացնողի կողմից դատավճիռ կամ այլ վերջնական (վարույթը եզրափակող) որոշում կայացնելը, կամովին հայտնել է իր տված սուտ ցուցմունքի մասին:

Մինչ նշված նորմի բովանդակային վերլուծությանն անցնելը՝ հարկ ենք համարում անդրադառնալ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածում տեղ գտած խրախուսական նորմին և դրա գործողության պայմաններում նշված հանցակազմին տրված մեկնաբանություններին, որոնք վերաբերելի մասով արդիական պետք է համարել նաև առկա իրավակարգավորման առնչությամբ[21]:

Ըստ 2003 թվականին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 3-րդ մասի՝ քննարկվող արարքը կատարելու համար անձը ենթակա չէր քրեական պատասխանատվության, եթե նա նախնական քննության կամ դատական քննության ընթացքում մինչև դատարանի կողմից դատավճիռ կամ որոշում կայացնելը կամովին հայտնել էր իր տված սուտ ցուցմունքի մասին:

ՀՀ վճռաբեկ դատարանը, քննարկման առարկա դարձնելով այն իրավիճակը, երբ սուտ ցուցմունք տալու հանցանքի հատկանիշներով քրեական գործը հարուցվել էր և անձին մեղադրանք ներկայացնելուց հետո ուղարկվել էր դատարան ժամանակագրական առումով ավելի շուտ քան, հիմնական գործով (այսինքն՝ այն գործով, որի շրջանակներում տրվել է սուտ ցուցմունքը) վերջնական դատական ակտ կայացնելը, դիրքորոշում արտահայտեց այն մասին, որ սուտ ցուցմունք տալու հանցակազմի առկայության կամ բացակայության մասին հետևության հնարավոր կլինի հանգել միայն հիմնական քրեական գործով վերջնական դատական ակտը կայացնելուց հետո: Հակառակ մոտեցման պարագայում պարզապես խախտվում է ապացույցների գնահատման այն սկզբունքը համաձայն որի՝ ոչ մի տվյալ նախապես հավաստի ապացույցի ուժ չունի[22]: Արդեն նշվեց, որ արտահայտված իրավական դիրքորոշումն արդիական է նաև ՀՀ գործող քրեական օրենսգրքի 504-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի մեկնաբանման ու կիրառման առնչությամբ: Ավելին, սուտ ցուցմունք տալու համար անձին քրեական պատասխանատվության ենթարկելու հարցի լուծման տեսան-

[21] Կարեն Լևոնի Սարուխանյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի 2010 թվականի օգոստոսի 27-ի թիվ ԼԴ/0301/01/09 որոշում

[22] Վճռաբեկ դատարանի 2010 թվականի օգոստոսի 27-ի թիվ ԼԴ/0301/01/09 որոշման 24-րդ կետը

կյունից կարևոր համարելով մինչև հիմնական գործով վարույթը եզրափակող դատավարական ակտ կայացնելն անձի դրսևորած վարքագիծը, օրենսդիրը 504-րդ հոդվածի 4-րդ մասով տվել է հիմնական գործ հասկացության ձևակերպումը՝ այն սահմանելով որպես գործ, որի շրջանակներում տրվել է սուտ ցուցմունքը:

Այսպիսով՝ կատարված վերլուծությունների արդյունքում կարող ենք միանշանակ արձանագրել, որ անձին, այդ թվում մեղադրյալին, սուտ ցուցմունք տալու համար պատասխանատվության ենթարկելու մասին խոսք կարող է գնալ բացառապես հիմնական գործը (վարույթը) եզրափակող դատավարական ակտի կայացումից հետո: Ընդ որում՝ թեև օրենսդիրը խրախուսական նորմի գործողությունից օգտվելը հնարավոր է համարում մինչև վարույթը եզրափակող որոշման կայացման պահը տրված սուտ ցուցմունքի մասին հայտնելու դեպքում, սակայն գործող քրեադատավարական օրենսդրության կարգավորումներից ելնելով կարելի է ասել, որ ճիշտ կլիներ այդ պահը կապել ոչ թե եզրափակիչ որոշման կայացման, այլ դրա ուժի մեջ մտնելու հետ: Մասնավորապես՝ եզրափակիչ որոշումներից քրեական վարույթը կարճելու մասին որոշումն օրինական ուժի մեջ է մտնում օրենսգրքով սահմանված բողոքարկման ժամկետը լրանալու, իսկ բողոքարկվելու դեպքում՝ այն վերջնականապես հաստատվելու պահից[23]: Առաջին ատյանի դատարանի՝ եզրափակիչ դատական ակտն օրինական ուժի մեջ է մտնում վերաքննության կարգով բողոքարկման ժամկետն անցնելուց հետո, եթե այն բողոքարկված չի եղել[24]: Սա նշանակում է, որ քանի դեռ եզրափակիչ դատավարական ակտն ուժի մեջ չի մտել, առկա է վարույթը շարունակելու հնարավորություն (ընդ որում, ոչ թե բացառիկ վարույթի կարգով, այլ սովորական ռեժիմով), որի պայմաններում անձը գործնականում կարող է փոխել իր ցուցմունքները և հայտնել նախկինում իր տված սուտ ցուցմունքի մասին: Գտնում ենք, որ նման իրավիճակներում անձին խրախուսական նորմի գործողությունից օգտվելու հնարավորությունից զրկելը միայն այն հիմնավորմամբ, դրա գործողությունը կապվել է եզրափակիչ որոշման կայացման, այլ ոչ թե օրինական ուժի մեջ մտնելու պահի հետ, ոչ միայն չի արտահայտի օրենսդրի կամքը, այլ նաև իրավական առումով խոցելի կլինի: Այսպիսով՝ թեև օրենքի ձևակերպումից ստացվում է, որ անձը խրախուսական նորմի նախատեսած հնարավորությունից կարող է օգտվել մինչև վարույթով վերջնական որոշում կայացնելը, սակայն գտնում ենք, որ խրախուսական նորմը կիրառելի կլինի նաև այն անձանց նկատմամբ, ովքեր իրենց կողմից տրված ցուցմունքի մասին կհայտնեն մինչև կայացված վերջնական որոշման ուժի մեջ մտնելու պահը:

Հանցակազմի զարգացման պատմությունն ու առկա իրավակարգավորումները հաշվի առնելով՝ կարող ենք ասել նաև, որ էական է ոչ միայն հիմնական գործով վարույթը եզրափակող ակտի ձևական առկայությունը, այլ նաև դրա բովանդակությունը և դրանում անձի ցուցմունքներին տրված այնպիսի գնահատականը, ինչից ակհայտ կդառնա, որ անձը տվյալ վարույթի ընթացքում տվել է սուտ

[23] ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 207-րդ հոդվածի 11-րդ մաս
[24] ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 281-րդ հոդվածի 1-ին մաս

ցուցմունք, ինչը և հիմք կհանդիսանա սուտ ցուցմունք տալու առերևույթ հանցանքի կապակցությամբ քրեադատավարական ընթացակարգի մեկնարկի համար: Այս առումով իրենից հետաքրքրություն է ներկայացնում այն իրավիճակի կապակցությամբ գործող և նախկին օրենսգրքերի կարգավորումները, երբ անձի ցուցմունքները չէին կարող էական նշանակություն ունենալ գործի լուծման համար կամ խաթարել վարույթի ընթացքը: Թե՛ նախկին և թե՛ գործող քրեական օրենսգրքերով այդ հանգամանքը դիտվել է որպես անձին քրեական պատասխանատվությունից ազատելու հիմք, սակայն եթե նախկին քրեական օրենսգրքով այդ դրույթը տեղ էր գտել 338-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված խրախուսական նորմի մեջ, ապա գործող օրենսգրքում այն ամրագրվել է հոդվածի դիսպոզիցիան ձևակերպելիս և ներկայացվել որպես հանցակազմը բացառող հանգամանք: Կարծում ենք, որ վերջին կարգավորումն ավելի ճիշտ է, քանի որ տրված սուտ ցուցմունքի՝ վարույթի համար ոչ էական նշանակություն ունենալու հանգամանքն իր բնույթով արարքի հանրային վտանգավորությանը վերաբերող հատկանիշ է, այլ ոչ հանցավորին սոցիալական նշանակություն ունեցող որոշակի դրական վարքագծի դրդող և (կամ) հանցանքի կանխմանը (բացահայտման) նպաստող միջոց, հետևաբար այն իրավամբ տեղ է գտել հանցավոր արարքի նկարագրության մեջ՝ օգտագործվելով որպես հանցակազմը ձևակերպելու և դրա սահմանները գծելու գործիք:

Շարունակելով նախկին և գործող քրեական օրենսգրքերում տեղ գտած խրախուսական նորմերի համեմատությունը՝ հարկ ենք համարում անդրադառնալ նաև գործող օրենսգրքով կատարված ևս մեկ թերության շտկման, ինչը նույնպես գործնականում խնդրահարույց իրավիճակների պատճառ էր դառնում: Այս դեպքում խոսքը նախկին օրենսգրքի խրախուսական նորմի այն ձևակերպման մասին է՝ համաձայն որի անձը ենթակա չէ քրեական պատասխանատվության, եթե նա մինչև դատարանի կողմից դատավճիռ կամ որոշում կայացնելը կամովին հայտնել է իր տված սուտ ցուցմունքի մասին: Նման իրավակարգավորման պայմաններում խնդիրներ էին առաջանում բոլոր այն դեպքերում, երբ քրեական վարույթը սահմանափակվում էր նախաքննությամբ և գործը դատարան չէր ուղարկվում: Այդ դեպքում, որքան էլ որ վարույթը եզրափակող դատավարական ակտում ընդգծվեր վարույթի մասնակցի կողմից տրված ցուցմունքի սուտ լինելը, միևնույն է, անձը չէր կարող դրա համար պատասխանատվության ենթարկվել, քանի որ տվյալ ժամանակ գործող կարգավորումների պայմաններում հնարավորություն ուներ մինչև դատարանի կողմից համապատասխան ակտ կայացնելն իր տված սուտ ցուցմունքի մասին հայտնելով ազատվել պատասխանատվությունից: Ասվածի ճշմարտացիությունը հաստատվում է նաև ՀՀ վճռաբեկ դատարանի հիշատակված որոշմամբ արտահայտված դիրքորոշմամբ՝ համաձայն որի անձն իր կողմից տրված սուտ ցուցմունքի համար ենթակա է քրեական պատասխանատվության միայն դատաքննության արդյունքներով կայացված վերջնական դատական ակտի գոյության պայմաններում:

Վկայակոչված որոշումից հետո շրջանառված՝ ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու վերաբերյալ նախագծերի[25] ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանց միջոցով փորձ է արվել լուծել խնդիրը, սակայն այն իր հանգուցալուծումը ստացել է միայն 2021 թվականի քրեական օրենսգրքի ընդունմամբ, որով խրախուսական նորմից օգտվելու հնարավորությունը կապվել է վարույթն իրականացնողի կողմից վերջնական (վարույթը եզրափակող) որոշման կայացման հետ:

Այնուհանդերձ՝ գտնում ենք, որ նման կարգավորումը, գործնականում առաջ եկող խնդիրը լուծելու հետ միաժամանակ, ամբողջությամբ հաշվի չի առել ՀՀ գործող քրեական դատավարության օրենսգրքի որոշ նորամուծություններ, մասնավորապես՝ քրեական հետապնդում չհարուցելու կամ դադարեցնելու ինստիտուտի առանձնահատկություններն այն տեսանկյունից, որ թեև դրանք ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի իմաստով չեն համարվում եզրափակիչ դատավարական ակտեր[26], սակայն խնդրո առարկա հարցի լուծման համար, ինչպես նաև անձի համար իրավական հետևանքների առաջացման առումով, երբեմն ավելի կարևոր նշանակություն կարող են ունենալ, քան, օրինակ, քրեական վարույթը կարճելու մասին որոշումն է: Այս առումով կարող են առաջանալ իրավիճակներ, երբ անձի տված սուտ ցուցմունքը, գնահատվելով որպես թույլատրելի և արժանահավատ ապացույց, օգտագործվի որոշակի անձի կամ անձանց նկատմամբ քրեական հետապնդում չհարուցելու (դադարեցնելու) մասին որոշում կայացնելու համար, սակայն քրեական վարույթն այդ որոշումից անմիջապես հետո չավարտվի և տարբեր հանգամանքներով պայմանավորված շարունակվի տևական ժամանակ: Նման իրավիճակներում սուտ ցուցմունք տված անձի կողմից այդ նույն վարույթի շրջանակներում իր տված սուտ ցուցմունքի մասին հայտնելու դեպքում խրախուսական նորմի կիրառումը կբխի օրենքից, սակայն չի լինի արդարացված, քանի որ անձի տված սուտ ցուցմունքն արդեն կարող է հիմք հանդիսացած լինել կոնկրետ անձանց քրեական պատասխանատվությունից ազատելու համար, իսկ այդ որոշումը վերանայելու հիմքեր մի շարք իրավիճակներում կարող են և չլինել:

Գոյություն ունեցող խնդիրը, թերևս, կարող է վերագրվել նախկին քրեական օրենսդրության պայմաններում կիրառվող այն պրակտիկային, երբ վարույթն իրականացնող քննիչի կողմից քրեական հետապնդում չհարուցելու (դադարեցնելու) և քրեական վարույթը կարճելու մեկ որոշում էր կայացվում, հետևաբար քննարկվող հարցի կապակցությամբ այդ երկու ինստիտուտները միմյանցից տարանջատելու անհրաժեշտությունը ևս առկա չէր, սակայն գործող իրավակարգավորումների պայմաններում, գտնում ենք, որ խրախուսական նորմը պետք է սահմանվեր այնպիսի ձևակերպմամբ, որ դրա գործողությունը կապվեր ոչ թե կամ

[25] Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայք՝ https://www.e-draft.am/

[26] ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 35-րդ կետի համաձայն՝ եզրափակիչ դատավարական ակտեր են համարվում տվյալ վարույթի ընթացքն ավարտող դատավարական ակտ, ներառյալ եզրափակիչ դատական ակտը.

ոչ միայն վարույթը եզրափակող որոշման, այլ վերագրվող հանցանքի կապակցությամբ անձի պատասխանատվության հարցը լուծող վերջնական դատավարական ակտի հետ:

Գլուխ 4. Մեղադրյալին սուտ ցուցմունք տալու համար պատասխանատվության ենթարկելու գործնականում առկա իրավիճակը

Համաձայնելով ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի մոտեցումներին և դրա հիմնավորումներին՝ պետք է ընդունել, որ մեղադրյալին սուտ մատնության հատկանիշներ չպարունակող սուտ ցուցմունք տալու արտոնությունից զրկելը և ցուցմունք տալու ցանկություն հայտնելու դեպքում միայն ճշմարտացի ցուցմունք տալու պարտականության կատարումը քրեական պատասխանատվության սպառնալիքով ապահովելը, ՀՀ քրեական և քրեական դատավարության օրենսգրքերի շուրջ 3-ամյա գործողության պայմաններում չի ապահովել օրենսդրի նպատակների իրագործումը, միևնույն ժամանակ որոշակի իրավիճակներում կարող է առաջացնել դրանց գործնական կիրառության հետ կապված մի շարք հարցեր:

Հաշվի առնելով խնդրո առարկա հարցի նախկինից էականորեն տարբերվող կարգավորումները՝ կարելի էր սպասել, որ նոր քրեական և քրեական դատավարության օրենսգրքերի գործողության պայմաններում մեղադրյալի կողմից ոչ ճշմարտացի ցուցմունքներ տալու դեպքերը պետք է ունենային էական նվազում: Այս դեպքում խոսքը ոչ թե օրինական ուժի մեջ մտած դատավճռով հաստատված՝ մեղադրյալի կողմից սուտ ցուցմունք տալու հանցագործության դեպքերի մասին է, այլ գործնականում հաճախ հանդիպող այն իրավիճակների, երբ քրեական դատավարության ցանկացած փուլում վարույթն իրականացնող պաշտոնատար անձի դատավարական ակտերում մեղադրյալի կողմից տրված ցուցմունքները որակվում են որպես ոչ ճշմարտացի՝ քրեական պատասխանատվությունից խուսափելու կամ այն մեղմելու նպատակ հետապնդող: Սրա հետ կապված տեղին կլինի նորից հիշել, որ նոր օրենսգրքերով ընդունված մոտեցման նպատակներից մեկը եղել է մեղադրյալի ցուցմունքների՝ որպես ապացույցի տեսակի նկատմամբ վստահության բարձրացումը, ինչը նշանակում է, որ վարույթն իրականացնող մարմինը, յուրաքանչյուր դեպքում մեղադրյալի ցուցմունքը գնահատելիս, պետք է նկատի ունենա, որ մեղադրյալը սուտ ցուցմունք տալու համար ենթակա է քրեական պատասխանատվության և ցուցմունք է տվել այդ մասին նախազգուշացված լինելու ու դրա սպառնալիքի գործողության պայմաններում:

Անդրադառնալով մեղադրյալի ցուցմունքների գնահատմանը՝ պետք է նշել, որ դրանց, ինչպես վարույթի ընթացքում հավաքված մյուս ապացույցներին, հիմնական ու վերջնական քրեադատավարական վերաբերմունքը ցուցաբերվում է դատարանի կողմից՝ եզրափակիչ դատական ակտ կայացնելիս, սակայն ինչպես նախկին, այնպես էլ ներկա քրեական դատավարության օրենսգրքի կարգավորումների պայմաններում, քրեական դատավարության համապատասխան փուլերում, ինչպես նախաքննական մարմինը, այնպես էլ դատախազը, գնահա-

տում են վարույթով ձեռք բերված ապացույցները, այդ թվում՝ մեղադրյալի ցուցմունքները՝ դրանց նկատմամբ ամփոփիչ վերաբերմունքն արտացոլելով կոնկրետ դատավարական փաստաթղթերում, իսկ դատախազը մեղադրյալի ցուցմունքների ճշմարտացիության (արժանահավատության) վերաբերյալ պաշտոնական գնահատական է հնչեցնում նաև եզրափակիչ ելույթների ժամանակ՝ կատարելով հետազոտված ապացույցների վերլուծություն և գնահատում:

Նման պայմաններում, կարծում ենք, որ նախկին օրենսգրքերի կարգավորումների ժամանակ հաճախ հանդիպող իրավիճակները, երբ մեղադրյալի ցուցմունքին, այլ աղբյուրներից ստացված ապացույցներով չհաստատվելու դեպքում, վարույթն իրականացնող մարմնի կողմից մակերեսորեն տրվում էր գնահատական՝ այն պարզապես սուտ և քրեական պատասխանատվությունից խուսափելու նպատակ հետապնդող որակվելով, գործող օրենսգրքերի պայմաններում չպետք է տեղ գտնեն: Առկա կարգավորումների պայմաններում ինչպես դատարանը, այնպես էլ ապացույցների գնահատում կատարող վարույթի հանրային մասնակիցները, մեղադրյալի ցուցմունքների ճշմարտացիության վերաբերյալ դատողություններ կատարելիս պետք է ցուցաբերեն լրացուցիչ զսպվածություն և զգուշավորություն, իսկ մեղադրյալի ցուցմունքները որպես սուտ ցուցմունք գնահատելիս նկատի ունենան, որ այդ գնահատականը ոչ թե պարզապես հերթական ապացույցին տրված գնահատական է, այլև դրանով կատարվում է պաշտոնական հայտարարություն մեղադրյալի կողմից հանցավոր վարքագիծ դրսևորելու վերաբերյալ (համենայն դեպս այն իրավիճակներում, երբ մեղադրյալի ցուցմունքները էական նշանակություն են ունեցել գործի լուծման համար կամ խաթարել են գործի կամ վարույթի ընթացքը): Սա նշանակում է, որ նման արձանագրման պայմաններում ապացույց գնահատողը պետք է պատրաստ լինի ձեռնարկելու համապատասխան քրեադատավարական ընթացակարգ՝ դեպքը դիտելով որպես իր լիազորություններն իրականացնելիս առերևույթ հանցանքի հատկանիշներ հայտնաբերելու իրավիճակ:

Այսպիսով, ընդունելով, որ դատական պրակտիկայում մեղադրյալի կողմից ոչ ճշմարտացի տեղեկություններ հաղորդելու վարքագծից ձեռնպահ մնալու իրավիճակների կտրուկ ավելացում տեղի չի ունեցել, կարելի էր սպասել, որ նոր օրենսգրքերի կարգավորումների պայմաններում պետք է տեղի ունենար սուտ ցուցմունք տալու համար մեղադրյալին քրեական պատասխանատվության ենթարկելու դեպքերի թվի ավելացում, այնինչ դատական տեղեկատվական համակարգում գրանցված տվյալների որոնման արդյունքում ՀՀ քրեական օրենսգրքի 504-րդ հոդվածի հատկանիշներով դատարան ուղարկված գործերի վերաբերյալ տեղեկություններ չեն հայտնաբերվել[27]:

Եզրակացություն

ՀՀ գործող քրեական դատավարության օրենսգիրքը մեղադրյալին զրկել է սուտ ցուցմունք տալու նախկինում առկա արտոնությունից՝ ամրագրելով, որ

[27] https://datalex.am/

մեղադրյալը կամ պետք է տա ճշմարտացի ցուցմունք, կամ պահպանի լռություն, իսկ գործող քրեական օրենսգիրքը մեղադրյալի կողմից սուտ ցուցմունք տալը դիտել է հանցագործություն՝ համարելով, որ մեղադրյալի վրա դրված նշված դատավարական պարտականության կատարումը պետք է ապահովվի պատժի սպառնալիքով: Կատարված փոփոխությունների նպատակը եղել է մի կողմից մեղադրյալի ցուցմունքի նկատմամբ վստահության բարձրացումը, մյուս կողմից արդարադատությունը հարգելու, դրա նկատմամբ պատասխանատու վերաբերմունք ապահովելու, ինչպես նաև հանրային ռեսուրսի վատնումը կանխելու ձգտումը: Չնայած նոր քրեական և քրեական դատավարության օրենսգրքերի որդեգրած մոտեցմանն ու դրանց ընդունմամբ տեղի ունեցած էական փոփոխություններին՝ դատական պրակտիկայում մեղադրյալների կողմից սուտ ցուցմունք տալու վարքագծից ձեռնպահ մնալու միտում չի նկատվում: Դրան հակառակ՝ սահմանված քրեական պատասխանատվության պայմաններում սուտ ցուցմունք տալու համար մեղադրյալին քրեական պատասխանատվության ու պատժի ենթարկելու դեպքեր չեն արձանագրվել: Ասվածը նշանակում է, որ մեղադրյալի կողմից սուտ ցուցմունք տալու դեպքերին իրավասու մարմինների կողմից պատշաճ կերպով արձագանքելու պրակտիկա դեռևս չի ձևավորվել: Դատական պրակտիկայում պատշաճ մոտեցման ձևավորումն անհրաժեշտ է խնդրո առարկա հարցի կապակցությամբ ՀՀ քրեական և քրեական դատավարության նոր օրենսգրքերի հիմքում դրված գաղափարի կենսագործումն ապահովելու համար:

Գրականության ցանկ (reference list, список литературы)

1.Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք (օրենսգրքեր ընդունված 07.03.1961 թվականին, 18.03.2003 թվականին, 05.05.2021 թվականին)

Criminal Code of the Republic of Armenia (codes adopted on: 07.03.1961, 18.03.2003, 05.05.2021)

2. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրք (օրենսգրքեր ընդունված 30.06.2021 թվականին, 01.07.1998 թվականին)

Criminal Procedure Code of the Republic of Armenia (codes adopted on 30.06.2021, 01.07.1998)

3. Կարեն Լևոնի Սարուխանյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի 2010 թվականի օգոստոսի 27-ի թիվ ԼԴ/0301/01/09 որոշում

Decision No. ԼԴ/0301/01/09 of the Court of Cassation of August 27, 2010 in the case of Karen Sarukhanyan

URL: https://www.arlis.am/documentview.aspx?docID=65608 (access 05.04.2025)

4. Իսպանիայի Թագավորության քրեական օրենսգիրք

Criminal Code of the Kingdom of Spain (1995, as amended 2014)

URL:https://www.mjusticia.gob.es/es/AreaTematica/DocumentacionPublicaciones/Documents/Criminal_Code_2016.pdf (access 06.04.2025)

5. Շվեյցարական Համադաշնության քրեական օրենսգիրք

Criminal Code of the Federal Republic of Switzerland

URL: https://www.fedlex.admin.ch/eli/cc/54/757_781_799/en (access 06.04.2025)

6. Գերմանիայի Դաշնության քրեական օրենսգիրք

Criminal Code of the Federal Republic of Germany

URL: https://www.gesetze-im-internet.de/englisch_stgb/englisch_stgb.html (access 06.04.2025)

7. Ֆրանսիայի Հանրապետության քրեական օրենսգիրք

Penal Code of the Republic of France

URL:https://www.legifrance.gouv.fr/codes/section_lc/LEGITEXT000006070719/LEGISCTA000006165311/#LEGISCTA000006165311 (access 06.04.2025)

8. Նորվեգիայի Թագավորության քրեական օրենսգիրք

Criminal Code of the the unified kingdom of Norway

URL: https://lovdata.no/dokument/NLE/lov/2005-05-20-28/*#&#x2a (access 06.04.2025)

9. Perjury Act 1911,

URL: https://www.legislation.gov.uk/ukpga/Geo5/1-2/6/contents (access 18.04.2025)

10. The Criminal Justice Act 1987,

URL: https://www.legislation.gov.uk/ukpga/1987/38/contents (access 18.04.2025)

11. United States Code Title 18, Crimes and Criminal Procedure: Title 18, Crimes and criminal procedure: Perjury, False declarations.

URL: https://uscode.house.gov/ (access 18.04.2025)

12. UNITED STATES v. DUNNIGAN, 507 U.S. 87 (1993):

URL: https://supreme.justia.com/cases/federal/us/507/87/ (access 18.04.2025)

13. Րեգինան ընդդեմ Զ.-ի (պատասխանող), 22.06.2000 թվականի դատավճիռ:

HOUSE OF LORDS, OPINIONS OF THE LORDS OF APPEAL FOR JUDGMENT IN THE CAUSE REGINA v. Z (RESPONDENT) (On Appeal from the Court of Appeal (Criminal Division))

URL: https://publications.parliament.uk/pa/ld199900/ldjudgmt/jd000622/z-1.htm (access 18.04.2025)

14. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության նոր օրենսգրքի հիմնավորումներ. ՀՀ կառավարության նիստի 2011 թվականի մարտի 10-ի N 9 արձանագրություն, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության նոր օրենսգրքի հայեցակարգին հավանություն տալու մասին

Justifications for the new Criminal Procedure Code of the Republic of Armenia: Minutes of the RA Government Session No. 9 of March 10, 2011, on Approval of the Concept of the New Criminal Procedure Code of the Republic of Armenia

15. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության նոր օրենսգրքի հայեցակարգային լուծումների, նորարարական մոտեցումների և հիմնական ինստիտուտների մեկնաբանման գործնական ուղեցույց, Եվրոպայի խորհուրդ, հուլիս, 2022թ.

Practical guide to interpreting conceptual solutions, innovative approaches and key institutions of the new Criminal Procedure Code of the Republic of Armenia, Council of Europe, July 2022.

16. Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Հատուկ մաս (վեցերորդ հրատարակություն՝ փոփոխություններով և լրացումներով), Երևանի պետ. համալս. Եր., ԵՊՀ հրատ., 2012.

Criminal law of the Republic of Armenia. Special part (sixth edition with changes and additions):/ Yerevan State University Yerevan: YSU ed., 2012,

17. Raimov A., Raimova N. BRIEFS ON THE HISTORY OF ANCIENT ROME/JUSTICE. Legal, scientific and practical publication. ISSN (E): 2181-8991. 2/2021. Tashkent, 2021. B.46. 10. Khayriev Nodirjon

18. Neo Science Peer Reviewed Journal. Volume 29. SOME REFLECTIONS ON A RETROSPECTIVE ANALYSIS OF LIABILITY FOR PERJURY. ISSN (E): 2949-7701. January-2025 Sattarov Avazbekovićh.

URL: https://www.neojournals.com/index.php/nsprj/article/view/479/455 (access 10.04.2025)

19. Շառլ Լյուի Մոնտեսքյո, «Օրենքների ոգու մասին» աշխատություն, Գիրք 29:

Montesquieu: THE SPIRIT OF LAWS: Book 29.

URL: https://montesquieu.ens-yon.fr/spip.php?rubrique226 (access 11.04.2025)

20. Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայք.

Unified website for the publication of draft legal acts.

URL: https://www.e-draft.am/ (access 11.04.2025)

21. «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգ.

'Datalex' judicial information system

URL: https://datalex.am/ (access 11.04.2025)

Vigen Harutyunyan
Head of the Division for Supervision of the Activities of the Prosecutor's Offices of Millitary Garrisons of the Central Millitary Prosecutor's Office of the Republic of Armenia, First Rank Counsellor of Justice

Haykuhi Martikyan
Prosecutor of the Military Prosecutor's Office of Yerevan Garrison

ISSUES OF HOLDING A DEFENDANT CRIMINALLY LIABLE FOR GIVING FALSE TESTIMONY[28]

Abstract

The Criminal Code and Criminal Procedure Code of the Republic of Armenia establish grounds for holding a defendant criminally liable for perjury (false declarations). Despite this, the legal practice formed under the application of previous regulations still persists, whereby a defendant, in exercising their right to defense, is considered free to choose their means of defense - including giving false testimony when under an obligation to tell the truth.

This scientific article presents a comprehensive analysis of the current practical situation concerning this issue. The analysis is based on a comparative legal study of domestic and foreign criminal and criminal procedure legislation, judicial practice, scientific approaches found in various sources, and the precedential decisions of the Court of Cassation of Armenia.

Based on the conducted research, the conclusion is drawn that the competent authorities do not respond adequately, in accordance with the law, to cases where a defendant commits a perjury. The issues discussed in the article become especially relevant in the context of the fact that, despite the existence of necessary legal foundations, no consistent practice has yet developed within the three years of the Criminal and Criminal Procedure Codes being in force, regarding holding defendants criminally liable. This, in turn, hinders the effective implementation of the fundamental goals underlying the current criminal and criminal procedure legislation concerning this matter.

Keywords: perjury; criminal liability; accused; limits of the right to defense; false accusation; incentive norm.

[28] The article was presented on 05.05.2025 and was reviewed on 09.06.2025.

Виген Арутюнян
Начальник отдела контроля за деятельностью прокуратур военных гарнизонов центральной военной прокуратуры Республики Армения, советник юстиции первого класса

Айкуи Мартикян
Прокурор Военной прокуратуры Ереванского гарнизона

ВОПРОСЫ ПРИВЛЕЧЕНИЯ ОБВИНЯЕМОГО К УГОЛОВНОЙ ОТВЕТСТВЕННОСТИ ЗА ДАЧУ ЛОЖНЫХ ПОКАЗАНИЙ[29]

Абстракт

Уголовный кодекс и Уголовно-процессуальный кодекс Республики Армения предусматривают основания для привлечения обвиняемого к уголовной ответственности за дачу ложных показаний. Тем не менее, в практике до сих пор сохраняется подход, сформировавшийся в рамках ранее действовавшего регулирования, согласно которому обвиняемый, реализуя право на защиту, свободен в выборе средств защиты и может осуществлять свою защиту, в том числе, путём дачи ложных показаний.

В статье комплексно представлен существующий на практике подход к рассматриваемому вопросу. Анализ основан на сравнительно-правовом исследовании уголовного и уголовно-процессуального законодательства, действовавшего в разные периоды как в Республике Армения, так и в других государствах, а также судебной практики, научных подходов, представленных в различных источниках, и правовых позиций Кассационного суда РА.

На основе проведённого исследования сделан вывод, что на случаи дачи ложных показаний обвиняемыми уполномоченные органы не реагируют должным образом в установленном законом порядке. Вопросы, поднятые в статье, приобретают особую актуальность в том контексте, что, несмотря на наличие необходимых правовых оснований, за три года действия новых Уголовного и Уголовно-процессуального кодексов Республики Армения практика привлечения обвиняемых к уголовной ответственности за дачу ложных показаний так и не сформировалась, что, в свою очередь, препятствует достижению целей, заложенных в основе действующего уголовного и уголовно-процессуального законодательства по данному вопросу.

Ключевые слова: лжесвидетельство; уголовная ответственность; обвиняемый; пределы права на защиту; ложное обвинение; поощрительная норма.

[29] Статья была представлена 05.05.2025 и прошла рецензирование 09.06.2025.

https://doi.org 10.59821/18294219-2025.1-vtp03

Արսեն Վարդանյան
Երևան քաղաքի դատախազի տեղակալ, Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի հայցորդ

ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՊԻՏԱՆԻՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՔՐԵԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԱՊԱՑՈՒՅՑԻ ՀԱՏԿԱՆԻՇ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ[1]

Համառոտագիր

Ապացուցումը, հանդիսանալով ամբողջ քրեական դատավարության կարևորագույն բաղադրատարրերից մեկը, մշտապես գտնվել է տեսաբանների և պրակտիկ աշխատողների ուշադրության կենտրոնում:

Սույն աշխատությունում տեսական մակարդակով քննարկվել են ապացույցի հատկանիշների հասկացությունը, բովանդակությունն ու կիրառական նշանակությունը, ինչպես նաև ապացույցների գնահատման և օգտագործման մի շարք հիմնահարցեր, ՀՀ և արտասահմանյան երկրների օրենսդրության, ՄԻԵԴ վճիռների, ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումների, դատական պրակտիկայի, տեսական աղբյուրների ուսումնասիրության հիման վրա վերլուծվել են քրեական դատավարությունում ապացույցների թույլատրելիության ինստիտուտին վերաբերող մի շարք արդի հիմնախնդիրներ: Անդրադարձ է կատարվել ապացույցի թույլատրելիության գիտականորեն հիմնավորված հասկացության օրենսդրական սահմանման անհրաժեշտությանը: Առանձնակի ուշադրություն է դարձվել քրեադատավարական ապացույցի ինքնուրույն հատկանիշ հանդիսացող պիտանիության օրեսդրական ձևակերպմանը, ապացույցի օգտագործման անհնարինության հանգեցնող հանգամանքներին և դրանց դրսևորումներին՝ առաջարկելով թույլատրելիության և պիտանիության հատկանիշներին վերաբերելի հոդվածներն Օրենսգրքում նախատեսել միմյանցից առանձին: Քննարկվող ինստիտուտը ներպետական իրավական համակարգում նորույթ է, ինչն իր հերթին ենթադրում է գործնական աշխատանքում մի շարք խնդիրների առաջացման հավանականություն, որոնց ուսումնասիրումն ու քննարկումը կարող է նպաստել դրանց վերհանմանն ու արդյունավետ լուծումների որոնմանը, ինչն ինքնին մատնանշում է սույն աշխատության արդիականությունը: Առանձնակի ուշադրություն է դարձվել պրակտիկ աշխատանքում առաջացող խնդիրներին, օրենսդրական բարեփոխումների համատեքստում ներդրված իրավական նոր մեխանիզմներին, ձևակերպվել են եզրահանգումներ՝ կատարելով ապացուցման ինստիտուտի հետագա զարգացմանն ուղղված որոշ առաջարկություններ:

[1] Հոդվածը ներկայացվել է 15.05.2025թ., գրախոսվել է 23.06.2025թ.:

Հիմնաբառեր- քրեական դատավարություն, փաստական տվյալ, ապացույցի հատկանիշներ, ապացույցի գնահատում, պիտանի ապացույց, անթույլատրելի ապացույցներ:

Ներածություն

Ապացուցման հիմնահարցերը կենտրոնական են քրեական դատավարության գիտությունում և իրավակիրառական պրակտիկայում: Թեմայի արդիականությունը պայմանավորված է քրեադատավարական օրենսդրության արմատական փոփոխությամբ, ապացուցման գործընթացին վերաբերող նորագույն ինստիտուտների և լուծումների ներդրմամբ, ինչպես նաև պրակտիկայում առաջացող խնդիրներով: Ուսումնասիրության օբյեկտը՝ քրեադատավարական ապացուցման իրականացման շրջանակներում առաջացող հասարակական հարաբերություններն են, իսկ որպես առարկա՝ ապացույցի հատկանիշների (մասնավորապես՝ թույլատրելիության և պիտանիության) վերաբերյալ տեսական մոտեցումները, ինչպես նաև քրեադատավարական օրենսդրության վերաբերելի իրավադրույթները: Հոդվածը նպատակ է հետապնդում ուսումնասիրելու քրեադատավարական ապացույցի հատկանիշների էությունը, ապացույցի թույլատրելիության կանոնների առանձնահատկությունները, վեր հանել իրավական կարգավորման բացերը՝ առաջ քաշելով դրանց լուծմանն ուղղված հնարավոր առաջարկներ: Միաժամանակ, հետազոտության խնդիրն է՝ ապացույցի պիտանիության հասկացության ուսումնասիրությունն ու իրավական կարգավորման առանձնահատկությունների վերլուծությունը:

Քրեադատավարական ապացույցի և դրա հատկանիշների հասկացությունը.

Քրեական դատավարությունում անձի իրավունքների և ազատությունների արդյունավետ երաշխավորումն ու ապահովումն անքակտելիորեն կապված է ապացուցման գործընթացի արդյունավետ կազմակերպման հետ: Ընդ որում, միայն պատշաճ ապացուցման արդյունքում կայացված և օրինական ուժի մեջ մտած դատավճռի պարագայում է հնարավոր հաստատված համարել անձի մեղավորությունը, որպիսի պայմաններում քրեադատավարական ապացուցմանն առնչվող ցանկացած տեսական ուսումնասիրություն ունի նաև պրակտիկ կարևոր նշանակություն, հատկապես՝ գործող օրենսդրության զարգացման համատեքստում:

Մինչև ապացույցի հատկանիշ հանդիսացող թույլատրելիության և սույն հոդվածում քննարկվող ապացույցի գնահատման ինքնուրույն չափորոշիչ դիտվող պիտանիության տեսական և գործնական նշանակությանն անդրադառնալն անհրաժեշտ է անդրադարձ կատարել «ապացույց» և «ապացուցում» եզրույթների օրենսդրական ձևակերպմանը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 39-րդ կետի համաձայն՝ **ապացույցը՝** «փաստի վերաբերյալ օրենքով սահմանված կարգով ստացված տվյալ է, որի հիման վրա քննիչը,

դատախազը, դատարանը պարզում են ապացուցման ենթակա հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը, ինչպես նաև վարույթի համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներ»: *Նույն օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ ապացուցումը սույն օրենսգրքով նախատեսված՝ ապացուցման ենթակա փաստական հանգամանքները, ինչպես նաև վարույթի համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներ հաստատելու կամ հերքելու նպատակով ապացույցներ հավաքելը, սրուգելը և գնահատելն է: Միաժամանակ, Օրենսգիրքը նախատեսում է առանձին գլուխներ*[2]*, որոնցում բացահայտվում են ապացույցների տեսակները, ապացուցման առարկան, կարգավորվում են դրանց պահպանմանը, փնօրինմանը վերաբերվող հարցերը:*

«Հատկանիշ» հասկացությունը, ըստ էության, բնութագրվում է որպես որևէ առարկայի (երևույթի) հատկություն, որակ, բնորոշ գիծ, որի բացակայության դեպքում փվյալ առարկան կորցնում է իր էությունն ու բնույթը: Ապացուցմանն ու ապացույցի հատկանիշներին վերաբերող հարցերն ուսումնասիրվել են մի շարք տեսաբանների, այդ թվում՝ Ռ.Ս.Բելկինի, Յու.Կ.Օրլովի, Ս.Ա.Շեյֆերի, Ա.Բ.Սոլովյովի, Ն.Ա.Գրոմովի, Վ.Վ.Զոլոտիխի, Ն.Մ.Կիպնիսի, Պ.Ա.Լուպինսկայայի, Մ.Ս.Ստրոգովիչի, Վ.Ս.Բալակշինի[3] *և այլոց կողմից:*

Ընդ որում, եթե ապացույցների տեսությունում ընդունելի է այն մոտեցումը, որ որպես ապացույցի հատկանիշներ են հանդիսանում վերաբերելիությունը, հավաստիությունը, թույլատրելիությունն ու բավարարությունը, ապա դրանց բովանդակային մեկնաբանման մոտեցումները բազմաթիվ են: Ինչպես տեսնում ենք, գործող Օրենսգիրքն ապացույց հասկացության մեջ վերաբերելիության հատկանիշից բացի առաջին անգամ ներառել է նաև թույլատրելիության հատկանիշը, այն է՝ օրենքով սահմանված կարգով ձեռք բերված լինելը՝ ապացույցի հասկացությանը հաղորդելով գործնական կարևոր նշանակություն:

Ապացույցի և դրա հատկանիշների հստակ ձևակերպումը կարևոր նշանակություն ունի ապացուցման գործընթացի անանջափելի փարր հանդիսացող ապացույցների գնահատում հասկացության պարզման համար, ինչն իրենից ներկայացնում է քննիչի, դատախազի, դատավորի մտավոր և փրամաբանական գործունեություն, որի հիման վրա վերջիններս գալիս են եզրահանգման

[2] Տե՛ս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 10-12-րդ գլուխներ, ընդունվել է 2021 թվականի հունիսի 30-ին:

[3] Տե՛ս Белкин Р.С., Собирание, исследование и оценка доказательств. Сущность и методы. М., 1999, Орлов Ю.К., Основы теории доказательств в уголовном процессе. Научно-практическое пособие. М., 2000, Шейфер С.А., Сущность и способы собирания доказательств в советском уголовном процессе. М., ВЮЗИ, 1972, Соловьев А.Б., Проблемные вопросы доказывания, возникающие в процессе расследования преступлений при применении УПК РФ, Юрлитинформ, М., 2008, Громов Н.А., Уголовный процесс Росии: учебное пособие, М., 1998, Золотых В.В., Проверка допустимости доказательств в уголовном процессе, Ростов-на-Дону: Феникс, 1999, Кипнис Н.М., Допустимость доказательств в уголовном судопроизводстве, М., 1995, Лупинская П.А., Уголовно-процессуальное право Российской Федерации: Учебник/Отв. ред., 2-е изд., испр., и доп. – М., Норма, 2009, Строгович М.С., Избранные труды: Т.3, Теория судебных доказательств. – М., 1991:

ապացույցներից յուրաքանչյուրի թույլատրելիության, վերաբերելիության, հավաստիության և ապացուցման ենթակա փաստական հանգամանքների բացահայտման համար դրանց համակցության բավարար լինելու մասին:

Օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ապացույց ենթակա է գնահատման՝ վերաբերելիության, թույլատրելիության, հավաստիության, իսկ բոլոր ապացույցների համակցությունը՝ հիմնավոր եզրափակիչ դատավարական ակտ կայացնելու համար բավարարության տեսանկյունից:

Հատկանշական է, որ օրենսդիրն իրավացիորեն ապացույցի վերոնշյալ բոլոր հատկանիշների պարզումը դիտարկել է որպես «ապացույցի գնահատում» հասկացության բովանդակության բաղադրիչ:

Ապացույցի թույլատրելիության հասկացությունն ու պայմանները.

Ապացույցի թույլատրելիությունը, դրա դատավարական ստուգումն ու գնահատումը, ինչպես նաև ապացույցն անթույլատրելի ճանաչելու կարգն առանցքային նշանակություն ունեն ողջ քրեական վարույթի կազմակերպման համար:

Թեև քրեադատավարական իրավունքի տեսությունում ապացույցի թույլատրելիության հասկացության վերաբերյալ առկա են տարբեր բնորոշումներ, ընդհանուր առմամբ, քննարկվող հասկացության մեկնաբանման հիմնական մոտեցումն այն է, որ թույլատրելիությունը բնութագրում է ապացույցների ձեռքբերման կարգի համապատասխանությունն օրենքով սահմանված դատավարական ձևի պահանջներին:

Մասնավորապես՝ Ս.Վ.Նեկրասովի կարծիքով ապացույցի թույլատրելիությունը քրեական դատավարությունում դրա պիտանիությունն է[4]:

Իր հերթին, Ս.Ա.Շեյֆերը մատնանշում է, որ ապացույցի թույլատրելիությունը հանդիսանում է տվյալ ապացույցի որակը՝ կապված դրա պատշաճ դատավարական ձևի հետ[5]:

Ն.Ա.Գրոմովի կարծիքով ապացույցների թույլատրելիություն հասկացության ներքո ընկալվում է քրեադատավարական օրենքով նախատեսված ապացույցների ստացման, հետազոտման և դատավարական ամրագրման եղանակների բնութագրումը, ինչն իր հերթին հնարավորություն է ընձեռում հավաքված փաստական տվյալները ներմուծել քրեական դատավարության համակարգ՝ օգտագործելով քրեական գործի փաստական հանգամանքների, անձի մեղավորության և անմեղության պարզման նպատակով[6]:

Վ.Վ.Զոլոտիխը գտնում է, որ ապացույցի թույլատրելիությունը քրեական գործի համար նշանակություն ունեցող հանգամանքներն ապացուցելու նպատակով վերջինիս կիրառման օգտակարությունն է[7]:

---

[4] Տե՛ս Некрасов С.В., Юридическая сила доказательств в уголовном судопроизводстве. М., 2004, էջ 7:

[5] Տե՛ս Шейфер С.А., Сущность и способы собирания доказательств в советском уголовном процессе. М., ВЮЗИ, 1972, էջ 34:

[6] Տե՛ս Громов Н.А., Зайцева С.А., Оценка доказательств в уголовном процессе. М., 2002, էջ 81:

[7] Տե՛ս Золотых В.В., Проверка допустимости доказательств в уголовном процессе, Ростов-на-Дону: Феникс, 1999, էջ 6:

Ըստ Ն.Մ.Կիպնիսի՝ «Թույլատրելիությունը՝ ապացույցի հատկանիշ է, որը բնութագրում է դրանք փաստական տվյալների աղբյուրների, ինչպես նաև փաստական տվյալների ստացման եղանակների, ամրագրման ձևի օրինականության տեսանկյունից...»[8]:

Կարծում ենք, որ վերջին մոտեցումն առավել հստակ և ընդգրկուն է բնորոշում թույլատրելիության հասկացությունը՝ հաշվի առնելով ապացույցի թույլատրելիության պայմանների (ինչպես ձևի, այնպես էլ բովանդակության) ամբողջական բնութագրումը:

Վ.Ս.Բալակշինը, ընդհանրացնելով թույլատրելիության վերաբերյալ տեսությունում արտահայտված մոտեցումները, նշում է, որ «ապացույցների թույլատրելիություն» եզրույթը կարող է օգտագործվել տարբեր իմաստներով, այն է՝ 1) օրենքով նախատեսված ապացույցի թույլատրելիություն, 2) որպես հասկացություն, 3) քրեադատավարական ինստիտուտ, 4) կոնկրետ ապացույցի գնահատման արդյունքում արված եզրահանգում, 5) ապացույցի քրեադատավարական հատկանիշ[9]:

Օքսֆորդի իրավաբանական բառարանը[10] ներկայացնում է անգլիական իրավական համակարգի դիրքորոշումն ապացույցների թույլատրելիության վերաբերյալ՝ շեշտադրելով, որ թույլատրելիությունն այն սկզբունքների համակարգն է, որը սահմանում է՝ արդյոք դատարանը կընդունի կոնկրետ ապացույցը, թե՝ ոչ: Տվյալ մոտեցման համաձայն՝ թույլատրելիության հիմնարար չափանիշը վերաբերելիությունն է: Նշվում է, որ ոչ վերաբերելի բոլոր ապացույցները համարվում են անթույլատրելի, մինչդեռ որոշ դեպքերում վերաբերելի ապացույցները նույնպես կարող են համարվել ոչ թույլատրելի, եթե դրանք ձեռք են բերվել ապացույցների բացառման կանոնների խախտմամբ: Այսպիսով, անգլիական դատավարական համակարգում ապացույցի թույլատրելիությունն ու վերաբերելիությունը փոխկապակցված են՝ թույլատրելիության նկատմամբ վերջինիս առաջնայնությամբ:

Ամերկյան իրավունքում թույլատրելիությունը բնորոշվում է հետևյալ կերպ[11]. «Ապացույցը թույլատրելի է, եթե օժտված է այնպիսի հատկանիշներով, որոնք դատարանին պարտադրում են ընդունել դրանք և կարող են գնահատվել վերջինիս կամ ատենակալների կողմից»: Նշված սահմանումն ապացույցի թույլատրելիության վերաբերյալ ենթադրում է սկզբունքայնորեն տարբեր մոտեցում. որևէ անդրադարձ չկա ապացույցի ձևին, հիմնական շեշտադրումն արված է ապացույցի՝ դատարանի կողմից ստուգման ենթարկելու հնարավորությանը, ավելին՝ ընդգծվում է այդպիսի ստուգման պարտադիրությունը, ինչը լայն հնարավորություն է ընձեռում մասնավոր անձանց կողմից ապացույցների ներկայացման համար:

[8] Տե՛ս Кипнис Н.М., Допустимость доказательств в уголовном судопроизводстве, М., 1995, էջ 27:

[9] Տե՛ս Балакшин В.С., Допустимость доказательств: понятие, правовая природа, значение, алгоритм оценки: научно-практическое пособие, Екатеринбург, Изд-во УМЦ УПИ, 2013, էջ 296-297:

[10] Տե՛ս Oxford dictionary of Law. 5th ed. Oxford, Oxford University press. 2003, էջ 13.

[11] Տե՛ս West's encyclopedia of American Law. 2nd ed. – Vol. 1. – Detroit, Thomson Gale, 2004, էջ 119:

Անգլոամերիկյան իրավական համակարգի երկրներում օրենսդրին բնորոշ չէ վերացական հասկացությունների, այդ թվում՝ թույլատրելիության, իրավական սահմանումը, «ապացույցների թույլատրելիություն» (admissibility of evidence), անթույլատրելիություն (inadmissibility) հասկացություններն իրավական շրջանառության են դրվում առանց բացատրության՝ որպես կայուն, բոլորին հայտնի հասկացություններ: Ապացույցների թույլատրելիությունն առավելապես որոշվում է անուղղակի կերպով՝ ապացույցների անթույլատրելիության դեպքերի տարաբնույթ տարբերակման միջոցով[12]:

Այսպիսով, չնայած ապացույցի թույլատրելիության վերաբերյալ քրեադատավարական տեսությունում առկա տարակարծիք մեկնաբանություններին, այնուամենայնիվ, անժխտելի է, որ նշված ինստիտուտն ուղղված է քրեական դատավարությունում անձի իրավունքների պաշտպանությանն ու անշեղ իրացմանը, ինչպես նաև ապացույցի արժանահավատության ապահովմանը, ուստի, ապացույցների թույլատրելիության օրենսդրական պահանջների պահպանումը քրեական վարույթի արդարացիությունն ապահովելու գործուն երաշխիք է:

Վերլուծելով ապացույցի թույլատրելիության հասկացության վերաբերյալ տեսական գրականությունում առկա մոտեցումները՝ առավել ընդունելի ենք համարում Դ.Մ.Մելքոնյանի մոտեցումը, որի համաձայն՝ ապացույցների թույլատրելիությունը փաստական տվյալների ստացման և դատավարական ամրագրման՝ օրենքով նախատեսված պահանջների բնութագրումն է, որը հնարավորություն է տալիս հավաքված ապացույցները ներմուծել քրեադատավարական համակարգ և օգտագործել անձի մեղավորության կամ անմեղության, ինչպես նաև քրեական գործի այլ փաստական հանգամանքների հաստատման համար[13]:

Ապացույցի թույլատրելիության էության պարզաբանումն անհնար է առանց դրա հետ սերտորեն առնչվող թույլատրելիության պայմանների ուսումնասիրության, որոնց միջոցով հենց իրագործվում է քրեադատավարական ապացույցի թույլատրելիության կանոնները:

Պ.Ա.Լուպինսկայայի կարծիքով ապացույցների թույլատրելիությունն ընդգրկում է՝ ա) օրենքում ամրագրված աղբյուրներից որևէ մեկից ստացված տվյալ, բ) դատավարական պահանջներին համապատասխան ապացույցի ձեռքբերում, գ) փաստական տվյալների ստացման աղբյուրի ճշգրիտ ընտրություն, նամանավանդ՝ օրեսդրորեն նախատեսված կոնկրետ ապացույցի ստացման պարագայում[14]:

Ռ.Վ.Կոստենկոն առանձնացնում է թույլատրելիության բովանդակությունը կազմող հետևյալ չափորոշիչները՝ 1) ապացույցներ ձեռք բերելու լիազորությամբ օժտված պատշաճ սուբյեկտ, 2) ապացույցի բովանդակությունը կազմող

[12] Տե՛ս Ерпылёв И.В., Реализация института допустимости доказательств в уголовном процессе и правоохранительной деятельности России и зарубежных государств (Сравнительно-правовой анализ), Диссертация, Москва, 2015, էջ 54-56:

[13] Տե՛ս Դ.Մ.Մելքոնյան, Քրեական գործերով ապացույցներն անթույլատրելի ճանաչելու հիմքերն ու դատավարական կարգը, Երևան, 2010թ., էջ 18:

[14] Տե՛ս Лупинская П.А., Уголовно-процессуальное право Российской Федерации: Учебник/Отв. ред., 2-е изд., испр., и доп. – М., Норма, 2009, էջ 159-160:

տվյալների պատշաճ աղբյուր, 3) ապացույցի ստացմանն ուղղված պատշաճ դատավարական միջոցներ, 4) ապացույցի ձեռքբերմանն ուղղված գործողությունների պատշաճ ընթացակարգ[15]:

Այսպիսով, վերոշարադրյալից ակնհայտ է, որ ապացույցների թույլատրելիության բովանդակությունը ձևավորվում է դրա պայմանների միջոցով, ուստի, ստորև ներկայացվող պայմանների համակարգումը գործնական կարևոր նշանակություն կունենա դրանցից յուրաքանչյուրին ներկայացվող պահանջները համապարփակ սահմանելու համատեքստում:

Ապացուցողական գործընթացի վերաբերյալ քրեադատավարական օրենքի նորմերի ուսումնասիրությունը թույլ է տալիս առանձնացնելու ապացույցների թույլատրելիության հետևյալ չափանիշները.

- Ապացույցը պետք է ստացվի պատշաճ սուբյեկտի կողմից, որն իրավասու է տվյալ քրեական վարույթով իրականացնել ապացույցի ստացմանն ուղղված ապացուցողական գործողություններ (քրեական դատավարության օրենսգրքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ, 42-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ, 21-րդ հոդվածի 3-րդ մաս, 49-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետ, 59-րդ հոդվածի 1-ին մաս):

Ապացուցողական գործողության հասկացությունը սահմանող Օրենսգրքի համապատասխան հոդվածը[16] նախատեսում է վարույթին ներգրավված այն անձանց շրջանակը, որոնց կողմից կատարվող վարութային գործողության արդյունքում ակնկալվում է ձեռք բերել ապացույց: Ընդ որում, թեև նշված հոդվածում վարույթի մասնավոր մասնակից հանդիսացող պաշտպանի՝ որպես ապացուցման գործընթացին մասնակցող սուբյեկտի, մասին որևէ նշում չկա, սակայն պաշտպանի դատավարական կարգավիճակը նախատեսող լիազորությունների ուսումնասիրությունը թույլ է տալիս, մեր գնահատմամբ, վերջինիս դասել ապացույց ձեռք բերելու լիազորությամբ օժտված պատշաճ սուբյեկտների շարքում: Ուշագրավ է, որ նոր Օրենսգրքի 49-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը հնարավորություն է ընձեռում պաշտպանին վարույթի նյութերին կցելու և հետազոտելու համար ձեռք բերել և ներկայացնել ապացույցներ:

Տվյալ պարագայում անվերապահորեն համաձայն ենք Դ.Մ.Մելքոնյանի այն դիտարկմանը[17], որ քրեական դատավարությունում մրցակցության տարրերի ընդլայնման համար անկյունաքարային նշանակություն ունի պաշտպանին տրված իրավունքը՝ ձեռք բերելու և ներկայացնելու ապացույցներ՝ վարույթի նյութերին կցելու և հետազոտելու համար:

Ուշագրավ է, որ եթե նախկին օրենսգրքի գործողության պայմաններում պաշտպանը կարող էր ներկայացնել նյութեր, որոնք ապացույց ճանաչելու հարցը կախված էր վարույթն իրականացնող մարմնի հայեցողությունից, ապա ներկա

[15] Տե՛ս Костенко Р.В., Понятие и признаки уголовно-процессуальных доказательств, Москва, 2006, էջ 72:

[16] ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 38-րդ կետ:

[17] Տե՛ս Դ.Մ.Մելքոնյան, Պաշտպանության կողմի նոր դատավարական հնարավորությունները և դրանց հակակշիռները, Պետություն և իրավունք, N 2 (64), Երևան, 2014, էջեր 62-67:

կարգավորման պարագայում դրանք միանշանակ համարվելու են ապացույց, կցվելու են գործին՝ ապահովելով դատարանում հետազոտելու հնարավորությունը:

Ընդ որում, Օրենսգիրքն առաջին անգամ նախատեսել է ապացույցի թույլատրելիության կանխավարկածը, այսինքն՝ ստացված ապացույցը, այդ թվում՝ վարույթի մասնավոր մասնակիցների ներկայացրած, ենթադրվում է թույլատրելի, քանի դեռ մինչդատական վարույթի կամ դատական քննության ընթացքում պատշաճ կարգով չի հերքվել այդ հատկանիշի առկայությունը:

Միաժամանակ, Օրենսգիրքը, փորձագետի եզրակացությունը, կարծիքը և ցուցմունքը, դիտելով առանձին ապացույցներ, ընդհանրացրեց փորձագետի՝ որպես ապացույց ձեռք բերելու պատշաճ սուբյեկտի կարգավիճակը: Հատկապես արդարացված էր փորձագետի ցուցմունքն այլ ապացույցներից տարանջատելու և դրա բովանդակությունը, նպատակն ու ստացման եղանակի պատշաճ օրենսդրական կարգավորումը, ինչը հայրենի և հետխորհրդային երկրների իրավաբանական գրականությունում գրեթե չէր վիճարկվում:

- Ապացույցը պետք է ստացվի միայն օրենքում նշված աղբյուրներից (քրեական դատավարության օրենսգրքի 86-րդ հոդված, 241-րդ հոդվածի 1-ին մաս), իսկ հատկապես մատնանշված դեպքերում՝ աղբյուրի որոշակի տեսակից (քրեական դատավարության օրենսգրքի 107-րդ հոդված):

Այլ աղբյուրներից ստացված տվյալները չեն կարող օգտագործվել որպես ապացույց, ապացուցողական ուժով օժտված չեն նաև այն տվյալները, որոնք ստացվել են անհայտ աղբյուրից:

- Ապացույցը պետք է ստացվի միայն օրենքով նախատեսված միջոցներով, այսինքն՝ ապացուցողական գործողություններ կատարելով (քրեական դատավարության օրենսգրքի 103-րդ հոդված):
- Ապացույցը ստանալիս պետք է պահպանվեն ապացուցողական կամ այլ վարութային գործողության ընթացքի և արդյունքների ամրագրմանը վերաբերող օրենքի բոլոր պահանջները, այսինքն՝ պետք է ապահովվի համապատասխան գործողության կատարման պատշաճ ընթացակարգ (քրեական դատավարության օրենսգրքի 97-րդ հոդվածի 2-րդ և 7-րդ մասեր), իսկ Օրենսգրքով սահմանված պահանջների չպահպանմամբ ձեռքբերված փաստական տվյալները քրեական դատավարության ընթացքում չեն կարող օգտագործվել:

Այսպիսով, ապացույցների թույլատրելիության պայմանների վերաբերյալ գիտական մեկնաբանությունների և քրեադատավարական օրենսդրության վերլուծության արդյունքում հնարավոր է տարբերակել թույլատրելիության հետևյալ պայմանները՝

- ապացույցի բովանդակությունը կազմող տվյալների պատշաճ աղբյուր,
- ապացույցների հավաքմանն ուղղված գործողություններ կատարելու իրավազորությամբ օժտված պատշաճ սուբյեկտ,
- պատշաճ ապացուցողական գործողության իրականացում,
- համապատասխան ապացուցողական գործողության կատարման օրենքով սահմանված պահանջների պահպանում:

Թույլատրելիության ինստիտուտի գործնական կիրառման համար էական նշանակություն ունեն թույլատրելիության կանոններ նախատեսող ներպետական իրավական ակտերն ու միջազգային իրավական փաստաթղթերը:

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հիմնական իրավունքների խախտմամբ ձեռք բերված կամ արդար դատաքննության իրավունքը խաթարող ապացույցի օգտագործումն արգելվում է:

Բացի այդ, ապացույցների թույլատրելիության մի շարք նորմեր զետեղված են նաև Սահմանադրության՝ «մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները» վերտառությամբ գլխում: Ապացույցների թույլատրելիության ինստիտուտի սահմանադրաիրավական կարգավորումն անխոս վկայում է դրա դերի կարևոր նշանակության մասին:

Առաջին հերթին, ապացույցների թույլատրելիության վերաբերյալ դրույթներ պարունակում են մարդու իրավունքների և ազատությունների երաշխավորմանն ուղղված մի շարք միջազգային իրավական փաստաթղթեր, այդ թվում՝ «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը» (1948թ.), «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը» (1966թ.), «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիան» (1950թ.), «Տանջահարման և այլ դաժան, անմարդկային և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի և պատժի դեմ կոնվենցիան» (1984թ.) և այլն:

Ապացույցների թույլատրելիությանն առավել հանգամանալից իր վճիռներում[18] անդրադառնում է Մարդու իրավունքների Եվրոպական դատարանը, որն ապացույցների թույլատրելիության խնդրին անդրադարձել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածում նախատեսված արդարացի դատաքննության իրավունքի համատեքստում: Դատարանը նշել է, որ իր խնդիրը ոչ թե վկաների ցուցմունքների գնահատումն է, այլ պարզելը, թե արդյոք դատաքննությունը եղել է արդարացի՝ ներառելով նաև ապացույցների թույլատրելիության հարցը[19]:

Ապացույցների թույլատրելիության առումով անկյունաքարային նշանակություն ունեցավ Արմեն Սարգսյանի գործով ՀՀ վճռաբեկ դատարանի ԵՔՐԴ/0295/01/08 որոշումը, մասնավորապես՝ «(…) որպես ապացույց չեն կարող օգտագործվել քննչական կամ այլ դատավարական գործողության կատարման կարգի էական խախտմամբ ձեռք բերված փաստական տվյալները, հատկապես, եթե դրանք իրենց հերթին հանգեցրել են դատավարության մասնակիցների իրավունքների էական խախտման, ազդել են կամ կարող էին ազդել ստացված փաստական տվյալների հավաստիության վրա»:

[18] Van Mechelen and Others v. The Netherlands, Case of Schenk v.Switzerland, Khan v. The United Kingdom, Ireland v. The United Kingdom, Funke v.France, Van Kück v.Germany, Ramanauskas v. Lithuania:
[19] Monnell and Morris v. the United Kingdom:

Միևնույն ժամանակ, ապացույցների թույլատրելիության վերաբերյալ մի շարք գործերով[20] ՀՀ վճռաբեկ դատարանի արտահայտած դիրքորոշումներն ուղենիշային են դարձել հետագա որոշումների կայացման և հայրենական դատական համակարգի համար:

Գործող քրեական դատավարության օրենսգրքի 97-րդ հոդվածը սահմանում է ապացույցի թույլատրելիության իրավաչափության պայմաններն ու պահանջները, ինչպես նաև որպես ապացույց չթույլատրվող՝ օրենքի էական խախտմամբ ստացված տվյալների շրջանակը (անթույլատրելի ապացույցներ), որը հանդիսանում է վարույթի արդարացի իրականացման և անձի իրավունքների և ազատությունների ապահովման հիմնարար երաշխիքներից մեկը:

Ուշագրավ է, որ ինչպես նախկին, այնպես էլ գործող քրեական օրենսգիրքը չի պարունակում թույլատրելիության հասկացությունը, այնինչ տվյալ եզրույթի օրենսդրական մեկնաբանումը, մեր կարծիքով, առաջնային նշանակություն կունենար նշված ինստիտուտի պրակտիկ կիրառման համատեքստում: Թույլատրելիության հասկացությունն օրենքում մեկնաբանվում է հակադարձ կերպով, այն է՝ եթե օրենքի էական խախտմամբ ստացված տվյալները ճանաչվում են անթույլատրելի և չեն կարող օգտագործվել որպես ապացույց, ապա համապատասխանաբար օրենքի պահանջների պահպանմամբ ստացված տվյալները թույլատրելի են և կարող են քրեական վարույթի շրջանակներում օգտագործվել որպես ապացույց:

Միաժամանակ, քրեադատավարական օրենսդրությունում ապացույցների թույլատրելիության հասկացության բացակայությունը շատ հաճախ տարակարծիք մեկնաբանությունների տեղիք է տալիս դրա պրակտիկ կիրառման տեսանկյունից, հետևաբար, գտնում ենք, որ անհրաժեշտ է օրենսդրորեն ձևակերպել տվյալ ինստիտուտի բնորոշումը:

Այսպիսով, առաջարկում ենք Օրենսգրքում՝ առանձին հոդվածում, ամրագրել ապացույցների թույլատրելիության հասկացությունը՝ հետևալ բովանդակությամբ՝ «Ապացույցների թույլատրելիությունը փաստական տվյալների ստացման և դատավարական ամրագրման՝ օրենքով նախատեսված պահանջների բնութագրումն է, որը կարգավորում է փաստական տվյալների հավաքման, ամրագրման և դրանց ստացման աղբյուրների ստուգման միջոցներն ու ընթացակարգը, ինչպես նաև ապացուցողական գործողություն իրականացնելու լիազորություն ունեցող վարույթին ներգրավված անձանց իրավասությունը»:

[20] Արարատ Ավագյանի և Վահան Սահակյանի գործով ՀՀ վճռաբեկ դատարանը թիվ ԵԿԴ/0252/01/13 գործով 2014 թվականի հոկտեմբերի 31-ի որոշմամբ անդրադարձել է ապացույցների հատկանիշներին, այդ թվում՝ թույլատրելիությանը՝ անդրադարձ կատարելով նաև տվյալ ինստիտուտի պայմանների բովանդակության բացահայտմանը, իսկ Մելինե Մարգարյանի գործով (ԵԿԴ/0081/01/11) գործնականորեն կիրառել է «թունավոր ծառի պտուղների» տեսությունը՝ սահմանելով, որ օրենքի էական խախտմամբ ստացված տվյալները, ինչպես նաև դրանց հիման վրա կատարված ապացուցողական գործողությունների արդյունքում ձեռք բերված տվյալները ճանաչվում են անթույլատրելի և չեն կարող օգտագործվել որպես ապացույց:

Մեր կարծիքով՝ ապացույցի թույլատրելիությանն առնչվող գործնական խնդիրների արդյունավետ լուծման նպատակով առավել նպատակահարմար կլիներ նաև առանձին նորմում օրենսդրորեն ամրագրել ապացույցի թույլատրելիության պայմանները (չափորոշիչները), ինչն իր հերթին թույլ կտար իրավակիրառին ապացույցների հավաքման, ստուգման և գնահատման գործընթացում, ինչպես նաև ապացույցն անթույլատրելի ճանաչելու հարցում դրսևորելու համապարփակ և միասնական մոտեցում:

Թեև Օրենսգիրքը սահմանում է օրենքի այն էական խախտումների սպառիչ ցանկը, որոնք անվերապահորեն հանգեցնում են ապացույցի անթույլատրելիության, սակայն, միաժամանակ, իրացնելով հիմնական իրավունքների խախտմամբ ձեռք բերված կամ արդար դատաքննության իրավունքը խաթարող ապացույցի օգտագործման սահմանադրական արգելքը, սահմանում է նաև օրենքի էական խախտման ընդհանուր ձևակերպում՝ որպես այդպիսին համարելով այն խախտումները, որոնք դրսևորվել են մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների և ազատությունների ոտնահարմամբ կամ քրեական վարույթի սկզբունքների խախտմամբ: Օրինակ՝ մեղադրյալից հետազոտման համար նմուշ է ստացվում անհամարժեք ֆիզիկական հարկադրանքի կիրառմամբ (Օրենսգրքի 18-րդ հոդվածի 7-րդ մաս) կամ վարույթն իրականացնող մարմինն արգելում է պաշտպանի ներկայությունը մեղադրյալի մասնակցությամբ կատարվող քննչական փորձարարությանը (Օրենսգրքի 19-րդ հոդվածի 2-րդ մաս)[21]: Փաստացի, Օրենսգիրքն անթույլատրելի ապացույցների շարքին է դասել մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների և ազատությունների ոտնահարմամբ ստացված տվյալները՝ ի տարբերություն նախկին օրենսգրքի (քրեական դատավարության մասնակիցների հիմնական իրավունքների և ազատությունների)՝ ընդլայնելով անձի իրավունքների և ազատությունների պաշտպանությունը:

Վերոնշյալն առաջադեմ քայլ է՝ հաշվի առնելով ժողովրդավարական և իրավական պետությունում հռչակված՝ մարդը բարձրագույն արժեք է դրույթն ու պետության կողմից ստանձնած մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների հարգման ու պաշտպանության հանրային իշխանության պարտավորությունը (Սահմանադրության 3-րդ հոդվածի 2-րդ մաս):

Օրենսգրքի 97-րդ հոդվածի 3-րդ մասում թվարկված են օրենքի էական խախտումները, որոնց առկայությունն անվերապահորեն հանգեցնում են ձեռք բերված ապացույցի անթույլատրելիության: Թվարկված խախտումների բովանդակային վերլուծությունը թույլ է տալիս եզրահանգելու, որ ապացույցներն իրավաբանորեն առոչինչ դառնալու հիմնական պատճառը դրանք ոչ պատշաճ սուբյեկտի կողմից ձեռք բերված լինելն է (տվյալ քրեական վարույթն իրականացնելու, համապատասխան ապացուցողական կամ վարութային այլ գործողություն կատարելու

[21] ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի հայեցակարգային լուծումների, նորարարական մոտեցումների և հիմնական ինստիտուտների մեկնաբանման գործնական ուղեցույց, հեղինակային խումբ, Եվրոպայի խորհուրդ, 2022, էջ 163:

իրավասություն չունեցող անձի կողմից, բացարկման ենթակա անձի էական մասնակցությամբ, եթե նա իմացել է կամ ողջամտորեն պետք է իմանար վարույթին իր մասնակցությունը բացառող հանգամանքների առկայության մասին):

Օրենսգիրքն անվերապահ ապացույցի անթույլատրելիության հանգեցնող օրենքի էական խախտմամբ ձեռք բերված ապացույցների շարքում նախատեսել է նաև քննչական գործողության կատարման ընթացքում մեղադրյալի կարգավիճակ չունեցող (ում նկատմամբ փաստացի իրականացվել է քրեական հետապնդում՝ առանց այդ մասին նրան պատշաճ ծանուցելու) անձից ստացված տվյալները: Նշվածի համար հիմք է ընդունված «Դեվեերն ընդդեմ Բելգիայի» գործով[22] Եվրոպական դատարանի արտահայտած դիրքորոշումը, որի համաձայն՝ մեղադրանք հասկացությունը պետք է հասկացվի ոչ թե ձևական, այլ բովանդակային իմաստով:

Վերոշարադրյալի հետ սերտ առնչություն ունի քրեական դատավարության հիմնարար սկզբունք հանդիսացող անձի պաշտպանության իրավունքը[23]*, հետևաբար՝ քրեական վարույթում անթույլատրելի են այն տվյալները, որոնք ձեռք են բերվել պաշտպանության իրավունքի խախտմամբ, որպիսի պայմաններում քրեադատավարական գործընթացում առաջնային է հիշյալ իրավունքի անշեղ պահպանումը:*

Հատկանշական է, որ Օրենսգիրքն ապացույցների թույլատրելիության հետ կապված հարցերին նորովի մոտենալու արդյունքում թույլատրելիության կանոնները սահմանել է այնպես, որ մի կողմից ոչ էական կամ ձևական խախտումը, որը հնարավոր է չեզոքացնել, չորակազրկի ապացույցը, մյուս կողմից՝ ապացույցի հավաքման ընթացքում պաշտպանվեն վարույթի մասնակիցների իրավունքները[24]:

Ոչ բոլոր ապացուցողական գործողությունների ընթացքում թույլ տրված խախտումներն է հնարավոր չեզոքացնել կամ ոչ բոլոր կասկածներն է հնարավոր փարատել լրացուցիչ գործողությունների իրականացման արդյունքում, ուստի, օրենսդիրն իրավաչափորեն, ի տարբերություն նախկին օրենսգրքի, որն անվերապահորեն քննչական կամ այլ դատավարական գործողության կատարման կարգի էական խախտմամբ ստացված տվյալները համարում էր անթույլատրելի, հստակ սահմանել է, որ սույն օրենսգրքով նախատեսված ընթացակարգի խախտմամբ ստացված տվյալները համարվում են օրենքի էական խախտմամբ ստացված, եթե հնարավոր չէ դրա հետևանքը վերացնել այլ ապացուցողական գործողության պատշաճ կատարմամբ, ինչը, կարծում ենք, ապահովում է հանրային ու մասնավոր շահերի արդարացի հավասարակշռումը:

Աներկբա է, որ քրեական դատավարությունում ապացուցումն ունի անկյունաքարային նշանակություն, ինչն ընկած է քրեադատավարական գործընթացում ընդունվող որոշումների հիմքում: Ապացույցների միջոցով է

---

[22] Deweer v. Belgium:

[23] Տե՛ս **ՀՅՔԲԴ2/0153/01/08 քրեական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2010 թվականի մարտի 26-ի որոշման 29-31 կետերը, ԵԿԴ/0201/11/17 քրեական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի՝** 2019 թվականի հունիսի 12-ի որոշման 19-20 կետերը:

[24] ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի հայեցակարգային լուծումների, նորարարական մոտեցումների և հիմնական ինստիտուտների մեկնաբանման գործնական ուղեցույց, հեղինակային խումբ, Եվրոպայի խորհուրդ, 2022, էջ 153:

հնարավոր ապահովել քրեական դատավարության սկզբունքների անշեղ իրագործումը՝ ապահովելով անձի իրավունքներն ու ազատությունները, ինչպես նաև հասարակության և պետության շահերի քրեաիրավական պաշտպանությունը հանցավոր արարքներից:

Պիտանիություն հատկանիշը՝ որպես ապացույցի գնահատման ինքնուրույն չափորոշիչ.

Օրենսգիրքը, որպես նորույթ[25], նախատեսում է իրավիճակներ, երբ թեպետ փաստական տվյալն ստացվել է օրենքով սահմանված կարգով, սակայն որոշ հանգամանքների առկայության դեպքում անհնար է դառնում տվյալ ապացույցն օգտագործել՝ վարույթով պարզման ենթակա հանգամանքները հաստատելու համար: Օրենսգրքում, որպես նման հանգամանքներ, նախատեսված են ապացույցը փոխարինած լինելու կամ դրա հատկանիշները փոփոխած լինելու ողջամիտ կասկածն ու ճիշտ ընկալելու, հիշելու և վերարտադրելու ունակության բացակայությունը: Քննարկվող ձևակերպումն ունի տեսական և գործնական էական նշանակություն՝ **հաշվի առնելով այն հանգամանքը**, որ, ըստ էության, խոսք է գնում ապացույցի ինքնուրույն հատկանիշի՝ պիտանիության, մասին: Բանն այն է, որ թեև տվյալ իրավիճակներում փաստական տվյալը ձեռք է բերվել օրենքով նախատեսված կառուցակարգերին համահունչ, սակայն հետագա քննության համար դրա օգտագործումը դառնում է անհնար՝ պիտանի լինելու չափանիշին չհամապատասխանելու պատճառաբանությամբ:

Օրենսդրական քննարկվող ձևակերպումը տեսական առումով արձանագրում է ապացույցի ոչ միայն իրավաչափ ստացման անհրաժեշտությունը, այլև դրա պիտանիությունը՝ որպես վարույթի համար նշանակություն ունեցող հանգամանքները հաստատելու առանձին և ինքնուրույն դատավարական չափանիշ: Գործնական առումով այն թույլ է տալիս բացառելու այնպիսի փաստական տվյալների կիրառումը, որոնք թեև ձևական առումով թույլատրելի են, սակայն չեն կարող նպաստել վարույթի համար նշանակություն ունեցող հանգամանքների հաստատմանը:

Նշված մոտեցումը թույլ է տալիս արձանագրելու, որ յուրաքանչյուր ապացույց ենթակա է գնահատման ոչ միայն ձեռքբերման իրավաչափությամբ, այլև՝ բովանդակային պիտանիությամբ, որը պայմանավորված է տվյալ փաստական տվյալի՝ ապացուցման ենթակա հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը, ինչպես նաև վարույթի համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներ պարզելու օբյեկտիվ ունակությամբ, այսինքն՝ ապացույցը կարող է լինել վերաբերելի, թույլատրելի և հավաստի, սակայն ոչ պիտանի՝ հաշվի առնելով վարույթի շրջանակներում դրա օգտագործման անհնարինության հանգեցնող որոշ հանգամանքների առկայությունը:

Օրենսգրքի 97-րդ հոդվածի 5-րդ մասի ձևակերպումն արդեն իսկ վկայում է, որ օրենսդիրը, ըստ էության, քննարկվող փաստական տվյալները համարում է

[25] Տե՛ս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 97-րդ հոդվածի 5-րդ մաս:

օրենքով սահմանված կարգով ստացված, սակայն որոշ հանգամանքների առկայությամբ պայմանավորված՝ օգտագործման համար ոչ պիտանի:

Ապացույցի օգտագործման անհնարինության հանգեցնող հանգամանքներից առաջինն օրենքով սահմանված կարգով ստացված տվյալները փոխարինված լինելու կամ դրանց հատկանիշները փոփոխած լինելու ողջամիտ կասկածն է: Այլ կերպ՝ եթե կան հիմնավոր կասկածներ, որ վարույթի շրջանակներում ձեռք բերված ապացույցը ենթարկվել է փոփոխման կամ փոխարինման, ապա տվյալ փաստական տվյալը չի կարող օգտագործվել որպես ապացույց:

Այսպես, թիվ ԵԴ1/0638/01/23 քրեական գործով Դատարանն արձանագրել է, «/…/ Նման պայմաններում պարզ չէ, թե մինչև խուզարկության պահը նշված ավտոմեքենայում ով կամ ովքեր են մուտք ունեցել, այն պայմաններում, երբ քրեական գործի դատաքննության ընթացքում հաստատվել է, որ նշված ավտոմեքենան առհասարակ կնիքված չի էլ եղել և նշված ավտոմեքենայում խուզարկություն կատարելու ժամանակ մեղադրյալը վիճարկել է այդ փաստը, ինչպես նաև ավտոմեքենայում հայտնաբերված առարկաների՝ իրեն պատկանելիությունը և մեքենայում պահվելու հանգամանքը: Դատարանի համար հատկանշական է, որ հիշյալ ավտոմեքենայում կատարված խուզարկության ընթացքում, դրան մասնակից այլ անձինք ևս կատարել են հայտարարություններ, մասնավորապես՝ ավտոմեքենայից խոշոր չափի գումար անհետանալու վերաբերյալ: Վերոգրյալ փաստական հանգամանքների համակցությունը Դատարանի մոտ ձևավորում են «Հոնդա Էլիսոն» մակնիշի 81 IT 100 հաշվառման համարանիշի ավտոմեքենայի պարունակությունը փոփոխած լինելու ողջամիտ կասկած»:

Նշված հանգամանքով պայմանավորված՝ Դատարանը հաստատել է նշված ավտոմեքենայում խուզարկությամբ ակոսափող հրազեն հանդիսացող ատրճանակի, լիցքավորված թվով 9 հատ 9մմ տրամաչափի ռազմամթերք հանդիսացող փամփուշտների հայտնաբերման, դրանք՝ որպես իրեղեն ապացույցի և դրա հետ կապված գործողությունների արդյունքում ստացված տվյալների օգտագործման անթույլատրելիությունն՝ այդ մասով սահմանափակելով «Հոնդա Էլիսոն» մակնիշի ավտոմեքենայում խուզարկություն կատարելու մասին 2023 թվականի փետրվարի 5-ի արձանագրության և ՀՀ ՆԳՆ ոստիկանության փորձաքրեագիտական վարչության՝ դատաձգաբանական փորձաքննության 2023 թվականի փետրվարի 6-ի թիվ 244-23 եզրակացության՝ որպես ապացույցի օգտագործումը:

Մեկ այլ դեպքում[26] նույն պատճառաբանությամբ Դատարանը հաստատել է նախաքննության ընթացքում խուզարկությամբ հայտնաբերված թմրամիջոցի՝ որպես իրեղեն ապացույցի, օգտագործման անթույլատրելիությունը՝ սահմանափակելով նաև խուզարկություն կատարելու մասին արձանագրության և փորձաքննության եզրակացության՝ որպես ապացույցի օգտագործումը:

Օրենսգրքի 97-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետում նախատեսված հանգամանքը (ճիշտ ընկալելու և վերարտադրելու ունակության բացակայություն) քրեա-

[26] Տե՛ս Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի 2024 թվականի փետրվարի 06-ի թիվ ԵԴ1/1391/01/23 քրեական գործով դատավճիռ:

դատավարական օրենսդրությունում նոր չէ, քանի որ 1998 թվականին ընդունված քրեական դատավարության օրենսգրքով որպես վկա չէին կարող հարցաքննվել անձինք, որոնք ֆիզիկական կամ հոգեկան պակասությունների հետևանքով ունակ չեն ճիշտ ընկալելու և վերարտադրելու քրեական գործով պարզելու ենթակա հանգամանքները:

Ներկայիս օրենսդրական ձևակերպմամբ խոսք է գնում ոչ միայն վկայի կարգավիճակ ունեցող, այլև բոլոր այն անձանց վերաբերյալ, որոնց մոտ հնարավոր են նշված դրսևորումները, միաժամանակ, եթե նախկին օրենսգրքում նշվում էր որպես վկա վարույթին չներգրավվելու (չեն կարող կանչվել և հարցաքննվել) մասին, ապա ներկայումս առավել հստակ է նախատեսված քննարկվող կարգավորումը՝ բարձրացնելով արդեն իսկ ստացված ցուցմունքի պիտանիության հարցը:

Ընդ որում, նշված դրույթի գործնական կիրառման համար ուղենիշային հանդիսացավ ՀՀ վճռաբեկ դատարանի ԿԴ1/0006/01/14 գործով արտահայտած դիրքորոշումը. «(…) հոգեկան կամ ֆիզիկական պակասություններ ունեցող անձանց ցուցմունքները որպես ապացույց օգտագործելու և դրանք մեղադրական դատավճռի հիմքում դնելու հարցը պարզելու համար յուրաքանչյուր դեպքում անհրաժեշտ է որոշել, թե տվյալ անձը արդյոք ունակ է ճիշտ ընկալել գործի համար էական նշանակություն ունեցող փաստերը և վերարտադրել դրանք: Այս հանգամանքները կարող են հաստատվել միայն հիմնավորվածության, լրիվության և հստակության պահանջներին համապատասխանող դատահոգեբուժական փորձաքննությամբ»:

Մի շարք դեպքերում քրեական գործերով[27] դատարաններն արձանագրել են, որ ընկալելու և վերարտադրելու խնդիրներ ունեցող անձանց ցուցմունքները չեն կարող դրվել արարքը կատարած լինելու հանգամանքը հիմնավորելու հիմքում:

Վերոնշյալի հետ սերտորեն առնչվում է ապացույցի սահմանափակ օգտագործման մեկ այլ նորամուծություն ևս, մասնավորապես՝ գործող օրենսգիրքը նախատեսել է մեղադրյալի՝ օրենքով սահմանված կարգով, սակայն պաշտպանի բացակայությամբ տված ցուցմունքի օգտագործման արգելք այն դեպքում, եթե մեղադրյալը դատարանում հրաժարվել է դրանցից (Օրենսգրքի 97-րդ հոդվածի 6-րդ մաս): Միաժամանակ, Օրենսգրքի 330-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ մինչդատական վարույթում մեղադրյալի տված ցուցմունքները չեն կարող հրապարակվել, եթե դրանք ստացվել են պաշտպանի բացակայությամբ, և մեղադրյալը դատարանում հրաժարվել է դրանցից:

Ուշագրավ է, որ տվյալ դեպքում օրենսգիրքն ապացույցի կիրառման արգելքը կապում է ոչ թե 97-րդ հոդվածով նախատեսված չափանիշի հետ՝ մեղադրյալի՝ պաշտպանի բացակայությամբ տված ցուցմունքը դիտարկելով որպես օրենքի խախտմամբ ստացված տվյալ, այլ օրենքով սահմանված կարգով ձեռք բերված ապացույցի օգտագործման համար սահմանել է լրացուցիչ երաշխիք՝ փորձելով

[27] Տե՛ս թիվ ԼԴ/0204/01/10 քրեական գործով 2010 թվականի սեպտեմբերի 09-ին և թիվ ԵԴ/1654/01/21 քրեական գործով 2023 թվականի ապրիլի 26-ին կայացված դատավճիռները:

բացառել մեծամասամբ ինքնախոստովանական ցուցմունքների հիման վրա անձի դատապարտման հնարավորությունը:

Նշվածի տեսանկյունից հատկանշական պետք է համարել այն հանգամանքը, որ նման արգելքը վերաբերում է բացառապես մեղադրյալի ցուցմունքին, ուստի՝ «թունավոր ծառի պտուղները թունավոր են» կանոնը քննարկվող դեպքում կիրառելի չէ, և եթե անգամ մեղադրյալի ինքնախոստովանական ցուցմունքն առանց պաշտպանի տրված լինելու պատճառաբանությամբ դատաքննության ընթացքում չի թույլատրվում՝ հանվելով ապացույցների զանգվածից, ապա, միևնույն է, դրանից ածանցված (օրինակ՝ դեպքի վայրի զննություն, քննչական փորձարարություն) և ձեռքբերման գործընթացում առանց որևէ խախտման ստացված տվյալներն ինքնին չեն կարող համարվել անթույլատրելի, ինչը չի հակասում Օրենսգրքի 97-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված թունավոր ծառի պտուղների կանոնին և դրա առնչությամբ ՀՀ վճռաբեկ դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքին:

Դատարանները ներկայումս գործնականում լայնորեն կիրառում են[28] տվյալ կանոնը՝ գտնելով, որ պաշտպանի բացակայությամբ մեղադրյալի տված ցուցմունքները չեն կարող օգտագործվել որպես ապացույց, եթե մեղադրյալը դատարանում հրաժարվել է դրանցից:

Կարծում ենք, որ տվյալ նորմի նախատեսումն արդարացված կարելի է համարել այնքանով, որ որոշակի զգոնություն կհաղորդի նաև վարույթն իրականացնող մարմնին՝ ապացույցների ձեռքբերման գործընթացին մոտենալու հնարավորինս լրջագույն, և վարույթի սկզբնական փուլում ունենալով ինքնախոստովանական ցուցմունք՝ չսահմանափակել հիմնավոր կասկածից վեր ապացուցողական զանգվածի ձեռքբերման հնարավորությունը:

Միևնույն ժամանակ, նկատի ունենալով, որ ապացույցների թույլատրելիությունը որոշվում է այն ձեռք բերելու պահին գործող օրենքով, իսկ Օրենսգրքի 4-րդ հոդվածը սահմանում է, որ դրա դրույթները հետադարձ ուժ չունեն, այսինքն՝ հետադարձության նյութահիրավական կանոնը դատավարությունում կիրառելի է միայն այն դեպքում, երբ հատուկ նախատեսված է օրենքով, գտնում ենք, որ նախկին օրենսդրության պայմաններում ձեռք բերված ապացույցները, այդ թվում՝ ինքնախոստովանական, գործող օրենսգրքով դատաքննությունն իրականացնելու պայմաններում, այնուամենայնիվ, ենթակա են հրապարակման, իսկ դրանց թույլատրելիության հարցի քննարկումն արդեն վերապահված է դատարանի՝ վերդիկտ կայացնելիս առանձին սենյակում գնահատմանը, հակառակ պարագայում կխախտվի դատավարության կողմերի մրցակցության հիմնարար սկզբուն-

[28] Տե՛ս թիվ ԵԴ/1421/01/22 քրեական գործով 2023 թվականի նոյեմբերի 17-ի, թիվ ԵԴ/1482/01/22 քրեական գործով 2024 թվականի հոկտեմբերի 11-ի, թիվ ԵԴ1/2169/01/23 քրեական գործով 2024 թվականի հոկտեմբերի 04-ի, թիվ ԵԴ/0153/01/23 քրեական գործով 2023 թվականի հոկտեմբերի 19-ի, թիվ ԳԴ/0005/01/23 քրեական գործով 2024 թվականի օգոստոսի 12-ի, թիվ ԵԴ1/1227/01/24 քրեական գործով 2024 թվականի հունիսի 25-ի դատավճիռները:

քը, իսկ դատավարության մի կողմը չհիմնավորված կերպով հանդես կգա առավել բարենպաստ դիրքերից, ինչը, գտնում ենք, անթույլատրելի է:

Կարծում ենք, որ նման մոտեցումն առավել արդյունավետ կարող է համարվել «անցումային շրջան»-ում գործերի քննության համար, երբ հազարավոր գործեր քննվել և վարույթները դատարան են ուղարկվել՝ նախաքննությունը նախկին օրենսդրությամբ կատարված լինելու պայմաններում, ուստի՝ դատարաններն այս դեպքում ևս անկողմնակալ լինելու տեսանկյունից կարևոր անելիք ունեն:

Բացի այդ, սույն կարգավորումը պրակտիկայի համար կարող է ունենալ որոշակի անցանկալի հետևանքներ, քանի որ շատ հաճախ ձեռք բերված ապացույցների համակցությունը բավարար չի լինում անձին դատապարտելու համար, և դա հնարավոր է դառնում ձեռք բերված այլ ապացույցները մեղադրյալի ցուցմունքի հետ համակցության մեջ դիտարկելու պայմաններում: Ընդ որում, քննարկենք այն դեպքերը, երբ նախաքննական մարմինն ապահովում է մեղադրյալի բոլոր իրավունքների պատշաճ իրացումը, այդ թվում՝ պաշտպան ունենալու իրավունքը, սակայն մեղադրյալը կամովին հրաժարվում է իր իրավունքից, իսկ քննիչը ստիպողաբար չի կարող նրան ապահովել պաշտպանով: Նման պայմաններում մեղադրյալը տալիս է ցուցմունքներ, որոնք համակցության մեջ էական նշանակություն են ունենում նրա դատապարտումը մեծապես հավանական համարելու և քրեական վարույթը մեղադրական եզրակացությամբ դատարան ուղարկելու համար, սակայն դատարանում նախաքննական ցուցմունքից հրաժարումը հանգեցնում է նախկին ցուցմունքի օգտագործման անհնարինության, ինչը, գտնում ենք, հանրային շահի տեսանկյունից չի կարող ընդունելի համարվել:

Ընդ որում, միջազգային չափանիշներով նախատեսվում են երաշխիքներ, որոնք կոչված են ապահովելու մեղադրյալի իրավունքների իրացումը, ինչը հավելյալ երաշխիքների տեսքով ներդրվել է նաև ներպետական իրավական համակարգում: Սակայն նշված նորմը, գտնում ենք, խախտում է հանրային և մասնավոր շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը և մեղադրյալի պաշտպան ունենալու իրավունքը դարձնում է բացարձակ իրավունք՝ առանց հաշվի առնելու նրա՝ այս կամ այն իրավունքն իրացնելուց հրաժարվելու հանգամանքը, հետևաբար՝ կարծում ենք, որ վերապահված իրավունքից հրաժարումը չպետք է հանգեցնի ստացված ապացուցի օգտագործման անհնարինության, և եթե նախաքննական մարմինն ապահովել է մեղադրյալի բոլոր իրավունքները, այդ թվում՝ պաշտպան ունենալու իրավունքը, սակայն մեղադրյալը պաշտպանության իր իրավունքի իրացումից հրաժարվել է քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված՝ պաշտպանից հրաժարվելու պատշաճ ընթացակարգի առկայության պայմաններում[29], ապա նրա տված ցուցմունքը պետք է դիտարկվի պիտանի՝

[29] ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Պաշտպանից հրաժարվելը վարույթն իրականացնող մարմինն ընդունում է միայն այն դեպքում, երբ մեղադրյալն այդ մասին հայտարարել է սեփական նախաձեռնությամբ, կամավոր, գիտակցված, վարույթին մասնակցող պաշտպանի ներկայությամբ, և ողջամտորեն ենթադրելի է, որ մեղադրյալն ի վիճակի է ինքնուրույն իրականացնելու իր պաշտպանությունը: Մեղադրյալը պարտավոր չէ բացահայտել պաշտպանից հրաժարվելու պատճառները: Այն դեպքում, երբ պաշտպանից հրաժարվելը պայմանավորված է

օգտագործվելով նույնիսկ հետագայում դատարանում դրանից հրաժարվելու պարագայում:

Հարկ է նշել, որ նշված կարգավորումը, միանշանակ, առաջնային քայլ է՝ ուղղված մարդու իրավունքների և ազատությունների երաշխավորված պաշտպանությանը, սակայն, միաժամանակ, գտնում ենք, որ օրենսդրական սույն անցումային ժամանակահատվածում նշված հարցի քննարկումը չի կարող ամբողջապես արտացոլել դրա էությունն ու նշանակությունը, ուստի, առավել նպատակահարմար ենք համարում քննարկվող կարգավորման վերաբերյալ վերջնական եզրահանգումներ անել իրավակիրառ պրակտիկայում որոշ ժամանակահատված նշված նոր ինստիտուտի գործածման ու առավել խորությամբ տեսական ուսումնասիրման և վերլուծության արդյունքում:

Ինչպես տեսնում ենք, օրենսդիրը հստակ տարանջատել է այն դեպքերը, երբ որոշ հանգամանքների առկայության պայմաններում ստացված փաստական տվյալը չի կարող քրեական դատավարությունում կիրառվել որպես ապացույց՝ դրվելով վարույթի համար նշանակություն ունեցող հանգամանքների հաստատման հիմքում: Ապացույցի պիտանիության հատկանիշի ինստիտուցիոնալացումը խթանում է դատավարության արդարացի իրականացման սկզբունքի պահպանմանը՝ ապահովելով, որ դատավարական որոշումների հիմքում դրվեն ոչ միայն օրենքով սահմանված կարգով ստացված, այլև արժանահավատ և պիտանի ապացույցներ:

Թեև ապացույցի պիտանիությունը սերտորեն առնչվում է ապացույցի թույլատրելիությանը, սակայն, գտնում ենք, որ Օրենսգրքում դրանց օրենսդրական ձևակերպումները պետք է արձանագրվեին տարբեր հոդվածներում, քանի որ թույլատրելիության ինստիտուտին բնորոշ հոդվածում պիտանիության հատկանիշի նախատեսումը թույլ չի տալիս տեսական և գործնական մակարդակում առանձնացնել վերջինի գործառնական նշանակությունն ու կարևորությունը, այնինչ պիտանիությունը՝ որպես քրեադատավարական ապացույցի գնահատման ինքնուրույն հատկանիշ, իր առանձնակի ազդեցությունն է ունենում ապացուցողական գործընթացի վրա: Նշված հատկանիշների՝ միմյանցից տարանջատումն ու առանձին հոդվածներում նախատեսումը թույլ կտա իրավակիրառին ապացույցի գնահատման գործընթացում առանձին գնահատել ոչ միայն ապացույցի թույլատրելիությունը, վերաբերելիությունն ու հավաստիությունը, այլև յուրաքանչյուր ապացույցի՝ այս կամ այն հանգամանքը հաստատելու համար պիտանի լինելը:

Եզրակացություն

Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ կարելի է ձևավորել ներքոհիշյալ եզրահանգումները.

մեղադրյալի անվճարունակությամբ, վարույթն իրականացնող մարմինը, սույն օրենսգրքով նախատեսված կարգով անհապաղ պահանջում է պաշտպան նշանակել պետական միջոցների հաշվին»:

➢ Ապացույցի հատկանիշների հասկացության և բովանդակության պարզումն առանցքային նշանակություն ունի ապացուցման ողջ գործընթացի արդյունավետ կազմակերպման համար: Քրեական դատավարությունում որպես ապացույց հանդես գալու համար յուրաքանչյուր փաստական տվյալ պետք է օժտված լինի վերաբերելիության, թույլատրելիության, հավաստիության, պիտանիության և բավարարության հատկանիշներով:

➢ Գործող Օրենսգիրքն առկա հասարակական հարաբերությունների իրողությունների պայմաններում կարգավորում է ապացույցների թույլատրելիության պահանջները, նախատեսում է ապացույցների հավաքման, ամրագրման և օգտագործման ընթացակարգը՝ հստակ անդրադառնալով փաստական այն տվյալների շրջանակին, որոնք քրեական վարույթի շրջանակներում չեն կարող կիրառվել որպես ապացույց: Միաժամանակ, Օրենսգիրքը հստակ նախատեսում է այն հանգամանքների շրջանակը, որոնց առկայության պայմաններում օրենքով սահմանված կարգով ստացված փաստական տվյալը չի կարող վարույթի շրջանակներում գործածվել որպես պիտանի ապացույց:

➢ Նկատի ունենալով ապացույցի հատկանիշների դերն ու նշանակությունն ապացուցման գործընթացում՝ առաջարկում ենք քրեադատավարական օրենսդրությամբ հստակ ամրագրել ապացույցի թույլատրելիության գիտականորեն հիմնավորված հասկացությունը:

➢ Ուսումնասիրության շրջանակներում առանձնակի շեշտադրում է կատարվում նոր ընդունված քրեական դատավարության օրենսգրքով ապացուցման գործընթացի կարգավորմանը, ներդրված նորագույն կարգավորումներին, այդ թվում՝ ապացույցի յուրովի հատկանիշ հանդիսացող պիտանիությանը: Ավելին՝ առաջարկվում է քրեադատավարական ապացույցի գնահատման չափորոշիչ հանդիսացող պիտանիությունն Օրենսգրքում նախատեսել թույլատրելիության ինստիտուտից առանձին՝ որպես ապացույցի ինքնուրույն հատկանիշ:

➢ Առաջարկվում է նաև պաշտպանի բացակայությամբ մեղադրյալի տված ցուցմունքները դատարանում չպնդելու դեպքում կիրառել առավել ճկուն մեխանիզմներ՝ հանրային և մասնավոր շահերի համապատասխան հավասարակշռումն ապահովելու տեսանկյունից:

Գրականության ցանկ (reference list, список литературы)

1. Балакшин В.С., Допустимость доказательств: понятие, правовая природа, значение, алгоритм оценки: научно-практическое пособие, Екатеринбург, Изд-во УМЦ УПИ, 2013.

Balakshin, V. S., Admissibility of Evidence: Concept, Legal Nature, Significance, Evaluation Algorithm: Scientific and Practical Manual. Yekaterinburg: UMC UPI Publishing, 2013.

2. Балакшин В.С., К вопросу о понятии и содержании получения доказательств в уголовном процессе, Правоведение, 2014, № 1 (312).

Balakshin, V. S., On the Concept and Content of Obtaining Evidence in Criminal Procedure. Pravovedenie, 2014, No. 1 (312).

3. Белкин Р.С., Собирание, исследование и оценка доказательств. Сущность и методы. М., 1999.

Belkin, R. S., *Collection, Examination, and Evaluation of Evidence: Essence and Methods*, Moscow, 1999.

4. Громов Н.А., Зайцева С.А., Оценка доказательств в уголовном процессе. Москва, 2002.

Gromov, N. A., & Zaitseva, S. A., Evaluation of Evidence in Criminal Procedure. Moscow, 2002.

5. Ерпылёв И. В., Реализация института допустимости доказательств в уголовном процессе и правоохранительной деятельности России и зарубежных государств (Сравнительно-правовой анализ), Диссертация, Москва, 2015.

Erpylev, I. V., Implementation of the Institution of Admissibility of Evidence in Criminal Procedure and Law Enforcement Activities in Russia and Foreign States (Comparative Legal Analysis), Dissertation, Moscow, 2015.

6. Золотых В.В., Проверка допустимости доказательств в уголовном процессе, Ростов-на-Дону: Феникс, 1999.

Zolotykh, V. V., Verification of the Admissibility of Evidence in Criminal Procedure, Rostov-on-Don: Phoenix, 1999.

7. Кипнис Н.М., Допустимость доказательств в уголовном судопроизводстве, Москва, 1995.

Kipnis, N. M. (1995). Admissibility of Evidence in Criminal Proceedings. Moscow, 1995.

8. Костенко Р.В., Понятие и признаки уголовно- процессуальных доказательтв, Москва, 2006.

Kostenko, R. V., The Concept and Features of Criminal Procedure Evidence. Moscow, 2006.

9. Костенко Р.В., Оценка уголовно-процессуальных доказательств, Москва, Юрлит-информ, Монография, 2010.

Kostenko R.V., Evaluation of Criminal Procedure Evidence: Moscow, Yurlitinform, Monograph, 2010.

10. Лупинская П.А., Уголовно-процессуальное право Российской Федерации: Учебник/Отв. ред. 2-е изд., испр., и доп. – Москва: Норма, 2009.

Criminal Procedure Law of the Russian Federation: Textbook / Ed. by P. A. Lupinskaya. 2nd ed., rev. and ext. – Moscow: Norma, 2009.

11. Некрасов С.В., Юридическая сила доказательств в уголовном судопроизводстве. Москва, 2004.

Nekrasov S.V., The Legal Force of Evidence in Criminal Proceedings, Moscow, 2004.

12. Орлов Ю.К., Основы теории доказательств в уголовном процессе. Научно-практическое пособие. М., 2000.

Orlov, Y.K., Fundamentals of the Theory of Evidence in Criminal Procedure: A Scientific and Practical Guide, Moscow, 2000.

13. Соловьев А.Б., Проблемные вопросы доказывания, возникающие в процессе расследования преступлений при применении УПК РФ, Юрлитинформ, М., 2008.

Solovyov, A.B., *Problematic Issues of Evidence Arising in the Course of Crime Investigation under the Criminal Procedure Code of the Russian Federation*. Yurlitinform. Moscow, 2008.

14. Строгович М.С., Избранные труды: Т.3, Теория судебных доказательств. М., 1991.

Strogovich, M.S., *Selected Works: Vol. 3, Theory of Judicial Evidence*, Moscow, 1991.

15. Шейфер С.А., Сущность и способы собирания доказательств в советском уголовном процессе. Москва, ВЮЗИ, 1972.

Sheyfer S.A., The Essence and Methods of Gathering Evidence in the Soviet Criminal Process. Moscow: VYUZI, 1972.

16. West's encyclopedia of American Law. 2nd ed. – Vol. 1. – Detroit, Thomson Gale, 2004.

17. Oxford dictionary of Law. 5th ed. Oxford, Oxford University press. 2003.

18. Դ.Մ.Մելքոնյան, Քրեական գործերով ապացույցներն անթույլատրելի ճանաչելու հիմքերն ու դատավարական կարգը, Երևան, 2010:

Melkonyan D. M., Grounds and Procedural Order for Recognizing Evidence as Inadmissible in Criminal Cases. Yerevan, 2010.

19. Դ.Մ.Մելքոնյան, Պաշտպանության կողմի նոր դատավարական հնարավորությունները և դրանց հակակշիռները, Պետություն և իրավունք, N 2 (64), Երևան, 2014:

Melkonyan D.M., *New Procedural Opportunities for the Defense and Their Counterbalances, State and Law,* No. 2 (64), Yerevan, 2014.

20. ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի հայեցակարգային լուծումների, նորարարական մոտեցումների և հիմնական ինստիտուտների մեկնաբանման գործնական ուղեցույց, հեղինակային խումբ, Եվրոպայի խորհուրդ, 2022:

Practical Guide to the Conceptual Solutions, Innovative Approaches, and Key Institutions of the New Criminal Procedure Code of the Republic of Armenia. Author Group. Council of Europe. 2022.

21. Van Mechelen and Others v. The Netherlands – 23.04.1997
22. Schenk v. Switzerland – 12.07.1988
23. Khan v. The United Kingdom – 12.05.2000
24. Ireland v. The United Kingdom – 18.01.1978
25. Funke v. France – 25.02.1993
26. Van Kück v. Germany – 12.06.2003
27. Ramanauskas v. Lithuania – 05.02.2008
28. Monnell and Morris v. The United Kingdom – 02.03.1987
29. Deweer v. Belgium – 27.02.1980

Arsen Vardanyan
Deputy Prosecutor of Yerevan City, Degree Applicant at the Chair of Criminal Procedure and Criminology, Faculty of Law, Yerevan State University

ADMISSIBILITY AND RELEVANCE AS CHARACTERISTICS OF EVIDENCE IN CRIMINAL PROCEEDINGS OF THE REPUBLIC OF ARMENIA[30]

Abstract

Evidence, as one of the key components of criminal procedure, has always been at the center of attention of both legal theorists and practitioners.

This paper discusses, at the theoretical level, the concept, content, and practical significance of the characteristics of evidence, as well as several fundamental issues related to the evaluation and use of evidence. Based on the study of Armenian and foreign legislation, ECtHR rulings, precedential decisions of the Court of Cassation of the Republic of Armenia, judicial practice, and theoretical sources, the paper analyzes several current issues concerning the institution of admissibility of evidence in criminal proceedings.

The necessity of a legislatively defined and scientifically substantiated definition of admissibility is emphasized. Particular attention is given to the legal formulation of reliability as an independent characteristic of evidence in criminal procedure, to the circumstances that render the use of evidence impossible, and to their manifestations. The paper proposes that the provisions of the Criminal Procedure Code relating to admissibility and reliability be regulated separately.

The discussed institution is relatively new in the national legal system, which in turn implies the potential emergence of various practical issues. Their study and analysis may contribute to identifying those problems and finding effective solutions, which underscores the relevance of this research. Special focus is placed on issues arising in practice, new legal mechanisms introduced as part of legislative reforms, and the paper offers conclusions along with some proposals for the further development of the institution of evidence.

Keywords: criminal procedure; factual data; evidentiary characteristics; evidence evaluation; reliable evidence; inadmissible evidence.

[30] The article was presented on 15.05.2025 and was reviewed on 23.06.2025.

Арсен Варданян
Заместитель прокурора города Ереван, соискатель кафедры уголовного процесса и криминалистики юридического факультета Ереванского государственного университета

ДОПУСТИМОСТЬ И ПРИГОДНОСТЬ КАК ПРИЗНАКИ ДОКАЗАТЕЛЬСТВ В УГОЛОВНОМ СУДОПРОИЗВОДСТВЕ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ[31]

Абстракт

Доказательство, являясь одной из важнейших составляющих уголовного судопроизводства, постоянно находится в центре внимания как теоретиков, так и практиков.

В настоящей работе на теоретическом уровне рассматриваются понятие, содержание и практическое значение признаков доказательства, а также ряд ключевых вопросов, связанных с оценкой и использованием доказательств. На основе анализа законодательства Республики Армения и зарубежных стран, решений Европейского суда по правам человека, прецедентных постановлений Кассационного суда РА, судебной практики и теоретических источников исследуются актуальные проблемы, касающиеся института допустимости доказательств в уголовном процессе.

Отмечается необходимость законодательного закрепления научно обосно-ванного определения допустимости. Особое внимание уделяется пригодности как самостоятельному признаку уголовно-процессуального доказательства, обстоятельствам, делающим невозможным его использование, и их прояв-лениям. Предлагается отдельно регламентировать в Уголовно-процессуальном кодексе статьи, касающиеся признаков допустимости и пригодности.

Рассматриваемый институт является относительно новым в рамках нацио-нальной правовой системы, что, в свою очередь, предполагает вероятность возникновения ряда практических трудностей, изучение и анализ которых могут способствовать их выявлению и поиску эффективных решений, что подчеркивает актуальность данной работы. Особое внимание уделено вопросам, возникающим в практике, новым правовым механизмам, внедрённым в рамках законодательных реформ, а также сформулированы выводы и предложения, направленные на дальнейшее развитие института доказывания.

Ключевые слова: уголовное судопроизводство; фактические данные; признаки доказательства; оценка доказательств; пригодное доказательство; недопустимые доказательства.

[31] Статья была представлена 15.05.2025 и прошла рецензирование 23.06.2025.

https://doi.org 10.59821/18294219-2025.1-gha04

Գայանե Գասպարյան
ՀՀ գլխավոր դատախազության պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության վարչության պետի տեղակալ

ՀԱՆՐԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ՊԱՏԺԱՏԵՍԱԿԻ ԴԵՐԸ ՊԱՏԺԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԻՐԱՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ ԵՎ ՆՇԱՆԱԿՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՌԱՋԱՑՈՂ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ[1]

Համառոտագիր

Հոդվածը նվիրված է հանրային աշխատանքներ պատժատեսակի դերին և նշանակությանը, պատժի նպատակների իրացվելիության համատեքստում դրա արդյունավետության բարձրացմանն ուղղված խնդիրներին և դրանց լուծման ուղղությամբ առաջարկներին:

2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքով (այսուհետ՝ Գործող քրեական օրենսգիրք) հանրային աշխատանքներ պատժատեսակի դիրքը պատժի համակարգում ենթարկվել է էական փոփոխության՝ մասնավորապես՝ այն սահմանվել է որպես ինքնուրույն կիրառվող հիմնական պատիժ՝ ի տարբերություն 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ Նախկին քրեական օրենսգիրք), որտեղ հանրային աշխատանքները կիրառվում էին միայն որպես ազատազրկմանն այլընտրանք: Բացի այդ, ի տարբերություն Նախկին քրեական օրենսգրքի՝ շոշափելի կրճատվել են հանրային աշխատանքների կատարման թույլատրելի նվազագույն և առավելագույն ժամկետները:

Գործող քրեական օրենսգրքով վերաձևակերպվել են նաև պատժի նպատակները և որպես պատժի նպատակ նախատեսվել է «պատժի ենթարկված անձին վերասոցիալականացնելը»:

Նշված օրենսդրական փոփոխություններն օբյեկտիվ անհրաժեշտություն են առաջացրել ուսումնասիրելու հանրային աշխատանքներ պատժատեսակի դերը և նշանակությունը պատժի նպատակների իրացվելիության համատեքստում, ինչպես նաև ուսումնասիրելու տվյալ պատժատեսակի նշանակման փուլում իրավակիրառ պրակտիկայում ի հայտ եկած խնդիրները:

Հոդվածում անդրադարձ է կատարվել նաև «հարկադիր աշխատանք» եզրույթի և «հանրային աշխատանքներ» պատժատեսակի սահմանազատմանը՝ ներպետական և միջազգային օրենսդրական կարգավորումների համատեքստում:

Կատարված ուսումնասիրության շրջանակներում արձանագրվել են որոշակի խնդիրներ, որոնց ուղղությամբ առաջարկվող լուծումները կնպաստեն տվյալ պատժատեսակի կատարման արդյունավետության բարձրացմանը, բացի այդ, արձանագրվել են ներպետական դատարանների կողմից հանրային աշխատանքներ

[1] Հոդվածը ներկայացվել է 30.04.2025թ., գրախոսվել է 16.06.2025թ.:

պատժատեսակի նշանակման փուլին առնչվող որոշակի երկակի մոտեցումներ՝ կապված տվյալ պատժատեսակի նշանակման կապակցությամբ հանցանք կատարած անձի համաձայնությունը հաշվի առնելու անհրաժեշտության հետ, որի վերաբերյալ հոդվածում կատարվել են առկա ներպետական և միջազգային օրենսդրական կարգավորումների շրջանակներում վերլուծություններ:

Հիմնաբառեր- պատիժ, պատժի նպատակներ, հանրային աշխատանք, հարկադիր աշխատանք, համաձայնություն, վերասոցիալականացում:

Ներածություն

Հայաստանի Հանրապետությունը որդեգրել է պատժողական արդարադատությունից վերականգնողական արդարադատության անցման քաղաքականություն՝ ինչն, ի թիվս այլնի, ուղղված է նաև պատժի ենթարկված անձանց սոցիալական վերաինտեգրմանը և վերականգնմանը:

Գործող քրեական օրենսգրքով վերաձևակերպվել են պատժի նպատակները և ի տարբերություն Նախկին քրեական օրենսգրքի, որտեղ որպես պատժի նպատակ նախատեսված էր նաև «պատժի ենթարկված անձին ուղղելը»՝ Գործող քրեական օրենսգրքով պատժի նշված նպատակը փոխարինվել է «պատժի ենթարկված անձին վերասոցիալականացնելով», ինչն իրենից ենթադրում է, որ պատժի կրման առաջին իսկ օրվանից և ողջ ընթացքում դատապարտյալի հետ պետք է տարվեն այնպիսի աշխատանքներ, որոնք ուղղված կլինեն նրա մոտ մարդու, հասարակության, օրենքի, պետության, համակեցության կանոնների և հասարակությունում ընդունված այլ արժեքների հարգմանը, պաշտպանությանն ու պահպանությանն ուղղված վերաբերմունքի ձևավորմանը, ամրապնդմանն ու կայունացմանը, և կնպաստեն պատժի ենթարկված անձի հետագա սոցիալական վերաինտեգրմանը: Այսպես՝

Գործող քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածի 2-րդ մասով ամրագրված են պատժի նպատակները, դրանք են՝ վերականգնել սոցիալական արդարությունը, վերասոցիալականացնել պատժի ենթարկված անձին և կանխել հանցագործությունները[2]:

Պատժի նպատակներն այն փաստական արդյունքներն են, որին ձգտում է պետությունը՝ դատապարտելով հանցագործին և կիրառելով նրա նկատմամբ այս կամ այն քրեական պատիժը: Հարկ է նշել, որ չնայած պատժի նպատակների բովանդակությունների տարբերությանը՝ դրանք փոխկապակցված և փոխհամաձայնեցված են, և մեկ նպատակը ենթադրում է մյուսները, իսկ յուրաքանչյուրի ինքնուրույն իրականացումն օժանդակում է մյուսներին[3]:

Աներկբա է, որ պատժի նպատակներն իրագործելի են պատժի նշանակման և կատարման միասնությամբ:

[2] Տե՛ս ՀՀ քրեական օրենսգիրք, ՀՕ-199-Ն, ընդունվել է 2021 թվականի մայիսի 5-ին, օրինական ուժի մեջ է մտել 2022 թվականի հուլիսի 1-ին:

[3] Տե՛ս Հ.Խաչիկյան, ՀՀ քրեակատարողական իրավունք, ԵՊՀ հրատարակչություն, 2024, էջ 100, 119:

Քրեական արդարադատության ոլորտում պատժողական քաղաքականությունից վերականգնողական արդարադատության անցման անհրաժեշտությամբ պայմանավորված 2016 թվականի մայիսի 17-ից «Պրոբացիայի մասին» ՀՀ օրենքի ընդունմամբ Հայաստանի Հանրապետությունում ներդրվել է Քրեակատարողական ծառայությունից անկախ Պրոբացիայի ծառայությունը[4]:

Վկայակոչված օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվել են պրոբացիայի նպատակները, որտեղ ի թիվս այլնի՝ ամրագրվել է նաև հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ դատական ակտով նշանակված պատժի և հարկադրանքի այլ միջոցների կատարման միջոցով սոցիալական արդարության վերականգնումը, պատժի ենթարկված անձի վերասոցիալականացումը, ...:

Սոցիալական արդարության վերականգնումը որպես պատժի նպատակ ենթադրում է անձին, հասարակությանը, պետությանը հանցագործությամբ պատճառված վնասի հատուցում, և ըստ էության, սոցիալական արդարության վերականգնում հնարավոր է, եթե հանցանք կատարած անձի նկատմամբ նշանակվի արդարացի պատիժ՝ ապահովելով ինչպես կիրառվող օրենսդրության, այնպես էլ պետական հակազդեցության համաչափությունը կատարված հանցանքին, դա կատարելու հանգամանքներին, հանցավորի անձնավորությանը:

Հարկ է արձանագրել նաև, որ պատժելով հանցագործին և վերականգնելով վերջինիս կողմից խախտված սոցիալական արդարությունը՝ պետությունը միաժամանակ պաշտպանում է քրեական օրենքի հեղինակությունը և ձևավորում հարգանք նրա նկատմամբ:

Պատժի ենթարկվածների վերասոցիալականացումն ինքնին բազմաբովանդակ հասկացություն է և նման բարդ գործընթացի միակ, ճիշտ և անսխալ հասկացության ձևակերպում, ըստ էության, հնարավոր չէ սահմանել: Այդուհանդերձ, որպես վերասոցիալականացման էության առավել ընդգրկուն հասկացություն սահմանվում է. «Վերասոցիալականացումը դատապարտյալի գիտակցական վերականգնումն է որպես հասարակության սոցիալականացված, լիիրավ անդամի սոցիալական կարգավիճակում, որն իրականացվում է դատապարտյալի նկատմամբ իրավական, կազմակերպական, հոգեբանամանկավարժական, դաստիարակչական և այլ համալիր միջոցների կիրառմամբ՝ հակաօրինական արարքների կրկնությունը կանխելու նպատակով»[5]:

Վերասոցիալական միջոցառումների մշակումն ու իրականացումն անհրաժեշտաբար մի շարք թիրախային նպատակներ պետք է հետապնդի, մասնավորապես՝ ի թիվս այլնի այն պետք է նպատակ հետապնդի նպաստելու հանցանք կատարած անձի մոտ իրավահպատակ վարքագծի դրսևորմանը, իրավագիտակցության բարձրացմանը, ինչպես նաև նոր հանցագործությունների կանխմանը:

---

[4] Տե՛ս ՀՀ օրենք «Պրոբացիայի մասին», ՀՕ-48-Ն, ընդունվել է 2016 թվականի մայիսի 17-ին, օրինական ուժի մեջ է մտել 2016 թվականի հունիսի 4-ին:

[5] Տե՛ս Հ.Խաչիկյան, ՀՀ քրեակատարողական իրավունք, ԵՊՀ հրատարակչություն, 2024, էջ 111, 115:

Հարկ է նշել, որ պատժի նպատակների իրացվելիության համատեքստում պատիժ կատարող մարմինների և հիմնարկների առաջնային և առավել բարդ խնդիրներից է դատապարտյալի վերասոցիալականացման գործընթացի ապահովումը:

Քրեական օրենքը նախատեսում է խստությամբ, բնույթով և հանցագործի նկատմամբ ներգործության առանձնահատկություններով տարաբնույթ պատժատեսակներ, որը հնարավորություն է տալիս դատարանին հաշվի առնելով հանցագործության և հանցագործի վտանգավորության աստիճանը, դրան համապատասխան նշանակել արդարացի պատիժ, որն առավելագույն կնպաստի ինչպես դատապարտյալի վերասոցիալականացմանը, այնպես էլ սոցիալական արդարության վերականգնմանը և նոր հանցագործությունների կանխմանը:

Պատժի համակարգում հանրային աշխատանքներ պատժատեսակն ուրույն տեղ է զբաղեցնում: Այն դասվում է դատապարտյալին նյութական զրկանքներ պատճառող պատժատեսակների շարքը, և միաժամանակ, այս կամ այն կերպ սահմանափակում նաև դատապարտյալի ազատությունը:

Սույն հետազոտությունը նպատակ է հետապնդում ուսումնասիրելու հանրային աշխատանքներ պատժատեսակի՝ որպես պատժի համակարգում ներառված ինքնուրույն պատժատեսակի դերը և նշանակությունը պատժի նպատակների իրացվելիության համատեքստում, վեր հանելու դրա արդյունավետության բարձրացմանն ուղղված հնարավոր լուծումները, ինչպես նաև նպատակ է հետապնդում ուսումնասիրելու տվյալ պատժատեսակի նշանակման փուլում իրավակիրառ պրակտիկայում ի հայտ եկած խնդիրները:

1. Հանրային աշխատանքներ պատժատեսակի դերն ու նշանակությունը պատժի նպատակների իրացման համատեքստում:

Սկսած 1970-ական թվականներից ժամանակակից քրեական արդարադատությունը սահմանել է պատժի նոր տեսակներ, որոնք կիրառվել են որպես ազատազրկմանն այլընտրանք: Այդպիսի պատժատեսակներից էր նաև հանրային աշխատանքը/ծառայությունը, որի քրեաիրավական հայեցակարգը ընդգրկել է այն հիմնական գաղափարը, որ այդ պատժատեսակի կատարմամբ հնարավոր լինի հասնել միաժամանակ մի քանի նպատակների: Մասնավորապես՝ համապատասխան պատժատեսակի իրագործմամբ մի կողմից հնարավոր լինի հասնել հանցանք կատարած անձի վերասոցիալականացմանը, իսկ մյուս կողմից՝ հասցված վնասի վերականգնմանը, ինչն իրենից ներկայացնում է կատարված հանրօգուտ աշխատանքի միջոցով պատճառված վնասի փոխհատուցում:

Հարկ է նշել, որ հանրային աշխատանքը չի կատարվում շահույթ ստանալու նպատակով, այլ այն կատարվում է հանրության համար գործող հանրային մարմնի համար և այդ աշխատանքից որոշ չափով անուղղակիորեն օգուտ է ստանում պետությունը՝ նկատի ունենալով, որ հակառակ դեպքում այդ աշխատանքը պետք է կատարվի այդ նպատակով վարձված անձանց կողմից: Բացի այդ, ի տարբերություն ազատազրկման կամ ազատությունից զրկելու հետ

կապված այլ պատիժների՝ այն քիչ ծախսատար է, քանի որ պետության կողմից հանցանք կատարած անձի պահման համար չեն ծախսվում նյութական միջոցներ:

Հանրային աշխատանքներ պատժատեսակն ունի նաև մի քանի ընդգծված այլ առավելություններ, մասնավորապես՝ չի խզվում հանցանք կատարած անձի և վերջինիս ընտանիքի միջև կապը, անձի վերասոցիալականացումն իրականացվում է առանց մեկուսացման, նվազեցնում է ազատազրկման բացասական հետևանքները, բանտային միջավայրի ազդեցությունը, այլ դատապարտված անձանց հետ կապերի ձևավորումը:

Այլ երկրների փորձի ուսումնասիրության շրջանակներում՝ հարկ է նշել, որ օրինակ՝ Շվեցարիայում չվճարվող հանրային աշխատանքը կատարվում է հանրության շահերի և կարիքավորներին օգնության համար[6]: Սերբիայի օրենսդրությամբ նախատեսվում է, որ հանրօգուտ աշխատանքը բնույթով պետք է այնպիսին լինի, որ չխախտի անձի արժանապատվությունը, պետք է որոշակի շոշափելի կամ ոչ շոշափելի բարիք ստեղծի հանրության համար[7]: Խորվաթիայի քրեական օրենսդրության մեջ առաջին անգամ տեղ գտնելիս հանրային աշխատանքը կարգավորում է ստացել որպես ազատության պայմաններում ընդհանուր բարօրության համար կատարվող աշխատանք[8]: Բոսնիա և Հերցեգովինայում Սպրսկա շրջանի օրենսդրությամբ առանձին սահմանվել է, որ հանրային կարևորության աշխատանք նշանակում է սոցիալապես օգտակար աշխատանք, որը չի խախտում անձի արժանապատվությունը և որը չի իրականացվում շահույթ ստանալու նպատակով[9]:

Հարկ է նշել, որ թեև տարբեր ժամանակներում հանրային աշխատանքներ պատժատեսակը կապված կիրառելիության հետ պրակտիկ խնդիրներով ենթարկվել է որոշակի քննադատությունների և ի կատար ածման ընթացակագային, կազմակերպչական բնույթի փոփոխությունների, այդուհանդերձ, պետք է արձանագրել, որ նշված պատժատեսակի հիմքում դրված հայեցակարգը, այն է՝ հանրության համար առանց վարձատրության օգտակար աշխատանքների կատարմամբ նպաստել հանցանք կատարած անձի վերասոցիալականացմանը, փոփոխության չի ենթարկվել:

Հաշվի առնելով քրեական արդարադատության՝ պատժողական քաղաքականությունից դեպի վերականգնողական արդարադատություն անցման անհրաժեշ-

[6]Տե՛ս «Համայնքային աշխատանք, էլեկտրոնային մոնիթորինգ և պրոբացիոն օգնություն», Շվեյցարիայի կոնֆեդերացիա:

[7]Տե՛ս Յակուլին, Վ. (2018): Սլովենիայի այլընտրանքային քրեական պատժամիջոցները և քրեական օրենսդրությունը. Հիմնական իրավական բնութագրերը և կիրառման փորձը: Այլընտրանքային քրեական պատժամիջոցներ (Տարածաշրջանային քրեական իրավունք, կիրառման փորձ և բարելավման միջոցառումներ) (էջ 95–109): Բելգրադ. ԵԱՀԿ առաքելություն Սերբիայում:

[8]Տե՛ս Կամբովսկի, Վ. (2015): «Մակեդոնիայի Հանրապետության քրեական օրենսգրքի գիտական և գործնական մեկնաբանություն»: Սկոպյե. Իրավագիտության ֆակուլտետ:

[9]Տե՛ս Բաբիչ, Մ., և Մարկովիչ, Ի. (2018): «Այլընտրանքային քրեական պատժամիջոցները և քրեական իրավունքը Բոսնիա և Հերցեգովինայում» (օրենսդրական կարգավորման մեթոդ և կիրառման փորձ): Այլընտրանքային քրեական պատժամիջոցներ (տարածաշրջանային քրեական իրավունք, կիրառման փորձ և բարելավման միջոցառումներ) (էջ 201–217): Բելգրադ. ԵԱՀԿ առաքելություն Սերբիայում:

տությունը՝ Եվրոպայի խորհրդի կողմից ձևավորվել են մի շարք սկզբունքներ՝ ուղղված անդամ երկրներին:

Քննարկվող հարցին առավել վերաբերելի է Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի կողմից 2017 թվականին ընդունված «Համայնքային սանկցիաների և միջոցների վերաբերյալ հանձնարարականը»[10]:

Վկայակոչված հանձնարարականի ընդունման հիմքում ընկած է եղել այն համոզմունքը, որ համայնքային միջոցներն ու սանկցիաները հանցավորության դեմ պայքարի կարևոր միջոց են, նպաստում են հանցավորության բացասական հետևանքները կրճատելուն և կանխում ազատազրկման հետևանքով վրա հասնող բացասական հետևանքները: Ըստ հանձնարարականի՝ համայնքային սանկցիան և միջոցները բացատրվում է որպես ցանկացած պատասխանատվության միջոց/սանկցիա, որը ազատության նկատմամբ որոշակի սահմանափակումների և պարտավորությունների կիրառմամբ հանցանք կատարած անձին պահում է հասարակության մեջ:

Եվրոպայի խորհդի նախարարների կոմիտեի կողմից ընդունված մեկ այլ Հանձնարարականով սահմանվում է նաև, որ համայնքային ծառայությունը/ հանրային աշխատանքը/ պատասխանատվության միջոց է կամ հանրային սանկցիա, որը ներառում է պրոբացիայի ծառայության կողմից չվճարվող աշխատանքի կազմակերպումն ու վերահսկողությունը, ինչը կատարվում է հանրության շահերի համար՝ որպես հանցագործությամբ հասցված վնասի իրական կամ սիմվոլիկ վերականգնում: Այն չպետք է իրենում պիտակավորում պարունակի և պրոբացիայի աշխատակիցները պետք է գտնեն այն միջոցները, որով հնարավոր կլինի անձին սոցիալապես վերաինտեգրել: Համայնքային ծառայությունը կամ աշխատանքը չպետք է իրականացվի պրոբացիայի ծառայության, աշխատակիցների շահերի կամ կոմերցիոն նպատակների համար: Աշխատանքի կամ ծառայության տեսակն ընտրելիս պրոբացիայի ծառայությունը պետք է հաշվի առնի ինչպես հանրության, այնպես էլ հանցանք կատարած անձի անվտանգությունը: Համայնքային ծառայության նկատմամբ վերահսկողությունը չպետք է դիտարկվի որպես սոսկ հսկող գործառույթ, այլ որպես խորհրդատվություն տալու, օգնելու և մոտիվացնելու գործիք: Այն, ըստ անհրաժեշտության, կարող է համատեղվել վերապատրաստումների, կարողությունների զարգացման և հետագայում աշխատանք գտնելուն աջակցելու հետ[11]:

Նշվածի չափորոշիչների համատեքստում ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ հանրային աշխատանքներ պատժատեսակի օրենսդրական ամրագրման հետ կապված խնդիրները, ինչպես նաև նշված պատժատեսակի նշանակման հետ կապված խնդիրները՝ հարկ է արձանագրել, որ

[10]Տե՛ս Նախարարների կոմիտեի անդամ պետություններին ուղղված համայնքային պատժամիջոցների և միջոցառումների վերաբերյալ եվրոպական կանոնների վերաբերյալ CM/Rec (2017) 3 առաջարկություն, 2017 թվականի մարտի 22:

[11]Տե՛ս Եվրոպայի խորհրդի պրոբացիայի կանոնների վերաբերյալ Նախարարների կոմիտեի անդամ պետություններին ուղղված CM/Rec (2010) 1 առաջարկություն, 20 հունվարի 2010թ.:

օրենսդրական առումով հանրային աշխատանքներ պատժատեսակի դիրքը պատժի համակարգում Գործող քրեական օրենսդրությամբ ենթարկվել է էական փոփոխության՝ նկատի ունենալով, որ հանրային աշխատանքներ պատժատեսակը սահմանվել է որպես ինքնուրույն կիրառվող հիմնական պատիժ՝ ի տարբերություն Նախկին քրեական օրենսգրքի, որով հանրային աշխատանքները կիրառվում էին միայն որպես ազատազրկման այլընտրանք՝ առավելագույնը երկու տարի ժամկետով ազատազրկման դատապարտված անձանց նկատմամբ[12]:

Ավելին, եթե Նախկին քրեական օրենսգրքի Հատուկ մասի որևէ հոդվածի սանկցիայում հանրային աշխատանքները որպես պատժատեսակ նշված չէին, ապա Գործող քրեական օրենսգրքով արդեն ամրագրված են, մասնավորապես՝ հանրային աշխատանքները կարող են նշանակվել քրեական օրենսգրքի Հատուկ մասով նախատեսված դեպքերում, ինչպես նաև տուգանքը հանրային աշխատանքներով փոխարինելու դեպքերում, երբ դատարանը տուգանքը կամ տուգանքի չվճարած մասը փոխարինում է հանրային աշխատանքներով:

Հարկ է նշել նաև, որ շատ երկրներում, ինչպիսիք են Ռուսաստանը, Վրաստանը, Լեհաստանը, ԱՄՆ-ը, Մեծ Բրիտանիան հանրային աշխատանքները չեն հանդիսանում ինքնուրույն պատիժներ, այլ հանդիսանում են ազատազրկմանն այլընտրանքային պատիժներ:

Գործող քրեական օրենսգրքի համաձայն՝ հանրային աշխատանքները դատարանի նշանակած և իրավասու մարմնի որոշած վայրում չվարձատրվող, դատապարտյալի ուսումնառությունից կամ աշխատանքից ազատ ժամանակահատվածում նրա կողմից հանրության համար օգտակար այնպիսի աշխատանքների կատարումն է, որոնք չեն վտանգում նրա ֆիզիկական կամ հոգեկան առողջությունը: Հանրային աշխատանքների ժամկետը հաշվարկվում է ժամերով և կարող է դատարանի կողմից սահմանվել դատապարտյալի համաձայնությամբ ոչ ավելի, քան օրական 4 ժամ տևողությամբ ոչ մեծ և միջին ծանրության հանցագործությունների համար՝ 60-270 ժամ տևողությամբ[13]:

Հանրային աշխատանքների կատարման և կրման կարգը նախատեսված է քրեակատարողական օրենսդրությամբ: Հանրային աշխատանքների կատարումը և վերահսկողությունն օրինական ուժի մեջ մտած եզրափակիչ դատական ակտի հիման վրա ապահովում է պրոբացիայի ծառայությունը:

Հանրային աշխատանքներ նշանակելու մասին օրինական ուժի մեջ մտած դատական ակտը ստանալուց հետո պրոբացիայի ծառայողն անհապաղ, բայց ոչ ուշ քան երկու աշխատանքային օրվա ընթացքում պարզում է դատապարտյալի գտնվելու վայրը, նրա հետ կապ է հաստատում, նրան պատշաճ ծանուցում է Պրոբացիայի ծառայություն ներկայանալու վերաբերյալ, կազմում է անձնական գործ, վերահսկողության պլան, լրացնում հաշվառման քարտ: Հանրային

[12]Տե՛ս ՀՀ քրեական օրենսգիրք, ՀՕ-528-Ն, ընդունվել է 2003 թվականի ապրիլի 18-ին, չի գործում 2022 թվականի հուլիսի 1-ից, հոդված 54:

[13] Տե՛ս ՀՀ քրեական օրենսգիրք, ՀՕ-199-Ն, ընդունվել է 2021 թվականի մայիսի 5-ին, օրինական ուժի մեջ է մտել 2022 թվականի հուլիսի 1-ին, հոդված 60:

աշխատանքների կատարման ժամկետի սկիզբը հաշվարկվում է դատապարտյալի՝ հանրային աշխատանքում փաստացի ներգրավվելու պահից:

Դատապարտյալը պարտավոր է դատավճռով սահմանված ողջ ժամանակահատվածի ընթացքում պահպանել այն մարմինների կամ կազմակերպությունների ներքին աշխատանքային կանոնները, որտեղ նա կատարում է հանրային աշխատանքները, բարեխիղճ վերաբերմունք դրսևորել աշխատանքին, աշխատել իր համար որոշված վայրերում, ինչպես նաև բնակության վայրը փոխելու դեպքում այդ մասին տեղյակ պահել պրոբացիայի ծառայությանը[14]:

Հարկ է նշել, որ Գործող քրեական օրենսգրքով շոշափելի կրճատվել է հանրային աշխատանքներ պատժատեսակի թույլատրելի նվազագույն և առավելագույն ժամկետները:

Մասնավորապես՝ եթե Նախկին քրեական օրենսգրքով հանրային աշխատանքների կատարման համար սահմանված էր 270-ից 2200 ժամ տևողություն, Գործող քրեական օրենսգրքով այդ ժամանակահատվածը զգալիորեն նվազել է՝ սահմանելով 60-ից 270 ժամ տևողություն, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ կարող է նաև 60 ժամից պակաս լինել (տուգանքը հանրային աշխատանքներով փոխարինելիս):

Նշվածի կապակցությամբ պետք է արձանագրել, որ հանրային աշխատանքների կատարման ժամաքանակի նման էական կրճատումը պատժի նպատակների իրացվելիության տեսանկյունից արդարացված չէ, քանի որ մեր գնահատմամբ բավարար չէ շահառուի մոտ իրավահպատակ վարքագիծ ձևավորելու, վերջինիս վերասոցիալականացումն ապահովելու համար:

Մյուս կողմից՝ այն Պրոբացիայի ծառայությանը ռեսուսների նվազեցման և արդյունավետ վերահսկողություն իրականացնելու հնարավորություն է տալիս՝ նկատի ունենալով, որ Գործով քրեական օրենսգրքով սահմանված ժամաքանակի սահմաններում հանրային աշխատանքները տևում են 2-3 ամիս:

Նշվածի համատեքստում պետք է արձանագրել, որ ժամաքանակի կրճատմանը զուգահեռ նշված պատժատեսակի կատարման ընթացքում Պրոբացիայի ծառայության կողմից չեն ձեռնարկվում կամ բավարար չափով չեն ձեռնարկվում դատապարտյալի վերասոցիալականացմանն ուղղված միջոցառումներ: Մասնավորապես՝

Թեև առկա իրավակարգավորումների համաձայն՝ Պրոբացիայի ծառայությունը յուրաքանչյուր ծառայողի վերաբերյալ ռիսկերի և կարիքների գնահատման հիման վրա վերասոցիալականացման միջոցառումների առանձին ծրագիր պետք է կազմի՝ հաշվի առնելով պրոբացիայի շահառուի անձի առանձնահատկությունները[15], սակայն գործնականում դրանք, որպես կանոն, կազմվում են միայն պատիժը պայմանականորեն չկիրառելու, պատժից պայմանական վաղաժամկետ ազատման դեպքերում փորձաշրջանում գտնվող անձանց նկատմամբ, իսկ որպես

[14] Տե՛ս ՀՀ քրեակատարողական օրենսգիրք, ՀՕ-246-Ն, ընդունվել է 2022 թվականի հունիսի 15-ին, օրինական ուժի մեջ է մտել 2022 թվականի հուլիսի 1-ին, հոդված 29:

[15] Տե՛ս ՀՀ օրենք «Պրոբացիայի մասին», ՀՕ-48-Ն, ընդունվել է 2016 թվականի մայիսի 17-ին, օրինական ուժի մեջ է մտել 2016 թվականի հունիսի 4-ին, հոդված 28:

հիմնական պատիժ հանրային աշխատանքների դատապարտված անձանց, կամ տուգանքի վճարման անհնարինության դեպքում տուգանքը հանրային աշխատանքներով փոխարինելու դեպքերում, ռիսկերի և կարիքների գնահատման գործիքը չի կիրառվում, շահառուների վերասոցիալականացմանն ուղղված անհատական ծրագրեր չեն կազմվում, արդյունքում նշված շահառուների ընդգրկմամբ փաստացի վերասոցիալականացման միջոցառումներ չեն իրականացվում:

Մինչդեռ, պատժի նպատակների իրացման տեսանկյունից էական է, այդ թվում՝ տվյալ պատժատեսակի դատապարտված անձանց հետ թիրախային վերասոցիալականացման միջոցառումների իրականացումը, ինչն անուղղակիորեն կնպաստի այդ պատժատեսակի արդյունավետության բարձրացմանը:

ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայության ներքին կանոնակարգով[16] ամրագրված են վերասոցիալականացման միջոցառումների ու ծրագրերի մշակման կարգին և իրականացման ձևերին վերաբերելի կարգավորումներ: Ըստ այդմ՝ վերասոցիալականացման միջոցառումները տարբերակվում են՝ ելնելով կատարված հանցագործության բնույթից և ծանրության աստիճանից, հաշվի առնելով շահառուի սեռը, տարիքը, սոցիալհոգեբանական վիճակը, վերաբերմունքն իր կողմից կատարված հանցագործությանը և այլ առանձնահատկություններ:

Բացի այդ, առկա կարգավորումների համաձայն՝ վերասոցիալականացման միջոցառումները մշակվում են պրոբացիայի ծառայության կողմից, նշված գործընթացին կարող են ներգրավվել նաև փորձագետներ, մասնագետներ, մասնագիտացված կազմակերպություններ, անհրաժեշտության դեպքում վերասոցիալականացման միջոցառումները մշակելիս պրոբացիայի ծառայությունը կարող է համագործակցել պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց, հասարակական և այլ կազմակերպությունների ու ֆիզիկական անձանց հետ:

Հարկ է արձանագրել, որ թեև առկա օրենսդրական կարգավորումներին՝ գործնականում հանրային աշխատանքներ պատժատեսակի դատապարտված անձանց հետ փաստացի չեն իրականացվում վերասոցիալականացման միջոցառումներ և ներկայումս՝ հանրային աշխատանքների՝ որպես հիմնական պատժատեսակի ներգործության էությունը կայանում է կատարված աշխատանքների բովանդակության մեջ, որոնցում ներգրավվում են դատապարտյալները:

Այդ աշխատանքները թեև հանրորեն անհրաժեշտ են, բայց որպես կանոն, առանձին դեպքերում որոշակի շրջանակի դատապարտյալների մոտ ունեն ցածր վարկանիշ, մասնավորապես՝ դրանք բարեկարգման, փողոցների և հրապարակների մաքրման, բեռնման կամ բեռնաթափման և այլ հատուկ որակավորում չպահանջող աշխատանքներ են: Այլ կերպ՝ դրանք իրենցից ներկայացնում են ֆիզիկական բնույթի աշխատանքներ, մինչդեռ, պատժի նպատակների իրացվելիության համատեքստում զուտ ֆիզիկական բնույթի աշխատանքների կատարումը բավարար չէ անձի մոտ մարդու, հասարակության, օրենքի, պետու-

[16]Տե՛ս ՀՀ կառավարության 2023 թվականի մարտի 30-ի թիվ 452-Ն որոշմամբ հաստատված ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայության ներքին կանոնակարգ, 194-210 կետեր:

թյան, համակեցության կանոնների և հասարակությունում ընդունված այլ արժեքների հարգմանը, պաշտպանությանն ու պահպանությանն ուղղված վերաբերմունքի ձևավորման, ամրապնդման ու կայունացման վերջնարդյունքն ապահովելու համար:

Հանրային աշխատանքների ձևով պատժի կատարումն ապահովելու նպատակով ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայության համապատասխան ստորաբաժանումը (այսուհետ՝ Ստորաբաժանում) դիմում է հասցեագրում պետական մարմիններին, առևտրային և ոչ առևտրային կազմակերպություններին և հիմնարկներին, տեղական ինքնակառավարման մարմիններին, որոնք 10 աշխատանքային օրվա ընթացքում առաջարկում են հանրային աշխատանքների կատարման վայրեր: Ստանալով տեղեկատվությունը՝ Ստորաբաժանումը կազմում է հանրային աշխատանքների կատարման վայրերի ընդհանուր ցանկ, որը հընթացս ենթակա է վերանայման:

Հարկ է նշել, որ հանրային աշխատանքների կատարման վայրը Ստորաբաժանման կողմից որոշվելու դեպքում հնարավորինս հաշվի է առնվում պրոբացիայի շահառուի կարծիքը, այդուհանդերձ, յուրաքանչյուր դեպքում հանրային աշխատանքների կատարման վայրը պետք է լինի պրոբացիայի շահառուի հաշվառման վայրից (հաշվառման վայր չունենալու դեպքում՝ փաստացի բնակության վայրից) ոչ ավելի, քան 30 կմ հեռավորություն: Պրոբացիայի շահառուին կարող են առաջարկվել հետևյալ բնույթի աշխատաքներ, մասնավորապես՝ 1)բանվորական աշխատանքներ (բակերի բարեկարգում, շենքերի տանիքների վերանորոգում, ցանկապատերի ներկում, շենքերի կամ շինությունների կոսմետիկ վերանորոգում), 2) ոռոգման աշխատանքներ, 3) կանաչապատման աշխատանքներ, 4) հողի մշակման աշխատանքներ, 5) ճանապարհային նշանները ներկելու, մոնտաժելու աշխատանքներ, 6) պատմամշակութային վայրերի կամ զբոսայգիների մաքրման և բարեկարգման աշխատանքներ:

Ստորաբաժանման կողմից պրոբացիայի շահառուին համապատասխան աշխատանքներն առաջարկելիս հնարավորինս հաշվի է առնվում պրոբացիայի շահառուի սեռը, տարիքը, ֆիզիկական տվյալները, կրթությունը, մասնագիտությունը, աշխատանքային կամ մասնագիտական հմտությունները, ուշադրության արժանի այլ հանգամանքներ[17]:

Նշվածի համատեքստում պետք է արձանագրել, որ թեև օրենսդրությամբ ամրագրվել է համապատասխան աշխատանքները պրոբացիայի շահառուին առաջարկելիս շահառուի սեռը, տարիքը, ֆիզիկական տվյալները, կրթությունը, մասնագիտությունը, աշխատանքային կամ մասնագիտական հմտությունները, ուշադրության արժանի այլ հանգամանքներ հաշվի առնելը, սակայն գործնականում պետք է փաստել, որ վերը նշված աշխատանքներն իրենց բնույթով բացառապես ֆիզիկական աշխատանքներ են, մինչդեռ, միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ շատ երկրներում հանրային աշխա-

[17]Տե՛ս ՀՀ կառավարության 2023 թվականի մարտի 30-ի թիվ 452-Ն որոշմամբ հաստատված ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայության ներքին կանոնակարգ, գլուխ 5, «Պրոբացիայի ծառայության գործառույթները հանրային աշխատանքների ձևով պատիժը կատարելիս»:

տանքները ներառում են նաև ծերերին և հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի կենտրոններում աշխատանքը կամ սոցիալական ուղղվածությամբ այլ աշխատանքները, որոնք հանրային օգտակարության տեսանկյունից ոչ պակաս կարևոր և անհրաժեշտ են:

Հետևաբար՝ կարծում ենք, որ պետք է ընդլայնել Պրոբացիայի շահառուներին առաջարկվող աշխատանքները՝ ներառելով այդ թվում՝ հանրային օգտակարություն ապահովող սոցիալական բնույթի աշխատաքներ, ինչպես նաև չսահմանափակվել միայն զուտ աշխատանքների կատարումն ապահովելով, այլ յուրաքանչյուր դատապարտյալի վերաբերյալ կազմել ռիսկերի և կարիքների գնահատման հիման վրա վերասոցիալականացման միջոցառումների առանձին ծրագիր՝ ներառելով դրանցում կատարված հանցագործության բնույթից, հանցանք կատարած անձից (տարիք, սեռ), կատարված հանցագործության նկատմամբ անձի վերաբերմունքից բխող առանձնահատկությունների հիման վրա վերասոցիալականացման միջոցառումներ:

2. <u>Հանրային աշխատանքներ պատժատեսակի նշանակման փուլում առկա գործնական խնդիրները:</u>

Հարկ է նշել, որ իրավակիրառ դատական պրակտիկայի ուսումնասիրությունները ցույց են տվել, որ հանրային աշխատանքներ պատժատեսակի նշանակման փուլում դատարանների կողմից դատապարտյալի համաձայնությունը հաշվի առնելու վերաբերյալ առկա են երկակի մոտեցումներ: Ինչով պայմանավորված սույն հոդվածի շրջանակներում առանձին ուսումնասիրության և վերլուծության են ենթարկվել ինչպես ներպետական, այնպես էլ միջազգային օրենսդրական կարգավորումները:

Այսպես, խոսելով առհասարակ պատժի հասկացության և նպատակների մասին, պետք է նշել, որ պատիժը պետական հարկադրանքի միջոց է, որը դատարանի դատավճռով պետության անունից նշանակվում է հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ և արտահայտվում է այդ անձին իրավունքներից կամ ազատություններից զրկմամբ կամ դրանց սահմանափակմամբ, ինչից անուղղակիորեն բխում է, որ պատիժը նշանակվում է առանց հաշվի առնելու հանցագործություն կատարած անձի կարծիքը և կիրառվում է օբյեկտիվորեն գնահատելով կատարած արարքը:

Այլ կերպ՝ պետական հարկադրանքի էությունը կայանում է նրանում, որ այն պետության անունից իրականացվում է հանցանք կատարած անձի կամքին հակառակ կամ կամքն անտեսելով՝ միաժամանակ հետապնդելով հստակ նպատակներ՝ պահպանել և ամրապնդել իրավակարգը, արմատավորել անձի մոտ գիտակցական կարգապահությունը, օրենքի նկատմամբ հարգանքը, նպաստել անձի և հասարակության համընդհանուր բարեկեցությանը:

Պատժի տեսակը և չափը որոշվում են հանցագործությամբ պատճառված վնասի բնույթով և չափով, հանցագործության եղանակով, տեղով, ժամանակով, հանցագործության շարժառիթներով և նպատակներով, դիտավորության կամ

անզգուշության տեսակով, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքներով, ինչպես նաև նշանակվող պատժի՝ հանցավորի վերասոցիալականացման և իրավահպատակ վարքագծի ձևավորման գործընթացի ու նրա ընտանիքի կենսապայմանների վրա ազդեցությամբ[18]:

Դատական պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ, որպես կանոն, մեղադրյալի նկատմամբ հանրային աշխատանքներ պատժատեսակը նշանակվել է առանց վերջինի համաձայնության, այդուհանդերձ, արձանագրվել են նաև դեպքեր, երբ հանրային աշխատանքներ պատժատեսակը նշանակելիս դատարանների կողմից հաշվի է առնվել հանցանք կատարած անձի համաձայնությունը:

Նշվածը մեկնաբանվել է այն համատեքստում, որ նախ՝ հանցանք կատարած անձի համաձայնության առկայությունը բխում է հարկադիր աշխատանքի մասին արգելքի սկզբունքից, բացի այդ, ՀՀ քրեական օրենսգրքի՝ հանրային աշխատանքներ պատժատեսակի նշանակմանը վերաբերելի մի շարք հոդվածներում ուղղակիորեն նախատեսված է դատապարտյալի համաձայնության անհրաժեշտությունը: Մասնավորապես՝ օրենսդիրը ՀՀ քրեական օրենսգրքի 59-րդ և 60-րդ հոդվածներում նշելով «հաշվի առնելով դատապարտյալի դիրքորոշումը», «դատապարտյալի համաձայնությամբ» բառակապակցությունները, հստակ սահմանել է, որ հանրային աշխատանքները կարող են նշանակվել միայն դատապարտյալի համաձայնությամբ:

Ներպետական դատարանների կողմից կայացված մի շարք դատական ակտերի ուսումնասիրությամբ հանրային աշխատանքներ պատժատեսակի նշանակման կապակցությամբ մեղադրյալի համաձայնություն անհրաժեշտության վերաբերյալ հիմնավորումներում հղում է կատարվել նաև «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 4-րդ հոդվածի վրա և քննարկման առարկա հարցը մեկնաբանվել է այն համատեքստում, որ առանց անձի համաձայնության վերջինի նկատմամբ որպես պատիժ հանրային աշխատանքներ նշանակելը կհանգեցնի Կոնվենցիայի 4-րդ հոդվածի խախտման:

Մասնավորապես՝ Կոնվենցիայի 4-րդ հոդվածն արգելում է հարկադիր կամ պարտադիր աշխատանքը: Նշված հոդվածի 2-րդ մասով սահմանվում է, որ ոչ ոք չպետք է հարկադրվի կատարել հարկադիր կամ պարտադիր աշխատանք, իսկ 3-րդ մասով նշվում են բացառությունները, որոնց շարքում է ազատազրկման պայմաններում պահանջվող աշխատանքը, ինչից բխում է, որ հարկադիր աշխատանքը կարող է կիրառվել միայն այն ժամանակ, երբ կա օրինական դատավճիռ և անձը պատժվում է ազատազրկմամբ: Եթե անձը ազատազրկման չի ենթարկվում, ապա նրան աշխատանք պարտադրելը, որպես պատիժ, դուրս է Կոնվենցիայի 4–րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված բացառություններից, հե-

[18] Տե՛ս ՀՀ քրեական օրենսգիրք, ՀՕ-199-Ն, ընդունվել է 2021 թվականի մայիսի 5-ին, օրինական ուժի մեջ է մտել 2022 թվականի հուլիսի 1-ին, հոդված 69:

տևաբար՝ նման աշխատանքը դիտարկվում է որպես հարկադիր կամ պարտադիր աշխատանք:

Գտնում ենք, որ նման մեկնաբանությունը չի բխում ինչպես ներպետական, այնպես էլ միջազգային օրենդրությունից և դատական պրակտիկայից:

Նախ՝ ՀՀ Սահմանադրության 57-րդ հոդվածի 5-րդ մասը, Կոնվենցիայի 4-րդ հոդվածի կարգավորումներին համապատասխան, ամրագրում է պարտադիր և հարկադիր աշխատանքի արգելքը՝ հստակ սահմանելով աշխատանքի այն տեսակները, որոնք չեն համարվում այդպիսին:

Մասնավորապես՝ պարտադիր կամ հարկադիր աշխատանք չի համարվում՝ 1) այն աշխատանքը, որը, օրենքին համապատասխան, կատարում է դատապարտված անձը, 2) զինվորական կամ այլընտրանքային ծառայությունը, 3) յուրաքանչյուր աշխատանք, որը պահանջվում է բնակչության կյանքին կամ բարօրությանը սպառնացող արտակարգ իրավիճակների ժամանակ[19]:

Բացի այդ, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով նույնպես ամրագրված է պարտադիր կամ հարկադիր աշխատանքի արգելքի սկզբունքը[20]: Միաժամանակ, ամրագրված է նաև պարտադիր կամ հարկադիր աշխատանքի սահմանումը:

Ըստ այդմ, պարտադիր կամ հարկադիր աշխատանք է համարվում որևէ ձևի հարկադրանքի գործադրմամբ կամ գործադրման սպառնալիքի տակ անձից պահանջվող կամ անձի կողմից կատարվող ցանկացած աշխատանքը կամ ծառայությունը, որի համար այդ անձը կամավոր չի հայտնել իր համաձայնությունը:

Հարկ է նշել նաև, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքով նույնպես հստակ սահմանվել են աշխատանքի այն տեսակները, որոնք չեն համարվում պարտադիր կամ հարկադիր աշխատանք, ընդ որում՝ դրանք նույնական են ՀՀ Սահմանադրությամբ սահմանված բացառությունների հետ:

Այլ կերպ՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և աշխատանքային օրենսգրքով հստակ սահմանված է, որ այն աշխատանքը, որը, օրենքին համապատասխան, կատարում է դատապարտված անձը, չի համարվում պարտադիր կամ հարկադիր աշխատանք:

Կոնկրետ դեպքում հստակ է՝ առկա չէ որևէ սահմանազատում առ այն, թե որ պատժատեսակի համար դատապարտված անձի մասին է խոսքը, ինչից աներկբա բխում է, որ հանրային աշխատանքներ պատժատեսակի դատապարտված անձի կողմից օրենքին համապատասխան կատարված աշխատանքը չի կարող դիտարկվել հարկադիր աշխատանքի համատեքստում, հետևաբար

[19] Տե՛ս ՀՀ Սահմանադրություն, ընդունված 2015 թվականի դեկտեմբերի 06-ին, օրինական ուժի մեջ է մտել 2015 թվականի դեկտեմբերի 22-ին: Սկզնաղբյուր՝ ՀՀՊՏ2015.12.21 /Հատուկ թողարկում, Հոդ.1118/:

[20] Տե՛ս ՀՀ աշխատանքային օրենսգիրք, ՀՕ-124-Ն, ընդունվել է 2004 թվականի նոյեմբերի 9-ին, օրինական ուժի մեջ է մտել 2005 թվականի հունիսի 21, հոդված 3.2 (հոդվածը լրացվել է 2022 թվականի հոկտեմբերի 5-ին, ՀՕ-360-Ն):

նման աշխատանքի նշանակման համար անձի համաձայնության առկայությունը պարտադիր բաղադրիչ չի կարող համարվել:

Ինչ վերաբերում է ՀՀ քրեական օրենսգրքի 60-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված այն կարգավորմանը, որ հանրային աշխատանքները դատապարտյալի համաձայնությամբ ոչ ավելի, քան օրական 4 ժամ տևողությամբ սահմանվում են ոչ մեծ և միջին ծանրության հանցագործությունների համար՝ 60-270 ժամ տևողությամբ, ապա հարկ է նշել, որ վկայակոչված հոդվածի պարզ վերլուծությունից տեսանելի է, որ դատապարտյալի համաձայնությունը վերաբերում է ոչ թե դատարանի կողմից իր նկատմամբ որպես պատիժ հանրային աշխատանքներ նշանակելու կամ չնշանակելու վերաբերյալ համաձայնություն տալուն, այլ վերաբերում է արդեն իսկ նշանակված հանրային աշխատանքներ պատժատեսակի կատարման ընթացակարգերին:

Մասնավորապես՝ օրենսդիրը սահմանելով հանրային աշխատանքների կատարման համար օրական առավելագույնը 4 ժամ տևողություն, դատապարտյալին հնարավորություն է ընձեռել ավելի պակաս ժամանակով հանրային աշխատանքներ կատարելու, ինչպես նաև իր համաձայնությունը տալու առավելագույնը 4 ժամ տևողությամբ աշխատանքներ կատարելու օրվա կոնկրետ ժամանակահատվածի համար:

Եվ նշվածն ինքնանպատակ չէ՝ նկատի ունենալով, որ հանրային աշխատանքները դատապարտյալի ուսումնառությունից կամ աշխատանքից ազատ ժամանակահատվածում նրա կողմից հանրության համար օգտակար աշխատանքների կատարումն է, հետևաբար՝ օրենսդրի կողմից օրական առավելագույնը 4 ժամ տևողություն սահմանելը և դրա կապակցությամբ դատապարտյալի համաձայնությունը հաշվի առնելը բխում է նշված պատժատեսակի կատարման ընթացակարգերի առավելագույնս արդյունավետ իրացման անհրաժեշտությունից:

Այլ մեկնաբանման դեպքում՝ ստացվում է, որ պատժի համակարգում որպես առանձին պատժատեսակ ընդգրկված հանրային աշխատանքներ պատժատեսակը կարող է նշանակվել բացառապես մեղադրյալի համաձայնության դեպքում, ինչն անուղղակիորեն կխաթարի տվյալ պատժատեսակի նշանակման արդյունավետությանը:

Իսկ ինչ վերաբերում է ՀՀ քրեական օրենսգրքի 59-րդ հոդվածի 8-րդ մասում ամրագրված «հաշվի առնելով դատապարտյալի դիրքորոշումը» ձևակերպմանը, ապա հարկ է նշել, որ նշված հոդվածի համակարգային վերլուծությամբ տեսանելի է, որ համաձայն հոդվածի 8-րդ մասի՝ այն դեպքերում, երբ տուգանքը նշանակելուց հետո դատապարտյալը նյութական վիճակի վատթարացման հետևանքով զրկվել է տուգանքը վճարելու հնարավորությունից, օրենսդիրը դատապարտյալի համար սահմանել է տուգանքը վճարելու համար երկընտրելի հնարավորություն, մի դեպքում՝ առավելագույնը 1 տարի ժամկետով երկարաձգելու տուգանքի վճարման համար սահմանված վերջնաժամկետը, մյուս դեպքում՝ այն հանրային աշխատանքների փոխարինելու՝ հանրային աշխատանքների 24 ժամը հաշվարկելով հանցանք կատարելու պահին նվազագույն աշխատավարձի չափով:

Տվյալ դեպքում՝ օրենսդրի կողմից բնավ ինքնանպատակ չէ պատժի կատարման և պատժի նպատակների իրացման տեսանկյունից դատապարտյալի համար սահմանել տուգանքի վճարման երկընտրելի հնարավորություն՝ դատապարտյալի համապատասխան դիրքորոշումը հաշվի առնելով:

Այլ կերպ՝ «դատապարտյալի համապատասխան դիրքորոշումը հաշվի առնելով» ձևակերպումը վերաբերում է ոչ թե տուգանքը հանրային աշխատանքներով փոխարինելուն համաձայնություն տալուն, այլ վերաբերում է նյութական վիճակի վատթարացման հետևանքով տուգանքը վճարելու հնարավորությունից զրկվելու արդյունքում տուգանքը վճարելու նպատակով օրենսդրի կողմից սահմանված երկընտրելի հնարավորություններից իր համար առավել նախընտրելին ընտրելուն:

Ընդ որում, նման իրավակարգավորման ամրագրման արդյունքում օրենսդրի կողմից տուգանքը վճարելու հնարավորությունից զրկված դատապարտյալները հստակ տարանջատվել են տուգանքը վճարելուց խուսափող դատապարտյալներից, որոնց համար օրենսդիրն ամրագրել է այլ իրավակարգավում, մասնավորապես՝ նման դեպքում բռնագանձվում է դատարանի որոշած տուգանքի չափին համարժեք գույք, եթե այդպիսին առկա է: Եթե այդպիսի գույք առկա չէ, ապա տուգանքը փոխարինվում է ազատազրկմամբ՝ ազատազրկման 3 օրը հաշվարկելով նվազագույն աշխատավարձի դիմաց:

Քննարկման առարկա խնդրի կապակցությամբ ներպետական առանձին դատարանների կողմից արված մեկնաբանությունները նաև միջազգային օրենսդրության և դատական պրակտիկայի ուսումնասիրության և վերլուծության հենք է ստեղծում, որի շրջանակներում անհրաժեշտ է հստակ ընդգծել «հարկադիր աշխատանք» եզրույթի բովանդակությունը՝ սահմանազատելով այն «հանրային աշխատանքներ» պատժատեսակից: Ըստ այդմ՝ հարկադիր աշխատանքը չի ներառում այն աշխատանքը, որը անձը պետք է կատարի օրինական ուժի մեջ մտած դատավճռի հիման վրա՝ պայմանով, որ այդ աշխատանքը կատարվելու է պետական իրավասու մարմնի վերահսկողության տակ[21]:

Կոնվենցիայի 4–րդ հոդվածի համաձայն՝

1. Ոչ ոք չպետք է պահվի ստրկության մեջ կամ անազատ վիճակում:

2. Ոչ ոք չպետք է պարտադրվի կատարելու պարտադիր կամ հարկադիր աշխատանք:

3. Սույն հոդվածի նպատակների համար «պարտադիր կամ հարկադիր աշխատանք» հասկացությունը չի ներառում՝

ա. ցանկացած աշխատանք, որը սովորաբար պահանջվում է կատարել սույն Կոնվենցիայի 5-րդ հոդվածի դրույթների համաձայն կալանքի տակ գտնվելու կամ նման կալանքից պայմանականորեն ազատված լինելու ընթացքում,

բ. զինվորական բնույթի ցանկացած ծառայություն, իսկ այն երկրներում, որտեղ օրինական է ճանաչվում զինվորական ծառայությունից հրաժարվելը՝ համոզ-

[21]Тетерятников Николай Юрьевич,Андреев Александр Владимирович <Разграничение принудительного труда и принудительных работ в российском и международном праве>. <Право>, 2022 г.

մունքներից ելնելով՝ պարտադիր զինվորական ծառայության փոխարեն նշանակված ծառայությունը,

գ. ցանկացած ծառայություն, որը պարտադիր է բնակչության կյանքին կամ բարեկեցությանը սպառնացող արտակարգ դրության կամ աղետի դեպքում,

դ. սովորական քաղաքացիական պարտականությունների մաս կազմող ցանկացած աշխատանք կամ ծառայություն[22]:

Կոնվենցիոն մեջբերված հոդվածի վերլուծության համատեքստում նախ պետք է պարզել, թե որ աշխատանքն է Կոնվենցիայի իմաստով համարվում «պարտադիր կամ հարկադիր աշխատանք»:

Հարկ է նշել, որ «պարտադիր կամ հարկադիր աշխատանք» եզրույթի հասկացությունը Կոնվենցիայի հիշատակված հոդվածում ամրագրված չէ: Նման ամրագրում առկա չէ նաև Եվրոպայի խորհրդի այլ փաստաթղթերում[23]:

«Վան դեր Մուսլեն ընդդեմ Բելգիայի» գործով[24] Մարդու իրավունքների եվրոպական դատարանը «պարտադիր կամ հարկադիր աշխատանք» եզրույթը մեկնաբանելիս հղում է կատարել «Հարկադիր կամ պարտադիր աշխատանքի մասին» կոնվենցիային[25]:

Հիշատակված կոնվենցիան, որն ընդունվել է Աշխատանքի միջազգային կազմակերպության կողմից 1930 թվականի հունիսի 28-ին, Ժնևում, սահմանել է, որ Կոնվենցիան վավերացնող Աշխատանքի միջազգային կազմակերպության յուրաքանչյուր անդամ պարտավորվում է հնարավորինս ամենասեղմ ժամկետում վերացնել հարկադիր կամ պարտադիր աշխատանքի կիրառումն իր բոլոր ձևերով: Կոնվենցիայի 2-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվել է նաև «հարկադիր կամ պարտադիր աշխատանք» եզրույթը՝ համաձայն որի Կոնվենցիայի նպատակների համար նշված եզրույթը նշանակում է՝ <u>որևէ պատժի սպառնալիքի տակ որևէ անձից պահանջվող ցանկացած աշխատանք կամ ծառայություն, որի համար այդ անձը չի հայտնել իր համաձայնությունը:</u>

Հարկ է նշել, որ «Վան դեր Մուսլեն ընդդեմ Բելգիայի» գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշված մեկնաբանությունը հիմք է ընդունել Կոնվենցիայի 4-րդ հոդվածի 2-րդ մասը մեկնաբանելիս: Նշված գործով փաստաբանի փորձնակ-օգնականն անվճար հիմունքներով պաշտպանել է չքավոր մեղադրյալների իրավունքները, իսկ հետագայում՝ իր կողմից կատարած աշխատանքը դիտարկելով որպես հարկադիր աշխատանք, դիմել է դատարան: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը չի համաձայնել վերջինիս հետ՝ գտնելով, որ

[22]«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիա, ընդունվել է Եվրոպայի խորհրդի կողմից, 04.11.1950:

[23]Руководство по статье 4 конвенции о защите прав человека и основных свобод <Запрещение рабства и принудительного труда>.

[24] Տե՛ս Վան դեր Մուսելեն ընդդեմ Բելգիայի թիվ 8919/80 գանգատով Եվրոպական դատարանի 1983 թվականի նոյեմբերի 23-ի վճիռը:

[25] «Հարկադիր կամ պարտադիր աշխատանքի մասին» կոնվենցիա, ընդունվել է 1930 թվականի հունիսի 28-ին, Ժնևում, վավերացվել է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից 2004 թվականի հոկտեմբերի 25-ին:

նշված աշխատանքը փաստաբանի փորձնակ-օգնականը կատարել է իր մասնագիտական որակների բարձրացման նպատակով, իր ցանկությամբ, բացի այդ ունեցել է նաև բավականին ազատ ժամանակ վճարովի աշխատանք կատարելու համար:

«Դե Վիլդն, Օոմսը և Վերսիպն ընդդեմ Բելգիայի» գործով[26] Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նույնպես Կոնվենցիայի 4–րդ հոդվածի 2-րդ մասի խախտում չի արձանագրել: Մասնավորապես՝ թափառաշրջիկները, որոնց տեղավորել են հատուկ կենտրոնում չնչին աշխատավարձով աշխատանք են կատարել: Դիմելով Եվրոպական դատարան՝ վերջիններս դժգոհել են, որ կարգապահական պատասխանատվության սպառնալիքի ներքո չնչին աշխատավարձով ստիպված աշխատանք են կատարել, սակայն այս դեպքում նույնպես Եվրոպական դատարանը խախտում չի արձանագրել, քանի որ նրանք այդ աշխատանքը կատարել են սոցիալական վերականգնման նպատակով:

«Հարկադիր կամ պարտադիր աշխատանքի մասին» կոնվենցիայի 2-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Այնուամենայնիվ, «հարկադիր կամ պարտադիր աշխատանք» եզրույթը սույն Կոնվենցիայի նպատակների համար չի ներառում.

ա) պարտադիր զինվորական ծառայության մասին օրենքներով պահանջվող և զուտ զինվորական բնույթի ցանկացած աշխատանք կամ ծառայություն,

բ) լրիվ ինքնակառավարվող երկրի քաղաքացիների սովորական քաղաքացիական պարտականությունների մաս կազմող ցանկացած աշխատանք կամ ծառայություն,

գ) դատարանի կայացրած դատավճռի հետևանքով անձից պահանջվող ցանկացած աշխատանք կամ ծառայություն՝ այն պայմանով, որ այդ աշխատանքը կամ ծառայությունը կատարվի պետական մարմնի վերահսկողության կամ հսկողության ներքո, և որ նշված անձը չփոխանցվի կամ հանձնվի մասնավոր անձանց, ընկերությունների կամ ընկերակցությունների տնօրինմանը,

դ) արտակարգ իրավիճակների պայմաններում պահանջվող ցանկացած աշխատանք կամ ծառայություն, այսինքն՝ պատերազմի, տարերային աղետի կամ դրա սպառնալիքի դեպքերում, ինչպիսիք են հրդեհները, ջրհեղեղները, սովը, երկրաշարժը, սուր համաճարակները կամ անասնային համաճարակները, կենդանիների, միջատների կամ մակաբույծների հարձակումները և ընդհանրապես այն իրավիճակները, որոնց դեպքում վտանգի են ենթարկվում կամ կարող են ենթարկվել ամբողջ բնակչության կամ նրա մի մասի կյանքը կամ նորմալ կենսապայմանները,

ե) համայնքային բնույթի փոքր ծավալի աշխատանքներ, որոնք կատարվում են տվյալ համայնքի անդամների կողմից համայնքի անմիջական օգուտի համար, և որոնք, հետևաբար, կարող են համարվել համայնքի անդամների սովորական քաղաքացիական պարտականություններ՝ պայմանով, որ համայնքի անդամները կամ նրանց անմիջական ներկայացուցիչները իրավունք ունենան այդ աշխատանքների նպատակահարմարության վերաբերյալ արտահայտել իրենց կարծիքը:

[26] Տե՛ս Դե Վիլդն, Օոմսը և Վերսիպն ընդդեմ Բելգիայի թիվ 2832/66, 2835/66, 2899/66 գանգատով Եվրոպական դատարանի 1971 թվականի հունիսի 18-ի վճիռը:

Այլ կերպ՝ վերը նշված բացառություններից գ) կետով նախատեսված բացառության պարզ վերլուծությունից ակնհայտ է, որ հարկադիր կամ պարտադիր աշխատանք չի համարվում դատարանի կայացրած դատավճռի հետևանքով անձից պահանջվող ցանկացած աշխատանքը կամ ծառայությունը, պայմանով, որ՝

ա) այն կատարվում է պետական մարմնի վերահսկողության կամ հսկողության ներքո,

բ) նշված անձը չի փոխանցվում կամ հանձնվում մասնավոր անձանց, ընկերությունների կամ ընկերակցությունների տնօրինմանը:

Հարկ է նշել, որ «Հարկադիր և պարտադիր աշխատանքի մասին» հիշատակված կոնվենցիան վավերացվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 2004 թվականի հոկտեմբերի 25-ին և ՀՀ օրենսդրության մաս է կազմում:

ՀՀ օրենսդրությամբ ամրագրված կարգավորումների համաձայն՝ դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով հանրային աշխատանքերի դատապարտված անձը կոնկրետ աշխատանքների կատարմանը ներգրավվում է ոչ թե իր կողմից կնքված պայմանագրի ուժով, այլ պետական իրավասու մարմնի՝ ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայության, և համապատասխան կազմակերպության միջև կնքված պայմանագրի ուժով: Մասնավորապես՝ հանրային աշխատանքների կատարման վայրերը որոշելու նպատակով Ստորաբաժանումը համապատասխան կազմակերպության հետ կնքում է «Հանրային աշխատանքների ձևով պատիժ կրող անձին ժամանակացույցով սահմանված աշխատաժամերով ապահովելու մասին» պայմանագիր[27]:

Պայմանագրի օրինակելի ձևի ուսումնասիրությամբ տեսանելի է, որ հանրային աշխատանքներ պատժի կատարման ամբողջ ընթացքի նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է Ստորաբաժանման կողմից:

Հանրային աշխատանքներ պատժատեսակի նշանակման փուլում իրավակիրառ դատական պրակտիկայում առկա են նաև որոշակի երկակի մոտեցումներ հանրային աշխատանքներն ազատազրկմամբ փոխարինելու օրենսդրական ընթացակարգերի կիրառման ընթացքում: Մասնավորապես՝

ՀՀ քրեական օրենսգրքի 60-րդ հոդվածի 9-րդ մասով սահմանված է, թե որ դատապարտյալներն են համարվում հանրային աշխատանքները կատարելուց խուսափող[28]:

Ինչպես տուգանք պատժատեսակի պարագայում, հանրային աշխատանքների դեպքում ևս օրենսդիրը կոշտ դիրքորոշում է դրսևորում հանրային աշխատանքները կատարելուց խուսափողների նկատմամբ՝ սահմանելով, որ հանրային աշխատանքները կատարելուց խուսափելու դեպքում այն փոխարինվում է ազատազրկմամբ՝ հանրային աշխատանքների 8 ժամը հաշվարկելով ազատազրկման 1 օրվա դիմաց:

[27] Տե՛ս ՀՀ կառավարության 2023 թվականի մարտի 30-ի թիվ 452-Ն որոշմամբ հաստատված ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայության ներքին կանոնակարգ, ձև 11:

[28] Տե՛ս ՀՀ քրեական օրենսգիրք, ՀՕ-199-Ն, ընդունվել է 2021 թվականի մայիսի 5-ին, օրինական ուժի մեջ է մտել 2022 թվականի հուլիսի 1-ին, հոդված 60:

Հանրային աշխատանքներն ազատազրկմամբ փոխարինելու կանոնը սահմանելիս օրենսդիրը դրսևորել է նույն մոտեցումը, ինչը և տուգանք պատժատեսակի պարագայում և հստակեցրել, որ ազատազրկման ժամկետը չի կարող գերազանցել այն հոդվածի սանկցիայով տվյալ պատժատեսակի համար նախատեսված առավելագույն ժամկետը, որով նախատեսված հանցագործության համար անձը դատապարտվել է: Եթե հաշվարկի արդյունքով ազատազրկման ժամկետը պակաս է ստացվում այն հոդվածի սանկցիայով տվյալ պատժատեսակի համար նախատեսված նվազագույն ժամկետից, որով նախատեսված հանցագործության համար անձը դատապարտվել է, ապա պատիժը նշանակվում է հաշվարկի արդյունքով ստացված ժամկետի չափով: Այս կանոնով է իրականացվում հաշվարկը նաև այն դեպքում, երբ քրեական օրենսգրքի Հատուկ մասի սանկցիայով ազատազրկում նախատեսված չէ: Այս դեպքում սահմանվող ազատազրկման ժամկետը չի կարող գերազանցել 1 տարին:

Հանրային աշխատանքների կատարման կարգն ու պայմանները խախտելու դեպքում պրոբացիայի ծառայողը եռօրյա ժամկետում դատապարտյալին ծանուցագրով հրավիրում է Պրոբացիայի ծառայություն, պարզում է կատարված խախտման պատճառը՝ անհրաժեշտության դեպքում պահանջելով համապատասխան փաստաթղթեր, և ըստ այդմ կազմում է արձանագրություն: Հարգելի պատճառների բացակայության դեպքում պրոբացիայի ծառայողը կազմում է արձանագրություն և միջնորդություն է ներկայացնում դատարան՝ դատապարտյալի նկատմամբ նշանակված հանրային աշխատանքներն ազատազրկմամբ փոխարինելու վերաբերյալ[29]:

Հանրային աշխատանքներից խուսափելու դեպքում այն ազատազրկմամբ փոխարինելու գործընթացում առկա են որոշակի երկակի մոտեցումներ: Այսպես, այն դեպքերում, երբ ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասի այն հոդվածի սանկցիայով, որով նախատեսված հանցագործության համար անձը դատապարտվել է, ազատազրկում նախատեսված չէ, ապա սահմանող ազատազրկման ժամկետը չի կարող գերազանցել 1 տարին: Սակայն իրավիճակն այլ է, երբ ոչ մեծ ծանրության հանցագործությունը մեղադրյալի կողմից կատարվել է առաջին անգամ:

Գործող քրեական օրենգրքի 67-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ առաջին անգամ ոչ մեծ ծանրության հանցագործություն կատարած անձը չի կարող դատապարտվել ազատազրկման:

Այսինքն, մի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 60-րդ հոդվածի 7-րդ, 8-րդ մասերը սահմանում են, որ հանրային աշխատանքները կատարելուց խուսափելու դեպքում այն փոխարինվում է ազատազրկմամբ, մյուս կողմից՝ ՀՀ քրեական օրենսգրքի 67-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է, որ առաջին անգամ ոչ մեծ ծանրության հանցագործություն կատարած անձը չի կարող դատապարտվել ազատազրկման:

[29] Տե՛ս ՀՀ քրեակատարողական օրենսգիրք, ՀՕ-246-Ն, ընդունվել է 2022 թվականի հունիսի 15-ին, ուժի մեջ է մտել 2022 թվականի հուլիսի 1-ին, հոդված 31:

Դատական պրակտիկայի ուսումնասիրությամբ պարզվել է, որ առանձին դեպքերում ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայության կողմից ներկայացված միջնորդությունները՝ հանրային աշխատանքներ պատժատեսակը ազատազրկմամբ փոխարինելու վերաբերյալ, մերժվել են դատարանների կողմից՝ հաշվի առնելով ՀՀ քրեական օրենսգրքի 67-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված իմպերատիվ պահանջը և ՀՀ քրեական օրենսգրքի 4-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված կարգավորումն առ այն, որ քրեական օրենքի Ընդհանուր մասի նորմերը կարող են անալոգիայով կիրառվել, եթե դա չի վատթարացնում անձի վիճակը:

Գտնում ենք, որ քննարկվող դեպքերում դատարանները ոչ թե առաջին անգամ ոչ մեծ ծանրության հանցանք կատարած անձի նկատմամբ ազատազրկման ձևով պատիժ են նշանակում, այլ առաջին անգամ ոչ մեծ ծանրության հանցանք կատարած անձի նկատմամբ արդեն իսկ նշանակված հանրային աշխատանքների ձևով նշանակված պատիժը փոխարինում են ազատազրկման ձևով պատժի, հետևաբար՝ կարծում ենք, որ դատարանների այն եզրահանգումը, որ առաջին անգամ հանցանք կատարած անձի նկատմամբ չի կարող նշանակվել ազատազրկման ձևով պատիժ, հիմնավոր չի կարող համարվել, քանի որ ՀՀ քրեական օրենսգրքի 67-րդ հոդվածի 5-րդ մասով հստակ նշված է, որ <u>առաջին անգամ</u> ոչ մեծ ծանրության հանցանք կատարած անձը <u>չի կարող դատապարտվել ազատազրկման</u>, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 60-րդ հոդվածի 7-րդ մասում օրենսդիրը սահմանել է, որ հանրային աշխատանքները կատարելուց <u>խուսափելու դեպքում այն փոխարինվում է ազատազրկմամբ:</u>

Այլ կերպ ասած՝ պատժի կրումից չարամտորեն խուսափելու դեպքում օբյեկտիվորեն առաջանում է պատժի խստացման անհրաժեշտություն, որը հանդիսանում է արդյունավետ միջոց և նպատակ է հետապնդում վերականգնել սոցիալական արդարությունը, վերասոցիալականացնել պատժի ենթարկված անձին, կանխել հանցագործությունները:

Հետևաբար՝ հանրային աշխատանքներն ազատազրկմամբ փոխարինելու դեպքում պատժատեսակի խստացումը նշանակված պատժի կրումից չարամտորեն խուսափելու արդյունք է:

Հակառակ դեպքում՝ ստացվում է մի իրավիճակ, երբ առաջին անգամ ոչ մեծ ծանրության հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ դատարանի դատավճռով պետության անունից նշանակված հանրային աշխատանքներ պատժից չարամտորեն խուսափելու դեպքում, պատժի նպատակները չեն իրացվի, մինչդեռ, հատկապես նման իրավիճակները բացառելու համար է օրենսդիրը ՀՀ քրեական օրենսգրքի 67-րդ հոդվածի 7-րդ, 8-րդ մասերում, ինչպես նաև ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 31-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրել վերաբերելի իրավակարգավորումներ, որպիսի պայմաններում՝ գտնում ենք, որ ՀՀ քրեական օրենսգրքի Ընդհանուր մասի նորմերի անալոգիայի կիրառման վերաբերյալ և հատկապես այդ նորմերի կիրառմամբ անձի վիճակը վատթարացնելու վերաբերյալ պատճառաբանությունները խոցելի են:

Եզրակացություն

ՀՀ օրենսդրությունը պատժի նպատակների իրացվելիության համատեքստում որդեգրել է վերասոցիալականացման քաղաքականություն, ինչն իրենից ներկայացնում է պատժի կրման ընթացքում այնպիսի համալիր միջոցառումների իրականացում, որն ուղղված կլինի հանցանք կատարած անձի մոտ մարդու, հասարակության, օրենքի, պետության, համակեցության կանոնների և հասարակությունում ընդունված այլ արժեքների հարգմանը, պաշտպանությանն ու պահպանությանն ուղղված վերաբերմունքի ձևավորմանը, ամրապնդմանն ու կայունացմանը, և կնպաստի պատժի ենթարկված անձի հետագա սոցիալական վերաինտեգրմանը:

Վերասոցիալականացման արդյունավետությունը բարձրացնելու համար կարևոր է ոչ միայն օրենսդրության և դրա կատարումն ապահովող իրավական ընթացակարգերի ամրագրումը, այլև վերասոցիալականացման բովանդակությունը կազմող բաղադրիչների միջոցով դրանց առարկայական կիրառումն ապահովելը:

Պատժի նպատակների իրացվելիության տեսանկյունից հանրային աշխատանքներ պատժատեսակի՝ որպես պատժի համակարգում ներառված ինքնուրույն պատժատեսակի արդյունավետության բարձրացման տեսանկյունից անհրաժեշտ է չսահմանափակվել միայն ֆիզիկական բնույթ կրող աշխատանքների կատարումն ապահովելով, այլ յուրաքանչյուր դատապարտյալի վերաբերյալ կազմել ռիսկերի և կարիքների գնահատման հիման վրա վերասոցիալականացման միջոցառումների առանձին ծրագիր՝ ներառելով դրանցում կատարված հանցագործության բնույթից, հանցանք կատարած անձից (տարիք, սեռ), կատարված հանցագործության նկատմամբ անձի վերաբերմունքից բխող առանձնահատկությունների հիման վրա միջոցառումներ:

Անհրաժեշտ է հստակ ընդգծել «հարկադիր աշխատանք» եզրույթի և «հանրային աշխատանքներ» պատժատեսակի սահմանազատումը՝ հաշվի առնելով առկա ներպետական և միջազգային օրենսդրական կարգավորումներն առ այն, որ աշխատանքը, որը, օրենքին համապատասխան, կատարում է դատապարտված անձը, չի համարվում պարտադիր կամ հարկադիր աշխատանք:

Առաջին անգամ ոչ մեծ ծանրության հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ դատարանի դատավճռով պետության անունից նշանակված հանրային աշխատանքներ պատժից չարամտորեն խուսափելու դեպքում հանրային աշխատանքներն ազատազրկմամբ փոխարինելու վերաբերյալ առկա օրենսդրական կարգավորումները պետք է մեկնաբանել պատժի խստացման անհրաժեշտությամբ, որը հանդիսանում է արդյունավետ միջոց և նպատակ է հետապնդում վերականգնել սոցիալական արդարությունը, վերասոցիալականացնել պատժի ենթարկված անձին, կանխել հանցագործությունները, հակառակ դեպքում՝ կստացվի մի իրավիճակ, երբ, պատժի նպատակները կոնկրետ դեպքերում կմնան չիրացված:

Գրականության ցանկ (reference list, список литературы)

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, 22.12.2015,
Constitution of the Republic of Armenia, 22.12.2015,
2. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք, ՀՕ-199-Ն, ընդունվել է 05.05.2021թ., ուժի մեջ է մտել 01.07.2022թ.,
The criminal code of the Republic of Armenia, HO-199-N, adopted on 05.05.2021, entered into force on 01.07.2022,
3. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք, ՀՕ-528-Ն, ընդունվել է 08.04.2003թ., ուժի մեջ է մտել 01.08.2003թ.
The criminal code of the Republic of Armenia, HO-528-N, adopted on 18.04.2003, entered into force on 01.08.2003,
4. Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգիրք, ՀՕ-246-Ն, ընդունվել է 15.06.2022թ., ուժի մեջ է մտել 01.07.2022թ.,
The penitentairy code of the Republic of Armenia, HO-246-N, adopted on 15.06.2022, entered into force on 01.07.2022,
5. Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգիրք, ՀՕ-124-Ն, ընդունվել է 09.11.2004թ., ուժի մեջ է մտել 21.06.2005թ.,
The labor code of the Republic of Armenia, HO-124-N, adopted on 09.11.2004, entered into force on 21.06.2005,
6. ՀՀ օրենք «Պրոբացիայի մասին», ՀՕ-48-Ն, ընդունվել է 17.05.2016թ., օրինական ուժի մեջ է մտել 04.06.2016թ.,
RA Law "On Probation", HO-48-N, adopted on May 17, 2016, entered into legal force on June 4, 2016
7. ՀՀ կառավարության 2023 թվականի մարտի 30-ի թիվ 452-Ն որոշմամբ հաստատված ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայության ներքին կանոնակարգ,
Internal Regulations of the Probation Service of the Ministry of Justice of the Republic of Armenia, approved by the Decision No. 452-N of the Government of the Republic of Armenia of March 30, 2023,
8. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիա, ընդունվել է Եվրոպայի խորհրդի կողմից, 04.11.1950
European Convention for the Protection of Human Rights and Fundamental Freedoms adopted by the Council of Europe, 04.11.1950
9. «Հարկադիր կամ պարտադիր աշխատանքի մասին» կոնվենցիա, ընդունվել է 1930 թվականի հունիսի 28-ին, Ժնևում,
Convention on Forced or Compulsory Labour, adopted on 28 June 1930, at Geneva,
10. Նախարարների կոմիտեի անդամ պետություններին ուղղված համայնքային պատժամիջոցների և միջոցառումների վերաբերյալ եվրոպական

կանոնների վերաբերյալ CM/Rec (2017) 3 առաջարկություն, 2017 թվականի մարտի 22, https://rm.coe.int/168070c09b

Recommendation CM/Rec (2017) 3 of the Committee of Ministers to member States on the European Rules on community sanctions and measures, 22 March 2017, https://rm.coe.int/168070c09b,

11. Եվրոպայի խորհրդի պրոբացիայի կանոնների վերաբերյալ Նախարարների կոմիտեի անդամ պետություններին ուղղված CM/Rec (2010) 1 առաջարկություն, 20 հունվարի 2010թ., https://www.cep-probation.org/wp-content/uploads/2018/10/CoE-probation-rules-recommendation.pdf

Recommendation CM/Rec (2010) 1 of the Committee of Ministers to member states on the Council of Europe Probation Rules, 20 January 2010, https://www.cep-probation.org/wp-content/uploads/2018/10/CoE-probation-rules-recommendation.pdf,

12. Վան դեր Մուսելեն ընդդեմ Բելգիայի թիվ 8919/80 գանգատով Եվրոպական դատարանի 1983 թվականի նոյեմբերի 23-ի վճիռը, https://hudoc.echr.coe.int/eng#{%22itemid%22:[%22001-57591%22]}

Van der Musele v. Belgium, Application No. 8919/80, Judgment of the European Court of 23 November 1983, https://hudoc.echr.coe.int/eng#{%22itemid%22:[%22001-57591%22]}

13. Դե Վիլդն, Օոմսը և Վերսիպն ընդդեմ Բելգիայի թիվ 2832/66, 2835/66, 2899/66 գանգատով Եվրոպական դատարանի 1971 թվականի հունիսի 18-ի վճիռը, https://hudoc.echr.coe.int/eng#{%22itemid%22:[%22001-57606%22]}

Judgment of the European Court of 18 June 1971 in De Wilde, Ooms and Versip v. Belgium, Applications Nos. 2832/66, 2835/66, 2899/66, https://hudoc.echr.coe.int/eng#{%22itemid%22:[%22001-57606%22]}

14. Հ.Խաչիկյան, ՀՀ քրեակատարողական իրավունք, ԵՊՀ հրատարակչություն, 2024, http://publishing.ysu.am/files/Harutyun_Khachikyan.pdf

H. Khachikyan, RA Penitentiary Law, YSU Publishing House, 2024, http://publishing.ysu.am/files/Harutyun_Khachikyan.pdf

15. Руководство по статье 4 конвенции о защите прав человека и основных свобод <Запрещение рабства и принудительного труда>, https://ks.echr.coe.int/documents/d/echr-ks/guide_art_4_rus

GUIDE TO ARTICLE 4 OF THE CONVENTION FOR THE PROTECTION OF HUMAN RIGHTS AND FUNDAMENTAL FREEDOMS <Prohibition of slavery and forced labour>, https://ks.echr.coe.int/documents/d/echr-ks/guide_art_4_rus

16. Тетерятников Николай Юрьевич,Андреев Александр Владимирович Разграничение принудительного труда и принудительных работ в российском и международном праве. «Право». https://cyberleninka.ru/article/n/razgranichenie-prinuditelnogo-truda-i-prinuditelnyh-rabot-v-rossiyskom-i-mezhdunarodnom-prave

Teteryatnikov Nikolay Yuryevich, Andreev Alexander Vladimirovich DISTINCTION BETWEEN FORCED LABOR AND FORCED LABOR IN RUSSIAN AND INTERNATIONAL

LAW. https://cyberleninka.ru/article/n/razgranichenie-prinuditelnogo-truda-i-prinuditelnyh-rabot-v-rossiyskom-i-mezhdunarodnom-prave

17. Համայնքային աշխատանք, էլեկտրոնային մոնիթորինգ և պրոբացիոն օգնություն, Շվեյցարիայի կոնֆեդերացիա, https://www.bfs.admin.ch/bfs/en/home/statistics/crime-criminal-justice/execution-penal-sentences-justice/employment-labourelectronic-home-detention-supervision.html

Community service, electronic monitoring and probation assistance, Confederation of Switzerland, https://www.bfs.admin.ch/bfs/en/home/statistics/crime-criminal-justice/execution-penal-sentences-justice/employment-labourelectronic-home-detention-supervision.html

18. Յակուլին, Վ. (2018): Սլովենիայի այլընտրանքային քրեական պատժամիջոցները և քրեական օրենսդրությունը. Հիմնական իրավական բնութագրերը և կիրառման փորձը: Այլընտրանքային քրեական պատժամիջոցներ (Տարածաշրջանային քրեական իրավունք, կիրառման փորձ և բարելավման միջոցառումներ) (էջ 95–109): Բելգրադ. ԵԱՀԿ առաքելություն Սերբիայում:

Jakulin, V. (2018). Alternative Criminal sanctions and criminal legislation of Slovenia – Basic legal characteristics and experience of application. Alternative criminal sanctions. Regional criminal law, experience in implementation and improvement measures (pp. 95–109). Belgrade: Mission OSCE in Serbia.

19. Կամբովսկի, Վ. (2015): Մակեդոնիայի Հանրապետության քրեական օրենսգրքի գիտական և գործնական մեկնաբանություն: Սկոպյե. Իրավագիտության ֆակուլտետ:

Kambovski, V. (2015). Scientific and practical commentary on the Criminal Code of the Republic of Macedonia. Skopje:

20. Բաբիչ, Մ., և Մարկովիչ, Ի. (2018): Այլընտրանքային քրեական պատժամիջոցները և քրեական իրավունքը Բոսնիա և Հերցեգովինայում (օրենսդրական կարգավորման մեթոդ և կիրառման փորձ): Այլընտրանքային քրեական պատժամիջոցներ (Տարածաշրջանային քրեական իրավունք, կիրառման փորձ և բարելավման միջոցառումներ) (էջ 201–217): Բելգրադ. ԵԱՀԿ առաքելություն Սերբիայում, https://www.osce.org/mission-toserbia/443830

Babić, M., & Marković, I. (2018). Alternativne krivične sankcije i krivično zakonodavstvo u BiH (način zakonodavnog regulisanja i iskustva u primjeni) [Alternative criminal sanctions and criminal law in BiH]. In Alternativne krivične sankcije (regionalna krivična zakonodavstva, iskustva u primeni i mere unapređenja) [Alternative criminal sanctions (Regional criminal law, experience in implementation and improvement measures] (pp. 201–217). Belgrade: Mission OSCE in Serbia, https://www.osce.org/mission-toserbia/443830

Gayane Gasparyan
Deputy Head of the Department of Supervision over
Legality of Penalties and Other Means of Compulsion
of the Prosecutor General's Office of the Republic of Armenia

THE ROLE OF PUBLIC WORKS IN THE CONTEXT OF IMPLEMENTING THE GOALS OF PUNISHMENT AND PRACTICAL ISSUES ARISING IN THE PROCESS OF IMPLEMENTING THE GOALS OF PUNISHMENT[30]

Abstract

The article is devoted to the role and significance of public works as a form of punishment, the problems aimed at increasing its effectiveness in the context of the implementation of the goals of punishment, and proposals for their solution.

By the Criminal Code of the Republic of Armenia adopted on May 5, 2021 (hereinafter referred to as the Current Criminal Code), introduced significant changes to the position of public works within the punishment system. In particular, public works are defined as an independently applied main punishment, in contrast to the Criminal Code of the Republic of Armenia adopted on April 18, 2003 (hereinafter referred to as the Former Criminal Code), where community service was used only as an alternative to imprisonment. In addition, unlike the Former Criminal Code, the minimum and maximum permissible terms for community service have been significantly reduced.

The Current Criminal Code also reformulated the goals of punishment and provided for the "resocialization of the convicted person" as the goal of punishment.

The aforementioned legislative amendments have created an objective need to study the role and significance of the public works as a type of punishment in the context of the realization of the goals of punishment, as well as to study the problems that emerged in law enforcement practice during the imposition of this type of punishment.

The article also addressed the delimitation of the term "compulsory labor" and the "public works" as a form of punishment within the framework of domestic and international legal regulations.

In the course of the study, several issues were identified, with proposed solutions aimed at improving the effectiveness of the execution of this type of punishment. Moreover, the study highlights certain divergent approaches by domestic courts in the imposition of public works, particularly regarding the necessity of considering the consent of the offender in relation to this type of punishment. The article analyzes these issues within the framework of both domestic and international legal regulations.

Keywords- punishment; goals of punishment; public works; compulsory labor; consent; resocialization.

[30] The article was presented on 30.04.2025 and was reviewed on 16.06.2025.

Гаяне Гаспарян
Заместитель начальника Управления по надзору за законностью применения наказаний и иных мер принудительного характера Генеральной прокуратуры Республики Армения

РОЛЬ ОБЩЕСТВЕННЫХ РАБОТ В КОНТЕКСТЕ РЕАЛИЗАЦИИ ЦЕЛЕЙ НАКАЗАНИЯ И ПРАКТИЧЕСКИЕ ВОПРОСЫ, ВОЗНИКАЮЩИЕ В ПРОЦЕССЕ РЕАЛИЗАЦИИ ЦЕЛЕЙ НАКАЗАНИЯ[31]

Абстракт

Статья посвящена роли и значению общественных работ как вида наказания, проблемам, направленным на повышение его эффективности в контексте реализации целей наказания, и предложениям по их решению.

Уголовным кодексом Республики Армения, принятым 5 мая 2021 года (далее - Действующий Уголовный кодекс), внесены существенные изменения в положение общественных работ в системе исполнения наказаний. В частности, общественные работы определяются как самостоятельно применяемое основное наказание, в отличие от Уголовного кодекса Республики Армения, принятого 18 апреля 2003 года (далее - Бывший Уголовный кодекс), где общественные работы использовались только в качестве альтернативы тюремному заключению. Кроме того, в отличие от прежнего Уголовного кодекса, минимально и максимально допустимые сроки общественных работ были значительно сокращены.

В действующем Уголовном кодексе также изменены цели наказания и в качестве цели наказания предусмотрена “ресоциализация осужденного”.

Вышеупомянутые законодательные изменения создали объективную необходимость в изучении роли и значения общественных работ как вида наказания в контексте реализации целей наказания, а также в изучении проблем, возникших в правоприменительной практике при назначении данного вида наказания.

В статье также рассматривался вопрос о разграничении понятий “принудительный труд” и “общественные работы” как формы наказания в рамках национальных и международных правовых норм.

В ходе исследования было выявлено несколько проблем, с предложенными решениями, направленными на повышение эффективности исполнения данного вида наказания. Кроме того, в исследовании подчеркиваются некоторые различия в подходах национальных судов к назначению общественных работ, в частности, в отношении необходимости рассмотрения вопроса о согласии правонарушителя на этот вид наказания. В статье анализируются эти вопросы в рамках как национальных, так и международных правовых норм.

Ключевые слова - наказание; цели наказания; общественные работы; принудительный труд; согласие; ресоциализация.

[31] Статья была представлена 30.04.2025 и прошла рецензирование 16.06.2025.

https://doi.org 10.59821/18294219-2025.1-myh05

Մանե Մարկոսյան
ՀՀ գլխավոր դատախազի խորհրդական, Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասպիրանտ

ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ[1]

Համառոտագիր

Հայաստանի Հանրապետությունում ընդերքօգտագործման հարաբերությունները կարգավորվում են առավելապես հանրային-վարչական իրավունքի նորմերով, ինչը հանգեցնում է ընդերքօգտագործման ոլորտի ոչ արդյունավետ իրավական կարգավորման և, ի թիվս այլնի, ոլորտի ներդրումային գրավչության նվազեցման:

Հոդվածում քննարկվում են ընդերքօգտագործման հարաբերությունների կարգավորման համար քաղաքացիական իրավունքի նորմերի տեսական և գործնական անհրաժեշտությունը, ներպետական օրենսդրությամբ ընդերքօգտագործման հարաբերությունների քաղաքացիաիրավական կարգավորման իրավական հիմքերը, ինչպես նաև՝ ընդերքօգտագործման ոլորտում ծագող այն հարաբերությունները, որոնք պետք է ենթարկվեն քաղաքացիաիրավական կարգավորման:

Հեղինակը եզրահանգում է, որ ընդերքօգտագործման իրավունքն ունի իրային-իրավական բնույթ, ինչը նշանակում է բոլորի (այդ թվում՝ պետության) պարտականությունը՝ ձեռնպահ մնալու ընդերքօգտագործման իրավունքի ցանկացած խախտումից, ինչպես նաև չխոչընդոտելու այդ իրավունքի իրացմանը:

Հիմնաբառեր– ընդերքօգտագործման իրավունք, պետական սեփականություն, քաղաքացիաիրավական կարգավորում, ընդերքօգտագործման և գործարարական իրավունքի հարաբերակցություն, գույքային հարաբերություններ, իրային իրավունք:

Ներածություն

Հայաստանի Հանրապետության տնտեսության համար ընդերքօգտագործման ոլորտի զարգացումն ունի առանցքային նշանակություն[2]: Սակայն ՀՀ-ում ընդերքօգտագործման ոլորտում ներդրումային ցածր գրավչության պատճառներից մեկը, ըստ ՀՀ կառավարության կողմից «Հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների պլանը (մինչև 2035 թվա-

[1] Հոդվածը ներկայացվել է 25.02.2025թ., գրախոսվել է 23.06.2025թ.:

[2] Տե՛ս Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի (նախկինում՝ Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով) «Հանքարդյունաբերության ոլորտում իրականացված ուսումնասիրության արդյունքները», էջ 4. https://competition.am/hy/2021/01/22/ (մուտք՝ 01.08.2024թ.):

կանը) հաստատելու մասին» որոշման (այսուհետ՝ «Հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ռազմավարություն»)[3], ընդերքօգտագործման ոլորտում գործող իրավական դաշտն է, այդ թվում՝ լրացուցիչ վարչարարությունը[4]: ՀՀ օրենսդրության և իրավակիրառ պրակտիկայի[5] համակարգային վերլուծությունը թույլ է տալիս արձանագրել, որ ոլորտը կարգավորող իրավական դաշտի հիմքում ընդերքօգտագործման հարաբերությունների հանրային-վարչաիրավական կարգավորումն է[6] և այդ հարաբերությունների՝ բացառապես հանրային բնույթի լինելու վերաբերյալ ընկալումը, ինչի արդյունքում ընդերքօգտագործման հարաբերությունների քաղաքացիաիրավական կարգավորման դերը շարունակ անտեսվել է:

Պետք է նշել նաև, որ հայկական մասնագիտական գրականության մեջ ընդերքօգտագործման հարաբերությունները քաղաքացիաիրավական կարգավորման ասպեկտով երբևէ չեն եղել գիտական ուսումնասիրության և հետազոտության առարկա, մինչդեռ ընդերքօգտագործման հարաբերությունների արդյունավետ իրավական կարգավորման, ընդերքօգտագործողի մասնավոր շահերի և հանրային շահերի արդյունավետ հավասարակշռման համար առանցքային է քաղաքացիական իրավունքի նորմերի ուսումնասիրությունը և վերլուծությունը:

Սույն հոդվածի շրջանակում մեր խնդիրն է վեր հանել ՀՀ օրենսդրությամբ ընդերքօգտագործման հարաբերությունների քաղաքացիաիրավական կարգավորման անհրաժեշտությունը և նշանակությունը՝ ուրվագծելով ընդերքօգտագործման ոլորտում ծագող այն հարաբերությունների շրջանակը, որոնք պետք է կարգավորվեն առավելապես քաղաքացիական իրավունքի նորմերով:

Ընդերքօգտագործման հարաբերությունների քաղաքացիաիրավական կարգավորման հարցը ՀՀ օրենսդրության համատեքստում.

Ընդերքօգտագործման հարաբերությունների քաղաքացիաիրավական կարգավորման հարցը իրավաբանական գրականության մեջ եղել և մնում է սուր բանավեճերի առարկա[7]: Մասնավորապես, իրավաբանական դոկտրինայում առկա են իրարամերժ մոտեցումներ ընդերքօգտագործման ոլորտի քաղաքացիաիրավական կարգավորման հարցի վերաբերյալ, քանի որ որոշ հեղինակների կարծիքով ընդերքօգտագործման ոլորտում քաղաքացիական իրավունքի նորմերն ընդհանրապես չպետք է կիրառվեն[8]:

---

[3] Տե՛ս ՀՀ կառավարության 2023 թվականի մայիսի 11-ի «Հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների պլանը (մինչև 2035 թվականը) հաստատելու մասին» N 730-Լ որոշումը: Ընդունվել է 11.05.2023թ. : Ուժի մեջ է մտել 12.05.2023թ. :

[4] Տե՛ս Հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ռազմավարություն, Հավելված 1, էջեր 21-22, 74:

[5] Տե՛ս օրինակ ՀՀ վարչական դատարանի թիվ ՎԴ/3371/05/20 վարչական գործով 08.12.2020թ. վճիռը:

[6] Տե՛ս Թևանյան Ս. Վ., Կոնցեսիայի պայմանագրի իրավական կարգավորումը, Մենագրություն, Երևան, ԵՊՀ հրատ., 2016, էջ 34:

[7] Տե՛ս Суханов Е.А., Проблемы правового регулирования отношений публичной собственности и новый Гражданский кодекс, Гражданский кодекс России. Проблемы. Теория. Практика, Международный центр финансово-экономического развития, 1998, с. 221-223:

Տե՛ս նաև Constitutional Framework of Subsoil Management: Issues and Perspectives (մուտք՝ 14.02.2025թ.):

[8] Տե՛ս Налетов К. И. , Лицензионные и договорно-правовые формы пользования недрами в РФ и за рубежом, Научный руководитель Док. юр. наук, проф. Б.Д.Клюкин, Москва, 2006, 215 с.:

Նշված հեղինակներն այս մոտեցման հիմքում դնում են տարբեր իրավական հիմնավորումներ, որոնք հիմնականում հանգում են հետևյալին՝ պետության՝ հանրային իշխանության սուբյեկտ հանդիսանալու հանգամանքը[9], ընդերքօգտագործման ոլորտում հանրային շահերի պաշտպանությունը[10], ընդերքի նկատմամբ պետության բացառիկ սեփականության սկզբունքը[11] և այլն: Այս տեսակետների կողքին առկա են նաև ընդերքօգտագործման հարաբերությունների իրավական կարգավորման համար այդ հարաբերությունների քաղաքացիաիրավական կարգավորման նշանակությունն ընդգծող և ընդերքօգտագործման ոլորտի երկուստեք քաղաքացիաիրավական և վարչաիրավական կարգավորման անհրաժեշտությունը հիմնավորող տեսակետներ[12]:

Հակադրվելով ընդերքօգտագործման հարաբերությունները որպես բացառապես հանրային-իրավական կարգավորման ենթակա հարաբերություններ համարող գիտական մոտեցումներին՝ գտնում ենք, որ ընդերքօգտագործման իրավունքի համալիր կարգավորման համար հավասարապես կարևոր է նաև մասնավոր իրավունքի նորմերի կիրառման անհրաժեշտությունը:

Ընդերքօգտագործման հարաբերություններում **պետությունն ունի երկակի իրավական կարգավիճակ**՝ կարող է լինել միաժամանակ քաղաքացիական և վարչական իրավունքի սուբյեկտ (ունիվերսալ իրավասուբյեկտություն): Սակայն, եթե որպես վարչական իրավունքի սուբյեկտ պետությունը միակողմանի կամահայտնությամբ է որոշում հարաբերությունների բնույթը և բովանդակությունը, ապա որպես քաղաքացիական իրավունքի սուբյեկտ պետությունը, հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի[13] 128-րդ հոդվածը, քաղաքացիների և իրավաբանական անձանց հետ հավասար հիմունքներով է մասնակցում քաղաքացիական շրջանառությանը: Այս տեսանկյունից ընդերքօգտագործման հարաբերությունները զուտ պետության մասնակցության փաստով և ունիվերսալ իրավասուբյեկտությամբ պայմանավորված հանրային իրավահարաբերություններ համարելն իրավաչափ չէ:

Իհարկե, ընդերքօգտագործման հարաբերություններում պետությունը կատարում է և պետք է կատարի բացառապես **հանրային-վարչաիշխանական բնույթ** կրող գործառույթներ, որոնք պայմանավորված են ընդերքօգտագործման հարաբերություններում **հանրային շահի գոյությամբ** (հարկային, բնապահպանական, բնակչության առողջության պահպանության, ընդերքի ողջամիտ և համալիր օգտագործման հարաբերություններ) և կոչված են պետության բացառիկ գործառույթների (օրինակ՝ էկոլոգիական գործառույթը[14]) իրականացման ապահովմանը: Սակայն

[9] Տե՛ս Елюбаев Ж.С., Проблемы правового регулирования недропользования: отечественный опыт и зарубежная практика. Монография, Алматы, 2010, с. 58-60:

[10] Տե՛ս Налетов К. И., նշված աշխատությունը, էջ 22:

[11] Տե՛ս Каланда Л.В., Проблемы правового регулирования (предпринимательской) деятельности в нефтяной отрасли. М.: ИГЛ АН РФ. 2004, с. 38:

[12] Տե՛ս Прокаев А. В. , Гражданско-правовое регулирование отношений в сфере недропользования, 12.00.03, Саратов, 2010, 192 с.:

[13] Ընդունվել է 05.05.1998: Ուժի մեջ է մտել 01.01.1999: Սկզբնաղբյուրը՝ ՀՀՊՏ 1998.08.10/17(50):

[14] Պետության էկոլոգիական գործառույթի մասին առավել մանրամասն տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ/ ընդհանուր խմբագրությամբ **Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի**. - Ե. : «Իրավունք», 2010, էջեր 135-138:

հանրային շահերի պաշտպանության անհրաժեշտությունը ծագում է նաև դասական քաղաքացիաիրավական հարաբերությունների պարագայում (օրինակ՝ շինարարական կապալի կամ շրջապատի համար վտանգավոր նյութերի պահպանության նպատակով կնքվող պայմանագրեր), ինչը, այնուամենայնիվ, չի փոխում այս հարաբերությունների էությունը և չի տեղափոխում դրանք զուտ վարչաիրավական կարգավորման դաշտ: Այս տիպի իրավահարաբերություններում հանրային շահերի պաշտպանության հարցը լուծվում է տվյալ ոլորտը կարգավորող օրենսդրությամբ և ընդերքօգտագործման պայմանագրով հատուկ պահանջներ և պետության վերահսկողության մեխանիզմներ նախատեսելով[15]: Ուստի, ընդերքօգտագործման հարաբերությունների համալիր իրավական կարգավորման համար որոշիչ նշանակություն ունի հենց դրանց քաղաքացիաիրավական կարգավորումը:

Նշյալ համատեքստում պետության ունիվերսալ իրավասուբյեկտությունը, ընդերքօգտագործման ոլորտում հանրային իրավահարաբերությունների (բնապահպանական, հարկային և այլն) առկայությունը և դրանով պայմանավորված՝ պետության հանրային իշխանական լիազորությունների իրականացման անհրաժեշտությունը, որևէ կերպ չպետք է մեկնաբանվեն որպես ընդերքօգտագործման ոլորտում ծագող և քաղաքացիաիրավական կարգավորման ենթակա հարաբերությունների նկատմամբ քաղաքացիական իրավունքի նորմերի կիրառմանը խոչընդոտող գործոններ:

Ինչպես գիտենք, քաղաքացիական իրավունքի կարգավորման դիսպոզիտիվ մեթոդին, ի թիվս այլ հատկանիշների, բնորոշ են՝ կողմերի սուբյեկտիվ իրավունքներով օժտված լինելը, իրավահավասարությունը, իրավունքների պաշտպանության գույքային-վերականգնողական եղանակները[16]: Ընդերքօգտագործման հարաբերություններում կողմերի իրավահավասարությունը բխում է հենց ընդերքօգտագործողի և պետության քաղաքացիաիրավական կարգավիճակից և արտահայտվում է ընդերքօգտագործման իրավունքի օբյեկտների առնչությամբ պետության և ընդերքօգտագործողի գույքային ինքնուրույնությամբ: Ընդերքօգտագործման հարաբերությունների քաղաքացիաիրավական կարգավորման դերը պայմանավորված է նաև ընդերքօգտագործման իրավունքի օբյեկտների քաղաքացիաիրավական շրջանառության, դրանց նկատմամբ սեփականության և այլ իրավունքների իրավական ռեժիմի, ընդերքօգտագործման ոլորտում կնքվող պայմանագրերի նկատմամբ քաղաքացիական իրավունքի նորմերի կիրառման անհրաժեշտությամբ[17]:

Ընդերքօգտագործման հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի շրջանակը ներառում է ՀՀ միջազգային պայմանագրերը[18], ՀՀ Սահմանա-

[15] Տե՛ս ՀՀ արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության (ԱՃԹՆ) զեկույց (2016-2017թթ.), 2018թ. «Էրնսթ ընդ Յանգ» ՓԲԸ, էջ 316. https://www.eiti.am/hy/annual-reports/2020 (մուտք՝ 10.02.2025թ.):

[16] Տե՛ս van Bemmelen van Gent, Ernst, Aspects of Private Law (November 30, 2012). Bynkershoek Research Notes – Number 2012/3, p. 4. https://ssrn.com/abstract=2977237 (մուտք՝ 10.02.2025թ.):

[17] Տե՛ս Прокаев А. В. , նշված աշխատությունը, էջեր 14, 17, 21:

[18] Քաղաքացիական իրավունքի նորմեր առավելապես պարունակում են ՀՀ-ի և տարբեր պետությունների միջև կնքվող ներդրումների խրախուսման և փոխադարձաբար պաշտպանության մասին երկկողմ պայմանագրերը:

դրությունը[19], ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը, ՀՀ ընդերքի մասին օրենսգիրքը[20] (այսուհետ՝ նաև «Օրենսգիրք») և դրա կիրարկումն ապահովելու նպատակով ընդունված բազմաթիվ ենթաօրենսդրական իրավական ակտերը, քաղաքացիական իրավունքի նորմեր պարունակող այլ օրենքները և իրավական ակտերը:

Ընդերքօգտագործման հարաբերությունների քաղաքացիաիրավական կարգավորման հիմքերը նախատեսված են, առաջին հերթին, սահմանադրական մակարդակում: Այսպես, ՀՀ-ում ընդերքի հանրային կարևոր նշանակությամբ պայմանավորված՝ նոր խմբագրությամբ Սահմանադրության 10-րդ հոդվածի 2-րդ մասով և Օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով ամրագրվել է **ընդերքի նկատմամբ պետության բացառիկ սեփականությունը,** իսկ Օրենսգրքի 11-րդ հոդվածով՝ ընդերքի տեղամասերի անօտարելիության սկզբունքը: Անդրադառնալով ընդերքի նկատմամբ պետության սեփականության ինստիտուտին՝ նշենք, որ իրավաբանական գրականության մեջ միանշանակ մոտեցում չկա այն հարցի շուրջ, թե **պետական սեփականության ինստիտուտը** ընդհանրապես իրավունքի ո՞ր ճյուղի կարգավորման առարկայում է ներառված: Որոշ հեղինակներ մինչև անգամ գտնում են, որ պետական սեփականության հարաբերությունները չեն կարող կարգավորվել քաղաքացիական իրավունքի նորմերով, քանի որ դրանք ունեն հանրային-իրավական բնույթ[21]: Նշված մոտեցման հիմքում ընկած է քաղաքացիական իրավունքի նորմերի՝ որպես բացառապես մասնավոր-իրավական բնույթի նորմեր հանդիսանալու մոտեցումը[22]: Որոշ հեղինակների կարծիքով էլ ընդերքի նկատմամբ պետության սեփականության ինստիտուտը ունի երկակի՝ հանրային-մասնավոր իրավական բնույթ[23]: Հեղինակների մյուս խմբի կարծիքով սեփականության իրավունքի ինստիտուտը, այդ թվում՝ պետական սեփականության հարաբերությունները ունեն համալիր բնույթ և կարգավորվում են իրավունքի տարբեր ճյուղերի (սահմանադրական, վարչական, քրեական, քաղաքացիական և այլն) նորմերով[24]:

Չթերագնահատելով սեփականության հարաբերությունների կարգավորման գործում իրավունքի տարբեր ճյուղերի նորմերի դերը՝ համաձայն ենք **Ե.Ա.**

---

[19] Ընդունվել է 06.12.2015: Ուժի մեջ է մտել 22.12.2015: Տե՛ս ՀՀՊՏ 2015.12.21/Հատուկ թողարկում Հոդ. 1118:

[20] Ընդունվել է 28.11.2011: Ուժի մեջ է մտել 01.01.2012: Սկզբնաղբյուրը՝ ՀՀՊՏ 2011.12.21/69(872) Հոդ.1661:

[21] Տե՛ս Левочко В. В. , Объекты гражданских прав в недропользовании, Москва, 2018, Федеральное государственное бюджетное образовательное учреждение высшего образования «Московский государственный юридический университет имени О. Е. Кутафина (МГЮА)», с. 53:

[22] Տե՛ս Прокаев А. В., նշված աշխատությունը, էջ 25:

[23] Տե՛ս Свиридова О. С., О содержание права государственной собственности на недра Российской Федерации, Закон. № 9, 2010, с. 37-42:

[24] Տե՛ս Բարսեղյան Տ. Կ., Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք, առաջին մաս (չորրորդ հրատարակչություն), Երևանի պետ. համալսարան, Երևան, Տիգրան Մեծ հրատ. , էջ 353:
Տե՛ս նաև Գեղամյան Օ. Մ., Բնական ռեսուրսների նկատմամբ սեփականության իրավունքի որոշ առանձնահատկությունները ՀՀ օրենսդրության մեջ և պրակտիկայում, Պետություն և իրավունք, Թիվ 1 (86) 2020թ. , էջ 4: Տե՛ս նաև https://www.redalyc.org/journal/279/27957591025/27957591025.pdf (մուտք՝ 16.02.2025թ.):

Սուխանովի տեսակետին առ այն, որ սեփականության հարաբերությունների միջճյուղային կարգավորման հիմքում քաղաքացիական իրավունքի նորմերն են[25]: Նշվածը ապացուցվում է նրանով, որ սեփականության իրավունքի ինստիտուտը նախատեսված է հենց ՀՀ քաղաքացիական օրենսգրքում (ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, չորրորդ բաժին)[26]: Բացի այդ ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ կարգավորվում են քաղաքացիական իրավահարաբերություններին պետության մասնակցության և պետական սեփականության վերաբերող հարաբերությունները, իսկ «Պետական գույքի կառավարման մասին» ՀՀ օրենքը[27] պետական գույքային հարաբերությունները կանոնակարգող օրենսդրության մեջ ներառում է նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը:

Այս համատեքստում գտնում ենք, որ ՀՀ ներպետական օրենսդրությամբ ամրագրված ընդերքի նկատմամբ պետության բացառիկ սեփականության իրավունքի ինստիտուտը ևս բացառություն չէ, ուստի չպետք է դուրս մնա ՀՀ քաղաքացիական օրենսգրքի կարգավորման շրջանակից: Մենք չենք կիսում նշված հարցի կապակցությամբ տեսական գրականության մեջ տեղ գտած այն մոտեցումը, ըստ որի ընդերքի նկատմամբ պետության բացառիկ սեփականության ինստիտուտը, պայմանավորված պետության առանձնահատուկ իրավասուբյեկտությամբ օժտված լինելու և հանրային իշխանության սուբյեկտ հանդիսանալու հանգամանքով, պետք է ենթարկվի միայն հանրային-իրավական կարգավորման և ենթադրի պետության և ընդերքօգտագործողի անհավասարություն[28]: Հակադրվելով նշված մոտեցմանը նշենք, որ Սահմանադրությունը, 10-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրելով ընդերքի նկատմամբ պետության բացառիկ սեփականությունը, չի նախատեսել ընդերքի նկատմամբ պետության սեփականության իրավազորությունների իրականացման՝ տիրապետման, տնօրինման և օգտագործման առանձնահատուկ իրավական ռեժիմ: Հակառակը, Սահմանադրության 10-րդ հոդվածի 2-րդ մասը, ամրագրելով ընդերքի նկատմամբ պետության բացառիկ սեփականության իրավունքը, նույն հոդվածի 1-ին մասում ամրագրել է ՀՀ-ում սեփականության բոլոր ձևերի ճանաչման և հավասարապես պաշտպանության սկզբունքը: Սահմանադրության նշված նորմերի լույսի ներքո անդրադառնալով ընդերքի նկատմամբ պետության սեփականության իրավազորությունների բնույթին՝ գտնում ենք, որ դրանց նկատմամբ պետք է կիրառվեն նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի չորրոդ բաժնի նորմերը: Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ հայրենական իրավաբանական գրականության մեջ նույնպես պետության սեփականության բովանդակությունը կազմող իրավազորությունների ծավալը մեկնաբանվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 163-րդ հոդվածի շրջանակում՝ պետությանը որպես սեփականության իրավունքի սուբյեկտի նոր,

[25] Տե՛ս Суханов Е.А., Лекции о праве собственности, Москва, 1991, с. 17:
Տե՛ս նաև Բարսեղյան Տ. Կ., նշված աշխատությունը, էջ 26:
[26] Տե՛ս Բարսեղյան Տ. Կ., նշված աշխատությունը, էջ 353:
[27] Ընդունվել է 20.11.2014: Ուժի մեջ է մտել 27.12.2014: Սկզբնաղբյուրը՝ ՀՀՊՏ 2014.12.17/69(1082) Հոդ.1152:
[28] Տե՛ս Елюбаев Ж.С., նշված աշխատությունը, էջ 60:

լրացուցիչ իրավազորություններ չվերագրելով[29]: Այս առումով պետք է համաձայնել նաև Ե. Ա. Սուխանովի այն դիրքորոշմանը, որը բնական ռեսուրսների համար հատուկ քաղաքացիաիրավական ռեժիմ չի նախատեսվում[30]: Այսպիսով, չնայած ընդերքօգտագործման հարաբերություններում պետությունը օժտված է առանձնահատուկ իրավասուբյեկտությամբ, քանի որ դրանում միավորված են պետություն-կոնտրագենտի և ընդերքի բացառիկ սեփականատիրոջ իրավական կարգավիճակները, նշվածը որևէ կերպ չպետք է խոչընդոտի ընդերքօգտագործման քաղաքացիաիրավական կարգավորմանը և խարխլի ժամանակակից շուկայական տնտեսությունը, դրա քաղաքացիաիրավական հիմքերը:

Քաղաքացիական իրավունքի նորմերի կիրառման հնարավորությունը ընդերքօգտագործման հարաբերությունների նկատմամբ ուղղակիորեն նախատեսված է ոլորտը կարգավորող հիմնարար իրավական ակտով՝ ՀՀ ընդերքի մասին օրենսգրքով, որի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ընդերքի մասին ՀՀ օրենսդրությունը ներառում է այդ թվում՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները: ՀՀ քաղաքացիական օրենսգիրքն էլ իր հերթին նախատեսում է ***«բնական պաշարների օգտագործման և շրջակա միջավայրի պահպանության հարաբերությունների»*** նկատմամբ քաղաքացիական օրենսդրության կիրառումը ամրագրող նորմը: Ընդ որում, *«բնական պաշարների օգտագործման»* հարաբերությունների ներքո պետք է հասկանալ նաև ընդերքօգտագործումը՝ որպես բնական պաշարների օգտագործման տեսակ[31]: Այսպես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 4-րդ մասը նախատեսում է, որ *«4. ընտանեկան, աշխատանքային, բնական պաշարների օգտագործման ու շրջակա միջավայրի պահպանության հարաբերությունները կարգավորվում են քաղաքացիական օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով, եթե այլ բան նախատեսված չէ ընտանեկան, աշխատանքային, հողային, բնապահպանական և այլ հատուկ օրենսդրությամբ»:* Նշված նորմից բխում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի և ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի միջև կոլիզիաները պետք է հաղթահարվեն հատուկ նորմին՝ ՀՀ ընդերքի մասին օրենսգրքին նախապատվություն տալով, քանի որ ՀՀ ընդերքի մասին օրենսգիրքը ընդերքօգտագործման հարաբերությունները կարգավորող հատուկ նորմատիվ ակտն է («Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի[32] 40-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ, «lex specialis derogate generali»):

Ընդերքօգտագործման իրավունքի համալիր կարգավորման համար քաղաքացիական իրավունքի նորմերի կիրառման անհրաժեշտությունը կարևոր է նաև այն պատճառով, որ ընդերքօգտագործումը **գործարարական գործունեության ոլորտ**

[29] Տե՛ս Բարսեղյան Տ. Կ., նշված աշխատությունը, էջեր 354, 363:

[30] Տե՛ս Гражданское право: В 2 т. Том 1: Учебник / Отв. ред. Е.А. Суханов, с. 556, 558.

[31] Տե՛ս Ихсанов Е. У., Пределы гражданско-правового регулирования отношений в сфере недропользования, Вестник Института законодательства и правовой информации Республики Казахстан. 2020. №3 (61), с. 77. https://cyberleninka.ru/article (մուտք՝ 09.06.2024):

[32] Տե՛ս «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքը: Ընդունվել է ՀՀ ԱԺ-ի կողմից 21.03.2018թ. -ին: Ուժի մեջ է մտել՝ 07.04.2018: Սկզբնաղբյուրը՝ ՀՀՊՏ 2018.03.28/23(1381) Հոդ.373:

է[33]**,** իսկ գործարարական գործունեությունը Հայաստանի Հանրապետությունում կարգավորվում է քաղաքացիական օրենսդրությամբ[34]: ՀՀ օրենսգրքի 1-ին հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անձանց միջև կամ նրանց մասնակցությամբ հարաբերությունները ՀՀ քաղաքացիական օրենսգրքի կարգավորման առարկան են: Տվյալ դեպքում, պետության և ընդերքօգտագործողի միջև ընդերքօգտագործման հարաբերությունների ծագման հիմնական նպատակը երկու կողմերի համար **դրական տնտեսական ազդեցության հասնելն է (շահույթ ստանալը)**[35]**,** ինչը համընկնում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի կարգավորման առարկան համարվող ձեռնարկատիրական գործունեության նպատակների հետ: Ընդերքօգտագործման ոլորտում գործարարական գործունեության իրավական կարգավորումը այս համատեքստում էական նշանակություն ունի որպես ընդերքօգտագործման տնտեսական հարաբերությունների զարգացումն ապահովող իրավական գործիքակազմ: Նշված տեսանկյունից առավել ընդգծվում է ընդերքօգտագործման հարաբերությունների կարգավորման համար քաղաքացիաիրավական նորմերի կիրառման անհրաժեշտությունը:

Վերջապես, ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը կարգավորում է գույքային հարաբերություններ (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 2-րդ և 4-րդ մասեր), որոնք կազմում են ցանկացած հասարակության տնտեսական հիմքը: ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը գույքային հարաբերությունները կարգավորում է միայն որոշակի մասով: Իրավունքի այլ ճյուղերով կարգավորվող գույքային հարաբերություններից քաղաքացիական իրավունքը առանձնանում է դրանով կարգավորվող գույքային հարաբերությունների ապրանքադրամական բնույթով[36] և այդ հարաբերության կողմերի իրավահավասարությամբ (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 6-րդ մաս): Ընդ որում, գույքային հարաբերությունների ապրանքադրամական բնույթ ասելով բավարար է հիմնավորել դրանց կա՛մ ապրանքային, կա՛մ դրամական բնույթի լինելը[37]:

Ընդերքօգտագործման հարաբերությունների գույքային բնույթի վերաբերյալ մասնագիտական գրականության մեջ կարծիքները չեն համընկնում: Այսպես, մի շարք տեսաբաններ, օրինակ՝ **Ն.Դ. Եգորովը, Ա.Բ. Դոզորցևը, Ն.Բ. Մուխիտդինովը,** գտնում են, որ ընդերքօգտագործման հարաբերությունները գույքային հարաբերություններ են[38]: Տեսաբանների մյուս խումբը՝ **Վ.Կ. Գրիգորիևը, Է.Վ. Էրոֆեևը, Գ.Վ. Չուբուկովը,** գտնում է, որ ընդերքօգտագործման հարաբերությունները գույքային հարաբերություններ չեն, քանի որ ընդերքը սեփականության իրավունքի օբյեկտ չէ, ապրանք չէ, այլ բնական հարստություն է,

[33] Տե՛ս https://shippingandcommodityacademy.com (մուտք՝ 16.02.2025թ.):).

[34] Տե՛ս Բարսեղյան Տ. Կ. , Գործարարական իրավունք: դասագիրք բուհերի համար, 2009, ISBN: 5808411254, 9785808411258, Ուս. ձեռնարկ: Երևան, ԵՊՀ հրատ., էջ 15:

[35] Տե՛ս Monteiro, N.B.R.; Bezerra, A.K.L.; Moita Neto, J.M.; Silva, E.A.d. Mining Law: In Search of Sustainable Mining. Sustainability 2021, 13, 867, p. 1. Mining Law: In Search of Sustainable Mining (մուտք՝ 16.02.2025թ.):

[36] Տե՛ս Բարսեղյան Տ. Կ. , նշված աշխատությունը, էջ 5:

[37] Տե՛ս Բարսեղյան Տ. Կ. , նույն տեղում, էջ 5:

[38] Տե՛ս Прокаев А. В., նշված աշխատությունը, էջեր 19-20:

որովհետև մարդու աշխատանքի արդյունքում չի ստեղծվել[39]: Ուստի, ընդերքը չի կարող ենթարկվել ապրանքադրամական գնահատման և չի մասնակցում քաղաքացիական շրջանառությանը: Իսկ գույքային բնույթ ձեռք են բերում միայն բնական ռեսուրսները, որոնք արդյունահանվում են ընդերքից, և որոնց արժեքում արտացոլված է մարդու աշխատանքը[40]:

Ն.Դ. Եգորովը, խոսելով քաղաքացիական օրենսդրության կարգավորման շրջանակի ընդլայնման մասին, պնդում էր, որ հողը, դրա ընդերքը և այլ բնական օբյեկտները մտնում են քաղաքացիական շրջանառության մեջ և դառնում քաղաքացիական իրավունքի գործարքների առարկա[41]:

Ն.Բ. Մուխիտդինովը, չնայած քննադատում էր այն տեսակետը, որ ընդերքը կարող է լինել գործարքների առարկա, կարծում էր, որ ընդերքը սեփականության իրավունքի օբյեկտ է, իսկ ընդերքօգտագործման իրավահարաբերությունները՝ ինքնուրույն գույքային հարաբերություններ[42:]

Տ.Ե. Աբովան և Ա. Յու. Կաբալկինը նշում էին, որ բնական ռեսուրսների տիրապետման, օգտագործման և տնօրինման հարաբերությունների վրա քաղաքացիական իրավունքի ընդհանուր նորմերը, ներառյալ սեփականության իրավունքը, պետք է կիրառվեն, եթե դրանք ներառված են քաղաքացիական շրջանառության մեջ[43]:

Ամփոփելով ընդերքօգտագործման հարաբերությունների գույքային բնույթի վերաբերյալ ներկայացված տեսական բանավեճերը՝ գտնում ենք, որ ընդերքօգտագործման ոլորտում ծագում են գույքային հարաբերություններ, որոնք ենթակա են քաղաքացիաիրավական կարգավորման: Ինչպես վերը նշվել է, գույքային հարաբերությունների ապրանքադրամական բնույթը հիմնավորելու համար բավարար է դրանց կա՛մ ապրանքային, կա՛մ դրամական բնույթի լինելը: Ընդերքօգտագործման հարաբերությունները ունեն և՛ դրամական, և՛ ապրանքային բնույթ: Ընդերքօգտագործման հարաբերությունների դրամական բնույթը պայմանավորված է ընդերքօգտագործման վճարովիության սկզբունքով (Օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետ, 10-րդ հոդված)[44]: Ընդերքօգտագործման հարաբերությունների դրամական բնույթով պայմանավորված քաղաքացիաիրավական կարգավորման անհրաժեշտությունը արտացոլվել է նաև Սահմանադրական դատարանի 18.07.2009 թվականի ՍԴՈ-816 որոշման[45] մեջ և վերահաստատվել՝ 12.05.2020 թվականի ՍԴՈ-1530 որոշմամբ[46]: Մանսավորապես Սահմանա-

[39] Տե՛ս նույն տեղում:

[40] Տե՛ս Чубуков Г.В., Горные отношения как предмет регулирования российского горного права // Материалы заседания круглого стола по теме: «Горное право России». М., 1995, с. 15-17:

[41] Տե՛ս Гражданское право. Том. 1. Учебник / Под ред. А.П. Сергеева, Ю.К. Толстого. М., 2000, с. 6, 13-14:

[42] Տե՛ս Прокаев А. В., նշված աշխատությունը, էջ 20:

[43] Տե՛ս Комментарий к Гражданскому кодексу Российской Федерации: Часть вторая. В 3 т. Т. 2: Комментарий к Гражданскому кодексу Российской Федерации: Комментарий к Гражданскому кодексу Российской Феде рации: Часть вторая / Под ред. Т.Е. Абовой и А.Ю. Кабалкина. М., 2004, с. 249:

[44] Տե՛ս Mackey, Maurice, Ownership and Taxation of Natural Resources, 34 Dicta 411 (1957), p. 417:

[45] Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի 18.07.2009 թվականի թիվ ՍԴՈ-816 որոշումը:

[46] Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի 12.05.2020 թվականի թիվ ՍԴՈ-1530 որոշումը:

դրական դատարանը նշված որոշումներով արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշմամբ. *«Օրենսդիրը բնօգտագործման վճար սահմանելիս՝ այն դիտարկել է որպես պետության սեփականությունը հանդիսացող սահմանափակ ռեսուրսի՝ ընդերքի օգտագործման դիմաց տրվող վարձավճար, և վերջինիս վճարման հետ կապված իրավահարաբերություններին տվել է քաղաքացիաիրավական հարաբերություններին բնորոշ իրավակարգավորում, որտեղ խնդրո առարկա վճարը դիտարկել է որպես քաղաքացիաիրավական հարաբերությունների տարր»:*

Ինչ վերաբերում է ընդերքօգտագործման հարաբերությունների ապրանքային բնույթին, ապա գտնում ենք, որ դրա մասին է վկայում ընդերքօգտագործման ոլորտում առաջացող քաղաքացիական իրավունքների օբյեկտների (օգտակար հանածոներ, ընդերքօգտագործման իրավունք և այլն) իրացվելիությունը՝ քաղաքացիական շրջանառությանը դրանց մասնակցությունը:

Եթե փորձենք ուրվագծել ընդերքօգտագործման ոլորտում ծագող և քաղաքացիաիրավական կարգավորման ենթակա գույքային հարաբերությունների շրջանակը, ապա կարող ենք նշել, որ դրանք են՝ ընդերքօգտագործման ոլորտում քաղաքացիական իրավունքների օբյեկտների նկատմամբ սեփականության իրավունքը, այլ իրային և պարտավորական իրավունքները, ընդերքօգտագործման ոլորտում քաղաքացիական իրավունքների օբյեկտների շրջանառությունը (օրինակ՝ ընդերքօգտագործման իրավունքի փոխանցումը, գրավի առարկա հանդիսացող ընդերքօգտագործման իրավունքի հարկադիր օտարումը և այլն), ընդերքօգտագործման պայմանագրային հարաբերությունները, այդ թվում՝ կնքվող այլ քաղաքացիաիրավական պայմանագրերը, ընդերքօգտագործողի քաղաքացիաիրավական պատասխանատվությունը[47]:

Չնայած այն հանգամանքին, որ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված են ընդերքօգտագործման քաղաքացիաիրավական կարգավորման նախադրյալներ, ընդերքօգտագործումը գործարարական գործունեության ոլորտ է, և ընդերքօգտագործման հարաբերությունները ունեն գույքային բնույթ՝ ՀՀ ընդերքի մասին օրենսգիրքը ընդերքօգտագործողի և պետության հարաբերությունները կարգավորում է առավելապես վարչաիրավականթույլատվական նորմերով և կարգավորման իմպերատիվ մեթոդով, իսկ քաղաքացիական իրավունքի և կարգավորման դիսպոզիտիվ մեթոդի կիրառումը կարելի է հանդիպել որոշ դեպքերում միայն:

Այսպես, ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի համակարգային ուսումնասիրության արդյունքում պարզ է դառնում, որ ՀՀ օրենդրությունը շատ հաճախ «անհարկի» սահմանափակում է ընդերքօգտագործման հարաբերությունների նկատմամբ կարգավորման դիսպոզիտիվ մեթոդի կիրառումը: Մասնավորապես, քաղաքացիական իրավունքի առանցքային սկզբունքներից մեկի՝ պայմանագրի ազատության սկզբունքի կիրառությունը ընդերքօգտագործման հարաբերություններում սահմանափակված է, քանի որ պետությունն է սահմանում ընդերքօգտագործման պայմանագրերի (Օրենսգրքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետ), ընդերքօգտագործողների և աշխատողների միջև կնքվող աշխատանքային պայմանագրերի

[47] Տե՛ս Прокаев А. В., նշված աշխատությունը, էջ 22:

օրինակելի ձևերը (Օրենսգրքի 17-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետ), ինչի արդյունքում ընդերքօգտագործողը զրկվում է պայմանագրի ազատության սկզբունքի մասը կազմող պայմանագրի պայմանների ազատ ընտրության իրավունքից: Օրենսգրքով դիսպոզիտիվ մեթոդի սահմանափակման մեկ այլ օրինակ է ընդերքի միևնույն տեղամասի օգտագործման համար երկու կամ ավելի անձանց կողմից դիմում ներկայացնելու դեպքը, որպիսի պարագայում պետության՝ կոնտրագենտի ընտրության իրավունքը սահմանափակված է, քանի որ երկու կամ ավելի անձանց կողմից ընդերքի միևնույն տեղամասի համար ընդերքի երկրաբանական ուսումնասիրության իրավունք հայցելու դեպքում պետությունը պարտավոր է նախապատվություն տալ այն ընդերքօգտագործողին, որի դիմումն առաջինն է գրանցվել (Օրենսգրքի 40-րդ հոդվածի 5-րդ մաս), իսկ օգտակար հանածոյի արդյունահանման իրավունք հայցելու դեպքում նույն կանոնը գործում է արտոնյալ դիմումատուի բացակայության դեպքում (Օրենսգրքի 51-րդ հոդվածի 10-րդ մաս): Հատկանշական է, որ Օրենսգրքով կարգավորման դիսպոզիտիվ մեթոդի սահմանափակում նախատեսող *«Ով առաջինն է դիմում, նա առաջինն է ստանում:»* սկզբունքը խնդրահարույց է դիտարկվել ՀՀ մրցակցության պաշտպանության հանձնաժողովի կողմից այն պատճառաբանությամբ, որ կարող է սահմանափակել տնտեսական մրցակցությունը, քանի որ չի ստեղծում հավասար պայմաններ տվյալ տեղամասում ընդերքօգտագործում իրականացնել ցանկացող բոլոր կազմակերպությունների համար[48]:

Ընդերքօգտագործման հարաբերությունների քաղաքացիաիրավական կարգավորման շրջանակում ընդերքօգտագործման իրավունքի իրավական բնույթի հիմնահարցը.

Տեսական գրականության մեջ և իրավակիրառ պրակտիկայում ընդերքօգտագործման ոլորտում քաղաքացիաիրավական կարգավորման ենթակա հարաբերությունների տարանջատման և կարգավորման դիսպոզիտիվ մեթոդի կիրառման շրջանակը որոշելու համար էական նշանակություն ունեցող հաջորդ հարցը ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 3-րդ հոդվածով սահմանված ընդերքօգտագործման իրավունքի **(իրային կամ պարտավորական)** բնույթի հարցն է[49]: Հարկ է նշել, որ ներպետական օրենսդրությունը չի տալիս այս հարցի պատասխանը: Մինչդեռ, ընդերքօգտագործման իրավունքի իրային կամ պարտավորական բնույթը պարզելը հատկապես կարևոր է երկու պատճառով: Նախ, ընդերքօգտագործողի մոտ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ընդերքօգտագործման իրավունքի

[48] Տե՛ս ՀՀ Մրցակցության պաշտպանության հանձնաժողով (նախկինում՝ Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով), «Հանքարդյունաբերության ոլորտում իրականացված ուսումնասիրության արդյունքները», էջ 12:

[49] Տե՛ս Левочко В. В., Право пользования недрами как объект гражданских прав: теория и практика // Власть и управление на Востоке России. 2017. № 3 (80), DOI 10.22394/1818-4049-2017-80-3-173-181, с. 183–191:

Տե՛ս նաև Hudson, B., Rosenbloom, J. 2013. "Uncommon Approaches to Commons Problems: Nested Governance Commons and Climate Change". Hastings L .J. (Hastings Law Journal) 64(1273), (Hudson and Rosenbloom 2013), p. 1273-1341:

ծագման իրավաբանական փաստով են ընդերքօգտագործողի և պետության միջև առաջանում ընդերքօգտագործման հարաբերությունները (այդ թվում՝ ընդերքօգտագործողի գույքային և պարտավորական իրավունքները), որոնց հիման վրա էլ ընդերքօգտագործման ոլորտում պետք է կիրառվի քաղաքացիաիրավական կարգավորումը՝ քաղաքացիական ինստիտուտների կիրառումը ընդերքօգտագործման իրավունքի ծագման, փոփոխման, դադարման և ընդերքօգտագործողի իրավունքների պաշտպանության հարաբերությունների նկատմամբ[50]: Երկրորդ, ընդերքօգտագործման իրավունքի բնույթը որոշելը կարևոր է նաև ընդերքօգտագործման իրավունքի՝ որպես քաղաքացիական իրավունքների առանձին օբյեկտի իրավական ռեժիմի հետ կապված հարցերը պարզաբանելու համար[51]:

Քաղաքացիական իրավունքում իրային իրավունքի հիմնական տարբերությունը պարտավորական իրավունքից կայանում է նրանում, որ իրային իրավունքի սուբյեկտները իրավահարաբերության օբյեկտների՝ իրերի նկատմամբ իրենց իրավունքները իրականացնում են սեփական հայեցողությամբ, առանց երրորդ անձանց թույլտվության[52]: Իրային իրավունքին ներհատուկ են «բացարձակ իրավունքը», երբ իրավունքին համապատասխանում է բոլորի և յուրաքանչյուրի պարտականությունը՝ ձեռնպահ մնալու այդ իրավունքի իրականացումը խախտող կամ խոչընդոտող արարքներից, և «հետևելու իրավունքը», երբ իրավունքի կրողը պահպանում է իր իրավունքն անգամ այն դեպքում, երբ իրը անցնում է այլ անձի սեփականության ներքո[53]: Իրային իրավունքի օբյեկտ կարող են լինել միայն անհատապես որոշվող իրերը[54]: Իրային իրավունքին բնորոշ է նաև պարտավորական և իրային իրավունքների միջև կոլիզիայի դեպքում իրային իրավունքին նախապատվությունը, ինչպես նաև միայն օրենքով («փակ շրջանակի») նախատեսված լինելու սկզբունքը[55]:

Պետք է նշել, որ ընդերքօգտագործման իրավունքի իրային կամ պարտավորական բնույթի լինելու վերաբերյալ տեսական գրականության մեջ առկա են տարբեր մոտեցումներ: Մասնավորապես, հեղինակների մի մասի կարծիքով *(Գ. Լ. Կրասնյանսկի, Ա. Ն. Կուրսկի, Կ. Ն. Տրուբեցկոյ, Ն. Բ. Մուխիտդինով)* ընդերքօգտագործման իրավունքը պարտավորական իրավունք է, քանի որ ծագում է օրենդրությամբ նախատեսված իրավաբանական փաստակազմի (ընդերքօգ-

[50] Տե՛ս Савостьянов А. Г., Правовое регулирование предпринимательской деятельности в сфере недропользования, Москва 2011, 12.00.03, с. 68:

[51] Տե՛ս Krakoff, Ch. E., Sector licensing studies: mining sector (English). Washington, DC: World Bank.), p. 24. http://documents.worldbank.org/curated/en/867071468155129330 (մուտք՝ 15.02.2025թ.):

[52] Տե՛ս Բարսեղյան Տ. Կ. , նշված աշխատությունը, էջեր 396-397:

[53] Տե՛ս Ավետիսյան Վ. Դ. , Հռոմեական մասնավոր իրավունք Ուսումնական ձեռնարկ, Խմբ. ՝ Տ. Կ. Բարսեղյան- Եր.: Հեղինակային հրատ. ,, ԵՊՀ հրատ., 2015 թ., էջեր 49-50:

Տե՛ս նաև Բարսեղյան Տ. Կ. , նշված աշխատությունը, էջեր 396-397: Իրային իրավունքների վերաբերյալ մանրամասն տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ/12483/05/18 քաղաքացիական գործով 01.02.2023թ. որոշումը:

[54] Տե՛ս http://publishing.ysu.am/files/Sepakanutyan_Iravunq.pdf (մուտք՝ 01.08.2024թ.):

[55] Տե՛ս նույն տեղում:

տագործման պայմանագիր, թույլտվություն և այլն) առկայության հիմքով[56]: Մինչդեռ, հեղինակների մյուս մասը *(Ա.Վ. Սապոժնիկով, Մ. Կ. Սուլեյմենով և Բ. Դ. Կլյուկին, Յու. Տուկտարով)* գտնում է, որ ընդերքօգտագործման իրավունքն իրային իրավունք է[57]:

Այսպես, ըստ Ա.Վ. Սապոժնիկովի ընդերքօգտագործման իրավունքը իրային իրավունք է և դասվում է սահմանափակ իրային իրավունքների թվին[58]:

Ըստ Ն.Բ. Մուխիտդինովի, չնայած ընդերքօգտագործման իրավունքը պարտավորական իրավունք է, ընդերքօգտագործման հարաբերություններում ծագում են թե՛ իրային, թե՛ պարտավորական իրավունքներ[59]:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Մոլդովայում ընդերքօգտագործող կազմակերպությանն ընդերքօգտագործման իրավունքից զրկելու վերաբերյալ գործի շրջանակում կայացված վճռում[60] արձանագրել է, որ ընդերքօգտագործման իրավունքը սեփականության իրավունքի օբյեկտ է, ուստի դրա նկատմամբ կիրառելի է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածը:

Վերը նշված տեսական և գործնական մեկնաբանությունների լույսի ներքո գտնում ենք, որ ընդերքօգտագործման իրավունքն ունի իրային-իրավունքին վերագրվող բոլոր հատկանիշները:

Այսպես, ընդերքօգտագործման իրավունքը **«բացարձակ բնույթ»** ունի[61], քանի որ անբաժանելի է և կարող է պատկանել միայն մեկ իրավաբանական անձի (Օրենսգրքի 20-րդ հոդվածի 2-րդ մաս): Ընդերքօգտագործողն ունի ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ընդերքօգտագործման իրավունքը շրջանառելու՝ օտարելու (Օրենսգրքի 22-րդ հոդված), գրավ դնելու (Օրենսգրքի 28-րդ հոդված) իրավունք, իսկ շրջանառունակությունն («in commercio») իրային իրավունքին բնորոշ հատկանիշ է[62]: Այսինքն, ի տարբերություն, ընդերքի, ընդերքօգտագործման իրավունքը շրջանառությունից հանված օբյեկտ չէ. տվյալ դեպքում ընդերքօգտագործողը ունի ընդերքօգտագործման իրավունքը ՀՀ օրենսդրության սահմաններում տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու, ինչպես նաև՝ բոլորի, այդ թվում՝ **պետության** ոչ իրավաչափ միջամտությունից պաշտպանելու իրավունք: Ընդերքօգտագործման իրավունքի «բացառիկ» բնույթը ամրագրված է նաև

[56] Տե՛ս Савостьянов А. Г., նշված աշխատությունը, էջ 68:

[57] Տե՛ս նույն տեղում, էջեր 68-69:

[58] Տե՛ս Сапожников А. В., Правовой режим перехода права пользования недрами в Российской Федерации: дисс. канд. юрид. наук 12.00.06. Москва, 2006, с. 25:

[59] Տե՛ս Мухитдинов Н.Б., Основы горного права. Алма-Ата. 1983, с. 66:

[60] Տե՛ս GOSPODĂRIA ŢĂRĂNEASCĂ CHIPER TERENTI GRIGORE-ն ընդդեմ Մոլդովայի Հանրապետության գործով ՄԻԵԴ-ի 2020 թվականի հունիսի 2-ի վճիռը (գանգատ՝ 71130/13), 24-րդ և 28-րդ կետեր. https://hudoc.echr.coe (մուտք՝ 01.02.2025թ.):

[61] Տե՛ս L.E.K., Mining Law: Jurisdiction of Land Department to Declare Mining Claims Invalid, California Law Review, Vol. 9, No. 5 (Jul., 1921), pp. 433-435. https://www.jstor.org/stable/3473647 (մուտք՝ 16.02.2025թ.):

[62] Տե՛ս Ավետիսյան Վ. Դ. , նշված աշխատությունը, էջ 49:

ՀՀ ընդերքի մասին օրենսգրքում (Օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետ, 21-րդ հոդված):

Ինչ վերաբերում է **«հետևելու իրավունքին»,** ապա նշենք, որ ընդերքօգտագործման իրավունքը անխզելիորեն կապված է ընդերքի տեղամասի հետ: Սակայն, այս դեպքում ընդերքի տեղամասի սեփականատիրոջ փոփոխությունը ապրիորի բացառված է, քանի որ ընդերքի պետության բացառիկ սեփականությունն է (ՀՀ Սահմանադրության 10-րդ հոդվածի 2-րդ մաս, Օրենսգրքի 11-րդ հոդվածի 2-րդ մաս): Այնուամենայնիվ, ընդերքօգտագործման իրավունքը սերտորեն կապված է ընդերքի նկատմամբ պետության բացառիկ սեփականության իրավունքի հետ և ածանցված է դրանից:

Ընդերքօգտագործման իրավունքի օբյեկտը **անհատապես որոշվող իր է** ("species"), քանի որ ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման փաստաթղթերում (ընդերքօգտագործման թույլտվություն, պայմանագիր, լեռնահատկացման ակտ և այլն) պարտադիր նշվում են կոնկրետ ընդերքի տեղամասի կոորդինատները (Օրենսգրքի 37-րդ, 53-րդ հոդվածներ), որի նկատմամբ ընդերքօգտագործողը ձեռք է բերում ընդերքօգտագործման իրավունք:

Բացի այդ, որպես քաղաքացիական իրավունքների օբյեկտ, ընդերքօգտագործման իրավունքն ունի **նյութական արժեք** ("corporales"), ինչը նույնպես իրային իրավունքներին բնորոշ հատկանիշ է[63]:

Հետևաբար, մեր կարծիքով **ընդերքօգտագործման իրավունքն ունի իրային-իրավական բնույթ:** Ընդերքօգտագործողի և անորոշ թվով երրորդ անձանց միջև ծագող հարաբերություններում ընդերքօգտագործողի իրային իրավունքը ենթադրում է բոլորի (այդ թվում՝ պետության) պարտականությունը՝ ձեռնպահ մնալու ընդերքօգտագործման իրավունքի ցանկացած խախտումից, ինչպես նաև չխոչընդոտելու այդ իրավունքի իրացմանը:

Միաժամանակ պետք է նշել, որ ընդերքօգտագործման իրային իրավունքի տրամադրման հիմքով ընդերքօգտագործողի մոտ ծագում են թե՛ իրային, թե՛ պարտավորական իրավունքներ[64]: Մասնավորապես, իրենց բնույթով պարտավորական են ընդերքօգտագործողի և պետության միջև ծագող պայմանագրային հարաբերությունները: Ընդ որում, կախված տրամադրված ընդերքօգտագործման իրավունքի նպատակից (օգտակար հանածոների արդյունահանման կամ երկրաբանական ուսումնասիրության), ընդերքօգտագործողի և պետության միջև ծագող իրային և պարտավորական իրավահարաբերությունների բովանդակությունը և ծավալը տարբերվում է:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ընդերքօգտագործման իրավունքն ունի իրային իրավունքի բոլոր հատկանիշները՝ առաջարկում ենք ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 170-րդ հոդվածի 1-ին մասում կատարել համապատասխան լրացում և

[63] Տե՛ս Ավետիսյան Վ. Դ. , նշված աշխատությունը, էջ 49:
Տե՛ս նաև Բարսեղյան Տ. Կ, նշված աշխատությունը, էջեր 396-397:
[64] Տե՛ս Савостьянов А. Г., նշված աշխատությունը, էջեր 68-69:

իրային իրավունքների շարքում նախատեսել նաև ընդերքօգտագործման իրավունքը՝ որպես սահմանափակ իրային իրավունքի առանձին տեսակ:

Մեր կարծիքով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքում ընդերքօգտագործման իրավունքի՝ որպես իրային իրավունքի օրենսդրական ամրագրման դեպքում հնարավոր կլինի ոչ միայն երաշխավորել ընդերքօգտագործողի իրավունքների պաշտպանությունը գույքային-իրավական բնույթի հայցերով (վինդիկացիոն և նեգատոր), այլև ապահովել ընդերքօգտագործման իրավունքի ծագման, փոփոխման, դադարման հարաբերությունների նկատմամբ քաղաքացիական իրավունքի ինստիտուտների արդյունավետ կիրառումը՝ այդ թվում ընդերքօգտագործման ոլորտում ծագող հողային հարաբերությունների կարգավորման դեպքում: Հատկանշական է, որ ընդերքօգտագործման իրավունքն օրենսդրական մակարդակում որպես իրային իրավունք է նախատեսված մի շարք պետությունների օրենսդրություններով[65] (օրինակ՝ Չիլի[66], Ղազախստան[67], Ֆինլանդիա[68], Ավստրալիա[69]): Իսկ Գերմանիայի Դաշնային Հանրապետության ընդերքօգտագործման ոլորտը կարգավորող օրենսդրությամբ ընդերքօգտագործման իրավունքից բխող հայցապահանջների վրա *mutantis mutandis* տարածվում է Գերմանիայի քաղաքացիական օրենսգրքով սեփականության իրավունքի պաշտպանության իրավական ռեժիմը ("Federal Mining Act"[70]): Ելնելով ողջ վերոգրյալից՝ առաջարկում ենք ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 170-րդ հոդվածի 1-ին մասում կատարել համապատասխան լրացում և իրային իրավունքների շարքում նախատեսել նաև ընդերքօգտագործման իրավունքը՝ որպես սահմանափակ իրային իրավունքի առանձին տեսակ:

Եզրակացություն

Սույն հոդվածում ընդերքօգտագործման հարաբերությունների քաղաքացիաիրավական կարգավորման նշանակության հետազոտության արդյունքում մեր հիմնական եզրահանգումներն են՝

1. Ընդերքօգտագործման ոլորտում ծագող հարաբերությունների հանրային-իրավական կարգավորումից զատ առանցքային է դրանց քաղաքացիաիրավական կարգավորումը:

Հանրային իրավունքի նորմերով են կարգավորվում ընդերքօգտագործման ոլորտում հանրային շահերի (հարկային, բնապահպանական, բնակչության

[65] Տե՛ս Krakoff Ch. E., նշված աշխատությունը, էջեր 15,32:

[66] Տե՛ս The Chilean Constitution, հոդված 19 (24). https://faolex.fao.org/docs/pdf/chi127261E.pdf (մուտք՝ 06.01.2025թ.):

[67] Տե՛ս *Code of the Republic of Kazakhstan of December 27, 2017 No. 125-VI ZRK* "About Subsoil and Subsurface Use" (as amended on 21.05.2024), հոդված 17. https://law.asia/kazakhstan-subsoil-contract-sytem/ (մուտք՝ 06.01.2025թ.):

[68] Տե՛ս Sutcliffe S., Mining Law: Jurisdictional Comparisons. Thomson Reuters; 2012, p. 197:

[69] Տե՛ս Tarrant J., Ownership of Mining Product, Tailings and Minerals, 24 Australian Resources & Energy L.J. 321 (2005), p. 322:

[70] Տե՛ս Federal Mining Act of 13 August 1980 (Federal Law Gazette I p. 1310), last amended by Article 1 of the Act of 14 June 2021 (Federal Law Gazette I, p. 1760), հոդված 8. https://www.gesetze-im-internet.de/englisch_bbergg/englisch_bbergg.html (մուտք՝ 14.02.2025թ.):

առողջության պահպանության, ընդերքի ողջամիտ և համալիր օգտագործման) պաշտպանության հետ կապված հարաբերությունները, որոնք ենթադրում են պետության միակողմանի կամահայտնության դրսևորում:

Քաղաքացիական իրավունքի նորմերով են կարգավորվում ընդերքօգտագործման ոլորտում ծագող այն հարաբերությունները, որոնք հիմնված են կողմերի կամքի ինքնավարության և գույքային ինքնուրույնության վրա (ընդերքօգտագործման ոլորտում քաղաքացիական իրավունքների օբյեկտների նկատմամբ սեփականության իրավունքը, այլ իրային և պարտավորական իրավունքները, ընդերքօգտագործման ոլորտում քաղաքացիական իրավունքների օբյեկտների շրջանառությունը, ընդերքօգտագործման ոլորտում ծագող պայմանագրային հարաբերությունները, այդ թվում՝ կնքվող այլ քաղաքացիաիրավական պայմանագրերը, ընդերքօգտագործողի քաղաքացիաիրավական պատասխանատվությունը և այլն):

2. Ընդերքօգտագործման հարաբերությունների հիմքում ընկած է ընդերքի նկատմամբ **պետության բացառիկ սեփականության իրավունքը**, որի համալիր կարգավորման հիմքում քաղաքացիական իրավունքի նորմերն են: Սահմանադրության 10-րդ հոդվածի համակարգային մեկնաբանությունից բխում է, որ ընդերքի նկատմամբ պետության բացառիկ սեփականության իրավազորությունների ծավալը մեկնաբանելու համար ելակետային պետք է լինեն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 163-րդ հոդվածի դրույթները:

3. Ընդերքօգտագործողի և պետության միջև ծագում են **ապրանքադրամական բնույթի գույքային հարաբերություններ** (ընդերքօգտագործման ոլորտում քաղաքացիական իրավունքների օբյեկտների նկատմամբ սեփականության իրավունք, այլ իրային և պարտավորական իրավունքներ, ընդերքօգտագործման պայմանագրային հարաբերություններ և այլն), որոնք պետք է ենթարկվեն քաղաքացիաիրավական կարգավորման:

4. Ընդերքօգտագործումը **գործարարարական գործունեության առանձին ոլորտ է,** իսկ գործարարական գործունեությունը Հայաստանի Հանրապետությունում կարգավորվում է քաղաքացիական օրենսդրությամբ: Ընդ որում, դրական տնտեսական ազդեցության հասնելը (շահույթ ստանալը) թե՛ պետության, թե՛ ընդերքօգտագործողի հիմնական նպատակն է:

5. Ընդերքօգտագործման իրավունքն **իրային իրավունք է:** Ընդերքօգտագործման իրավունքը բացարձակ բնույթի է, ունի առանձին նյութական արժեք, անխզելիորեն կապված է ընդերքի նկատմամբ պետության սեփականության իրավունքի հետ, ընդերքօգտագործման իրավունքի օբյեկտը՝ ընդերքի տեղամասը, անհատապես որոշվող իր է: Նշված հատկանիշների համակցությունը ընդերքօգտագործման իրավունքը դարձնում են իրային իրավական բնույթի, ինչը ընդերքօգտագործողի և անորոշ թվով երրորդ անձանց հարաբերություններում ենթադրում է բոլորի (այդ թվում՝ պետության) պարտականությունը՝ ձեռնպահ մնալու ընդերքօգտագործման իրավունքի ցանկացած խախտումից, ինչպես նաև չխոչընդոտելու այդ իրավունքի իրացմանը:

6. Առաջարկվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 170-րդ հոդվածի 1-ին մասում կատարել համապատասխան լրացում և իրային իրավունքների շարքում նախատեսել նաև ընդերքօգտագործման իրավունքը՝ որպես սահմանափակ իրային իրավունքի առանձին տեսակ: ՀՀ քաղաքացիական օրենսգրքում ընդերքօգտագործման իրավունքի՝ որպես իրային իրավունքի օրենսդրական ամրագրումն ունի կարևոր գործնական նշանակություն, քանի որ հնարավորություն կտա ոչ միայն երաշխավորել ընդերքօգտագործողի իրավունքների պաշտպանությունը գույքային-իրավական բնույթի հայցերով (վինդիկացիոն և նեգատոր), այլև ապահովել ընդերքօգտագործման իրավունքի ծագման, փոփոխման, դադարման հարաբերությունների նկատմամբ քաղաքացիական իրավունքի ինստիտուտների արդյունավետ կիրառումը:

Գրականության ցանկ (reference list, список литературы)

1. ՀՀ Սահմանադրություն, ընդունվել է 06.12.2015թ., ուժի մեջ է մտել 22.12.2015թ.: ՀՀՊՏ 2015.12.21/Հատուկ թողարկում Հոդ. 1118:

RA Constitution, adopted on 06.12.2015, entered into force on 22.12.2015. RA Official Bulletin 2015.12.21/Special Issue Art. 1118:

2. ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, ընդունվել է 05.05.1998թ., ուժի մեջ է մտել 01.01.1999թ., ՀՀՊՏ 1998.08.10/17(50):

RA Civil Code, adopted on 05.05.1998, entered into force on 01.01.1999, RA Official Bulletin 1998.08.10/17(50):

3. ՀՀ ընդերքի մասին օրենսգիրք, ընդունվել է 28.11.2011թ., ուժի մեջ է մտել 01.01.2012թ.: ՀՀՊՏ 2011.12.21/69(872) Հոդ.1661:

RA Subsoil Code, adopted on 28.11.2011, entered into force on 01.01.2012, RA Official Bulletin 2011.12.21/69(872) Art. 1661:

4. «Պետական գույքի կառավարման մասին» ՀՀ օրենք, ընդունվել է 20.11.2014թ., ուժի մեջ է մտել 27.12.2014թ.: ՀՀՊՏ 2014.12.17/69(1082) Հոդ.1152:

RA Law "On State Property Management," adopted on 20.11.2014, entered into force on 27.12.2014, RA Official Bulletin 2014.12.17/69(1082) Art. 1152.

5. «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք, ընդունվել է 21.03.2018թ., ուժի մեջ է մտել՝ 07.04.2018: ՀՀՊՏ 2018.03.28/23(1381) Հոդ.373:

RA Law "On Normative Legal Acts," adopted on 21.03.2018, entered into force on 07.04.2018. RA Official Bulletin 2018.03.28/23(1381) Art. 373:

6. GOSPODĂRIA ŢĂRĂNEASCĂ CHIPER TERENTI GRIGORE-ն ընդդեմ Մոլդովայի գործով ՄԻԵԴ-ի 02.06.2020 թ. վճիռը (գանգատ՝ 71130/13) https://hudoc.echr.coe (մուտք՝ 01.02.2025թ.):

ECHR case GOSPODĂRIA ŢĂRĂNEASCĂ CHIPER TERENTI GRIGORE v. The Republic of Moldova (Date of judgement: 02.06.2020, Application 71130/13) https://hudoc.echr.coe (accessed 01.02.2025).

7. ՀՀ Սահմանադրական դատարանի 18.07.2009 թվականի թիվ ՍԴՈ-816 որոշումը:

Decision No. SDO-816 of the Constitutional Court of the RA dated 18.07.2009.

8. ՀՀ Սահմանադրական դատարանի 12.05.2020 թվականի թիվ ՍԴՈ-1530 որոշումը:

Decision No. SDO-1530 of the Constitutional Court of the RA dated 12.05.2020.

9. ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ/12483/05/18 քաղաքացիական գործով 01.02.2023թ. որոշումը:

Decision of the Court of Cassation of the RA on civil case No. VD/12483/05/18 dated 01.02.2023.

10. ՀՀ վարչական դատարանի թիվ ՎԴ/3371/05/20 վարչական գործով 08.12.2020թ. վճիռը:

Judgment of the Administrative Court of the RA on administrative case No. VD/3371/05/20 dated 08.12.2020

11. ՀՀ կառավարության 2023 թվականի մայիսի 11-ի «Հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների պլանը (մինչև 2035 թվականը) հաստատելու մասին» N 730-Լ որոշումը: Ընդունվել է 11.05.2023: Ուժի մեջ է մտել 12.05.2023:

RA Government Decree N 730-L on "On Approving Mining Sector Development Strategy and the Action Plan Derived from It (Until 2035) dated 11.05.2023, adopted on 11.05.2023, entered into force on 12.05.2023.

12. The Chilean Constitution. https://faolex.fao.org/docs/pdf/chi127261E.pdf (accessed 06.01.2025):

13. Code of the Republic of Kazakhstan of December 27, 2017 No. 125-VI ZRK "About Subsoil and Subsurface Use" (as amended on 21.05.2024) https://law.asia/kazakhstan-subsoil-contract-sytem/ (accessed 06.01.2025):

14. Federal Mining Act of 13 August 1980 (Federal Law Gazette I p. 1310), last amended by Article 1 of the Act of 14.06.2021 (Federal Law Gazette I, p. 1760) https://www.gesetze-im-internet.de/englisch_bbergg/englisch_bbergg. html (accessed 14.02.2025թ.):

15. Ավետիսյան Վ. Դ., Հռոմեական մասնավոր իրավունք Ուսումնական ձեռնարկ, Խմբ.՝ Տ.Կ. Բարսեղյան- Եր.: Հեղինակային հրատ.,, ԵՊՀ հրատ., 2015թ.:

Avetisyan V. D., Roman Private Law Study Guide, Ed. by T. K. Barseghyan – Yer.: Author's Publishing, YSU Press, 2015.

16. Բարսեղյան Տ. Կ., Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք, առաջին մաս (չորրորդ հրատարակչություն), Երևանի պետ. համալսարան, Երևան, Տիգրան Մեծ հրատ.:

Barseghyan T. K., Civil Law of the Republic of Armenia, Part One (Fourth Edition), YSU, Yerevan, Tigran Mets Publishing.

17. Գեղամյան Օ. Մ., Բնական ռեսուրսների նկատմամբ սեփականության իրավունքի որոշ առանձնահատկությունները ՀՀ օրենսդրության մեջ և պրակտիկայում, Պետություն և իրավունք, Թիվ 1 (86) 2020թ.:

Geghamyan O. M., Some Features of The Right of Ownership to Natural Resources in The RA Legislation and Practice, State and Law, N 1 (86) 2020.

18. Թևանյան Ս. Վ., Կոնցեսիայի պայմանագրի իրավական կարգավորումը, Մենագրություն, Երևան, ԵՊՀ հրատ., 2016:

Tevanyan S. V., Legal Regulation of Concession Agreements, Monograph, Yerevan, YSU Press, 2016.

19. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ/ ընդհանուր խմբագրությամբ Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի. - Ե.: «Իրավունք», 2010:

Commentaries on the Constitution of the Republic of Armenia / General editing by G. Harutyunyan, A. Vagharchyan, Yer. “Right” 2010.

20. ՀՀ արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության (ԱՃՐԹՆ) զեկույց (2016-2017թթ.), 2018թ. «Էրնսթ ընդ Յանգ» ՓԲԸ. https://www.eiti.am/hy/annual-reports/2020 (մուտք՝ 10.02.2025թ.)

RA Extractive Industries Transparency Initiative (EITI) report (2016-2017), 2018, “Ernst and Young” LLC. https://www.eiti.am/hy/annual-reports/2020 (accessed 10.02.2025).

21. Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի (նախկինում՝ Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով) «Հանքարդյունաբերության ոլորտում իրականացված ուսումնասիրության արդյունքները». https://competition.am/hy/2021/01/22/ (մուտք՝ 01.08.2024թ.):

“Results of the Study Conducted in the Mining Industry” by the Competition Protection Commission (formerly, the State Commission for the Protection of Economic Competition). https://competition.am/hy (accessed 01.08.2024թ.):

22. Гражданское право. Том. 1. Учебник / Под ред. А.П. Сергеева, Ю.К. Толстого. М., 2000

Civil Law. Vol. 1. Textbook / Edited by A.P. Sergeev, Y.K. Tolstoy. M, 2000.

23. Гражданское право: В 2 т. Том 1: Учебник / Отв. ред. Е.А. Суханов.

Civil Law: 2 Vols. Vol. 1: Textbook / Chief Editor E.A. Sukhanov.

24. Елюбаев Ж. С., Проблемы правового регулирования недропользования: отечественный опыт и зарубежная практика. Монография, Алматы, 2010.

Yelyubaev Zh. S., Issues of Legal Regulation of Subsoil Use: Domestic Experience and International Practice. Monograph, Almaty, 2010.

25. Ихсанов Е. У., Пределы гражданско-правового регулирования отношений в сфере недропользования, Вестник Института законодательства и правовой информации Республики Казахстан. 2020. №3 (61). https://cyberleninka.ru/article (մուտք՝ 09.06.2024):

Ikhsanov E. U., Limits of Civil-Law Regulation of Relations in the Field of Subsoil Use, Bulletin of the Institute of Legislation and Legal Information of the Republic of Kazakhstan. 2020. No. 3 (61). https://cyberleninka.ru/article (accessed 09.06.2024):

26. Каланда Л. В., Проблемы правового регулирования (предпринимательской) деятельности в нефтяной отрасли. М.: ИГЛ АН РФ. 2004.

Kalanda L. V., Issues of Legal Regulation (of entrepreneurial) Activity in the Oil Industry. M.: IGL RAS, 2004.

27. Комментарий к Гражданскому кодексу Российской Федерации: Часть вторая. В 3 т. Т. 2: Комментарий к Гражданскому кодексу Российской Федерации: Комментарий к Гражданскому кодексу Российской Феде рации: Часть вторая / Под ред. Т. Е. Абовой и А. Ю. Кабалкина. М., 2004.

Commentary on the Civil Code of the Russian Federation: Part Two. 3 Vols. Vol. 2: Commentary on the Civil Code of the Russian Federation: Part Two / Edited by T.E. Abova and A. Yu. Kabalkin. Moscow, 2004.

28. Левочко В. В., Объекты гражданских прав в недропользовании, Москва, 2018, Федеральное государственное бюджетное образовательное учреждение высшего образования «Московский государственный юридический университет имени О. Е. Кутафина (МГЮА)».

Levochko V. V., Objects of Civil Rights in Subsoil Use, Moscow, 2018, Federal State Budgetary Educational Institution of Higher Education Moscow State Law University named after O.E. Kutafin (MSAL).

29. Левочко В. В., Право пользования недрами как объект гражданских прав: теория и практика // Власть и управление на Востоке России. 2017. № 3 (80), DOI 10.22394/1818-4049-2017-80-3-173-181.

Levochko V. V. The right to use subsoil as an object of civil rights: theory and practice // Power and Administration in the East of Russia. 2017. No. 3 (80). PP. 183–191. DOI 10.22394/1818-4049-2017-80-3-173-181.

30. Мухитдинов Н. Б., Основы горного права. Алма-Ата. 1983.

Mukhitdinov N. B., Fundamentals of Mining Law. Almaty. 1983.

31. Налетов К. И., Лицензионные и договорно-правовые формы пользования недрами в РФ и за рубежом, Научный руководитель Доктор юридических наук, профессор Б.Д.Клюкин.

Naletov K. I., Licensing and Contractual Legal Forms of Subsoil Use in the Russian Federation and Abroad, Scientific Supervisor: Doctor of Law, Prof. B.D. Klyukin.

32. Прокаев А. В., Гражданско-правовое регулирование отношений в сфере недропользования, 12.00.03, Саратов, 2010.

Prokaev A. V., Civil Law Regulation of Relations in the Field of Subsoil Use, 12.00.03, Saratov, 2010.

33. Савостьянов А. Г., Правовое регулирование предпринимательской деятельности в сфере недропользования, Москва 2011, 12.00.03.

Savostyanov A. G., Legal Regulation of Entrepreneurial Activity in the Field of Subsoil Use, Moscow, 2011, 12.00.03 - Civil Law; Commercial Law; Family Law; Private International Law.

34. Сапожников А. В., Правовой режим перехода права пользования недрами в Российской Федерации: дис. канд. юрид. наук 12.00.06. Москва, 2006.

Sapozhnikov A.V., Legal Regime of the Transfer of Subsoil Use Rights in the Russian Federation, PhD Dissertation in Law 12.00.06. Moscow, 2006.

35. Свиридова О. С., О содержание права государственной собственности на недра Российской Федерации, Закон. № 9, 2010.

Sviridova O. S., On the Content of the Right of State Ownership of Subsoil in the Russian Federation, Law. No. 9, 2010.

36. Суханов Е. А., Лекции о праве собственности, Москва, 1991.

Sukhanov E. A., Lectures on Property Law, Moscow, 1991.

37. Суханов Е. А., Проблемы правового регулирования отношений публичной собственности и новый Гражданский кодекс, Гражданский кодекс России. Проблемы. Теория. Практика, Международный центр финансово-экономического развития, 1998.

Sukhanov E. A., Issues of Legal Regulation of Public Property Relations and the New Civil Code, Civil Code of Russia. Issues. Theory. Practice, ICFED, 1998.

38. Чубуков Г. В., Горные отношения как предмет регулирования российского горного права // Материалы заседания круглого стола по теме: «Горное право России». М., 1995.

Chubukov G. V., Mining Relations as the Subject of Regulation in Russian Mining Law // Materials of the Round Table on the Topic: "Mining Law of Russia" Moscow, 1995.

44.Hudson, B., Rosenbloom, J. 2013. “Uncommon Approaches to Commons Problems: Nested Governance Commons and Climate Change”. Hastings L .J. (Hastings Law Journal) 64(1273) (Hudson and Rosenbloom 2013) .

45. Krakoff, Ch. E., Sector licensing studies: mining sector (English). Washington, DC: World Bank.), http://documents.worldbank.org (accessed 15.02.2025):

46. L.E.K., Mining Law: Jurisdiction of Land Department to Declare Mining Claims Invalid, California Law Review, Vol. 9, No. 5 (Jul., 1921). https://www.jstor.org/stable/3473647 (accessed 16.02.2025թ.):

47.Mackey, Maurice, Ownership and Taxation of Natural Resources, 34 Dicta 411 (1957).

48. Monteiro, N.B.R.; Bezerra, A.K.L.; Moita Neto, J.M.; Silva, E.A.d. Mining Law: In Search of Sustainable Mining. Sustainability 2021. Mining Law: In Search of Sustainable Mining (accessed 16.02.2025):

49. Sutcliffe S., Mining Law: Jurisdictional Comparisons. Thomson Reuters; 2012.

50. Tarrant J., Ownership of Mining Product, Tailings and Minerals, 24 Australian Resources & Energy L.J. 321 (2005).

51. van Bemmelen van Gent, Ernst, Aspects of Private Law (November 30, 2012), Bynkershoek Research Notes – Number 2012/3. https://ssrn.com/abstract=2977237 (accessed 10.02.2025).

52.Constitutional Framework of Subsoil Management: Issues and Perspectives (accessed 14.02.2025).

53. https://shippingandcommodityacademy.com (accessed 16.02.2025).

54. http://publishing.ysu.am/files/Sepakanutyan_Iravunq.pdf (accessed 01.08.2024).

55. https://www.redalyc.org/journal/279/27957591025/27957591025.pdf (accessed 16.02.2025).

Mane Markosyan
Adviser to the Prosecutor General of the Republic of Armenia, Ph.D. Student at Civil Law Chair, Faculty of Law, Yerevan State University

SIGNIFICANCE OF CIVIL LEGAL REGULATION OF SUBSOIL USE RELATIONS[71]

Abstract

In the Republic of Armenia, subsoil use relations are primarily regulated by public law norms, leading to inefficient legal regulation of the subsoil use sector and, among other things, reducing the sector's investment attractiveness.

The article discusses the theoretical and practical necessity of applying civil law norms to regulate subsoil use relations, the legal basis for civil-law regulation of subsoil use relations under domestic legislation, as well as the relations arising in the field of subsoil use that should be subject to civil-law regulation.

The author concludes that the right to use subsoil has a property right nature, which implies an obligation for all (including the State) to refrain from any violation of the right to use subsoil and to avoid obstructing the exercise of this right.

Keywords: the right to use subsoil; state property, civil law regulation; the relationship between subsoil use and business law; property relations; property right.

[71] The article was presented on 25.02.2025 and was reviewed on 23.06.2025.

Мане Маркосян
Советник Генерального прокурора Республики Армения,
аспирант кафедры гражданского права юридического
факультета Ереванского государственного университета

ЗНАЧЕНИЕ ГРАЖДАНСКО-ПРАВОВОГО РЕГУЛИРОВАНИЯ ОТНОШЕНИЙ НЕДРОПОЛЬЗОВАНИЯ[72]

Абстракт

В Республике Армения отношения недропользования в основном регулируются нормами публично-административного права, что приводит к неэффективному правовому регулированию в сфере недропользования и, среди прочего, снижению инвестиционной привлекательности отрасли.

В статье рассматриваются теоретическая и практическая необходимость применения норм гражданского права для регулирования отношений недропользования, правовые основания гражданско-правового регулирования отношений недропользования в национальном законодательстве, а также виды отношений, возникающих в сфере недропользования, которые должны подлежать гражданско-правовому регулированию.

Автор приходит к выводу, что право пользования недрами носит вещно-правовой характер, что означает обязанность всех (включая Государство) воздерживаться от любых нарушений права недропользования, а также не препятствовать осуществлению этого права.

Ключевые слова: право пользования недрами; государственная собственность; гражданско-правовое регулирование; соотношение недропользования и предпринимательского права; имущественные отношения; имущественное право.

[72] Статья была представлена 25.02.2025 и прошла рецензирование 23.06.2025.

https://doi.org 10.59821/18294219-2025.1-mqv06

Գայանե Մելիքյան
ՀՀ գլխավոր դատախազության միջազգային-իրավական համագործակցության վարչության ավագ դատախազ, Երևանի պետական համալսարանի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դասախոս, իրավաբանական գիտությունների թեկնածու

ՔՐԵԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՆԵՐՈՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԱՌԿԱ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ. ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ՈԼՈՐՏԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՆԱԽԿԻՆ ԵՎ ՆԵՐԿԱ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ[1]

Համառոտագիր

Հոդվածը նվիրված է քրեական վարույթներով միջազգային համագործակցությանը: Թեմայի ընտրությունն ու արդիականությունը մեծապես պայմանավորված են 12.12.2024թ. «Քրեական վարույթներով իրավական օգնության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ օրենք) ուժի մեջ մտնելու հանգամանքով: Հեղինակը, քննարկելով միջազգային համագործակցության հարցերը քրեական վարույթներով՝ զուգահեռներ է անցկացնում նախկին և ներկա կարգավորումների միջև, վեր հանում ինչպես նախկինում, այնպես էլ նոր օրենքի ընդունման պայմաններում գործնականում առաջացող խնդիրները, վերլուծում դրանց կարգավորմանն ուղղված և օրենքում տեղ գտած ՀՀ դատարանների նախադեպային դարձած որոշումները և ներկայացնում համապատասխան լուծումներ դեռևս չկարգավորված խնդիրների կապակցությամբ:

Միաժամանակ, հոդվածում վերլուծության են ենթարկվում օրենքում տեղ գտած նոր կարգավորումները, որոնք լուծում եմ տարիներ շարունակ գործնականում առաջացող մի շարք խնդիրներ, բացահայտում օրենքով առաջարկվող նոր կարգավորումների նպատակը՝ քննարկելով ապագայում հնարավոր խնդիրների առաջացումը:

Հիմնաբառեր- հանձնման մասին միջնորդություն, քրեական հետապնդում, հետախուզվող, վարույթի կարճում, միջազգային պայմանագիր, կոնվենցիա, քրեական վարույթ նախաձեռնել, հետապնդման ժամկետ, դատարան:

Ներածություն

Ժամանակակից աշխարհում, երբ մարդկանց և կապիտալի տեղաշարժն արագացել և անգամ նախորդ տասնամյակի համեմատությամբ էապես հեշտացել է, զարգացել և իր սահմաններն է ընդլայնել նաև հանցավորությունը՝ հաճախ

[1] Հոդվածը ներկայացվել է 23.05.2025թ. և գրախոսվել է 20.06.2025թ.:

դուրս գալով կոնկրետ պետության սահմաններից և երբեմն ընդգրկելով նույնիսկ ամբողջական տարածաշրջաններ: Սա է պատճառը, որ հանցավորության դեմ պայքարում պետությունները ստիպված են մեկտեղել իրենց ջանքերը՝ համատեղ պայքարի մեխանիզմներ, այդ թվում՝ քրեական գործերով իրավական օգնության առավել արդյունավետ կառուցակարգեր մշակելու համար: Հանցանք կատարած անձանց հանձնումն արդյունավետ իրականացնելու, ինչպես նաև այդ գործընթացում ներգրավված անձանց հիմնարար իրավունքները երաշխավորելու համար միջազգային իրավական կարգավորումներից և պետությունների միջև երկկողմ ու բազմակողմ պայմանավորվածություններից զատ, առանցքային են հանձնման գործընթացի ներպետական իրավակարգավորումները:

Օրենսդրական թերի կարգավորումները ու անհստակությունները, ինչպես նաև օրենսդրական բացերը հաճախ հանցանք կատարած անձանց հանձնման գործընթացի խափանման պատճառ են դառնում՝ խաթարելով քրեական պատասխանատվության անխուսափելիության սկզբունքի կենսագործումը: Օրենսդրական բացերն ու թերությունները հաճախ նաև անձանց իրավունքների անհարկի և տևական սահմանափակումների պատճառ են դառնում:

Հայրենական գիտության և օրենսդրության համար պարբերաբար զարգացող և դեռևս ամբողջությամբ չուսումնասիրված այս իրավական ինստիտուտը շարունակում է գտնվել զարգացման փուլում: Հետևաբար, նոր օրենքի ընդունումը պայմանավորված էր ժամանակի թելադրանքով և միտված էր կարգավորելու միջազգային պայմանագրերով Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնած պարտավորությունները, որոնց կատարումը նախկին կարգավորումների պարագայում աստիճանաբար դառնում էր անհնար:

Համեմատաիրավական վերլուծություն ոլորտը կարգավորող նախկին և ներկա կարգավորումների միջև. առկա խնդիրների վերհանում

Հոդվածի տվյալ բաժնում անդրադառնալով ՀՀ-ում քննարկվող ինստիտուտի զարգացմանը՝ հարկ է նշել, որ ի տարբերության 01.07.1998 թվականի քրեական դատավարության օրենսգրքի (հարկ է նշել, որ սույն օրենսգրքի մայր փաստաթղթում, ինչպես նաև մինչև 2005 թվականին կատարված փոփոխությունները, իրավական օգնության վերաբերյալ դրույթներ ևս նախատեսված չեն եղել), ինչպես ՀԽՍՀ 07.03.1961 թվականի քրեական դատավարության օրենսգիրքը, այնպես էլ 01.07.2021 թվականին ընդունված քրեական դատավարության գործող օրենսգիրքը չեն պարունակում քրեական գործերով իրավական օգնությանը վերաբերող դրույթներ: Ավելին, 1961 թվականի քրեական դատավարության օրենսգրքի գործողության ժամանակ ՀՀ-ում առհասարակ գոյություն չի ունեցել քրեական գործերով իրավական օգնությանը վերաբերող որևէ նորմատիվ իրավական ակտ: Չնայած այն հանգամանքին, որ քրեական դատավարության գործող օրենսգրքի հեղինակները ևս գնացել են օրենսգրքից իրավական օգնության վերաբերյալ կարգավորումները բացառելու ճանապարհով (ինչպես օրինակ՝ Գերմանիայի Դաշնային Հանրապետություն, Սերբիա, Խորվաթիա, Բելգիա և այլն), այնուամենայնիվ

գործող օրենսգրքի դեռևս նախագծի մշակմանը զուգընթաց 2015 թվականից ՀՀ-ում սկսվել էր մշակվել նաև «Քրեական գործերով իրավական օգնության մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որը 12.12.2024թ. վերջապես մտավ ուժի մեջ:

Օրենքով առաջին անգամ ամրագրում ստացան քննարկվող ինստիտուտի խնդիրները, սկզբունքները, տրվեցին օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունների սահմանումները, ինչպես նաև ամրագրվեցին նոր կարգավորումներ, ինչպիսիք են օրինակ՝ ՀՀ տարածքից դուրս հանցանք կատարած անձանց հետաքննության մարմին ներկայացնելու և ձերբակալման կարգը, հստակ սահմանվեցին վերոնշյալ անձանց իրավունքները, ամրագրվեց փաստացի հանձնման նպատակով կալանավորման հնարավորությունը և ժամկետները, լուծվեց հանձնման միջնորդությունը քննարկելու իրավասություն ունեցող մարմնի կողմից վերոնշյալ միջնորդության կապակցությամբ ընդունված որոշման բողոքարկման կարգը, նախատեսվեցին հանձնման մասին միջնորդությունը մերժելու հիմքերը և մի շարք այլ հարցեր, որոնց կանդրադառնանք ստորև:

Այսպես, քննարկվող օրենքի 2-րդ գլուխը նվիրված է իրավական օգնության շրջանակներում իրավական օգնության մասին հարցումների կատարմանը: Նշված գլխում վերջապես տեղ են գտել այնպիսի կարգավորումներ, ինչպիսիք են կատարման ընդհանուր պայմանները, իրավասու մարմինները, միջնորդությունների ձևին և բովանդակության ներկայացվող պայմանները, միջնորդությունների կատարումը մեկից ավելի միջազգային պայմանագրերով նախատեսված կարգով և այլ հարցեր:

Միջնորդությունների ձևին և բովանդակությանը վերաբերող 13-րդ հոդվածով նախատեսվել են այնպիսի պահանջներ, որոնք ունեն թե՛ տեսական, թե՛ գործնական բնույթ: Բնականաբար միջազգային համագործակցությունը հիմնվում է միջազգային պայմանագրերով սահմանված կարգավորումների վրա, սակայն ներպետական օրենսդրության համար անհրաժեշտ է սահմանել նաև այնպիսի պահանջներ, որոնք ունեն պրակտիկ բնույթ և նախապայման են հանդիսանում օտարերկրյա պետությունների կողմից միջնորդությունների կատարման համար: Մասնավորապես այդպիսի պահանջներից են օրինակ 13-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ և 7-րդ կետերը:[2]

Թեև, օրենքի 9-րդ հոդվածը սահմանում է միջնորդությունների կատարման ընդհանուր պայմանները, սակայն կցանկանայիք ընթերցողի ուշադրությունը

[2] Տե՛ս «Քրեական վարույթներով իրավական օգնության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ և 7-րդ կետերի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրով սահմանված կարգով և, հաշվի առնելով դրանով սահմանված բացառությունները, օտարերկրյա պետության իրավասու մարմնին հասցեագրվող իրավական օգնության մասին հարցումը պետք է բովանդակի՝

6) ենթադրյալ հանցանք կատարած անձի կամ մեղադրյալի ինքնությունը պարզելու համար անհրաժեշտ տվյալներ՝ անունը, հայրանունը և ազգանունը, ծննդյան տարեթիվը, ամիսը, օրը, վայրը, հնարավորության դեպքում՝ քաղաքացիությունը, բնակության կամ գտնվելու վայրը (հասցեն) և այլ տվյալներ,

7) առկայության դեպքում՝ հանցանքով պատճառված վնասի չափի և հարցումն ուղարկելու պահին դրա հատուցման հնարավորության մասին տվյալներ:

հրավիրել այդ միջնորդությունների կատարման ժամկետների վրա: Մասնավորապես, վերոնշյալ օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ միջնորդությունները կատարվում են ողջամիտ ժամկետում, եթե Հայաստանի Հանրապետության վավերացրած համապատասխան միջազգային պայմանագրով հստակ ժամկետ սահմանված չէ: Հարկ է նկատել, որ ՀՀ կողմից վավերացրած միջազգային պայմանագրերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ քրեական գործերով իրավական օգնության մասին միջնորդությունների կատարման ժամկետներ, որպես կանոն սահմանված չեն[3]: Միաժամանակ, մի շարք պետությունների ոլորտը կարգավորող ներպետական օրենսդրությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանք որդեգրել են հստակ ժամկետների ամրագրման պրակտիկան[4]: Օրենսդիրները նախատեսում են միջնորդությունների կատարման մեկից երկու ամսյա ժամկետ, որը ենթակա է երկարացման, որպես կանոն, բացառիկ դեպքերում՝ պայմանավորված հայցվող օգնության ծավալով և բարդությամբ: Իսկ նշված ժամկետներում չկատարելը իրավասու մարմնի համար կարող է առաջացնել համապատասխան իրավական հետևանքներ:

Ելնելով ՀՀ քրեական դատավարության օրենսդրությամբ քրեական հետապնդման համար ժամկետների, ինչպես նաև իրավական օգնության մասին միջնորդություն համապատասխան երկիր ուղարկած լինելու հիմքով վերոնշյալ ժամկետները կասեցնելու համար նախատեսված հնարավորությունների սղությունից՝ կարծում ենք, որ օտարերկրյա պետությունների կողմից միջնորդությունների կատարման համար հստակ ժամկետների սահմանումը արդարացված է և առաջարկում ենք համապատասխան փոփոխություն կատարել մեր օրենքի համապատասխան հոդվածում:

Մեկ այլ հարց, որը ևս կցանկանայիք դարձնել քննարկման առարկա վերաբերում է միջազգային պայմանագրերի կիրառման հարցին, որը գործնականում առաջացող խնդիրների արդյունքում կարգավորում է գտել քննարկվող օրենքում:

Ինչպես հայտնի է միջազգային համագործակցության ոլորտում, չափազանց կարևոր նշանակություն ունեն միջազգային պայմանագրերը: Պետությունները կնքելով երկկողմ կամ բազմակողմ պայմանագրեր՝ դրանցում արտահայտում են իրենց կամքը, պատրաստակամությունը և պարտավորվածությունը համագործակցել միմյանց հետ տարբեր հարցերի շուրջ: Սակայն, նորմերի սխալ մեկնաբանությունը և կիրառությունը հաճախ հանգեցնում է տարաբնույթ խնդիրների՝ խաթարելով հանձնման գործընթացը:

Ստորև ներկայացնենք պրակտիկայից մեկ օրինակ:

[3] Տե՛ս «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» 22.01.1993թ. Մինսկի Կոնվենցիա, 07.10.2002թ. Քիշնևի կոնվենցիա, «Քրեական գործերով փոխադարձ օգնության մասին» 20.04.1959թ. եվրոպական կոնվենցիա և այլն:

[4] Տե՛ս Law of Georgia on international cooperation in criminal matters 21.07.2010, տե՛ս նաև https://www.consultant.ru/document/cons_doc_LAW_343792/28920b759dc8e7b8fa6cf13d2f88a99490aa7270/

2023 թվականին ՀՀ-ում հայտնաբերվել էր ՌԴ իրավասու մարմինների կողմից հետախուզվող անձ, որը ձերբակալվել այնուհետև կալանավորվել էր ՀՀ իրավասու մարմինների կողմից, որի վերաբերյալ ստացվել էր հանձնման մասին միջնորդություն:

Հանձնման մասին միջնորդության քննության ընթացքում անձը գտնվում էր կալանքի տակ, որի ժամկետը պարբերաբար երկարացվում էր, իսկ որպես իրավական հիմք, ի թիվս այլնի, նշվում էր ՀՀ և ՌԴ միջև գործող «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության մասին և իրավական հարաբերությունների մասին» Մինսկի կոնվենցիան, որը դրված էր նաև ՌԴ գլխավոր դատախազությունից ստացված հանձնման մասին միջնորդության հիմքում:

28.06.2023թ. ՌԴ համար դադարում է գործել Մինսկի կոնվենցիան, սակայն նկատի ունենալով, որ ՀՀ և ՌԴ միջև առկա են նշված հարաբերությունները կարգավորող նաև այլ պայմանագրեր՝ հանձնման ենթակա անձի կալանքի ժամկետի երկարացման մասին միջնորդությունը դատարան էր ներկայացվել այլ պայմանագրի վրա հղում կատարելով:

Առաջին ատյանի դատարանը՝ մերժել էր դատախազության միջնորդությունը՝ հիմքում դնելով այն, որ ՌԴ գլխավոր դատախազության կողմից ներկայացված հանձնման մասին միջնորդության հիմքը Մինսկի կոնվենցիան էր, հետևաբար կալանքի ժամկետի երկարացման միջնորդության հիմքում չէր կարող դրվել այլ պայմանագիր քան Մինսկի կոնվենցիան է, անկախ նրանից այն գործում է տվյալ պահին ՌԴ-ի համար, թե՝ ոչ[5]:

Վերոնշյալ դատական ակտի դեմ ներկայացվում է վերաքննիչ բողոք: Բողոքում վերլուծության է ենթարկվում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (01.07.1998թ.) 476-րդ հոդվածը և հիմնավորում այն դիրքորոշումը, որ նույնիսկ եթե միջնորդություն ներկայացնող պետությունը իր միջնորդության մեջ չի նշում որևէ պայմանագիր, սակայն ՀՀ և այդ պետության միջև առկա են պայմանագրեր, ապա միջնորդությունը ենթակա է կատարման, անկախ այն հանգամանքից, թե պետությունը հատկապես որ պայմանագրով է ներկայացրել միջնորդությունը:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը մասնակի բավարարում է ներկայացրած բողոքը և համաձայնվում բողոքում ներկայացված մեկնաբանության հետ[6]:

Վերոնշյալ որոշման դեմ բողոք է ներկայացնում պաշտպանական կողմը, սակայն ՀՀ վճռաբեկ դատարանը հաստատում է ՀՀ դատախազության և ՀՀ վերաքննիչ դատարանի կողմից պայմանագրերի կիրառելիության վերաբերյալ տրված մեկնաբանությունները[7]:

Վերոնշյալ դատական որոշումների լույսի ներքո օրենքում հստակ կարգավորում են գտել մեկից ավելի միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերում իրավական օգնությունը ցուցաբերելու հարցերը[8]:

---

[5] Տե՛ս Երևան քաղաքի ընդհանուր իրավասության քրեական դատարանի 2023 թվականի նոյեմբերի 16-ի թիվ ԵԴ1/0125/06/23 որոշմումը:

[6] Տե՛ա ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 21.12.2023թ. թիվ ԵԴ1/1086/06/23 որոշումը:

[7] Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 31.05.2024թ. թիվ ԵԴ1/0125/06/23 որոշումը:

[8] Տե՛ս «Քրեական վարույթներով իրավական օգնության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդված:

Հաջորդ հարցը, որ կցանկանայինք քննարկել սույն հոդվածի շրջանակներում վերաբերում է հանձնման ինստիտուտին: Հարկ է նշել, որ օրենքով առաջին անգամ համապարփակ կարգավորում են ստացել հանձնման գործընթացը սկսելու և այն ավարտին հասցնելու համար առանցքային նշանակություն ունեցող մի շարք կարգավորումներ: Մասնավորապես, օրենքով սահմանվել է գործընթացին մասնակցող անձանց շրջանակը, նրանց իրավունքներն ու պարտականությունները, հանձնման գործընթացի ընթացքում կայացվող որոշումների բողոքարկման կարգը, այդ գործընթացում համապատասխան որոշումները հանձնման ենթակա անձանց հանձնելու պարտականությունը և մի շարք այլ հարցեր, որոնց մի մասին կանդրադառնանք ստորև:

Այսպես, քննարկվող օրենքի 32-րդ հոդվածը սահմանում է նաև անձի հանձնումը թույլատրելու կամ մերժելու իրավասություն ունեցող անձանց շրջանակը:

Մասնավորապես վերոնշյալ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մինչդատական փուլում գտնվող գործերով անձի հանձնումը թույլատրելու կամ մերժելու իրավասությունը վերապահված է ՀՀ գլխավոր դատախազին, իսկ դատական, ինչպես նաև դատավճռի ի կատար ածման փուլում գտնվող գործերով՝ ՀՀ արդարադատության նախարարին:

1998 թվականի քրեական դատավարության օրենսգրքի 479-րդ հոդվածով, որը ևս սահմանում էր հանձնման միջնորդությունը քննարկելու իրավասություն ունեցող անձանց շրջանակը, ինչպես նաև որոշումը բողոքարկելու կարգը՝ սահմանում էր գրեթե համանման կարգավորումներ, բացառությամբ դատաքննության կամ դատավճիռն ի կատար ածելու դեպքերում հանձնումը թույլատրելու դեպքի, որը օրենսգրքով վերապահված է նախարարի միջնորդությամբ դատարանին: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ՀՀ գլխավոր դատախազի և արդարադատության նախարարի որոշումները ենթակա էին բողոքարկման անմիջապես վերաքննիչ դատարան:

1998 թվականի օրենսգրքով սահմանված բողոքարկման կարգի հետ համաձայն չլինելով՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի նախկին դատավորներից մեկը 2022 թվականի հունիսի 7-ին դիմել էր ՀՀ սահմանադրական դատարան:

Դատավորը, իր դիմումում վկայակոչելով ՀՀ սահմանադրության 162, 163, 168, 169 և 172-րդ դրույթները, արձանագրել էր, որ ՀՀ վերաքննիչ դատարանը առաջին ատյանի դատարանների դատական ակտերն օրենքով սահմանված լիազորությունների շրջանակներում վերանայող դատական ատյան է: Հետևաբար ՀՀ գլխավոր դատախազի և ՀՀ արդարադատության նախարարի որոշումները վերանայելու ՀՀ քրեական դատավարությամբ նախատեսված լինելու հանգամանքը նախատեսված չէ ո՛չ ՀՀ սահմանադրությամբ, ո՛չ էլ ՀՀ դատական օրենսգրքով, ինչի արդյունքում այդ որոշումների վերանայմամբ, ըստ դատավորի, վերաքննիչ դատարանը թույլ էր տալիս իրեն օրենքով նախատեսված իրավունքների սահմանազանցում: Վերոնշյալից բացի, դատավորն իր դիմումը հիմնավորել էր ՀՀ-ի կողմից վավերացրած միջազգային պայմանագրերով նախատեսված դատարանների մատչելիությունը ապահովելու պարտականությամբ՝ նշելով, որ տվյալ դեպքում քրեական դատավարության ներքին տրամաբանու-

թյանը կհամապատասխաներ ՀՀ գլխավոր դատախազի հանձնումը թույլ տալու կամ մերժելու, ինչպես նաև ՀՀ արդարադատության նախարարի հանձնումը մերժելու որոշումների բողոքարկումն առաջին ատյանի դատարան, նոր վերաքննիչ և վճռաբեկ դատարան, որի արդյունքում կվերացվեր նաև առաջին ատյանի դատարանի «արհեստական» դուրսմղումը դատական պաշտպանության և դատական ակտի բողոքարկման համակարգից:

Նկատի ունենալով, որ վերը ներկայացված դեպքով դատավորը ՀՀ սահմանադրական դատարան էր դիմել երկու վարույթներով՝ ՀՀ Սահմանադրական դատարանը 2022 թվականի հուլիսի 12-ի աշխատակարգային որոշմամբ մերժել էր դատավորի դիմումը՝ նշելով, որ դատարանները սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեն կոնկրետ վերահսկողության շրջանակներում, իսկ մեկից ավելի գործերով դիմելը իրենից ենթադրում է վերացական վերահսկողություն, որի իրականացմամբ դատարաններն օժտված չեն[9]:

2022 թվականի հուլիսի 21-ին դատավորը արդեն իսկ մեկ գործով էր դիմել Սահմանադրական դատարան, սակայն տվյալ դեպքում Սահմանադրական դատարանը 2022 թվականի սեպտեմբերի 16-ի որոշմամբ կրկին մերժել էր դատավորի դիմումն այն հիմնավորմամբ, որ դատավորն իրականացնում է վերացական վերահսկողություն, որի իրավասությամբ օժտված չէ[10]:

Այսպես, Սահմանադրական դատարանի դիմումի հիմքում դնելով այն մոտեցումը, որ ՀՀ գլխավոր դատախազի հանձնումը թույլատրելու կամ մերժելու, ինչպես նաև ՀՀ արդարադատության նախարարի հանձնումը մերժելու որոշումները պետք է բողոքարկվեն առաջին ատյանի, այնուհետև վերաքննիչ դատարան, կարծում ենք, որ հաշվի չի առնվել այն հանգամանքը, որ դատաքննության փուլում գտնվող, ինչպես նաև դատավճիռն ի կատար ածելու փուլերով որոշում կայացնողը հենց առաջին ատյանի դատարանն է: Հետևաբար՝ դատավորի առաջարկած կարգավորման պարագայում անհավասարություն է ստեղծվում դատաքննության և մինչդատական փուլերում գտնվող գործերով որոշումների բողոքարկման տեսանկյունից: Ստացվում է, որ կախված այն հանգամանքից, թե որ փուլում է գտնվում անձի նկատմամբ գործը վերջինս զրկվում է կամ օգտվում է ևս մեկ ատյան բողոքարկելու հնարավորությունից:

Դատավորի առաջարկած տրամաբանությամբ առաջնորդվելու դեպքում տեղին կլիներ դատաքննության կամ դատավճռի ի կատար ածման փուլերում գտնվող գործերով հետախուզվող անձանց հանձնման թույլտվության որոշում կայացնելու իրավունքը ևս վերապահվեր արդարադատության նախարարին, որ տրամաբանությամբ էլ առաջնորդվել է օրենսդիրը քննարկվող օրենքում:

Տվյալ դեպքում տրամաբանական և արդարացված է հանձնման բավարարման կամ մերժման որոշումների բողոքարկումը առաջին ատյանի դատարան՝ դրանով իսկ հավասար պայմաններ ստեղծելով՝ քննության տարբեր փուլերում գտնվող գործերով հետախուզվող անձանց միջև:

[9] Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի 2022 թվականի հուլիսի 12-ի թիվ ՍԴԱՈ-127 որոշումը:
[10] Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի 2022 թվականի սեպտեմբերի 16-ի թիվ ՍԴԱՈ-150 որոշումը:

Միաժամանակ, հարկ է նշել, որ 29.04.2025թ. ՀՀ Սահմանադրական դատարանը որոշել էր «դիմումատուի դիմումի հիման վրա՝ 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված և 2022 թվականի հուլիսի 1-ին ուժը կորցրած՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 479-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Սահմանադրության համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործն ընդունել վարույթ:

Հաշվի առնելով տվյալ հարցի կապակցությամբ նախկինում կայացրած աշխատակարգային որոշումները, ինչպես նաև օրենքի ուժի մեջ մտած լինելու հանգամանքը՝ իրենից հետաքրքրություն է ներկայացնում 2025 թվականի հուլիսի 8-ին կայացրած աշխատակարգային որոշումը, որով դատարանը որոշել է կարճել գործի վարույթը՝ վիճարկվող դրույթի և Դիմողի իրավունքների հնարավոր խախտման փաստի միջև անմիջական պատճառահետևանքային կապի բացակայության հիմքով:

Սակայն հետաքրքրություն է ներկայացնում դատարանի տվյալ որոշմամբ, ի թիվս այլնի, արտահայտած մեկ այլ դիրքորոշում, որով, ըստ էության, փարատվում են նախկին կարգավորումների կապակցությամբ պաշտպանական կողմերի արտահայտած մտահոգությունները, որը հանգում է հետևյալին՝ «Այնուամենայնիվ, արձանագրելով սույն գործով խնդրո առարկա այն է՝ հանձնման հետ կապված հարցերի լուծման հրատապության և օպերատիվության կարևորությունը՝ իբրև նշված սահմանափակման լեգիտիմ (իրավագո) նպատակներ, Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ դրանք հետապնդելու ուղղությամբ օրենսդրի կարգավորումները՝ հաշվի առնելով նաև Վերաքննիչ դատարանի լիազորությունների ծավալը և վերջինիս որոշումը Վճռաբեկ դատարանում հետագա դատական ստուգման ենթարկելու հնարավորությունը, եղել է համաչափ և անհրաժեշտ ժողովրդավարական հասարակությունում[11]»:

Հաջորդ հարցը, որ ցանկանում ենք քննարկել սույն աշխատանքի շրջանակներում վերաբերում է հանձնումը մերժելու հիմքերին և իրավական հետևանքներին:

Օրենքի 33-րդ հոդվածով առաջին անգամ ներպետական կարգավորում են ստացել հանձնումը մերժելու հիմքերը: Հիմքերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ օրենքում հիմնականում տեղ են գտել այն հիմքերը, որոնք նախատեսված են ՀՀ կողմից վավերացված միջազգային պայմանագրերով:

Այդպիսի հիմքերից են օրինակ՝ անձին քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմությունն անցած լինելու հիմքով, ՀՀ քաղաքացի լինելու և այլ հիմքերով նախատեսված դեպքերը:

Միաժամանակ, հարկ է նշել, որ հանձնման մասին միջնորդությունները կարող են բավարարվել մասնակի:

Այսպես, «Հանձնման մասին» 13.12.1957թ. եվրոպական Կոնվենցիան (հոդված 18-րդ), «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» 07.10.2002թ. Քիշնևի կոնվենցիան (հոդված 21-րդ), «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական

[11] Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի 2025 թվականի հուլիսի 8-ի թիվ ՍԴԱՈ-109 որոշումը:

գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» 22.01.1998թ. Մինսկի կոնվենցիան (հոդված 19-րդ) և այլ պայմանագրեր, որոնց անդամակցում է ՀՀ-ն նախատեսում են հանձնման մասին միջնորդությունների մասնակի բավարարման հնարավորություն:

Մասնավորապես, անձը կարող է հետախուզվել ՀՀ քրեական օրենսգրքի մի քանի հոդվածներով նախատեսված հանցագործություններ կատարելու համար, ինչը ենթադրում է, որ տվյալ անձի հայտնաբերման դեպքում ՀՀ իրավասու մարմինների կողմից միջնորդություն ներկայացնելիս այն պարունակելու է համապատասխան խնդրանք բոլոր հոդվածներով անձի հանձնումը բավարարելու վերաբերյալ:

Սակայն, թե՛ վերը նշված, թե՛ այլ պայմանագրեր նախատեսում են հանձնման մասին միջնորդությունների բավարարման համապատասխան պայմաններ, ինչպիսիք են օրինակ՝ արարքի՝ և՛ հայցող և՛ հայցվող պետություններում քրեորեն հետապնդելի լինելու, նշված արարքի համար առնվազն մեկ տարով ազատազրկում քրեական օրենքով նախատեսված լինելու, վաղեմության ժամկետն անցած չլինելու և այլ դեպքեր:

Նշված դեպքերի առկայության դեպքում հայցվող պետությունը ստիպված է հանձնման մասին միջնորդությունը բավարարել մասնակի՝ միայն այն հոդվածներով, որոնք համապատասխանում են բավարարման համար միջազգային և ներպետական օրենսդրությամբ նախատեսված պայմաններին:

Տվյալ իրավիճակներում հետախուզվող անձը ՀՀ իրավասու մարմիններին հանձնվելուց հետո վերոնշյալ կոնվենցիաներին համապատասխան՝ կարող է պատասխանատվության ենթարկվել միայն այն հոդվածներով, որոնցով առկա է հայցվող պետության հանձնման թույլտվությունը:

Նման դեպքերում հարց է առաջանում, թե վարույթն իրականացնող մարմինն այն հոդվածներով, որոնցով ևս անձի նկատմամբ հարուցված է քրեական հետապնդում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածի 1-ին մասի որ կետով պետք է դադարեցնի, կամ առհասարակ արդյոք այն պետք է դադարեցվի, իսկ գործի վարույթը անջատվի և այդ մասով կարճվի:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 12-րդ (Քրեական հետապնդումը բացառող հանգամանքները) և 13-րդ (Քրեական վարույթի կարճման հիմքերը) հոդվածների ուսումնասիրությունից ակնհայտն է դառնում, որ դրանք չեն նախատեսում հանձնման մասին միջնորդությունը մասնակի մերժվելու դեպքում՝ քրեական հետապնդումը դադարեցնելու կամ համապատասխան մասով քրեական վարույթը կարճելու համապատասխան հիմքեր:

Պրակտիկայի ուսումնասիրությունից գալիս ենք այն եզրահանգման, որ որոշ դեպքերում, երբ հետախուզվող անձի հանձնման մասին միջնորդությունը բավարարված է լինում մասնակի ՀՀ-ում վարույթն իրականացնող մարմինները շարունակում են վարույթի քննությունը այն հոդվածներով, որոնցով անձի հանձնումը բավարարվել է, իսկ այն հոդվածներով որոնցով վերջինիս վերաբերյալ միջնորդությունը մերժվել է դադարեցնում են քրեական հետապնդումը:

Տվյալ դեպքերում քրեական վարույթն իրականացնող մարմնի համար որպես քրեական հետապնդումը դադարեցնելու հիմք է դիտարկվում 12-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, այն է՝ անձը չի կատարել իրեն մեղսագրվող արարքը:

Տվյալ իրավիճակում առաջանում են հետևյալ հարցերը՝ 1. արդյոք հանձնման մասին միջնորդությունը մերժվելու դեպքում քրեական հետապնդումը պետք է դադարեցվի, 2. արդյոք դադարեցվելու դեպքում դրա հիմքում կարող է դրվել օրենսգրքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը և 3. արդյոք արդարացված է տվյալ իրավիճակում տվյալ հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելը դիտարկելով որպես ռեաբիլիտացնող հիմք:

Քննարկելով 2-րդ և 3-րդ հարցադրումները կարող ենք հստակ արձանագրել, որ 12-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով քրեական հետապնդումը դադարեցնելը չի համապատասխանում այդ կետով նախատեսված իրավիճակներին, քանի որ տվյալ դեպքերում վարույթն իրականացնող մարմինը ունենում է բավարար և անհրաժեշտ ապացույցները անձի նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելու համար, և վարույթի քննության ընթացքում ի հայտ չեն գալիս հանգամանքներ, որոնք կհերքեն հետապնդման հիմքում դրված փաստերը: Ինչ վերաբերում է այն հանգամանքին, որ նշված հիմքը ոչ միայն չի համապատասխանում վերոնշյալ իրավիճակներին այլև ռեաբիլիտացնող է՝ գտնում ենք չարդարացված, ընդ որում նույն հիմնավորմամբ, որը ինչ 12-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով հետապնդման դադարեցումը, քանի որ տվյալ իրավիճակում վարույթն իրականացնող մարմինը ուղղակի զրկվում է քննությունը շարունակելու հնարավորությունից վարույթում ունենալով հստակ ապացույցներ, որոնք վկայում են անձի կողմից իրեն մեղսագրվող արարքը կատարելու մասին:

Սակայն, եթե հարցը դիտարկենք անմեղության կանխավարկածի տեսանկյունից, ստացվում է, որ վարույթն իրականացնող մարմինը ուղղակի չի կարողանում շարունակել քննությունը և հիմնավորել անձի մեղավորությունը:

Այսինքն, առաջանում է այն նույն իրավիճակը ինչ որ քրեական հետապնդման դադարեցումը 12-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով՝ անձն անձեռնմխելիության ուժով ենթակա չէ քրեական պատասխանատվության:

Իսկ ինչպես պետք է վարվել նման իրավիճակներում, արդյոք քրեական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածը պետք է լրացվի և նախատեսվի քրեական հետապնդումը դադարեցնելու առանձին՝ հանձնումը մասնակի բավարարելու դեպքերով դադարեցնելու հիմք: Եվ արդյոք իրատեսական և արդարացված է քրեական դատավարության օրենսգրքում նախատեսել բոլոր հիմքերը տարբեր իրավիճակների համար:

Վերլուծելով 12-րդ հոդվածը և հատկապես 12-րդ հոդվածի 1-ին մասին 5-րդ կետի առկայությունը կարծում ենք արդարացված է նաև հանձնումը մասնակի բավարարելու դեպքերով դադարեցնելու հիմք 12-րդ հոդվածում նախատեսելը:

Ելնելով նաև այն հանգամանքից, որ վարույթն իրականացնող մարմինը տվյալ հիմքով հետապնդումը դադարեցնելու դեպքում չի կարող շարունակել հետապնդումը նույնիսկ այն դեպքերում, երբ անձը համաձայն չէ իր նկատմամբ

հետապնդումը դադարեցնելու հետ, որը ոչ արդարացնող հիմքով հետապնդումը դադարեցնելու նախապայման է, ստացվում է, որ այս հիմքով հետապնդումը դադարեցնելու դեպքում այն ևս պետք է լինի արդարացնող:

Հաջորդ հարցը, որ կքննարկվի սույն հոդվածում վերաբերում է հետախուզվող անձանց արգելանքի վերցնելուն:

Այսպես, այլ պետության կողմից հետախուզման մեջ գտնվող անձի՝ Հայաստանի Հանրապետությունում հայտնաբերման դեպքում սկզբնական արգելանքի վերցնելը թե՛ իրավական հետագա ընթացակարգերի ապահովման, և՛ թե գործնականում անձի հետագա հանձնումն ապահովելու առումով, անհրաժեշտ նախապայման է քրեական գործերով իրավական փոխօգնության ոլորտում Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների կատարման համար: Սա է պատճառը, որ հանձնման գործընթացը կարգավորող հիմնական միջազգային իրավական փաստաթղթերը նախատեսում են հետախուզման մեջ գտնվող անձի ձերբակալման հնարավորությունը՝ այն դիտարկելով որպես հանձնման հետագա ընթացքն ապահովող առաջնային և անհրաժեշտ միջոց: Այսպես, Մինսկի կոնվենցիայի 61-րդ հոդվածի 2-րդ մասի և համապատասխանաբար Քիշնևի Կոնվենցիայի 70-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Անձը կարող է ձերբակալվել նաև առանց սույն հոդվածի 1-ին կետում նշված միջնորդությունը ստանալու, եթե ներպետական օրենսդրությամբ նախատեսված հիմքեր կան կասկածելու, որ մյուս Պայմանավորվող կողմի տարածքում նա կատարել է հանձնում առաջացնող հանցագործություն»:

Այլ խոսքով, միջազգային պայմանագրերի համաձայն՝ հետախուզման մեջ գտնվող անձին Հայաստանի Հանրապետության տարածքում ձերբակալելու պայմանը այլ պետության տարածքում հանձնում առաջացնող հանցագործություն կատարած լինելու կասկածանքն է:

Եթե փորձենք զուգահեռներ անցկացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (07.01.1998թ.) 130-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի հետ, այն է՝ անմիջականորեն ծագած կասկածանքն առկա է, երբ ականատեսն ուղղակի մատնանշում է տվյալ անձին որպես քրեական օրենքով չթույլատրված արարքը կատարողի, ապա Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս հանցանք կատարած անձանց ձերբակալման դեպքում այլ պետության տարածքում հանցանք կատարած լինելու վերաբերյալ կասկածի առկայության վերաբերյալ հիմք կլինի հայտարարված հետախուզման վերաբերյալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված միջոցներով ՀՀ իրավասու մարմիններին իրազեկելը (ընդ որում նույնն է վիճակը նաև 2021 թվականին ընդունված քրեական դատավարության օրենսգրքի պարագայում):

Այն, որ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս հանցանք կատարած անձանց ձերբակալումը չի նույնանում անմիջականորեն ծագած կասկածանքի հիմքով ձերբակալմանը և վարույթն իրականացնող մարմնի որոշման ձերբակալմանը և իրենից ներկայացնում է ձերբակալման ինքնուրույն տեսակ, հիմնավորվում է նաև քրեական դատավարության օրենսգիրքը նոր՝ 478.1-րդ հոդվածով լրացնող 2012

թվականի մարտի 19-ի ՀՕ-42-Ն նախագծին կից ներկայացված հիմնավորմամբ, որն ուղղակիորեն արձանագրում էր, որ «նախագծի ընդունման հրատապությունը պայմանավորված է այլ պետությունների կողմից հետախուզվող և ՀՀ-ում հայտնաբերված անձանց հետագա հանձնման նպատակով արգելանքի վերցնելու, հետևապես նրանց սահմանադրական իրավունքները սահմանափակելու իրավական ռեժիմի սահմանման անհրաժեշտությամբ:

Բանն այն է, որ ՀՀ քրեական դատավարության 1998 թվականի օրենսգրքում, այնպես էլ 2021 թվականին ընդունված քրեական դատավարության օրենսգրքում կարգավորված չեն այլ պետությունների կողմից հետախուզվող և ՀՀ-ում հայտնաբերված անձանց հետագա հանձնման նպատակով կալանավորելու օրինականության, հանձնման ենթակա անձի իրավունքներն ու ազատություններն ապահովելու հարցը: Այլ խոսքով, ՀՀ քրեական դատավարության 1998 թվականի օրենսգրքի 129-րդ և 130-րդ հոդվածների առկայության պարագայում, օրենսդիրն անհրաժեշտ էր համարել քրեական դատավարության օրենսգիրքը լրացնել նոր հոդվածով, որը կնախատեսեր Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս հանցանք կատարած անձանց ձերբակալման հնարավորությունը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ քրեական դատավարության օրենսգրքի 129-րդ և 130-րդ հոդվածներն այդ դեպքերի նկատմամբ կիրառելի չեն (2021 թվականին ընդունված օրենսգրքի պարագայում իրավիճակը շարունակում էր խնդրահարույց լինել, քանի որ տվյալ դեպքում 108-րդ հոդվածը ևս կիրառելի չէր):

Այսպիսով, վերը նշվածը հիմք է տալիս փաստելու, որ ի թիվս ՀՀ քրեական դատավարության 1998 թվականի օրենսգրքի 129-րդ և 130-րդ հոդվածներով, ինչպես նաև 2021 թվականին ընդունված օրենսգրքի 108-րդ հոդվածով նախատեսված՝ անմիջականորեն ծագած կասկածանքի հիման վրա և վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ իրականացվող ձերբակալումների, 1998 թվականի օրենսգրքի 478.1-րդ հոդվածը սահմանում է ձերբակալման ինքնուրույն տեսակ՝ միջազգային պայմանագրի առկայության դեպքում Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս հանցանք կատարած անձանց ձերբակալումը՝ իր ինքնուրույն հիմքով և առանձին դատավարական ընթացակարգով, որը ենթադրում էր համապատասխան կարգավորումներ ձերբակալման տվյալ տեսակի համար:

Նկատի ունենալով վերոգրյալը, օրենքում նախատեսվել է 40-րդ հոդվածը, որը վերջապես հստակ կարգավորել է հետախուզվող անձանց ձերբակալման ժամկետները, ձերբակալում իրականացնող մարմինը, ձերբակալված անձի իրավունքները և մի շարք այլ հարցեր:

Վերջապես լուծվեց այն հարցը, թե տվյալ անձանց ձերբակալման դեպքում, եթե առկա են կալանավորման հիմքեր, երբ պետք է միջնորդություն ներկայացվի դատարան:

Արդյոք տվյալ դեպքում արդարացված է ևս առնվազն 12 ժամ առաջ դատարան միջնորդություն ներկայացնելու հստակ պահանջի ամրագրումը:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ տվյալ դեպքերում մենք գործ ունենք օտարերկրյա պետության իրավասու մարմինների հետ և կալանավորման համար անհրաժեշտ փաստաթղթերը պետք է ստացվեն իրենցից, որոնք ՀՀ իրավասու

մարմինների կողմից պետք է թարգմանվեն, որպեսզի դրվեն միջնորդության հիմքում, հետևաբար դատարան միջնորդություն ներկայացնելու համար հստակ ժամկետի սահմանումը իրատեսական չէր լինի և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված 12 ժամ առաջ դատարան միջնորդություն ներկայացնելու պահանջը տվյալ իրավահարաբերություններում չի գործում:

Հաջորդ խնդիրը, որ առաջանում էր կարգավորումների բացակայության պայմաններում վերաբերում է հետախուզվող ձերբակալված անձանց ՀՀ ոստիկանության ձերբակալվածներին պահելու վայրեր (այսուհետ նաև՝ ՁՊՎ) տեղափոխելու և պահելու իրավական հիմքին:

Այսպես, «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ ձերբակալվածներին պահելու վայրերում անձին պահելու հիմքը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքին համապատասխան ձերբակալման մասին քննիչի կայացրած որոշումն է: Նույն հոդվածի մեկ այլ դրույթի համաձայն՝ առանց նշված հիմքի ՁՊՎ-ում անձին ընդունելն արգելվում է:

Նույնաբովանդակ իրավակարգավորում է նախատեսված նաև ՀՀ կառավարության՝ 2008 թվականի հունիսի 6-ի թիվ 574-Ն որոշմամբ հաստատված «ՀՀ ոստիկանության համակարգում գործող ձերբակալվածներին պահելու վայրերի ներքին կանոնակարգ»-ի 4-րդ կետով:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 108-րդ հոդվածով սահմանվում են ձերբակալման տեսակները, ընդ որում հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերով նախատեսված են ձերբակալման այն տեսակները, որոնց դեպքում արդեն իսկ նախաձեռնված է քրեական վարույթ, իսկ անձին ներկայացված է մեղադրանք: Ձերբակալման տվյալ տեսակների համար օրենսգրքի 111-րդ և 112-րդ հոդվածներով հստակ ամրագրված է, որ ձերբակալումն այդ հիմքերով կարող է իրականացվել բացառապես քննիչի որոշման հիման վրա, ընդ որում ժամանակագրական առումով տվյալ տեսակների դեպքում ձերբակալման որոշումը նախորդում է ձերբակալման արձանագրությանը:

Ինչ վերաբերում է քննարկվող հոդվածի 1-ին մասի 1-ին կետին, ապա հարկ է նշել, որ ձերբակալման տվյալ տեսակի պարագայում, երբ ձերբակալման արձանագրությունը նախորդում է ձերբակալման որոշմանը, օրենսգիրքը սահմանում է, որ ձերբակալվածին հետաքննության մարմին կամ վարույթ իրականացնելու իրավասություն ունեցող մարմին բերելուց անմիջապես հետո ձերբակալում իրականացրած անձը կազմում է անձի ձերբակալման արձանագրություն: Ընդ որում, նույն հոդվածի 5-րդ մասը սահմանում է, որ անձին ազատությունից փաստացի զրկելուց հետո անհապաղ, բայց ոչ ուշ քան 6 ժամվա ընթացքում պետք է հանձնվի նրան ձերբակալելու կամ ազատ արձակելու վերաբերյալ որոշում, որը վերապահված է քննիչին:

Այսինքն, ստեղծված իրավիճակում ձերբակալման մասին որոշումը դառնում էր պարտադիր պայման անձին ՁՊՎ-ում պահելու համար, սակայն առկա կարգավորումների պայմաններում հետախուզվող անձանց ձերբակալման մասին որոշում

կայացնող մարմինը բացակայում էր, քանի որ էքստրադիցիոն հարցերով քննչական մարմինը ներգրավված չէ, այն հիմնավորմամբ, որ առկա չէ քրեական վարույթ:

Հետևաբար առաջանում էր իրավիճակ, երբ հետաքննության մարմնի կողմից կազմված ձերբակալման արձանագրության հիման վրա անձանց ՁՊՎ-ում պահելը դառնում էր անհնարին դրանով առաջացնելով խնդիրներ հանձնման գործընթացի համար, ինչը վկայում էր այն մասին, որ օրենքում համապատասխան կարգավորումների նախատեսումը ժամանակի հրամայականն էր:

Օրենքի 40-րդ հոդվածով ձերբակալումը վերապահված է հետաքննության մարմնին, որի շնորհիվ լուծվում է նաև համապատասխան դատավարական փաստաթղթեր կազմելու, անձին հանձնելու, վերջինիս իրավունքներն ու պարտականությունները պարզաբանելու իրավասություն ունեցող սուբյեկտի հարցը:

Օրենքով լուծում է ստացել ևս մեկ չափազանց կարևոր հարց: Խոսքը խափանման միջոց չունեցող կամ ազատության սահմանափակման հետ չկապված խափանման միջոցով հետախուզվող անձանց հետաքննության մարմին ներկայացնելու կարգի մասին է:

Օրենքի 39-րդ հոդվածով հստակ սահմանվել է, որ «Օտարերկրյա պետության իրավասու մարմինների կողմից հետախուզվող այն անձի հայտնաբերման դեպքում, որի նկատմամբ խափանման միջոց ընտրված չէ, կամ ընտրված է ազատությունից զրկելու հետ չկապված խափանման միջոց, վերջինս հետաքննության մարմնի կողմից ներկայացվում է հետաքննության մարմին ինքնությունն ստուգելու (նույնականացնելու) նպատակով, որի մասին կազմվում է արձանագրություն»:

Նման կարգավորումը հնարավորություն է տալիս հետախուզվող անձին տեղափոխել հետաքննության մարմնի մոտ ստուգել վերջինիս կարգավիճակը, ընտրված խափանման միջոցը կազմել համապատասխան փաստաթղթեր և ազատ արձակել վերջիններիս:

Օրենքում հստակ կարգավորում են գտել նաև հանձնման գործընթացն ավարտին հասցնելու համար անձին կալանքի տակ պահելու ժամկետները:

Իրավակիրառ պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում էր այն մասին, որ գործնականում հանձնման նպատակով կալանավորման ժամկետի մեջ հաշվարկվում էր նաև ժամանակավոր կալանավորման համար նախատեսված ժամկետը: Այն հետախուզվող անձանց նկատմամբ, ում նկատմամբ կիրառվում էր ժամանակավոր կալանավորում, իսկ այնուհետև հանձնման նպատակով կալանավորում՝ դատախազների կողմից վերջին առավելագույն ժամկետի երկարացման համար միջնորդություն ներկայացնելիս հաշվի էր առնվում ժամանակավոր կալանավորման տակ անձի գտնված լինելու ժամկետը և միջնորդությունը ներկայացվում համապատասխան օրերով (օրինակ՝ եթե անձը 40 օր եղել է ժամանակավոր կալանքի տակ, ապա վերջին միջնորդությունը ներկայացվում է համապատասխանաբար 20 օրով):

Նման պրակտիկան կարող էր արդարացվել միայն քննարկվող կարգավորումները հօգուտ հետախուզվող անձի մեկնաբանելու ձգտմամբ: Այնուամենայնիվ

նման մեկնաբանությունը կլիներ տեղին, եթե չլինեին հստակ կարգավորումներ և օրենսգրքի 478.3-րդ հոդվածի 5-րդ մասը ունենար ոչ թե հանձնելու համար կալանավորման առավելագույն ժամկետը չի կարող գերազանցել (...), այլ կալանավորման առավելագույն ժամկետը չի կարող գերազանցել (...), ձևակերպումը որի դեպքում ժամանակավոր կալանավորման ժամկետը ընդհանուր 8 ամսյա ժամկետի մեջ հաշվարկելը կլիներ տրամաբանական:

Ուստի նման իրավիճակներում կարծում ենք, որ վերոնշյալ ժամկետները իրար մեջ հաշվակցելու անհրաժեշտությունը բացակայում էր:

Վերոնշյալ հարցը վերջնական լուծում ստացված ՀՀ վճռաբեկ դատարանի 13.05.2024թ. թիվ ՏԴ/0068/06/23 որոշմամբ, որով արձանագրեց, որ «Դատարանն իր անհամաձայնությունն է հայտնում բողոքի հեղինակների այն պնդումներին, որ քննարկվող ինստիտուտները բովանդակային առումով նույնն են և դրանց հիմքում ընկած է ազատությունից զրկելը: Դատարանն արձանագրում է, որ ազատությունից զրկված լինելու հանգամանքն ինքնին չի կարող վկայել երկու տարբեր դատավարական կառուցակարգերի ժամկետների հաշվակցման հնարավորության մասին այն պայմաններում, երբ դրանցից յուրաքանչյուրի կիրառելիության ժամկետային սահմանափակումները հստակ նախատեսված են օրենսդրությամբ:

Այս կապակցությամբ դատարանը հարկ է համարում նշել, որ օրենսդրական բացի և իրավական նորմերի կոլիզիայի մասին ևս չի կարող խոսք լինել, քանի որ քրեադատավարական կանոնակարգումները և օրենսդրի նպատակը որոշակի են, օրենսդիրը ոչ երկիմաստ ընդգծել է քննարկվող կառուցակարգերի տարբերությունները և ըստ այդմ՝ դրանց կիրառման ժամկետների հաշվարկման տրամաբանությունը: Այլ կերպ, վերաքննիչ դատարանի համար ընդունելի չէ բողոքաբերի փաստարկն առ այն, որ օրենսդիրը չի կարգավորել հանձնման նպատակով ժամանակավոր կալանավորման ժամկետի՝ հանձնման նպատակով կալանավորման ժամկետի մեջ հաշվակցելու հարցը, քանի որ դատարանի գնահատմամբ՝ օրենսդրական կարգավորումների հստակությունը և յուրաքանչյուր դեպքում ժամկետների հստակ առկայությունը վկայում են դատավարական քննարկվող կառուցակարգերի ժամկետների հաշվակցման հնարավորության բացակայության մասին, հետևաբար հակառակ մոտեցումը չի կարող հիմնավոր համարվել»[12]:

Նկատի ունենալով նաև ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումը՝ օրենքում հստակ կարգավորում ստացավ վերոնշյալ հարցը՝ սահմանելով, որ «հանձնման նպատակով կալանավորման ժամկետը յուրաքանչյուր անգամ կարող է երկարաձգվել ոչ ավելի, քան երկու ամիս ժամկետով: Հանձնման նպատակով կալանավորման ընդհանուր ժամկետը չի կարող գերազանցել 10 ամիսը: Ընդ որում, օտարերկրյա պետության կողմից հետախուզվող անձին սույն օրենքով նախատեսված կարգով արգելանքի տակ պահելու ընդհանուր ժամկետը չի կարող գերազանցել 11 ամիս 10 օրը (...)»:

[12] Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 31.05.2024թ. №ԵԴ1/0125/06/23 որոշումը, տե՛ս նաև ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 13.05.2024թ. թիվ ՏԴ/0068/06/23 որոշմամբ

Նկատի ունենալով մեջբերված հոդվածը, միանգամից հարկ է նշել, որ օրենքով փոխվել են նաև հանձնման նպատակով անձին կալանքի տակ պահելու ժամկետները՝ 8 ամսից վերածվելով 10-ի:

Հաջորդ հարցը, որին կցանկանայինք անդրադառնալ, սույն աշխատանքի շրջանակներում վերաբերում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (01.07.1998թ.) 478.3-րդ հոդվածի 6-րդ մասին:

478.3-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ հանձնելու համար կալանավորման առավելագույն ժամկետում անձին հանձնելու հարցը չլուծելու կամ նրան փաստացի չհանձնելու դեպքում անձը ենթակա է անհապաղ ազատման: *Սույն հիմքով անձին ազատելը չի խոչընդոտում նրա նկատմամբ փաստացի հանձնելու նպատակով կալանավորում կիրառելուն*:

Մեջբերված հոդվածի 6-րդ մասի վերլուծությունից ակնհայտ է, որ օրենսգիրքը նախատեսում էր հանձնման համար սահմանված առավելագույն ժամկետը լրանալուց հետո անձին փաստացի հանձնման համար կալանավորելու հնարավորություն:

Միևնույն ժամանակ, օրենսգիրքը չէր պարունակում որևէ կարգավորում, որը կվերաբերեր փաստացի հանձնման նպատակով անձին կալանավորելու կարգին և ժամկետներին: Այսինքն՝ չկարգավորված էր մնում նաև այն հարցը, թե հանձնմանը խոչընդոտող հանգամանքները վերանալուց հետո, ազատության մեջ գտնվող անձին ինչպես պետք է փոխանցեր հայցող պետությանն այն դեպքում, երբ կարգավորված չէին նրան արգելանքի տակ վերցնելու, փաստացի հանձնման նպատակով դատարան միջնորդություն ներկայացնելու, դատարանում վերջինիս ներկայությունն ապահովելու հարցերը: Միջազգային փորձի ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ եվրոպական երկրներում, ելնելով հանձնման գործընթացի պարզեցված ընթացակարգից, վերոնշյալ խնդիրները չեն առաջանում, կամ նախատեսված է լինում կալանքից բացի այլ խափանման միջոցների կիրառման ճկուն համակարգ, որը հնարավորություն է տալիս իրավասու մարմիններին իրենց հսկողության տակ պահել հետախուզվող անձին, վերջինիս անխոչընդոտ հանձնման գործընթացը կազմակերպելու նպատակով[13]:

Հետևաբար, ժամանակի հրամայականն էր օրենքում նախատեսել «Փաստացի հանձնման նպատակով կալանավորելը» վերտառությամբ նոր հոդված, որով կնախատեսվեին նման միջնորդություն ներկայացնելու իրավասություն ունեցող սուբյեկտները, միջնորդությանը կից ներկայացվող փաստաթղթերը, հանձնման ենթակա անձի՝ դատական նիստի վերաբերյալ ծանուցման կարգն ու վերջինիս ներկայությունն ապահովելու պարտականություն ունեցող մարմինը, այն հարցերի շրջանակը, որին պետք է անդրադառնա դատարանը միջնորդությունը քննարկելիս և այլ հարցեր, որոնք, որ վերջապես կարգավորվեցին օրենքի 46-րդ հոդվածով:

Եվ վերջին հարցը, որին կցանկանայինք անդրադառնալ սույն հոդվածի շրջանակներում՝ վերաբերում է քրեական վարույթի փոխանցման հիմնախնդիրներին:

[13] Տե՛ս Ուկրաինայի քրեական դատավարության օրենսգրքի (12. 04. 2012) գլուխ 44, 583-585 հոդվածներ, նաև ՌԴ քրեական դատավարության օրենսգրքի (18. 12. 2001) բաժին 5, գլուխ 53-54

Հեղինակի կողմից քրեական վարույթների փոխանցման հիմնախնդիրները բարձրացվել էին դեռևս 2023 թվականի հրապարակված «Քրեական վարույթի փոխանցումը, որպես հանձնումը մերժելու հետևանք. Հիմնախնդիրներն ըստ ՀՀ օրենսդրության» հոդվածում[14], որում բարձրացվում էին այնպիսի հարցեր ինչպիսիք են փոխանցված վարույթով նոր վարույթ նախաձեռնելու, թե այն շարունակելու հարցեր, անձանց շրջանակը որոնց վերաբերյալ գործերը կարող են ստացվել կամ ուղարկվել, քրեական հետապնդման ժամկետների հաշվարկ և մի շարք այլ հարցեր, որոնք որ ենթադրվում էր, որ պետք է լուծում ստանան օրենքում և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում:

Սակայն, օրենքի 63-րդ և 64-րդ հոդվածների վերլուծությունից ակնհայտ է, որ վերը թվարկված հարցերը չեն ստացել լուծում: Ավելին, դրանք առավելապես կրում են ձևական բնույթ և արտացոլում են ՀՀ կողմից վավերացված միջազգային պայմանագրերով նախատեսված կարգավորումները:

Նկատի ունենալով վերոգրյալը՝ գտնում ենք, որ նախկին տվյալ հարցի շուրջ բարձրացված հարցերը շարունակում են լինել արդիական և պահանջում են հրատապ լուծումներ

Եզրակացություն

Ամփոփելով սույն աշխատանքը՝ հարկ է արձանագրել, որ օրենքի ընդունումը պետք է դիտարկել դրական և անհրաժեշտ քայլ իրավակիրառ պրակտիկայի համար: Չնայած քրեական գործերով միջազգային համագործակցությանը վերաբերող երկկողմ և բազմակողմ պայմանագրերի առկայությանը՝ մի շարք հարցեր պահանջում էին ներպետական օրենսդրությամբ նախատեսված լուծումներ, որոնք կարգավորվեցին օրենքով: Օրենքում հստակ սահմանվեցին հետախուզվող անձանց հետաքննության մարմին ներկայացնելու, վերջիններիս ձերբակալման հարցեր, սահմանազատվեցին ժամանակավոր և հանձնման նպատակով կալանքները, փոփոխության ենթարկվեց հանձնման նպատակով կալանավորման ժամկետը, օրենքով վերջապես նախատեսվեց միջազգային պայմանագրերով նախատեսված, սակայն նախկինում կարգավորում չունեցող փաստացի հանձնման նպատակով կալանավորման տեսակը և մի շարք այլ կարևոր հարցեր:

Այնուամենայնիվ, որոշ հարցեր դեռևս շարունակում են մնալ չլուծված:

Մասնավորապես, խոսքը վերաբերում է հանձնման մասին միջնորդությունը մասնակի բավարարելու դեպքում չբավարարված մասով քրեական հետապնդումը դադարեցնելու հիմքին: Տվյալ հարցի կապակցությամբ կարծում ենք, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը պետք է լրացնել նոր՝ հանձնման մասին միջնորդությունը մասնակի բավարարելու դեպքում քրեական հետապնդումը դադարեցնելու հիմքով:

[14] «Քրեական վարույթի փոխանցումը, որպես հանձնումը մերժելու հետևանք. հիմնախնդիրներն ըստ ՀՀ օրենսդրության», «Օրինականություն», ՀՀ դատախազության գիտագործնական և ուսումնամեթոդական հանդես, № 134, հրատ., Երևան, 2023, 21-27 էջեր:

Գրականության ցանկ (reference list, список литературы)

1. «Քրեական վարույթներով իրավական օգնության մասին» ՀՀ օրենք (15.11.2024թ.):

Law on legal assistance in criminal procedure of RA (15.11.2024թ.)

2. «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» 22.01.1993թ. Մինսկի Կոնվենցիա:

Convention on Legal Aid and Legal Relations in Civil, Family and Criminal Cases, adopted in Minsk on 22.01.1993 (The Minsk Convention).

3. «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» 07.10.2002թ. Քիշնևի կոնվենցիա:

Convention on Legal Aid and Legal Relations in Civil, Family and Criminal Cases, adopted in Kishinev on 07.10.2002 (The Kishinev Convention).

4. «Քրեական գործերով փոխադարձ օգնության մասին» 20.04.1959թ. եվրոպական կոնվենցիա:

European Convention on Mutual Assistance in Criminal Matters (20.04.1959).

5. Ուկրաինայի քրեական դատավարության օրենսգրքի (12.04.2012):

Criminal procedure code of Ukraine (12.02.2012).

6. Ռուսաստանի Դաշնության քրեական դատավարության օրենսգրքի (18.12.2001):

Criminal procedure code of Russian Federation (18.12.2001).

7. «Law of Georgia on international cooperation in criminal matters» 21.07.2010:

«Law of Georgia on international cooperation in criminal matters» 21.07.2010.

8. https://www.consultant.ru/document/cons_doc_LAW_343792/28920b759dc8e7b8fa6cf13d2f88a99490aa7270/

9. ՀՀ Սահմանադրական դատարանի 2022 թվականի հուլիսի 12-ի թիվ ՍԴՈ-127 որոշումը:

Decision No.ՍԴՈ-127 of the Constitutional Court of the RA of July 12, 2022.

10. ՀՀ Սահմանադրական դատարանի 2022 թվականի սեպտեմբերի 16-ի թիվ ՍԴՈ-150 որոշումը:

Decision No.ՍԴՈ-150 of the Constitutional Court of the RA of September 16, 2022.

11. ՀՀ Սահմանադրական դատարանի 2025 թվականի հուլիսի 8-ի թիվ ՍԴԱՈ-109 որոշումը:

Decision No.ՍԴԱՈ-109 of the Constitutional Court of the RA of July 8, 2025.

12. ՀՀ վճռաբեկ դատարանի 31.05.2024թ. №ԵԴ1/0125/06/23 որոշումը:

Decision No. ԵԴ1/0125/06/23 of the Cassation Court of the RA of 31 May, 2024.

13. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 21.12.2023թ. թիվ ԵԴ1/1086/06/23 որոշումը:

Decision No. ԵԴ1/1086/06/23 of the Apple Court of the RA 21 December, 2023.

14. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 13.05.2024թ. թիվ ՏԴ/0068/06/23 որոշմամբ:

Decision No. ՏԴ/0068/06/23 of the Apple Court of the RA 13May, 2024.

15. Երևան քաղաքի ընդհանուր իրավասության քրեական դատարանի 2023 թվականի նոյեմբերի 16-ի թիվ ԵԴ1/0125/06/23 որոշումը:

Decision No. ԵԴ1/0125/06/23 of Criminal Court of First Instance of General Jurisdiction of the RA 16 November, 2023.

16. «Քրեական վարույթի փոխանցումը, որպես հանձնումը մերժելու հետևանք. հիմնախնդիրներն ըստ ՀՀ օրենսդրության», «Օրինականություն», ՀՀ դատախազության գիտագործնական և ուսումնամեթոդական հանդես, № 134, հրատ., Երևան, 2023:

Transfer of criminal proceedings as a result of refusal of extradition: main issues under the legislation of the RA, Scientific-practical journal "Legality" of the Prosecutor's Office of the Republic of Armenia, No. 134, Yerevan, 2023

Gayane Melikyan
Senior Prosecutor of the Department of International Legal Cooperation of the Prosecutor General's Office of the Republic of Armenia, Lecturer of the Department of Criminal Procedure and Criminology of Yerevan State University, Ph.D. in Law

EXISTING ISSUES IN THE FIELD OF THE LEGAL ASSISTANCE IN CRIMINAL PROCEEDINGS: A COMPARATIVE ANALYSIS BETWEEN PREVIOUS AND CURRENT LEGISLATION REGULATING THE FIELD[15]

Abstract

The article is dedicated to the international cooperation in criminal proceedings. The choice and relevance of the subject are largely conditioned by the entry into force of the RA Law "On Legal Assistance in criminal Proceedings" dated December 12, 2024 (Law). Discussing issues of international cooperation in criminal proceedings, the author draws parallels between previous and current regulations, highlights practical problems arising both under the previous and the new Law, analyzes relevant decisions of the RA courts that have become precedents in addressing these issues and are reflected in the Law, and presents corresponding solutions regarding still unregulated problems.

At the same time, the article analyzes the new regulations introduced in the Law, which gives solution to a number of Issues that have arisen in practice for years, reveals the purpose of the new regulations proposed by the Law, and discusses the possible problems in the future.

Keywords: extradition request; criminal prosecution; person in search, termination of the proceedings, transfer of criminal proceedings, wanted person; jurisdiction; international treaty; convention; to initiate criminal proceeding; terms of persecution.

[15] The article was presented on 23.05.2025 and was reviewed on 20.06.2025.

Гаяне Меликян
Старший прокурор управления международно-правового сотрудничества Генеральной прокуратуры Республики Армения, преподаватель кафедры уголовного судопроизводства и криминалистики Ереванского государственного университета, кандидат юридических наук

СУЩЕСТВУЮЩИЕ ПРОБЛЕМЫ В СФЕРЕ ЮРИДИЧЕСКОЙ ПОМОЩИ ПО УГОЛОВНЫМ ДЕЛАМ: СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ МЕЖДУ ПРЕДЫДУЩИМ И ДЕЙСТВУЮЩИМ ЗАКОНОДАТЕЛЬСТВОМ, РЕГУЛИРУЮЩИМ ДАННУЮ СФЕРУ[16]

Абстракт

Статья посвящена международному сотрудничеству в уголовном судопроизводстве. Выбор и актуальность темы в значительной степени обусловлены вступлением в силу Закона РА «О правовой помощи по уголовным делам» от 12 декабря 2024 года (далее также – Закон). Анализируя вопросы международного сотрудничества по уголовным делам, автор проводит параллели между предыдущим и действующим регулированием, выявляет проблемы, возникающие как при предыдущим, так и при новом Законе, анализирует прецедентные решения судов РА, направленные на их урегулирование и нашедшие отражение в Законе, и представляет соответствующие решения в отношении все еще неурегулированных проблем.

Одновременно, в статье анализируются новые положения, содержащиеся в Законе и разрешающие ряд проблем, возникавших на практике в течение многих лет, раскрывается цель новых положений, предложенных Законом, с обсуждением возможного возникновения проблем в будущем.

Ключевые слова: запрос о выдаче; уголовное преследование; разыскиваемый; прекращение производство по делу; международный договор; конвенция; возбудить уголовное производство; сроки преследования.

[16] Статья была представлена 23.05.2025 и прошла рецензирование 20.06.2025.

https://doi.org 10.59821/18294219-2025.1-sds07

Անի Սարգսյան
ՀՀ գլխավոր դատախազության սեփականության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության ավագ դատախազ, իրավաբանական գիտությունների թեկնածու, Հայ-Ռուսական համալսարանի իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի ամբիոնի ավագ դասախոս

ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ. ՈՐՈՇ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ[1]

Համառոտագիր

Հոդվածը նվիրված է Հայաստանի Հանրապետության դատախազության սահմանադրական լիազորությունների հետազոտմանը, ՀՀ Սահմանադրությամբ և «Դատախազության մասին» ՀՀ օրենքով նախատեսված «լիազորություններ» հասկացության բովանդակության բացահայտնմանն ու առանձնահատկությունների վերլուծությանը: Միաժամանակ, հոդվածում առանձնահատուկ քննարկման առարկա են հանդիսանում առհասարակ «լիազորություններ» և «գործառույթներ» հասկացությունների հարաբերակցության և սահմանազատման, դատախազության գործունեության հիմնական ուղղությունները՝ որպես լիազորություն կամ գործառույթ դիտարկելու հարցերը, ինչպես նաև դրանցից բխող որոշ արդի հիմնախնդիրներ:

Հոդվածում հեղինակի կողմից իրավահամեմատական վերլուծության են ենթարկվում ՀՀ Սահմանադրության տարբեր խմբագրություններում դատախազության լիազորությունների ձևակերպումները, ինչպես նաև տարբեր տարիներին ընդունված և գործած (գործող կամ արդեն ուժը կորցրած) «Դատախազության մասին» ՀՀ օրենքներում դատախազության լիազորություններին վերաբերելի համապատասխան իրավադրույթները, դրանց ամրագրումների ընթացիկ զարգացումները և այլն:

Աշխատանքում անդրադարձ է կատարվում նաև դատախազության սահմանադրական առանձին լիազորությունների բովանդակության բացահայտմանը, դրանց բնորոշ հիմնական առանձնահատկությունների ներկայացմանը, որի միջոցով, առավել կարևորելով դատախազության դերից, կոչումից և առաքելությունից բխող՝ վերջինիս գործունեության հիմնական ուղղություններ՝ գործառույթներ հանդիսանալու հանգամանքը, հեղինակի կողմից կատարվում են կոնկրետ եզրահանգումներ և ներկայացվում են համապատասխան առաջարկություններ:

Հիմնաբառեր- սահմանադրահիրավական կարգավիճակ, լիազորություններ, իրավասություն, գործառույթներ, դատախազության սահմանադրական լիազորություններ, դատախազության գործառույթներ:

[1] Հոդվածը ներկայացվել է 24.08.2023թ., գրախոսվել է 21.11.2023թ.:

Ներածություն

Մեր պետության և հասարակության կյանքում մեծագույն դերակատարություն ունեցող այնպիսի պետական մարմնի սահմանադրաիրավական կարգավիճակի և դրանից բխող գործառույթների ու լիազորությունների ուսումնասիրության անհրաժեշտությունը, ինչպիսին դատախազությունն է, անվիճելի իրողություն է:

Ուսումնասիրվող թեման ներկայումս առանձնապես արդիական և հրատապ է, քանզի Հայաստանի Հանրապետությունում վերջին ժամանակահատվածում տեղի ունեցան և դեռևս շարունակվում են դատահիրավական համակարգային բարեփոխումներ, որոնցից ՀՀ դատախազությունը, անշուշտ, չէր կարող անմասն մնալ: Ակնհայտ է նաև, որ պետության իրավական, քաղաքական և տնտեսական կյանքում տեղի ունեցող փոփոխությունները չեն կարող չազդել հիմնական պետական ինստիտուտների, այդ թվում նաև՝ իրավապահ գործառույթ իրականացնող կառույցների գործունեության վրա:

Այդ համատեքստում ՀՀ Սահմանադրությունը և «Դատախազության մասին» ՀՀ օրենքը ևս ենթարկվել են որոշակի փոփոխությունների և լրացումների, ընդունվել, գործել և գործում են նշված իրավական ակտերի տարբեր խմբագրություններ, որոնք ունեն մանրամասն հետազոտման կարիք, մասնավորապես՝ դատախազության սահմանադրական լիազորությունների ամրագրման և հետագա կոնկրետացման հարցում, ուստի սույն աշխատանքի նպատակն ու խնդիրները բխում են հենց այդ առաջնահերթություններից:

1. Դատախազության սահմանադրական լիազորությունները

Առհասարակ պետական մարմնի իրավական կարգավիճակի հիմքն այն նորմերի ամբողջությունն է, որոնք սահմանում են նրա նպատակները, խնդիրները, գործառույթները և լիազորությունները, ինչպես նաև այն դիրքը, որը նա գրավում է այլ մարմինների շարքում[2]: Դատախազությունը ևս բացառություն չէ և վերջինիս սահմանադրաիրավական կարգավիճակն իրենից ներկայացնում է սահմանված նպատակները, խնդիրները և հատկապես գործառույթներն ու լիազորությունները սահմանող իրավադրույթների ամբողջություն: Ինչպես գիտենք, Հայաստանի Հանրապետության դատախազության համակարգը և գործունեության կարևորագույն ուղղություններն ամրագրված են մեր պետության Հիմնական օրենքում: Այսպես, դեռևս 1995 թվականի հուլիսի 5-ին ընդունված ՀՀ Սահմանադրության 103-րդ հոդվածը կարգավորում էր դատախազության կարգավիճակը և, ըստ այդմ, ամրագրում հետևյալը.

«Հայաստանի Հանրապետության դատախազությունը միասնական, կենտրոնացված համակարգ է, որը ղեկավարում է գլխավոր դատախազը: Դատախազությունը՝

1) օրենքով նախատեսված դեպքերում և կարգով հարուցում է քրեական հետապնդում.

2) հսկողություն է իրականացնում նախաքննության և հետաքննության օրինականության նկատմամբ.

[2] Щерба С.П., Решетникова Т.А., Зайцев О.А. Прокуратура в странах СНГ, правовой статус, функции, полномочия, М., Изд. Экзамен, 2007, С. 10.

3) դատարանում պաշտպանում է մեղադրանքը.

4) պետական շահերի պաշտպանության հայց է հարուցում դատարան.

5) բողոքարկում է դատարանների վճիռները, դատավճիռները և որոշումները.

6) հսկողություն է իրականացնում պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման նկատմամբ:

Դատախազությունը գործում է Սահմանադրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակում, դատախազության մասին օրենքի հիման վրա»:

Այնուհետև՝ 2005 թվականի նոյեմբերի 27-ի փոփոխությունների արդյունքում ՀՀ Սահմանադրության նշված հոդվածը ստացել է հետևյալ բովանդակությունը.

«Հայաստանի Հանրապետության դատախազությունը միասնական համակարգ է, որը ղեկավարում է գլխավոր դատախազը:

Գլխավոր դատախազին Հանրապետության Նախագահի առաջարկությամբ նշանակում է Ազգային ժողովը՝ 6 տարի ժամկետով: Նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ նշանակվել գլխավոր դատախազ:

Օրենքով սահմանված դեպքերում Հանրապետության Նախագահի առաջարկությամբ Ազգային ժողովը պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ կարող է պաշտոնանկ անել գլխավոր դատախազին:

Դատախազությունն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով՝

1) հարուցում է քրեական հետապնդում.

2) հսկողություն է իրականացնում հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ.

3) դատարանում պաշտպանում է մեղադրանքը.

4) պետական շահերի պաշտպանության հայց է հարուցում դատարան.

5) բողոքարկում է դատարանների վճիռները, դատավճիռները և որոշումները.

6) հսկողություն է իրականացնում պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ:

Դատախազությունը գործում է Սահմանադրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակում՝ օրենքի հիման վրա»:

Ներկայումս գործող՝ 2015 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրությամբ արդեն իսկ առանձին գլխով է ամրագրված ՀՀ դատախազության, նաև՝ քննչական մարմինների սահմանադրական կարգավիճակը (Գլուխ 8. Դատախազությունը և քննչական մարմինները): Մասնավորապես, նշված գլխում զետեղված 176-րդ և 177-րդ հոդվածները սահմանում են ՀՀ դատախազության և գլխավոր դատախազի սահմանադրաիրավական կարգավիճակները: Այսպես, ՀՀ Սահմանադրության 176-րդ հոդվածի համաձայն՝

«1. Դատախազությունը միասնական համակարգ է, որը ղեկավարում է գլխավոր դատախազը:

2. Դատախազությունն օրենքով սահմանված դեպքերում և կարգով՝

1) հարուցում է քրեական հետապնդում.

2) հսկողություն է իրականացնում մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ.

3) դատարանում պաշտպանում է մեղադրանքը.

4) բողոքարկում է դատարանների վճիռները, դատավճիռները և որոշումները.

5) հսկողություն է իրականացնում պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ:

3. Դատախազությունն օրենքով սահմանված բացառիկ դեպքերում և կարգով պետական շահերի պաշտպանության հայց է հարուցում դատարան:

4. Դատախազությունը գործում է Սահմանադրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակում՝ օրենքի հիման վրա:

5. Դատախազության կազմավորման և գործունեության կարգը սահմանվում է օրենքով»:

Դեռևս 2005 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության մեկնաբանությունների համաձայն՝ Սահմանադրության 103-րդ հոդվածի նորմերի մեկնաբանությունից բխում են դատախազության սահմանադրաիրավական կարգավիճակին վերաբերող հետևյալ դրույթները՝

- դատախազությունը դատախազական մարմինների համակարգ է,
- դատախազությունը միասնական համակարգ է,
- դատախազությունը՝ որպես միասնական համակարգ, ղեկավարում է գլխավոր դատախազը[3]:

Ակնհայտ է, որ թվարկված հիմնադրույթները 2015 թվականի սահմանադրական փոփոխություններով, ըստ էության, անփոփոխ են մնացել: Ըստ այդմ, դատախազությունը կարելի է բնորոշել որպես միայն իրեն ներհատուկ գործառույթներ իրականացնող որոշակի համակարգ: Այսինքն՝ տվյալ ինստիտուտն իրենից ներկայացնում է ոչ թե առանձին մարմին, այլ մարմինների համակարգ, որպիսի հանգամանքն իր ամրագրումն է ստացել նաև «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածում, ըստ որի՝ *Հայաստանի Հանրապետության դատախազությունը միասնական համակարգ է, որը ղեկավարում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը: Դատախազությունը Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ իրեն վերապահված լիազորություններն իրականացնում է դատախազների միջոցով:*

Ընդ որում, նշված համակարգը կազմված է ՀՀ գլխավոր դատախազությունից, Երևան քաղաքի դատախազությունից, Երևան քաղաքի վարչական շրջանների և մարզերի դատախազություններից, ինչպես նաև ՀՀ զինվորական դատախազությունից: Այսպիսով, ՀՀ դատախազությունը միասնական և ոչ թե ապակենտրոնացված համակարգ է, ինչի մասին վկայում են դատախազության մարմինների նպատակների և խնդիրների միասնականությունը, դատախազության կառուցվածքային բոլոր ստորաբաժանումների գործունեության միասնականությունը, դատախազներին ներկայացվող միասնական պահանջները: Եվ վերջապես, դատախազությունը՝ որպես միասնական համակարգ, գլխավորում և ղեկավարում է ՀՀ գլխավոր դատախազը:

Միաժամանակ, հարկ է նկատել, որ դատախազական կառույցների հիմնական կոչման և առաքելության բնույթից ելնելով, տարբեր պետություններում կա՛մ

[3] ՀՀ Սահմանադրության մեկնաբանություններ / ընդհ. խմբ. Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի – Եր. «Իրավունք», 2010, էջ 1000-1001:

բարձրագույն՝ սահմանադրական, կա՛մ առնվազն օրենսդրական մակարդակով ամրագրվում են դատախազական համակարգի գործունեության էական և կարևորագույն ուղղությունները:

Ինչպես արդեն իսկ նշվեց, մեր պետության Սահմանադրությամբ ևս սահմանված է դատախազության գործունեության հիմնական ուղղվածությունը[4], որոնց թվարկումը և բովանդակության հետագա բացահայտումը պարունակվել և պարունակվում է նաև տարբեր տարիներին ընդունված և գործած՝ դատախազության մասին օրենսդրական ակտերով: Այսպես, թե՛ 1998 թվականի հուլիսի 01-ին, թե՛ 2007 թվականի փետրվարի 22-ին և թե՛ 2017 թվականի նոյեմբերի 17-ին ընդունված «Դատախազության մասին» օրենքների 24-29-րդ հոդվածները մանրամասնորեն կարգավորում են ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված՝ դատախազության գործունեության հիմնական ուղղությունները[5]:

Այս առումով ևս Սահմանադրության բոլոր խմբագրությունները և համապատասխան օրենքներն ըստ էության անփոփոխ են մնացել այն իմաստով, որ թեկուզև որոշակի ձևակերպումների (օրինակ՝ հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողությունը փոխակերպվել է մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության) կամ դրանց թվարկման հաջորդականության փոփոխությամբ (օրինակ՝ պետական շահերի պաշտպանության հայց հարուցելը նախատեսված է այլ մասով՝ արդեն որպես օրենքով նախատեսված բացառիկ դեպքերում և կարգով իրականացվելիք գործողություն) հանդերձ, այնուամենայնիվ, թե՛ դատախազությանը վերապահված լիազորությունների շրջանակը, թե՛ դրանց բնույթը, ինչպես նաև որպես «լիազորություն» հռչակումը որևէ փոփոխության չեն ենթարկվել: Համենայն դեպս, *«դատախազությունը գործում է Սահմանադրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակում՝ օրենքի հիման վրա»* ձևակերպումը գրեթե նույնությամբ առկա է ՀՀ Հիմնական օրենքի բոլոր խմբագրություններում, հետևաբար, սահմանադրական մակարդակով մշտապես հաստատվել է դատախազությանը վերապահված գործունեության՝ «լիազորություն» հանդիսանալու հանգամանքը, որպիսի փաստով էլ պայմանավորված է սույն գիտական հոդվածի հետագա մասերում համապատասխան թեզերի առաջադրումը:

2. «Լիազորություններ» և «գործառույթներ» հասկացությունների հարաբերակցությունը[6]

[4] Սահմանադրի եզրութաբանությամբ՝ լիազորությունները, հեղինակի մոտեցմամբ՝ գործառույթները: Այս մասին առավել մանրամասն կներկայացվի ստորև:

[5] Տե՛ս 1998 թվականի հուլիսի 01-ին ընդունված և 2007 թվականի մայիսի 01-ին ուժը կորցրած, 2007 թվականի փետրվարի 22-ին և 2018 թվականի ապրիլի 09-ին ուժը կորցրած, 2017 թվականի նոյեմբերի 17-ին ընդունված և ներկայումս գործող՝ «Դատախազության մասին» օրենքները:

[6] Նշված հասկացությունների հարաբերակցությանը հեղինակի կողմից որոշակի անդրադարձ նաև կատարվել է դեռևս 2011 թվականին հրատարակված գիտական հոդվածում՝ Ա. Սարգսյան *«Հայաստանի Հանրապետության դատախազության «սահմանադրական գործառույթներ» և «լիազորություններ» եզրույթների հարաբերակցության հիմնախնդիրը»* («Դատական իշխանություն»

Այսպես, վերոգրյալի համատեքստում, նախևառաջ, հարկ է ուսումնասիրել վկայակոչված՝ «լիազորություն» (полномочие), «գործառույթ» (функция) և «իրավասություն» (компетенция/юрисдикция) կատեգորիաները և այդպիսով պարզել, թե արդյոք վերոհիշյալ գործողությունները, որոնց կատարմանն է կոչված դատախազությունը, վերջինիս լիազորություններն են, ինչպես նշվում է տարբեր իրավական ակտերում, թե կարող են միանգամայն այլ բնույթ ունենալ:

Այսպիսով, առաջին հերթին, հարկ է պարզել նշված եզրույթների էությունն ու բովանդակությունն առհասարակ, ինչից հետո անդրադարձ կատարել կոնկրետ դատախազության առնչությամբ համապատասխան եզրույթի կիրառման հիմնավորվածությանը:

Այսպես, մասնագիտական գրականության մեջ «լիազորություն» հասկացությունը դիտարկվում է երկու տեսանկյունից՝ քաղաքացիական կամ մասնավոր իրավունքի և հանրային իրավունքի տեսակետներից: Մասնավորապես, քաղաքացիական իրավունքում «լիազորություն» հասկացության ներքո դիտարկում են անձի գործարքներ կնքելու կամ չկնքելու սուբյեկտիվ իրավունքը: Մասնավորապես, նշվում է, որ լիազորությունը սուբյեկտիվ քաղաքացիական իրավունք է, որը լիազորում է իր կրողին կնքել պայմանագիր[7]:

Ուսումնասիրվող հարցադրումների շրջանակներում առավելապես կարևորվում է այն, թե կոնկրետ հանրային իրավունքի տեսանկյունից ինչ է իրենից ներկայացնում լիազորությունը: Այսպես, չնայած այն հանգամանքին, որ շատ հաճախ լիազորությունն ընկալվում է որպես իրավունքի իրականացման հայեցողական ազատություն, մի քանի հնարավոր տարբերակներից որևէ մեկն ընտրելու հնարավորություն, հանրային իրավահարաբերություններում այն դիտարկվում է որպես համապատասխան սուբյեկտի *իրավունքը* և միաժամանակ *պարտականությունը*՝ գործելու օրենքով կամ այլ իրավական ակտով սահմանված կարգով[8]:

Ընդհանուր առմամբ, յուրաքանչյուր պետական մարմին օժտված է *պետաիշխանական լիազորություններով,* որոնք թույլ են տալիս իրեն տրամադրված իրավունքների շրջանակներում լուծել որոշակի հարցեր, ընդունել այլ պետական մարմինների կողմից պարտադիր կատարման ենթակա ակտեր և ապահովել այդ ակտերի կատարումը[9]: Ընդ որում, պետաիշխանական լիազորություններն իրենց արտահայտումն են գտնում պետական մարմինների *իրավասության* մեջ, որի ներքո հարկ է հասկանալ իրենց կարգավորման

գիտամեթոդական ամսագիր, 2011, հուլիս-օգոստոս, ISSN 1829-0744), էջ 50-55, սակայն, հաշվի առնելով արդեն իսկ վերևում հիշատակված՝ խնդրի մինչ օրս պահպանվող արդիականությունը, ինչպես նաև սահմանադրական և օրենսդրական մի շարք փոփոխությունների լույսի ներքո դրանց վերստին և առավել համապարփակ քննարկման անհրաժեշտությունը, սույն հոդվածում արծարծվում է նշված հասկացությունների հարաբերակցության հստակեցման և տարանջատման հարցը:

[7] Օրինակ, տե՛ս https://justicemaker.ru/view-article.php?id=4&art=2956:

[8] Տե՛ս Тихомиров Ю.А. Теория компетенции. М., 2004, С. 53, 56, 116:

[9] Տե՛ս Козлова Е.И., Кутафин О.Е. Конституционное право России: Учебник.- 2-е изд., перераб. и доп.- М.: Юристъ, 2005.- С. 190.

առարկաների և լիազորությունների ամբողջությունը, որոնցով նրանք օժտված են[10]:

Այսինքն՝ լիազորություններն իրենցից ըստ երևույթին ներկայացնում են որևէ մարմնի՝ պետական կամ տեղական ինքնակառավարման կամ դրա պաշտոնատար անձի իրավունքների ու պարտականությունների ամբողջություն, որը վերջիններիս վերապահվում է՝ ելնելով համապատասխան մարմնի կամ դրա պաշտոնատար անձի կարգավիճակի բնույթից ու առանձնահատկություններից[11]:

«Լիազորություն» և «իրավասություն» տերմիններին զուգահեռ անհրաժեշտություն է առաջանում վերլուծել նաև «գործառույթ» եզրույթը և այդ կապակցությամբ նկատել, որ գիտական տարբեր աղբյուրներում կարող են հանդիպել նշված հասկացության սահմանման տարբեր մոտեցումներ, սակայն, ըստ էության, համախմբելով դրա հիմնական բնութագրիչները, որոնք ընդհանրական են գրեթե բոլոր սահմանումներում, կարելի է համաձայնել այն մոտեցման հետ, որ «գործառույթները», այլ կերպ ասած՝ «ֆունկցիաները» (լատիներենից թարգմանաբար՝ «իրականացում, կատարում») հարաբերությունների որոշակի համակարգում որևէ օբյեկտի հատկանիշների արտաքին արտացոլումն են, նրա գործունեությունը, պարտականությունը, աշխատանքը: Որպես ընդհանրական սահմանում՝ կարելի է շեշտել նաև, որ գործառույթներն այս կամ այն քաղաքական-իրավական ինստիտուտի, **մարմնի գործունեության հիմնական ուղղություններն ու ճանապարհներն են, այդ գործունեության բովանդակությունը և դրա ապահովումն են**[12] (ընդգծումը՝ հեղինակի):

Տեսական աղբյուրներից զատ, հարկ է անդրադառնալ նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում կիրառվող հասկացություններին և փորձել դրանք համադրել սահմանադրական և (կամ) օրենսդրական եզրութաբանության հետ: Այսպես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի[13] (այսուհետ՝ Օրենսգիրք)՝ դրանում կիրառվող հիմնական հասկացությունները սահմանող 6-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի համաձայն՝ դատախազ է հանդիսանում պետական պաշտոնատար անձը, որը քրեական վարույթի ընթացքում պետության անունից իրականացնում է **դատախազության՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ նախատեսված <u>իրավասության</u> շրջանակում օրենքով իրեն վերապահված <u>լիազորությունները</u>** (ընդգծումը՝ հեղինակի):

Այսինքն՝ Օրենսգրքով, ի տարբերություն «Դատախազության մասին» ՀՀ օրենքի և նույնիսկ ի հակասություն ՀՀ Սահմանադրության, ՀՀ Սահմանադրությամբ թվարկված «լիազորությունները» չեն ընկալվում որպես այդպիսիք, այլ

[10] Տե՛ս նույն տեղում, էջ 190-191:

[11] Ա. Սարգսյան «Հայաստանի Հանրապետության դատախազության «սահմանադրական գործառույթներ» և «լիազորություններ» եզրույթների հարաբերակցության հիմնախնդիրը» («Դատական իշխանություն» գիտամեթոդական ամսագիր, 2011, հուլիս-օգոստոս, ISSN 1829-0744), էջ 52:

[12] Մասնավորապես, այսպիսի ձևակերպում առկա է հետևյալ աշխատանքում՝ Теория государства и права: учебник/ под общей ред. Пиголкина А.С.. М., Юрайт-Издат. ISBN 5-94879-708-2, С. 138-139:

[13] Տե՛ս ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը, ընդունված՝ 2021 թվականի հունիսի 30-ին, ուժի մեջ մտած՝ 2022 թվականի հուլիսի 01-ին:

նշվում են որպես «իրավասություն», որի շրջանակում արդեն իսկ օրենքով դատախազությանը վերապահվում են լիազորություններ:

Միաժամանակ, նույն օրենսգրքի հաջորդող իրավադրույթներում առկա են դատախազի լիազորությունների այլ դասակարգումներ և թվարկումներ: Այսպես, Օրենսգրքի 37-րդ հոդվածը վերնագրված է «Վերադաս դատախազի լիազորությունները մինչդատական վարույթում», 38-րդ հոդվածը՝ «Հսկող դատախազի լիազորությունները մինչդատական վարույթում», 39-րդ հոդվածը՝ «Դատախազի լիազորությունների դատական վարույթի ընթացքում», 39.2-րդ հոդվածը՝ «Դատախազների խմբի ղեկավարի և անդամների լիազորությունները»: Ընդ որում, նշված հոդվածներում կամ դրանցից առնվազն մի քանիսում թվարկվում են մի քանի տասնյակ լիազորություններ, որոնք վերապահված են, օրինակ, վերադաս կամ հսկող կամ դատարանում մեղադրանքը պաշտպանող դատախազին: Հասարակ թվաբանական հաշվարկներ կատարելով անգամ պարզ է դառնում, որ նշված օրենսգրքում տեղ են գտել լիազորություններ, որոնք չեն բխում ՀՀ Սահմանադրության տեքստի տառացի ընկալումից:

Վերոգրյալի լույսի ներքո, նախևառաջ, աչքի է զառնում այն հանգամանքը, որ որոշակի «հակասություն» է առաջանում ՀՀ Սահմանադրության և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի դրույթների միջև: Միանշանակորեն անընդունելի ենք համարում Օրենսգրքով սահմանված լիազորությունները որպես սահմանադրական լիազորությունների մաս, շարունակություն, դրանց լրացում կամ առավել ևս՝ ենթալիազորություն դիտարկելը: Ընդ որում, ընդունելի չէ նաև այն դիտարկումը, որ Սահմանադրությամբ ներկայացված են դատախազության լիազորությունները, իսկ Օրենսգրքով՝ դատախազների լիազորությունները, քանի որ դատախազությունը, ինչպես արդեն նշել ենք, կենտրոնացված համակարգ է՝ միասնական լիազորություններով և այս տեսանկյունից դատախազի և դատախազության գործունեության ուղղություններն ու նպատակները միասնական են: Ընդ որում, այն պարագայում, երբ այդ ուղղությունների «անվանումը» Սահմանադրությամբ լիազորություն է, ընթացիկ օրենսդրությամբ դրանք չեն կարող վերածվել «իրավասության» կամ այլ կատեգորիայի:

Այնուհանդերձ, նպատակ չունենալով սույն աշխատանքում քննարկել զուտ օրենքի դրույթի սահմանադրականության հարցը, կփորձենք վերացարկվել այդ հանգամանքից և անդրադառնալ այն խնդրին, թե արդյոք ընդունելի է պետության հասարակական և քաղաքական կյանքում կարևորագույն նշանակություն ունեցող փաստաթղթում ամրագրել խնդրո առարկա հանդիսացող մարմնի «լիազորություններ» և արդյոք առավել նպատակահարմար չէր լինի դատախազության գործունեության հիմնական ուղղությունները ընկալել և դիտարկել որպես վերջինիս «գործառույթներ» և անվանել որպես այդպիսիք:

Առհասարակ դատախազության՝ որպես պետական միասնական համակարգի գործունեության բովանդակությունը բացահայտելու համար կարելի է օգտագործել մի շարք եզրույթներ՝ «գործառույթ» («ֆունկցիա»), «գործունեության հիմնական ուղղություն», «դատախազական գործունեության ճյուղ», «իրավասություն»,

«լիազորություն»: Միաժամանակ, հարկ է նկատել, որ տեսության մեջ թվարկված իրավական կատեգորիաների բովանդակության շուրջ միասնական մոտեցումների բացակայությամբ պայմանավորված օրենսդրական ակտերում ևս դրանք հաճախ ունենում են հակասական կամ ոչ տեղին կիրառություններ:

Կարծում ենք, որ վերը ներկայացված հասկացությունների սահմանումները թույլ են տալիս պնդել, որ պետության կարևորագույն փաստաթղթում՝ հիմնական օրենքում պետք է ամրագրված լինեն ոչ թե որևէ պետական ինստիտուտի լիազորությունները, այլ կերպ ասած՝ լոկ իրավունքներն ու պարտականությունները, այլ նրա գործառույթները, այսինքն՝ գործունեության հիմնական, գլխավոր, կարևորագույն ուղղությունները: Այսինքն՝ համաժողովրդական քվեարկության արդյունքում ընդունված նորմատիվ իրավական ակտը պետք է առաջնահերթորեն սահմանի տվյալ պետական մարմնի գործառույթները, իսկ նրա իրավունքներն ու պարտականությունները՝ լիազորությունները, որոնք բխում են գործառույթներից և իրականացվում են վերջիններիս սահմաններում, ըստ երևույթին կարող են ամրագրվել պետության օրենսդիր մարմնի կողմից՝ համապատասխանեցվելով Սահմանադրության պահանջներին: Հետևաբար, սույն աշխատանքի շրջանակներում «դատախազության սահմանադրական գործառույթներ» եզրույթի ներքո դիտարկվում են դատախազության մարմինների գործունեության՝ ՀՀ Սահմանադրությամբ նախանշված ուղղությունները:

Ըստ այդմ, ստորև փորձենք վերլուծել թվարկված գործառույթների բնույթն ու էությունը, ինչը ևս մեկ անգամ կարող է փաստել դրանց՝ «գործառույթներ» վերանվանելու կամ առնվազն որպես այդպիսիք ընկալելու նպատակահարմարությունն ու անհրաժեշտությունը:

3. Դատախազության սահմանադրական «լիազորությունների» ընդհանուր նկարագիրը

Այսպիսով, դատախազության առաջնային գործառույթներից է «քրեական հետապնդման հարուցումը», որն իր բնույթով պետաիշխանական գործառույթ է: «Դատախազության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ քրեական հետապնդման հարուցման կարգն ու հիմքերը սահմանվում են Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով[14]:

Ընդ որում, հարկ է նկատել, որ նախկինում գործած օրենսդրական ակտերում (օրինակ՝ 2007 թվականի փետրվարի 02-ին ընդունված և մինչև 2018 թվականի ապրիլի 9-ը գործած՝ «Դատախազության մասին» ՀՀ օրենքում) այն ներկայացված էր որպես դատախազի բացառիկ լիազորություն, ինչը պետք է նշանակեր, որ որևէ այլ պետական մարմին կամ պաշտոնատար անձ չի կարող օժտված լինել նման իրավասությամբ: Չնայած հենց այդ բացառիկությունը փաստացի ամրագրվեց ավելի ուշ՝ 2022 թվականի հուլիսի 01-ից ուժի մեջ մտած ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով: Հենց նշված օրենսդրական ակտով նախատեսվեցին մի շարք հիմնարար և սկզբունքային «նորամուծություններ»,

[14] «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդված:

որոնք, մասնավորապես, ուղղված են դատավարության շարժիչ ուժի՝ քրեական հետապնդման ինստիտուտի կարգավորմանը, դրա դերի և նշանակության, ինչպես նաև իրականացման ձևերի հստակեցմանը:

Մասնավորապես, Օրենսգրքում առկա են քրեական հետապնդման հարուցմանն առնչվող մի շարք իրավակարգավորումներ, մասնավորապես, Օրենսգրքի 26-րդ գլուխը վերնագրված է «Հանրային քրեական հետապնդումը» և կարգավորում է դրա հետ կապված հարաբերությունները: Ըստ Օրենսգրքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 40-րդ կետի՝ ***քրեական հետապնդման հարուցումը*** *դատախազի կողմից անձի ենթադրյալ հանցավոր արարքը նկարագրող և դրա իրավական գնահատականը պարունակող որոշում կայացնելը կամ ենթադրյալ փուժողի կողմից դատարան քրեական հայց ներկայացնելն է:* Միաժամանակ, Օրենսգրքի 189-րդ հոդվածի 1-ին մասի՝ *անձի նկատմամբ հանրային քրեական հետապնդումը հարուցվում է հսկող դատախազի որոշմամբ՝ նրա կողմից հանցանքի կատարումը վկայող փաստերի հիման վրա*[15]*:*

Դատախազության մեկ այլ կարևորագույն գործառույթ է մինչդատական քրեական վարույթի (նախկինում՝ հետաքննության և նախաքննության) օրինականության նկատմամբ հսկողության իրականացումը: Գրականության մեջ այս առումով նշվում է, որ այստեղ խոսքն առաջին հերթին վերաբերում է ձերբակալման օրինականության և հիմնավորվածության, քրեական պատասխանատվության ներգրավման, խափանման միջոցի ընտրության, հանցագործության բոլոր հանգամանքների հետազոտման բազմակողմանիության, լրիվության և օբյեկտիվության ապահովման նկատմամբ դատախազական հսկողության խնդիրներին[16]: Դատախազի հսկողության տեսադաշտում են նաև դատավարության մասնակիցների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը: Այս գործառույթն առավել բազմակողմանի է արտահայտում դատախազության գործունեության առանձնահատուկ բնույթը, տեղն ու դերը պետական իշխանության մարմինների բազմաշերտ և ընդգրկուն համակարգում: Հենց այս գործառույթի իրականացմամբ է ապահովվում մինչդատական քրեական վարույթի օրինականությունը, մասնավորապես՝ նախաքննության լրիվությունը, բազմակողմանիությունը և օբյեկտիվությունը:

Նշենք, որ 2015 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրությամբ առաջին անգամ սահմանադրական մակարդակով ամրագրվել է, որ քննչական մարմիններն են օրենքով սահմանված դեպքերում և կարգով կազմակերպում և իրակա-

[15] Սույն աշխատանքի նպատակներից ելնելով՝ դատախազության յուրաքանչյուր գործառույթի հետ կապված հնարավոր հիմնախնդիրներին մանրամասն անդրադարձ չի կատարվում, քանի որ դրանք առանձին քննարկման և առավել համակարգային վերլուծության կարիք ունեցող հարցեր են: Հոդվածի այս հատվածում ներկայացվում են դատախազության սահմանադրական լիազորությունները՝ նպատակ ունենալով ցուցադրել դրանց էական և հիմնաքարային բնույթը, դատախազության գործունեության կարևորագույն ուղղություններ հանդիսանալու իրողությունը, որով ևս մեկ անգամ կհիմնավորվի վերջիններիս որպես գործառույթ և ոչ թե որպես լիազորություն դիտարկելու հրատապ անհրաժեշտությունը:

[16] Ա.Գ. Աշրաֆյան, Դատական իշխանությունը իշխանությունների տարանջատման համակարգում, Եր., 2008, էջ 91-92:

նացնում մինչդատական քրեական վարույթը[17]: Ընդ որում, մինչդատական վարույթն իրենից ներկայացնում է վարույթի հանրային մասնակիցների (որոնք են՝ դատախազը, քննիչը, քննչական մարմնի ղեկավարը, հետաքննության մարմնի պետը, հետաքննիչը) կողմից իրենց իրավասության սահմաններում իրականացվող ընթացակարգ, նախաքննությունը՝ քննիչի կողմից իր իրավասության սահմաններում ենթադրյալ հանցանքի կապակցությամբ իրականացվող գործունեություն, իսկ հետաքննությունը հետաքննության մարմնի կողմից նախաքննության ընթացքում իրականացվող և դրան օժանդակող գործունեություն, որը ներառում է գաղտնի քննչական գործողությունների և օպերատիվ-հետախուզական միջոցառումների կատարումը[18]:

Ինչ վերաբերում է դատախազության մյուս գործառույթին՝ դատարանում մեղադրանքի պաշտպանությանը, ապա հարկ է նշել, որ այն իրականացվում է տվյալ քրեական վարույթով նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացրած դատախազի կողմից, բացառությամբ Օրենքով նախատեսված՝ վերջինիս վերադաս դատախազի կամ նրա հանձնարարությամբ՝ այլ դատախազի փոխարինման դեպքերի: Քրեադատավարական օրենքի համաձայն՝ դատարանում մեղադրանքը պաշտպանող դատախազը կոչվում է հանրային մեղադրող:

Ըստ ՀՀ Սահմանադրության՝ ՀՀ դատախազության լիազորություններից (գործառույթներից) է նաև դատական ակտերի, մասնավորապես՝ վճիռների, դատավճիռների և որոշումների բողոքարկումը: Գործին մասնակցող դատախազը պարտավոր է բողոքարկել ուժի մեջ չմտած այն դատական ակտը, որը, իր կարծիքով, հիմնավոր չէ կամ ապօրինի է: Դատախազը կարող է բողոքարկել քրեական, քաղաքացիական կամ վարչական գործերով դատարանների օրինական ուժի մեջ չմտած դատական ակտերը:

Ինչ վերաբերում է օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի դեմ բերվող վճռաբեկ բողոքներին, ապա օրենսդրությամբ այդպիսի լիազորությունն ամրագրված է որպես գլխավոր դատախազի կամ նրա տեղակալների իրավասություն: Ընդ որում, քաղաքացիական կամ վարչական գործով պետական շահերին վերաբերող օրինական ուժի մեջ մտած դատական ակտը գլխավոր դատախազը և նրա տեղակալները կարող են բողոքարկել անկախ տվյալ գործի քննությանը դատախազության մասնակցությունից, այն դեպքում, եթե նշված գործով ներգրավված պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը, ի պատասխան դատախազության հարցմանը, հայտնել է, որ չի բողոքարկելու համապատասխան դատական ակտը:

Այս գործառույթի շրջանակներում դատախազը դատավարական հարաբերությունների լիարժեք սուբյեկտ է և օգտվում է մի շարք իրավունքներից, մասնավո-

[17] Տե՛ս 2015 թվականի դեկտեմբերի 6-ի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 178-րդ հոդվածի 1-ին մասը:

[18] Տե՛ս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 1-ին մասը, այդ թվում՝ նշված մասի 4-6-րդ և 12-րդ կետերը:

րապես, իրավունք ունի հետ վերցնելու ներկայացված բողոքը, անարգել ծանոթանալու համապատասխան գործի նյութերին, անվճար ստանալու գործի նյութերի պատճենները և այլն:

Ներկայացվածից զատ, հարկ ենք համարում անդրադառնալ դատախազության գործունեության մյուս կարևոր ուղղությանը, այն է՝ պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության իրականացումը: «Դատախազության մասին» ՀՀ օրենքի իմաստով՝ պատիժ են համարվում քրեական օրենսգրքով նախատեսված պատժի տեսակները (նախկինում՝ պատժամիջոցները), իսկ հարկադրանքի այլ միջոց է՝ ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 1-ին մասի 2-7-րդ կետերով սահմանված դեպքերում ազատությունից զրկումը:

Նշված օրենքում թվարկվում են հիշյալ գործառույթն իրականացնելիս դատախազին վերապահված իրավունքները, որոնցից են՝ անարգել մուտք գործել ազատությունից զրկված անձանց պահելու վայրերը, ծանոթանալ համապատասխան փաստաթղթերին, ստուգել պատիժներ և հարկադրանքի այլ միջոցներ կիրառող մարմինների վարչակազմերի դրանց կիրառմանը վերաբերող այն հրամանների, կարգադրությունների և որոշումների համապատասխանությունը օրենսդրությանը, որոնք վերաբերում են անձի հիմնական իրավունքներին, հարցման ենթարկել պատժի կամ հարկադրանքի այլ միջոցների ենթարկված անձանց, անհապաղ ազատել ազատությունից զրկելու վայրերում, ինչպես նաև այդ վայրերի պատժախցերում ապօրինի պահվող անձանց և այլն:

Եվ վերջապես, դատախազության մյուս կարևորագույն գործառույթը, որն ամրագրված է սահմանադրական և օրենսդրական մակարդակով, պետական շահերի պաշտպանության հայցի հարուցումն է: Այս առումով հարկ է նկատել, որ ՀՀ Սահմանադրության 2005 և 2015 թվականների խմբագրություններում կատարվել են որոշակի փոփոխություններ, մասնավորապես՝ 1995 և 2005 թվականների խմբագրություններով Սահմանադրության տեքստում նշված լիազորությունն ամրագրված է ի թիվս այլ լիազորությունների՝ թվարկված է դրանց շարքում և ձևակերպված է հետևյալ կերպ. *«(...) Դատախազությունն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով՝ (...) 4) պետական շահերի պաշտպանության հայց է հարուցում դատարան (...)»*: 2015 թվականի փոփոխությունների արդյունքում ՀՀ Սահմանադրության 176-րդ հոդվածի 2-րդ մասում թվարկվում են դատախազության վերը քննարկված բոլոր լիազորությունները, սակայն սույն լիազորությունը այդ թվարկման շրջանակներում նշված չէ, ավելի կոնկրետ՝ այն ամրագրված է այլ դրույթի տեսքով, այն է՝ հիշատակված հոդվածի 3-րդ մասում՝ հետևյալ ձևակերպմամբ. *«Դատախազությունն օրենքով սահմանված բացառիկ դեպքերում և կարգով պետական շահերի պաշտպանության հայց է հարուցում դատարան»*: Ինչպես նկատելի է, բացի ստացած առանձին ամրագրումից և հատուկ շեշտադրումից, դատախազության նշված լիազորությունը նաև սահ-

մանվել է որպես *օրենքով նախատեսված բացառիկ դեպքերում և կարգով իրականացվող գործառույթ* և, ըստ այդմ, այն իր մեջ ընդգրկում է[19]՝

«1) քաղաքացիական դատավարության կարգով պետության գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանության հայցի հարուցումը.

2) վարչական դատավարության կարգով պետության գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանության հայցի հարուցումը.

3) քրեական դատավարության կարգով հանցագործությամբ ուղղակիորեն պետությանը պատճառված գույքային վնասի հատուցման հայցի հարուցումը.

4) «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հիման վրա գույքի բռնագանձման հայցի հարուցումը»:

Միաժամանակ, հարկ է նկատել, որ Օրենքը սահմանում է նաև այդպիսի հայց հարուցելու սահմանադրորեն տրված «հղման» հիման վրա նախատեսվող՝ **բացառիկ** դեպքերը: Դրանք են, երբ՝

«1) իր լիազորություններն իրականացնելիս հայտնաբերում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը, որին վերապահված է պետական շահերի պաշտպանությանն առնչվող տվյալ հարցերով հայց ներկայացնելը, իրազեկ լինելով պետական շահերի խախտման փաստի մասին, դատախազի կողմից հայց ներկայացնելու առաջարկություն ստանալուց հետո ողջամիտ ժամկետում հայց չի ներկայացրել, կամ

2) պետական շահերի խախտում է տեղի ունեցել այն հարցերով, որոնցով հայց ներկայացնելը օրենսդրությամբ վերապահված չէ որևէ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի.

3) «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հիման վրա իրականացված ուսումնասիրության արդյունքներով առկա են գույքի բռնագանձման հայց հարուցելու հիմքեր»:

Հարկ է նշել, որ հիշատակված լիազորության մասով՝ առավել քան մյուսների, առկա են մի շարք քննարկման ենթակա թեմաներ և հարցադրումներ, քանզի օրենսդրական համապատասխան փոփոխությունների արդյունքում ««Դատախազության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»՝ 2023 թվականի մարտի 01-ին ընդունված, մարտի 24-ին ստորագրված և ապրիլի 06-ին ուժի մեջ մտած ՀՀ օրենքով (ՀՕ-104-Ն) պետական շահերի պաշտպանությունից զատ, դատախազությանը վերապահվել է նաև համայնքային շահերի պաշտպանության հայց հարուցելու կարևորագույն գործառույթը՝ դարձյալ նույն բացառիկ դեպքերի առկայության պարագայում: Մասնավորապես, կատարված փոփոխությունների և լրացումների արդյունքում «Դատախազության մասին» օրենքի 29-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերը, համապատասխանաբար, շարադրվել են հետևյալ խմբագրություններով՝ «Դատախազի կողմից պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայց հարուցելն ընդգրկում է» և «Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայց հարուցելու բացառիկ դեպքերի առկայությունը պարզելու նպատակով դատախազն

[19] Տե՛ս «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածը, մասնավորապես՝ 1-ին և 2-րդ մասերը:

իրավունք ունի», ինչպես նաև ամբողջ տեքստը «պետություն» բառի համապատասխան հոլովաձևերից հետո լրացվել է «(համայնք)» բառի համապատասխան հոլովաձևերով: Ակնհայտ է, որ դատախազական տվյալ լիազորությունը լրացուցիչ լծակ է պետության կողմից պաշտպանելու նաև համայնքային շահերը՝ որպես ընդհանուր հանրային շահերի առաջնահերթ մասնիկ:

Հարկ է փաստել, որ տվյալ լիազորության առանձնահատուկ ուսումնասիրության կարևորությունը կայանում է նրանում, որ վերջինս ոչ միայն տեսականորեն, այլ նաև արդեն գործնականում նկատելի է դարձնում «լիազորություն» և «գործառույթ» եզրույթների սահմանազատման անհրաժեշտության խնդրի առկայությունը:

Այսպես, նախևառաջ, հարկ է նկատել, որ նշված օրինագծի ընդունման հիմնավորման համաձայն՝ *«(...) օրենսդիրը սահմանափակել է «պետական շահի» հասկացությունը՝ դրանից, ըստ էության, հանելով համայնքային շահը այն հիմնավորմամբ, որ վերջինս պետական շահի հետ միասին կազմում են ավելի մեծ՝ հանրային շահի մի բաղադրիչը: (...) Գտնում ենք, որ «համայնքային շահ» հասկացությունը ներառվում է «պետական շահ» հասկացության մեջ, ինչը հաստատվում է ինչպես ՀՀ վավերացրած միջազգային պայմանագրերով, այնպես էլ՝ ներպետական օրենսդրությամբ տրված սահմանումներով: (...) Առանց դատախազների համայնքային շահերի պաշտպանության հայց ներկայացնելու իրավասության՝ համայնքների նկատմամբ իրականացվող վերահսկողության պայմաններում առաջանում են համայնքային միջոցների անարդյունավետ տնօրինման էական ռիսկեր (...): (...) Այդ իսկ պատճառով դատախազության՝ պետական շահերի պաշտպանության գործառույթները տեղական ինքնակառավարման մարմիններում ինչպես օրենսդրական, այնպես էլ պրակտիկ առումով ուղղակի անհրաժեշտություն են, որպիսի գործառույթների բացակայությունը ՀՀ բյուջետային միջոցների ծախսման գործընթացի նկատմամբ կարող է ունենալ զգալի բացասական ֆինանսական հետևանքներ, ինչպես նաև հասարակության շրջանում հանգեցնել պետական կառույցների նկատմամբ վստահության նվազման»*[20]:

Այսպիսով, սահմանադրաիրավական դիտանկյունից «պետական շահ» հասկացությունը մեկնաբանվում է առավել լայն՝ «հանրային շահ» հասկացության համատեքստում՝ դրանում ներառելով նաև «համայնքային շահ» հասկացությունը: Ըստ այդմ, կատարված օրենսդրական փոփոխությունների արդյունքում դատախազությանը վերապահվել է իր սահմանադրական գործառույթներից բխող լիազորություն, այն է՝ համայնքային շահերի պաշտպանության հայցի հարուցումը դատարան:

Նշվածի առնչությամբ ձևավորվել է որոշակի դատական պրակտիկա, որին հարկ է անդրադարձ կատարել՝ նկատի ունենալով սույն աշխատանքում քննարկված

[20] Մանրամասն տե՛ս «Դատախազության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի (ՀՕ-104-Ն, ընդունված՝ 01.03.2023 թվականին, ստորագրված՝ 24.03.2023 թվականին և ուժի մեջ մտած՝ 06.04.2023 թվականին) նախագծի հիմնավորման 7-րդ կետը:

«գործառույթ» և «լիազորություն» եզրույթների սահմանազատման հիմնախնդիրը: Այսպես, ՀՀ վարչական դատարանը, ՀՀ գլխավոր դատախազության հայցադիմումները (համայնքային շահի պաշտպանության հայցերը) վարույթ ընդունելու հարցը քննարկելիս, մի շարք ակտերում կատարել է որոշ արձանագրումներ, որոնցից են, օրինակ՝ ՀՀ վարչական դատարանը թիվ ՎԴ/4568/05/23 վարչական գործով 2023 թվականի հունիսի 15-ին կայացրել է «Բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու միջնորդությունը և հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» որոշում, մասնավորապես, հետևյալ պատճառաբանությամբ.

«(...) Նշված իրավանորմերի վերլուծությունից հետևում է, որ դատախազությանը՝ սահմանադրորեն նախատեսվել է պետական շահերի պաշտպանության հայց հարուցելու հնարավորություն: Ընդ որում՝ ի կատարումն նշված սահմանադրական կարգավորման՝ նույնաբովանդակ դրույթ է նախատեսվել նաև «Դատախազության մասին» ՀՀ օրենքում, որն ընդունվել է 17.11.2017 թվականին և ուժի մեջ է մտել 09.04.2018 թվականից: ««Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» և «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերի ընդունման» հիմնավորման 2-րդ՝ «Առաջարկվող կարգավորման բնույթը» բաժնի 4-րդ կետում օրենսդիրը նշել է հետևյալը. «(...) գտնում ենք, որ «համայնքային շահ» հասկացությունը ներառվում է «պետական շահ» հասկացության մեջ, ինչը հաստատվում է ինչպես ՀՀ վավերացրած միջազգային պայմանագրերով, այնպես էլ՝ ներպետական օրենսդրությամբ տրված սահմանումներով: (...)» (Տե՛ս, նույն հիմնավորումների 5-րդ էջը):

Դատարանի համոզմամբ ևս «համայնքային շահ» հասկացությունը ներառվում է «պետական շահ» հասկացության մեջ: Ընդ որում՝ պետական շահերի, այդ թվում նաև՝ համայնքային շահերի պաշտպանության հայց հարուցելու հնարավորություն դատախազությունն ունեցել է դեռևս 09.04.2018 թվականից սկսած: Այսինքն՝ բովանդակային առումով լիազորության փոփոխություն կամ ավելացում տեղի չի ունեցել, այլ պարզապես կատարվել է լրացում՝ «պետություն» բառի համապատասխան հոլովաձևերից հետո ավելացնելով «(համայնք)» բառը՝ համապատասխան հոլովաձևերով: Այլ կերպ ասած՝ կատարված փոփոխություններով կատարվել է հստակեցում, որը չի հանգեցրել լիազորությունների ծավալի փոփոխության, որպիսի պայմաններում դատախազությունը պետական, ներառյալ նաև՝ համայնքային շահերի պաշտպանության հայց հարուցելու հնարավորություն ունեցել է դեռևս 09.04.2018 թվականից»:

Միաժամանակ, ՀՀ վարչական դատարանը նշել է նաև. *«(...) Ինչ վերաբերում է այնպիսի մեկնաբանությանը, թե «պետական շահ» և «համայնքային շահ» հասկացությունները տարբեր են և «համայնքային շահ»-ը ներառված (ընդգրված) չէ «պետական շահ» հասկացության մեջ, ապա դատարանն արձանագրում է, որ նման մեկնաբանությունը խնդրահարույց է սահմանադրականության տեսանկյունից, քանի որ ՀՀ Սահմանադրության 176-րդ հոդվածի 3-րդ մասի*

ուժով իմպերատիվ կերպով դատախազության լիազորություն է վերապահվել հայց հարուցել միայն պետական շահերի պաշտպանության շրջանակներում, այն էլ օրենքով սահմանված բացառիկ դեպքերում և կարգով»[21]*:*

Վկայակոչված դիրքորոշումները վերահաստատվել են նաև ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի կողմից՝ այն շեշտադրմամբ, որ *«(...) կատարելով օրենսդրական փոփոխությունները՝ հենց իրավասուբեղծը հիմք է ընդունել օրենսդրական նախաձեռնության արդյունքում օրենքի հիմնավորումներում ամրագրվածն առ այն, որ «համայնքային շահ» հասկացությունը ներառվում է «պետական շահ» հասկացության մեջ:»* ՀՀ վերաքննիչ վարչական դատարանը նկատել է նաև, որ *«(...) Վերոգրյալից հետևում է, որ «Դատախազության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը (ընդունվել է 01.03.2023 թվականին, ուժի մեջ մտել՝ 06.04.2023 թվականին), ըստ նախագծին կից ներկայացված հիմնավորման մեջ արտահայտված օրենսդրի նպատակի, ոչ թե ՀՀ դատախազության համար սահմանել է նոր լիազորություն կամ Սահմանադրության 176-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն նախատեսել պետական շահերի պաշտպանության հայց հարուցելու նոր դեպք, այն է՝ համայնքային շահերի պաշտպանության հայցի հարուցումը, այլ ընդամենը հստակեցրել է պետական շահերի պաշտպանությանը վերաբերող կարգավորումը՝ «պետություն» բառի համապատասխան հոլովաձևերից հետո ավելացնելով «(համայնք)» բառը՝ համապատասխան հոլովաձևերով: Այսինքն՝ ակտն ընդունող մարմինը հենց ինքն ընդունել է, որ «համայնքային շահ» հասկացությունը ներառվում է «պետական շահ» հասկացության մեջ»:*

Դատարանների մեջբերված մոտեցումները ևս վկայում են այն մասին, որ տեսության մեջ և պրակտիկայում դատախազի «սահմանադրական գործառույթներ» և «սահմանադրական լիազորություններ» հասկացությունները միատեսակ չեն ընկալվում և մեկնաբանվում, ինչի արդյունքում երբեմն դրանք կարող են անարդարացիորեն նույնացվել: Մինչդեռ, Սահմանադրությամբ վերապահված դատախազական «գործիքակազմը» որպես «գործառույթ», իսկ օրենքով ամրագրված «գործիքակազմը» որպես «գործառույթից բխող լիազորություն» դիտարկելու պայմաններում, կարծում ենք, շատ խնդրահարույց իրավիճակներ կստանային համարժեք լուծումներ, ինչն էլ, իր հերթին, կբացառեր դատախազության գործառույթների և (կամ) լիազորությունների ծավալի անհարկի նեղացումը և (կամ) ընդլայնումը:

Ամփոփելով, հարկ է նկատել, որ սույն աշխատանքում դատախազության սահմանադրական լիազորությունները ներկայացված են ընդհանուր բնորոշ գծերով՝ նպատակ հետապնդելով շեշտադրումը կատարել դրանց կարևորության, բացառիկության վրա և դրանով հիմնավորել վերջիններիս ոչ այնքան

[21] Տե՛ս թիվ ՎԴ/4568/05/23 վարչական գործով ՀՀ վարչական դատարանի 15.06.2023 թվականի՝ «Բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու միջնորդությունը և հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» որոշումը և նույն գործով ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 28.08.2023 թվականի՝ «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշումը:

դատախազի լիազորություն, որքան դատախազական գործառույթ հանդիսանալու իրողությունը:

Եզրակացություն

Այսպիսով, ևս մեկ անգամ մեծապես կարևորում ենք ՀՀ դատախազության սահմանադրաիրավական կարգավիճակի, վերջինիս սահմանադրական գործառույթների և լիազորությունների, դրանց իրականացման առաձնահատկությունների ուսումնասիրությունը, ժամանակակից պայմաններում դատախազության տեղի և դերի, կոչման և առաքելության վերաարժևորումը և վերաիմաստավորումը, դատաիրավական ընթացիկ բարեփոխումների համատեքստում դատախազության գործունեության արդյունավետության բարձրացմանն ուղղված կառուցակարգերի ներդրումը, դատախազական առկա գործառույթների և համապատասխան գործիքների լիարժեք կիրառումը:

Սահմանադրորեն ամրագրված դատախազական լիազորությունների հետազոտությունը, դրանցից յուրաքանչյուրի հիմնական բովանդակության ու առանձնահատկությունների բացահայտումը, դատախազի՝ դրանցից բխող դատավարական այլ հնարավորությունների քննարկումը հիմք է տալիս փաստելու, որ «դատախազության գործառույթներ» և «դատախազության լիազորություններ» հասկացությունները միանգամայն տարբեր իմաստ և բովանդակություն ունեցող իրավական կատեգորիաներ են: Ըստ այդմ, ՀՀ դատախազության գործունեության հիմնական ուղղությունները, որոնք սպառիչ կերպով թվարկված են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, առավել նպատակահարմար է դիտարկել (եթե ոչ սահմանադրական մակարդակով ամրագրել, ապա առնվազն տեսության մեջ և առանձնապես պրակտիկայում ընկալել) որպես վերջինիս գործառույթներ, քանի որ հենց այդ գործառույթներից են բխում դատախազության լիազորություններն այս կամ այն բնագավառում, որոնք օրենսդրի կողմից նախատեսված են համապատասխան օրենսդրական ակտերում: Միաժամանակ, հարկ է օրենսդրական մակարդակով ևս (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում, «Դատախազության մասին» ՀՀ օրենքում) կանոնակարգել այդ եզրույթների (նաև «դատախազության իրավասություն» հասկացության) կիրառումները՝ դրանով իսկ բացառելով դրանց հնարավոր տարընթերցումները և տարակերպ մեկնաբանությունները ինչպես գիտական շրջանակներում, այնպես էլ գործնականում:

Գրականության ցանկ (reference list, список литературы)

1. ՀՀ Սահմանադրություն (1995 թվականի հուլիսի 05-ի, 2005 թվականի նոյեմբերի 27-ի և 2015 թվականի դեկտեմբերի 06-ի խմբագրություններով):

Constitution of RA (with the editions of July 05, 1995, November 27, 2005 and December 06, 2015).

2. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք (ընդունված՝ 2021 թվականի հունիսի 30-ին և ուժի մեջ մտած 2022 թվականի հուլիսի 01-ից, ՀՕ-306-Ն):

Criminal Procedure Code of RA (adopted on June 30, 2021 and entered into force on July 1, 2022, NL-306-N).

3. 1998 թվականի հուլիսի 01-ին ընդունված և 2007 թվականի մայիսի 01-ին ուժը կորցրած «Դատախազության մասին» ՀՀ օրենք:

Law of RA "On Prosecution" adopted on July 1, 1998 and repealed on May 1, 2007.

4. 2007 թվականի փետրվարի 22-ին և 2018 թվականի ապրիլի 09-ին ուժը կորցրած «Դատախազության մասին» ՀՀ օրենք:

Law of RA "On Prosecution" repealed on February 22, 2007 and invalidated April 9, 2018.

5. 2017 թվականի նոյեմբերի 17-ին ընդունված «Դատախազության մասին» ՀՀ օրենք (ՀՕ-198-Ն):

Law of RA "On Prosecution" adopted on November 17, 2017 (NL-198-N).

6. «Դատախազության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի (ընդունված՝ 01.03.2023 թվականին, ուժի մեջ մտած՝ 06.04.2023 թվականին) նախագծի հիմնավորում:

Justification of the project of the Law "On Amendments and Additions to the Law on Prosecution" (adopted on 01.03.2023, entered into force on 06.04.2023).

7. Ա.Գ. Աշրաֆյան, Դատական իշխանությունը իշխանությունների տարանջատման համակարգում, Եր., 2008, էջ 91-92:

A.G. Ashrafyan, Judicial power in the system of separation of powers, Yer., 2008, p. 91-92.

8. Ա. Սարգսյան, «Հայաստանի Հանրապետության դատախազության «սահմանադրական գործառույթներ» և «լիազորություններ» եզրույթների հարաբերակցության հիմնախնդիրը» («Դատական իշխանություն» գիտամեթոդական ամսագիր, 2011, հուլիս-օգոստոս, ISSN 1829-0744), էջ 50-55:

A. Sargsyan, "The problem of correlation between the terms "constitutional functions" and "powers"/"authorities" of the Prosecutor's Office of the Republic of Armenia" ("Judicial Authority" scientific and methodological magazine, 2011, July-August, ISSN 1829-0744), p. 50-55.

9. ՀՀ Սահմանադրության մեկնաբանություններ/ ընդհ. խմբ. Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի – Եր. «Իրավունք», 2010, էջ 1000-1002:

Commentaries on the RA Constitution / v. ed. G. Harutyunyan, A. Vagharshyan - Yer. "Law", 2010, p. 1000-1002.

10. Թիվ ՎԴ/4568/05/23 վարչական գործով ՀՀ վարչական դատարանի 15.06.2023 թվականի և ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 28.08.2023 թվականի որոշումներ:

Decisions of the Administrative Court of RA dated 15.06.2023 and the Appeal Administrative Court of RA dated 28.08.2023 in the administrative case No. VD/4568/05/23.

11. Безлепкин Б.Т. Судебная система, правоохранительные органы и адвокатура России: Уч.- Юристъ, 2001.

Bezlepkin B.T. Judicial system, law enforcement agencies and advocacy of Russia. Уч.- Юристъ, 2001.

12. Додонов В.Н. Прокуратуры зарубежных стран, М., 2006.

Dodonov V.N. Prosecutor's Office of foreign countries, M., 2006.

13. Козлова Е.И., Кутафин О.Е. Конституционное право России: Учебник.- 2-е изд., перераб. и доп.- М.: Юристъ, 2005.- С. 190-191.

Kozlova E.I., Kutafin O.E. Constitutional Law of Russia: Textbook. - 2nd ed., Revised. and additional - M .: Jurist, 2005.- p. 190-191.

14. Теория государства и права: учебник/ под общей ред. Пиголкина А.С. М., Юрайт-Издат. 2007, ISBN 5-94879-708-2, С. 138-139.

Theory of state and law: textbook / under the general editorship. Pigolkina A.S. M., Yurait-Izdat. 2007, ISBN 5-94879-708-2, p. 138-139.

15. Тихомиров Ю.А. Теория компетенции. М., 2004, С. 53, 56, 116.

Tikhomirov Yu.A. Theory of competence. M., 2004, p. 53, 56, 116.

16. Щерба С.П., Решетникова Т.А., Зайцев О.А. Прокуратура в странах СНГ, правовой статус, функции, полномочия, М., Изд. Экзамен, 2007, С. 10.

Shcherba C.P., Reshetnikova T.A., Zaitsev O.A. Prosecutor's Office in CIS countries, legal status, functions, powers, M., Изд. Exam, 2007, p. 10.

Ani Sargsyan
Senior Prosecutor of the Department for Crimes against Property of the Prosecutor General's Office of the Republic of Armenia, Ph.D. in Law, Senior Lecturer of the Chair of Theory of Law and Constitutional Law of Russian-Armenian University

CONSTITUTIONAL AUTHORITIES OF PROSECUTOR`S OFFICE IN THE REPUBLIC OF ARMENIA: SOME ISSUES[22]

Abstract

The article is dedicated to the research of the constitutional authorities/powers of the Prosecutor's Office of the Republic of Armenia, the analysis of the content of the concept of "powers" provided by the RA Constitution and the RA Law "On Prosecution". At the same time, in the article, the relationship between the concepts of "powers" and "functions" in general, the issues of considering the main directions of the prosecutor's office as a power or function, as well as some current issues arising from them, are the subject of special discussion.

In the article, the wording of the powers of the prosecutor's office in different editions of the Constitution of the Republic of Armenia, as well as the relevant jurisdictions related to the powers of the prosecutor's office in the laws of the Republic of Armenia "On Prosecution" adopted and in effect (or already expired) in different years, as well as the current developments of their fixation, are subjected to a legal comparative analysis by the author.

The work also refers to the disclosure of the content of separate constitutional powers of the prosecutor's office, the presentation of their typical main features, through which, emphasizing the fact that they are a function of the main directions of the prosecutor's activity arising from the role, rank and mission of the prosecutor's office, the author makes specific conclusions and presents relevant recommendations.

Keywords: constitutional legal status; authorities/powers; competence/jurisdiction; functions; constitutional authorities/powers of the prosecutor's office; functions of the prosecutor's office.

[22] The article was presented on 24.08.2023 and was reviewed on 21.11.2023.

Ани Саргсян

Старший прокурор управления по преступлениям против собственности Генеральной прокуратуры Республики Армения, кандидат юридических наук, старший преподаватель Кафедры Теории права и Конституционного права Российско-Армянского университета

КОНСТИТУЦИОННЫЕ ПОЛНОМОЧИЯ ПРОКУРАТУРЫ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ: НЕКОТОРЫЕ ПРОБЛЕМЫ[23]

Абстракт

Статья посвящена исследованию конституционных полномочий прокуратуры Республики Армения, анализу содержания понятия «полномочия», предусмотренного Конституцией РА и Законом РА «О прокуратуре». Вместе с тем, в статье рассматриваются соотношение понятий «полномочия» и «функции» в целом, рассматриваются вопросы рассмотрения основных направлений деятельности прокуратуры как полномочия или функции, а также некоторые актуальные вопросы, вытекающие из них, являются предметом специального обсуждения.

В статье автором подвергаются сравнительно-правовому анализу формулировки полномочий прокуратуры в разных редакциях Конституции Республики Армения, а также соответствующие подследственности, связанные с полномочиями прокуратуры в законах Республики Армения «О прокуратуре». «принятые и действующие (или уже утратившие силу) в разные годы, а также современные тенденции их зафиксирования.

В работе также говорится о раскрытии содержания отдельных конституционных полномочий прокуратуры, изложении типичных им основных особенностей, посредством чего подчеркивается то, что они являются основными направлениями деятельности прокуратуры, вытекающими из роли, звания и миссия прокуратуры, автор делает конкретные выводы и представляет соответствующие предложения.

Ключевые слова: конституционно-правовой статус; полномочия; компетенция/ юрисдикция; функции; конституционные полномочия прокуратуры; функции прокуратуры.

[23] Статья была представлена 24.08.2023 и прошла рецензирование 21.11.2023.

https://doi.org 10.59821/18294219-2025.1-mhv08

Ռոբերտ Միերյան
ՀՀ գլխավոր դատախազության սահմանադրական կարգի հիմունքների, պետության և հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության ավագ դատախազ, Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի հայցորդ

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԱՐՈՒՅԹ ԿԻՐԱՌԵԼՈՒ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՔՐԵԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՆՅՈՒԹԵՐԸ ԴԱՏԱՐԱՆ ՈՒՂԱՐԿԵԼԻՍ ԵՎ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ[1]

Համառոտագիր

Սույն աշխատանքն ուսումնասիրում է համագործակցության վարույթի՝ որպես պարզեցված դատավարական ձևի վերաբերյալ որոշ հիմնախնդիրներ, որոնք կարող են առաջանալ քրեական վարույթի նյութերը դատարան ուղարկելիս և դատարանում:

Նշված ինստիտուտը ներպետական իրավական համակարգում դեռևս համեմատաբար նոր է մտել կիրառական դաշտ, ինչը նշանակում է, որ գործնական աշխատանքում առաջացել և առաջանալու են մի շարք խնդիրներ, որոնց մի մասի առաջանցիկ քննարկումը վստահաբար կարող է նպաստել դրանց առավել ճշգրիտ լուծումների որոնմանը և այդ լուծումների կիրառմանը, ինչով պայմանավորված է նաև աշխատանքի արդիականությունը: Աշխատանքով խնդիր է դրված վեր հանել համագործակցության վարույթի կիրառման շրջանակներում հնարավոր առաջացող խնդիրները, քննարկել դրանց իրավական կարգավորումները, վեր հանել խնդրահարույց և արդյունավետ կողմերը, և որպես աշխատանքի նպատակ՝ առաջարկել դրանց համար որոշակի լուծումներ:

Քննարկման առարկա են դարձվել համագործակցության համաձայնագիր կնքած մեղադրյալի նկատմամբ դատաքննության հատուկ կարգ կիրառելու միջնորդության հարուցման կամ այդպիսի միջնորդությամբ վարույթի նյութերը դատարան հանձնելը մերժելու մասին որոշման կայացման, այդ որոշման անվանման ձևական և բովանդակային ասպեկտների, դատաքննությունը հատուկ կարգով անցկացնելու միջնորդության բավարարման իրավական և բարոյական հետևանքների, դատարանում համագործացությունից հրաժարվելու անհնարինության, ինչպես նաև համագործակցության վարույթով դատաքննությունը հատուկ կարգով անցկացնելը մերժելու և նախնական դատալսումներն ընդհանուր կարգով շարունակելու մասին որոշման բնույթի, բողոքարկման և դրա իրավական

[1] Հոդվածը ներկայացվել է 07.05.2025թ., գրախոսվել է 16.06.2025թ.:

հետևանքների վերաբերյալ հարցերը, ինչպես նաև դրանց վերաբերյալ ներկայացվել են առաջարկներ:

Մատնանշված հարցերի վերաբերյալ աշխատանքում կատարված նկատառումները կարող են էլ ավելի լավարկել գործող իրավակարգավորումները՝ ի նպաստ տվյալ վարույթի առավել արդյունավետ կիրառման:

Հիմնաբառեր- համագործակցության վարույթ, համաձայնագիր, դատախազ, մեղադրյալ, համագործակցության առարկա:

Ներածություն

Վերջին տարիներին ՀՀ քրեադատավարական համակարգում, ի թիվս այլ պարզեցված դատավարական ձևերի, ներդրվել և կիրառվում է համագործակցության վարույթի ինստիտուտը: Դատավարական ձևի պարզեցումն ինչպես հանցագործություններին առավել արագ և օպերատիվ արձագանքելու, այնպես էլ առավելագույն տնտեսման պայմաններում գործերն արագ և արդյունավետ քննելու և լուծելու նպատակ է հետապնդում[2]:

Տարբերակված այս վարույթը հակիրճ կարելի է բնորոշել որպես ի շահ արդարադատության պետության և մեղադրյալի միջև կնքված վարութային գործարքի քննություն: Այն երկուստեք ձեռնտու ընթացակարգ է, քանի որ դրա արդյունքում.

1) պետությունը որոշակի հանցագործություններ բացահայտելու և դրանք կատարած անձանց քրեական պատասխանատվության ենթարկելու հարցում նվազ վտանգավորության հանցանք կատարած անձից ստանում է վարութային օժանդակություն,

2) այդպիսի օժանդակություն ցուցաբերած անձին երաշխավորվում է անհամեմատ ավելի մեղմ պատժի նշանակում[3]:

Նշված ինստիտուտը, ներպետական քրեադատավարական համակարգում լինելով համեմատաբար նոր ինստիտուտ, վստահաբար իր հետ բերել կամ բերելու է մի շարք խնդիրներ, որոնց քննարկումն աներկաբայորեն կարող է նպաստել դրանց առավել ճշգրիտ լուծումների որոնմանը և արդեն «հողի վրա» կիրառմանը, ինչով պայմանավորված է նաև սույն աշխատանքի արդիականությունը:

Աշխատանքում խնդիր է դրված վեր հանել համագործակցության վարույթի կիրառման հետ կապված այն խնդրահարույց հարցերը, որոնք կարող են առաջանալ, իսկ որոշ դեպքերում արդեն իսկ ի հայտ են եկել քրեական վարույթի նյութերը դատարան փոխանցելիս և դատարանում, ինչպես գործող կարգավորումների մեկնաբանման, այնպես էլ օրենսդրական փոփոխությունների միջոցով առաջարկել դրանց համակողմանի լուծումներ:

---

[2] **Ղուկասյան Հ., Մելքոնյան Դ.**, «Տարբերակված դատավարության ձևը և դրա առանձնահատկությունները», ք.Երևան, «Պետություն և իրավունք», № 1, 2007թ., էջ 33-34:

[3] **Մելքոնյան Դ., Ղուկասյան Հ., Նիկողոսյան Ա.,** «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության նոր օրենսգրքի հայեցակարգային լուծումների, նորարարական մոտեցումների և հիմնական ինստիտուտների մեկնաբանման գործնական ուղեցույց», ք.Երևան, 2022թ., էջ 588:

Համագործակցության համաձայնագիր կնքած մեղադրյալի նկատմամբ դատաքննության հատուկ կարգ կիրառելու միջնորդության հարուցումը կամ այդպիսի միջնորդությամբ վարույթի նյութերը դատարան հանձնելը մերժելու մասին որոշման կայացումը.

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 471-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նույն օրենսգրքի **205-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում հսկող դատախազը,** ուսումնասիրելով քննիչից ստացած վարույթի նյութերը, ինչպես նաև մեղադրյալի կողմից համաձայնագրով ստանձնած իր պարտականությունների պատշաճ կատարումը հաստատող ապացույցները, հաստատում է մեղադրական եզրակացությունը և իրավասու դատարան միջնորդություն է հարուցում մեղադրյալի նկատմամբ դատաքննության հատուկ կարգ կիրառելու մասին **կամ որոշմամբ մերժում է այդպիսի միջնորդությամբ վարույթի նյութերը դատարան հանձնելը,** եթե մեղադրյալի կողմից համաձայնագրով ստանձնած իր պարտականությունները չեն կատարվել կամ կատարվել են ոչ պատշաճ:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ մեղադրյալին և պաշտպանին հանձնվում է մեղադրյալի նկատմամբ **դատաքննության հատուկ կարգ կիրառելու միջնորդությամբ վարույթի նյութերը դատարան հանձնելը մերժելու մասին որոշումը,** որը կարող է **բողոքարկվել վերադաս դատախազին՝ այն ստանալու պահից յոթնօրյա ժամկետում: <u>Մինչև բողոքի լուծումը վարույթի նյութերը չեն կարող ուղարկվել դատարան:</u>**

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 205-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մեղադրական եզրակացությամբ վարույթի նյութերն ստանալուց հետո՝ **յոթ օրվա ընթացքում,** հսկող դատախազն ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝

1) մեղադրական եզրակացությունը հաստատելու մասին.

2) մեղադրական եզրակացությունը վերակազմելու մասին, եթե քրեական վարույթի նյութերի ուսումնասիրության արդյունքում պարզում է, որ անհրաժեշտ է մեղադրանքից հանել առանձին փաստեր կամ ի շահ մեղադրյալի փոխել նրան վերագրվող արարքի իրավական գնահատականը՝ առանց սկզբնական փաստերն էապես փոխելու.

3) վարույթի նյութերը նախաքննության մարմին վերադարձնելու մասին, եթե վարույթի նյութերի ուսումնասիրության արդյունքում պարզում է, որ անհրաժեշտ է շարունակել նախաքննությունը, կարճել վարույթը, կասեցնել քրեական հետապնդման ժամկետը կամ կազմել նոր մեղադրական եզրակացություն:

Վերոգրյալ իրավանորմերի համադրված վերլուծությունից ակնհայտ է դառնում, որ հսկող դատախազը, մեղադրական եզրակացությամբ ստացված վարույթի նյութերը դատարան հանձնելիս, իր կողմից ընդունվող որոշումներից ցանկացածը պետք է կայացնի **յոթ օրվա ընթացքում**: Միևնույն ժամանակ, իրավիճակումը փոխվում է կամ առնվազն ենթադրվում է, որ պետք է փոխվի, այն դեպքերում, երբ

մեղադրական եզրակացությամբ ստացված վարույթի նյութերի վերաբերյալ կայացվող որոշումներից զատ, պետք է ստուգվի նաև մեղադրյալի հետ նախաքննության ընթացքում կնքված համագործակցության համաձայնագրով վերջինիս ստանձնած պարտականությունների պատշաճ կատարման հանգամանքը: Մեղադրական եզրակացությունը հաստատելու դեպքում հսկող դատախազն իրավասու է մեղադրյալի նկատմամբ դատաքննության հատուկ կարգ կիրառելու մասին միջնորդություն հարուցել դատարան կամ որոշմամբ մերժել այդպիսի միջնորդությամբ վարույթի նյութերը դատարան հանձնելը, եթե մեղադրյալի կողմից համաձայնագրով ստանձնած իր պարտականությունները չեն կատարվել կամ կատարվել են ոչ պատշաճ: Վերջին որոշումը կայացնելու դեպքում, հսկող դատախազը պետք է մեղադրյալին և պաշտպանին հանձնի նաև համապատասխան որոշումը: Հետևաբար, Քր. դատ. օր. 471-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված կարգով տվյալ որոշումը վերադաս դատախազին բողոքարկվելու դեպքում հսկող դատախազը մինչև իրավասու դատախազի կողմից բողոքի լուծումը վարույթի նյութերը չի կարող ուղարկել դատարան: Նշվածից հետևում է նաև, որ դատաքննության հատուկ կարգ կիրառելու մասին միջնորդությամբ վարույթի նյութերը դատարան հանձնելը մերժելու մասին որոշում կայացնելիս դատախազը ոչ միայն պարտավոր է նախքան վարույթի նյութերը դատարան հանձնելն սպասել վերադաս դատախազի կողմից բողոքի լուծմանը, այլ նաև պարտավոր է սպասել մինչև բողոքարկման՝ օրենքով սահմանված ժամկետի լրանալը:

Նման պայմաններում օրենսդիրը չի կարգավորել, թե ինչպես պետք է լուծվի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 205-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ մեղադրական եզրակացությամբ ստացված վարույթի նյութերը յոթնօրյա ժամկետում դատարան հանձնելու հարցն այն դեպքում, երբ առկա չեն վարույթի նյութերը նախաքննության մարմին վերադարձնելու հիմքեր, և միաժամանակ, վարույթի նյութերը ենթակա են հանձնման դատարան: Տեսականորեն, եթե հսկող դատախազը վարույթի նյութերը ստանալուց հետո յոթերորդ օրը հաստատի մեղադրական եզրակացությունը և որոշում կայացնի դատաքննության հատուկ կարգ կիրառելու մասին միջնորդությամբ վարույթի նյութերը դատարան հանձնելը մերժելու մասին, նույն օրը այն հանձնի մեղադրյալին և նրա պաշտպանին, վերջիններս այն ստանալուց հետո յոթերորդ օրը բողոքարկեն վերադաս դատախազին, իսկ վերադաս դատախազն էլ, իր հերթին, բողոքը ստանալուց հետո յոթերորդ օրը[4] որոշում կայացնի այն մերժելու մասին՝ դրա վերաբերյալ նույն օրը իրազեկելով նաև հսկող դատախազին, ապա նման իրավիճակում մեղադրական եզրակացությամբ ստացված վարույթի նյութերը հսկող դատախազի տիրույթում կգտնվեն շուրջ 21 օր: Նման պայմաններում, թեպետ մեղադրական եզրակացությունը հաստատվում է յոթնօրյա ժամկետում և օրենսդրական ժամկետային սահմանափակումը ձևականորեն պահպանվում է,

[4] ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 156-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ վարույթի հանրային մասնակցին ուղղված բողոքը պետք է քննության առնվի և լուծվի այն ստանալուց հետո՝ յոթ օրվա ընթացքում, եթե նույն օրենսգրքով այլ ժամկետ սահմանված չէ:

այնուամենայնիվ պետք է նշել, որ յոթնօրյա ժամկետում համապատասխան որոշման կայացումը իրավաչափորեն վերաբերում է նաև վարույթի նյութերի տնօրինման հետագա ճակատագրին. դրանք կա՛մ պետք է առավելագույնը յոթերորդ օրը վերադարձվեն նախաքննական մարմին, կա՛մ հանձնվեն դատարան:

Նման իրավիճակը հղի է նաև այլ հետևանքներով ու ռիսկերով: Մասնավորապես, չի բացառվում, որ մեղադրական եզրակացությամբ վարույթի նյութերը ստանալիս անձի նկատմամբ հարուցված քրեական հետապնդման առավելագույն ժամկետի (այդ թվում՝ վերադաս դատախազի կողմից ժամկետն ամբողջությամբ երկարաձգված) սպառմանը մնացած լինի, օրինակ, տասնվեց օր, որպիսի պայմաններում կայացված որոշման բողոքարկման, բողոքի քննարկման և մերժման ժամկետների հոսքով պայմանավորված հսկող դատախազը օբյեկտիվորեն հարկադրված կլինի քրեական հետապնդման առավելագույն ժամկետները լրանալուց հետո միայն վարույթի նյութերը հանձնել դատարան, ինչը, քրեական հետապնդման դադարեցման ինքնուրույն հիմք է[5]:

Ուստիև, ամփոփելով, առաջարկում ենք նման իրավիճակների հաշվառմամբ օրենսդրական մակարդակում ամրագրել դատաքննության հատուկ կարգ կիրառելու մասին միջնորդությամբ վարույթի նյութերը դատարան հանձնելը մերժելու մասին որոշման կայացման դեպքում յոթնօրյա ժամկետում վարույթի նյութերը դատարան չհանձնելու կամ դրա հետևանքով քրեական հետապնդման ժամկետը լրանալուց հետո վարույթի նյութերը դատարան հանձնելու դեպքում քրեական հետապնդման առավելագույն՝ բաց թողնված ժամկետը հարգելի համարելու և վարույթի նյութերն այդ կերպ դատարան հանձնելու իրավաչափությունը՝ բացառելով մեղադրանքի կողմի համար այդ հիմքերով անբարենպաստ դատավարական հետևանքների առաջացման հնարավորությունը:

Դատաքննության հատուկ կարգ կիրառելու մասին միջնորդությամբ վարույթի նյութերը դատարան հանձնելը մերժելու մասին որոշումը՝ դրան ներկայացվող ձևական և բովանդակային պահանջների համատեքստում.

Իրականացվող համագործակցության վարույթի շրջանակներում հսկող դատախազը, մեղադրական եզրակացությամբ ստանալով վարույթի նյութերը, ի թիվս յոթօրյա ժամկետում կայացվող որոշումների, պետք է լուծի նաև մեղադրյալի նկատմամբ դատաքննության հատուկ կարգ կիրառելու մասին դատարան միջնորդություն հարուցելու կամ, նույնն է, այդպիսի միջնորդությամբ դատարան դիմելու կամ չդիմելու հարցը: Իրականացված համագործացությունը արդյունավետության և մեղադրյալի կողմից ստանձնած պարտականությունները կատարված համարվելու համատեքստում գնահատելիս ձեռք բերված արդյունքները տրամաբանական հանգրվանի հասցնելը իրավամբ դրսևորվում է

[5] ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն՝ քրեական հետապնդում չպետք է հարուցվի, իսկ հարուցված քրեական հետապնդումը ենթակա է դադարեցման, եթե լրացել է սույն օրենսգրքով սահմանված քրեական հետապնդման առավելագույն ժամկետը, և դատախազն այդ ժամկետի ընթացքում վարույթի նյութերը չի հանձնել դատարան:

դատարանին հասցեագրվող համապատասխան միջնորդության տեսքով: Մինչդեռ, համագործակցության միջնորդության ներկայացման համար օրենքով նախատեսված հիմքերը՝ համագործակցության ոչ բավարարության տեսանկյունից գնահատելիս, հսկող դատախազը, ըստ գործող կարգավորումների, կայացնում է դատաքննության հատուկ կարգ կիրառելու մասին **միջնորդությամբ վարույթի նյութերը դատարան հանձնելը մերժելու մասին որոշում:** Այս իրավիճակում փոքր-ինչ անհասկանալի է թվում, թե ի վերջո ու՞մ միջնորդությունն է քննարկում և մերժում հսկող դատախազը, կամ առանց կոնկրետ միջնորդության ի՞նչն է մերժում հսկող դատախազը: Այստեղ կարելի է ընդգծել, որ մեղադրյալի և նրա պաշտպանի հետ համագործակցության համաձայնագիր կնքած հսկող դատախազը մեղադրական եզրակացության ելքով նախաքննությունն ավարտելիս կրում է պարտականություն՝ լուծելու մեղադրյալի նկատմամբ դատաքննության հատուկ կարգ կիրառելու մասին միջնորդության հարուցման կամ նման **միջնորդության չհարուցման** մասին պատճառաբանված որոշման կայացման հարցերը: Այսինքն, տվյալ պարագայում, հսկող դատախազը ոչ թե քննարկում է մեղադրյալի կամ որևէ անձի միջնորդությունը՝ մեղադրյալի նկատմամբ դատաքննության հատուկ կարգ կիրառելու մասին միջնորդությամբ հանդես գալու վերաբերյալ, այլ հսկող դատախազն իրացնում է օրենսդրի կողմից սույն վարույթի կիրառման պայմաններում իրեն առաջադրված պարտավորությունը, այն է՝ քննարկելով ստացված մեղադրական եզրակացության հետագա դատավարական ճակատագիրը՝ լուծել նաև իրավասու դատարան մեղադրյալի նկատմամբ դատաքննության հատուկ կարգ կիրառելու մասին **միջնորդության հարուցման կամ չհարուցման հարցը՝** որպես որոշիչ գործոն դիտարկելով մեղադրյալի կողմից համաձայնագրով ստանձնված իր պարտականությունների կատարման, չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքները:

Հետևապես, ամփոփելով, կարելի է փաստել, որ քննարկման առարկա իրավիճակում և՛ ձևական, և՛ բովանդակային առումով առավել նպատակահարմար կլիներ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 471-րդ հոդվածի 1-ին մասը ձևակերպել հետևյալ կերպ. «Սույն օրենսգրքի 205-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում հսկող դատախազը, ուսումնասիրելով քննիչից ստացած վարույթի նյութերը, ինչպես նաև մեղադրյալի կողմից համաձայնագրով ստանձնած իր պարտականությունների պատշաճ կատարումը հաստատող ապացույցները, հաստատում է մեղադրական եզրակացությունը և իրավասու դատարան միջնորդություն է հարուցում մեղադրյալի նկատմամբ դատաքննության հատուկ կարգ կիրառելու մասին կամ որոշում է կայացնում մեղադրյալի նկատմամբ դատաքննության հատուկ կարգ կիրառելու մասին միջնորդություն չհարուցելու մասին, եթե մեղադրյալի կողմից համաձայնագրով ստանձնած իր պարտականությունները չեն կատարվել կամ կատարվել են ոչ պատշաճ:», և, նշվածով պայմանավորված, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի վերաբերելի մյուս իրավանորմերը համապատասխանեցնել նշված առաջարկին:

Դատաքննությունը հատուկ կարգով անցկացնելու միջնորդության բավարարման իրավական և բարոյական հետևանքները.

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 472-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը նախնական դատալսումների ընթացքում քննարկում է համագործակցության համաձայնագիր կնքած մեղադրյալի նկատմամբ դատաքննությունը հատուկ կարգով անցկացնելու հարցը, եթե դատախազը վարույթի նյութերը դատարան հանձնելիս նման միջնորդություն է հարուցել:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ դատախազի միջնորդությունը բավարարելու դեպքում դատարանը որոշում է կայացնում լրացուցիչ դատալսումներ անցկացնելու մասին:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 389-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի համաձայն՝ վերաքննիչ դատարանում հատուկ վերանայման ենթակա է առաջին ատյանի դատարանի՝ համագործակցության վարույթով դատաքննությունը հատուկ կարգով անցկացնելը մերժելու և նախնական դատալսումներն ընդհանուր կարգով շարունակելու մասին որոշումը:

Մեջբերված իրավադրույթների համադրված վերլուծությունից հետևում է, որ դատաքննությունը հատուկ կարգով անցկացնելու միջնորդությունը բավարարելու մասին որոշման բողոքարկման ընթացակարգ նախատեսված չէ, հետևապես անձը, ում իրավաչափ շահերին ուղղակի կամ անուղղակի կերպով կառնչվի այդ որոշումը, հատուկ վերանայման կարգով Վերաքննիչ դատարանին բողոք չի կարող ներկայացնել: Մինչդեռ չենք կարող բացառել իրավիճակներ, երբ, օրինակ, «մայր» գործով տուժողը (նրա իրավահաջորդը), փաստարված կերպով կառարկի հիշյալ միջնորդության՝ հօգուտ մեղադրյալի լուծմանը: Ընդ որում, արծարծվող հարցը կարող է ունենալ ոչ միայն իրավական, այլ նաև ընդգծված բարոյական շերտեր:

Դիցուք, Ա-ն, ով մեղադրվում է առանձնապես ծանր հանցագործության՝ անչափահաս Բ-ի սպանության կատարման մեջ, համագործակցել է նախաքննական մարմնի հետ և նպաստել առանձնապես ծանր մեկ այլ հանցանքի՝ Զ-ի կողմից շահադիտական դրդումներով կատարված՝ Մ-ի սպանության բացահայտմանը:

Բերված օրինակում հարցն իրավական մակարդակում կարծես թե ֆորմալ իմաստով սպառել է իրեն՝ բացահայտվել է մեկ այլ՝ առանձնապես ծանր հանցագործություն: Սակայն, մահացած տուժողի՝ Բ-ի փոխարեն տուժող ճանաչված Լ-ին բարոյական առումով իրավացիորեն կարող է մտահոգել այն հարցը, թե ինչպես կարող է իր երեխայի սպանության մեջ մեղադրվող անձը պետության հետ կնքած «գործարքի» արդյունքում խուսափել ըստ իրեն՝ արդարացի պատժից, հատկապես, երբ սոցիալական արդարության վերականգնման տեսանկյունից Լ-ն իրավամբ կարող է ունենալ ողջամիտ ակնկալիք՝ տեսնելու իր երեխայի սպանության մեջ մեղադրվող անձին տևական ժամանակ «ճաղերի ետևում»: Եվ, թերևս հենց նման իրավիճակներում է, որ կարող են առաջանալ իրավական և բարոյական արժեքների, հանրային և մասնավոր շահերի հավասարակշռման խնդիրներ, որոնց յուրաքանչյուր դրսևորում պետք է

ենթարկվի առանձին դատական գնահատման, քանզի, չի բացառվում, որ տուժողն իր կորստի դիմաց պետության կողմից սահմանված և, օրինակ, պայմանականորեն չկիրառված պատիժը, կիամարի ոչ բավարար և իր ակնկալիքներին ոչ համարժեք, և նման դժգոհությունը վերաճելով կարող է հանգեցնել մեկ այլ՝ վրեժի շարժառիթով կատարված հանցանքի:

Բերված օրինակի լույսի ներքո ամփոփելով բարձրացված հարցը՝ գտնում ենք, որ նախնական դատալսումների ընթացքում հանրային մեղադրողի՝ համագործակցության վարույթով դատաքննությունը հատուկ կարգով անցկացնելու մասին միջնորդությունը քննարկելիս անհրաժեշտ է լսել նաև դատավարության շահագրգիռ այլ մասնակիցների և հատկապես տուժողի դիրքորոշումները, դրանք ենթարկել խորքային և բազմակողմանի գնահատման, ինչից հետո միայն լուծել ներկայացված միջնորդությունը, իսկ միջնորդության բավարարման դեպքում այդ մասին ևս կայացնել առանձին որոշում՝ հնարավորություն ընձեռելով վարույթի շահագրգիռ մասնակիցներին հատուկ վերանայման կարգով այն ներկայացնել վերաքննիչ դատարանի գնահատմանը:

Դատարանում համագործացությունից հրաժարվելու անհնարինությունը.

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 468-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետի համաձայն՝ համագործակցության համաձայնագրի մեջ նշվում է տեղեկացում այն մասին, որ համագործակցությունից մեղադրյալի հրաժարվելու դեպքում համագործակցության ընթացքում ստացված տվյալները կարող են օգտագործվել որպես ապացույց:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 470-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մինչև համագործակցության համաձայնագրով ստանձնած պարտականությունների կատարումը մեղադրյալն իրավունք ունի գրավոր դիմումով հրաժարվելու համագործակցությունից: Այդ դեպքում հսկող դատախազի որոշմամբ համագործակցությունը դադարեցվում է, և վարույթը շարունակվում է նույն օրենսգրքով սահմանված ընդհանուր կարգով:

Մեջբերված իրավադրույթներից հետևում է, որ օրենսդիրը մեղադրյալի համար նախատեսել է համագործակցությունից հրաժարվելու բացառապես մեկ դատավարական հնարավորություն՝ միայն նախաքննության ընթացքում: Գործի դատական քննության ընթացքում մեղադրյալը ոչ միայն ուղղակիորեն զրկված է հրաժարվելու իրականացված համագործակցությունից, այլ նաև չի կարող համագործակցության գաղափարից հրաժարվելու գործոնով պայմանավորված վիճարկել նաև ի աջակցություն համագործակցության ձեռք բերված ապացույցների թույլատրելիությունը: Ավելին, հստակ սահմանվել է, որ դեռևս համագործակցության համաձայնագրի կնքման փուլում, մեղադրյալը պատշաճ կարգով պետք է տեղեկացվի, որ համագործակցությունից հրաժարվելու դեպքում համագործակցության ընթացքում ստացված տվյալները կարող են օգտագործվել որպես ապացույց:

Միևնույն ժամանակ, թեպետ օրենդիրը նշված իրավանորմերը սահմանելիս փորձել է ապահովել արդարացի երաշխիքներ՝ մեղադրյալի՝ համագործ-

ծակցությանն ուղղված քայլերի և դրանց հետևանքների պատշաճ պարզաբանման ձևով, սակայն, կարծում ենք, որ գործող օրենսդրական կարգավորումներն ամբողջ ծավալով չեն ծածկում մեղադրյալի իրավունքների պաշտպանության անհրաժեշտության հարցը: Այսպես.

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 472-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանը բավարարում է դատաքննությունը հատուկ կարգով անցկացնելու միջնորդությունը, եթե համոզվում է, որ՝

1) համագործակցության վերաբերյալ մինչդատական համաձայնագիրը մեղադրյալը **կնքել է** կամավոր, դրա բնույթը և հետևանքները գիտակցելով, պաշտպանի մասնակցությամբ և սույն գլխով նախատեսված մյուս պահանջների պահպանմամբ.

2) ներկայացվել են մեղադրյալի կողմից համաձայնագրով ստանձնած պարտականությունները պատշաճ կատարելու մասին առերևույթ բավարար ապացույցներ.

3) մեղադրյալի համագործակցությունը չի հանգել հանցանքի կատարմանը բացառապես իր մասնակցության մասին տվյալներ հայտնելուն.

4) առկա չեն ակնհայտ տվյալներ այն մասին, որ մեղադրյալին մեղսագրվող արարքը նա չի կատարել.

5) առկա չեն ակնհայտ տվյալներ այն մասին, որ մեղադրյալին մեղսագրված արարքին տրված իրավական գնահատականը չի համապատասխանում մեղադրանքի փաստական հանգամանքներին:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 474-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ համագործակցության վարույթի արդյունքով դատարանը կայացնում է **մեղադրական դատավճիռ** նույն օրենսգրքի 347-350-րդ հոդվածներով սահմանված կարգով՝ հաշվի առնելով նույն հոդվածով նախատեսված առանձնահատկությունները:

Նշված նորմերի համադրված վերլուծությունից հետևում է, որ համագործակցության վարույթով դատաքննության հատուկ կարգի կիրառումը թույլատրող պայմանների առկայությունը հաստատելու դեպքում, դատարանը, բավարարելով հանրային մեղադրողի միջնորդությունը և անցնելով լրացուցիչ դատալսումների, անշրջելիորեն «պարտադրված է» լինելու կայացնել բացառապես մեղադրական դատավճիռ՝ բացառությամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 474-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված դեպքի:

Կարծում ենք, նշված կառուցակարգերը շրջանցել են այն իրավիճակները, երբ, թեև կհաստատվի, որ համագործակցության վերաբերյալ մինչդատական համաձայնագիրը մեղադրյալը **<u>կնքել է</u>** կամավոր, դրա բնույթը և հետևանքները գիտակցելով, պաշտպանի մասնակցությամբ և քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված մյուս պահանջների պահպանմամբ, և միաժամանակ առկա են համագործակցության վարույթով դատաքննության հատուկ կարգի կիրառումը թույլտրող մյուս պայմանները, սակայն մեղադրյալը, խորհրդակցելով իր պաշտպանի հետ կամ սեփական նախաձեռնությամբ գալիս է այն եզրա-

հանգման, որ ինքը պետք է օգտվի իր լռելու իրավունքից, օգտագործի օրենքով չարգելված բոլոր միջոցներն իր պաշտպանությունն իրականացնելու և իրեն վերագրվող արարքում ի վերջո արդարացման շանս ձեռք բերելու համար, քանի որ գիտակցում է, որ կիրառվելիք հատուկ վարույթի արդյունքը բացառապես մեղադրական դատավճիռն է: Ասել է թե՝ անձը սույն իրավիճակում, թեպետև չի վիճարկում համագործակցության արդյունքով ձեռք բերված ապացույցները, իր համագործացության կամովին, գիտակցված բնույթը, պաշտպանի հետ նախապես խորհրդակցած լինելը, սակայն զրկվում է այդ փուլում իր առարկությամբ համագործակցության վարույթով դատաքննության հատուկ կարգի կիրառման՝ հանրային մեղադրողի միջնորդությանը «վետո դնելու» հնարավորությունից: Օրենսդրական ամրագրում ստացված այս մոտեցումը կարծում ենք խոցելի է և ենթակա է վերանայման:

Համագործակցության վարույթով դատաքննությունը հատուկ կարգով անցկացնելը մերժելու և նախնական դատալսումներն ընդհանուր կարգով շարունակելու մասին որոշման բնույթը.

Ինչպես արդեն նշվել է՝ նախնական դատալսումների ընթացքում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 311-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված հաջորդականությամբ դատարանի կողմից քննարկման առարկա դարձվող հարցերի թվում ընդգրկված է նաև համագործակցության վարույթով դատաքննության հատուկ կարգ կիրառելու հարցը, եթե մեղադրական եզրակացությունը հաստատելիս հսկող դատախազի կողմից նման միջնորդություն է ներկայացվել դատարան:

Այս համատեքստում օրենսդրի կողմից անձի դատական բողոքարկման իրավունքի ապահովման առումով արժևորվել և վերաքննիչ դատարանում հատուկ վերանայման ենթակա՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտերի թվում է ընդգրկվել համագործակցության վարույթով դատաքննությունը հատուկ կարգով անցկացնելը մերժելու և նախնական դատալսումներն ընդհանուր կարգով շարունակելու մասին որոշումը[6], ինչով պայմանավորված, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 473-րդ հոդվածի 3-րդ մասում նշված է, որ այդ մասին կայացվում է ***առանձին որոշում:*** Այստեղ ողջամտորեն կարելի է եզրահանգել, որ «առանձին որոշում» ձևակերպման բովանդակությունը պետք է ընկալել, որ կայացվում է ոչ թե արձանագրային (դատական նիստի արձանագրության մեջ մտցվող) որոշում, այլ ***առանձին փաստաթղթի ձևով շարադրվող որոշում:*** Մյուս կողմից, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 270-րդ հոդվածի 2-րդ մասում սպառիչ թվարկված են այն բոլոր որոշումները, որոնք պետք է շարադրվեն առանձին փաստաթղթի ձևով, և հատկանշական է, որ դրանցում ներառված չէ քննարկման առարկա որոշումը: Միևնույն ժամանակ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի վերաբերելի նորմերի համակարգված դիտարկումը վկայում է, որ օրենսգրքի 270-րդ հոդվածի 2-րդ մասում թվարկված որոշումներով քննարկման առարկա հարցերին առնչվող առանձին հոդվածներում

[6] Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 389-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի:

ևս, ըստ էության նշված է, որ դրանց կապակցությամբ կայացվում են առանձին որոշումներ[7]: Նշվածը գալիս է հաստատելու, որ «առանձին որոշում» և «առանձին փաստաթղթի ձևով շարադրվող որոշում» ձևակերպումները բովանդակային առումով նույնանում են: Որպես դրա բովանդակություն պետք է ընկալել որոշում, որը պատճառաբանված է և այդ պատճառաբանությունները շարադրված են առանձին փաստաթղթի ձևով, որում բացատրված է նաև բողոքարկման դատավարական կարգը և ժամկետները, ինչը դրա հասցեատերերին թույլ կտա վիճարկել այն պատշաճ կարգով: Նշված գործոնները միտված են ապահովելու անձի՝ դատական բողոքարկման իրավունքը լիարժեք և պատշաճ իրացնելու հնարավորությունը[8]: Բացի այդ, պետք է նշել, որ «առանձին որոշում» ձևակերպման գրավոր բնույթի մասին է վկայում նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 9-րդ հոդվածի 6-րդ մասը (նույն հոդվածի ամբողջական տրամաբանության մեջ), ըստ որի՝ նույն օրենսգրքով նախատեսված դեպքերում ***առանձին դատավարական ակտերին*** կարող են ներկայացվել լրացուցիչ պահանջներ: Ուստի, ամփոփելով, գտնում ենք, որ համագործակցության վարույթով դատաքննությունը հատուկ կարգով անցկացնելը մերժելու և նախնական դատալսումներն ընդհանուր կարգով շարունակելու մասին որոշումը պետք է կայացվի՝ շարադրվի առանձին փաստաթղթի ձևով:

Ամեն դեպքում, թեև անձը զրկված չէ բողոքարկման ենթակա և անգամ առանձին փաստաթղթի ձևով չշարադրված դատական ակտը (այդ թվում՝ համագործակցության վարույթով դատաքննությունը հատուկ կարգով անցկացնելը մերժելու և նախնական դատալսումներն ընդհանուր կարգով շարունակելու մասին որոշումը) դատական նիստի ձայնագրությունը սղագրելու եղանակով բողոքարկելու հնարավորությունից, այնուամենայնիվ, կարծում ենք, որ նմանատիպ բարդ և «անհարմար» մեխանիզմներից և տարընկալումներից խուսափելու համար նպատակահարմար կլիներ հստակ սահմանել, որ հատուկ վերանայման կարգով բողոքարկման ենթակա դատական ակտերը պետք է կայացվեն՝ շարադրվեն առանձին փաստաթղթի ձևով:

Համագործակցության վարույթով դատաքննությունը հատուկ կարգով անցկացնելը մերժելու և նախնական դատալսումներն ընդհանուր կարգով

[7] Տե՛ս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածի 2-րդ մասը, 146-րդ հոդվածի 2-րդ մասը, 147-րդ հոդվածի 3-րդ մասը, 315-րդ հոդվածի 3-րդ մասը, 316-րդ հոդվածի 1-ին մասը՝ փոխկապակցված 116-րդ հորդվածի 4-րդ մասի, 117-րդ հոդվածի 4-րդ մասի, 118-րդ հոդվածի 1-ին մասի հետ:

[8] ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 270-րդ հոդվածի 2-րդ մասում նշված որոշումների մի մասը կարող է բողոքարկվել անմիջական, իսկ մյուս մասը՝ հետաձգված կարգով (կամ ընդհանուր հիմունքներով գործն ըստ էության լուծող դատական ակտը վերաքննիչ բողոքարկման կարգով վիճարկելիս այլ հիմքերով տվյալ միջանկյալ ակտը վիճարկման առարկա դարձվել): Ինչ վերաբերում է այդ ցանկում ընդգրկված՝ փորձաքննություն նշանակելու մասին որոշմանը, ապա դրա՝ առանձին փաստաթղթի ձևով կայացման հիմքն են հանդիսանում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 333-րդ հոդվածի 1-ին մասի և 253-րդ հոդվածի 1-ին մասի՝ ընթացակարգային բնույթ կրող պահանջները:

շարունակելու մասին որոշման բողոքարկումը և դրա իրավական հետևանքները.

Ինչպես արդեն նշվել է՝ վերաքննիչ դատարանում հատուկ վերանայման ենթակա՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտերի թվում ընդգրկված է նաև համագործակցության վարույթով դատաքննությունը հատուկ կարգով անցկացնելը մերժելու և նախնական դատալսումներն ընդհանուր կարգով շարունակելու մասին որոշումը:

Իր հերթին, վերաքննիչ դատարանում հիշյալ որոշման հատուկ վերանայման կարգով քննության արդյունքում կայացված դատական ակտը ևս հատուկ վերանայման կարգով ենթակա է բողոքարկման վճռաբեկ դատարանում[9]:

Կարևոր է ընդգծել, որ քննարկման առարկա որոշման դեմ ներկայացված բողոքի՝ վերադաս դատական ատյանի կողմից բավարարումը ենթադրում է դատախազի կողմից ներկայացված՝ դատաքննությունը հատուկ կարգով անցկացնելու միջնորդության բավարարում: Այդ պայմաններում, չի բացառվում, որ վարույթն իրականացնող դատարանը դատախազի միջնորդությունը մերժելուց հետո սպառի նախնական դատալսումներում քննարկման առարկա մյուս հարցերը և ընդհանուր կարգով անցում կատարի հիմնական դատալսումներին, որից վերադարձ դեպի նախնական դատալսումներ այլևս հնարավոր չի լինի: Նման պայմաններում կստեղծվի մի իրավիճակ, երբ առկա կլինի օրինական ուժի մեջ մտած վերադաս դատական ատյանի՝ վարույթն իրականացնող դատարանի կողմից դատախազի ներկայացրած միջնորդության ոչ իրավաչափորեն մերժման վերաբերյալ որոշում, և հետևապես, անձի՝ համագործակցության վարույթով դատաքննության հատուկ կարգի կիրառումից բխող բարենպաստ հետևանքներից զրկվելը ևս կհամարվի ոչ իրավաչափ և անհիմն: Նման իրավիճակներից խուսափելու համար նպատակահարմար կլինի, որ համագործակցության վարույթով դատաքննությունը հատուկ կարգով անցկացնելը մերժելու և նախնական դատալսումներն ընդհանուր կարգով շարունակելու մասին որոշման կայացման և այն շահագրգիռ կողմերին հանձնման պահից՝ մինչև հատուկ վերանայման կարգով բողոքարկման սահմանված ժամկետը սպառելը և այդ ընթացքում հատուկ վերանայման բողոք չներկայացնելը, կամ այդ ժամկետում բողոքարկելը և մինչև այդ բողոքի վերջնական լուծումը, գործը քննող դատարանը հետաձգի դատալսումները: Մինչդեռ, գործող իրավակարգավորումները դատալսումների հետաձգման նման հիմք չեն նախատեսում: Այսպես.

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 278-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատալսումները հետաձգվում են՝

1) եթե առկա է նույն օրենսգրքի 193-րդ հոդվածի 2-րդ մասի 1-3-րդ և 5-րդ կետերով նախատեսված՝ քրեական հետապնդման ժամկետը կասեցնելու որևէ հիմք.

[9] Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի:

2) դատական նիստին նույն օրենսգրքի 272-275-րդ հոդվածներով նախատեսված անձանցից որևէ մեկի չներկայանալու դեպքում, եթե նրա մասնակցությունը պարտադիր է օրենքով կամ դատարանի որոշման հիման վրա.

3) եթե դատարանը գտնում է, որ անհրաժեշտ է լուծել տվյալ վարույթով կիրառման ենթակա նորմատիվ իրավական ակտի սահմանադրականության հարցը.

4) եթե նույն օրենսգրքի 144-րդ հոդվածով նախատեսված դեպքերում դատական նիստի դահլիճից հեռացված վարույթի մասնակցի բացակայությամբ դատական նիստը շարունակելն անհնար է:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատալսումները դատարանի նախաձեռնությամբ կամ կողմի միջնորդությամբ կարող են հետաձգվել, եթե դա անհրաժեշտ է՝

1) նոր ապացույց ձեռք բերելու համար.

2) հանրային մեղադրողի կողմից մեղադրանքը փոփոխելու կամ լրացնելու, ինչպես նաև պաշտպանության կողմին նոր մեղադրանքին ծանոթանալու և դրանից պաշտպանվելու միջոցներ ձեռնարկելու համար.

3) վերդիկտ կամ դատավճիռ կայացնելու համար.

4) եզրափակիչ ելույթներին պատրաստվելու համար:

Կիրառելով մեկնաբանման expressio unius հանրաճանաչ կանոնը, համաձայն որի՝ սպառիչ ցանկում որևէ տարր չներառելը պետք է մեկնաբանել դրա բացառման իմաստով՝ արձանագրման է ենթակա, որ համագործակցության վարույթով դատաքննությունը հատուկ կարգով անցկացնելը մերժելու և նախնական դատալսումներն ընդհանուր կարգով շարունակելու մասին որոշման կայացման և այն շահագրգիռ կողմերին հանձնման պահից՝ մինչև հատուկ վերանայման կարգով բողոքարկման սահմանված ժամկետը սպառելը և այդ ընթացքում հատուկ վերանայման բողոք չներկայացնելը, կամ այդ ժամկետում բողոքարկելը և մինչև այդ բողոքի վերջնական լուծումը, որպես դատալսումների հետաձգման ինքնուրույն հիմք, ներառված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 278-րդ հոդվածով նախատեսված՝ դատալսումների հետաձգման իմպերատիվ և/կամ հայեցողական հիմքերի թվում, ինչն ուղղակիորեն արժեզրկում է վերադաս դատական ատյանի՝ բողոքի հնարավոր բավարարման դեպքում դատավարության շահագրգիռ մասնակցի՝ դրանից ակնկալվող ելքի դերը և նշանակությունը: Նշվածով պայմանավորված՝ գտնում ենք, որ օրենսդրական մակարդակով հիշյալ հիմքն անհրաժեշտ է ուղիղ նախատեսել դատալսումների հետաձգման իմպերատիվ հիմքերի շարքում:

Եզրակացություն

Ամփոփելով, կարելի է գալ եզրահանգման, որ համագործակցության վարույթը, հայրենական քրեադատավարական համակարգում հանդիսանալով հարաբերականորեն նոր ինստիտուտ, կարող է առանցքային տեղ զբաղեցնել պարզեցված մյուս վարույթների շարքում, միևնույն ժամանակ, դեռևս ունի զարգացման

ճանապարհ և գործնական դաշտում կիրառելիության հիմնախնդիրներ, որոնց վերհանումը և համապատասխան լուծումների առաջարկներով հանդես գալը խիստ արդիական են, քանի որ ինստիտուտի պատշաճ գործադրումը բխում է ոչ միայն վարույթի մասնավոր մասնակցի՝ մեղադրյալի շահերից, այլ նաև՝ պետության անունից հանդես եկող վարույթի հանրային մասնակիցների՝ և այդպիսով հասարակության և պետության շահերից՝ ի նպաստ այլ հանցագործությունների բացահայտման:

Վերոգրյալով պայմանավորված՝ սույն աշխատանքում նշված ինստիտուտի կիրառման վերաբերյալ ներկայացվել են հետևյալ առաջարկները.

1. Օրենսդրական մակարդակում ամրագրել մեղադրական եզրակացությամբ ստացված վարույթի նյութերը դատարան ուղարկելու փուլում դատաքննության հատուկ կարգ կիրառելու մասին միջնորդությամբ վարույթի նյութերը դատարան հանձնելը մերժելու մասին որոշման կայացման դեպքում յոթնօրյա ժամկետում վարույթի նյութերը դատարան չհանձնելու կամ դրա հետևանքով քրեական հետապնդման ժամկետը լրանալուց հետո վարույթի նյութերը դատարան հանձնելու դեպքում քրեական հետապնդման առավելագույն՝ բաց թողնված ժամկետը հարգելի համարելու և վարույթի նյութերն այդ կերպ դատարան հանձնելու իրավաչափությունը՝ բացառելով մեղադրանքի կողմի համար այդ հիմքերով անբարենպաստ դատավարական հետևանքների առաջացման հնարավորությունը.

2. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 471-րդ հոդվածի 1-ին մասը ձևակերպել հետևյալ կերպ. «Սույն օրենսգրքի 205-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում հսկող դատախազը, ուսումնասիրելով քննիչից ստացած վարույթի նյութերը, ինչպես նաև մեղադրյալի կողմից համաձայնագրով ստանձնած իր պարտականությունների պատշաճ կատարումը հաստատող ապացույցները, հաստատում է մեղադրական եզրակացությունը և իրավասու դատարան միջնորդություն է հարուցում մեղադրյալի նկատմամբ դատաքննության հատուկ կարգ կիրառելու մասին կամ որոշում է կայացնում մեղադրյալի նկատմամբ դատաքննության հատուկ կարգ կիրառելու մասին միջնորդություն չհարուցելու մասին, եթե մեղադրյալի կողմից համաձայնագրով ստանձնած իր պարտականությունները չեն կատարվել կամ կատարվել են ոչ պատշաճ:», և, նշվածով պայմանավորված, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի վերաբերելի մյուս իրավանորմերը համապատասխանեցնել նշված առաջարկին.

3. Նախնական դատաքննության ընթացքում հանրային մեղադրողի՝ համագործակցության վարույթով դատաքննությունը հատուկ կարգով անցկացնելու մասին միջնորդությունը քննարկելիս լսել նաև դատավարության շահագրգիռ այլ մասնակիցների և հատկապես տուժողի դիրքորոշումները, դրանք ենթարկել խորքային և բազմակողմանի գնահատման, ինչից հետո միայն լուծել ներկայացված միջնորդությունը, իսկ միջնորդության բավարարման դեպքում այդ մասին ևս կայացնել առանձին որոշում՝ հնարավորություն ընձեռելով վարույթի շահագրգիռ մասնակիցներին հատուկ վերանայման կարգով այն ներկայացնել վերաքննիչ ատաանի գնահատմանո.

4. Այն իրավիճակներում, երբ նախնական դատալսումների ընթացքում թեև կհաստատվի, որ համագործակցության վերաբերյալ մինչդատական համաձայնագիրը մեղադրյալը կնքել է կամավոր, դրա բնույթը և հետևանքները գիտակցելով, պաշտպանի մասնակցությամբ և քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված մյուս պահանջների պահպանմամբ, և միաժամանակ առկա են համագործակցության վարույթով դատաքննության հատուկ կարգի կիրառումը թույլտրող մյուս պայմանները, սակայն մեղադրյալը, խորհրդակցելով իր պաշտպանի հետ կամ սեփական նախաձեռնությամբ գալիս է այն եզրահանգման, որ ինքը պետք է օգտվի իր լռելու իրավունքից, օգտագործի օրենքով չարգելված բոլոր միջոցներն իր պաշտպանությունն իրականացնելու և իրեն վերագրվող արարքում ի վերջո արդարացման շանս ձեռք բերելու համար, մեղադրյալին ընձեռել հնարավորություն հանրային մեղադրողի՝ համագործակցության համաձայնագիր կնքած մեղադրյալի նկատմամբ դատաքննությունը հատուկ կարգով անցկացնելու միջնորդության նկատմամբ կիրառելու իր «վետոն».

5. Օրենսդրական մակարդակով հստակ սահմանել, որ հատուկ վերանայման կարգով բողոքարկման ենթակա դատական ակտերը, այդ թվում՝ համագործակցության վարույթով դատաքննությունը հատուկ կարգով անցկացնելը մերժելու և նախնական դատալսումներն ընդհանուր կարգով շարունակելու մասին որոշումը, պետք է կայացվեն՝ շարադրվեն առանձին փաստաթղթի ձևով.

6.Համագործակցության վարույթով դատաքննությունը հատուկ կարգով անցկացնելը մերժելու և նախնական դատալսումներն ընդհանուր կարգով շարունակելու մասին որոշման կայացման և այն շահագրգիռ կողմերին հանձնման պահից՝ մինչև հատուկ վերանայման կարգով բողոքարկման սահմանված ժամկետը սպառելը և այդ ընթացքում հատուկ վերանայման բողոք չներկայացնելը, կամ այդ ժամկետում բողոքարկելը և մինչև այդ բողոքի վերջնական լուծումը, որպես դատալսումների հետաձգման ինքնուրույն հիմք, օրենսդրական մակարդակով ամրագրել դատալսումների հետաձգման իմպերատիվ հիմքերի շարքում:

Գրականության ցանկ (reference list, список литературы)

1. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, (ընդունվել է 2021 թվականի հունիսի 30-ին):

RA Criminal Procedure Code (adopted 30.06.2021).

2. Ղուկասյան Հ., Մելքոնյան Դ., «Տարբերակված դատավարության ձևը և դրա առանձնահատկությունները», ք.Երևան, «Պետություն և իրավունք», № 1, 2007թ.:

Ghukasyan H., Melkonian D., ‘‘Differentiated procedural form and its features’’ Yerevan, ‘‘State and law’’, № 1, 2007.

3. Մելքոնյան Դ., Ղուկասյան Հ., Նիկողոսյան Ա., «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության նոր օրենսգրքի հայեցակարգային լուծումների, նորարարական մոտեցումների եվ հիմնական ինստիտուտների մեկնաբանման գործնական ուղեցույց», ք.Երևան, 2022թ.:

Melkonian D., Ghukasyan H., Nikoghosyan A., ‘‘A practical guide to interpreting the conceptual solutions, innovative approaches and main institutions of the new Criminal Procedure Code of the Republic of Armenia’’, 2022.

Robert Mheryan
Senior Prosecutor of the Department for Cases of Crimes against the Fundamentals of the Constitutional Order, State and Public Security of the Prosecutor General's Office of the Republic of Armenia, Degree Applicant at the Department of Criminal Procedure and Criminology of Law Faculty of Yerevan State University

FEATURES OF COOPERATION PROCEEDINGS WHEN TRANSMITTING CRIMINAL CASE MATERIALS TO THE COURT AND DURING THE COURT PROCESS[10]

Abstract

This article examines fundamental issues related to cooperation proceedings as a simplified form of judicial procedure, particularly those that may arise when transmitting criminal case materials to the court and during the subsequent court process.

The institution of cooperation proceedings has been introduced relatively recently into the domestic legal system. As a result, a range of practical and legal challenges have emerged and are likely to continue emerging that merit careful examination. Addressing these issues in advance can facilitate the development and implementation of more precise and effective solutions, thereby underscoring the relevance of this study.

The central aim of this article is to identify and analyze the challenges associated with the application of cooperation proceedings. It considers the existing legal framework governing these procedures, highlights both problematic and effective aspects of current practice, and puts forward potential solutions aimed at enhancing the functionality of this legal mechanism.

Specific attention is given to the procedural complexities surrounding the initiation of a motion for applying a special (cooperation-based) procedure to an accused who has entered into a cooperation agreement. The article also examines the decision-making process involved in refusing to submit case materials to the court under such a motion. Key topics discussed include the formal and substantive characterization of such decisions, the legal and ethical implications of motions to conduct trials under simplified procedures, the procedural consequences of an accused party's withdrawal from cooperation during trial, and the legal nature and appealability of decisions to revert to general procedures.

The analysis concludes with a set of proposals designed to address the identified challenges. The findings and recommendations offered in this article aim to contribute to the further refinement of current legal regulations and to promote a more effective application of cooperation proceedings in criminal justice.

Keywords: co-operation proceedings; agreement; prosecutor; accused; subject of the co-operation.

[10] The article was presented on 07.05.2025 and was reviewed on 16.06.2025.

Роберт Мгерян
Старший прокурор управления по преступлениям против основ конституционного строя, государства и общественной безопасности Генеральной прокуратуры Республики Армения, соискатель кафедры уголовного судопроизводства и криминалистики юридического факультета Ереванского государственного университета

ОСОБЕННОСТИ ПОРЯДКА СОТРУДНИЧЕСТВА ВО ВРЕМЯ ПЕРЕДАЧИ УГОЛОВНОГО ДЕЛА В СУД ИЛИ ВО ВРЕМЯ СУДЕБНОГО РАЗБИРАТЕЛЬСТВА[11]

Абстракт

В настоящей работе рассматриваются некоторые вопросы по порядку сотрудничества, как упрощенной процессуальной формы, которые могут возникнуть при передачи материалов уголовного дела в суд и в суде.

Указанный институт внутригосударственной правовой системы сравнительно недавно вступил в область практического применения, тем самым свидетельствуя о вероятности наличия и возникновения в будущем ряда проблем, интенсивное обсуждение которых, несомненно, поспособствуют поиску наиболее точных решений и реализации их на практике, тем самым обусловливая актуальность избранной темы исследования. Основной задачей настоящей работы, является анализ и выявление всевозможных проблем, свойственных процедуре производства по сотрудничеству, обсуждение вопросов правового регулирования, а также определение положительных и отрицательных аспектов исследуемой задачи и как следствие целью исследования, является определение и формирование предложений, направленных на разрешение и урегулирование вышеуказанных задач.

Обсуждался вопрос о возбуждении ходатайства о применении особого порядка в отношении обвиняемого, заключившего соглашение о сотрудничестве, или о принятии решения об отказе в представлении материалов дела в суд с таким ходатайством. Предметом обсуждения стали формальные и содержательные аспекты наименования данного постановления, правовые и моральные аспеткты ходатайства о проведении судебного разбирательства в особом порядке, невозможность отказа от сотрудничества в суде, а также характер постановления об отказе в проведении судебного разбирательства в особом порядке и продолжении предварительного слушания в общем порядке, апелляционная жалоба и ее правовые последствия. В результате по ним были внесены предложения.

[11] Статья была представлена 07.05.2025 и прошла рецензирование 16.06.2025.

Соображения, высказанные в работе по обозначенным вопросам, могут способствовать дальнейшему совершенствованию действующих правовых норм, способствуя более эффективному применению данной процедуры.

Ключевые слова: порядок сотрудничества; соглашение; прокурор; обвиняемый; предмет сотрудничества.

https://doi.org 10.59821/18294219-2025.1-mkt09

Սոնա Մարգարյան
ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության դատախազ,
Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի ամբիոնի հայցորդ

ԿԱՇԱՌՔ ՏԱԼՈՒ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՇԱՌՔԻ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՆՑԱԿԱԶՄՆԵՐԻ ԿԻՐԱՌԵԼԻՈՒԹՅԱՆԸ, ԴՐԱՆՑ ՏԱՐԱՆՋԱՏՄԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՈՐՈՇ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ[1]

Համառոտագիր

Հոդվածը վերաբերում է ՀՀ նախկին և գործող քրեական օրենսգրքերի այն հոդվածների վերլուծությանը, որոնք քրեական պատասխանատվություն են նախատեսում կաշառք տալու օժանդակության, ինչպես նաև կաշառքի միջնորդության համար: Հոդվածում, մասնավորապես, վերլուծության են ենթարկվել նշված հանցատեսակների օբյեկտը, սուբյեկտը, օբյեկտիվ և սուբյեկտնիվ կողմերը, ուսումնասիրվել են նշված հանցատեսակների կիրառման առնչությամբ առկա հակասական մոտեցումները: ՀՀ նոր քրեական օրենսգիրքը սահմանում է օժանդակության՝ որպես հանցակցության տեսակի դրսևորման նոր եղանակներ, ինչպես նաև կաշառքի միջնորդության հանցակազմի օբյեկտիվ կողմի դրսևորման՝ նոր երկընտրելի գործողությունների տեսակներ, սակայն ներկայումս նոր օրենսդրության՝ կարճ ժամանակահատվածում կիրառման ոչ այնքան հարուստ պրակտիկ փորձի պայմաններում նշված նորմերի կիրառման, կաշառքի միջնորդության և կաշառք տալու օժանդակության հանցակազմերի տարանջատման հարցում առկա են բազմաթիվ տարակարծություններ, որոնք հեղանակի կողմից վեր են հանվել և հետազոտվել, ինչի արդյունքում հեղինակը հանդես է եկել համապատասխան առաջարկություններով:

Հիմնաբառեր- կաշառք տալը, խոստանալը, առաջարկելը կամ տրամադրելը, կաշառք տալու օժանդակություն, կաշառքի միջնորդություն, համաձայնության գալուն նպաստելը, կաշառք տվողի և ստացողի միջև համաձայնության առկայության դեպքում կաշառքի առարկան պաշտոնատար անձին, նրա մատնանշած անձին փոխանցելու նախաձեռնություն դրսևորելը, կաշառքը փոխանցելու խոստում տալը, փոխանցելը, կաշառք տվողի և ստացողի միջև առկա համաձայնության իրականացմանն այլ կերպ նպաստելը:

[1] Հոդվածը ներկայացվել է 13.05.2025թ., գրախոսվել է 10.06.2025թ.:

Ներածություն

Կաշառք տալուն օժանդակելու, ինչպես նաև կաշառքի միջնորդության հանցակազմերի ուսումնասիրությունը և վերլուծությունը էական նշանակություն ունի դրանց միատեսակ կիրառելիության համար՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ իրավակիրառ պրակտիկայում բազմաթիվ են խնդրահարույց իրավիճակները՝ պայմանավորված ՀՀ քրեական օրենսգրքի 437-րդ հոդվածով (կաշառքի միջնորդությունը) և ՀՀ քրեական օրենսգրքի 46-436-րդ հոդվածներով (պաշտոնատար անձին կաշառք տալուն օժանդակելը) նախատեսված հանցագործությունների տարանջատման, նման հանցանք կատարած անձանց արարքների ճշգրիտ որակման հարցում օրենսդրական ոչ միանշանակ կարգավորումներով և ՀՀ քրեական նոր օրենսգրքի վիճելի ձևակերպումներով:

Մասնավորապես, եթե 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 313-րդ հոդվածը[2] սահմանում էր կաշառքի միջնորդության հանցակազմի առավել սահմանափակ թվով օբյեկտիվ կողմի գործողություններ, և դրա արդյունքում առավել դյուրին էր անձի արարքի որակման դեպքում կաշառքի միջնորդին կաշառք տալուն օժանդակող անձից տարանջատելը, ապա ՀՀ գործող քրեական օրենսգրքի 437-րդ հոդվածը նշված հանցակազմի օբյեկտիվ կողմի գործողությունների դրևսորումները առավել ընդլայնել է, ինչը իրավակիրառ պրակտիկայում որոշակի բարդություններ է առաջ բերում՝ նշված հանցակազմը կաշառք տալու օժանդակությունից տարբերակելու հարցում:

Նշվածը պայմանավորված է ինչպես կաշառքի միջնորդության համար քրեական պատասխանատվություն նախատեսող նորմերում տեղ գտած խնդրահարույց ձևակերպումներով, այնպես էլ անձանց կողմից կատարված արարքը քննարկվող հանցակազմով որակելիս քրեական պատասխանատվություն նախատեսող այլ հանցատեսակից տարանջատելու շուրջ առաջ եկած իրավական վեճերով:

Նման պայմաններում, կարծում ենք, որ առանցքային նշանակություն ունի կաշառքի միջնորդության հանցակազմը մանրամասն վերլուծության ենթարկելը, դրանում նկարագրված երկընտրելի գործողությունների առավել խորքային ուսումնասիրությունը, ինչի արդյունքում կաշառքի միջնորդության հանցակազմի օբյկետիվ կողմը համադրելով օժանդակության՝ ՀՀ գործող քրեական օրենսգրքով ամրագրված երկընտրելի դրևորումների հետ՝ կձևավորվի նշված արարքների տարբերակման և ճշգրիտ որակման համար յուրատիպ «ուղեցույց»:

Ուստի, գտնում ենք, որ անհրաժեշտ է համապարփակ վերլուծության ենթարկել ՀՀ քրեական օրենսգրքի վերը նշված հոդվածներով նախատեսված խնդրահարույց կարգավորումները՝ համադրելով դրանք նաև այլ պետությունների օրենսդրության և իրավակիրառ պրակտիկայի հետ, ինչի արդյունքում հնարավոր կլինի ապահովել նշված հանցատեսակների միատեսակ կիրառելիությունը և նշված հոդվածներով նախաձեռնված քրեական վարույթների շրջանակներում կանխել դրանց կիրառման արդյունքում առաջ եկող տարակարծությունները:

[2] [2] Տե՛ս, ՀՀ քրեական օրենսգիրք, 2003թ., https://www.arlis.am/documentview.aspx?docid=69646:

1. Կաշառքի միջնորդության համար քրեական պատասխանատվություն սահմանող քրեաիրավական նորմերի համակարգային վերլուծություն.

Կաշառքի միջնորդության և կաշառք տալու օժանդակությանն ուղղված հանցավոր արարքների որակման հարցում առկա տարակարծությունները հաղթահարելու և նշված հանցատեսակների դիսպոզիցիայով նախատեսված արարքների տարանջատմանն առնչվող խնդրահարույց իրավիճակները կանխելու նպատակով, նախևառաջ, անհրաժեշտ է համակարգային վերլուծության ենթարկել կաշառքի միջնորդություն հանցատեսակը:

ՀՀ քրեական օրենսգրքի 437-րդ հոդվածը սահմանում է քրեական պատասխանատվություն կաշառքի միջնորդության համար: Մասնավորապես, նշված հոդվածի համաձայն՝

«1. Կաշառքի միջնորդությունը՝ կաշառքի շուրջ կաշառք տվողի և ստացողի միջև համաձայնության գալուն նպաստելը, կաշառք տվողի և ստացողի միջև համաձայնության առկայության դեպքում կաշառքի առարկան պաշտոնատար անձին կամ նրա մատնանշած անձին փոխանցելու նախաձեռնություն դրսևորելը կամ այն փոխանցելու խոստում տալը կամ փոխանցելը կամ կաշառք տվողի և ստացողի միջև առկա համաձայնության իրականացմանն այլ կերպ նպաստելը՝

պատժվում է տուգանքով՝ տասնապատիկից երեսնապատիկի չափով, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

1) իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով կամ

2) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ՝

պատժվում է տուգանքով՝ քսանապատիկից հիսնապատիկի չափով, կամ ազատության սահմանափակմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով:»:

Այսպես.

Նշվածի համատեքստում, նախևառաջ, հատկանշական է այն հանգամանքը, որ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 313-րդ հոդվածը ամրագրում էր կաշառքի միջնորդության առավել սահմանափակ ձևակերպումներ ներառող դիսպոզիցիա, այն է՝ կաշառք տվողի և կաշառք ստացողի միջև կաշառքի շուրջ համաձայնության գալուն կամ արդեն կայացած համաձայնության իրականացմանը նպաստելը: Հոդվածի նախկին խմբագրության պայմաններում ստացվում էր, որ կաշառքի միջնորդը երկու կողմերի միջև որպես բանագնաց, բանախոս կամ բանակցության միջնորդ էր հանդիսանում, նրա գործողությունները չէին բխում միայն մեկ կամ մյուս կողմի շահերից, այլ միաժամանակ երկուսի: Միջնորդի նպատակը հանցանքի բոլոր դերակատարների

կողմից հանցանքի կատարմանն աջակցելն էր:[3] Մինչդեռ, հոդվածի ներկայիս խմբագրության պայմաններում օրենսդիրը կաշառքի միջնորդին վերագրում է հանցանքին առավել բարձր աստիճանի ներգրավվածություն և մասնակցություն, ինչն էլ հանգեցնում է արարքի որակման շուրջ որոշակի խնդիրների:

Միաժամանակ, ՀՀ քրեական օրենսգրքի 437-րդ հոդվածով ամրագրված հանցատեսակի՝ կաշառքի միջնորդության հանցակազմի անմիջական օբյեկտը հանրային ծառայության կոնկրետ օղակի նորմալ գործունեությունն է: Նշված օբյեկտի դեմ ուղղված այս հանցանքի արդյունքում հեղինակազրկվում է հանրային ծառայությունը, հանրության մեջ ձևավորվում է բացասական վերաբերմունք հանրային ծառայության, հանրային ծառայողի նկատմամբ, անվստահություն է առաջանում օրենքի գերակայության, օրենքի առջև բոլորի հավասարության սկզբունքների իրական լինելու նկատմամբ: Ի վերջո, արարքը կոռուպցիոն բնույթի է, որի դրսևորման արդյունքում առաջանում են մի շարք բացասական հետևանքներ:

Նշված հանցակազմի առարկան է հանդիսանում կաշառքը, այն է՝ գույք, ներառյալ դրամական միջոց, արժեթուղթ, վճարային այլ գործիք, գույքի նկատմամբ իրավունք, ծառայություն կամ որևէ այլ առավելություն:

Հոդվածի դիսպոզիցիայի ուսումնասիրությունից ակնհայտ է, որ օրենսդիրն այս արարքը կատարելու համար չի նախատեսում հատուկ սուբյեկտի առկայության պարտադիր պահանջ, միաժամանակ, ՀՀ քրեական օրենսգրքի 437-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված են հանցանքի ծանրացնող հանգամանքները, որոնց թվում է նաև արարքը իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով:

Բացի այդ, որպես արարքը ծանրացնող հանգամանք օրենսդիրը նախատեսել է նաև կաշառքի միջնորդությունը մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ կատարելը:

Քննարկվող հանցակազմի սուբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ է կաշառքի միջնորդի ուղղակի դիտավորության առկայությունը, այսինքն՝ կաշառքի երկու կողմերի միջև միջնորդական դերի կատարման նկատմամբ դիտավորության առկայությունը:

Հարկ է նշել նաև, որ կաշառքի միջնորդության հանցակազմը ձևական է, և համարվում է ավարտված կաշառքի միջնորդի կողմից հոդվածի դիսպոզիցիայով նախատեսված երկընտրելի գործողություններից որևէ մեկի կամ մի քանիսի կատարման պահից՝ անկախ կաշառք տվողի և կաշառք ստացողի միջև համաձայնության իրագործման հանգամանքից[4]:

Ընդ որում, կաշառքի միջնորդությունը առկա է՝ անկախ այն հանգամանքից, թե երբ է կաշառքի միջնորդը կաշառքի առարկան փոխանցել կաշառք ստացողին՝

[3] Տե՛ս, Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Հատուկ մաս (վեցերորդ հրատարակություն՝ փոփոխություններով և լրացումներով), Երևանի պետական համալսարան, Երևան: ԵՊՀ հրատ., 2012թ., էջ 854-856

[4] Տե՛ս, Ռուսաստանի Դաշնության Գերագույն դատարանի պլենումի՝ «Կաշառքի և կոռուպցիոն բնույթի այլ հանցագործությունների առնչությամբ դատական պրակտիկայի» վերաբերյալ 2013 թվականի հուլիսի 9-ի թիվ 24 որոշման 13.2-րդ կետը:

վերջինիս կողմից հօգուտ կաշառք տվողի կամ նրա մատնանշած անձի համապատասխան գործողություններ (անգործություն) կատարելուց առաջ, թե հետո:[5]

Հետաքրքրական են նաև այն իրավիճակները, երբ կաշառքի միջնորդը չի կատարում իր ստանձնած դերը, այն է՝ օբյեկտիվ կողմի երկընտրելի գործողությունը, քանի որ ի սկզբանե չի ունեցել հանցանքն ավարտին հասցնելու դիտավորություն, այսինքն՝ տեղի է ունեցել «կարծեցյալ միջնորդություն»:

Օրինակ, Ա-ն, կաշառք տվողի և ստացողի միջև համաձայնության առկայության պայմաններում կաշառքի առարկան Բ-ին փոխանցելու նպատակով ստանում է Գ-ից, սակայն չի կատարում իր խոստումը, գումարը չի փոխանցում Բ-ին: Տվյալ իրավիճակում, կարծում ենք, որ առանցքային նշանակություն ունի «կաշառքի միջնորդ»-ի կողմից գումարը չփոխանցելու դիտավորության ծագման պահը: Եթե միջնորդը ի սկզբանե ունեցել է միջնորդական գործողությունները չկատարելու դիտավորություն, ապա վերջինիս արարքը ենթակա է որակման ՀՀ քրեական օրենսգրքի 440-րդ հոդվածի 2-րդ մասով, այն է՝ կաշառքի միջնորդության պատրվակով գույք, ներառյալ դրամական միջոց, արժեթուղթ, վճարային այլ գործիք, գույքի նկատմամբ իրավունք, ծառայություն կամ որևէ այլ առավելություն ստանալը, իսկ կաշառք տվողի արարքը՝ հանցափորձ:

Անդրադառնալով քննարկվող հանցակազմի օբյեկտիվ կողմին՝ հարկ է նշել, որ հոդվածի դիսպոզիցիան նախատեսում է օբյեկտիվ կողմի երկընտրելի գործողություններ: Դրանք են.

1. կաշառքի շուրջ կաշառք տվողի և ստացողի միջև համաձայնության գալուն նպաստելը,

2. կաշառք տվողի և ստացողի միջև համաձայնության առկայության դեպքում կաշառքի առարկան պաշտոնատար անձին կամ նրա մատնանշած անձին փոխանցելու նախաձեռնություն դրսևորելը,

3. կաշառք տվողի և ստացողի միջև համաձայնության առկայության դեպքում կաշառքի առարկան փոխանցելու խոստում տալը,

4. կաշառք տվողի և ստացողի միջև համաձայնության առկայության դեպքում կաշառքի առարկան փոխանցելը,

5. կաշառք տվողի և ստացողի միջև առկա համաձայնության իրականացմանն այլ կերպ նպաստելը:

Վերոնշյալից բխում է, որ օրենսդիրը վերը քննարկվող հանցակազմի օբյեկտիվ կողմի դրսևորումները տարանջատելիս, նախ, առանձնացրել է կաշառքի միջնորդության իրականացման փուլերը, դրանք են՝ կաշառքի միջնորդությունը նախքան կաշառքի շուրջ կաշառք տվողի և ստացողի միջև համաձայնության առկայությունը և կաշառքի միջնորդությունը կաշառք տվողի և ստացողի միջև առկա համաձայնության պայմաններում:

Մասնավորապես, կաշառքի միջնորդությունը նախքան կաշառքի շուրջ կաշառք տվողի և ստացողի միջև համաձայնության առկայությունը կարող է

[5] Տե՛ս, նույնը՝ 8-րդ կետը:

դրսևորվել կաշառքի շուրջ կաշառք տվողի և ստացողի միջև համաձայնության գալուն նպաստելու եղանակով, որը կարող է կատարվել միաժամանակ և՛ կաշառք տվողին, և՛ կաշառք ստացողին միմյանց կապող օղակ հանդիսանալու միջոցով:

Նշված արարքի ճշգրիտ որակման համար անհրաժեշտ է վեր հանել, թե ինչ է նշանակում «համաձայնության գալուն նպաստել» ձևակերպումը, ինչպիսի գործողություններ կարող են ներառված լինել կաշառքի միջնորդությունը նշված եղանակով իրականացնող անձի արարքում: Կարծում ենք, որ որպես կաշառքի շուրջ կաշառք տվողի և ստացողի միջև համաձայնության գալուն նպաստելուն ուղղված գործողություններ կարելի է առանձնացնել կաշառք տվողի և ստացողի միջև, այսպես կոչված, բանակցությունների իրականացումը կաշառքի առարկայի, դրա չափի, կաշառքի դիմաց կաշառք տվողի ակնկալիքների, կաշառք ստացողի կողմից կատարման ենթակա որոշակի գործողության կամ անգործության վերաբերյալ համաձայնության ձեռքբերմանը նպաստող գործողությունների կատարումը:

Որպես օրինակ կարելի է նշել հետևյալը իրավիճակը.

Ա-ն ցանկանում է ձեռք բերել վարորդական իրավունքի վկայական ապօրինի ճանապարհով, այդ նպատակով դիմում է իր ընկերոջը՝ Բ-ին, ով հանդիսանում է նաև վարորդական իրավունքի վկայական տրամադրելու լիազորություն իրականացնող իրավասու մարմնի աշխատակցի՝ Գ-ի ընկերը, և փոխկապակցված գործողությունների իրականացման միջոցով Բ-ն կապեր է հաստատում է նախնական կերպով կաշառք տալու ցանկություն հայտնած Ա-ի և դրա դիմաց որոշակի ապօրինի գործողություններ իրականացնելու պատրաստակամություն հայտնած Գ-ի միջև՝ այդպիսով հանդես գալով որպես կաշառքի միջնորդ:

Անդրադառնալով կաշառքի միջնորդության մյուս փուլին, այն է՝ կաշառքի միջնորդությունը կաշառք տվողի և ստացողի միջև առկա համաձայնության առկայության պայմաններում, հարկ է նշել, որ օրենսդիրը թվարկել է կաշառքի միջնորդության նշված փուլում դրսևորման մի քանի եղանակներ: Դրանք են՝

1. **կաշառք տվողի և ստացողի միջև համաձայնության առկայության դեպքում կաշառքի առարկան պաշտոնատար անձին կամ նրա մատնանշած անձին փոխանցելու նախաձեռնություն դրսևորելը.**

Նշված դեպքում կաշառքի միջնորդը կաշառք տալու և ստանալու հանցագործությանը ներգրավվում է ոչ թե վերը նշված «բանակցությունների փուլից», այլ նրա դերակատարումը կայանում է նրանում, որ վերջինս կաշառք տվողի և ստացողի միջև կաշառքի առարկան փոխանցելու նախաձեռնություն է դրսևորում այն փուլում, երբ հանցանքի մյուս երկու կողմերը արդեն իսկ եկել են համաձայնության կաշառքի առարկայի, դրա չափի, կաշառքի դիմաց կաշառք տվողի ակնկալիքների, կաշառք ստացողի կողմից կատարման ենթակա որոշակի գործողության կամ անգործության վերաբերյալ, և վերջիններիս պարզապես հարկավոր է միջնորդ անձ, որն ի կատար կածի համաձայնության ձեռքբերման արդյունքում որոշված կաշառքի առարկայի փոխանցմանն ուղղված նպատակը: Նշված պարագայում անձի գործողությունները որպես կաշառքի միջնորդություն որակելու համար պարտադիր պայման է կաշառքի առարկան պաշտոնատար

անձին կամ նրա մատնանշած անձին **փոխանցելու նախաձեռնություն դրսևորելը,** ինչը նշանակում է, որ կաշառքի միջնորդն ինքն է սեփական նախաձեռնությամբ պատրաստակամություն հայտնում կաշառքի առարկան փոխանցելու, այլ ոչ թե կաշառքի առարկան փոխանցում է որևէ անձի խնդրանքով, հորդորով կամ որևէ այլ եղանակով:

2. կաշառք տվողի և ստացողի միջև համաձայնության առկայության դեպքում կաշառքի առարկան փոխանցելու խոստում տալը.

Նշված դեպքում, ի տարբերություն նախորդ կետում քննարկվող՝ կաշառքի միջնորդության օբյեկտիվ կողմի դրսևորման, կաշառքի միջնորդը տալիս է կաշառքի առարկան փոխանցելու խոստում՝ անկախ այն հետագայում փոխանցելու հնարավորությունից: Ավելին՝ սա նշանակում է, որ վերջինս կոռուպցիոն սխեմային ներգրավվում է որևէ այլ անձի նախաձեռնությամբ, որպիսի պայմաններում համապատասխանաբար տալիս է կաշառքի առարկան կաշառք տվողից կաշառք ստացողին փոխանցելու խոստում: Նշված դեպքում ակնհայտ է այն հանգամանքը, որ կաշառքի առարկան փոխանցելու նախաձեռնողականությունը դուրս է կաշառքի միջնորդի կողմից կաշառքի առարկան փոխանցելու խոստում տալուն ուղղված օբյեկտիվ կողմի գործողությունների շրջանակներից, այլ այն ներառում են միմիայն խոստում տալը, ինչը հաջորդում է մեկ այլ անձի կողմից նախաձեռնողականության դրսևորմանը:

3. կաշառք տվողի և ստացողի միջև համաձայնության առկայության դեպքում կաշառքի առարկան փոխանցելը.

Նշված պարագայում կաշառքի միջնորդի դերը կայանում է բացառապես կաշառքի առարկան փոխանցելու մեջ, որևէ այլ գործողություն վերջինիս կողմից չի իրականացվում:

Տվյալ իրավիճակում կարող են ծագել արարքի որակման բազմաթիվ խնդրահարույց իրավիճակներ: Մասնավորապես, բացառապես կաշառքի առարկան փոխանցելու միջոցով կաշառքի միջնորդությունը դժվար տարանջատելի է կաշառք տալուն կամ ստանալուն օժանդակելու հանցակազմից, քանի որ վերջին դեպքում ևս անձի օժանդակությունը կարող է դրսևորվել՝ կաշառքի առարկան կաշառք տվողից վերցնելով և կաշառք ստացողին փոխանցելով, որպիսի իրավիճակում անհասկանալի է, թե արդյո՞ք անձի արարքը ենթակա է որակման ՀՀ քրեական օրենսգրքի 46-435-րդ կամ 46-436-րդ հոդվածով, թե ՀՀ քրեական օրենսգրքի 437-րդ հոդվածով:

Նշված հիմնախնդրին առավել մանրամասնորեն կանդրադառնանք ստորև՝ ՀՀ քրեական օրենսգրքի 46-435-րդ և 46-436-րդ հոդվածների վերլուծության շրջանակներում:

4. կաշառք տվողի և ստացողի միջև առկա համաձայնության իրականացմանն այլ կերպ նպաստելը.

Օրենսդրի կողմից ամրագրված՝ կաշառքի միջնորդության կատարման վերջին եղանակը ևս զերծ չէ խնդրահարույց կողմերից՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ այն նախատեսում է չափազանց լայն ձևակերպում, այն է՝

«**առկա համաձայնության իրականացմանն այլ կերպ նպաստելը**»**:** Նախևառաջ, հարկ է նշել, որ վերոհիշյալ ձևակերպումից ակնհայտ է, որ հանցակազմի օբյեկտիվ կողմի այս դրսևորման պարտադիր պայման է հանդիսանում կաշառք տվողի և ստացողի միջև **համաձայնության առկայությունը**, որպիսի պայմաններում միջնորդի առաքելությունը իր գործողություններով այդ համաձայնության իրականացմանն այլ կերպ նպաստելն է, որը իր մեջ կարող է ներառել կաշառքի միջնորդի ցանկացած գործողություն, որը ուղղված չէ կաշառքի առարկայի փոխանցմանը: Որպես օրինակ կարելի է առանձնացնել կաշառքի միջնորդի կողմից գաղտնի հանդիպման կազմակերպումը կաշառք ստացողի և տվող միջև՝ կաշառքի առարկան վերջինիս կողմից կաշառք ստացողին փոխանցելու նպատակով:

Այնուամենայնիվ, տվյալ իրավիճակում նույնպես բախվում ենք այն խնդրին, թե ի վերջո անձը, կաշառք տվողի կամ ստացողի օգտին որոշակի գործողություններ կատարելով, հանդես է գալիս որպես կաշառքի միջնորդ, թե օժանդակող:

Հատկանշական է այն հանգամանքը, որ կաշառքի միջնորդությունը կաշառքի օժանդակությունից առանձնանում է մեկ առանցքային հատկանիշով՝ կաշառքի միջնորդը հանդես չի գալիս կամ **միայն** կաշառքի տվողի, կամ **միայն** կաշառքի ստացողի կողմից, այլ հանդիսանում է նրանց միջև որպես «կապող օղակ», որի միջոցով վերջիններս ի կատար են ածում կամ փորձում են ի կատար ածել իրենց հանցավոր մտադրությունները: Այսինքն, կաշառքի միջնորդը որոշակի գործողություններ է կատարում կաշառք տվողի և կաշառք ստացողի օգտին՝ նրանց միջև կաշառքի վերաբերյալ համաձայնության գալուն կամ առկա համաձայնության իրագործմանը ցանկացած եղանակով նպաստելու միջոցով:

Այլ կերպ, կաշառքի միջնորդությունը հանդիսանում է օժանդակության յուրահատուկ դրսևորում, քանի որ կաշառքի միջնորդությունը օժանդակություն է և՛ կաշառք տվողին, և՛ կաշառք ստացողին միաժամանակ:

Բացի այդ, կաշառքի միջնորդը, որպես կանոն, շահագրգռված չէ կաշառք ստացողի այն գործողություններով (անգործությամբ), որոնք վերջինս պետք է կատարի կաշառքի դիմաց: Կաշառքի միջնորդը ուղղակիորեն նպաստում է կաշառք տվողի և ստացողի միջև կապերի հաստատմանը, համաձայնության կայացմանը, նա ներկայացնում է այլ անձի/անձանց շահերը, հանդես է գալիս այլ անձի կամ անձանց անունից և/կամ նրանց խնդրանքով:

Ընդ որում, արարքի որակման համար որևէ նշանակություն չունի այն հանգամանքը՝ կաշառքի միջնորդը իր միջնորդական գործառույթների կատարման համար վարձատրություն ստանում է, թե ոչ:

Ավելին, նման իրավիճակներում չափազանց կարևոր է կոռուպցիոն սխեմայի բոլոր դերակատարների, այդ թվում՝ կաշառքի միջնորդի սուբյեկտիվ ընկալումը:

Մասնավորապես, կաշառքի միջնորդության պարագայում միջնորդը իր սուբյեկտիվ ընկալմամբ չի ներկայացնում միայն որևէ մեկ կողմի, նա առավել հաճախ իր սեփական նախաձեռնությամբ ներգրավվում է կոռուպցիոն սխեմաների իրագործմանը և հանդես գալիս որպես երկու կողմերի միջև որևէ

նպատակով միջնորդություն կատարող անձ: Այսինքն, կաշառք տվողին և կաշառք ստացողին վերջինիս անձը հայտնի է: Միջնորդն իր հերթին իր գործողությունների կատարման արդյունքում ճանաչում է ինչպես կաշառք տվողին, այնպես էլ ստացողին, ինչը հնարավոր չէ միանշանակ պնդել կաշառքի օժանդակության պարագայում: Մասնավորապես, եթե կաշառքի միջնորդին իր հանցանքը կատարելիս և միջանկյալ օղակ հանդիսանալիս չի կարող հայտնի չլինել կաշառք տվողի կամ ստացողի անձը, ապա կաշառք տալուն կամ ստանալուն օժանդակող անձին կարող է հայտնի չլինել, թե ով է կանգնած կոռուպցիոն սխեմայի մյուս կողմում:

Օրինակ՝ կաշառք ստացողին օժանդակող անձը նախապես խոստացել է իրացնել հանցանքի արդյունքում ձեռք բերված առարկան, որպիսի արարքի կատարման նպատակով և դրա արդյունքում կաշառք տվողի անձը վերջինիս համար մնացել է անհայտ: Ակնհայտ է, որ նման իրավիճակում կաշառքի միջնորդության մասին խոսք գնալ չի կարող:

Վերջապես, կարծում ենք, որ հնարավոր են իրավիճակներ, երբ կոռուպցիոն սխեմայում ներգրավված լինեն և՛ կաշառքի միջնորդը, և՛ կաշառք տալուն կամ ստանալուն օժանդակողը:

Օրինակ՝ Ա-ն ցանկանում է Բ-ին կաշառք փոխանցել վարչական իրավախախտում կատարելու արդյունքում վարչական պատասխանատվությունից ազատվելու համար, որպիսի նպատակի իրագործման մղումով փորձում է կապեր հաստատել Բ-ի մտերիմ անձանցից մեկի՝ Գ-ի հետ, ով Ա-ին օգնելու պատրաստակամություն է հայտնում, նպաստում Ա-ի և Բ-ի միջև կաշառքի շուրջ համաձայնության կայացմանը: Ա-ն կաշառքը փոխանցելու նպատակով գումար չունենալու մասին հայտնում է իր ընկերոջը՝ Դ-ին՝ ներկայացնելով իրավիճակը: Դ-ն, իր հերթին, առաջարկում է գումար տրամադրել Ա-ին, որպեսզի վերջինս իրագործի իր հանցավոր նպատակը և կաշառքը փոխանցի Բ-ին:

Վերը նշված իրավիճակում Գ-ի արարքը ենթակա է որակման որպես կաշառքի միջնորդություն, իսկ Դ-ի արարքը՝ որպես կաշառք տալուն օժանդակություն՝ միջոցներ տրամադրելու եղանակով:

2. Կաշառք տալուն օժանդակելու հանցակազմի դրսևորման առանձնահատկությունները.

Հոդվածի առարկան հանդիսացող հիմնահարցի՝ կաշառքի միջնորդության և կաշառք տալուն օժանդակելու հանցատեսակների տարանջատման տեսանկյունից հարկ ենք համարում վերլուծության ենթարկել ՀՀ քրեական օրենսգրքի 46-րդ հոդվածով ամրագրված՝ օժանդակողի հասկացությունը, կաշառք տալու օժանդակության դրսևորման առանձնահատկությունները:

Այսպես, ՀՀ քրեական օրենսգրքի 46-րդ հոդվածը սահմանում է օժանդակողի հասկացությունը, այն է՝

1. այն անձը, որը հանցագործությանը նպաստել է խորհուրդներով, ցուցումներով, տեղեկություններ կամ միջոցներ, գործիքներ տրամադրելով կամ խոչընդոտները վերացնելով,

2. այն անձը, որը նախապես խոստացել է պարտակել հանցագործին, հանցագործության միջոցները կամ գործիքները, հանցագործության հետքերը կամ հանցավոր ճանապարհով ձեռք բերված առարկաները,

3. այն անձը, որը նախապես խոստացել է ձեռք բերել կամ իրացնել այդպիսի առարկաները,

4. այն անձը, որը մեկ ուրիշին դրդել է օժանդակության,

5. այն անձը, որը նախապես համաձայնություն է տվել մասնակցելու հանցագործությանը որպես համակատարող, սակայն մյուս համակատարողի կողմից հանցանքը կատարելու ընթացքում, անմիջականորեն չմասնակցելով հանցանքի կատարմանը, իր ներկայությամբ ամրապնդել է կատարողի՝ հանցանք կատարելու վճռականությունը,

6. այն անձը, որը օժանդակել է հանցագործությանն այնպիսի անձի միջոցով, որն օրենքի ուժով ենթակա չէ քրեական պատասխանատվության կամ գործել է անզգուշությամբ,

7. այն անձը, որը հատուկ սուբյեկտի դրդմամբ կատարել է հատուկ սուբյեկտով հանցագործության օբյեկտիվ կողմը, որի սուբյեկտ ինքը չի համարվում, կամ հատուկ սուբյեկտի հետ համատեղ մասնակցել է հատուկ սուբյեկտով հանցագործության օբյեկտիվ կողմի կատարմանը, եթե բացակայել են սույն օրենսգրքի 48-րդ հոդվածի 4-րդ, 5-րդ կամ 6-րդ մասով նախատեսված պայմանները, որոնց ուժով անձը հատուկ սուբյեկտով հանցագործության օժանդակող չի համարվում:

Ինչպես կարելի է նկատել, օրենսդիրը սպառիչ թվարկել է այն եղանակները և միջոցները, որոնցով օժանդակողը մասնակցում է հանցագործությանը: Օրենքում չնշված այլ եղանակներով կամ միջոցներով օժանդակությունը բացառվում է: Օժանդակությունը սուբյեկտիվ կողմից դրսևորվում է դիտավորությամբ. հանցավորը գիտակցում է, որ ինքը մասնակցում է կատարողի կողմից իրականացվող հանցագործությանը, և դա նրա նպատակն է:

Քրեական իրավունքի որոշ տեսաբաններ[6] օժանդակությունը բաժանում են երկու տեսակի՝

1) ինտելեկտուալ օժանդակություն,

2) ֆիզիկական օժանդակություն:

Ինտելեկտուալ օժանդակությունը դրսևորվում է խորհուրդներ, ցուցումներ կամ տեղեկություններ տալով: Խորհուրդներով օժանդակողը կատարողի մոտ առաջացնում է վճռականություն՝ հանցանքն ավելի հաջող կատարելու համար: Այս առումով օժանդակողը խորհուրդ է տալիս ինչպես նախապատրաստվել հանցագործությանը, ինչ միջոց կամ գործիք ընտրել, հանցանքն օրվա որ ժամին կատարել և այլն: Խորհուրդը կարող է վերաբերել ինչպես ամբողջ հանցագործությանը, այնպես էլ նրա առանձին հատկանիշներին (կատարման եղանակին, ժամանակին, հետքերը թաքցնելուն, գործիքին և այլն):

[6] Տես, Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Ընդհանուր մաս,(վեցերորդ հրատարակչություն՝ փոփոխություններով և լրացումներով), Երևանի պետական համալսարան, Երևան, ԵՊՀ հրատ., 2012թ.

Ցուցումներ տալը, ըստ էության, նման է խորհուրդներ տալուն, սակայն եթե խորհուրդ տալու նախաձեռնողը, որպես կանոն, կատարողն է, ապա ցուցումներ տալու նախաձեռնողը կարող է լինել օժանդակողը:

Ցուցում տալը, որպես կանոն, վերաբերում է հանցագործության կոնկրետ հատկանիշին և, կարծես թե, պարտադիր է կատարողի համար, իսկ խորհուրդը կարող է ընդունվել, կամ ոչ:

Խորհուրդը, ցուցումը կամ տեղեկատվությունը կարող են տրվել ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր կամ կապի միջոցներով:

Ինչպես նշվեց, ինտելեկտուալ օժանդակություն է համարվում նաև նախապես խոստացված պարտակումը, որը կատարողի մոտ առաջացնում է հաստատակամություն հանցանքը կատարելու համար՝ անկախ նրանից, այդ խոստումը հետագայում կատարվու՞մ է, թե՞ ոչ: Պետք է իմանալ, որ օժանդակություն է ոչ թե պարտակումը, այլ դրա խոստումը: Խոստումը կարող է դրսևորվել ոչ միայն խոսքով, այլև որոշակի վարքագծով (օրինակ, անձը պարբերաբար նույն անձից ձեռք է բերում (գնում է) գույք, որի հափշտակված լինելն ինքը գիտակցում է):

Ընդ որում, եթե օժանդակողը մինչև հանցագործության ավարտը համագործակցում է կատարողի հետ հանցագործության օբյեկտիվ կողմն իրականացնելու համար, նրա արարքը պետք է դիտել որպես համակատարում: Այդ դեպքում ՀՀ քրեական օրենսգրքի 46-րդ հոդվածի վրա հղում չի կատարվում: Ինտելեկտուալ օժանդակություն է նաև, եթե անձը նախապես համաձայնություն է տվել մասնակցելու հանցագործությանը որպես համակատարող, սակայն մյուս համակատարողի կողմից հանցանքը կատարելու ընթացքում, անմիջականորեն չմասնակցելով հանցանքի կատարմանը, իր ներկայությամբ ամրապնդել է կատարողի՝ հանցանք կատարելու վճռականությունը:

Հատկանշական է այն հանգամանքը, որ ինտելեկտուալ օժանդակության պարագայում կաշառք տվողին կամ ստացողին խորհուրդներ, ցուցումներ տալով, տեղեկատվություն տրամադրելով կաշառք տալու կամ ստանալու հանցագործությանը նպաստելը անհրաժեշտ է տարանջատել կաշառքի միջնորդի կողմից կաշառքի շուրջ կաշառք տվողի և ստացողի միջև համաձայնության գալուն նպաստելու հանցագործությունից: Որպես տարանջատման կարևոր հատկանիշ կարելի է վկայակոչել այն, որ օժանդակողը խորհուրդներ կամ ցուցումներ կամ տեղեկատվություն է տրամադրում կամ կաշառք ստացողին կամ տվողին, իսկ կաշառքի միջնորդը նշված գործողությունները կարող է կատարել, օրինակ, կաշառքի շուրջ բանակցությունների ընթացքում, երբ փորձում է երկու կողմերի միջև համաձայնության մթնոլորտ ձևավորել:

Ինչ վերաբերում է ֆիզիկական օժանդակությանը, ապա այն արտահայտվում է նրանում, որ օժանդակողը կատարողին տրամադրում է միջոցներ կամ գործիքներ կամ վերացնում է խոչընդոտները:

Փաստորեն նշված արարքները հեշտացնում են հանցագործության օբյեկտիվ կողմի իրականացումը. կատարողը տրամադրված միջոցով կամ գործիքով հնարավորություն է ստանում հասնել իր հանցավոր նպատակին: Խոչընդոտն այն ար-

գելքն է, որը կարող է խանգարել հանցագործությանը: Խոչընդոտը վերացնել նշանակում է վերացնել այն արգելքը, որը կարող է խանգարել կատարողին իր հանցավոր նպատակները իրականացնելիս: Խոչընդոտները վերացնելը կարող է դրսևորվել բազմազան ձևերով:

Օրինակ՝ եթե որոշակի իրավիճակում կաշառքի փոխանցման համար նախատեսվող տարածքում առկա են տեսանկարահանում իրականացնող սարքեր, և կաշառք ստացողի համար նշված հանգամանքը հանդիսանում է հանցանքի կատարմանը խոչընդոտ, ապա կաշառք տվողին օժանդակողը, նախապես ապամոնտաժելով տեսանկարահանող սարքերը այն վայրում, որտեղ նախատեսվում է կաշառք ստացողին կաշառքի առարկայի փոխանցումը, ապա այդ անձի արարքը ենթակա է որակման որպես խոչընդոտներ վերացնելու եղանակով կաշառք տվողին օժանդակություն:

Անձի արարքը կարող է որակվել որպես կաշառք ստանալու օժանդակություն այն դեպքում, երբ կաշառքի առարկան ստացողին պետք է տրվի բանկային փոխանցման եղանակով, մինչդեռ կաշառք ստացողը չունի բանկային հաշիվ, կամ չի ցանկանում, որպեսզի այդ փոխանցումն արտացոլվի իր ֆինանսական գործառնություններում, որպիսի պայմաններում կաշառք ստացողի ընկերը նրան է տրամադրում իր բանկային հաշվեհամարը, իսկ գումարը փոխանցելուց հետո այն կանխիկացնում և տալիս է կաշառք ստացողին՝ այդ կերպ օժանդակելով վերջինիս: Հարկ է փաստել նաև, որ նկարագրված վերջին դեպքում կաշառք ստացողի արարքում կարող է քննարկվել նաև հանցավոր ճանապարհով ստացված գույքն օրինականացնելու հանցակազմի առկայության հարցը:

Ընդ որում, ֆիզիկական օժանդակություն կարող են համարվել նաև այդ դեպքերը, երբ անձը նախապես խոստացել է պարտակել հանցագործին, հանցագործության միջոցները կամ գործիքները, հանցագործության հետքերը կամ հանցավոր ճանապարհով ձեռք բերված առարկաները, կամ նախապես խոստացել է ձեռք բերել կամ իրացնել այդպիսի առարկաները:

ՀՀ քրեական նոր օրենսգիրքը նախատեսում է օժանդակության ևս չորս դրսևորում: Դրանք են.

1. անձը մեկ ուրիշին դրդել է օժանդակության.

Որպես օրինակ կարելի է նշել այն դեպքը, երբ Ա-ն նախապես տրված խոստումը իրագործելու նպատակով, համոզելու եղանակով դրդում է Բ-ին վերացնել կաշառքի փոխանցման մասին վկայող ձայնագրությունները (պարտակել հանցանքը և այն կատարած անձին):

2. նախապես համաձայնություն է տվել մասնակցելու հանցագործությանը որպես համակատարող, սակայն մյուս համակատարողի կողմից հանցանքը կատարելու ընթացքում, անմիջականորեն չմասնակցելով հանցանքի կատարմանը, իր ներկայությամբ ամրապնդել է կատարողի՝ հանցանք կատարելու վճռականությունը.

3. օժանդակել է հանցագործությանն այնպիսի անձի միջոցով, որն օրենքի ուժով ենթակա չէ քրեական պատասխանատվության կամ գործել է անզգուշությամբ (միջնորդավորված կատարում).

4. հատուկ սուբյեկտի դրդմամբ կատարել է հատուկ սուբյեկտով հանցագործության օբյեկտիվ կողմը, որի սուբյեկտ ինքը չի համարվում, կամ հատուկ սուբյեկտի հետ համատեղ մասնակցել է հատուկ սուբյեկտով հանցագործության օբյեկտիվ կողմի կատարմանը, եթե բացակայել են սույն օրենսգրքի 48-րդ հոդվածի 4-րդ, 5-րդ կամ 6-րդ մասով նախատեսված պայմանները, որոնց ուժով անձը հատուկ սուբյեկտով հանցագործության օժանդակող չի համարվում.

Նշված դեպքում առանցքային նշանակություն ունի այն հանգամանքը, որ կաշառք ստանալու հանցակազմը պահանջում է հատուկ սուբյեկտի առկայություն, այսինքն, հատուկ սուբյեկտի որակական հատկանիշները չունեցող անձի կողմից կաշառք ստանալը կարող է որակվել միայն որպես կաշառք ստանալու օժանդակություն, եթե հատուկ սուբյեկտ չհանդիսացող անձը այն կատարել է հատուկ սուբյեկտի հետ համատեղ կամ վերջինիս դրդմամբ:

Ինչպես կարելի է նկատել, կաշառք տալու կամ ստանալու օժանդակության պարագայում օժանդակողը հանդես է գալիս կա՛մ կաշառք ստացողի, կա՛մ կաշառք տվողի կողմից, նրա օգտին կատարում օժանդակողին վերագրվող գործողություններ: Ընդ որում, հատկանշական է, որ օժանդակության նախաձեռնությունը հիմնականում չի բխում օժանդակողից, վերջինս, ի տարբերություն կաշառքի միջնորդի, որպես կանոն, չի դրսևորում որևէ նախաձեռնողականություն:

Այս առումով խնդրահարույց է այն իրավիճակը, երբ կաշառքի միջնորդը չի դրսևորում նախաձեռնողականություն, այլ պարզապես կաշառքի առարկան փոխանցում է կաշառք ստացողին: Հարց է ծագում, թե ինչ եղանակով է հնարավոր նշված արարքը տարանջատել կաշառք տվողին օժանդակությունից, երբ օժանդակողը խոչընդոտներ վերացնելու եղանակով կաշառքի առարկան փոխանցում է կաշառք ստացողին, որպեսզի հանցանքը չբացահայտվի և հաջողությամբ, առանց խոչընդոտների ավարտին հասցվի:

Վերը քննարկվածի համատեքստում հետաքրքրական է նաև կաշառքի միջնորդության հանցատեսակի վերաբերյալ Ռուսաստանի Դաշնության իրավական աղբյուրներում առկա տեսակետները:

Մասնավորապես, Ռուսաստանի Դաշնության Գերագույն դատարանի պլենումի՝ 2019 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 59 որոշման մեջ արտացոլված է հետևյալ տեսակետը. *«(…) Ռուսաստանի Դաշնության Գերագույն դատարանի պլենումը արձանագրում է, որ կաշառակերության և այլ կոռուպցիոն հանցագործությունների դեպքում միջնորդությունը կաշառքի ուղղակի փոխանցումն է կամ կոռուպցիոն հանցագործությունների իրագործմանն ուղղված այլ օգնությունը (օժանդակությունը)՝ տարբեր միջնորդական գործառույթներ կատարելու եղանակով, օրինակ՝ բանակցություններ կամ հանդիպումներ կազմակերպելը, անհրաժեշտ տեղեկատվության սպացումը և փոխանցումը*

կաշառք տվողին և ստացողին, հանցավոր գործարքի բոլոր մասնակիցների գործողությունների անվտանգության և գաղտնիության ապահովումը, կաշառքի տեսակի և չափի համաձայնեցման հարցում աջակցությունը: Նման պարագայում և՛ դրդչությունը, և՛ օժանդակությունը ընդգրկվում են կաշառքի միջնորդության հանցագործության օբյեկտիվ կողմի գործողություններում (…):»[7]

Այսինքն, ստացվում է, որ Ռուսաստանի Դաշնության Գերագույն դատարանի պլենումի որոշման շրջանակներում արձանագրվել է այն տեսակետը, որ կաշառք տալուն կամ ստանալուն օժանդակելու հանցակազմերը ամեն պարագայում ներառված են կաշառքի միջնորդության հանցանքի դիսպոզիցիայում և որպես առանձին հանցանք չպետք է որակվեն, ինչի հետ միանշանակորեն համաձայնել հնարավոր չէ, և հակառակի մասին հիմնավորումները արդեն իսկ ներկայացվել են սույն ուսումնասիրության շրջանակներում:

Ամփոփելով պետք է արձանագրել, որ նշված արարքների տարանջատման համար, ի թիվս վերոգրյալի, առանցքային է հանդիսանում հանցավորի ներգրավվածության աստիճանի, հանցանքի կատարման շարժառիթների, հանցավորի դերակատարության բացահայտումը կոնկրետ քրեական վարույթի շրջանակներում: Սույն ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ կաշառքի միջնորդը հանցանքի կատարման մեջ ունի առավել խորքային դերակատարում, հանցանքն ավարտին հասցնելու հարցում առավել մեծ շահագրգռվածություն, կոռուպցիոն սխեմաներում առավել մեծ ներգրավվածություն: Ուստի, օրենսդրի կողմից կաշառքի միջնորդության հանցագործության նկատմամբ որդեգրված պատժողական քաղաքականությունը և ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված չափազանց մեղմ պատժատեսակները և պատժաչափերը անհասկանալի են և հակասում են նշված արարքի հանրային վտանգավորության և լատենտության մասին վկայող ցուցանիշներին:

Մասնավորապես, ներկայիս օրենսդրական կարգավորումների պայմաններում բախվում ենք մի իրավիճակի, երբ կոռուպցիոն սխեմայում ընդգրկված և դրանում ակտիվ դերակատարում ունեցող սուբյեկտը՝ կաշառքի միջնորդը, որը իր նախաձեռնությամբ նպաստում է կաշառք տվողի և ստացողի միջև առանձնապես խոշոր չափերի կաշառքի փոխանցման շուրջ առկա համաձայնության իրականացմանը, ենթարկվում է քրեական պատասխանատվության միջին ծանրության հանցանքի կատարման համար, իսկ առանձնապես խոշոր չափերի կաշառք տալուն կամ ստանալուն օժանդակող անձը՝ ծանր կամ առանձնապես ծանր հանցանքի կատարման համար:

Կարծում ենք, որ օրենսդրի կողմից վերը նշված արարքների համար նախատեսված պատժատեսակները խիստ անհամապատասխան են դրանց հանրային վտանգավորությանը և բնույթին, որպիսի պայմաններում առավել նպատակահարմար կլինի խստացնել կաշառքի միջնորդության համար ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված պատժաչափերը:

[7] Տե՛ս, https://cyberleninka.ru/article/n/posrednichestvo-vo-vzyatochnichestve-ponyatie-problemy-i-profilaktika/viewer էլեկտրոնային կայքի հղումը:

Եզրակացություն

Վերը քննարկված իրավանորմերի վերլուծության արդյունքում ամփոփելով վերոգրյալը՝ կարելի է կատարել հետևյալ եզրահանգումները.

✓ Որպես կաշառք տալուն կամ ստանալուն օժանդակելու և կաշառքի միջնորդության հանցակազմերի տարանջատման ուղենիշ կարելի է առանձնացնել նշված հանցատեսակների տարանջատման հետևյալ առանձնահատկությունները.

- կաշառքի միջնորդը հանցանքի կատարման մեջ ունի առավել խորքային դերակատարում, հանցանքի ավարտին հասցնելու հարցում առավել մեծ շահագրգռվածություն, կոռուպցիոն սխեմաներում առավել մեծ ներգրավվածություն,
- կաշառք տալու կամ ստանալու օժանդակության պարագայում օժանդակողը հանդես է գալիս կա՛մ կաշառք ստացողի, կա՛մ կաշառք տվողի կողմից, նրա օգտին կատարում օժանդակողին վերագրվող գործողություններ, մինչդեռ, կաշառքի միջնորդը հանդես չի գալիս կա՛մ **միայն** կաշառքի տվողի, կա՛մ **միայն** կաշառքի ստացողի կողմից, այլ հանդիսանում է նրանց միջև որպես «կապող օղակ», որի միջոցով վերջիններս ի կատար են ածում կամ փորձում են ի կատար ածել իրենց հանցավոր մտադրությունները, այսինքն, կաշառքի միջնորդը որոշակի գործողություններ է կատարում կաշառք տվողի և կաշառքի ստացողի օգտին՝ նրանց միջև կաշառքի վերաբերյալ համաձայնության գալուն կամ առկա համաձայնության իրագործմանը ցանկացած եղանակով նպաստելու միջոցով,
- կարևոր է կոռուպցիոն սխեմայի բոլոր դերակատարների, այդ թվում՝ կաշառքի միջնորդի սուբյեկտիվ ընկալումը: Մասնավորապես, կաշառքի միջնորդության պարագայում միջնորդը իր սուբյեկտիվ ընկալմամբ չի ներկայացնում միայն որևէ մեկ կողմի, նա առավել հաճախ իր սեփական նախաձեռնությամբ ներգրավվում է կոռուպցիոն սխեմաների իրագործմանը և հանդես գալիս որպես երկու կողմերի միջև որևէ նպատակով միջնորդություն կատարող անձ: Այսինքն, կաշառք տվողին և կաշառք ստացողին վերջինիս անձը հայտնի է, միջնորդն իր հերթին իր գործողությունների կատարման արդյունքում ճանաչում է ինչպես կաշառք տվողին, այնպես էլ ստացողին, ինչը հնարավոր չէ միանշանակ պնդել կաշառքի օժանդակության պարագայում: Մասնավորապես, եթե կաշառքի միջնորդին իր հանցանքը կատարելիս և միջանկյալ օղակ հանդիսանալիս չի կարող հայտնի չլինել կաշառք տվողի կամ ստացողի անձը, ապա կաշառք տալուն կամ ստանալուն օժանդակող անձին կարող է հայտնի չլինել, թե ով է կանգնած կոռուպցիոն սխեմայի մյուս կողմում,
- վերջապես, օրենսդիրը սպառիչ կերպով նշել է կաշառքի միջնորդության հանցակազմի օբյեկտիվ կողմի երկընտրելի բոլոր գործողությունները, և կարծում ենք, որ դրանց շրջանակներից դուրս ցանկացած արարք, որը կրում է կաշառք տվողին կամ ստացողին իր հանցանքը կատարելու և ավարտին հասցնելու հարցում աջակցելու նպատակ, ենթակա է որակման որպես օժանդակություն:

✓ Հաշվի առնելով այն հանգամանքը, որ կաշառքի միջնորդը հանցանքի կատարման մեջ ունի առավել խորքային դերակատարում, հանցանքի ավարտին հասցնելու հարցում առավել մեծ շահագրգռվածություն, կոռուպցիոն սխեմաներում առավել մեծ ներգրավվածություն, ուստի, օրենսդրի կողմից կաշառքի միջնորդության հանցագործության նկատմամբ որդեգրված պատժողական քաղաքականությունը և ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված չափազանց մեղմ պատժատեսակները և պատժաչափերը հակասում են նշված արարքի հանրային վտանգավորության և լատենտության մասին վկայող ցուցանիշներին, որպիսի պայմաններում, կարծում ենք, որ կաշառքի միջնորդության հանցագործության համար ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված պատժաչափերը անհրաժեշտ է խստացնել:

Գրականության ցանկ (reference list, список литературы)

1. ՀՀ քրեական օրենգիրք.

RA, Criminal Code.

2. 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված և 2022 թվականի հուլիսի 1-ին ուժը կորցրած ՀՀ քրեական օրենսգիրք.

Criminal Code of the Republic of Armenia, adopted on April 18, 2003 and repealed on July 1, 2022

3. Уголовная ответственность за посредничество во взяточничестве. Шафорост, Виктор Александрович. - М., 2013. - С. 79-98.

Criminal liability for mediation in bribery. Shaforost, Viktor Aleksandrovich. - M., 2013. - P. 79-98.

4. Криминологическая характеристика взяточничества в органах государственной власти, Брякин, Николай Николаевич- М., 2010. - С. 153-167.

Criminological characteristics of bribery in government bodies, Bryakin, Nikolai Nikolaevich - M., 2010. - P. 153-167.

5. Уголовно-правовая борьба со взяточничеством, Яковенко, Елена Владимировна, М., 2004.

Criminal-legal fight against bribery, Yakovenko, Elena Vladimirovna, M., 2004.

6. Борьба со взяточничеством как коррупционным преступлением в современной России: уголовно-правовые и криминологические аспекты, Подгрушный, Михаил Александрович, М., 2014.

The fight against bribery as a corruption crime in modern Russia: criminal-legal and criminological aspects, Podgrushny, Mikhail Aleksandrovich, M., 2014.

7. Посредничество во взяточничестве: уголовно-правовая характеристика и вопросы квалификации, Моисеенко, Михаил Иванович, М., 2014.

Mediation in bribery: criminal-legal characteristics and issues of qualification, Moiseenko, Mikhail Ivanovich, M., 2014

8. Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Հատուկ մաս (վեցերորդ հրատարակություն՝ փոփոխություններով և լրացումներով), Երևանի պետական համալսարան, Երևան: ԵՊՀ հրատ., 2012թ.

Criminal law of the Republic of Armenia. Special part (sixth edition with amendments and additions), Yerevan State University, Yerevan. YSU Publishing House, 2012

9. Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Ընդհանուր մաս,(վեցերորդ հրատարակչություն՝ փոփոխություններով և լրացումներով), Երևանի պետական համալսարան, Երևան, ԵՊՀ հրատ., 2012թ.:

Criminal law of the Republic of Armenia. General part (sixth edition with amendments and additions), Yerevan State University, Yerevan. YSU Publishing House, 2012.

Sona Margaryan
Prosecutor at the Department of Supervision over Legality of Pre-trial Proceedings in the RA Anti-Corruption Committee of the Prosecutor General's Office of the Republic of Armenia, Degree applicant of the Department of Criminal Law, Faculty of Law, Yerevan State University

CERTAIN FUNDAMENTAL ISSUES RELATED TO APPLICABILITY, AS WELL AS DISTINGUISHMENT OF SUCH CRIMES AS MEDIATION IN BRIBERY AND AIDING BRIBERY[8]

Abstract

The given article concerns the analysis of the articles of the previous and current edition of Criminal Codes of the Republic of Armenia, that provide criminal liability for aiding bribery, as well as for mediation of bribery. In particular, the article analyzes the object, subject, objective and subjective sides of the mentioned crimes, and examines the contradictory approaches to the application of the mentioned crimes. The new Criminal Code of the Republic of Armenia defines both new ways of manifesting assistance as a type of complicity, as well as new types of alternative actions that reflect the objective side of bribery mediation, however, currently, because of the short time application of the new legislation, which leads to not so rich practical experience, there are numerous disagreements on the application of the mentioned norms, the differentiation of the crimes of bribery mediation and assistance in giving bribes, which were examined by the author, as a result of which the author made relevant recommendations.

Keywords: giving, promising, offering or providing a bribe; assisting in giving a bribe; mediation of bribery; facilitating in reaching agreement; taking the initiative to transfer the bribe to an official or a person indicated by him; in the event of an agreement between the briber and the recipient; promising to transfer the bribe, transferring it, otherwise facilitating the implementation of the agreement between the briber and the recipient.

[8] The article was presented on 13.05.2025 and was reviewed on 10.06.2025.

Сона Маркарян
Прокурор управления по надзору за законностью досудебного производства в Антикоррупционном комитете Республики Армения Генеральной прокуратуры Республики Армения, Соискатель кафедры уголовного права юридического факультета Ереванского государственного университета

НЕКОТОРЫЕ ФУНДАМЕНТАЛЬНЫЕ ВОПРОСЫ, КАСАЮЩИЕСЯ ПРИМЕНИМОСТИ, А ТАКЖЕ РАЗЛИЧИЮ ТАКИХ ПРЕСТУПЛЕНИЙ, КАК ПОСРЕДНИЧЕСТВО ВО ВЗЯТОЧНИЧЕСТВЕ И ПОСОБНИЧЕСТВО ВО ВЗЯТОЧНИЧЕСТВЕ[9]

Абстракт

В данной статье анализируются статьи предыдущей и действующей редакции Уголовного кодекса Республики Армения, предусматривающие уголовную ответственность за пособничество во взяточничестве, а также за посредничество во взяточничестве. В частности, в статье анализируются объект, субъект, объективные и субъективные стороны указанных преступлений, рассматриваются противоречивые подходы к применению указанных преступлений. Новый Уголовный кодекс Республики Армения определяет как новые способы проявления содействия как вида соучастия, так и новые виды альтернативных действий, отражающие объективную сторону посредничества во взяточничестве, однако в настоящее время из-за непродолжительного срока применения нового законодательства, что приводит к не столь богатому практическому опыту, существуют многочисленные разногласия по применению указанных норм, различию преступлений посредничества во взяточничестве и содействия в даче взятки, которые были рассмотрены автором, в результате чего автором были даны соответствующие рекомендации.

Ключевые слова: дача, обещание, предложение или предоставление взятки; содействие в даче взятки; посредничество во взяточничестве; содействие достижению соглашения; проявление инициативы в передаче взятки должностному лицу или указанному им лицу в случае наличия соглашения между взяткодателем и взяткополучателем; обещание передать взятку, ее передача, иное содействие реализации соглашения между взяткодателем и взяткополучателем.

[9] Статья была представлена 13.05.2025 и прошла рецензирование 10.06.2025.

https://doi.org 10.59821/18294219-2025.1-tia10

Էլեն Ծատուրյան
Արագածոտնի մարզի դատախազության ավագ դատախազ

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ[1]

Համառոտագիր

Իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ինստի-տուտը ՀՀ քրեական օրենսդրությունում ներմուծելու անհրաժեշտությունը պայմանա-վորված է ՀՀ միջազգային պարտավորություններով: Թեև տեսության մեջ դեռևս շարունակվում են վեճերը կապված այս ինստիտուտի ներդրման իրավաչա-փության հետ և դեմ արտահայտվող իրավաբան-գիտնականները պնդում են, որ կազմակերպությանը չի կարող վերագրվել «actus reus» (մեղավոր գործողություն) և «mens rea» (մեղավոր կամք, մեղք), սակայն իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության նախատեսումը ոչ միայն պայմանավորված է մեր պետության կողմից վավերացված միջազգային կոնվենցիաներով, այլ նաև թելադրված է ժամանակի հրամայականով՝ երաշխավորելու համար կայուն տնտեսության առկայությունը և բարեխիղճ մրցակցության ապահովումը, նկատի ունենալով իրավաբանական անձանց քանակը, պետության հսկողությունից վերջինների դուրս մնալու դեպքում վերջինների գործունեության հետ կապված հնարավոր վնասների առաջացման հավանականությունը, նյութական ռեսուրս-ների կենտրոնացումն իրավաբանական անձանց ձեռքում, վերջինների հակահա-սարակական գործունեության իրականացման հավանականությունը, ինչպես նաև տնտեսական, սոցիալական և էկոլոգիական ոլորտներում հանցագործության հետևանքով պատճառված վնասը վերականգնելու անհրաժեշտությունը:

Նկատի ունենալով, որ 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված և 2022 թվա-կանի հուլիսի 1-ից գործող ՀՀ քրեական օրենսգրքում այլևս ներդրված է իրավա-բանական անձանց քրեական պատասխանատվոթյան ինտիտուտը, որը դեռևս չի դարձել համալիր հետազոտության և գործնական կիրառության առարկա, ինչով էլ պայմանավորված թեմայի վերաբերյալ առկա են պարզաբանման ենթակա բազ-մաթիվ հարցեր, ուստի պետք է փաստել, որ ընտրված թեման մնում է արդիական:

Այս հոդվածի հիմնական նպատակն է վերլուծել իրավաբանական անձանց քրեա-կան պատասխանատվության ինստիտուտի նորույթը ՀՀ քրեական օրենսգրքում:

Նշված նպատակին հասնելու նպատակով էլ գիտական աշխատանքում ուսում-նասիրության առարկա են դարձել այնպիսի հարցեր, ինչպիսիք են իրավաբա-նական անձանց քրեական պատասխանատվության առանձնահատկությունները, առավելություններն և թերությունները, իրավաբանական անձանց մեղքի հայեցա-

[1] Հոդվածը ներկայացվել է 01.09.2023թ., գրախոսվել է 27.02.2024թ.:

կարգը քրեական իրավունքում, որոնք ուղղորդող նշանակություն կունենան այլևս ներդրված ինստիտուտի գործնական կիրառության ընթացքում:

Հիմնաբառեր- իրավաբանական անձ, պատասխանատու անձ, ի շահ իրավաբանական անձի, իրավաբանական անձի քրեական պատասխանատվություն, իրավաբանական անձի մեղք, իրավաբանական անձի գործունեություն:

Ներածություն

Իրավաբանական անձի կազմակերպաիրավական ձև ունեցող ժամանակակից ձեռնարկությունները և կազմակերպությունները զգալի նշանակություն են ձեռք բերել սոցիալական կյանքի գրեթե բոլոր ոլորտներում, ուստի կենսական նշանակություն ունի վերջինների կողմից իրականացվող հանցավոր գործունեության դեմ պայքարելու գիտականորեն հիմնավորված և արդյունավետ ինստիտուտների ներդրումն ու կիրառումը՝ խուսափելու համար այնպիսի տևական հետևանքների առաջացումից, ինչպիսիք են մարդկանց առողջության քայքայումը, շրջակա միջավայրի աղտոտումը, տնտեսության վիճակի կտրուկ վատթարացումը, կոռուպցիոն հանցանքները:

Նշվածը վկայում է, որ իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ինստիտուտի ներդրումը ժամանակի հրամայական է՝ երաշխավորելու համար կայուն տնտեսության առկայությունը և բարեխիղճ մրցակցության ապահովումը՝ հաշվի առնելով իրավաբանական անձանց քանակական աճը, պետության հսկողությունից վերջինների դուրս մնալու հնարավորությունը, նյութական ռեսուրսների կենտրոնացումն իրավաբանական անձանց ձեռքում, վերջինների հակահասարակական գործունեության իրականացման հավանականությունը, ինչպես նաև տնտեսական, սոցիալական և էկոլոգիական ոլորտներում հանցագործության հետևանքով պատճառված վնասը վերականգնելու անհրաժեշտությունը:

Ավելի կոնկրետ՝ իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության հարցը մեր օրերում առավելապես կապված է վերջինների կողմից իրականացվող հանցավոր գործունեության չհիմնավորված անպատժելիության հետ, ինչի անթույլատրելիության պահանջները արձանագրված են նաև միջազգային կոնվենցիաներով, որոնցում մասնավորապես նշվում է, որ պայմանավորվող կողմերը պարտավորվում են ձեռնարկել գործուն միջոցներ՝ ապահովելու համար իրավաբանական անձանց նկատմամբ նշանակվելիք արդյունավետ, համաչափ և կանխարգելիչ պատասխանատվությունը[2]:

Նկատի ունենալով, որ 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված և 2022 թվականի հուլիսի 1-ից գործող ՀՀ քրեական օրենսգրքում այլևս ներդրված է իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ինտիտուտը, որը դեռևս չի դարձել համալիր հետազոտության առարկա և դրանով պայմանա-

[2] Տե՛ս Եվրոպայի խորհրդի՝ Կոռուպցիայի մասին քրեական իրավունքի կոնվենցիան, Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ, Կոռուպցիայի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիան:

վորված էլ թեմայի վերաբերյալ առկա են խնդրահարույց հարցեր, ուստի պետք է փաստել, որ ընտրված թեման մնում է արդիական:

Սույն հոդվածի հիմնական նպատակն է վերլուծել իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ինստիտուտի նորույթը ՀՀ քրեական օրենսգրքում: Նշված նպատակին ակնկալվում է հասնել ներքոնշյալ խնդիրների առաջադրմամբ.

- ուսումնասիրել իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության առանձնահատկությունները, առավելություններն և թերությունները,
- բացահայտել իրավաբանական անձանց մեղքի հայեցակարգը քրեական իրավունքում:

1. Հայաստանում իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության վերագրումը

Իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության համակարգի քրեական օրենսդրությունում ներմուծելու անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ միջազգային պարտավորություններով:

Այսպես՝

ՄԱԿ-ի կոռուպցիայի դեմ կոնվենցիայի 26-րդ հոդվածը սահմանում է, որ «1. Յուրաքանչյուր Մասնակից պետություն պետք է ձեռնարկի այնպիսի միջոցներ, որոնք, իր իրավական սկզբունքների համաձայն, կարող են անհրաժեշտ լինել իրավախախտումներին մասնակցելու համար իրավաբանական անձանց պատասխանատվություն սահմանելու համար, որոնք այդպիսին են ճանաչվել սույն Կոնվենցիային համապատասխան: 2. Մասնակից պետության իրավական սկզբունքների պահպանման պայմանով՝ իրավաբանական անձանց պատասխանատվությունը կարող է լինել քրեական, քաղաքացիահրավական կամ վարչական: 3. Նման պատասխանատվությունը չպետք է խախտի իրավախախտումներ կատարած ֆիզիկական անձանց քրեական պատասխանատվությունը:

4. Յուրաքանչյուր Մասնակից պետություն, մասնավորապես, պետք է ապահովի սույն հոդվածին համապատասխան պատասխանատվության ենթարկվող իրավաբանական անձանց նկատմամբ արդյունավետ, համաչափ և զսպող ներգործություն ունեցող քրեական կամ ոչ քրեական պատժամիջոցների, ներառյալ դրամական պատժամիջոցների կիրառումը»:

Մինչև 2021 թվականի մայիսի 5-ին ՀՀ քրեական օրենսգրքի ընդունումը Հայաստանի Հանրապետությունը դասվում էր այն սակավաթիվ երկրների շարքին և որի ներպետական օրենսդրությամբ ամրագրված չէր իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ինստիտուտը, այդպիսով ՀՀ քրեական օրենսդրությունը մնում էր ավանդական դասական դպրոցի դիրքում, համաձայն որի՝ քրեական պատասխանատվության ենթակա է միայն մեղսունակ ֆիզիկական անձը, ով հանցանք կատարելու պահին հասել է քրեական օրենսգրքով

սահմանված տարիքի[3]: Արդեն 2015թ. դեկտեմբերի 6-ին ընդունված ՀՀ Սահմանադրության 74-րդ հոդվածով ամրագրվեց նաև, որ «Հիմնական իրավունքները և ազատությունները տարածվում են նաև իրավաբանական անձանց վրա այնքանով, որքանով այդ իրավունքները և ազատություններն իրենց էությամբ կիրառելի են դրանց նկատմամբ»[4]:

Ի՞նչ ենք հասկանում իրավաբանական անձի գործունեություն ասելով:

Իրավաբանական անձի գործունեությունը, այդ կազմակերպությունը կազմող մարդկանց գործունեությունն է, քանի որ միայն մարդիկ են ունակ իրականացնելու գիտակցված կամային գործունեություն: Սակայն նրանց դերը իրավաբանական անձի գործունեության իրականացման գործում տարբեր է: Մի մասն իր գործողություններով իրավաբանական անձի համար ձեռք է բերում իրավունքներ և ստեղծում պարտականություններ, մյուսներն օժանդակում են ձեռք բերված իրավունքների իրականացմանը և պարտականությունների կատարմանը[5]: Իրավաբանական անձի կոլեկտիվի մասը կազմող այն քաղաքացիները, որոնք ընտրվում կամ նշանակվում են իրավաբանական անձի կամքի ձևավորման, նրա գործունեության ղեկավարման, իրավաբանական անձի համար իրավունքներ ձեռք բերելու և պարտականություններ ստանձնելու համար, կոչվում են իրավաբանական անձի մարմիններ: Այստեղից հետևում է, որ իրավաբանական անձի իրավունակությունը և գործունակությունն իրականացնում է ոչ թե իրավաբանական անձը, որպես այդպիսին, այլ նրա մարմինները[6]: Այդ պատճառով էլ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի հոդված 57-ը սահմանում է, որ իրավաբանական անձը քաղաքացիական իրավունքներ է ձեռք բերում և քաղաքացիական պարտականություններ է ստանձնում իր մարմինների միջոցով[7]: Ուստի և իրավաբանական անձի մարմնի գործողությունները դիտվում են որպես իրավաբանական անձի գործողություններ: Իրավաբանական անձի համար քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ կարող են ձեռք բերել նաև ներկայացուցիչները, որոնք գործում են լիազորագրի հիման վրա[8]:

Ուսումնասիրելով ներպետական պրակտիկան[9]՝ հարկ է փասել, որ այն հանցագործությունների համար, որոնք օրինակ, թեև կատարված են եղել ի շահ իրավաբանական անձի, սակայն քրեական պատասխանատվության է ենթարկվել միայն ֆիզիկական անձը, օրինակ՝ կազմակերպության տնօրենը, գլխավոր հաշվապահը և այլ պատասխանատու անձինք, իսկ անմիջականորեն

[3] Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք, 2003 թ., հասանելի է՝ https://www.arlis.am/:
[4] Տե՛ս https://www.arlis.am/documentview.aspx?docID=100913 :
[5] Տե՛ս Гражданское право. Часть первая. Изд-во "Юристъ", 1997, էջ 79:
[6] Տե՛ս **Տ. Բարսեղյան,** Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք, Ի մաս, Եր., ԵՊՀ, հրատ., 2014թ. էջ 126:
[7] Տե՛ս Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրք:
[8] Տե՛ս Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք, **Տ. Բարսեղյան**, Ի մաս, Եր., ԵՊՀ, հրատ., 2014թ. էջ 127:
[9] http://datalex.am/?app=AppCaseSearch&case_id=14355223812327513,
http://datalex.am/?app=AppCaseSearch&case_id=14355223812328835,
http://datalex.am/?app=AppCaseSearch&case_id=14918173765701975

իրավաբանական անձի համար որևէ իրավական հետևանքներ չեն առաջացել: Մինչդեռ 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքով այլևս ներդրվել է իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ինստիտուտը, որը գալիս է լուծելու մի շարք խնդիրներ:

ՀՀ քրեական օրենսգիրքը թույլատրելի է համարում իրավաբանական անձի և ֆիզիկական անձի միաժամանակյա պատասխանատվությունը, ինչն արդարացված է, քանի որ, եթե քրեական պատասախանատվաթյան ենթարկվի միայն հանցանք կատարած ֆիզիկական անձը, ապա տվյալ իրավաբանական անձի համար այն չի կարող ունենալ նախականխիչ նշանակություն և դաստիարակչական ազդեցություն, արդյունքում հանգեցնելով կազմակերպության անպատժելիության՝ հաշվի առնելով նաև այն, որ միջազգային փորձով ևս հաստատված է, որ ավելի հաճախ հանդիպող դեպքերում նույնիսկ գործադիր տնօրենին քրեական պատասխանատվության ենթարկելու պարագայում կազմակերությունը շարունակում է իր հանցավոր գործունեությունը:

Որպես օրինակ, ուսումնասիրելով Ֆրանսիայի քրեական օրենսգրքի 121.1-121.7-րդ հոդվածները տեսնում ենք, որ իրավաբանական անձինք՝ բացառությամբ պետության, քրեական պատասխանատվություն են կրում օրենքով կամ կանոնադրությամբ նախատեսված դեպքերում՝ իրենց մարմինների կամ ներկայացուցիչների կողմից իրավաբանական անձի օգտին կատարված հանցավոր գործողությունների համար:

Ֆրանսիայում իրավաբանական անձանց քրեական պատասխանատվությունը, չի բացառում այդ գործողությունները կատարող կամ համակատարող ֆիզիկական անձանց քրեական պատասխանատվությունը: Իրավաբանական անձանց քրեական պատասխանատվությունը չի բացառում նույն գործողությունները կատարող կամ համակատարող ֆիզիկական անձանց քրեական պատասխանատվությունը[10]:

Ն. Ե.Կրիլովան նշում է, որ ֆրանսիական օրենսդրությամբ իրավաբանական անձանց պատասխանատվությունը, ըստ էության, լրացուցիչ է (ֆիզիկական անձանց հետ համատեղ, այլ ոչ թե նրանց փոխարեն) և պահանջում է անհրաժեշտ պայմանի առկայություն.

- հանցավոր գործողությունն իրավաբանական անձի ղեկավարի կամ ներկայացուցչի կողմից պետք է կատարված լինի,
- կատարված լինի հօգուտ իրավաբանական անձի և միայն օրենքով կամ կանոնակարգով նախատեսված դեպքերում[11]:

Կազմակերպությունների հանցավոր մտադրության (mens rea) գաղափարը Ֆրանսիական համակարգը մերժում է այն հիմնավորմամբ, որ հանցանքի

[10] Criminal Code of the French Republic, https://www.legislationline.org/documents/section/criminal-codes/country/30/France/show

[11] Տե՛ս **Крылова Н.Е.** Уголовная ответственность юридических лиц во Франции: предпосылки возникновения и основные черты // Вестник МГУ, Серия 11 Право. - 1998. - № 3. – էջ՝ 69-80:

վերագրումն իրավաբանական անձին (personne morale, the moral character) պահանջում է, որ դատական որոշման երկու փուլերը հստակ իրականացվեն[12]:

Մասնավորապես՝ ֆրանսիական օրենսդրությամբ չի պահանջվում ապացուցել ընկերության մեղավորությունը, եթե հաստատվել է անձի հանցավոր արարքը և հանցավոր մտադրությունը: Այս դեպքում անհրաժեշտություն է առաջանում ապացուցել հանցանքը գործելու և կազմակերպության կողմից կատարված գործողության միջև պատճառահետևանքային կապը (բայց ոչ մեղավորությունը)[13]:

Ֆրանսիայի օրենսդիրը սահմանելով իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության համեմատաբար լայն շրջանակ տարբերակում է նաև «ներկայացուցիչ» և «մարմին» հասկացությունները, ընդ որում, առաջինն ավելի լայն է, քան՝ երկրորդը և ներառում է նաև այնպիսի ժամանակավոր անձանց, ինչպիսիք են՝ ադմինիստրատորները, հատուկ գործակալները, լուծարման կառավարիչները[14], ինչպես նաև այն անձինք, ովքեր լիազորություններ են ստացել իրավաբանական անձը կառավարող մարմնի կողմից, ովքեր ևս դիտվում են որպես իրավաբանական անձի ներկայացուցիչներ, իսկ «մարմինները» այն անհատներն են, ովքեր իրականացնում են օրենքով կամ իրավաբանական անձի կանոնադրությամբ իրենց վերապահված վարչական կամ այլ կարևոր գործառույթներ:

Ո՞րն է քրական պատասխանատվության առավելությունը իրավունքի այլ ճյուղերի նկատմամբ:

Այսպես՝

Ի տարբերություն իրավաբանական անձանց պատասխանատվության վարչա-իրավական և քաղաքացիաիրավական մեխանիզմների, քրեակաիրավական մեխանիզմները հնարավորություն են նախատեսում քրեական վարույթի շրջանակներում իրականացնելու անձի մեղավորության ապացուցման առավել արդյունավետ ընթացակարգ, որի առավելություններից են նաև քննչական գործիքների և հարկադրանքի միջոցների ավելի մեծ փաթեթը, վաղեմության ավելի երկար ժամկետները, ինչի արդյունքում ապահովվում է պատշաճ և համակողմանի քննություն: Քրեական վարույթի հիմնական առավելությունից է նաև այն, որ վերջինի շրջանակներում առկա է հնարավորություն իրականացնելու ապացուցողական և վարութային լայն գործողություններ, որոնք կկիրառվեն ինչպես հանցավորի մեղքն ապացուցելու, այնպես էլ իրավաբանական անձի պատասխանատվություն հարցը լուծելու համար: Վարչական պատասխանատվության նկատմամբ քրեական պատասխանատվության առավելություններից է այն, որ հանցանքներն ունեն զգալիորեն ավելի երկար վաղեմության ժամկետներ: Ակնհայտ է, որ սեղմ ժամկետում շատ դժվար է ավարտին հասցնել քննությունը, ինչը նշանակում է, որ գործնականում իրավաբանական անձանց նկատմամբ վարույթը մեծապես

[12]Տե՛ս **Голованова Н.А., Лафитский В.И., Цирина М.А.** Уголовная ответственность юридических лиц в международном и национальном праве (сравнительно-правовое исследование). – М., 2013. – էջ 151-156:
[13] Տե՛ս "Уголовный кодекс Франции", հասանելի է՝ http://law.edu.ru/:
[14]Տե՛ս **Крылова Н.Е**. Основные черты нового уголовного кодекса Франции. - М., 1996. – էջ 53:

պայմանավորված է ֆիզիկական անձանց նկատմամբ իրականացված քննության արդյունքներով[15]:

Իրավաբանական անձը որպես քրեական պատասխանատվության սուբյեկտ:

ՀՀ քրեական օրենսգրքի 19-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական պատասխանատվության ենթակա է մեղսունակ ֆիզիկական անձը, ում տասնվեց տարին լրացած է եղել հանցանքը կատարելու պահին, ինչպես նաև իրավաբանական անձը[16]:

Նույն օրենսգրքի 122-րդ հոդվածի համաձայն՝ տարբերակվում են երկու տեսակի իրավաբանական անձինք, որոնք ենթարկվում են քրեական պատասխանատվության.

- Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրավաբանական անձ.
- Օտարերկրյա պետությունում ստեղված իրավաբանկան անձ:

ՀՀ քրեական օրենսգրքի 122-րդ հոդվածի 2-րդ մասով առանձնացված է նաև այն իրավաբանական անձանց շրջանակը, որոնք ենթակա չեն քրեական պատասխանատվության, մասնավորապես՝ քրեական պատասխանատվության ենթակա չեն պետական, պետական կառավարման համակարգի, տեղական ինքնակառավարման մարմինները, դրանց հիմնարկները, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը:

ՀՀ քրեական օրենսգրքով իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության հիմքը հանցանքի կատարումն է: Նույն օրենսգրքի 123-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրավաբանական անձը ենթակա է քրեական պատասխանատվության, եթե՝

1) հանցանքը կատարվել է իրավաբանական անձի գործունեության կամ դրա կողմից կայացվող որոշումների վրա ազդելու իրավասություն ունեցող անձի կամ այդպիսի անձի թողտվությամբ կամ դրդմամբ իրավաբանական անձին ներկայացնող անձի կողմից՝ իրավաբանական անձի անունից հանդես գալով և ի շահ իրավաբանական անձի գործելով,

2) իրավաբանական անձի կողմից չի ապահովվել դրա գործունեությունը կարգավորող օրենքով կամ այլ իրավական ակտով նախատեսված պարտականությունների կատարումը, որը հանգեցրել է իրավաբանական անձի գործունեության կամ դրա կողմից կայացվող որոշումների վրա ազդելու իրավասություն ունեցող անձի, իրավաբանական անձին ներկայացնող անձի կամ իրավաբանական անձի աշխատողի կողմից հանցանքի կատարմանը,

3) հանցանքը կատարվել է իրավաբանական անձի գործունեության կամ դրա կողմից կայացվող որոշումների վրա ազդելու իրավասություն ունեցող անձի կամ իրավաբանական անձին ներկայացնող անձի կողմից՝ իրավաբանական անձի

[15] https://www.moj.am/storage/uploads/ACN-Liability-of-Legal-Persons_-1-.pdf
[16] Տե՛ս քրեական օրենսգիրք, ընդունված 2021 թվականի մայիսի 5-ին:

անունից հանդես գալով կամ իրավաբանական անձի միջոցով (այն օգտագործելով)[17]:

Մեջբերվածից բխում է, որ իրավաբանական անձի պատասխանատու անձանց այն շրջանակը, որոնց գործողությունների հետևանքով իրավաբանական անձը կարող է ենթարկվել քրեական պատասխանատվության, կազմում է ոչ միայն ղեկավարության հանձնարարությունները կատարող անձը, այլ նաև իրավաբանական անձի անունից գործելու լիազորություն ունեցող ցանկացած անձ: Այլ խոսքով՝ ներգրավված ֆիզիկական անձի զբաղեցրած պաշտոնը իրավական հետևանքների առումով որևէ նշանակություն չունի և իրավաբանական անձի շրջանակներում որպես պատասխանատու անձ հանդես գալու և գործելու լիազորություն ունեցող բոլոր անձինք կարող են պատճառ դառնալ իրավաբանական անձին պատասխանատվության ենթարկելու համար:

Պատասխանատու անձանց ո՞ր գործողություններն են առաջացնում իրավաբանական անձի պատասխանատվությունը:

Անշուշտ, կորպորատիվ պատասխանատվությունը ծագում է, եթե պատասխանատու անձն անձամբ է կատարում հանցագործության հատկանիշներ պարունակող արարքը (օրինակ՝ առաջարկում է կամ խոստանում է կաշառք, տալիս է այն և այլն): Սակայն, ի լրումն դրան, կորպորատիվ պատասխանատվությունն առաջանում է նաև այն դեպքում, երբ պատասխանատու անձն աշխատակցին պարտադիր ցուցումներ է տալիս, ազդեցություն է գործում նրա վրա կամ օժանդակում է նրան հանցագործություն կատարելու մեջ կամ չի ապահովում կազմակերպության գործունեությունը կարգավորող, օրենքով կամ այլ իրավական ակտով նախատեսված պարտականությունների պատշաճ կատարումը, անհրաժեշտ վերահսկողություն չի առաջացնում կազմակերպության աշխատակցի նկատմամբ, որն էլ առաջացնում է հետևանք և հանգեցնում «անուշադրության մատնված» աշխատակցի կողմից հանցանքի կատարման:

Հարկ է նշել, որ ընկերության և պատասխանատու անձի վարքագծի միջև պատճառական կապը ՀՀ քրեական օրեսգրքի 123-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում սահմանվել է նաև «ի շահ» չափանիշով, որը նշանակում է, որ պատասխանատու անձի արարքը կարող է վերագրվել իրավաբանական անձին, միայն եթե այն կատարվել է հօգուտ իրավաբանական անձի, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 123-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ հանցանքը համարվում է ի շահ իրավաբանական անձի կատարված, եթե հանցագործության նպատակների մեջ եղել է իրավաբանական անձի համար գույքային կամ ոչ գույքային բնույթի օգուտներ ստանալը, այդ թվում՝ եկամուտն ավելացնելը, ծախսերը կամ կորուստները նվազեցնելը, իրավական ակտերով սահմանված պատասխանատվությունից ազատվելը, իրավունքներ ձեռք բերելը կամ պարտականություններից ազատվելը:

Այսինքն՝ ի շահ տվյալ իրավաբանական անձի կատարված են համարվում այն հանցաքները, որոնց շարժառիթներից են՝

[17] Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք, ընդունված 2021 թվականի մայիսի 5-ին:

1. գույքային կամ ոչ գույքային բնույթի օգուտ ձեռք բերելը տվյալ իրավաբանական անձի համար, այդ թվում՝ եկամուտ ստանալը կամ ունեցած եկամուտի չափերը ավելացնելը, ծախսերի կամ կորուստների չափերը կրճատելը,

2. կատարված հանցավոր արարքի արդյունքում ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ պատասխանատվությունից ազատվելը

3. իրավունքներ ձեռք բերելը կամ պարտականություններից ազատվելը:

Քննարկվող հոդվածի 5-րդ մասում առկա ձևակերպումից բխում է, որ ֆիզիկական անձին քրեական պատասխանատվության ենթարկելը չի բացառում նույն հանցագործության համար իրավաբանական անձի քրեական պատասխանատվությունը: Ֆիզիկական անձին քրեական պատասխանատվությունից ազատելը հիմք չէ իրավաբանական անձին քրեական պատասխանատվությունից ազատելու համար:

2. Իրավաբանական անձանց մեղքի հայեցակարգը քրեական իրավունքում

Քրեական իրավունքում իրավաբանական անձանց մեղքի էության հարցը որոշելիս անհրաժեշտ է վերլուծել կազմակերպությունների մեղքի գոյություն ունեցող հայեցակարգերը:

Համաձայն մեղավորության վարքագծային (օբյեկտիվ) հայեցակարգի՝ կարևոր է նշել իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ենթարկելու համար հիմք հանդիսացող երկու հանգամանք՝

1. սուբյեկտի մոտ կանոնների և նորմերի պատշաճ իրականացման համար անհրաժեշտ բոլոր միջոցների առկայություն,

2. խախտումների թույլ չտրման և վնասների կանխարգելման ուղղությամբ, նրա կողմից բոլոր անհրաժեշտ միջոցառումների չձեռնարկում[18]:

Այս հայեցակարգը տեսության մեջ ենթարկվում է որոշակի քննադատության:

Է.Յու. Անտոնովայի խոսքով՝ «իրավաբանական անձանց մեղքի հասկացության սահմանման օբյեկտիվ մոտեցումն անհաջող է, քանի որ հաշվի չի առնվում այն փաստը, որ իրավաբանական անձը հանդիսանում է հանրային սուբյեկտ, որի հիմքը կամ ենթաշերտը մարդիկ են, ովքեր միմյանց հետ որոշակի հարաբերությունների մեջ են գտնվում: Համապատասխանաբար, կոլեկտիվ մարմնի մեղքի որոշման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել այն փաստը, որ իրավաբանական անձի անօրինական գործունեությունը որոշվում է առանձին աշխատողների (խմբերի, թիմերի և այլն) ծառայողական պարտականությունների կատարման ընթացքում կատարված ապօրինի գործողություններով (անգործության), ինչպես նաև, կառավարման գործառույթներ իրականացնող անձանց կողմից օրինական գործունեության իրականացումը չապահովելով[19]:

Ս. Գալյանի կարծիքով՝ մեղքի օբյեկտիվ տեսությանը և դրա ներդրման հնարավորությունը որոշ հանցակազմերի պարագայում կարող է շատ արդյունավետ

[18] Տե՛ս **Козлова Н.В.** Правосубъектность юридического лица. - М., 2005. - էջ 69:

[19] Տե՛ս **Антонова Е.Ю.** Уголовная ответственность юридических лиц. – Владивосток, 2005. Էջ 332 :

լինել: Մասնավորապես՝ խոսքը վերաբերում է շրջակա միջավայրի անվտանգության դեմ ուղղված հանցագործություններին, տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործություններից որոշներին: Այսինքն՝ այնպիսի հանցագործություններին, որոնք կարող են իրավաբանական անձի կողմից իր գործունեության հետ կապված օրենսդրական նորմերը չպահպանելու հետևանք լինել[20]:

Համաձայն իրավաբանական անձանց մեղքի վարքային-հոգեբանական հայեցակարգի՝ մի կողմից պետք է հաշվի առնել, որ մեղքը կարող է արտահայտվել դիտավորության կամ անզգուշության ձևով, իսկ մյուս կողմից՝ հաստատել, որ անձն անմեղ է ճանաչվում, եթե նա պարտավորությունների պատշաճ կատարման համար ձեռնարկել է բոլոր միջոցները՝ հոգատարության և զգուշավորության այն չափով, որը պարտավորության բնույթով և շրջանառության պայմաններով պայմանավորված՝ պահանջվում էր նրանից[21]:

Ա.Ա. Կոմոսկոն կարծում է, որ իրավաբանական անձի մեղքը՝ տվյալ կազմակերպության աշխատակազմի (կոլեկտիվի) հոգեբանական վերաբերմունքն է արարքի և դրա հետևանքների նկատմամբ: Այս դեպքում իրավաբանական անձի մեղավորությունը պետք է որոշվի միայն այն դեպքում, եթե կազմակերպությունը պատասխանատվության է ենթարկվում նյութական բնույթի հանցագործության համար, այսինքն՝ նախատեսելով իրական վնասի տեսքով վնասակար հետևանքների առաջացումը [22]:

Ս.Ն. Բրատուսը նշում է, որ իրավաբանական անձը սոցիալական իրականություն է, իրավաբանական անձի կամքը հենց նրա կամքն է, չնայած հոգեբանորեն այն ձևավորվում և արտահայտվում է իր մարմինների, այսինքն՝ կենդանի մարդկանց կողմից[23] և նշում, որ քրեական օրենսդրությամբ իրավաբանական անձի մեղավորությունը պետք է որոշվի այն փաստը հաշվի առնելով, որ նրա իրավունակությունն իրականացնում են մարմինները և կոնկրետ ֆիզիկական անձինք, ովքեր պետք է գործեն իրենց ծառայողական պարտականությունների համաձայն, ուստի միակ բանը, որն ընդունելի չի կարող համարվել իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության հարցում, այն է, որ «սովորական» աշխատողներին չի կարելի դասել նման սուբյեկտների շարքում:

Բացի այդ, եթե իրավաբանական անձի մեղավորությունը դրվում է կախվածության մեջ իր աշխատողների գործողություններից, իսկ այդպիսիք (աշխատողները) կարող են տասնյակից ավելին լինել, ապա իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության սահմանման մեջ իմաստ չի լինի, եթե պատասխանատու անձ դիտվեն բոլոր աշխատակիցները, ովքեր իրենց

---

[20] Տե՛ս **Ս. Գալյան** Մեղքը՝ որպես իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության պայման, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների նստաշրջանի նյութերի ժողովածու, 2016, էջ՝ 363:

[21] Տե՛ս **Новокрещенов Д.Н.** К вопросу о вине юридического лица // Сибирский юридический вестник. - 2009. - № 1(44). – էջ 70-73.

[22] Տե՛ս **Комоско А.А.** . Уголовная ответственность юридических лиц: дисс. ... канд. юрид наук. – М., 2007, էջ. 13:

[23] Տե՛ս **Братусь С.Н**. Юридические лица в советском гражданском праве. - М.,1947. էջ-66 :

պարտականությունների ստանձնման ուժով պատասխանատու են ինչ-որ աշխատանքի կատարման պատշաճության համար, քանի որ այս դեպքում չափազանց դժվար կլինի ապացուցել կազմակերպության մեղավորությունը, իսկ հենց այդ աշխատակիցներն էլ իրենց հերթին որոշակի խախտումների դեպքում կարող են գործել իրենց շահերից ելնելով և ոչ՝ իրավաբանական անձի շահերից:

Ավելի կոնկրետ՝ յուրաքանչյուր դեպքում, իրավաբանական անձի անունից օրենքով սահմանված նորմերի և կանոնների խախտման վերաբերյալ որոշումը կայացնում է պատասխանատու անձը՝ նրա ղեկավարը: Միայն այս անձինք իրավունք ունեն ներկայացնելու իրավաբանական անձին, որոշում կայացնելու նրա անունից, հրահանգներ տալու (կարգադրություններ, հրամաններ), որոնք պարտադիր են կազմակերպության բոլոր աշխատակիցների համար (ովքեր կարող են գործել իրենց անձնական շահերից ելնելով) և վերահսկելու դրանց իրականացումը: Իսկ շարքային աշխատողների պատասխանատվությունը պետք է որոշվի կա՛մ հանցակցության կանոններով, կա՛մ հաշվի առնելով քրեական իրավունքի այլ ինստիտուտների պահանջները:

Այսպիսով, իրավաբանական անձի, որպես քրեական պատասխանատվության սուբյեկտի մեղավորությունը կախված է դրանում ղեկավար գործառույթներ (կազմակերպչական կամ վարչատնտեսական լիազորություններ) իրականացնող ֆիզիկական անձի մեղքից, պայմանով, որ իրավաբանական անձն իրական հնարավորություն ունենա պահպանել օրենսդրությամբ սահմանված իր գործունեությանը վերաբերող նորմերը և կանոնները:

Լուծելով իրավաբանական անձի մեղքի ձևի հարցը՝ նշենք հետևյալը: Քանի որ իրավաբանական անձի մեղավորության հարցը մենք լուծում ենք դրանում կառավարչական գործառույթներ իրականացնող անձանց մեղքով, իսկ այդպիսի անձինք հանցագործությունը կատարում են կամ դիտավորյալ, կամ անզգուշությամբ, ապա իրավաբանական անձի անօրինական գործողությունները կարող են կատարվել ինչպես դիտավորյալ, այնպես էլ անզգուշությամբ:

Իր հերթին, սա նշանակում է հետևյալը.

1. Եթե կազմակերպությունում կառավարչական գործառույթներ իրականացնող անձը գիտակցում է իր գործողությունների (անգործության) հասարակական վտանգավորությունը, կանխատեսում է հասարակայնորեն վտանգավոր հետևանքների առաջացման հնարավորությունը կամ անխուսափելիությունը և ցանկանում է, որ դրանք վրա հասնեն, ապա իրավաբանական անձը պատասխանատու կլինի ուղղակի դիտավորությամբ կատարված հանցագործության համար:

2. Եթե այդպիսի անձը գիտակցում է իր գործողությունների (անգործության) հասարակական վտանգավորությունը, կանխատեսում է հասարակայնորեն վտանգավոր հետևանքների առաջացման հնարավորությունը, չի ցանկանում, սակայն գիտակցաբար թույլ է տալիս դրանք կամ անտարբերություն է դրսևորում դրանց նկատմամբ, ապա իրավաբանական անձը պատասխանատվություն կկրի անուղղակի դիտավորությամբ կատարված հանցագործության համար:

3. Եթե կառավարչական գործառույթներ իրականացնող անձը նախատեսում է իր գործողությունների (անգործության) հասարակայնորեն վտանգավոր հետևանքների առաջացման հնարավորությունը, բայց առանց բավարար հիմքերի, հույս ունի, որ դրանք կկանխվեն, ապա իրավաբանական անձը պատասխանատվություն կկրի հանցավոր ինքնավստահությամբ կատարված հանցագործության համար:

4. Եթե այդպիսի անձը չի նախատեսել իր գործողությունների (անգործության) հասարակայնորեն վտանգավոր հետևանքների առաջացման հնարավորությունը, չնայած անհրաժեշտ ուշադրություն և շրջահայեցողություն դրսևորելու պայմաններում պարտավոր էր և կարող էր կանխատեսել դրանք, ապա իրավաբանական անձը պատասխանատվություն կկրի անփութությամբ կատարված հանցագործության համար:

Եզրակացություն

ՀՀ կողմից վավերացված միջազգային կոնվենցիաները պահանջում են կոռուպցիոն հանցագործությունների դեպքում իրավաբանական անձի նկատմամբ արդյունավետ պատասխանատվության մեխանիզմների կիրառում: Չնայած կոնվենցիաներով քրեական պատասխանատվություն նախատեսելու պահանջ չի պարտադրվում, այնուամենայնիվ քրեական պատասխանատվությունը շահեկան է մի քանի նկատառումներով: Նախ՝ անընդունելի է քրեական իրավունքի առարկա հանդիսացող հասարակական հարաբերությունները պաշտպանել վարչական կամ քաղաքացիաիրավական նորմերով: Երկրորդ՝ քրեական պատասխանատվություն սահմանելը թույլ է տալիս կատարվածին համապատասխան արդյունավետ, համաչափ սանկցիաների նախատեսում ու կիրառում: Երրորդ՝ քրեական պատասխանատվությունը ենթադրում է, որ գործի քննությունն իրականացվելու է քրեադատավարական կարգով, ինչը իրավունքների պաշտպանության ավելի արդյունավետ երաշխիքներ է նախատեսում: Չորրորդ՝ որոշ դեպքերում իրավաբանական անձի բարդ կառուցվածքի պատճառով հնարավոր չի լինում պարզել մեղավոր ֆիզիկական անձին, ուստի նման դեպքերում հանցավոր գործունեությունը կասեցնելու համար արդյունավետ է իրավաբանական անձին քրեական պատասխանատվության ենթարկել:

Իրավաբանական անձի քրեական պատասխանատվության հարցի լուծման համատեքստում առանցքային նշանակություն ունի «շահերի» չափանիշը, ինչը նշանակում է, որ համապատասխան պաշտոնյան, գործելով իրավաբանական անձի անունից [on behalf of], ելնում է իրավաբանական անձի շահերից:

Ինչ վերաբերում է «պատասխանատու անձ» եզրույթին, ապա այն պետք է մեկնաբանել բավականաչափ լայն՝ ընդգրկելու բոլոր այն անձանց, ովքեր փաստացի (de facto) իրավասու են գործելու իրավաբանական անձի անունից՝ չսահմանափակվելով բիզնես իրավունքով կամ կազմակերպության կանոնադրությամբ սահմանված պաշտոնական նշանակումներով:

Այսպիսով՝ արդարացված ենք համարում նույն արարքի համար իրավաբանական և ֆիզիկական անձի նկատմամբ միաժամանակյա պատասխանատվության սահմանումը, քանի որ, եթե քրեական պատասխանատվության ենթարկվի միայն հանցանք կատարած ֆիզիկական անձը, ապա տվյալ իրավաբանական անձանց համար այն չի կարող ունենալ նախականխիչ նշանակություն և դաստիարակչական ազդեցություն: Շատ դեպքերում, թեև գործադիր տնօրենը ենթարկվում է քրեական պատասխանատվության, սակայն կազմակերպությունը շարունակում է իր հանցավոր գործունեությունը: Միևնույն ժամանակ իրավաբանական և ֆիզիկական անձանց նկատմամբ միաժամանակյա պատասխանատվություն սահմանելը ենթադրում է, որ իրավաբանական անձը քրեական պատասխանատվություն պետք է կրի իր աշխատակցի կողմից հանցանք կատարելու համար, եթե վերջինն իր գործողություններով տվյալ իրավաբանական անձին օգուտ բերելու նպատակ է հետապնդում և գործում է ի շահ տվյալ իրավաբանական անձի:

Վերոգրյալի համատեքստում պետք է փաստել, որ այս ինստիտուտը մեր օրենսդրության մեջ նոր երևույթ է, որի արդյունավետությունը կարող է բացահայտվել միայն գործնական կիրառության դեպքում:

Գրականության ցանկ (reference list, список литературы)

1. ՀՀ Սահմանադրություն. RA Constitution.
2. ՀՀ քրեական նախկին օրենսգիրք (ընդունվել է 18.04.2003թ, ուժը կորցրել՝ 01.07.2022թ.).
Former Criminal Code of the Republic of Armenia (adopted on 18.04.2003, expired on 01.07.2022).
3. ՀՀ քաղաքացիական օրենսգիրք (ընդունված՝ 05.05.1998թ.) .
RA Civil Code (adopted: 05.05.1998).
4. ՀՀ քրեական օրենսգիրք (ընդունված՝ 05.05.2021թ.).
RA Criminal Code (adopted: 05.05.2021).
5. «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք.
RA Law "On Normative Legal Acts".
6. «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենք.
RA Law "On Protection of Economic Competition".
7. «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենք.
RA Law on Combating Money Laundering and Terrorist Financing.
8. Եվրոպական համայնքի ֆինանսական շահերի պաշտպանության մասին կոնվենցիայի երկրորդ արձանագրություն, (1997թ. հունիսի 19).
Convention on the protection of the European Communities' financial interests, 1997.
9. Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ կոնվենցիա (15.12.2000թ.).
The United Nations Convention against Transnational Organized Crime, 2000.
10. Կոռուպցիայի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիա (2004 թ.).
The United Nations Convention against Corruption, 2004.
11. Եվրոպայի խորհրդի թիվ R (88) 18 հանձնարարական (1988թ.).
Recommendation No. R (88) 18, 1988.
12.Եվրոպայի խորհրդի քրեական օրենսդրության միջոցով շրջակա միջավայրի պաշտպանության մասին կոնվենցիա (04.11.1998թ.).
Convention on the Protection of the Environment through Criminal Law, 1998.
13. Եվրոպայի խորհրդի կոռուպցիայի մասին քրեական իրավունքի կոնվենցիա (1999).
The Criminal Law Convention on Corruption; 1999.
14.Մարդկանց թրաֆիկինգի դեմ պայքարի գործողությունների մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիա (2005թ. մայիսի 16).
The Council of Europe Convention on Action against Trafficking in Human Beings [CETS No. 197] opened for signature in Warsaw on 16 May 2005.
15.Շրջակա միջավայրի դեմ հանցագործությունների վերաբերյալ Եվրոպական Միության խորհրդի շրջանակային որոշում (2003թ. հունվարի 27).

Council Framework Decision 2003/80/JHA of 7 January 2003 on the protection of the environment through criminal law.

16. Ս.Գալյան՝ «Մեղքը՝ որպես իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության պայման», ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների նստաշրջանի նյութերի ժողովածու, 2016թ..

S. Galyan: "Guilt as a condition of criminal responsibility of legal entities", collection of materials of the session of graduate students and plaintiffs of YSU Faculty of Law, 2016.

17.Տ. Բարսեղյան, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք, I մաս, Երև., ԵՊՀ, հրատ., 2014թ..

T. Barseghyan, Civil Law of the Republic of Armenia, Part I, Rev., YSU, ed., 2014.

18. Козлова Н.В. Правосубъектность юридического лица.

Kozlova N.V. Legal personality of a legal entity.

19. Антонова Е.Ю. Уголовная ответственность юридических лиц, 2005.

Antonova E.Yu. Criminal Liability of Legal Entities, 2005.

20. Новокрещенов Д.Н. К вопросу о вине юридического лица // Сибирский юридический вестник, 2009.

Novokreshchenov D.N. To the question of the fault of a legal entity // Siberian Legal Bulletin, 2009.

21.Комоско А.А. Уголовная ответственность юридических лиц: дисс. канд. юрид наук, 2007.

Komosko A.A. Criminal liability of legal entities: diss. cand. juridical sciences, 2007.

22. Братусь С.Н. Юридические лица в советском гражданском праве, 1947.

Bratus S.N. Legal entities in Soviet civil law, 1947.

23. Крылова Н.Е. Уголовная ответственность юридических лиц во Франции: предпосылки возникновения и основные черты // Вестник МГУ, 1998.

Krylova N.E. Criminal liability of legal entities in France: prerequisites for the emergence and main features // Bulletin of Moscow State University, 1998.

24. Criminal Code of the French Republic (1994, as amended 2005) https://legislationline.org/legislation?q=lang%3Aen%2Csort%3Amost_read_first%2Clegislation_category%3A48%2Cpage%3A2%2Ctype_main%3A43 (access 27.08.2023)

25. http://law.edu.ru/ (access 27.07.2023)

26. https://elibrary.ru/defaultx.asp? (access ՝ 27.08.2023)

27. https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=135487(access 29.08.2023)

28. http://eur-lex.europa.eu(access 29.08.2023)

29. https://www.moj.am/storage/uploads/ACN-Liability-of-Legal-Persons_-1-.pdf(access 29.08.2023)

30. http://datalex.am/?app=AppCaseSearch&case_id=14355223812327513 (access 29.08.2023)

31. http://datalex.am/?app=AppCaseSearch&case_id=14355223812328835 (access 29.08.2023)

32. http://datalex.am/?app=AppCaseSearch&case_id=14918173765701975 (access 29.08.2023)

Elen Tsaturyan
Senior Prosecutor of the Prosecutor's Office of Aragatsotn region

MAIN ISSUES OF CRIMINAL LIABILITY OF LEGAL ENTITIES[24]

Abstract

The need to introduce the institute of criminal liability of legal entities into the criminal legislation of the Republic of Armenia is conditioned by the international obligations of the Republic of Armenia. Although in theory there are still disputes about the legitimacy of the introduction of this institute and opposing jurists argue that the organization cannot be attributed to "actus reus" (guilty action) and "mens rea" (guilty will, sin), however, the provision on the criminal liability of legal entities is determined not only by international conventions ratified by our state, but also dictated by the dictates of the times. The purpose of introducing the institute of criminal liability of legal entities is to guarantee the existence of a stable economy and ensure fair competition, taking into account the number of legal entities; if the latter remain outside the control of the state, the likelihood of damage in connection with their activities, the concentration of material resources in the hands of legal entities, the possibility of the latter carrying out anti-social activities, as well as the need to compensate for damage caused by offenses in the economic, social and environmental fields.

Taking into account the fact that the institute of criminal liability of legal entities of the Criminal Code of the Republic of Armenia, adopted on 5 May 2021 and entered into force on 1 July 2022 has not yet become the subject of a comprehensive study and practical application and numerous questions on the topic require clarification, it can be stated that the chosen topic remains relevant.

The main purpose of this article is to analyze the novelty of the institute of criminal liability of legal entities in the Criminal Code of the Republic of Armenia.

To achieve this goal, the subject of research in the research thesis was such issues as the features of the criminal liability of legal entities, advantages and disadvantages, the concept of guilt of legal entities in criminal law, which will be of guiding importance in the practical application of the introduced institute.

Keywords: legal entity; competent authority; liability of legal entity; in favor of a legal entity; criminal liability of legal entities; guilt of legal entity; activities of legal entities.

[24] The article was presented on 01.09.2023 and was reviewed on 27.02.2024.

Элен Цатурян
Старший прокурор прокуратуры Арагацотнской области

ОСНОВНЫЕ ВОПРОСЫ УГОЛОВНОЙ ОТВЕТСТВЕННОСТИ ЮРИДИЧЕСКИХ ЛИЦ[25]

Абстракт

Необходимость введения института уголовной ответственности юридических лиц в уголовное законодательство Республики Армения обусловлена международными обязательствами Республики Армения. Хотя в теории до сих пор ведутся споры о правомерности введения этого института и противоборствующие правоведы утверждают, что организации нельзя приписать "actus reus" (виновное действие) и "mens rea" (виновная воля, грех), однако положение об уголовной ответственности юридических лиц определяется не только международными конвенциями, ратифицированными нашим государством, но и продиктовано велением времени. Цель введения института уголовной ответственности юридических лиц - гарантирование существования стабильной экономики и обеспечение честной конкуренции с учетом количества юридических лиц; в случае если последние останутся вне контроля государства, вероятность возникновения ущерба в связи с их деятельностью, концентрация материальных ресурсов в руках юридических лиц, возможность осуществления последними антиобщественной деятельности, а также необходимость возмещения ущерба, причиненного правонарушениями в экономической, социальной и экологической сферах.

Принимая во внимание тот факт, что принятый 5 мая 2021 г. и вступивший в силу с 1 июля 2022 г. институт уголовной ответственности юридических лиц Уголовного кодекса РА еще не стал предметом комплексного исследования и практического применения и многочисленные вопросы по теме требуют разъяснения, можно констатировать, что выбранная тема остается актуальной.

Основная цель данной статьи – проанализировать новизну института уголовной ответственности юридических лиц в Уголовном кодексе РА.

Для достижения поставленной цели предметом исследования в научной работе стали такие вопросы, как особенности уголовной ответственности юридических лиц, преимущества и недостатки, понятие вины юридических лиц в уголовном праве, которые будут иметь направляющее значение при практическом применении введенного института.

Ключевые слова: юридическое лицо; ответственный орган; в пользу юридического лица; уголовная ответственность юридического лица; вина юридического лица; деятельность юридических лиц.

[25] Статья была представлена 01.09.2023 и прошла рецензирование 27.02.2024.

https://doi.org 10.59821/18294219-2025.1-atc12

Մարկ Ազդարիդիս
ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների քննչական բաժնի քննիչ

12 ՏԱՐԻՆ ՉԼՐԱՑԱԾ ԱՆՁԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՆՑԱՎՈՐ ՈՏՆՁԳՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ՈՐԱԿՈՒՄԸ ԸՍՏ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ[1]

Համառոտագիր

2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ նոր քրեական օրենսգիրքը (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) զգալիորեն փոփոխեց ներպետական քրեական իրավունքը՝ ներառելով նոր քրեաիրավական ինստիտուտներ, ինչպես նաև հայեցակարգային փոփոխությունների ենթարկելով գործող ինստիտուտները: Փոփոխությունները, ***inter alia***, վերաբերում են նոր հանցակազմեր սահմանելուն, նախկին օրենսգրքով առկա հանցակազմերը փոփոխելուն, կոնկրետ հանցատեսակների որակյալ հատկանիշների շրջանակի լրացմանը կամ փոփոխմանը, որոշ հասկացությունների իմաստի բացահայտմանը կամ դրանց վերաիմաստավորմանը: Օրենսգրքով արտահայտիչ կերպով կարևորվել է հանցավոր ոտնձգություններից անչափահասներին զերծ պահելու և վերջիններիս նկատմամբ արդեն իսկ իրականացված ոտնձգություններին ավելի խիստ քրեաիրավական արձագանք տալու անհրաժեշտությունը՝ 1) էապես լայնացնելով հանցակազմերի շրջանակը, որոնց որակյալ տեսակն է համապատասխան արարքի կատարումը անչափահասի նկատմամբ, 2) սահմանելով, որ «անօգնական վիճակում» գտնվող է համարվում յուրաքանչյուր 12 տարին չլրացած երեխա, ինչպես նաև 3) որպես պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող ինքնուրույն հանգամանք նախատեսելով դիտավորյալ հանցանքն անչափահասի նկատմամբ, նրա հետ համատեղ կամ հանցավորի արարքի բնույթը գիտակցող անչափահասի ներկայությամբ կատարելը, եթե հանցավորը գիտակցում է, որ անձն անչափահաս է:

Հոդվածի ուսումնասիրության առարկան վերաբերում է հիշատակված փոփոխություններից կոնկրետ մեկին՝ արարքի որակմանը անօգնական վիճակում գտնվող անձի նկատմամբ կատարված լինելու որակյալ հատկանիշով այն պարագայում, երբ անձի անօգնական վիճակը պայմանավորված է տարիքային գործոնով այն հանցակազմերի դեպքում, որոնք անօգնական վիճակում գտնվող անձի նկատմամբ կատարված լինելուն հավասարազոր ծանրացնող հանգամանք են նախատեսում նաև արարքը անչափահասի նկատմամբ կատարելը, ինչպես

[1] Հոդվածը ներկայացվել է 04.05.2025թ., գրախոսվել է 23.06.2025թ.:

նաև հանցանքի՝ անչափահասի և անօգնական վիճակում գտնվող անձի նկատմամբ կատարված լինելու որակյալ հատկանիշների հարաբերակցությունը:

Ընտրված թեմայի արդիականության մասին են վկայում անչափահասների նկատմամբ կատարված հանցանքների աճը, խնդրո առարկա հարցի վերաբերյալ միասնական պրակտիկայի բացակայությունը, ինչպես նաև դոկտրինալ աղբյուրների իրարամերժությունը:

Հետազոտության շրջանակներում քննարկման առարկա է դարձվում այն հարցը, թե ինչպես պետք է որակվեն Օրենսգրքի հատուկ մասով նախատեսված այն հանցանքները, որոնք որպես ծանրացնող հանգամանք են ներառում միաժամանակ հոդվածի նույն մասի տարբեր կետերով և՛ անչափահասի, և՛ անօգնական վիճակում գտնվող անձի նկատմամբ կատարված լինելը այն դեպքում, երբ ոտնձգության զոհը 12 տարին չլրացած երեխա է:

Հոդվածում ընտրված թեման ուսումնասիրելիս կիրառվել են իրավահամեմատական, անալիզի և սինթեզի, ինչպես նաև դեդուկտիվ և ինդուկտիվ մեթոդները:

Հիմնաբառեր– անչափահաս, անօգնական վիճակում գտնվող, ծանրացնող հանգամանք, քրեական պատասխանատվություն, կրկնակի մեղսագրում, նորմերի մրցակցություն, իրավական կանխավարկած:

Ներածություն

2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ նոր քրեական օրենսգիրքը զգալիորեն փոփոխեց ներպետական քրեական իրավունքը՝ ներառելով նոր քրեաիրավական ինստիտուտներ, ինչպես նաև հայեցակարգային փոփոխությունների ենթարկելով գործող ինստիտուտները: Փոփոխությունները, ***inter alia***, վերաբերում են նոր հանցակազմեր սահմանելուն, նախկին օրենսգրքով առկա հանցակազմերը փոփոխելուն, կոնկրետ հանցատեսակների որակյալ հատկանիշների շրջանակի լրացմանը կամ փոփոխմանը, որոշ հասկացությունների իմաստի բացահայտմանը կամ դրանց վերաիմաստավորմանը: Օրենսգրքով արտահայտիչ կերպով կարևորվել է հանցավոր ոտնձգություններից անչափահասներին զերծ պահելու և վերջիններիս նկատմամբ արդեն իսկ իրականացված ոտնձգություններին ավելի խիստ քրեաիրավական արձագանք տալու անհրաժեշտությունը՝ 1) էապես լայնացնելով հանցակազմերի շրջանակը, որոնց որակյալ տեսակն է համապատասխան արարքի կատարումը անչափահասի նկատմամբ, 2) սահմանելով, որ «անօգնական վիճակում» գտնվող է համարվում յուրաքանչյուր 12 տարին չլրացած երեխա, ինչպես նաև 3) որպես պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող ինքնուրույն հանգամանք նախատեսելով դիտավորյալ հանցանքն անչափահասի նկատմամբ, նրա հետ համատեղ կամ հանցավորի արարքի բնույթը գիտակցող անչափահասի ներկայությամբ կատարելը, եթե հանցավորը գիտակցում է, որ անձն անչափահաս է:

Հոդվածի ուսումնասիրության առարկան վերաբերում է հիշատակված փոփոխություններից կոնկրետ մեկին՝ արարքի որակմանը անօգնական վիճակում գտնվող անձի նկատմամբ կատարված լինելու որակյալ հատկանիշով այն

պարագայում, երբ անձի անօգնական վիճակը պայմանավորված է տարիքային գործոնով այն հանցակազմերի դեպքում, որոնք անօգնական վիճակում գտնվող անձի նկատմամբ կատարված լինելուն հավասարազոր ծանրացնող հանգամանք են նախատեսում նաև արարքը անչափահասի նկատմամբ կատարելը, ինչպես նաև հանցանքի՝ անչափահասի և անօգնական վիճակում գտնվող անձի նկատմամբ կատարված լինելու որակյալ հատկանիշների հարաբերակցությունը:

Ընտրված թեմայի արդիականության մասին են վկայում անչափահասների նկատմամբ կատարված հանցանքների աճը (2022 թվականի ընթացքում ՀՀ քննչական կոմիտեի վարույթում քննվել է անչափահասների նկատմամբ կատարված հանցագործությունների վերաբերյալ 545 քրեական վարույթ, որից 229 քրեական վարույթ փոխանցվել է 2023 թվական[2], 2023 թվականի ընթացքում ՀՀ քննչական կոմիտեի վարույթում քննվել է անչափահասների նկատմամբ կատարված հանցագործությունների վերաբերյալ 1.159 քրեական վարույթ, որից 363 քրեական վարույթ փոխանցվել է 2024 թվական[3], 2024 թվականի ընթացքում Կոմիտեի վարույթում քննվել է անչափահասների նկատմամբ կատարված հանցագործությունների վերաբերյալ 1.476 քրեական վարույթ[4]), խնդրո առարկա հարցի վերաբերյալ միասնական պրակտիկայի բացակայությունը, ինչպես նաև դոկտրինալ աղբյուրների իրարամերժությունը:

Հետազոտությամբ առաջադրված հարցը հետևյալն է. ինչպե՞ս պետք է որակվեն Օրենսգրքի հատուկ մասով նախատեսված այն հանցանքները, որոնք որպես ծանրացնող հանգամանք են միաժամանակ ներառում հոդվածի նույն մասի տարբեր կետերով և՛ անչափահասի, և՛ անօգնական վիճակում գտնվող անձի նկատմամբ կատարված լինելը այն դեպքում, երբ ոտնձգության զոհը 12 տարին չլրացած երեխա է:

Հոդվածի նպատակն է օժանդակել իրավակիրառին մինչև 12 տարեկան երեխաների դեմ ուղղված ոտնձգություններին ճիշտ քրեաիրավական գնահատական տալու հարցում:

Հոդվածում ընտրված թեման ուսումնասիրելիս կիրառվել են իրավահամեմատական, անալիզի և սինթեզի, ինչպես նաև դեդուկտիվ և ինդուկտիվ մեթոդները:

2. Հիմնական դրույթներ

2.1. «Անօգնական վիճակում գտնվող անձ» հասկացությունը

2003 թվականի քրեական օրենսգիրքը (այսուհետ նաև՝ նախկին օրենսգիրք) թեև ներառում էր «անօգնական վիճակում գտնվող անձ» կոնցեպտը, սակայն դրա

[2] Քննչական կոմիտեի 2022 թվականի գործունեության մասին հաղորդում (Report on the activities of the Investigative Committee for 2022) https://www.investigative.am/news/haghordoum-hayastani-hanrapetoutyan-qnnchakan-komitei-2022-tvakani-gorcouneoutyan-masin (մուտք /access/ 30.04.2025)

[3] Քննչական կոմիտեի 2023 թվականի գործունեության մասին հաղորդում
(Report on the activities of the Investigative Committee for 2023)
https://www.investigative.am/news/teghekatvoutyoun-hh-qnnchakan-komitei-2023-tvakani-gorcouneoutyan-masin (մուտք /access/ 30.04.2025)

[4] Քննչական կոմիտեի 2024 թվականի գործունեության մասին հաղորդում (Report on the activities of the Investigative Committee for 2024) https://www.investigative.am/news/haxordum (մուտք /access/ 30.04.2025)

կիրառելիությունը խիստ սահմանափակ էր: Այսպես, որպես ծանրացնող հանգամանք այն նախատեսված էր միայն 3 հանցանքների դեպքում՝ 127-րդ հոդվածում ***(Անձին առանց իր համաձայնության բժշկական կամ գիտական փորձերի ենթարկելը)***, 127.1-րդ հոդվածում ***(Եվգենիկական փորձեր իրականացնելը)*** և 218-րդ հոդվածում ***(Պատանդ վերցնելը)***: Միևնույն ժամանակ, նախկին օրենսգրքով սահմանված չէր «անօգնական վիճակում գտնվող անձ» հասկացության ընդհանրական նշանակությունը: Նախկին օրենսգիրքը սահմանում էր միայն, որ 138-րդ ***(Բռնաբարությունը)*** և 139-րդ ***(Սեքսուալ բնույթի բռնի գործողությունները)*** հոդվածների իմաստով անօգնական վիճակում գտնվող է համարվում այն անձը, որը որոշակի հանգամանքների ուժով մշտապես կամ ժամանակավորապես զրկված է եղել հանցավորին դիմադրություն ցույց տալու կամ իր նկատմամբ կատարվող արարքի բնույթը գիտակցելու կամ հասկանալու հնարավորությունից, ինչպես նաև 12 տարին չլրացած անձը[5]:

Օրենսգրքով ոչ միայն տրվեց «անօգնական վիճակում գտնվող անձ» հասկացության բացատրությունը, այլ նաև էականորեն ընդլայնվեց դրա կիրառելիության շրջանակը: Այսպես, անօգնական վիճակում գտնվող է այն անձը, որն իր ֆիզիկական կամ հոգեկան վիճակով պայմանավորված ի վիճակի չէ դիմադրություն ցույց տալ կամ ղեկավարել իր արարքը կամ գիտակցել իր նկատմամբ կատարվող արարքի բնույթը, ինչպես նաև 12 տարին չլրացած անձը[6]: Օրենսդրական բնորոշումից պարզ է դառնում, որ օրենսդիրը տարբերակել է անօգնական վիճակի 3 տեսակ՝ ֆիզիկական, հոգեկան և տարիքային:

Տուժողը համարվում է ֆիզիկական անօգնական վիճակում գտնվող, երբ գիտակցում է իր հետ տեղի ունեցող գործողությունների բնույթը և ցանկանում է հետ մղել դրանք, բայց ի վիճակի չի լինում դիմադրել հանցավորին՝ իր ֆիզիկական խնդիրների (տեսողության կորստի, հենաշարժական խնդիրների, բնածին ֆիզիկական արատների և այլն) կամ հիվանդության հետևանքով խիստ հյուծված լինելու, բարձր ջերմություն ունենալու և նման այլ պատճառներով[7]:

Տուժողը համարվում է հոգեկան անօգնական վիճակում գտնվող, երբ հանցավորի գործողությունների բնույթն ու նշանակությունը չգիտակցելու կամ չզգալու հետևանքով չի գիտակցում դիմադրելու անհրաժեշտությունն ու հետևապես զրկված է լինում նաև պաշտպանական գործողությունների դիմելու կարողությունից: Նման անօգնականությունը կարող է պայմանավորված լինել, օրինակ, հոգեկան առողջության խնդիրներով կամ անգիտակից վիճակով: Վերջինս կարող

[5] 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 138-րդ հոդվածի 4-րդ մաս (Part 4 of Article 138 of the Criminal Code of the Republic of Armenia, adopted on April 18, 2003)

[6] 2021 թվականի մայիսի 05-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ (Article 3, Part 1, Paragraph 1 of the Criminal Code of the Republic of Armenia, adopted on May 5, 2021)

[7] Դ.Ա.Թումասյան, Կ.Հ.Հովհաննիսյան, «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ, Հատուկ մաս», Ուսումնական ձեռնարկ, ISBN 978-9939-64-367-0, «Լիմուշ» հրատ., Երևան, 2022թ., էջ 93.
(D.A. Tumasyan, K.H. Hovhannisyan, "CRIMINAL LAW OF THE REPUBLIC OF ARMENIA, Special Part", Educational Manual, ISBN 978-9939-64-367-0, "Limush" Publishing House, Yerevan, 2022, page 93.)

է առաջանալ ամենատարբեր պատճառներով (ալկոհոլային կամ թմրանյութային ծանր հարբածության, հոգեներգործուն (հոգեմետ) նյութերի կամ քնաբեր դեղամիջոցների օգտագործման և այլն): Նշված հանգամանքները պետք է լինեն այնքան ազդեցիկ, որ դրանց հետևանքով անձը զրկվի տեղի ունեցող գործողությունների իմաստն ու նշանակությունը հասկանալու և հանցավորին դիմադրություն ցույց տալու կարողություններից[8]: Հոգեկան անօգնականությունը կարող է պայմանավորված լինել նաև տուժողի մանկահասակությամբ[9]:

Տարիքային անօգնականության դեպքում բացարձակ նշանակություն չունի՝ արդյոք անձը ի վիճակի է դիմադրություն ցույց տալ կամ ղեկավարել իր արարքը կամ արդյոք վերջինս գիտակցում է իր նկատմամբ կատարվող արարքի բնույթը, թե ոչ: Տարիքային անօգնականության առկայության հաստատման համար ընդամենը անհրաժեշտ է, որպեսզի տուժողի 12 տարին լրացած չլինի ոտնձգության կատարման պահին: Օրենսգրքում առկա տարիքային անօգնականություն կարգավորումը հանդիսանում է իրավական կանխավարկած ***(պրեզումպցիա)***, այսինքն՝ իրավաբանական փաստի առկայության կամ բացակայության մասին նորմատիվ բնույթի ենթադրություն, որն ունի հավանականության բարձր աստիճան և ենթակա չէ ապացուցման[10]: Ինչպես յուրաքանչյուր այլ իրավական կանխավարկած, 12 տարին չլրացած անձի անօգնական վիճակում գտնվելու վերաբերյալ մտահանգման հիմքում նույնպես ընկած են վիճակագրական օրինաչափություններ, մասնավորապես այն, որ որպես կանոն 12 տարին չլրացած անձինք, իրենց տարիքային զարգացվածության և հոգեբանական առանձնահատկություններով պայմանավորված, ի վիճակի չեն դիմադրություն ցույց տալ ոտնձգողին կամ ղեկավարել իրենց արարքը կամ գիտակցել իրենց նկատմամբ կատարվող արարքի բնույթը: Միևնույն ժամանակ, նման կանխավարկածը միայն հավանական իմացություն է և բացառված չէ, որ 12 տարին չլրացած անձը ի վիճակի լինի դիմադրություն ցույց տալ ոտնձգողին կամ ղեկավարել իր արարքը կամ գիտակցել իր նկատմամբ կատարվող արարքի բնույթը, ինչը, սակայն, իրավական նշանակություն չի կարող ունենալ և նման դեպքում ևս անձը պետք է համարվի անօգնական վիճակում գտնվող: Մյուս կողմից, 12 տարին չլրացած անձի անօգնական վիճակում գտնվելու իրավական կախնավարկածը չի

---

[8] ***Ibid.***

[9] Ս.Վ.Առաքելյան, Գ.Ս.Բաղդասարյան, Պ.Գ.Պետրոսյան, «ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԸՍՏ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ՆՈՐ ՕՐԵՆՍԳՐՔԻ», Գիտագործնական մեկնաբանություններ, ISBN 978-9939-9240-8-3, Արդարադատության ակադեմիա, Երևան, 2024թ., էջ 47.
(S.V. Arakelyan, G.S. Baghdasaryan, P.G. Petrosyan, "CRIMES AGAINST PROPERTY ACCORDING TO THE NEW CRIMINAL CODE OF THE RA", Scientific and Practical Comments, ISBN 978-9939-9240-8-3, Academy of Justice, Yerevan, 2024, page 47.)

[10] Ա.Ղամբարյան, Մ.Մուրադյան, «ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ», Ուսումնական ձեռնարկ, 4-րդ լրամշակված հրատարակություն, «Լուսաբաց հրատարակչատուն» հրատ., Երևան, 2023թ., էջ 262.
(A. Ghambaryan, M. Muradyan, "THEORY OF STATE AND LAW", Textbook, 4th revised edition, "Lusabats Publishing House" publishing house, Yerevan, 2023, page 262.)

նշանակում, որ նշված շեմից բարձր տարիքի անչափահասները չեն կարող լինել անօգնական վիճակում գտնվող:

2.2. «Անչափահաս» հասկացությունը

Ոտնձգության զոհի որոշակի տարիքի հասած չլինելու փաստի հետ է պայմանավորված նաև Օրենսգրքում լայն տարածում ստացած մեկ այլ հանցանքը որակյալ դարձնող հանգամանք, այն է՝ արարքը անչափահասի նկատմամբ կատարելը:

Ի տարբերություն «անօգնական վիճակում գտնվող անձ» հասկացության՝ Օրենսգրքով սահմանված չէ, թե ով պետք է համարվի անչափահաս: Միևնույն ժամանակ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի «քաղաքացու գործունակությունը» վերտառությամբ 24-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ իր գործողություններով քաղաքացիական իրավունքներ ձեռք բերելու և իրականացնելու, իր համար քաղաքացիական պարտականություններ ստեղծելու ու դրանք կատարելու քաղաքացու ունակությունը (քաղաքացիական գործունակություն) լրիվ ծավալով ծագում է չափահաս, այսինքն՝ տասնութ տարեկան դառնալու պահից: Բացի այդ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանվում է, որ անչափահաս է 18 տարին չլրացած անձը[11]: Վերոգրյալից կարելի է եզրահանգել, որ ՀՀ-ում անչափահաս է համարվում տասնութ տարին չլրացած յուրաքանչյուր ոք, ինչը նաև զուգակցում է «անչափահաս» հասկացությունը երեխային, որը նույնպես թե՛ ներպետական[12], թե՛ միջազգային[13] մակարդակներում բնութագրվում է որպես տասնութ տարին չլրացած անձ: Անչափահասի տրված սահմանումը հավասարապես կիրառելի է նաև Օրենսգրքի պարագայում:

2.3. «Անչափահաս» և «անօգնական վիճակում գտնվող անձ» հասկացությունների հարաբերակցությունը

Հիշատակված երկու ծանրացնող հանգամանքների համեմատական վերլուծությունից պարզ է դառնում, որ մինչև 12 տարեկան տուժողների դեպքում երկուսի առկայությունն էլ բխում է տուժողի տարիքից, ինչը միանշանակ չի ընդունվել մասնագետների կողմից՝ հաշվի առնելով, որ Օրենսգրքի հատուկ մասով նախատեսված բազմաթիվ հանցանքների դեպքում երկու ծանրացնող հանգամանքն էլ նախատեսված են, ընդ որում՝ համապատասխան հոդվածի միևնույն մասի տարբեր կետերով: Այսպես, 17 հանցատեսակի դեպքում թե՛ անչափահասի, թե՛ անօգնական վիճակում գտնվող անձի նկատմամբ արարքը կատարած լինելը սահմանված են որպես հավասարազոր որակյալ հատկանիշ, դրանք են՝ **Սպանությունը** (155-րդ հոդված), **Ինքնասպանության նպաստելը**

[11] 2021 թվականի հունիսի 30-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 53-րդ կետ (Article 6, Part 1, Paragraph 53 of the Criminal Procedure Code of the Republic of Armenia, adopted on June 30, 2021)

[12] 2004 թվականի նոյեմբերի 09-ին ընդունված ՀՀ Ընտանեկան օրենսգրքի 41-րդ հոդվածի 1-ին մաս (Part 1 of Article 41 of the Family Code of the Republic of Armenia, adopted on November 9, 2004)

[13] 1989 թվականի նոյեմբերի 20-ին Նյու Յորքում ընդունված Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի 1-ին հոդված (Article 1 of the Convention on the Rights of the Child, adopted in New York on 20 November 1989)

(164-րդ հոդված), **Առողջությանը թեթև վնաս պատճառելը** (171-րդ հոդված), **Մարդու իմունային անբավարարության վիրուսով վարակելը** (177-րդ հոդված), **Մարդու իմունային անբավարարության վիրուսով անզգուշությամբ վարակելը** (178-րդ հոդված), **Սեռավարակով վարակելը** (179-րդ հոդված), **Սեռավարակով անզգուշությամբ վարակելը** (180-րդ հոդված), **Շրջապատի համար վտանգ ներկայացնող հիվանդությամբ վարակելը** (181-րդ հոդված), **Անձին առանց իր համաձայնության բժշկական, գիտական կամ այլ փորձի ենթարկելը** (185-րդ հոդված), **Մարդու վերարտադրողական կլոնավորումը կամ եվգենիկական փորձերը** (186-րդ հոդված), **Շահագործման վիճակում գտնվող մարդու ծառայությունից օգտվելը** (190-րդ հոդված), **Ազատությունից ապօրինի զրկելը** (192-րդ հոդված), **Անձնական կամ ընտանեկան կյանքի գաղտնիությունը խախտելը** (204-րդ հոդված), **Շորթումը** (258-րդ հոդված), **Պատանդ վերցնելը կամ պահելը** (315-րդ հոդված), **Խոշտանգումը** (450-րդ հոդված), **Բռնի անհետացումը** (451-րդ հոդված):

Նման պայմաններում, առաջանում է այն իրավական հարցը, թե ինչպե՞ս պետք է որակվի արարքը թվարկված 17 հանցակազմերով այն դեպքում, երբ ոտնձգության զոհը 12 տարին չլրացած անձ է:

Գիտնականների մի մասը պնդում են[14], որ, օրինակ, 12 տարին չլրացած անչափահասի սպանությունը[15] այլ ծանրացնող հանգամանքների բացակայության պայմաններում պետք է որակվի բացառապես 155-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, քանի որ գործում է ***Lex specialis derogat legi generali*** կանոնը[16], ըստ որի՝ իրավական նորմերի մրցակցության դեպքում գործում է հատուկ ***(պարտիկուլյար)*** նորմը: Նման մոտեցման հիմքում է այն գաղափարը, որ անչափահասի նկատմամբ հանցանքը կատարված լինելու ծանրացնող հանգամանքը կրում է ընդհանուր բնույթ, իսկ անօգնական վիճակում գտնով անձի նկատմամբ հանցանքը կատարված լինելու ծանրացնող հանգամանքը այն դեպքերում, երբ անօգնականությունը տարիքային է, դրա մասնավոր, առավել նեղ արտահայտումն է, քանի որ վերաբերում է բոլոր անչափահասների մի մասին՝ 12 տարին չլրացածներին:

Մյուս մասի կարծիքով[17], այն դեպքերում, երբ կյանքից զրկվում է 12 տարին չլրացած երեխան, արարքը պետք է որակվի որպես սպանություն՝ ծանրացուցիչ

---

[14] Դ.Ա.Թումասյան, Կ.Հ.Հովհաննիսյան, «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ, Հատուկ մաս», Ուսումնական ձեռնարկ, ISBN 978-9939-64-367-0, «Լիմուշ» հրատ., Երևան, 2022թ., էջ 97. (D.A. Tumasyan, K.H. Hovhannisyan, "CRIMINAL LAW OF THE REPUBLIC OF ARMENIA, Special Part", Educational Manual, ISBN 978-9939-64-367-0, "Limush" Publishing House, Yerevan, 2022, page 97.)

[15] Թեև օրինակ որպես բերվում է սպանությունը, կատարված վերլուծությունները և եզրահանգումները հավասարապես վերաբերելի են նաև հիշատակված նույն խմբի այլ հանցանքներին:

[16] 2018 թվականի մարտի 21-ին ընդունված Նորմատիվ իրավական ակտերի մասին ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ (Paragraph 2 of Part 1 of Article 40 of the Law of the Republic of Armenia on Normative Legal Acts adopted on March 21, 2018)

[17] Ս.Վ.Առաքելյան, Ա.Վ.Բարսեղյան, «ՄԱՐԴՈՒ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԸՍՏ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ՆՈՐ ՕՐԵՆՍԳՐՔԻ», Գիտագործնական մեկնաբանություններ, ISBN 978-9939-9240-7-

երկու հանգամանքով (անօգնական վիճակում գտնվողի և անչափահասի), այսինքն՝ Օրենսգրքի 155-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ և 5-րդ կետերով, ինչը հնարավորություն կտա արարքին առավել ամբողջական և հստակ քրեաիրավական գնահատական տալ: Հեղինակների կարծիքով նման մոտեցումը հավասարապես կիրառելի է նաև այլ հանցանքների դեպքում, որոնց համար հոդվածի միևնույն մասի տարբեր կետերով նախատեսված են խնդրո առարկա երկու ծանրացնող հանգամանքները[18]:

Մասնագետների մեկ այլ խումբ գտնում է, որ յուրաքանչյուր դեպքում պետք է գնահատվի՝ արդյոք առկա են ֆիզիկական կամ հոգեբանական անօգնականության հիմքերը, և եթե տվյալ հարցին տրվի դրական պատասխան, ապա արարքը պետք է որակել երկու ծանրացնող հանգամանքներով, իսկ բացասական պատասխանի դեպքում՝ միայն որպես անօգնական վիճակում գտնվող անձի նկատմամբ կատարված, որպեսզի բացառվի միևնույն իրավաբանական փաստի՝ որպես արարքի կատարումը որակյալ հատկանիշ դարձնող հանգամանքի կրկնակի մեղսագրումը անձին: Նման մոտեցումը, ըստ իս, արմատապես հակասում է Օրենսգրքի 3-րդ հոդվածով սահմանված իրավական անհերքելի կանխավարկածին, որը բացառում է քննարկումը այն հարցի, թե արդյոք անօգնական վիճակում է 12 տարին չլրացած անձը, ուստի այն կիրառելի չէ:

Պրակտիկան, իր հերթին, նույնպես միատեսակ չէ: Այսպես, մի դեպքում[19] 7-ամյա երեխայի ենթադրյալ սպանության փաստի առթիվ նախաձեռնվել է վարույթ միայն Օրենսգրքի 155-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով, իսկ մեկ այլ դեպքում[20] 12 տարին չլրացած երեխայի սպանության համար ենթադրյալ հանցանք կատարած անձին մեղսագրվել է, ի թիվս այլ ծանրացուցիչ հանգամանքների, որոնք վերաբերելի չեն սույն հոդվածի առարկային, և՛ անօգնական վիճակում գտնվող անձի, և՛ անչափահասի նկատմամբ սպանություն կատարելու ծանրացուցիչ հանգամանքները:

Առաջադրված հարցին պատասխանելու համար նախ և առաջ անհրաժեշտ է պարզել, թե ինչ հարաբերակցության մեջ են գտնվում միմյանց միջև խնդրո

6, Արդարադատության ակադեմիա, 2023թ., էջ 37. (S.V. Arakelyan, A.V. Barseghyan, "CRIMES AGAINST PERSON ACCORDING TO THE NEW CRIMINAL CODE OF THE RA", Scientific and Practical Comments, ISBN 978-9939-9240-7-6, Academy of Justice, 2023, page 37.)

[18] Ս.Վ.Առաքելյան, Գ.Ս.Բաղդասարյան, Պ.Գ.Պետրոսյան, «ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԸՍՏ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ՆՈՐ ՕՐԵՆՍԳՐՔԻ», Գիտագործնական մեկնաբանություններ, ISBN 978-9939-9240-8-3, Արդարադատության ակադեմիա, Երևան, 2024թ., էջ 140. (S.V. Arakelyan, G.S. Baghdasaryan, P.G. Petrosyan, "CRIMES AGAINST PROPERTY ACCORDING TO THE NEW CRIMINAL CODE OF THE RA", Scientific and Practical Comments, ISBN 978-9939-9240-8-3, Academy of Justice, Yerevan, 2024, page 140.)

[19] https://www.investigative.am/news/parzvoum-en-sourenavan-bnakavayri-7-amya-bnakchi-mahvan-hanga-manqnery (մուտք /access/ 30.04.2025)

[20] https://investigative.am/news/pemzashenoum-shahaditakan-drdoumnerov-arandzin-dazhanoutyamb-mor-ev-erkou-anchapahas-erexaneri-spanoutyan-varouyti-naxaqnnoutyounn-avartvel-e?fbclid=IwAR2wOv_xfZHURBK3Kvl7jd1BYA-IKnVxNNvuTG9ZEaxKse2YdLNOLF08frk (մուտք /access/ 30.04.2025)

առարկա երկու ծանրացնող հանգամանքները՝ արդյոք դրանք ինքնուրույն են, թե հարաբերվում են որպես ամբողջը և մասը:

Քրեական օրենսգրքի հատուկ մասով նախատեսված քրեաիրավական նորմերի մրցակությունը և դրա տեսակները կանոնակարգող Օրենսգրքի կարգավորումները նախատեսում են, որ քրեաիրավական նորմերի մրցակցության դեպքում արարքը որակվում է Օրենսգրքի մեկ հոդվածով կամ հոդվածի մեկ մասով կամ կետով, իսկ եթե անձի մեկ արարքում միաժամանակ առկա են հանցակազմի ծանրացնող և առավել ծանրացնող հանգամանքները, ապա արարքը որակվում է հոդվածի միայն առավել ծանրացնող հանգամանքները նախատեսող մասով[21]: Միևնույն ժամանակ, Օրենսգիրքը սահմանում է, որ եթե անձի մեկ արարքում առկա են Օրենսգրքի միևնույն հոդվածի միևնույն մասի տարբեր կետերով նախատեսված ծանրացնող հանգամանքներ, ապա հանցագործությունների համակցությունը բացակայում է, և այդ դեպքում արարքը որակելիս նշվում են այն բոլոր կետերը, որոնցում նախատեսված հանգամանքներն առկա են անձի արարքում[22]: Վերոգրյալ կարգավորումների վերլուծությունից բխում է Օրենսդրի կամքն առ այն, որ Օրենսգրքի հատուկ մասի որևէ հոդվածի միևնույն մասով չպետք է նախատեսվեն այնպիսի ծանրացնող հանգամանքներ, որոնց միջև հնարավոր է մրցակցություն: Վերոգրյալից զատ, նույն հանցակազմի մրցակցություն նախատեսող բոլոր ծանրացնող հանգամանքները պետք է նախատեսված լինեն համապատասխան հոդվածի տարբեր մասերով, ինչը հնարավորություն կտա հաղթահարել մրցակցությունը՝ արարքը որակելով առավել ծանրացնող հանգամանքը նախատեսող մասով:

Այսպիսով, եթե ծանրացնող հանգամանքները նախատեսված են Օրենսգրքի հատուկ մասի որևէ հոդվածի միևնույն մասով, ապա դրանք պետք է գնահատվեն որպես ինքնուրույն, անկախ ծանրացնող հանգամանքներ, որոնք չեն կարող հարաբերակցվել որպես մաս և ամբողջ, քանի որ դա կհակասի Օրենսգրքի ընդհանուր մասով սահմանված հատուկ մասի հոդվածների միևնույն մասի տարբեր կետերով նախատեսված ծանրացնող հանգամանքների մրցակցության արգելքին: Այս համատեքստում կարևոր է ընդգծել, որ անօգնական վիճակում գտնվող անձի և անչափահասի դեմ ուղղված ոտնձգությունները դասելով որպես առանձին երկու ծանրացնող հանգամանք՝ Օրենսդիրը ուղղակիորեն պաշտպանության տակ է վերցրել երկու առանձին խմբերի, որոնք ունեն լրացուցիչ պաշտպանության կարիք: Այսպես, մի դեպքում խոսքը անչափահասների մասին է, իսկ մյուս դեպքում՝ անօգնական վիճակում գտնվող անձանց՝ որպես երկու խոցելի խմբերի: Ընդ որում, անգամ այն դեպքում, երբ անօգնականությունը տարիքային է, ծանրացնող հանգամանքի էությունը ոչ թե անձի լրացուցիչ պաշտպանությունն է որպես անչափահասի (12 տարին չլրացած անձ), այլ որպես

[21] 2021 թվականի մայիսի 05-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 52-րդ հոդված (Article 52 of the Criminal Code of the Republic of Armenia, adopted on May 5, 2021)

[22] 2021 թվականի մայիսի 05-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 53-րդ հոդված (Article 53 of the Criminal Code of the Republic of Armenia, adopted on May 5, 2021)

անօգնական վիճակում գտնվողի, ուստի 12 տարին չլրացած անձի դեմ ոտնձգությունների դեպքում գործ ունենք կրկնակի խոցելիության հետ, այլ ոչ թե սոսկ անչափահասների առանձին խմբի առանձին պաշտպանության:

Անդրադառնալով հիշատակված 17 հանցակազմերին՝ կարևոր է ընդգծել, որ դրանցից բոլորի դեպքում խնդրո առարկա երկու ծանրացնող հանգամանքները նախատեսված են նույն մասի տարբեր կետերով, որն Օրենսգրքի հատուկ մասի նկատմամբ գերակա ուժ ունեցող[23] ընդհանուր մասի կարգավորումների համաձայն նշանակում է, որ համապատասխան արարքը 12 տարին չլրացած անձի նկատմամբ կատարված լինելու դեպքում պետք է արարքը որակվի երկու ծանրացնող հանգամանքներով միաժամանակ:

Անօգնական վիճակում գտնվող անձի և անչափահասի նկատմամբ հանցանքը կատարված լինելու ծանրացնող հանգամանքների ինքնուրույնության մասին է խոսում նաև այն, որ Օրենսգրքի մի շարք հանցակազմերի դեպքում առկա է դրանցից միայն մեկը: Այսպես, Օրենսգրքի 162-րդ ***(Ինքնասպանության հասցնելը)***, 163-րդ ***(Ինքնասպանության հակելը)***, 166-րդ ***(Առողջությանը ծանր վնաս պատճառելը),*** 194-րդ ***(Հոգեկան ներգործությունը)***, 195-րդ ***(Ֆիզիկական ներգործությունը)***, 196-րդ ***(Ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը)***, 196.1-րդ ***(հետամտելը)***, 199-րդ ***(Սեքսուալ բնույթի գործողություններին հարկադրելը)***, 402-րդ ***(Թմրամիջոցների, հոգեմետ (հոգե-ներգործուն) նյութերի, դրանց պատրաստուկների կամ դրանց համարժեք նյութերի (անալոգի) գործածմանը հակելը կամ ներգրավելը)*** հոդվածներով որպես ծանրացուցիչ հանգամանք է նախատեսված միայն համապատասխան արարքը անչափահասի նկատմամբ կատարելը, իսկ 252-րդ ***(Ավազակությունը)***, 260-րդ ***(Գույքային վնաս պատճառելը սպառնալիքի կամ բռնություն գործադրելու միջոցով)***, 263-րդ ***(Ուրիշի գույքն ապօրինաբար օգտագործելը)*** և 297-րդ ***(Խուլիգանությունը)*** հոդվածների դեպքում ընդհակառակը՝ միայն համապատասխան արարքը անօգնական վիճակում գտնվող անձի նկատմամբ կատարելը:

Իր հերթին, երկրորդ մոտեցման օգտին է պատկերավոր խոսում այն օրինակը, որ 12 տարին լրացած անչափահասի դեմ ոտնձգության (Օրինակ՝ սպանության) դեպքում, եթե առկա լինեն ֆիզիկական կամ հոգեկան անօգնականության հիմքերը, ապա արարքը միանշանակ որակվելու է 155-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ և 5-րդ կետերով: Նման պայմաններում, առաջին մոտեցմամբ առաջնորդվելու դեպքում կստացվի մի իրավիճակ, որ մինչև 12 տարեկան անչափահասի նկատմամբ արարքը պետք է որակվի միայն մեկ ծանրացնող հանգամանքով, իսկ 12 տարին լրացած անչափահասի նկատմամբ կատարված միևնույն արարքը երկու ծանրացնող հանգամանքով, ինչը չի կարող հիմնավոր լինել և չի բխում առավել խոցելի խմբում գտնվող մանկահասակ երեխաների լրացուցիչ պաշտպանությունը

[23] 2018 թվականի մարտի 21-ին ընդունված Նորմատիվ իրավական ակտերի մասին ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ
(Paragraph 2 of Part 1 of Article 40 of the Law of the Republic of Armenia on Normative Legal Acts adopted on March 21, 2018)

ապահովելու անհրաժեշտությունից: Այս առնչությամբ անհրաժեշտ է նշել, որ թեև նույն մասի տարբեր կետերով որակումը դասական իմաստով չի կարող փոփոխել հանցանքի որակման ծանրությունը, այն, այնուամենայնիվ խիստ կարևոր է արարքի վտանգավորության աստիճանի և բնույթի ճիշտ պատկերացման, ինչպես նաև պատժի անհատականացման համար[24]:

Այս համատեքստում կարևոր է նաև անդրադառնալ միջազգային փորձին: Ռուսաստանի Դաշնության (այսուհետ նաև՝ ՌԴ) քրեական իրավունքը թեև ունի էական նմանություններ ՀՀ քրեական իրավունքին, այնուամենայնիվ, խնդրո առարկա հարցում վերջինիս կարգավորումները զգալիորեն տարբերվող են: ՌԴ քրեական օրենսգրքի 105-րդ հոդվածի 2-րդ մասի «в» կետը[25] որպես որակյալ սպանության տեսակ է սահմանել անչափահասի կամ այլ անձի սպանությունը, որը գտնվում է անօգնական վիճակում, եթե հանցագործին նախապես հայտնի է եղել տվյալ հանգամանքը:

Ռուսաստանի Դաշնության Գերագույն դատարանի պլենումի 03.03.2015 թվականի թիվ 9 որոշման[26] համաձայն՝ ՌԴ քրեական օրենսգրքի 105-րդ հոդվածի 2-րդ մասի «в» կետով պետք է որակվի դիտավորությամբ այն տուժողին մահ պատճառելը, ով իր ֆիզիկական կամ հոգեկան վիճակի պատճառով չի կարող պաշտպանել իրեն կամ ակտիվորեն դիմադրել հանցագործին, եթե վերջինս գիտակցում է այդ հանգամանքը:

ՌԴ քրեական օրենսգրքի հիշատակված կարգավորումից ակներև է, որ ի տարբերություն Օրենսգրքի՝ դրանով ոտնձգության զոհի անչափահաս և անօգնական վիճակում գտնվող լինելու հանգամանքները չեն առանձնացվել և կազմում են մեկ ամբողջություն: Այսինքն, նշված ծանրացնող հանգամանքները ոչ թե ինքնուրույն, այլ մեկ փոխկապակցված ծանրացնող հանգամանք են, որի պարագայում խոսք գնալ չի կարող մրցակցության մասին: Ընդ որում, Օրենսդրական նման ձևակերպումը վկայում է ՌԴ օրենսդրի կողմից ոչ թե անչափահասների դեմ ոտնձգություն կատարելը ***per se*** ծանրացնող հանգամանք դիտարկելու, այլ տուժողի անչափահաս լինելը իրավական կանխավարկածով անօգնական վիճակին փոխկապակցելու և արդեն անօգնական վիճակում գտնվող անձի

[24] ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ԵԱՔԴ/0078/01/09 քրեական գործով 2009 թվականի դեկտեմբերի 18-ի որոշում
(Decision of the RA Court of Cassation on criminal case No. EAKD/0078/01/09 of December 18, 2009)

[25] Уголовный кодекс Российской Федерации от 13.06.1996
https://www.consultant.ru/document/cons_doc_LAW_10699/ (մուտք 30.04.2025)
Criminal Code of the Russian Federation adopted on June 13, 1996
https://www.consultant.ru/document/cons_doc_LAW_10699/ (access 30.04.2025)

[26] Постановление Пленума Верховного Суда РФ от 27.01.1999 N 1 (ред. от 03.03.2015) "О судебной практике по делам об убийстве (ст. 105 УК РФ)
https://www.consultant.ru/document/cons_doc_LAW_21893/#dst100062 (մուտք 30.04.2025)
Resolution N9 of the Plenum of the Supreme Court of the Russian Federation of March 3, 2015
https://www.consultant.ru/document/cons_doc_LAW_21893/#dst100062 (access 30.04.2025)

նկատմամբ հանցանք կատարելը ծանրացնող հանգամանք դիտարկելու մասին, որի դրսևորման տեսակ է առաջինը:

Վերոգրյալի հաշվառմամբ հարկ է արձանագրել, որ Օրենսդիրը, եթե չցանկանար խնդրո առարկա երկու ծանրացնող հանգամանքների միաժամանակյա մեղսագրումը, կարող էր ընդամենը սահմանել, որ անչափահաս հասկացությունը վերաբերում է 12-ից մինչև 18 տարին չլրացած անձանց կամ կարող էր նախատեսել անչափահասի նկատմամբ որևէ արարքի կատարումը որպես ծանրացնող հանգամանք, իսկ անօգնական վիճակում գտնվող անձի նկատմամբ նույն արարքի կատարումը որպես առավել ծանրացնող հանգամանք, ինչը կհաղթահարեր ենթադրյալ մրցակցությունը: Վերոգրյալից զատ, առաջին մոտեցման հիմանվորվածությունը վիճահարույց է նաև այն պատճառով, որ Օրենսգրքի հատուկ մասի որևէ հոդվածի միևնույն մասով հատուկ և ընդհանուր բնույթի ծանրացնող հանգամանքի նախատեսումը կառարկայազրկեր հատուկ բնույթի ծանրացնող հանգամանքի նշանակությունը՝ այն դնելով ընդհանուր բնույթի ծանրացնող հանգամանքի հետ մեկ հարթության վրա (օրինակ՝ եթե Օրենսգրքի 191-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսվեր մարդուն առևանգելը, որը կատարվել է մի խումբ անձանց կողմից և նույն մասով նաև նախատեսվեր նույն արարքը, որը կատարվել է հանցավոր կազմակերպության կողմից): Նման կարգավորումը կասիմիլացներ մրցակցող ծանրացնող հանգամանքները՝ անհիմն կերպով անտեսելով դրանց միջև առկա տարբերություններից բխող այնպիսի էական հանգամանքներ, ինչպիսիք են հանրային նվազ կամ առավել վտանգավորությունը, որոշակի խումբ անձանց լրացուցիչ պաշտպանության անհրաժեշտությունը: Միևնույն ժամանակ, 12 տարին չլրացած անձի նկատմամբ ոտնձգությունը միայն անօգնական վիճակում գտնվող անձի նկատմամբ կատարված լինելու ծանրացնող հանգամանքով որակելը այն դեպքում, երբ համապատասխան արարքը նախատեսում է նաև հավասարազոր ծանրացնող հանգամանք՝ արարքը անչափահասի նկատմամբ կատարելը, արժեզրկում է արարքը անչափահասի նկատմամբ կատարված լինելու հանգամանքը՝ նման արարքը համարժեք դիտարկելով չափահաս անօգնական վիճակում գտնվող անձի նկատմամբ ոտնձգությանը:

Մինչդեռ, Օրենսդիրը էքսպլիցիտ կարգավորել է այն դեպքերը, երբ անհրաժեշտ է գտել ընդհանուր մեկ խոցելի խմբի որոշ հատվածների համար սահմանել ընդհանուրից տարբերվող կարգավորումներ՝ դասակարգելով դրանք հոդվածի տարբեր մասերում որպես ծանրացնող և առավել ծանրացնող հանգամանքներ: Վերոգրյալի արտահայտիչ օրինակ է Օրենսգրքի 198-րդ հոդվածը, որի 2-րդ մասով որպես հանցանքի ծանրացնող հանգամանք է նախատեսվել անչահափասի նկատմամբ սեքսուալ բնույթի բռնի գործողություններ կատարելը, իսկ 3-րդ մասով որպես առավել ծանրացնող հանգամանք է նախատեսվել 12-ից 14 տարին չլրացած անձանց նկատմամբ սեքսուալ բնույթի բռնի գործողություններ կատարելը:

2.4. *Non bis in idem*

Որոշ մասնագետներ արտահայտում են նաև այն մտահոգությունը, որ 12 տարին չլրացած անձի դեմ ուղղված ոտնձգությունը միաժամանակ երկու ծանրացուցիչ հանգամանքներով որակելը, որոնց հիմքում ընկած է միևնույն փաստական հիմքը՝ տուժողի տարիքը, խախտում է ***Non bis in idem*** սկզբունքը: Վերոգրյալի առթիվ հարկ է ընդգծել, որ նման որակման դեպքում որևէ պարագայում անձին միևնույն արարքի կամ միևնույն ծանրացնող հանգամանքի դուպլիկացված մեղսագրում տեղի չի ունենում: Ինչպես արդեն իսկ նշվել է նախորդիվ, տարիքային անօգնականությունը անհերքելի իրավական կանխավարկած է, որի էությունը հանգում է նրան, որ 12 տարին չլրացած անձանց շրջանում բարձր հավանականություն ունի անօգնական վիճակում գտնվելը, ուստի Օրենսդիրը որոշել է յուրաքանչյուր դեպքում առանձին գնահատման չենթարկել նշված խմբի երեխաների անօգնական վիճակում լինելը և օրենսդրորեն ամրագրել է, որ որոշակի տարիքի հասած չլինելը պարտադիր հանգեցնելու է մյուս իրավաբանական փաստի՝ անօգնական վիճակում լինելու առկայությանը, ընդ որում Օրենսգրքի նման կարգավորումը սահմանափակում է 12 տարին չլրացած անձի անօգնական վիճակում գտնվելու հանգամանքի հերքումը և անգամ եթե հաստատվի, որ երեխան դասական անօգնական վիճակում գտնվող չէ, միևնույն է, այդ հանգամանքը չի ունենալու որևէ իրավական արժեք: Վերոգրյալից հետևում է, որ տարիքային անօգնականության դեպքում երեխայի տարիքը ինքնին չի հանդիսանում ծանրացնող հանգամանքի հիմք, այլ որպես այդպիսին են գնահատվում և հանդիսանում երեխայի այն առանձնահատկությունները, որոնք օրինաչափորեն առկա են գրեթե բոլոր նշված տարիքային խմբի երեխաների մոտ: Այլ կերպ ասած՝ երեխայի տարիքից բխում են այն հանգամանքները, որոնք պայմանավորում են անօգնական վիճակի առկայությունը: Այսպես, եթե առկա չլիներ օրենսդրական կանխավարկածը տարիքային անօգնականության վերաբերյալ, ապա հիշատակված 17 հանցակազմերի դեպքում, եթե ոտնձգության զոհը անչափահաս է (անկախ տարիքից) և միաժամանակ առկա են վերջինիս ֆիզիկական կամ հոգեկան անօգնականության վերաբերյալ կասկածներ, իրավակիրառը պետք է քննարկման առարկա դարձներ այն հարցը, թե արդյոք զոհը ի վիճակի է եղել դիմադրություն ցույց տալ կամ ղեկավարել իր արարքը կամ գիտակցել իր նկատմամբ կատարվող արարքի բնույթը, թե ոչ: Հարցին դրական պատասխան տալու դեպքում իրավակիրառի կողմից պետք է փաստվեր, որ անչափահասը նաև անօգնական վիճակում գտնվող անձ է և դժվար թե կարծիքները կիսվեին մասնագետների առ այն, թե անհրաժեշտ է արդյոք արարքը որակել երկու ծանրացնող հանգամանքներով, թե ոչ: Մյուս կողմից, Օրենսդիրը, գնահատելով, որ մինչև 12 տարեկան երեխաների դեպքում հիշատակված հարցի պատասխանը դեպքերի գերակայության դեպքում լինելու է դրական, հարցին պատասխանել է օրենսդրորեն՝ ազատելով իրավակիրառին նշված հարցը քննարկման առարկա դարձնելու անհրաժեշտությունից և միաժամանակ հնարավորությունից: Ստացվում է, որ «տարիքային անօգնականություն»

մոլորեցնող անվան տակ այնուամենայնիվ «ֆիզիկական» կամ «հոգեկան» անօգնականությունն է, իսկ տարիքը ընդամենը այն գործոնն է, որով պայմանավորված անձանց որոշակի խմբի մոտ որպես կանոն առկա է լինում «հոգեկան» կամ «ֆիզիկական» անօգնականությունը: Վերոգրյալից հետևում է, որ յուրաքանչյուր դեպքում, երբ իրավակիրառը մինչև 12 տարեկան անձի նկատմամբ կատարված ոտնձգությունը որակում է որպես անօգնական վիճակում գտնվող անձի նկատմամբ կատարված իմպլիցիտ դրական պատասխանում է նաև այն հարցին, թե գտնվում է վերջինս «հոգեկան» կամ «ֆիզիկական» անօգնականության վիճակում, թե ոչ: Ուստի, 12 տարին չլրացած անձի դեմ ուղղված ոտնձգությունը միաժամանակ և՛ որպես անչափահասի, և՛ անօգնական վիճակում գտնվող անձի նկատմամբ կատարված լինելու ծանրացնող հանգամանքով որակելը չի խախատում ***Non bis in idem*** սկզբունքը, քանի որ զոհի անօգնական վիճակում գտնվելը բխում է ոչ թե տարիքից, այլ վերջինիս «հոգեկան» կամ «ֆիզիկական» անօգնականությունից:

Եզրակացություն

Այսպիսով, կատարված հետազոտության արդյունքում հանգում ենք հետևության առ այն, որ 12 տարին չլրացած անձի նկատմամբ այնպիսի արարքի կատարումը, որի համար ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածի նույն մասի տարբեր կետերով ծանրացուցիչ հանգամանք է նախատեսված արարքը և՛ անչափահասի, և՛ անօգնական վիճակում գտնվող անձի նկատմամբ կատարելը (ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ, 164-րդ, 171-րդ, 177-րդ, 178-րդ, 179-րդ, 180-րդ, 181-րդ, 185-րդ, 186-րդ, 190-րդ, 192-րդ, 204-րդ, 258-րդ, 315-րդ, 450-րդ, 451-րդ հոդվածներ), հանցավորի կողմից զոհի 12 տարին լրացած չլինելու հանգամանքը գիտակցելու և ծանրացնող այլ հանգամանքների բացակայության պայմաններում, ենթակա է որակման երկու ծանրացնող հանգամանքներով՝ որպես անչափահասի և անօգնական վիճակում գտնվող անձի նկատմամբ կատարված:

Գրականության ցանկ (reference list, список литературы)

1. 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգիրք
(Criminal Code of the Republic of Armenia, adopted on April 18, 2003)
2. 2021 թվականի մայիսի 05-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգիրք
(Criminal Code of the Republic of Armenia, adopted on May 5, 2021)
3. 2018 թվականի մարտի 21-ին ընդունված Նորմատիվ իրավական ակտերի մասին ՀՀ օրենք
(Law of the Republic of Armenia on Normative Legal Acts adopted on March 21, 2018)
4. 2021 թվականի հունիսի 30-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք
(Criminal Procedure Code of the Republic of Armenia, adopted on June 30, 2021)
5. 2004 թվականի նոյեմբերի 9-ին ընդունված ՀՀ Ընտանեկան օրենսգիրք
(Family Code of the Republic of Armenia, adopted on November 9, 2004)
6. 1989 թվականի նոյեմբերի 20-ին Նյու Յորքում ընդունված Երեխայի իրավունքների մասին կոնվենցիա
(Convention on the Rights of the Child, adopted in New York on 20 November 1989)
7. ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ԵԱՔԴ/0078/01/09 քրեական գործով 2009 թվականի դեկտեմբերի 18-ի որոշում
(Decision of the RA Court of Cassation on criminal case No. EAKD/0078/01/09 of December 18, 2009)
8. Уголовный кодекс Российской Федерации от 13.06.1996
https://www.consultant.ru/document/cons_doc_LAW_10699/ (մուտք 30.04.2025)
(Criminal Code of the Russian Federation adopted on June 13, 1996)
https://www.consultant.ru/document/cons_doc_LAW_10699/ (access 30.04.2025)
9. Постановление Пленума Верховного Суда РФ от 27.01.1999 N 1 (ред. от 03.03.2015) "О судебной практике по делам об убийстве (ст. 105 УК РФ)
https://www.consultant.ru/document/cons_doc_LAW_10699/ (մուտք 30.04.2025)
(Criminal Code of the Russian Federation adopted on June 13, 1996)
https://www.consultant.ru/document/cons_doc_LAW_10699/ (access 30.04.2025)
10. Ա.Ղամբարյան, Մ.Մուրադյան, «ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ», Ուսումնական ձեռնարկ, 4-րդ լրամշակված հրատարակություն, «Լուսաբաց հրատարակչատուն» հրատ., Երևան, 2023թ.
(A. Ghambaryan, M. Muradyan, "THEORY OF STATE AND LAW", Textbook, 4th revised edition, "Lusabats Publishing House" publishing house, Yerevan, 2023)
11. Դ.Ա.Թումասյան, Կ.Հ.Հովհաննիսյան, «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ, Հատուկ մաս», Ուսումնական ձեռնարկ, ISBN 978-9939-64-367-0, «Լիմուշ» հրատ., Երևան, 2022թ.

(D.A. Tumasyan, K.H. Hovhannisyan, "CRIMINAL LAW OF THE REPUBLIC OF ARMENIA, Special Part", Educational Manual, ISBN 978-9939-64-367-0, "Limush" Publishing House, Yerevan, 2022)

12. Ս.Վ.Առաքելյան, Գ.Ս.Բաղդասարյան, Պ.Գ.Պետրոսյան, «ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԸՍՏ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ՆՈՐ ՕՐԵՆՍԳՐՔԻ», Գիտագործնական մեկնաբանություններ, ISBN 978-9939-9240-8-3, Արդարադատության ակադեմիա, Երևան, 2024թ.

(S.V. Arakelyan, G.S. Baghdasaryan, P.G. Petrosyan, "CRIMES AGAINST PROPERTY ACCORDING TO THE NEW CRIMINAL CODE OF THE RA", Scientific and Practical Comments, ISBN 978-9939-9240-8-3, Academy of Justice, Yerevan, 2024)

13. Ս.Վ.Առաքելյան, Ա.Վ.Բարսեղյան, «ՄԱՐԴՈՒ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԸՍՏ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ՆՈՐ ՕՐԵՆՍԳՐՔԻ», Գիտագործնական մեկնաբանություններ, ISBN 978-9939-9240-7-6, Արդարադատության ակադեմիա, 2023թ.

(S.V. Arakelyan, A.V. Barseghyan, "CRIMES AGAINST PERSON ACCORDING TO THE NEW CRIMINAL CODE OF THE RA", Scientific and Practical Comments, ISBN 978-9939-9240-7-6, Academy of Justice, 2023)

14. https://www.investigative.am/news/parzvoum-en-sourenavan-bnakavayri-7-amya-bnakchi-mahvan-hangamanqnery

(մուտք /access/ 30.04.2025)

15. https://investigative.am/news/pemzashenoum-shahaditakan-drdoumnerov-arandzin-dazhanoutyamb-mor-ev-erkou-anchapahas-erexaneri-spanoutyan-varouyti-naxaqnnoutyounn-avartvel-e?fbclid=IwAR2wOv_xfZHURBK3Kvl7jd1BYA-IKnVxNNvuTG9ZEaxKse2YdLNOLF08frk

(մուտք /access/ 30.04.2025)

16. Քննչական կոմիտեի 2024 թվականի գործունեության մասին հաղորդում
(Report on the activities of the Investigative Committee for 2024)
https://www.investigative.am/news/haxordum (մուտք /access/ 30.04.2025)

17. Քննչական կոմիտեի 2023 թվականի գործունեության մասին հաղորդում
(Report on the activities of the Investigative Committee for 2023)
https://www.investigative.am/news/teghekatvoutyoun-hh-qnnchakan-komitei-2023-tvakani-gorcouneoutyan-masin (մուտք /access/ 30.04.2025)

18. Քննչական կոմիտեի 2022 թվականի գործունեության մասին հաղորդում
(Report on the activities of the Investigative Committee for 2022)
https://www.investigative.am/news/haghordoum-hayastani-hanrapetoutyan-qnnchakan-komitei-2022-tvakani-gorcouneoutyan-masin (մուտք /access/ 30.04.2025)

Marc Azdaridis
Investigator of Investigative Division of Ajapnyak and Davtashen administrative districts of Yerevan city Investigative Department of the Investigative Committee of the Republic of Armenia

LEGAL QUALIFICATION OF CRIMES COMMITTED AGAINST A PERSON UNDER 12 YEARS OF AGE ACCORDING TO THE NEW CRIMINAL CODE OF THE REPUBLIC OF ARMENIA[27]

Abstract

The new Criminal Code of the Republic of Armenia, adopted on May 5, 2021, significantly changed Armenian criminal law, including new criminal law institutions, as well as conceptually amending existing institutions. The changes, ***inter alia***, relate to defining new offenses, amending existing offenses, supplementing or changing the scope of qualitative characteristics of specific types of crimes, as well as to clarifying the meaning of certain concepts or reinterpreting them. The Code emphasizes the need to protect minors from criminal offences by 1) significantly expanding the scope of crimes, the qualified type of which is the commission of a relevant act against a minor, 2) defining that any child under the age of 12 is considered to be in a "helpless state", as well as 3) providing for the commission of an intentional crime against a minor, jointly with him or in the presence of a minor who is aware of the nature of the criminal act, as an independent circumstance aggravating liability and punishment, if the criminal is aware that the person is a minor. The subject of the article concerns one of the mentioned changes: the qualification of an act with the aggravating factors of being committed against a helpless person in the case when the person's helpless state is conditioned by the age factor in those crimes that also provide for the commission of the act against a minor as an aggravating circumstance equivalent to being committed against a helpless person, as well as the correlation of the aggravating characteristics of the crime: being committed against a minor and being committed against a helpless person.

The relevance of the chosen topic is evidenced by the increase in crimes committed against minors, the absence of a unified practice on the issue in question, as well as the inconsistency of doctrinal sources.

The research discusses the question of how to qualify crimes provided for in the special part of the Code that include, as an aggravating circumstance, commitment of the act against a minor and a helpless person under different points of the same part of the article, in the case when the victim of the offence is a child under 12 years of age.

The following methods were used during the research: comparative, analysis and synthesis, deduction and induction.

Keywords: minor; helpless state; aggravating circumstance; criminal liability; double indictment; competition of norms; legal presumption.

[27] The article was presented on 04.05.2025 and was reviewed on 23.06.2025.

Марк Аздаридис
Следователь следственного отдела административных районов Аджапняк и Давташен следственного управления города Ереван следственного комитета Республики Армения

УГОЛОВНО-ПРАВОВАЯ КВАЛИФИКАЦИЯ ПРЕСТУПЛЕНИЯ СОВЕРШЕННОГО В ОТНОШЕНИИ ЛИЦА НЕ ДОСТИГШЕГО 12 ЛЕТ В СООТВЕТСВИИ С НОВЫМ УГОЛОВНЫМ КОДЕКСОМ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ[28]

Абстракт

Новый Уголовный кодекс Республики Армения, принятый 5 мая 2021 года, существенно изменил уголовное законодательство Армении, включив новые уголовно-правовые институты, а также концептуально изменив существующие институты. Поправки, в частности, касаются определения новых уголовных преступлений, внесения изменений в существующие уголовные преступления, предусмотренные предыдущим Кодексом, дополнения или изменения объема квалифицирующих признаков отдельных видов преступлений, а также уточнения смысла некоторых понятий или их переосмысления. В Кодексе подчеркивается необходимость защиты несовершеннолетних от преступных посягательств путем 1) существенного расширения состава преступлений, квалифицируемым видом которых является совершение соответствующего деяния в отношении несовершеннолетнего, 2) определения, что любой ребенок в возрасте до 12 лет считается находящимся в «беспомощном состоянии», а также 3) установления совершения умышленного преступления в отношении несовершеннолетнего совместно с ним или в присутствии несовершеннолетнего, осознающего характер преступного деяния, в качестве самостоятельного обстоятельства, отягчающего ответственность и наказание, если преступник заведомо знал, что лицо является несовершеннолетним. Предметом статьи является одно из названных изменений: квалификация деяния отягчающим обстоятельством совершение в отношении беспомощного лица, в случае, если беспомощное состояние лица обусловлено возрастным фактором, в случае тех преступлений, которые предусматривают также совершение деяния в отношении несовершеннолетнего в качестве равнозначного отягчающего обстоятельства, а также соотношение квалифицирующих признаков преступления: совершение в отношении несовершеннолетнего и беспомощного лица.

Актуальность выбранной темы подтверждается ростом преступлений, совершаемых в отношении несовершеннолетних, отсутствием единой практики по

[28] Статья была представлена 04.05.2025 и прошла рецензирование 23.06.2025.

рассматриваемому вопросу, а также противоречивостью доктринальных источников.

В статье рассматриваются вопросы квалификации преступлений, предусмотренных Особенной частью Уголовного кодекса, одновременно включающих в себя в качестве отягчающих обстоятельств совершение деяния в отношении несовершеннолетнего и беспомощного лица по разным пунктам одной и той же части статьи, в случаях, когда жертвой преследований является ребенок в возрасте до 12 лет.

При изучении выбранной в статье темы использовались анализ и синтез, а также сравнительный, дедуктивный и индуктивный методы.

Ключевые слова: несовершеннолетний; беспомощное состояние; отягчающее обстоятельство; уголовная ответственность; повторное привлечение к ответственности; конкуренция норм; правовая презумпция.

https://doi.org 10.59821/18294219-2025.1-mmi13

Էլեն Մարգարյան
Փարիզի Պանթեոն-Ասսաս համալսարանի Մարդու իրավունքներ և միջազգային արդարադատություն մագիստրոսական ծրագրի ուսանող, Հայաստանում ֆրանսիական համալսարանի իրավաբանական ֆակուլտետի մագիստրոս

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՀԻՄՆԱՐԱՐ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 6-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԿԻՐԱՌԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՅԱՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԵՐՈՎ[1]

Համառոտագիր

Հոդվածում ուսումնասիրվել է պետական պաշտոնյաների/հանրային ծառայողների կողմից իրենց պաշտոնեական գործունեության հետ կապված վեճերով Մարդու իրավունքների եվրոպական դատարան ներկայացվող գանգատների կապակցությամբ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի կիրառելիության հիմնախնդիրը:

Եթե Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի նախնական փուլում արդար դատաքննության իրավունքը երաշխավորող 6-րդ հոդվածի կիրառելիությունը հանրային բնույթ կրող վեճերի նկատմամբ խիստ սահմանափակ էր, դատարանի հետագա դիրքորոշումը ցույց է տալիս Կոնվենցիայով երաշխավորվող իրավունքներից օգտվելու հավասարության սկզբունքի՝ որոշակի բացառություններով պահպանումը պետության իրավասության տակ գտնվող բոլոր անձանց համար՝ անկախ նրանց կարգավիճակից:

Ներկայացված հարցի արդիականությունը և հետաքրքրությունը պայմանավորված է Մարդու իրավունքների եվրոպական դատարան ներկայացվող մեծաքանակ գանգատներով, որոնք վերաբերում են, օրինակ, ոստիկանության կամ զինված ուժերում ծառայություն իրականացնող անձանց աշխատանքային հարաբերություններին: Վերջին տարիներին հատկապես մեծ հետաքրքրություն է ձեռք բերել դատավորների կողմից իրենց լիազորությունների դադարեցման գործերով Կոնվենցիայի 6-րդ հոդվածի շրջանակներում ներկայացված գանգատների ընդունելիության հարցը, որին պատասխանելու համար հոդվածում ուսումնասիրվել է հարցին առնչվող ՄԻԵԴ նախադեպային իրավունքի ամբողջությունը՝ սկսած դրա վերաբերյալ առաջին որոշումներից մինչև Գյուլումյանը և մյուսներն ընդդեմ Հայաստանի գործով վերջերս կայացված որոշումը:

[1] Հոդվածը ներկայացվել է 05.05.2025թ., գրախոսվել է 01.06.2025թ.:

Հիմնաբառեր– արդար դատաքննության իրավունք, Էսքելինենի թեստ, պետական ծառայության հետ կապված վեճեր, եվրոպական դատարանի նախադեպային իրավունք:

Ներածություն

Արդար դատաքննության իրավունքը, որը երաշխավորված է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի (այսուհետ նաև՝ ՄԻԵԿ կամ Կոնվենցիա) 6-րդ հոդվածով, իրավունքի գերակայության անկյունաքարերից մեկն է: Միևնույն ժամանակ, պետական պաշտոնյաների/հանրային ծառայողների (այդ թվում՝ դատավորների) նշանակման, անձեռնմխելիության և անփոփոխելիության վերաբերյալ վեճերը ոչ միշտ են ընկնում ՄԻԵԿ 6-րդ հոդվածի կիրառության տակ: Բանն այն է, որ ՄԻԵԿ 6-րդ հոդվածով երաշխավորված արդար դատաքննության իրավունքը վերաբերում է միայն «քաղաքացիական իրավունքների և պարտականությունների» կամ «քրեական մեղադրանքի» կապակցությամբ ծագող վեճերին, իսկ պետական պաշտոնյաների կողմից ծառայության անցնելու, այն դադարեցնելու և դրա հետ կապված այլ գործերը դասական իմաստով քաղաքացիական բնույթի իրավունքների ծագման հիմք չեն հանդիսանում: Այս կապակցությամբ ՄԻԵԿ տեքստում որևէ կոնկրետ նշում չլինելու պայմաններում Եվրոպական դատարանն իր կողմից ձևավորված դատական պրակտիկայում է առանձնացրել այն դեպքերը, երբ պետական պաշտոնյան/հանրային ծառայողը կարող է գանգատ ներկայացնել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի հիման վրա՝ իր «քաղաքացիական իրավունքների և պարտականությունների» վերաբերյալ գործերով արդար դատաքննության իրավունքի ենթադրյալ խախտման համատեքստում:

Եվրոպական դատարանի կողմից արդար դատաքննության իրավունքի սահմանափակ կիրառման նախնական պրակտիկան հանրային ծառայողների վերաբերյալ գործերով

Եվրոպական դատարանն իր նախադեպային իրավունքի վաղ փուլում մեկնաբանել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի կիրառելիության բացառումը որոշակի խմբի վեճերի նկատմամբ[2]: Այսպես, որպեսզի անձը կարողանա Եվրոպական դատարանի առջև վկայակոչել 6-րդ հոդվածի խախտում՝ քաղաքացիական ասպեկտով, պետք է առկա լինի իրավունքի վերաբերյալ իրական վեճ, որը կարող է վերաբերել ինչպես իրավունքի գոյությանը, այնպես էլ դրա շրջանակին կամ իրացման եղանակին[3]: Բացի այդ, քննարկվող իրավունքը պետք է լինի քաղաքացիական բնույթի: *Glasenapp ընդդեմ Գերմանիայի* վերաբերյալ գործով Եվրոպական դատարանը, արձանագրելով Կոնվենցիայում և դրա արձանագրություններում հանրային ծառայության անցնելու իրավունքի բացակայությունը, Կոնվենցիայի 6-րդ հոդվածի կիրառման շրջանակներից բացառել է հանրային

[2] Խոսքը Եվրոպական դատարանի՝ *ratione materiae* իրավասության բացակայության մասին է, որը Դատարանը քննարկում է գանգատի ընդունելիության հարցի շրջանակներում:

[3] *Pudas ընդդեմ Շվեդիայի*, 27 հոկտեմբերի 1987թ., գանգատ n° 10426/83, § 31:

ծառայողների/պետական պաշտոնյաների կողմից աշխատանքի անցնելու, դրա իրականացման և դրանից ազատման վերաբերյալ գործերը[4]: Այսինքն, իրավունքի՝ քաղաքացիական բնույթ ունենալու հանգամանքը Եվրոպական դատարանը գնահատում էր՝ ելնելով խնդրո առարկա իրավունքի բնույթից՝ չսահմանափակվելով ներպետական օրենսդրությամբ դրան տրված կոնկրետ գնահատականով, այլ կերպ ասած՝ առանցքային նշանակություն ուներ ոչ թե վեճի՝ ներպետական իրավունքում հանրային կամ մասնավոր դիտարկվելու հանգամանքը, այլ այդ իրավունքով դրան տրված բովանդակությունը և առաջացող հետևանքները[5]: Օրինակ, *Feldbrugge ընդդեմ Նիդերլանդների* վերաբերյալ գործով կայացված որոշմամբ Եվրոպական դատարանը եզրահանգել է, որ չնայած հանրային ծառայողների՝ առողջության ապահովագրության իրավունքը ներպետական օրենսդրությամբ դիտարկվում է որպես հանրային, այն ունի սուբյեկտիվ և գույքային բնույթ, ուստի առավելապես նման է քաղաքացիական բնույթի իրավունքներին[6]:

Վերոնշյալ վերլուծությունների լույսի ներքո՝ Եվրոպական դատարանը ճանաչել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ի մասի կիրառելիությունը գույքային բնույթ կրող վեճերի նկատմամբ: Օրինակ, *Francesco Lombardo ընդդեմ Իտալիայի* գործով կայացված վճռում Եվրոպական դատարանը գտել է, որ հանրային ծառայողի կենսաթոշակի իրավունքը քաղաքացիական բնույթի է, քանի որ տվյալ դեպքում պետությունը նման է մասնավոր իրավունքով կարգավորվող աշխատանքային իրավահարաբերության կողմ հանդիսացող գործատուի[7]: Հետևաբար, Կոնվենցիայի 6-րդ հոդվածը կիրառելի է բոլոր այն դեպքերում, երբ պետության պարտավորությանը համապատասխանում է հանրային ծառայողի որևէ գույքային իրավունք, որը չի վերաբերում ո՛չ հանրային ծառայության անցնելուն, ո՛չ դրա իրականացմանը, այսինքն՝ Եվրոպական դատարանը հստակ տարանջատում է այն վեճերը, որոնք ունեն բացառապես գույքային բնույթ՝ հանրային ծառայության անցնելու հետ կապված հանրային բնույթի վեճերից, ինչպիսիք են, օրինակ, հանրային ծառայության որևէ պաշտոնի նշանակումը, պաշտոնեական առաջխաղացումը, պաշտոնից ազատումը և այլն:

Այս նախադեպային իրավունքի՝ տևական ժամանակ կիրառումից հետո Եվրոպական դատարանը բախվեց մի քանի խնդիրների: Առաջին հերթին, հանրային ծառայության անցնելու, դրա իրականացման և դադարեցման հետ կապված բոլոր վեճերն էլ այս կամ այն կերպ առաջացնում են գույքային բնույթի հետևանքներ, օրինակ՝ հանրային ծառայության պաշտոնից ազատվելն անձի համար առաջացնում է գույքային բնույթի անբարենպաստ հետևանքներ՝ աշխատավարձ ստանալու իրավունքից զրկվելու իմաստով: Բացի այդ, բացակայում էին իրավունքի գույքային կամ ոչ գույքային լինելը որոշելու հստակ չափանիշները: Իր կողմից պրակտիկայում արձանագրված անորոշությանն ի պատասխան՝ *Pellegrin*

[4] *Glasenapp ընդդեմ Գերմանիայի,* 28 օգոստոսի 1986թ., գանգատ n° 9228/80, § 49:
[5] *König ընդդեմ Գերմանիայի*, 28 հունիսի 1978թ., գանգատ n° 27, §§ 88-89:
[6] *Feldbrugge ընդդեմ Նիդերլանդների,* 29 մայիսի 1986թ., գանգատ n° 8562/79, § 39:
[7] *Francesco Lombardo ընդդեմ Իտալիայի,* 26 նոյեմբերի 1992թ., գանգատ n° 25704/94, § 16:

ընդդեմ Ֆրանսիայի գործով Եվրոպական դատարանն ամրագրեց հանրային ծառայողների վերաբերյալ վեճերով 6-րդ հոդվածի կիրառելիության այլ՝ գործառութային չափանիշ՝ որպես հիմք ընդունելով Եվրոպական միության արդարադատության դատարանի կողմից արդեն իսկ ձևավորված նախադեպային իրավունքը: Այսպես, Եվրոպական միության արդարադատության դատարանն անձանց ազատ տեղաշարժի սկզբունքի մեկնաբանման շրջանակներում տարբերակում է հանրային ծառայողների երկու տեսակ՝ պետական իշխանության իրականացմանը կամ պետության կամ պետական մարմինների շահերի պաշտպանությանն ուղղված գործառույթներ իրականացնող պետական կառավարման մարմնի աշխատակիցներ և հանրային ծառայողներ, որոնք չունեն նմանօրինակ գործառույթներ[8]: Հիմք ընդունելով հենց այս չափանիշը՝ Եվրոպական դատարանը *Pellegrin ընդդեմ Ֆրանսիայի* գործով կայացված որոշմամբ ճանաչեց Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի կիրառելիությունն այն հանրային ծառայողների նկատմամբ, որոնք չեն մասնակցում պետական իշխանության իրականացմանը, այսինքն՝ Եվրոպական դատարանը որպես հիմք ընդունում է ոչ թե հանրային ծառայողի գործունեության հետ կապված կոնկրետ վեճի բնույթը (գույքային կամ ոչ գույքային), այլ հանրային ծառայողի գործառույթների ընդհանուր բնույթը, որը կանխորոշում է նրան վերաբերող բոլոր վեճերի ճակատագիրը[9]: Դատարանն իր նշված դիրքորոշումը հիմնավորում է պետական իշխանության իրականացմանը մասնակցող հանրային ծառայողների և պետության միջև առկա հատուկ վստահության (լոյալության) առկայությամբ, ինչպիսին առկա է, օրինակ, ոստիկանության մարմիններում կամ զինված ուժերում ծառայություն իրականացնող անձանց և պետության միջև:

Դժվար չէ նկատել, որ Եվրոպական դատարանի կողմից ձևավորված նոր դիրքորոշումն ավելի էր սահմանափակում Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի կիրառելիությունը հանրային ծառայողների նկատմամբ, քանի որ եթե նախկին դիրքորոշման պայմաններում բոլոր հանրային ծառայողներին վերաբերող գույքային բնույթի վեճերը կարող էին Եվրոպական դատարանի առջև վեճի առարկա հանդիսանալ, նոր դիրքորոշման պայմաններում, եթե պետական պաշտոնյան անմիջականորեն մասնակցում է պետական իշխանության իրականացմանը, նրա հետ կապված որևէ վեճ, այդ թվում՝ գույքային, չի կարող ենթադրել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի կիրառելիություն՝ որպես բացառություն սահմանելով միայն պետական պաշտոնյաների կենսաթոշակային վեճերը: Եվրոպական դատարանի կողմից արձանագրված այս գործառութային չափանիշի՝ ՄԻԵԿ 6-րդ հոդվածի կիրառման շրջանակների սահմանափակման հետևանքով այն հետագայում կրկին ենթարկվեց վերանայման:

Գործառնական չափանիշի կիրառումից մինչև Էսքելինենի թեստի սահմանում

[8] Եվրոպական միության արդարադատության դատարան, Հանձնաժողովն ընդդեմ Լյուքսեմբուրգի, 2 հուլիսի 1996թ., C-473/93:

[9] *Pellegrin ընդդեմ Ֆրանսիայի*, 8 դեկտեմբերի 1999թ., գանգատ n° 28541/95, § 60:

Pellegrin ընդդեմ Ֆրանսիայի գործով կայացված որոշմամբ արձանագրված գործառութային չափանիշի կիրառման գործնական բարդությունները հաշվի առնելով՝ Եվրոպական դատարանը *Eskelinen ընդդեմ Ֆինլանդիայի* գործով վճռում ձևակերպեց հանրային ծառայողներին վերաբերող գործերով ՄԻԵԿ 6-րդ հոդվածի 1-ին մասի կիրառելիության միանգամայն այլ չափանիշ՝ որդեգրելով ճկուն և իր նախադեպային իրավունքի էվոլյուցիային միտված մոտեցում: Այսպես, ի տարբերություն *Pellegrin ընդդեմ Ֆրանսիայի* գործով որդեգրված չափանիշի՝ Եվրոպական դատարանն այս գործով, հիմնվելով սուբսիդիարության սկզբունքի վրա, սահմանում է, որ Պայմանավորվող յուրաքանչյուր պետություն ինքն է առանձնացնում պետական իշխանության իրականացմանն առնչվող այն ոլորտները, որոնց վերաբերյալ վեճերով բացառվում է դատարան դիմելու հնարավորությունը, սակայն Եվրոպական դատարանը պահպանում է դրա՝ կոնվենցիոն պահանջներին համապատասխանության ստուգման իր լիազորությունը: Մասնավորապես, որպես կանոն, ՄԻԵԿ 6-րդ հոդվածի 1-ին մասը կիրառելի է պետական պաշտոնյաների/հանրային ծառայողների հետ կապված բոլոր վեճերի նկատմամբ, միևնույն ժամանակ, պետությունը կարող է պնդել, որ քննարկվող հոդվածը կիրառելի չէ՝ հետևյալ երկու պայմանների միաժամանակյա առկայության պարագայում. առաջին հերթին, ներպետական օրենսդրությունը պետք է բացառի համապատասխան վեճի կապակցությամբ դատարան դիմելու իրավունքը, և այդ բացառությունը պետք է հետապնդի իրավաչափ նպատակ[10]: Այսինքն, Եվրոպական դատարանն ամրագրեց ՄԻԵԿ 6-րդ հոդվածի 1-ին մասի կիրառելիության կանխավարկած՝ պետական պաշտոնյաներին/հանրային ծառայողներին վերաբերող բոլոր գործերով՝ հակառակի ապացուցման բեռը դնելով պատասխանող պետության վրա: Այս գործով, մասնավորապես, Եվրոպական դատարանն արձանագրել է, որ Ֆինլանդիայի օրենսդրության համաձայն՝ գանգատ ներկայացրած բոլոր չորս անձինք էլ ունեին դատարան դիմելու իրավունք, այսինքն՝ առաջին պայմանը պահպանված չէր, հետևաբար ՄԻԵԿ 6-րդ հոդվածը կիրառելի է, մինչդեռ եթե դատարանն առաջնորդվեր *Pellegrin ընդդեմ Ֆրանսիայի* գործով ձևավորված չափանիշով, ապա կհանգեր տրամագծորեն հակառակ արդյունքի, քանի որ այս գործով չորս անձանցից երեքը ոստիկանության աշխատակիցներ էին, որոնք դասական իմաստով պետական իշխանության իրականացմանն ուղղակիորեն մասնակցող պաշտոնատար անձինք են:

Եվրոպական դատարանի կողմից վերոնշյալ նոր դիրքորոշման որդեգրումը պայմանավորված էր մի քանի հանգամանքով: Առաջին հերթին, Պայմանավորվող պետությունների մեծամասնությունում հանրային ծառայողները զրկված չեն դատարան դիմելու իրավունքից՝ աշխատանքի ընդունման, դրանից ազատման հետ կապված վեճերի առկայության դեպքում, մյուս կողմից՝ Եվրոպական կոնվենցիայի 1-ին և 14-րդ հոդվածները սահմանում են, որ Պայմանավորվող պետությունների իրավասության ներքո գտնվող յուրաքանչյուր ոք պետք է առանց

[10] *Vilho Eskelinen և մյուսներն ընդդեմ Ֆինլանդիայի*, 19 ապրիլի 2007թ., գանգատ n° 63235/00, § 52:

խտրականության օգտվի Կոնվենցիայիով երաշխավորվող բոլոր իրավունքներից և ազատություններից:

Եվրոպական դատարանի հետագա նախադեպային իրավունքը հստակ պարզաբանեց *Էսքելինենի* երկու պայմանները: Այսպես, առաջին պայմանի՝ այն է՝ ներպետական օրենսդրությամբ դատարան դիմելու իրավունքը բացառելու վերաբերյալ, Եվրոպական դատարանը *Մնացականյանն ընդդեմ Հայաստանի* գործով վճռում նշել է, որ Արդարադատության խորհուրդը (որն այլևս չի գործում) դատավորների վերաբերյալ կարգապահական վարույթների շրջանակներում ուներ որոշակի լիազորություններ, մասնավորապես՝ օժտված էր վերջիններիս լիազորությունների դադարեցումն առաջարկելու լիազորությամբ, միևնույն ժամանակ, Արդարադատության խորհրդի այս լիազորությունը սահմանափակված էր միայն Նախագահին առաջարկություն ներկայացնելով, որն էլ հայեցողական լիազորություն ուներ դրան ընթացք տալու կամ չտալու[11]: Հաշվի առնելով, որ նշված հարցի կապակցությամբ վերջնական որոշումը Նախագահինն էր, Արդարադատության խորհուրդը դատարանի գործառույթ չուներ, և վերջինիս կողմից կայացված որոշումն էլ բողոքարկման ենթակա չէր, հետևաբար ՀՀ օրենսդրությունը, *Էսքելինեն* թեստի առաջին պայմանի իմաստով, բացառել է դատարան դիմելու հնարավորությունը՝ Արդարադատության խորհրդի կողմից դատավորի լիազորությունների դադարեցնելու վերաբերյալ առաջարկության վիճարկման իմաստով: Ի տարբերության այս գործով կայացված որոշման՝ *Kamenos ընդդեմ Կիպրոսի* գործով Եվրոպական դատարանը գտել է, որ *Էսքելինեն* թեստի առաջին պայմանը պահպանված չէ, այսինքն՝ ներպետական օրենսդրությունը չի բացառել դատարան դիմելու հնարավորությունը, քանի որ ի տարբերության ՀՀ արդարադատության խորհրդի, որը Եվրոպական դատարանի գնահատմամբ հանդես չէր գալիս որպես դատարան, Կիպրոսի Գերագույն դատական խորհուրդը բաղկացած է 13 դատավորներից, օժտված է վկաներ կանչելու, ապացույցներ հետազոտելու և գնահատելու լիազորություններով, հետևաբար այն հանդես է գալիս որպես դատարան[12]: Այսինքն՝ Եվրոպական դատարանի համար կարևորը *Էսքելինեն* թեստի առաջին պայմանի վերաբերյալ որոշում կայացնելիս ոչ թե դատական մարմնի տեսակն է, այլ համապատասխան, նույնիսկ ոչ դատական մարմնի կողմից դատական գործառույթ իրականացնելը, այսինքն՝ անձի վերաբերյալ պարտադիր կատարման ենթակա որոշում կայացնելը:

Չնայած Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ զգալի թվով դեպքերում դատարանը չի անդրադառնում *Էսքելինեն* թեստի երկրորդ պայմանին՝ որոշակի պաշտոն զբաղեցնող անձանց դատարան դիմելու իրավունքի բացառման նպատակին, քանի որ մեծամասամբ գալիս է այն եզրահանգման, որ առաջին պայմանը բավարարված չէ, այսինքն՝ ներպետական օրենսդրությունը չի բացառում դատարան դիմելու իրավունքը, այնուամենայնիվ, դատարանն անդրադարձել է մի քանի դեպքերի,

[11] *Մնացականյանն ընդդեմ Հայաստանի*, 15 հոկտեմբերի 2019թ., գանգատ n° 24603/12, §§ 52–54:
[12] *Kamenos ընդդեմ Կիպրոսի*, 31 հոկտեմբերի 2017թ., գանգատ n° 147/07, § 86:

երբ երկրորդ պայմանը ևս կարող է բավարարված լինել: Այսպես, դատարանը բազմիցս ընդգծել է, որ բավարար չէ, որ պետությունը ցույց տա շահագրգիռ անձի և պետության միջև «վստահության հատուկ կապի» գոյությունը, անհրաժեշտ է նաև, որ պետությունը ցույց տա, որ վեճի առարկան կապված է պետական իշխանության իրականացման հետ կամ կասկածի տակ է դնում այդ հատուկ վստահությունը: Օրինակ, *Spūlis and Vaškevičs ընդդեմ Լատվիայի* գործում Եվրոպական դատարանն ընդունել է դատարան դիմելու իրավունքի բացառման իրավաչափ նպատակի առկայությունը գանգատ ներկայացրած երկու անձի կապակցությամբ, որոնցից մեկի պաշտոնը կապված էր հետախուզության և հակահետախուզության գործառույթների կատարման հետ, իսկ մյուսը զբաղեցնում էր հարկային մարմնի ամենաբարձր պաշտոններից մեկը[13]: Նրանց վստահված գործառույթների բնույթից բխում է, որ վերջիններս անմիջականորեն մասնակցում են պետական իշխանության իրականացմանը, այդ իսկ պատճառով նրանց դատարան դիմելու իրավունքը բացառելը Եվրոպական դատարանի կողմից համարվել է ողջամտորեն արդարացված: Նույն տրամաբանությամբ՝ *Suküt ընդդեմ Թուրքիայի* գործով Եվրոպական դատարանը համարել է, որ Թուրքիայի օրենսդրությամբ ՄԻԵԿ 6-րդ հոդվածով երաշխավորված իրավունքների սահմանափակումը արդարացված է եղել, քանի որ վեճը վերաբերում էր դիմումատուի կարգապահական պատասխանատվությանը՝ որպես զինվորականի, և առնչվում էր նրա վարքագծին՝ ռազմական կարգապահության և աշխարհիկության սկզբունքի խախտման համատեքստում[14]:

Այսպիսով, ՄԻԵԿ 6-րդ հոդվածի 1-ին մասի կիրառելիությունը պետական պաշտոնյաների/հանրային ծառայողների վերաբերյալ գործերով որոշվում է *Էսքելինենի* գործով վճռում սահմանված թեստի միջոցով: Թեև Եվրոպական դատարանի կողմից ձևավորված այս դիրքորոշումը հիմնականում կիրառվում է այնպիսի պետական մարմիններում աշխատող անձանց նկատմամբ, ինչպիսիք են ոստիկանությունը կամ զինված ուժերը, սակայն վերջերս կայացված մի շարք վճիռներով Եվրոպական դատարանն անդրադարձել է քննարկվող հոդվածի կիրառելիության հարցին դատավորներին վերաբերող գործերով:

Էսքելինենի թեստի շարունակական կիրառումը՝ դատական իշխանությանը վերաբերող գործերով

Եվրոպական դատարանն առաջին անգամ *Pitkevich ընդդեմ Ռուսաստանի* գործով նշել է, որ դատական իշխանությունը, չլինելով սովորական հանրային ծառայության մաս, այնուամենայնիվ դասվում է հանրային ծառայությունների շարքին, մասնավորապես, դատավորն անմիջականորեն մասնակցում է պետական իշխանության լիազորությունների իրագործմանը և իրականացնում է գործառույթներ,

[13] *Spūlis և Vaškevičs ընդդեմ Լատվիայի*, 6 հոկտեմբերի 2022թ., գանգատներ n° 2631/10 և 12253/10, § 42:

[14] *Suküt ընդդեմ Թուրքիայի*, 11 սեպտեմբերի 2007թ., գանգատ n° 59773/00:

որոնք ուղղված են պետության օրինական շահերի պաշտպանությանը[15]: *Էսքելինենի* թեստի ամրագրումից ի վեր, Եվրոպական դատարանն ընդունել է իր՝ *ratione materiae* իրավասությունը՝ դատավորների մասնակցությամբ սովորական աշխատանքային վեճերի վերաբերյալ: Սակայն առավել հետաքրքրական է այս նախադեպային իրավունքի կիրառումը դատավորների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման վերաբերյալ գործերով:

Մասնավորապես, *Baka ընդդեմ Հունգարիայի* գործով Եվրոպական դատարանն անդրադարձել է Հունգարիայի Գերագույն դատարանի նախկին նախագահի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման իրավաչափության հարցին: Վերջինս ընտրվել էր վեցամյա ժամկետով, սակայն Հունգարիայի Սահմանադրության մեջ փոփոխություններ նախատեսող օրենքի անցումային դրույթների ուժի մեջ մտնելով վերջինիս մանդատը *ex lege* դադարեցվել էր նախատեսված ժամկետից երեքուկես տարի շուտ: Քննարկելով, առաջին հերթին, Կոնվենցիայի 6-րդ հոդվածի կիրառելիության հարցը՝ դատարանը վերլուծել է *Էսքելինեն* թեստի առաջին պայմանի պահպանումը ոչ թե այն պահի դրությամբ, երբ վիճարկվող միջոցը, այսինքն՝ սահմանադրական փոփոխություններն արդեն իսկ գործել են, այլ՝ դրանից առաջ: Մասնավորապես, Եվրոպական դատարանը նշել է, որ Գերագույն դատարանի նախագահի մանդատը կարգավորող կանոնները նախատեսում էին դատարան դիմելու իրավունք, սակայն քանի որ դիմումատուի մանդատին առնչվող իրավադրույթները ներառվել էին սահմանադրական փոփոխություններ նախատեսող օրենքի անցումային դրույթներում, դատարան դիմելու, հետևաբար դատական վերահսկողության հնարավորությունը բացառվել էր[16]: Եվրոպական դատարանը *Էսքելինեն* թեստի առաջին պայմանի գնահատման պահի նման փոփոխությունը տվյալ դեպքում հիմնավորել է Պայմանավորվող պետությունների կողմից չարաշահումներից խուսափելու անհրաժեշտությամբ, որոնք հակառակ պարագայում կարող են ընդունել ցանկացած պաշտոնատար անձի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման վերաբերյալ սահմանադրական փոփոխությունների օրենք՝ բացառելով դրա նկատմամբ դատական վերահսկողությունը: Հակառակ դատողությունը կհանգեցներ այն եզրահանգման, որ հակասելով իրավունքի գերակայության սկզբունքին՝ մի օրենք, որը, ինքնին, վիճարկվում է անձի կողմից՝ որպես իր արդար դատաքննության իրավունքը սահմանափակող, կարող է հենց հիմնավորել դատարան դիմելու իրավունքի բացառումը, հատկապես այն դեպքերում, երբ այդ օրենքի հասցեատերը կոնկրետ անձ է, ինչպես տվյալ դեպքում:

Գտնելով, որ դատարանը *ratione materiae* իմաստով իրավասու է գանգատը քննարկելու, Եվրոպական դատարանը գալիս է այն եզրահանգման, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի քաղաքացիական մասի խախտում՝ նկատի ունենալով, որ Գերագույն դատարանի նախագահի մանդատի վաղաժամ

[15] *Petrova և Chornobryvets ընդդեմ Ուկրաինայի*, 15 հունիսի 2023թ., գանգատներ n° 48653/18 և 50871/18, § 15:
[16] *Baka ընդդեմ Հունգարիայի*, 23 հունիսի 2016թ., գանգատ n° 20261/12, § 116:

դադարեցումը չի վերանայվել դատարանի կողմից, և այդ դատական վերահսկողության բացակայությունը բխել է այնպիսի իրավական ակտից, որի համապատասխանությունը իրավական պետության պահանջներին կասկածի տեղիք է տալիս: Դատարանը, մասնավորապես, այս եզրակացությանը եկել է՝ հաշվի առնելով Հունգարիայում դատական համակարգի բարեփոխումների ընդհանուր համատեքստը, որոնք քննադատության են արժանացել ինչպես դիմումատուի, այնպես էլ մի շարք այլ հասարակական կազմակերպությունների, ինչպես նաև Եվրոպական միության արդարադատության դատարանի կողմից:

Մեկ այլ՝ *Grzęda ընդդեմ Լեհաստանի* գործով ևս Եվրոպական դատարանը գնահատման է ենթարկել ՄԻԵԿ 6-րդ հոդվածի կիրառելիության հարցը: Գործը վերաբերում է մի դատավորի, որը 2016 թվականին ընտրվել էր որպես Ազգային դատական խորհրդի անդամ՝ չորս տարի ժամկետով, սակայն 2015 թվականի խորհրդարանական ընտրություններից հետո նոր իշխանությունն առաջարկում է մի շարք օրենսդրական փոփոխություններ, որոնց ընդունմամբ Ազգային դատական խորհրդի անդամների ընտրության լիազորությունը Դատավորների ընդհանուր ժողովից փոխանցվում է Լեհաստանի խորհրդարանին, իսկ նոր կարգով ընտրված անդամների պաշտոնը ստանձնելուց մեկ օր առաջ նախկինում ընտրված դատավոր անդամների մանդատները *ex lege* դադարեցվում են: Այս գործով Եվրոպական դատարանը, անդրադառնալով իր *ratione materiae* իրավասությանը, նախ ընդգծում է, որ պետական ծառայողներից պահանջվող «հատուկ վստահությունը» չի կարող նույն կերպ կիրառվել դատավորների նկատմամբ, քանի որ վերջիններս պետք է հավատարիմ լինեն ոչ թե գործադիր իշխանությանը, այլ իրավունքի գերակայությանն ու ժողովրդավարությանը: Անդրադառնալով *Էսքելինեն* թեստի երկրորդ պայմանին՝ Եվրոպական դատարանը նշում է, որ այն պահպանված չէ, քանի որ Ազգային դատական խորհրդի հիմնական առաքելությունը դատական համակարգի անկախությունն ապահովելն է, իսկ Լեհաստանում իրականացված դատական բարեփոխումների արդյունքում գործադիր և օրենսդիր իշխանություններին տրվել է գրեթե մենաշնորհ Ազգային դատական խորհրդի կազմի ձևավորման հարցում, ինչը խաթարում է այդ մարմնի անկախությունը[17]:

Գյուլումյանը և մյուսներն ընդդեմ Հայաստանի գործով ևս Եվրոպական դատարանը հնարավորություն է ունեցել կիրառելու իր նախադեպային իրավունքը՝ ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածի կիրառելիության տեսանկյունից: Այսպես, եթե մինչև 2015 թվականին կատարված սահմանադրական փոփոխությունները ՀՀ սահմանադրական դատարանի դատավորները պաշտոնավարում էին մինչև 65 տարին լրանալը, այդ փոփոխություններով վերջիններիս մանդատը կրճատվեց և դարձավ տասներկու տարի, սակայն նույն փոփոխություններով նախատեսվեց, որ դրանց հետադարձ ուժ չի տրվելու, այսինքն՝ այն դատավորները, որոնք նշանակվել էին նախքան փոփոխությունների ուժի մեջ մտնելը, պետք է շարունակեին պաշտոնավարել մինչև ՀՀ սահմանադրությամբ սահմանված տարիքը լրանալը:

[17] *Grzęda ընդդեմ Լեհաստանի*, 15 մարտի 2022թ., գանգատ n° 43572/18, § 15:

Միևնույն ժամանակ, 2020 թվականին ընդունված սահմանադրական փոփոխություններով այն դատավորների պաշտոնավարման ժամկետը, որոնք արդեն իսկ տասներկու տարի և ավել պաշտոնավարել էին, վաղաժամկետ դադարեցվեցին, որոնց կողմից էլ գանգատներ ներկայացվեցին Եվրոպական դատարան: Քննարկելով 6-րդ հոդվածի 1-ին մասի կիրառելիության հարցը *Էսքելինեն* թեստի իմաստով՝ Դատարանը դրա առաջին պայմանի կապակցությամբ նշել է, որ նույնիսկ եթե ներպետական օրենսդրությամբ դատարան դիմելու իրավունքն ուղղակիորեն բացառված չէ, որոշ դեպքերում այն կարող է լինել անուղղակի, հատկապես երբ դա բխում է համապատասխան իրավանորմերի համակարգային վերլուծությունից՝ տվյալ պարագայում եզրահանգելով, որ ՀՀ սահմանադրական դատարանի դատավորների կողմից իրենց լիազորությունների վաղաժամկետ դադարեցման դեպքում դատարան դիմելու հնարավորությունը ՀՀ օրենսդրությամբ բացառված է:

Անդրադառնալով *Էսքելինեն* թեստի երկրորդ պայմանին՝ Եվրոպական դատարանը հանգում է այն հետևության, որ այն ևս պահպանված է՝ հաշվի առնելով մի շարք հանգամանքներ: Նախ, դատարանն ընդգծում է, որ Կոնվենցիան չի խոչընդոտում պետություններին իրականացնել լեգիտիմ և անհրաժեշտ դատահրավական բարեփոխումներ, սակայն որևէ նման բարեփոխում չպետք է վնասի դատական իշխանության անկախությանը[18]: Վերլուծելով գործի փաստերը՝ Եվրոպական դատարանը նշում է, որ դատավորների պաշտոնավարման դադարեցումն ուղղված չէր անձնապես դիմումատուներին, այլ մաս էր կազմում ընդհանուր սահմանադրական բարեփոխումների, որոնք ընդունվել էին դեռևս 2015 թվականին: Դատարանն ընդգծում է նաև Վենետիկի հանձնաժողովի կարծիքը իրականացվող բարեփոխումների վերաբերյալ, որի գնահատմամբ 2020 թվականի բարեփոխումները լեգիտիմ նպատակ ունեին՝ ապահովելու, որ 2018 թվականին ուժի մեջ մտած նոր ժողովրդավարական չափանիշներն ունենան իրական կիրառություն, և որ Սահմանադրական դատարանի բոլոր դատավորներն այսուհետ ունենան նույն կարգավիճակը, այսինքն՝ չլինեն դատավորներ, որոնք կպաշտոնավարեն մինչև իրենց համապատասխան տարիքը լրանալը, իսկ մյուսները կպաշտոնավարեն տասներկու տարի:

Երկրորդ առանցքային հանգամանքը, որ Եվրոպական դատարանի կողմից ուշադրության է արժանացել, ՀՀ սահմանադրական դատարանի հատուկ կարգավիճակն է ՀՀ իրավական համակարգում: Դատարանն ընդգծում է, որ չնայած ՍԴ-ն ընգրկված է Սահմանադրության այն նույն գլխում, ինչ մյուս դատարանները, սակայն այն ընդհանուր դատական համակարգի մաս չի կազմում: Այս բոլոր հանգամանքները Եվրոպական դատարանին թույլ են տալիս արձանագրել, որ վերջինս չունի տվյալ գործի նկատմամբ *ratione materiae* իրավասություն, այսինքն՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածը քաղաքացիական իմաստով կիրառելի չէ[19]:

[18] *Gumenyuk և մյուսներն ընդդեմ Ուկրաինայի*, 22 հուլիսի 2021թ., գանգատներ n° 11423/19 և այլք, § 43:
[19] *Գյուլումյանը և մյուսներն ընդդեմ Հայաստանի*, 7 սեպտեմբերի 2023թ., գանգատներ n° 11249/20 և այլք, § 77:

Այս որոշումը բացառիկ է նրանով, որ Եվրոպական դատարանը *Էքբելինեն* թեստի երկու պայմաններն էլ բավարարված է համարել, այսինքն՝ գտել է, որ ՀՀ օրենսդրությամբ համապատասխան վեճի կապակցությամբ դատարան դիմելու իրավունքը բացառված է, և նման բացառումը հետապնդել է իրավաչափ և օբյեկտիվորեն հիմնավորված նպատակ: Նման որոշման կայացումը վկայում է այն մասին, որ Եվրոպական դատարանն իր նախադեպային իրավունքը կիրառում է՝ հաշվի առնելով յուրաքանչյուր գործի քաղաքական և սոցիալական համատեքստը, որը վերջինիս թույլ է տալիս համոզվել՝ արդյոք Կոնվենցիայի հիմքում ընկած հիմնարար սկզբունքները՝ իրավունքի գերակայությունը և դատական իշխանության անկախությունը, պահպանվել են, թե ոչ:

Եզրակացություն

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավունքի վերլուծությունը՝ պետական պաշտոնյաների, այդ թվում՝ դատավորների մասնակցությամբ վեճերի նկատմամբ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի կիրառելիության վերաբերյալ, ցույց է տալիս, որ Եվրոպական դատարանը ձգում է ապահովել արդար դատաքննության իրավունքի կիրառումը բոլորի նկատմամբ՝ անկախ նրանց կարգավիճակից: Դրա վկայությունն է *Pellegrin-ի* գործով ընդունված գործառութային չափանիշի վերանայումը՝ հօգուտ 6-րդ հոդվածի կիրառելիության կանխավարկածի, բացառությամբ այն դեպքերի, երբ պատասխանող պետությունը կարողանում է հիմնավորել, որ իր ներքին օրենսդրությունը որոշ պաշտոնատար անձանց համար, օբյեկտիվ պատճառներով, բացառել է դատարան դիմելու հնարավորությունը:

Գրականության ցանկ (reference list, список литературы)

1. Gohar Galustian, « La révision sur la composition de la Cour constitutionnelle, d'Arménie ». *Revue du droit public*, n° 2, 2024.

Gohar Galustian, "The Revision of the Composition of the Constitutional Court of Armenia." Revue du droit public, No. 2, 2024.

2. Olivier Dubos, « L'inéluctable extension du champ d'application de l'article 6 de la CESDH au contentieux de la fonction publique », *La lettre juridique*, Octobre 2007.

Olivier Dubois, "The Inevitable Extension of the Scope of Application of Article 6 of the ECHR to Public Service Litigation." La lettre juridique, October 2007.

3. Robert Spano, « The Rule of Law as the Lodestar of the European Convention on Human Rights System », *European Human Rights Law Review*, 2021.

4. The decision of the European Court of Human Rights in the case of *Golder v. the United Kingdom* on February 21, 1975, application no. 4451/70.

5. The decision of the European Court of Human Rights in the case of *König v. Germany* on June 28, 1978, application no. 27.

6. The decision of the European Court of Human Rights in the case of *Feldbrugge v. the Netherlands* on May 29, 1986, application no. 8562/79.

7. The decision of the European Court of Human Rights in the case of *Glasenapp v. Germany* on August 28, 1986, application no. 9228/80.

8. The decision of the European Court of Human Rights in the case of *Pudas v. Sweden* on October 27, 1987, application no. 10426/83.

9. The decision of the European Court of Human Rights in the case of *Francesco Lombardo v. Italy* on November 26, 1992, application no. 25704/94.

10. The decision of the European Court of Human Rights in the case of *Pellegrin v. France* on December 8, 1999, application no. 28541/95.

11. The decision of the European Court of Human Rights in the case of *Frydlender v. France* on June 27, 2000, application no. 30979/96.

12. The decision of the European Court of Human Rights in the case of *Pitkevich v. Russia* on February 8, 2001, application no. 47936/99.

13. The decision of the European Court of Human Rights in the case of *Niegel v. France* on March 17, 2004, application no. 27793/95.

14. The decision of the European Court of Human Rights in the case of *Kępka v. Poland* on November 8, 2005, application no. 43978/98.

15. The decision of the European Court of Human Rights in the case of *Vilho Eskelinen and Others v. Finland* on April 19, 2007, application no. 63235/00.

16. The decision of the European Court of Human Rights in the case of *Pridatchenko and Others v. Russia* on June 21, 2007, application nos. 2191/03 and others.

17. The decision of the European Court of Human Rights in the case of *Suküt v. Turkey* on September 11, 2007, application no. 59773/00.

18. The decision of the European Court of Human Rights in the case of *Verešová v. Slovakia* on June 24, 2014, application no. 54787/09.

19. The decision of the European Court of Human Rights in the case of *Saghatelyan v. Armenia* on October 20, 2015, application no. 7984/06.

20. The decision of the European Court of Human Rights in the case of *Kamenos v. Cyprus* on October 31, 2017, application no. 147/07.

21. The decision of the European Court of Human Rights in the case of *Mnatsakanyan v. Armenia* on October 15, 2019, application no. 24603/12.

22. The decision of the European Court of Human Rights in the case of *Gumenyuk and Others v. Ukraine* on July 22, 2021, application nos. 11423/19 and others.

23. The decision of the European Court of Human Rights in the case of *Grzęda v. Poland* on March 15, 2022, application no. 43572/18.

24. The decision of the European Court of Human Rights in the case of *Petrova and Chornobryvets v. Ukraine* on June 15, 2023, application nos. 48653/18 and 50871/18.

25. The decision of the European Court of Human Rights in the case of *Gyulumyan and Others v. Armenia* on September 7, 2023, application nos. 11249/20 and others.

26. The decision of the European Court of Human Rights in the case of *Spūlis and Vaškevičs v. Latvia* on October 6, 2022, application nos. 2631/10 and 12253/10.

Elen Margaryan
Master's student in the Human Rights and International Justice program at Panthéon-Assas University (Paris II), Master of Laws at the Faculty of Law of the French University in Armenia.

THE ISSUE OF APPLICABILITY OF ARTICLE 6 OF THE EUROPEAN CONVENTION ON HUMAN RIGHTS AND FUNDAMENTAL FREEDOMS IN CASES CONCERNING PUBLIC OFFICIALS[20]

Abstract

The article examines the issue of the applicability of Article 6 of the European Convention on Human Rights which guarantees the right to a fair trial in relation to applications submitted to the European Court of Human Rights (ECtHR) by public officials/public servants concerning disputes arising from their official duties.

While in the early stages of the ECtHR's case law the applicability of Article 6 to disputes of a public nature was strictly limited, the Court's later case law demonstrates the primacy of the principle of equal access to Convention rights for all individuals under the jurisdiction of the state, regardless of their status, subject to certain exceptions.

The relevance and interest of the topic stem from the large number of complaints submitted to the ECtHR relating, for example, to employment disputes involving police officers or members of the armed forces. In recent years, particular attention has been given to the admissibility of complaints under Article 6 in cases concerning the dismissal of judges from office. In addressing this issue, the article analyzes the full body of the ECtHR's case law on the subject, from its earliest decisions to the decision in the case of *Gyulumyan and others v. Armenia*.

Keywords: right to a fair trial; Eskelinen test; disputes related to public service; European Court's case law.

[20] The article was presented on 05.05.2025 and was reviewed on 01.06.2025.

Элен Маргарян
Магистрант программы по правам человека и международному правосудию Университета Пантеон-Ассас (Париж II),
магистр юридического факультета Французского университета в Армении

ПРОБЛЕМА ПРИМЕНИМОСТИ СТАТЬИ 6 ЕВРОПЕЙСКОЙ КОНВЕНЦИИ О ЗАЩИТЕ ПРАВ ЧЕЛОВЕКА И ОСНОВНЫХ СВОБОД В ДЕЛАХ, КАСАЮЩИХСЯ ГОСУДАРСТВЕННЫХ СЛУЖАЩИХ[21]

Абстракт

В статье рассматривается вопрос о применимости статьи 6 Европейской конвенции по правам человека, гарантирующей право на справедливое судебное разбирательство, в связи с жалобами, поданными в Европейский суд по правам человека государственными должностными лицами/госслужащими по спорам, возникающим в рамках их официальных полномочий.

Если на раннем этапе судебной практики Суда применимость статьи 6 к спорам публичного характера была ограничена, то в последующем подход Суда демонстрирует приоритет принципа равного доступа к правам, гарантированным Конвенцией, для всех лиц, находящихся под юрисдикцией государства, независимо от их статуса, за исключением отдельных случаев.

Актуальность и интерес к рассматриваемой теме обусловлены большим количеством жалоб, подаваемых в Европейский суд, касающихся, например, трудовых споров с участием сотрудников полиции или вооружённых сил. В последние годы особое внимание уделяется вопросу приемлемости жалоб по статье 6 в делах об отстранении судей от должности. Для ответа на данный вопрос в статье проанализирован вся судебная практика Суда по данной теме, от первых решений до постановления по делу *Gyulumyan* и другие против Армении.

Ключевые слова: право на справедливое судебное разбирательство; тест Эскелинена; споры связанные с государственной службо; прецедентное право Европейского суда.

[21] Статья была представлена 05.05.2025 и прошла рецензирование 01.06.2025.

https://doi.org 10.59821/18294219-2025.1-boh14

Գևորգ Բարսեղյան
Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի ամբիոնի ասպիրանտ, դասախոս

ՕՊԵՐԱՏԻՎ-ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՆՑԱԿԱԶՄԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՄՈԴԵԼԱՎՈՐՄԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ[1]

Համառոտագիր

Օպերատիվ-հետախուզական գործունեության քրեաիրավական համապարփակ ապահովման համատեքստում կարևոր նշանակություն ունի օպերատիվ-հետախուզական գործունեության քրեաիրավական ապահովման պաշտպանող ուղղության զարգացումը: Այս ուղղության ձևավորման և/կամ կատարելագործման համար հոդվածում հետազոտվել են ՀՀ քրեական օրենսգրքի Հատուկ մասում նախատեսված համապատասխան հանցակազմերի լրամշակմանը և, ըստ անհրաժեշտության, նոր հանցակազմերի մշակմանը վերաբերող հարցերը, ինչը հնարավորություն կտա առավել արդյունավետ արձագանքելու օպերատիվ-հետախուզական գործունեության՝ օրենքով սահմանված կարգով իրականացման դեմ ուղղված արարքներին: Այս գործընթացը մենք անվանել ենք օպերատիվ-հետախուզական գործունեության ապահովմանն ուղղված հանցակազմերի իրավական մոդելավորում:

Հոդվածում առանձին մասերով հետազոտվել են անմիջականորեն օպերատիվ-հետախուզական գործունեության ապահովմանն ուղղված հանցակազմերի իրավական մոդելավորման հիմնախնդիրները, անմիջականորեն օպերատիվ-հետախուզական գործունեության ապահովմանը չուղղված հանցակազմերի իրավական մոդելավորման հիմնախնդիրները, ինչպես նաև հատուկ հետազոտման առարկա է դարձել օպերատիվ-հետախուզական միջոցառում(ներ) ապօրինի իրականացնելու քրեականացման անհրաժեշտությունը:

Հոդվածում իրականացված հետազոտության արդյունքներով օպերատիվ-հետախուզական գործունեության քրեաիարավական ապահովման պաշտպանող ուղղության ամբողջական ձևավորման նպատակով ներկայացվել են առաջարկներ՝ ուղղված Քրեական օրենսգրքի Հատուկ մասի մի շարք հոդվածների լրամշակմանը և «Օպերատիվ-հետախուզական միջոցառում ապօրինի իրականացնելը» վերտառությամբ նոր հոդվածի նախատեսմանը:

Հիմնաբառեր- օպերատիվ-հետախուզական գործունեություն, օպերատիվ-հետախուզական միջոցառում, քրեաիրավական ապահովում, օպերատիվ-հետա-

[1] Հոդվածը ներկայացվել է 21.04.2025թ., գրախոսվել է 10.06.2025թ.:

խուզական գործունեության քրեաիրավական ապահովման պաշտպանող ուղղություն, հանցակազմ, իրավական մոդելավորում, քրեականացում:

Ներածություն

Օպերատիվ-հետախուզական գործունեության քրեաիրավական համապարփակ ապահովման տեսանկյունից կարևոր նշանակություն ունի օպերատիվ-հետախուզական գործունեության քրեաիրավական ապահովման պաշտպանող ուղղությունը[2], որի ձևավորումը պետք է դրսևորվի ՀՀ քրեական օրենսգրքի[3] Հատուկ մասի համապատասխան հանցակազմերի լրամշակման կամ մշակման տեսքով: ՀՀ քրեական օրենսդրության արդիականացման հնարավորությունների հետազոտումը և դրա իրավական մոդելավորումը՝ Քրեական օրենսգրքում հատուկ հանցակազմերի նախատեսման նպատակով, պետք է իրականացվի Հատուկ մասի համապատասխան նորմերի հաշվառմամբ, որոնք ուղղված են օպերատիվ-հետախուզական գործունեության քրեաիրավական ապահովմանը: Հետևաբար հետազոտման առարկա նախ պետք է դառնան Քրեական օրենսգրքի Հատուկ մասի այն հանցակազմերը, որոնք ուղղված են օպերատիվ-հետախուզական գործունեության՝ օրենքով սահմանված կարգով իրականացման ապահովմանը:

Օպերատիվ-հետախուզական գործունեության առանձնահատկություններով պայմանավորված՝ այդ հանցակազմերը պայմանականորեն կարելի է դասակարգել հիմք ընդունելով հանցագործության օբյեկտը, ըստ որի՝ այդ հանցակազմերը կարող են դասակարգվել 2 հիմնական խմբերի՝

1. արարքներ, որոնք անմիջականորեն ուղղված են ՕՀԳ ապահովմանն ուղղված հասարակական հարաբերությունների դեմ,
2. արարքներ, որոնք ուղղված են հասարակական այլ հարաբերությունների դեմ, սակայն կարող են վնաս պատճառել նաև ՕՀԳ ապահովմանն ուղղված հասարակական հարաբերություններին:

Առաջին խմբի պարագայում հանցագործության անմիջական օբյեկտը ՕՀԳ ապահովմանն ուղղված հասարակական հարաբերություններն են: Իսկ երկրորդ խմբի դեպքում ՕՀԳ ապահովմանն ուղղված հասարակական հարաբերությունները ֆակուլտատիվ (լրացուցիչ) օբյեկտի դեր ունեն:

Օպերատիվ-հետախուզական գործունեության քրեաիրավական ապահովմանն ուղղված հանցակազմերը կարող են դասակարգվել՝ հիմք ընդունելով նաև հանցագործության սուբյեկտի հատկանիշները, ըստ որի այդ հանցակազմերը կարող են դասակարգվել 2 հիմնական խմբերի՝

1. օպերատիվ-հետախուզական գործունեության սուբյեկտների (ՕՀԳ իրականացնող մարմնի աշխատակցի կամ ՕՀԳ իրականացնող մարմնի հետ համա-

[2] Օպերատիվ-հետախուզական գործունեության քրեաիրավական ապահովման մասին առավել մանրամասն տե՛ս **Barseghyan G.** The Concept of Criminal-Legal Provision of Operational-Search Activities and a Brief Description of Its Directions, Պետություն և իրավունք N 2 (99) 2024, էջեր 162-173, https://www.researchgate.net/publication/389314520

[3] Տե՛ս ՀՀ քրեական օրենսգիրք: Ընդունվել է 05.05.2021թ., ուժի մեջ է մտել 01.07.2022թ., ՀՕ-199-Ն:

գործակցող անձի) կողմից կատարված, օպերատիվ-հետախուզական գործունեության՝ օրենքով սահմանված կարգով իրականացման ապահովման դեմ ուղղված հանցանքներ,

2. օպերատիվ-հետախուզական գործունեության սուբյեկտ չհանդիսացող անձի կողմից կատարված, օպերատիվ-հետախուզական գործունեության՝ օրենքով սահմանված կարգով իրականացման ապահովման դեմ ուղղված հանցանքներ:

Սույն հոդվածում մենք օպերատիվ-հետախուզական գործունեության ապահովմանն ուղղված հանցակազմերի հետազոտումն իրականացրել ենք այդ հանցակազմերի ըստ օբյեկտի դասակարգման շրջանակներում:

I. Անմիջականորեն օպերատիվ-հետախուզական գործունեության ապահովմանն ուղղված հանցակազմերի իրավական մոդելավորման հիմնախնդիրները

Անմիջականորեն օպերատիվ-հետախուզական գործունեության քրեաիրավական ապահովմանն ուղղված հանցակազմեր ամրագրված են Հատուկ մասի՝ «Արդարադատության շահերի դեմ ուղղված հանցագործությունները» վերտառությամբ 45-րդ գլխում: Այսպիսի տեղակայումը տրամաբանական է, քանզի օպերատիվ-հետախուզական գործունեությունը արդարադատության իրականացմանը օժանդակող բնույթ ունի, հետևաբար օպերատիվ-հետախուզական գործունեության՝ օրենքով սահմանված կարգով իրականացման ապահովման դեմ ուղղված հանցագործությունների տեսակային օբյեկտը արդարադատության շահերն են:

Արդարադատության շահերի դեմ ուղղված հանցագործությունները հայրենական քրեական իրավունքի տեսությունում որոշ չափով հետազոտված են: Այսպես, տեսաբանների կարծիքով՝ «... Արդարադատության մարմինները իրենց առջև դրված խնդիրների և գործունեության մեթոդների յուրահատկության հետևանքով հատուկ տեղ են զբաղեցնում իշխանության մարմինների համակարգում: Արդարադատության մարմինների հիմնական խնդիրը արդարադատության իրականացումն է, որն իրագործվում է քրեական, քաղաքացիական և վարչական դատավարությունների միջոցով: Նշված յուրահատկությունը հիմք է հանդիսանում արդարադատության դեմ ուղղված հանցագործությունները քրեական օրենսգրքի հատուկ մասի ինքնուրույն գլխում նախատեսելու համար:

ՀՀ-ում արդարադատություն իրականացնում են միայն դատարանները, որոնց գործունեությունը, սակայն, սերտորեն կապված է իրավապահ մարմինների գործունեության հետ: Իրենց գործունեությամբ այս մարմինները նպաստում են արդարադատության իրականացմանը: Դրա համար էլ վերջիններիս նորմալ գործունեության դեմ ուղղված հանցագործությունները նույնպես համարվում են արդարադատության դեմ ուղղված հանցագործություններ» [4]:

[4] Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Հատուկ մաս (վեցերորդ հրատարակություն՝ փոփոխություններով և լրացումներով), Երևանի պետական համալսարան, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2012թ., էջ 874

Քրեական օրենսգրքի՝ «Ապացույցներ, բացատրություններ կամ դատավարական փաստաթղթեր կամ օպերատիվ-հետախուզական միջոցառման արդյունքով ստացված տվյալներ կամ առարկաներ կեղծելը, փոխելը, ոչնչացնելը կամ թաքցնելը կամ կեղծ ապացույցներ ներկայացնելը» վերտառությամբ 479-րդ հոդվածի 1-ին մասը քրեական պատասխանատվություն է սահմանում օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքով ստացված տվյալ, փաստաթուղթ կամ առարկա կամ քաղաքացիական գործով, քրեական կամ վարչական գործով կամ վարույթով ապացույց, բացատրություն կամ դատավարական փաստաթուղթ կեղծելու, փոխելու, ոչնչացնելու կամ թաքցնելու կամ քաղաքացիական գործով, քրեական կամ վարչական գործով կամ վարույթով կեղծ ապացույց ներկայացնելու համար: Մեջբերված հոդվածը ՀՀ քրեական օրենսգրքի Հատուկ մասի այս պահին միակ հանցակազմն է, որտեղ ուղղակիորեն նշված են «օպերատիվ-հետախուզական գործունեություն» բառերը: Այն մեզ հետաքրքրող համատեքստում ուղղված է ՕՀԳ՝ օրենքով սահմանված կարգով իրականացման ապահովմանը՝ քրեական պատասխանատվություն նախատեսելով օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքով ստացված տվյալ, փաստաթուղթ կամ առարկա կեղծելու, փոխելու, ոչնչացնելու կամ թաքցնելու համար:

Ընդ որում, հիշատակված հոդվածի՝ մինչև 2024 թվականի փետրվարի 6-ը գործած տարբերակն ուներ այլ բովանդակություն. «քաղաքացիական, վարչական կամ քրեական գործով կամ վարչական վարույթով ապացույց, բացատրություն կամ դատավարական փաստաթուղթ կամ օպերատիվ-հետախուզական միջոցառման արդյունքով ստացված տվյալ կամ առարկա կեղծելը, փոխելը, ոչնչացնելը կամ թաքցնելը կամ կեղծ ապացույց ներկայացնելը»: Այս սկզբնական տարբերակը պրակտիկայում տարընթերցումներ էր առաջացնում. նորմը մեկնաբանվում էր այնպես, որ քրեական պատասխանատվություն կարող էր առաջացնել միայն նախաձեռնված գործի կամ վարույթի շրջանակներում օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքով ստացված տվյալ կամ առարկա կեղծելու, փոխելու, ոչնչացնելու կամ թաքցնելու համար, մինչդեռ, Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, օպերատիվ-հետախուզական միջոցառումներն ամբողջ ծավալով իրականացվում են ինչպես օպերատիվ-հետախուզական մարմինների կողմից իրենց վերապահված հիմնական խնդիրների իրականացման շրջանակներում, *որպես ինքնուրույն գործունեություն*, այնպես էլ նախաձեռնված քրեական վարույթի իրականացվող հետաքննության շրջանակներում որպես օժանդակող գործունեություն:

Հարկ ենք համարում նաև ընդգծել, որ քննարկվող հոդվածի վերտառության և բովանդակության միջև առկա է որոշակի անհամապատասխանություն: Այսպես, քննարկվող հոդվածը քրեական պատասխանատվություն է նախատեսում օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքով ստացված տվյալ, փաստաթուղթ կամ առարկա կեղծելու, փոխելու, ոչնչացնելու կամ թաքցնելու համար, մինչդեռ հոդվածի վերտառությունում հստակորեն նշված է օպերատիվ-

հետախուզական միջոցառման արդյունքով ստացված տվյալներ կամ առարկաներ կեղծելը, փոխելը, ոչնչացնելը կամ թաքցնելը: Ինչպես արդեն նշեցինք, հոդվածի բովանդակությունը տարընթերցումները բացառելու նպատակով փոփոխվել է, սակայն Քրեական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին 2024 թվականի փետրվարի 6-ին ուժի մեջ մտած ՀՕ-31-Ն օրենքը[5], վերախմբագրելով 479-րդ հոդվածի բովանդակությունը, վերնագրում անհրաժեշտ հստակեցում և խմբագրում չի իրականացրել: Ակնհայտ է, որ օպերատիվ-հետախուզական գործունեության քրեաիրավական ապահովման տեսանկյունից հոդվածի վերնագրի բովանդակությունը և շեշտադրումն ավելի նեղ են, քան հոդվածի բովանդակությունը, քանի որ օպերատիվ-հետախուզական գործունեությունը և օպերատիվ-հետախուզական միջոցառումը գտնվում են ամբողջի և մասի հարաբերակցության մեջ: Հետևաբար առաջարկում ենք Քրեական օրենսգրքի 479-րդ հոդվածի վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ *«Ապացույցներ, բացատրություններ կամ դատավարական փաստաթղթեր կամ օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքում ստացված տվյալներ, փաստաթղթեր կամ առարկաներ կեղծելը, փոխելը, ոչնչացնելը կամ թաքցնելը կամ կեղծ ապացույցներ ներկայացնելը»:*

Հաջորդ հանցակազմը, որը որոշ չափով ուղղված է ՕՀԳ քրեաիրավական ապահովմանը, «Քրեական վարույթի տվյալներ հրապարակելը» վերտառությամբ 483-րդ հոդվածն է, որի 1-ին մասը քրեական պատասխանատվություն է նախատեսում առանց իրավասու մարմնի կամ անձի թույլտվության՝ հրապարակման ոչ ենթակա՝ մինչդատական կամ դատական վարույթի տվյալ հրապարակելու համար: Հիշյալ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը պատասխանատվություն է նախատեսում նույն արարքի համար, որը կատարվել է այն անձի կողմից, որին այդ տվյալը հայտնի է դարձել իր ծառայողական լիազորությունների իրականացման առնչությամբ:

Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին օրենքի[6] 12-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ [օպերատիվ հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների հետ համագործակցող] անձինք պարտավոր են չհրապարակել համագործակցության առնչությամբ իրենց հայտնի դարձած տեղեկությունները:

Հիշատակված հոդվածով քրեական պատասխանատվության կարող են ենթարկվել ՕՀԳ իրականացնող անձինք, եթե առանց իրավասու մարմնի կամ անձի թույլտվության հրապարակեն հրապարակման ոչ ենթակա՝ մինչդատական կամ դատական վարույթի տվյալ: Սակայն, ինչպես արդեն նշեցինք, օպերատիվ-հետախուզական միջոցառումներն ամբողջ ծավալով կարող են իրականացվել

[5] Տե՛ս ՀՀ քրեական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին համար ՀՕ-31-Ն օրենքը, ընդունվել է 2024 թվականի հունվարի 16-ին, ուժի մեջ մտել 2024 թվականի փետրվարի 6-ին: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=189458 (05.01.2025):

[6] Տե՛ս ՀՀ օրենքը Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին: Ընդունվել է 22.10.2007թ., ուժի մեջ է մտել 08.12.2007թ., ՀՕ-223-Ն:

նաև որպես ինքնուրույն գործունեություն, հետևաբար ՕՀԳ իրականացնող սուբյեկտները կարող են նաև հրապարակել հրապարակման ոչ ենթակա տվյալ՝ անկախ վարույթի (մինչդատական կամ դատական) առկայությունից: Այս հանգամանքին, սակայն, բավարար ուշադրություն չի դարձվել:

Վերը շարադրվածով պայմանավորված՝ առաջարկում ենք 483-րդ հոդվածի վերնագիրը և 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ *«Քրեական վարույթի կամ օպերատիվ-հետախուզական գործունեության տվյալներ հրապարակելը*

Առանց իրավասու մարմնի կամ անձի թույլտվության՝ հրապարակման ոչ ենթակա՝ մինչդատական կամ դատական վարույթի, ինչպես նաև օպերատիվ-հետախուզական գործունեության տվյալ հրապարակելը, եթե բացակայում են սույն օրենսգրքի 426-րդ կամ 427-րդ հոդվածով նախատեսված հանցանքների հատկանիշները՝»:

Լրամշակման առաջարկվող տարբերակում նեգատիվ հատկանիշի ամրագրումը (եթե բացակայում են սույն օրենսգրքի 426-րդ կամ 427-րդ հոդվածով նախատեսված հանցանքների հատկանիշները) պայմանավորված է այն հանգամանքով, որ Օրենսգրքի՝ «Պետական գաղտնիք պարունակող տեղեկություններ հրապարակելը» վերտառությամբ 427-րդ հոդվածը պատասխանատվություն է նախատեսում պետական գաղտնիք պարունակող տեղեկություն հրապարակելու համար այն անձի կողմից, որը դրա հետ ծանոթանալու իրավունք ուներ, եթե բացակայում են սույն օրենսգրքի 418-րդ հոդվածով նախատեսված հանցանքի հատկանիշները: Իսկ Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին օրենքի՝ «Օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների մասին տեղեկությունների պաշտպանությունը» վերտառությամբ 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ օպերատիվ-հետախուզական միջոցառումների անցկացման ընթացքում օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների ուժերի, միջոցների ու աղբյուրների, մեթոդների, պլանների, այդ միջոցառումների արդյունքների, դրանց ֆինանսավորման, օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների հաստիքային գաղտնի աշխատակիցների, ինչպես նաև այդ մարմինների հետ գաղտնիության հիման վրա համագործակցող և համագործակցած անձանց մասին տեղեկությունները հանդիսանում են պետական գաղտնիք: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների հաստիքային գաղտնի աշխատակիցների և այդ մարմինների հետ գաղտնիության հիման վրա համագործակցող անձանց մասին տեղեկությունների հրապարակումը թույլատրվում է միայն նրանց գրավոր համաձայնությամբ կամ օրենքով նախատեսված դեպքերում՝ պետական գաղտնիքի հրապարակման համար օրենքով սահմանված կարգով:

Գործող իրավակարգավորումների պայմաններում որպես ինքնուրույն գործունեություն իրականացվող օպերատիվ-հետախուզական գործունեության վերաբերյալ Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին օրենքի իմաստով

պետական գաղտնիք չհամարվող տեղեկության ապօրինի հրապարակումը քրեական պատասխանատվություն չի առաջացնում, ինչը, մեր կարծիքով, արդարացված չէ: Հնարավոր են դեպքեր, երբ օպերատիվ-հետախուզական գործունեության վերաբերյալ տվյալներ հայտնի լինեն և հրապարակվեն այնպիսի անձի կողմից, որն Օրենսգրքի «Պետական գաղտնիք պարունակող տեղեկություններ հրապարակելը» վերտառությամբ 427-րդ հոդվածի կամ «Պետական գաղտնիք պարունակող տեղեկություններ ապօրինի ձեռք բերած անձի կողմից դրանք հրապարակելը» վերտառությամբ 426-րդ հոդվածի իմաստով սուբյեկտ չհամարվի. 427-րդ հոդվածի պարագայում՝ չհանդիսանա հանցագործության [հատուկ] սուբյեկտ՝ անձ, որը պետական գաղտնիք պարունակող տեղեկությանը ծանոթանալու իրավունք ուներ, իսկ 426-րդ հոդվածի դեպքում՝ պետական գաղտնիք պարունակող տեղեկությունը ձեռք բերած չլինի հափշտակելու, սպառնալիքի, բռնություն գործադրելու, խաբեության կամ այլ ապօրինի եղանակով (օրինակ՝ իր կամքից անկախ ներկա եղած լինի որևէ խոսակցության):

Վերը շարադրվածն առավել առարկայական պատկերացնելու համար դիտարկենք մի իրավիճակ, երբ պետական գաղտնիք պարունակող տեղեկությանը ծանոթանալու իրավունք չունեցող և նման տեղեկություն ապօրինի ձեռք չբերած անձը՝ Ա.-ն, հայտնում է Բ.-ին, որ, ըստ իր լսած տեղեկության/խոսակցության, Բ.-ի նկատմամբ նախատեսվում է իրականացնել օպերատիվ-հետախուզական միջոցառում, ինչի արդյունքում Բ.-ն սկսում է դրսևորել իրավաչափ վարքագիծ, որի հետևանքով է տապալվում էլ օպերատիվ-հետախուզական միջոցառումը:

Քննարկենք մեկ այլ իրավիճակ ևս: Պետական գաղտնիք պարունակող տեղեկությանը ծանոթանալու իրավունք չունեցող և նման տեղեկություն ապօրինի ձեռք չբերած անձը՝ Ա.-ն, հայտնում է հանցավոր կազմակերպություն ղեկավարող Բ.-ին, որ, ըստ իրեն պատահականորեն հայտնի դարձած տեղեկության, Բ.-ի նկատմամբ կարող է իրականացվել օպերատիվ-հետախուզական միջոցառում: Կարճ ժամանակ անց Բ.-ն, կարծելով, որ հանցավոր կազմակերպության անդամ Գ.-ն հավաքագրվել է իրավապահ մարմինների կողմից և համագործակցում է նրանց հետ, պատվիրում է սպանել Գ.-ին: Գործի քննությամբ պարզվում է, որ Գ.-ն իրոք «օպերատիվ ներդրում» օպերատիվ-հետախուզական միջոցառման շրջանակներում եղել է Ոստիկանության հետ գաղտնի հիմունքներով համագործակցող անձ:

Քննարկվող համատեքստում հարկ է հիշատակել Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասը, որի համաձայն՝ օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինները պարտավոր են ապահովել օպերատիվ-հետախուզական միջոցառումների նախապատրաստմանն ու անցկացմանը ներգրավված անձանց և նրանց ընտանիքի անդամների պաշտպանությունը, եթե առկա է նրանց կյանքին և առողջությանը սպառնացող իրական վտանգ, որը պայմանավորված է այդ մարմինների հետ նրանց համագործակցությամբ:

Հետևաբար, կարծում ենք՝ նմանատիպ դեպքերը ևս պետք է ստանան համապատասխան քրեաիրավական արձագանք՝ քրեական պատասխանատվության և պատժի տեսքով:

Նմանատիպ իրավիճակները քրեաիրավական արձագանքման դիտանկյունից ունեն 2 լուծում: Առաջին, Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին օրենքի՝ «Օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների մասին տեղեկությունների պաշտպանությունը» վերտառությամբ 41-րդ հոդվածը ենթարկել լրամշակման՝ ընդլայնելով պետական գաղտնիք համարվող տեղեկության շրջանակը: Երկրորդ, լրամշակել Քրեական օրենսգրքի 483-րդ հոդվածը՝ քրեական պատասխանատվություն նախատեսելով նաև օպերատիվ-հետախուզական գործունեության վերաբերյալ պետական գաղտնիք չհամարվող տեղեկություն հրապարակելու համար:

Մեր կարծիքով՝ իրավական տեխնիկայի տեսանկյունից առավել ընդունելի է երկրորդ տարբերակը, քանի որ Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին օրենքում հնարավոր չէ նախատեսել պետական գաղտնիք համարվող տեղեկության սպառիչ ցանկ, իսկ եթե անգամ հնարավոր է, ապա ցանկալի չէ, քանզի դա արհեստականորեն հանգեցնելու է պետական գաղտնիքի իրավական ռեժիմով պաշտպանվող տեղեկության շրջանակի անհարկի ընդլայնման:

Օպերատիվ-հետախուզական գործունեության քրեաիրավական ապահովման տեսանկյունից հետազոտական հետաքրքրություն ներկայացնող մյուս հանցակազմը «Արդարադատության իրականացմանը կամ գործի քննությանը միջամտելը» վերտառությամբ 486-րդ հոդվածն է, որի 1-ին մասը պատասխանատվություն է նախատեսում արդարադատության կամ որպես դատարան՝ օրենքով նախատեսված այլ լիազորությունների իրականացումը խոչընդոտելու նպատակով դատարանի գործունեությանը կամ գործի քննությունը խոչընդոտելու նպատակով դատախազի, քննիչի, քննչական մարմնի ղեկավարի, հետաքննության մարմնի, փաստաբանի կամ ներկայացուցչի գործունեությանը ցանկացած ձևով միջամտելու համար:

Հիշատակված հանցակազմը մեր աշխատանքի շրջանակներում հետազոտական հետաքրքրություն է ներկայացնում այնքանով, որքանով քրեական պատասխանատվություն է նախատեսում գործի քննությունը խոչընդոտելու նպատակով հետաքննության մարմնի գործունեությանը ցանկացած ձևով միջամտելու համար:

Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին օրենքի՝ սույն հետազոտությունում բազմիցս հիշատակված 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ օպերատիվ-հետախուզական միջոցառումներն ամբողջ ծավալով իրականացվում են ինչպես օպերատիվ-հետախուզական մարմինների կողմից իրենց վերապահված հիմնական խնդիրների իրականացման շրջանակներում, որպես ինքնուրույն գործունեություն, այնպես էլ նախաձեռնված քրեական վարույթի իրականացվող հետաքննության շրջանակներում որպես օժանդակող գործունեություն: Նույն օրենքի՝ «Օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող

մարմինները» վերտառությամբ 8-րդ հոդվածի 1-ին մասը, թվարկելով ՕՀԳ իրականացնելու լիազորություն ունեցող մարմինների ցանկը, նշում է, որ այդ մարմիններն ունեն 2 իրավասություն՝ 1-ին՝ օրենքով իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնելու, 2-րդ՝ քրեական վարույթի շրջանակներում օրենքով նախատեսված դեպքերում և կարգով հետաքննություն կատարելու:

Քրեական դատավարության օրենսգրքի[7] 6-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի համաձայն՝ հետաքննության մարմինը «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքով նախատեսված պետական մարմնի համակարգում գործող և օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող ստորաբաժանման ղեկավարը (հետաքննության մարմնի պետը) և աշխատակիցներն (հետաքննիչներն) են, որոնք նախաքննության շրջանակներում իրավասու են կատարելու գաղտնի քննչական գործողություններ և օպերատիվ-հետախուզական միջոցառումներ:

Մեջբերված իրավակարգավորումներից պարզ է դառնում, որ քննարկվող հանցակազմը համապարփակ կերպով չի իրականացնում ՕՀԳ քրեաիրավական ապահովումը, քանի որ քրեական պատասխանատվություն է նախատեսում ՕՀԳ դեմ ուղղված հանցագործության համար նախաձեռնված վարույթի կամ գործի առկայության պարագայում միայն, ինչը չհիմնավորված և չարդարացված տարբերակված մոտեցում է: Հիշյալ հոդվածում ուղղակիորեն շեշտադրված են գործի քննությանը խոչընդոտելու նպատակը և հետաքննության մարմնի գործունեությանը ցանկացած ձևով միջամտելու հանգամանքը:

Առաջարկում ենք Քրեական օրենսգրքի 486-րդ հոդվածի վերնագիրը վերաշարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «*Արդարադատության իրականացմանը, գործի քննությանը կամ օպերատիվ-հետախուզական գործունեությանը միջամտելը*»: 486-րդ հոդվածի 1-ին մասը վերաշարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «*Արդարադատության կամ որպես դատարան՝ օրենքով նախատեսված այլ լիազորությունների իրականացումը խոչընդոտելու նպատակով դատարանի գործունեությանը կամ գործի քննությունը խոչընդոտելու նպատակով դատախազի, քննիչի, քննչական մարմնի ղեկավարի, հետաքննության մարմնի, փաստաբանի կամ ներկայացուցչի գործունեությանը, ինչպես նաև որպես ինքնուրույն գործունեություն իրականացվող օպերատիվ-հետախուզական գործունեությանը ցանկացած ձևով միջամտելը*՝»:

Քրեական օրենսգրքում տեղ գտած հաջորդ հանցակազմը, որն ուղղված է ՕՀԳ քրեաիրավական ապահովման որոշակի հատվածի կարգավորմանը «Դատավորի, դատախազի, քննիչի, քննչական մարմնի ղեկավարի, հետաքննության մարմնի, փաստաբանի, ներկայացուցչի, փորձագետի կամ հարկադիր կատարողի նկատմամբ սպառնալիքը կամ նրանց մասին տեղեկություն հրապարակելը կամ նրանց գույքը ոչնչացնելը կամ վնասելը կամ նրանց նկատմամբ բռնություն

[7] Տե՛ս ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք: Ընդունվել է 30.06.2021թ., ուժի մեջ է մտել 01.07.2022թ., ՀՕ-306-Ն:

գործադրելը» վերտառությամբ 490-րդ հոդվածն է: Այս հոդվածի 1-ին մասը քրեական պատասխանատվություն է նախատեսում դատավորի, դատախազի, քննիչի, քննչական մարմնի ղեկավարի, հետաքննության մարմնի, փաստաբանի, ներկայացուցչի, փորձագետի կամ հարկադիր կատարողի կամ նշված անձանց մերձավոր ազգականի կամ մերձավորի կամ նշված անձանց դաստիարակության, խնամքի կամ հսկողության տակ գտնվողի մասին արատավորող կամ նշված անձանց իրավունքներին ու օրինական շահերին այլ վնաս պատճառող տեղեկություն հրապարակելու կամ նրանց նկատմամբ բռնություն գործադրելու, գույքը ոչնչացնելու կամ վնասելու սպառնալիքի համար՝ կապված նշված անձանց օրինական ծառայողական կամ մասնագիտական գործունեության կամ բացառապես դատավոր, դատախազ, քննիչ, քննչական մարմնի ղեկավար, հետաքննության մարմին, փաստաբան, ներկայացուցիչ, փորձագետ կամ հարկադիր կատարող կամ նշված անձանց մերձավոր ազգական կամ մերձավոր կամ նշված անձանց դաստիարակության, խնամքի կամ հսկողության տակ գտնվող լինելու հանգամանքի հետ: Հիշատակված հոդվածի 2-րդ մասը պատասխանատվություն է նախատեսում սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված անձանց մասին արատավորող կամ նշված անձանց իրավունքներին ու օրինական շահերին այլ վնաս պատճառող տեղեկություն հրապարակելու կամ նշված անձանց գույքը ոչնչացնելու կամ վնասելու համար՝ կապված նշված անձանց օրինական ծառայողական կամ մասնագիտական գործունեության հետ: Քննարկվող հոդվածի 3-րդ մասը պատասխանատվություն է նախատեսում սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված անձանց նկատմամբ բռնություն գործադրելու՝ կապված նշված անձանց օրինական ծառայողական կամ մասնագիտական գործունեության հետ:

Առաջարկում ենք Քրեական օրենսգրքի 490-րդ հոդվածի վերնագիրը վերաշարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «*Դատավորի, դատախազի, քննիչի, քննչական մարմնի ղեկավարի, հետաքննության մարմնի, <u>օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող անձի</u>, փաստաբանի, ներկայացուցչի, փորձագետի կամ հարկադիր կատարողի նկատմամբ սպառնալիքը կամ նրանց մասին տեղեկություն հրապարակելը կամ նրանց գույքը ոչնչացնելը կամ վնասելը կամ նրանց նկատմամբ բռնություն գործադրելը*»:

Քննարկվող հոդվածի 1-ին մասը վերաշարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «*Դատավորի, դատախազի, քննիչի, քննչական մարմնի ղեկավարի, հետաքննության մարմնի, <u>օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող անձի</u>, փաստաբանի, ներկայացուցչի, փորձագետի կամ հարկադիր կատարողի կամ նշված անձանց մերձավոր ազգականի կամ մերձավորի կամ նշված անձանց դաստիարակության, խնամքի կամ հսկողության տակ գտնվողի մասին արատավորող կամ նշված անձանց իրավունքներին ու օրինական շահերին այլ վնաս պատճառող տեղեկություն հրապարակելու կամ նրանց նկատմամբ բռնություն գործադրելու, գույքը ոչնչացնելու կամ վնասելու սպառնալիքը՝ կապված նշված անձանց օրինական ծառայողական կամ մասնագիտական գործունեության կամ բացառապես դատավոր, դատախազ, քննիչ, քննչական մարմնի ղեկավար,*

հետաքննության մարմին, <u>օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող անձ</u>, փաստաբան, ներկայացուցիչ, փորձագետ կամ հարկադիր կատարող կամ նշված անձանց մերձավոր ազգական կամ մերձավոր կամ նշված անձանց դաստիարակության, խնամքի կամ հսկողության տակ գտնվող լինելու հանգամանքի հետ»:

II. Անմիջականորեն օպերատիվ-հետախուզական գործունեության ապահովմանը չուղղված հանցակազմերի իրավական մոդելավորման հիմնախնդիրները

Սույն հոդվածում մինչ այս քննարկած հանցակազմերում օպերատիվ-հետախուզական գործունեությունը դիտարկվել և հետազոտվել է որպես հանցագործության հիմնական անմիջական օբյեկտ: Սակայն հնարավոր են նաև բազմաթիվ դեպքեր, երբ օպերատիվ-հետախուզական գործունեությունը լինի հանցագործության լրացուցիչ, որպես կանոն՝ ֆակուլտատիվ լրացուցիչ անմիջական օբյեկտ: Ասվածը հնարավոր է այն հանցակազմերի դեպքերում, որոնցում նկարագրված հանցագործությունները կարող են ուղղված լինել նաև օպերատիվ-հետախուզական գործունեության՝ օրենքով սահմանված կարգով իրականացման դեմ: Թեև օպերատիվ-հետախուզական գործունեությունը, ի թիվս այլ սկզբունքների, իրականացվում է մարդու իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության ու գերակայության սկզբունքի հիման վրա, այդուամենայնիվ օպերատիվ-հետախուզական գործունեության, հատկապես՝ որոշակի օպերատիվ-հետախուզական միջոցառումների ընթացքում, պայմանավորված դրանց բնույթով, էապես սահմանափակվում են մարդու իրավունքները և ազատությունները: Հետևաբար, օպերատիվ-հետախուզական գործունեության՝ օրենքով սահմանված կարգով իրականացման ապահովմանն ուղղված հասարակական հարաբերությունները կարող են ոտնձգվել, առաջին հերթին, Քրեական օրենսգրքի՝ «Սահմանադրական իրավունքների և ազատությունների դեմ ուղղված հանցագործությունները» վերտառությամբ 28-րդ գլխում ամրագրված որոշ հոդվածներում նկարագրված հանցագործություններ հետևանքով:

Քննարկվող համատեքստում ամենավերաբերելին, թերևս, «Նամակագրության, հեռախոսային խոսակցությունների և հաղորդակցության այլ ձևերի գաղտնիությունը խախտելը» վերտառությամբ 206-րդ հոդվածն է: Հիշյալ հոդվածի 1-ին մասը պատասխանատվություն է նախատեսում մարդու նամակագրության, հեռախոսային խոսակցությունների և հաղորդակցության այլ ձևերի գաղտնիությունն ապօրինի խախտելու համար, իսկ 2-րդ մասը նույն արարքի համար, որը կատարվել է՝ 1) իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով կամ 2) տեղեկության գաղտնի հավաքման համար նախատեսված տեխնիկական հատուկ միջոց օգտագործելով:

Օրենսդրությամբ նախատեսված հիմքերի և պահանջների առկայությամբ «Նամակագրության, և այլ ոչ թվային հաղորդակցության վերահսկում» կամ

«Թվային, այդ թվում՝ հեռախոսային հաղորդակցության վերահսկում» օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելը, բնականաբար, չի կարող առաջացնել քրեական պատասխանատվություն: Սակայն հիշատակված օպերատիվ-հետախուզական միջոցառումներ ապօրինի իրականացնելը, բնականաբար, պարունակելու է 206-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի հատկանիշներ՝ առաջացնելով քրեական պատասխանատվություն: Ընդ որում, նամակագրության, հեռախոսային խոսակցությունների և հաղորդակցության այլ ձևերի գաղտնիությունը խախտելը, որը օպերատիվ-հետախուզական միջոցառման շրջանակներում ամենայն հավանականությամբ կատարված է լինելու իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով կամ տեղեկության գաղտնի հավաքման համար նախատեսված տեխնիկական հատուկ միջոց օգտագործելով, պետք է որակվի 206-րդ հոդվածի 2-րդ մասով:

«Նամակագրության, հեռախոսային խոսակցությունների և հաղորդակցության այլ ձևերի գաղտնիությունը խախտելը» վերտառությամբ 206-րդ հոդվածի բովանդակությունից պարզ է, որ մարդու նամակագրության, հեռախոսային խոսակցությունների և հաղորդակցության այլ ձևերի գաղտնիությունը ապօրինի իրականացված օպերատիվ-հետախուզական միջոցառման հետևանքով խախտելն ինքնին քրեաիրավական արձագանքման չի արժանացել, ինչը, մեր կարծիքով, արդարացված չէ: Օրինակ՝ քրեակատարողական հիմնարկի օպերատիվ ստորաբաժանման կողմից օրենսդրությամբ սահմանված կարգի խախտմամբ «թվային, այդ թվում՝ հեռախոսային հաղորդակցության վերահսկում» օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնելու դեպքում հանցանք կատարած անձի արարքը որակվելու է 206-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, համապատասխան հատկանիշների առկայության դեպքում՝ նաև 2-րդ կետով, ինչպես նաև բաղկացական հանցագործությունների որակման կանոններով (Օրենսգրքի 52-րդ հոդվածի 6-րդ մաս) և հանցակազմի անհրաժեշտ հատկանիշների առկայության պարագայում՝ Օրենսգրքի՝ «Պաշտոնատար անձի կողմից իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունը չարաշահելը կամ լիազորություններն անցնելը» վերտառությամբ 441-րդ հոդվածի համապատասխան մասով:

Շարադրվածից պարզ է դառնում, որ օպերատիվ-հետախուզական միջոցառման ապօրինի իրականացման հանգամանքն ինքնին՝ որպես ինքնուրույն գոյություն ունեցող փաստ, քրեաիրավական առանձին գնահատականի չի արժանանում. այդ հանգամանքը քրեաիրավական մասնակի գնահատման է արժանանում 441-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի շրջանակներում, այլ էլ տվյալ հանցակազմի պարտադիր հատկանիշների առկայության դեպքում միայն: Սակայն նմանատիպ իրավիճակներում հնարավոր են դեպքեր, երբ անձի արարքը հնարավոր չլինի որակել 441-րդ հոդվածով՝ հանցակազմի պարտադիր հատկանիշ հանդիսացող հետևանքի, այն է՝ անձի կամ կազմակերպության իրավունքներին, ազատություններին կամ օրինական շահերին կամ հասարակության կամ

պետության օրինական շահերին էական վնաս պատճառած լինելը, բացակայության պատճառով (հանցակազմը, ըստ օրենսդրական նկարագրման եղանակի, նյութական է): *Շարադրվածով պայմանավորված՝ կարծում ենք՝ օպերատիվ-հետախուզական միջոցառումներ ապօրինի իրականացնելը պետք է արժանանա ինքնուրույն քրեաիրավական գնահատականի, նաև որպես Քրեական օրենսգրքի 441-րդ հոդվածի հատուկ դրսևորում:*

Քննարկվող համատեքստում հետազոտական հետաքրքրություն ներկայացնող հաջորդ հանցակազմը «Բնակարանի անձեռնմխելիությունը խախտելը» վերտառությամբ 207-րդ հոդվածն է, որի 1-ին մասը պատասխանատվություն է նախատեսում մարդու կամքին հակառակ կամ կամքն անտեսելով նրա բնակարան ապօրինի մուտք գործելու համար, իսկ 2-րդ մասը՝ նույն արարքի համար, որը կատարվել է՝ 1) իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով կամ 2) բռնություն գործադրելով կամ բռնություն գործադրելու սպառնալիքով:

Հիշատակված հոդվածի դեպքում նույնպես, ինչպես և 206-րդ հոդվածի պարագայում, ապօրինի կերպով իրականացված օպերատիվ-հետախուզական միջոցառումը՝ տվյալ դեպքում «ներքին դիտումը», քրեաիրավական ինքնուրույն գնահատականի չի արժանացել: Օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող անձը օրենսդրությամբ նախատեսված հիմքերի կամ պայմանների խախտմամբ «ներքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառման շրջանակներում անձի բնակարանի անձեռնմխելիությունը խախտելու դեպքում կենթարկվի քրեական պատասխանատվության 207-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, և, հիմք ընդունելով բաղկացական հանցագործությունների որակման կանոնները (Օրենսգրքի 52-րդ հոդվածի 6-րդ մաս) և համապատասխան հատկանիշների առկայությունը, նաև 441-րդ հոդվածով: Սակայն, ինչպես և 206-րդ հոդվածի դեպքում, օպերատիվ-հետախուզական միջոցառման ապօրինի իրականացման հանգամանքն ինքնին՝ որպես ինքնուրույն գոյություն ունեցող փաստ, գործող իրավակարգավորումների պարագայում քրեաիրավական առանձին գնահատականի չի արժանանա:

Հետազոտական հետաքրքրություն ներկայացնող մյուս հանցակազմը Օրենսգրքի՝ «Անձնական կամ ընտանեկան կյանքի գաղտնիությունը խախտելը» վերտառությամբ 204-րդ հոդվածն է, որի 1-ին մասը քրեական պատասխանատվություն է նախատեսում մարդու անձնական կամ ընտանեկան գաղտնիք համարվող տեղեկությունն առանց նրա համաձայնության օգտագործելու, իրացնելու կամ հայտնելու կամ այդ տեղեկությունն օրենքով սահմանված կարգի խախտմամբ օգտագործելու, իրացնելու կամ հայտնելու նպատակով ձեռք բերելու կամ պահելու համար: Նույն հոդվածի 2-րդ մասը պատասխանատվություն է նախատեսում 1-ին մասով նախատեսված տեղեկությունը հրապարակային ելույթներով, հրապարակայնորեն ցուցադրվող ստեղծագործություններով, զանգվածային լրատվության միջոցներով կամ տեղեկատվական կամ հաղորդակցական տեխնոլոգիաների միջոցով տարածելու համար: Քննարկվող

հոդվածի 3-րդ մասը մեզ հետաքրքրող համատեքստում քրեական պատասխանատվություն է նախատեսում 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված արարքի համար, որը կատարվել է 1) իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով, 2) տեղեկության գաղտնի հավաքման համար նախատեսված տեխնիկական հատուկ միջոց օգտագործելով:

Օպերատիվ-հետախուզական մի շարք միջոցառումների իրականացման արդյունքում հնարավոր է ձեռք բերել մարդու անձնական կամ ընտանեկան գաղտնիք համարվող տեղեկություն: Օպերատիվ-հետախուզական այդ միջոցառումների թվին կարող են դասվել օպերատիվ տեղեկությունների ձեռքբերումը, արտաքին դիտումը, ներքին դիտումը, նամակագրության և այլ ոչ թվային հաղորդակցության վերահսկումը, թվային, այդ թվում՝ հեռախոսային հաղորդակցության վերահսկումը, օպերատիվ ներդրումը, ֆինանսական գործարքների վերահսկումը:

Օրինական կերպով իրականացված օպերատիվ-հետախուզական միջոցառման արդյունքում ձեռք բերված, մարդու անձնական կամ ընտանեկան գաղտնիք համարվող տեղեկություն հրապարակելը, այլ ծանրացնող հանգամանքների բացակայության պարագայում որակվելու է 204-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, համապատասխան հատկանիշների առկայության դեպքում՝ նաև 2-րդ կետով, բաղկացական հանցագործությունների որակման կանոններով և հանցակազմի համապատասխան հատկանիշների առկայության դեպքում՝ նաև 441-րդ հոդվածով: Սակայն արարքը նույն կերպ է որակվելու նաև այն դեպքում, երբ օպերատիվ-հետախուզական միջոցառումն իրականացված լինի ապօրինի՝ օրենսդրությամբ սահմանված հիմքերի և/կամ պայմանների խախտմամբ: Այսպիսի իրավիճակը անտրամաբանական է և ոչնչով չարդարացված: Կրկին օպերատիվ-հետախուզական միջոցառման ապօրինի իրականացման հանգամանքն ինքնին՝ որպես ինքնուրույն գոյություն ունեցող փաստ, քրեաիրավական առանձին գնահատականի չի արժանանում:

Նույն է վիճակը նաև Օրենսգրքի՝ «Բժշկական գաղտնիքը հրապարակելը» վերտառությամբ 205-րդ հոդվածի պարագայում: Հանցակազմի առարկա համարվող բժշկական գաղտնիք պարունակող տվյալը օրենքով նախատեսված անձնական տվյալներ մշակողի կողմից, ինչպիսին նաև համարվում է օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինը, կարող է հրապարակվել ինչպես օրինական, այնպես էլ ապօրինի կերպով իրականացված օպերատիվ-հետախուզական միջոցառման արդյունքով ձեռք բերված լինելու դեպքում: Սակայն անկախ այն հանգամանքից՝ օպերատիվ-հետախուզական միջոցառումն իրականացվել է օրինական, թե ապօրինի կերպով, դրա արդյունքով ձեռք բերված, բժշկական գաղտնիք պարունակող տվյալը հրապարակողը ենթարկվելու է քրեական պատասխանատվության 205-րդ հոդվածի 1-ին կամ համապատասխան հատկանիշների առկայության դեպքում 2-րդ մասով, և, բաղկացական հանցագործությունների որակման կանոններով, համապա-

տասխան հատկանիշների առկայության դեպքում՝ նաև 441-րդ հոդվածով: Այս պատկերը ևս տրամաբանական և արդարացված չէ:

Սույն հոդվածի շրջանակներում հետազոտական հետաքրքրություն են ներկայացնում Քրեական օրենսգրքի՝ «Սահմանադրական կարգի հիմունքների և պետության անվտանգության դեմ ուղղված հանցագործությունները» վերտառությամբ 42-րդ գլխում տեղ գտած որոշ հանցակազմեր, որոնք ուղղված են պետական գաղտնիք պարունակող տեղեկությունների պաշտպանությանը: Բանն այն է, որ օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքում հաճախ ձեռք է բերվում պետական գաղտնիք պարունակող տեղեկություն, որի հրապարակումը ապօրինի կերպով իրականացված օպերատիվ-հետախուզական միջոցառման արդյունքով ձեռք բերված լինելու դեպքում պետք է ավելի խիստ պատժվի:

Քննարկվող համատեքստում առանձին հետազոտման են ենթակա հետևյալ հանցակազմերը:

➢ «Պետական գաղտնիք պարունակող տեղեկություններ ապօրինի ձեռք բերած անձի կողմից դրանք հրապարակելը» վերտառությամբ 426-րդ հոդվածը: Այս հոդվածի 1-ին մասը քրեական պատասխանատվություն է նախատեսում պետական գաղտնիք պարունակող տեղեկություն հրապարակելու համար այն անձի կողմից, որն այդ տեղեկությունը ձեռք է բերել հափշտակելու, սպառնալիքի, բռնություն գործադրելու, խաբեության կամ այլ ապօրինի եղանակով, եթե բացակայում են սույն օրենսգրքի 418-րդ (պետական դավաճանությունը), 424-րդ (լրտեսությունը) կամ 427-րդ (պետական գաղտնիք պարունակող տեղեկություններ հրապարակելը) հոդվածով նախատեսված հանցանքների հատկանիշները, իսկ 2-րդ մասը՝ նույն արարքի համար, որն առաջացրել է առանձնապես խոշոր չափերի գույքային վնաս կամ այլ ծանր հետևանք:

➢ «Պետական գաղտնիք պարունակող տեղեկություններ հրապարակելը» վերտառությամբ 427-րդ հոդվածը: Քննարկվող հոդվածի 1-ին մասը քրեական պատասխանատվություն է նախատեսում պետական գաղտնիք պարունակող տեղեկություն հրապարակելու համար այն անձի կողմից, որը դրա հետ ծանոթանալու իրավունք ուներ, եթե բացակայում են Քրեական օրենսգրքի 418-րդ (պետական դավաճանությունը) հոդվածով նախատեսված հանցանքի հատկանիշները, իսկ 2-րդ մասը՝ նույն արարքի համար, որն առաջացրել է առանձնապես խոշոր չափերի գույքային վնաս կամ այլ ծանր հետևանք:

➢ «Պետական գաղտնիք պարունակող տեղեկություններն անզգուշությամբ հրապարակելը» վերտառությամբ 428-րդ հոդվածը: Քննարկվող հոդվածի 1-ին մասը քրեական պատասխանատվություն է նախատեսում պետական գաղտնիք պարունակող տեղեկությունն անզգուշությամբ հրապարակելու համար այն անձի կողմից, որը դրա հետ ծանոթանալու իրավունք ուներ, եթե դրա հետևանքով խոշոր չափի գույքային կամ այլ էական վնաս է պատճառել պետության օրինական շահերին, իսկ 2-րդ մասը՝ նույն արարքի համար, որն առաջացրել է առանձնապես խոշոր չափերի գույքային վնաս կամ այլ ծանր հետևանք:

Հիշատակված երեք հոդվածների պարագայում էլ պետական գաղտնիք պարունակող տեղեկություն հրապարակած անձի արարքը որակվելու է այս հոդվածներից մեկով միայն՝ անկախ այն հանգամանքից՝ պետական գաղտնիք համարվող տեղեկությունը անձը ձեռք է բերել օրենքով սահմանված կարգով, թե ապօրինի իրականացված օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքում:

III. Օպերատիվ-հետախուզական միջոցառում ապօրինի իրականացնելու քրեականացումը

Սույն հոդվածի II և III մասերում նկարագրված օրինակները վկայում են այն մասին, որ ՕՀՄ ապօրինի իրականացնելու հանգամանքը՝ որպես ինքնուրույն գոյություն ունեցող փաստ, քրեաիրավական գնահատականի չի արժանացել, մինչդեռ օպերատիվ-հետախուզական գործունեության քրեաիրավական համապարփակ ապահովումը պահանջում է նմանատիպ արարքը քրեականացնել: Ընդ որում, ԱՊՀ «Կազմակերպված հանցավորության դեմ պայքարի մասին» խորհրդատվական օրենսդրական ակտը[8]՝ ընդունված 1996 թվականի նոյեմբերի 2-ին, ևս առաջարկում է ԱՊՀ անդամ պետություններին քրեականացնել այս արարքը:

Շարադրվածի հաշվառմամբ՝ առաջարկում ենք ՀՀ քրեական օրենսգիրքը լրացնել նոր՝ 478.1-ին հոդվածով՝ հետևյալ բովանդակությամբ.

«Օպերատիվ-հետախուզական միջոցառում ապօրինի իրականացնելը

1. Օպերատիվ-հետախուզական միջոցառումն Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին ՀՀ օրենքով կամ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված պահանջների, հիմքերի կամ պայմանների խախտմամբ իրականացնելը՝

պատժվում է որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ երեքից հինգ տարի ժամկետով, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ երեքից հինգ տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է

1) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,

2) շահադիտական դրդումներով, անձնական այլ շահագրգռվածությունից կամ խմբային շահերից ելնելով, կամ

3) տեղեկության գաղտնի հավաքման համար նախատեսված տեխնիկական հատուկ միջոց օգտագործելով՝

պատժվում է ազատազրկմամբ չորսից ութ տարի ժամկետով:»:

---

[8] Տե՛ս Постановление Межпарламентской Ассамблеи государств – участников Содружества Независимых Государств О рекомендательном законодательном акте "О борьбе с организованной преступностью" Санкт-Петербург, 02.11.1996, https://cis.minsk.by/reestrv2/doc/6026#text (21.09.2024):

Առաջարկվող հոդվածի 1-ին մասում նկարագրված արարքը միջին ծանրության հանցանք է. առավելագույն պատիժը չի գերազանցում 5 տարի ժամկետով ազատազրկումը:

Հանցակազմի 1-ին մասը, ըստ օրենսդրական նկարագրման եղանակի, ձևական է. հանցանքն ավարտված է համարվելու Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին օրենքով կամ Քրեական դատավարության օրենսգրքով սահմանված պահանջների, հիմքերի կամ պայմանների խախտմամբ ՕՀՄ իրականացնելու պահից:

Քննարկվող հանցակազմի իրավական մոդելավորման համատեքստում գիտագործնական հետաքրքրություն է ներկայացնում այն հարցը, թե արդյո՞ք հանցակազմի դիզպոզիցայում պետք է առանձին շեշտադրվեն «գաղտնի քննչական գործողություն» բառերը: Սահմանափակված լինելով հետազոտության կոնկրետ առարկայով, հետևապես նաև զերծ մնալով ՕՀՄ-ների և գաղտնի քննչական գործողությունների հարաբերակցության դետալային վերլուծությունից՝ պարզապես արձանագրենք, որ Քրեական դատավարության օրենսգրքում իրավական ֆիկցիայի գործադրման միջոցով դատարանի որոշմամբ իրականացվող ՕՀՄ-ները՝ բացառությամբ օպերատիվ հարցման և արտաքին դիտման[9], անվանվել են գաղտնի քննչական գործողություններ՝ քրեադատավարական նպատակադրությունից և նպատակահարմարությունից ելնելով: Սակայն իրավական այս ֆիկցիայի կիրառումից դրանք չեն դադարել օպերատիվ-հետախուզական միջոցառումներ լինելուց: Ասվածի մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ գաղտնի քննչական գործողությունների բովանդակությունը նույնությամբ արտացոլում է համանուն ՕՀՄ-ների բովանդակությունը՝ քրեադատավարական ընկալումից բխող, էության վրա չազդող տեղայնացում կատարելով: Հետևաբար այդ ՕՀՄ-ների քրեադատավարական ընկալումը չի կարող ազդել օպերատիվ-հետախուզական գործունեության քրեաիրավական ապահովման վրա[10]:

Հանցակազմի դիսպոզիցիան բլանկետային է. հանցակազմի հատկանիշները բացահայտելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին օրենքով կամ Քրեական դատավարության օրենսգրքով ՕՀՄ իրականացնելու պահանջները, հիմքերը, պայմանները կամ ժամկետները:

---

[9] Օպերատիվ-հետախուզական այս միջոցառումը դատարանի որոշմամբ է իրականացվում միայն այն դեպքում, եթե արտաքին դիտման արդյունքների ամրագրումն առանց տեխնիկական միջոցների օգտագործման հնարավոր չէ, և անձը (անձինք), որի (որոնց) նկատմամբ իրականացվում է արտաքին դիտումը, ողջամտորեն չէր (չէին) կարող ենթադրել դրա անցկացման հնարավորության մասին:

[10] Գաղտնի քննչական գործողությունների՝ ՕՀԳ քրեաիրավական ապահովմանն ուղղված նորմերում ամրագրելու անհրաժեշտության բացակայության մասին առավել մանրամասն տե՛ս Բարսեղյան Գ. Օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող անձանց քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանքների արդի հիմնախնդիրները և զարգացման միտումները, Դատական իշխանություն:

Հանցագործության որոշ դրսևորումներ, ըստ էության, կարող են տևող լինել: Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին օրենքով սահմանված պահանջների, հիմքերի կամ պայմանների խախտմամբ ՕՀՄ իրականացնելը նաև կարող է ընդգրկել տևական ժամանակահատված: Այս պարագայում հանցանքը, Քրեական օրենսգրքի 8-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, ավարտված է համարվելու հանցանք կատարող անձի բռնվելու, մեղայականով ներկայանալու կամ այլ հանգամանքների ուժով արարքն ավարտվելու պահին:

Քննարկվող հանցագործության օբյեկտը օպերատիվ-հետախուզական գործունեության բնականոն իրականացման ապահովմանն ուղղված հասարակական հարաբերություններն են:

Օբյեկտիվ կողմից հանցագործությունը բնութագրվում է օպերատիվ-հետախուզական միջոցառման իրականացմամբ, որը կատարվել է Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին օրենքով կամ Քրեական դատավարության օրենսգրքով ՕՀՄ իրականացնելու համար սահմանված պահանջների, հիմքերի կամ պայմանների խախտմամբ:

Իրականացումը, որպես կանոն, կարող է դրսևորվել գործողությամբ: Սակայն այն կարող է դրսևորվել նաև անգործությամբ:

Հանցագործության սուբյեկտը հատուկ է. անձը պետք է ունենա ՕՀՄ իրականացնելու լիազորություն:

Սուբյեկտիվ կողմից հանցագործությունը բնութագրվում է դիտավորությամբ՝ ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի:

Քննարկվող հանցանքը կհամարվի ուղղակի դիտավորությամբ կատարված, եթե անձը գիտակցի իր արարքի այն փաստական հանգամանքները, որոնք հանցակազմի հատկանիշ են, և այդ արարքը կատարելը նրա նպատակը լինի կամ նպատակին հասնելու միջոցը: Օրինակ՝ «Նամակագրության, և այլ ոչ թվային հաղորդակցության վերահսկում» ՕՀՄ-ի ապօրինի իրականացումը՝ որոշ հանգամանքների վերաբերյալ փաստական տվյալներ ձեռք բերելու նպատակով:

Քննարկվող հանցանքը կհամարվի անուղղակի դիտավորությամբ կատարված, եթե անձը գիտակցի իր արարքի այն փաստական հանգամանքները, որոնք հանցակազմի հատկանիշ են, ու թեև այդ արարքը կատարելը և տվյալ հանցանքն իրականացնելը նրա նպատակը չէ, այնուամենայնիվ կատարի դա: Օրինակ՝ օրինական կերպով իրականացված «Թվային, այդ թվում՝ հեռախոսային հաղորդակցության վերահսկում» ՕՀՄ-ի՝ օրենքով սահմանված հիմքերի վերացումից հետո հեռախոսային հաղորդակցության վերահսկումը չդադարեցնելը, այն պարագայում, երբ վերահսկումը այլևս անձի նպատակը չի եղել, սակայն գիտակցված անտարբերություն ցուցաբերելով անձը, այնուամենայնիվ, անգործությամբ կատարել է դա:

Հանցակազմի 2-րդ մասում նկարագրված արարքը ծանր հանցանք է: Հանցակազմի ծանրացնող հանգամանքները երեքն են՝ մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ, շահադիտական դրդումներով, անձնական այլ

շահագրգռվածությունից կամ խմբային շահերից ելնելով, տեղեկության գաղտնի հավաքման համար նախատեսված տեխնիկական հատուկ միջոց օգտագործելով:

Եզրակացություն

Սույն հոդվածի շրջանակներում իրականացված հետազոտության արդյունքում կատարել ենք մի շարք եզրակացություններ, որոնցից հիմնականները հանգում են հետևյալին:

1. Օպերատիվ-հետախուզական գործունեության քրեաիրավական համապարփակ ապահովման տեսանկյունից կարևոր նշանակություն ունի ՕՀԳ քրեաիրավական ապահովման պաշտպանող ուղղությունը, որի ձևավորումը պետք է դրսևորվի Հատուկ մասի համապատասխան հանցակազմերի լրամշակման կամ մշակման տեսքով:

2. Օպերատիվ-հետախուզական գործունեության առանձնահատկություններով պայմանավորված՝ ՕՀԳ քրեաիրավական ապահովմանն ուղղված հանցակազմերը պայմանականորեն կարելի է դասակարգել հիմք ընդունելով հանցագործության օբյեկտը, ըստ որի՝ այդ հանցակազմերը կարող են դասակարգվել 2 հիմնական խմբերի արարքներ, որոնք անմիջականորեն ուղղված են ՕՀԳ ապահովմանն ուղղված հասարակական հարաբերությունների դեմ, արարքներ, որոնք ուղղված են հասարակական այլ հարաբերությունների դեմ, սակայն կարող են վնաս պատճառել նաև ՕՀԳ ապահովմանն ուղղված հասարակական հարաբերություններին:

2.1. Առաջին խմբի պարագայում հանցագործության անմիջական օբյեկտը ՕՀԳ ապահովմանն ուղղված հասարակական հարաբերություններն են: Իսկ երկրորդ խմբի դեպքում ՕՀԳ ապահովմանն ուղղված հասարակական հարաբերությունները ֆակուլտատիվ (լրացուցիչ) օբյեկտի դեր ունեն:

3. Օպերատիվ-հետախուզական գործունեության քրեաիրավական ապահովմանն ուղղված հանցակազմերը կարող են դասակարգվել՝ հիմք ընդունելով նաև հանցագործության սուբյեկտի հատկանիշները, ըստ որի այդ հանցակազմերը կարող են դասակարգվել 2 հիմնական խմբերի՝

- օպերատիվ-հետախուզական գործունեություն սուբյեկտների (ՕՀԳ իրականացնող մարմնի աշխատակցի կամ ՕՀԳ իրականացնող մարմնի հետ համագործակցող անձի) կողմից կատարված, օպերատիվ-հետախուզական գործունեության՝ օրենքով սահմանված կարգով իրականացման ապահովման դեմ ուղղված հանցանքներ,
- օպերատիվ-հետախուզական գործունեության սուբյեկտ չհանդիսացող անձի կողմից կատարված, օպերատիվ-հետախուզական գործունեության՝ օրենքով սահմանված կարգով իրականացման ապահովման դեմ ուղղված հանցանքներ:

4. Օպերատիվ-հետախուզական գործունեության քրեաիրավական ապահովմանն ուղղված ՀՀ քրեական օրենսգրքում տեղ գտած հանցակազմերի հետազոտումից ակնհայտ է դարձել, որ այդ հանցակազմերը ՕՀԳ քրեաիրավական ապահովումն իրականացնում են մասնակի՝ ՕՀԳ՝ օրենքով

սահմանված կարգով իրականացման ապահովման դեմ ուղղված արարքները քրեաիրավական գնահատականի արժանացնելով միայն այն դեպքում, երբ ՕՀՄ իրականացվում է նախաձեռնված քրեական վարույթով՝ հետաքննության շրջանակներում որպես օժանդակող գործունեություն: Այսպիսի մոտեցումը անարդարացի և ոչ իրավաչափ համարելով՝ մենք առաջարկել ենք համապատասխան հոդվածներում լրացումներ կատարելու միջոցով իրականացնել ՕՀԳ քրեաիրավական համապարփակ ապահովում: Այլ խոսքերով՝ իրականացնել և՛ որպես ինքնուրույն գործունեություն, և՛ որպես նախաձեռնված քրեական վարույթով հետաքննության շրջանակներում իրականացվող ՕՀՄ, հետևաբար նաև ՕՀԳ քրեաիրավական ապահովում:

5. Առաջարկում ենք Քրեական օրենսգրքի 479-րդ հոդվածի վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ *«Ապացույցներ, բացատրություններ կամ դատավարական փաստաթղթեր կամ օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքում ստացված տվյալներ, փաստաթղթեր կամ առարկաներ կեղծելը, փոխելը, ոչնչացնելը կամ թաքցնելը կամ կեղծ ապացույցներ ներկայացնելը»:*

6. Առաջարկում ենք 483-րդ հոդվածի վերնագիրը և 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ *«Քրեական վարույթի կամ օպերատիվ-հետախուզական գործունեության տվյալներ հրապարակելը*

1. Առանց իրավասու մարմնի կամ անձի թույլտվության՝ հրապարակման ոչ ենթակա՝ մինչդատական կամ դատական վարույթի, ինչպես նաև օպերատիվ-հետախուզական գործունեության տվյալ հրապարակելը, եթե բացակայում են սույն օրենսգրքի 426-րդ կամ 427-րդ հոդվածով նախատեսված հանցանքների հատկանիշները՝»:

7. Առաջարկում ենք Քրեական օրենսգրքի 486-րդ հոդվածի վերնագիրը և 1-ին մասը վերաշարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «*Արդարադատության իրականացմանը, գործի քննությանը կամ օպերատիվ-հետախուզական գործունեությանը միջամտելը*

1. Արդարադատության կամ որպես դատարան՝ օրենքով նախատեսված այլ լիազորությունների իրականացումը խոչընդոտելու նպատակով դատարանի գործունեությանը կամ գործի քննությունը խոչընդոտելու նպատակով դատախազի, քննիչի, քննչական մարմնի ղեկավարի, հետաքննության մարմնի, փաստաբանի կամ ներկայացուցչի գործունեությանը, ինչպես նաև որպես ինքնուրույն գործունեություն իրականացվող օպերատիվ-հետախուզական գործունեությանը ցանկացած ձևով միջամտելը՝»:

8. Առաջարկում ենք Քրեական օրենսգրքի 490-րդ հոդվածի վերնագիրը և 1-ին մասը վերաշարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «*Դատավորի, դատախազի, քննիչի, քննչական մարմնի ղեկավարի, հետաքննության մարմնի, օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող անձի, փաստաբանի, ներկայացուցչի, փորձագետի կամ հարկադիր կատարողի նկատմամբ սպառնալիքը կամ նրանց մասին տեղեկություն հրապարակելը կամ նրանց գույքը ոչնչացնելը կամ վնասելը կամ նրանց նկատմամբ բռնություն գործադրելը*

Դատավորի, դատախազի, քննիչի, քննչական մարմնի ղեկավարի, հետաքննության մարմնի, օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող անձի, փաստաբանի, ներկայացուցչի, փորձագետի կամ հարկադիր կատարողի կամ նշված անձանց մերձավոր ազգականի կամ մերձավորի կամ նշված անձանց դաստիարակության, խնամքի կամ հսկողության տակ գտնվողի մասին արատավորող կամ նշված անձանց իրավունքներին ու օրինական շահերին այլ վնաս պատճառող տեղեկություն հրապարակելու կամ նրանց նկատմամբ բռնություն գործադրելու, գույքը ոչնչացնելու կամ վնասելու սպառնալիքը՝ կապված նշված անձանց օրինական ծառայողական կամ մասնագիտական գործունեության կամ բացառապես դատավոր, դատախազ, քննիչ, քննչական մարմնի ղեկավար, հետաքննության մարմին, օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող անձ, փաստաբան, ներկայացուցիչ, փորձագետ կամ հարկադիր կատարող կամ նշված անձանց մերձավոր ազգական կամ մերձավոր կամ նշված անձանց դաստիարակության, խնամքի կամ հսկողության տակ գտնվող լինելու հանգամանքի հետ՝»:

9. Առաջարկում ենք ՀՀ քրեական օրենսգիրքը լրացնել նոր՝ 478.1-ին հոդվածով՝ հետևյալ բովանդակությամբ.

«Օպերատիվ-հետախուզական միջոցառում ապօրինի իրականացնելը

1. Օպերատիվ-հետախուզական միջոցառումն Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին ՀՀ օրենքով կամ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված պահանջների, հիմքերի կամ պայմանների խախտմամբ իրականացնելը՝

պատժվում է որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ երեքից հինգ տարի ժամկետով, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ երեքից հինգ տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է

1) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,

2) շահադիտական դրդումներով, անձնական այլ շահագրգռվածությունից կամ խմբային շահերից ելնելով, կամ

3) տեղեկության գաղտնի հավաքման համար նախատեսված տեխնիկական հատուկ միջոց օգտագործելով՝

պատժվում է ազատազրկմամբ չորսից ութ տարի ժամկետով:»:

Գրականության ցանկ (reference list, список литературы)

1. Barseghyan G. The Concept of Criminal-Legal Provision of Operational-Search Activities and a Brief Description of Its Directions, State and law, N 2 (99) 2024, https://www.researchgate.net/publication/389314520

2. ՀՀ քրեական օրենսգիրք: Ընդունվել է 05.05.2021թ., ուժի մեջ է մտել 01.07.2022թ., ՀՕ-199-Ն: Criminal Code of The Republic of Armenia. Accepted on 05.05.2021, entered into force on 01.07.2022.

3. Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Հատուկ մաս (վեցերորդ հրատարակություն՝ փոփոխություններով և լրացումներով), Երևանի պետական համալսարան, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2012թ.: Criminal Law of the Republic of Armenia. Special Part (Sixth Edition with Amendments and Additions), Yerevan State University, Yerevan, YSU Publishing House, 2012.

4. ՀՀ քրեական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին համար ՀՕ-31-Ն օրենքը, ընդունվել է 2024 թվականի հունվարի 16-ին, ուժի մեջ մտել 2024 թվականի փետրվարի 6-ին: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=189458 (05.01.2025): Law No. HO-31-N on Amendments and Additions to the Criminal Code of the Republic of Armenia, adopted on January 16, 2024, entered into force on February 6, 2024.

5. ՀՀ օրենքը Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին: Ընդունվել է 22.10.2007թ., ուժի մեջ է մտել 08.12.2007թ., ՀՕ-223-Ն: The Law of the Republic of Armenia on Operational-Search Activities. Adopted on October 22, 2007, entered into force on December 8, 2007, Law No. HO-223-N.

6. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք: Ընդունվել է 30.06.2021թ., ուժի մեջ է մտել 01.07.2022թ., ՀՕ-306-Ն: Criminal Procedure Code of the Republic of Armenia. Adopted on June 30, 2021, entered into force on July 1, 2022, Law No. HO-306-N.

7. Постановление Межпарламентской Ассамблеи государств – участников Содружества Независимых Государств О рекомендательном законодательном акте "О борьбе с организованной преступностью" Санкт-Петербург, 02.11.1996, https://cis.minsk.by/reestrv2/doc/6026#text (21.09.2024): Resolution of the Interparliamentary Assembly of the Member States of the Commonwealth of Independent States On the Legislative Recommendation Act "On Combating Organized Crime" St. Petersburg, 02.11.1996 (In Russian), https://cis.minsk.by/reestrv2/doc/6026#text,

8. Բարսեղյան Գ. Օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող անձանց քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանքների արդի հիմնախնդիրները և զարգացման միտումները, Դատական իշխանություն, N, 2025: Barseghyan G. Current Issues and Development Trends of Circumstances Excluding Criminal Liability of Persons Carrying Out Operational-Search Activities, Judicial Power, N, 2025:

Gevorg Barseghyan
Ph.D. Student and Lecturer at the Chair of Criminal Law of Law Faculty of Yerevan State University

TOPICAL ISSUES OF LEGAL MODELING OF CRIMINAL OFFENSES AIMED AT ENSURING OPERATIONAL-SEARCH ACTIVITIES[11]

Abstract

In the context of the comprehensive criminal-legal providing of operational-search activity, the development of the protective direction of criminal-legal provision for operational-search activity holds significant importance. In order to form and/or enhance this direction, the article examines issues related to the refinement of relevant criminal offenses stipulated in the Special Part of the Criminal Code of the Republic of Armenia, and, where necessary, the development of new offenses. Such measures would allow for a more effective legal response to actions aimed against the lawful execution of operational-search activities. This process has been defined as the legal modeling of criminal offenses directed toward the providing of operational-search activity.

The article examines, in separate sections, the legal modeling challenges of offenses directly aimed at ensuring operational-search activity, the legal modeling challenges of offenses not directly aimed at such providing, as well as the necessity of criminalizing the unlawful implementation of operational-search measure(s), which has been a specific subject of study.

Based on the results of the research conducted in the article, proposals have been presented aimed at the comprehensive development of the protective direction of the criminal-legal providing of operational-search activity. These include recommendations for revising several articles in the Special Part of the Criminal Code and for introducing a new article titled "Unlawful Implementation of an Operational-Search Measure".

Keywords: operational-search activity; operational-search measure; criminal-legal provision; protective direction of criminal-legal provision of operational-search activity; criminal offense, legal modeling; criminalization.

[11] The article was presented on 21.04.2025 and was reviewed on 10.06.2025.

Геворг Барсегян
Аспирант и преподаватель кафедры Уголовного права
юридического факультета Ереванского государственного университета

АКТУАЛЬНЫЕ ПРОБЛЕМЫ ПРАВОВОГО МОДЕЛИРОВАНИЯ ПРЕСТУПЛЕНИЙ, НАПРАВЛЕННЫХ НА ОБЕСПЕЧЕНИЕ ОПЕРАТИВНО-РОЗЫСКНОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ[12]

Абстракт

В контексте комплексного уголовно-правового обеспечения оперативно-розыскной деятельности важное значение имеет развитие охранительного направления уголовно-правового обеспечения оперативно-розыскной деятельности. С целью формирования и/или совершенствования данного направления в статье исследуются вопросы, касающиеся доработки соответствующих составов преступлений, предусмотренных в Особенной части Уголовного кодекса Республики Армения, а при необходимости — разработки новых составов преступлений. Это позволит более эффективно реагировать на деяния, направленные против осуществления оперативно-розыскной деятельности в установленном законом порядке. Этот процесс мы называем правовым моделированием составов преступлений, направленных на обеспечение оперативно-розыскной деятельности.

В статье по отдельным направлениям исследованы проблемы правового моделирования составов преступлений, непосредственно направленных на обеспечение оперативно-розыскной деятельности, а также проблемы правового моделирования составов преступлений, непосредственно не направленных на обеспечение оперативно-розыскной деятельности. Отдельным объектом исследования стала необходимость криминализации незаконного осуществления оперативно-розыскного мероприятия.

По результатам проведённого исследования, в целях комплексного формирования охранительного направления уголовно-правового обеспечения оперативно-розыскной деятельности, в статье представлены предложения, направленные на доработку ряда статей Особенной части Уголовного кодекса, а также на включение новой статьи под названием «Незаконное осуществление оперативно-розыскного мероприятия».

Ключевые слова: оперативно-розыскная деятельность; оперативно-розыскное мероприятие; уголовно-правовое обеспечение; охранительное направление уголовно-правового обеспечения оперативно-розыскной деятельности; состав преступления; правовое моделирование; криминализация.

[12] Статья была представлена 21.04.2025 и прошла рецензирование 10.06.2025.

ՀՀ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ «ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆՊԱՐԲԵՐԱԿԱՆՈՒՄ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՏՊԱԳՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հարգելի՛ հեղինակ,

Տպագրման համար ներկայացվող հոդվածները պետք է անդրադառնան իրավագիտության ոլորտի արդիական, կոնկրետ խնդրի, լինեն հիմնավորված, պարունակեն իրավունքի բնագավառին վերաբերող վերլուծություններ, համապատասխանեն ակադեմիական չափանիշներին և պարբերականում տպագրման համար ներկայացվող պահանջներին, որոնց կարող եք ծանոթանալ ՀՀ դատախազության կայքում:

Վերոնշյալ բոլոր պահանջներին համապատասխանող հոդվածները ենթակա են միակողմանի «կույր» գրախոսման պարբերականի գրախոսների կողմից: Գրախոսի կողմից երաշխավորվելու դեպքում հոդվածները կարող են տպագրվել պարբերականում:

Հոդվածները կարող են ներկայացվել հայերեն, անգլերեն կամ ռուսերեն՝ պարբերականի էլեկտրոնային հասցեին ուղարկելու միջոցով:

Կոնտակտային տվյալներ

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0010, Վազգեն Սարգսյան 5

Էլ.հասցե՝ orinakanutyun@prosecutor.am

Հեռ.՝ 010 511 506

www.prosecutor.am

ON THE PUBLISHING OF ARTICLES IN THE SCIENTIFIC-PRACTICAL JOURNAL "LEGALITY" OF THE RA PROSECUTOR'S OFFICE

Dear Author,

Articles submitted for publication should address a current and specific issue in the field of law, should be evidence-based, include accurate legal analysis, and comply with academic standards as well as the journal's publication requirements, which can be found on the website of the RA Prosecutor's Office.

Articles that meet these criteria will be single-blind reviewed by the journal's reviewers. Those recommended by the reviewer will be considered for publication.

Articles may be submitted in Armenian, English or Russian by sending them to the e-mail address of the journal.

Contacts

Address: Vazgen Sargsyan Street 5, Yerevan, 0010, Armenia

E-mail: orinakanutyun@prosecutor.am

Tel.: 010 511 506

www.prosecutor.am

О ПУБЛИКАЦИИ СТАТЕЙ В НАУЧНО-ПРАКТИЧЕСКОМ ЖУРНАЛЕ «ЗАКОННОСТЬ» ПРОКУРАТУРЫ РА

Уважаемый автор,

Статьи, представляемые к публикации, должны затрагивать актуальную и конкретную проблему в области права, быть обоснованными, содержать точный правовой анализ и соответствовать академическим стандартам, а также требованиям журнала к публикации, с которыми можно ознакомиться на сайте Прокуратуры РА.

Статьи, соответствующие указанным требованиям, проходят одностороннее слепое рецензирование рецензентами журнала. Для публикации будут рассматриваться статьи, рекомендованные рецензентом.

Статьи принимаются на армянском, английском или русском языках по электронной почте журнала.

Контактные данные

Адрес: Республика Армения, г. Ереван, 0010, улица Вазгена Саргсяна 5

Эл. почта: orinakanutyun@prosecutor.am

Тел.: 010 511 506

www.prosecutor.am

ISSN 1829-4219

© «Օրինականություն» Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազություն, 2025, N137

© “Orinakanutyun” (Legality) - Prosecutor General’s Office of the Republic of Armenia, 2025, N137

© «Оринаканутюн» (Законность) - Генеральная прокуратура Республики Армения, 2025, N137

Խմբագրական խորհրդի նախագահի օգնական՝ Կ. Հարությունյան
Assistant to the Chair of the Editorial Board: K. Harutyunyan
Ассистент председателя редакционной колегии: К. Арутюнян

Հրատարակիչ տնօրեն՝ Ա. Արմենակյան
Publishing director: A. Armenakyan
Директор издательства: А. Арменакян

Համակարգչային ձևավորող՝ Ն. Հարությունյան
Computer designer: N. Harutyunyan
Верстка: Н. Арутюнян

Հանձնված է տպագրության՝ 29.06.2025թ.
Չափսը՝ 70 x 100 1/16
Տպագրությունը՝ օֆսեթ: 18.5 տպ. մամուլ:
Տպաքանակը՝ 500
Գրանցման վկայական N 688

Տպագրված է «Մոնո Պրինտ» ՍՊԸ-ում
monoprint1@mail.ru